

A HISTORY OF THE CHRISTIAN CHURCH

BY WILLISTON WALKER
AND RICHARD A. NORRIS, DAVID W. LOTZ,
ROBERT T. HANDY



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
(Բ. ՀԱՏՈՐ)

ՀԱՅԱՑՈՒՑ՝
ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵԿՍԷՉԵԱՆ

ԹԵՀՐԱՆ – ԻՐԱՆ
2024

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (Բ. ՀԱՏՈՐ)

ՀԱՅԱՑՈՒՑ՝
ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԷՉԵԱՆ

ԹԵՀՐԱՆ – ԻՐԱՆ
2024

Ի հայրապետութեան
Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. սրբազնագոյն կաթողիկոսի
Մեծի տանն Կիլիկիոյ

Հատորը լոյս կը տեսնէ մեկենասութեամբ
Բիւզանդ, Միեր եւ Անի Գըլընճեանի,
ի յիշատակ իրենց ՀԱՅՐԻԿ-ին՝ Վահրամ-Գառնիկի
եւ ի յարգանս իրենց մօր՝ Սօսի Վանեան-Գըլընճեանի

ՆԱԽԱԲԱՆ

Ուիլիսթըն Վոքլըրի (1860–1922) *Քրիստոնէական եկեղեցիի պատմութիւն մը* գիրքի 1918-ի առաջին հրատարակութիւնը շուտով կը դառնար փնտռուած հատոր մը: Վոքլըր, որ ԵԷԼ (ԱՄՆ) համալսարանին մէջ Եկեղեցիի պատմութեան դասախօս էր, կը յաջողէր իւրայատուկ կարողութեամբ իր գիրքին մէջ ամփոփել Ա.–Ի. դար երկարող ժամանակաշրջանի պատմութիւնը:

Աւելի քան 100 տարի ետք Վոքլըրի գիրքը կը պահէ իր այժմէականութիւնը եւ այլ համալսարաններու ու դպրեվանքերու կարգին՝ կը հանդիսանայ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի Ընդհանուր եկեղեցիի պատմութեան դասագիրքը:

Երկու հատորէ բաղկացած այս յապաւուած հայացումը կատարուած է Վոքլըրի *Քրիստոնէական եկեղեցիի պատմութիւն մը* գիրքի 1985-ի Դ. հրատարակութենէն՝ մեր դպրեվանքերուն եւ այլ կրթական հաստատութիւններու մէջ որպէս դասագիրք գործածուելու առաջադրանքով:

Շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր անոնց, որոնք օժանդակեցին այս գիրքի լոյս ընծայումին:

Ն.

Չ. ՄԱՍ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Ա. ԳԼՈՒԽ
ՄԱՐԹԻՆ ԼՈՒՏԵՐ ԵՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ
ՄԿԶԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

ԺԶ. դարու սկիզբը իր զանազան տուեալներով՝ Գերմանիան կը համարուէր Եւրոպայի ամենէն «եկեղեցական» երկիրը: Միջին դարերը յատկանշած բազմաթիւ հերետիկոսութիւններ յաջողապէս զսպուած էին: Թէեւ Եկեղեցիի նուիրապետութիւնն ու վանական կարգեր կը շարունակուէին խիստ քննադատութեան ենթարկուիլ, սակայն հակակղերականութիւնը չէր շեշտադրուէր: Յարաբերաբար եւրոպական այլ երկիրներու՝ Իտալիայէն ետք Գերմանիոյ մէջ էր, որ պապական հեղինակութիւնը տիրական կը մնար: Աշխարհականներու բարեպաշտութիւնը, թէեւ երբեմն ծայրայեղութիւններու յանգող, կը շարունակէր իր աւանդական ընթացքը: Ուխտագնացութիւններ եւ ննջեցեալներու համար մատուցուած սուրբ պատարագներ շատ ժողովրդական էին: Սուրբերու մեծարումը, յատկապէս սուրբ կոյս Մարիամի եւ անոր մօր՝ ս. Աննայի, մեծ աճ կ'արձանագրէր: Մասունքներու հաւաքածոները եւ քառութեան թուղթերու վաճառքը կը բազմապատկուէին: Բազմաթիւ նոր եկեղեցիներ եւ մատուոններ կը կառուցուէին: Աշխարհական բազմաթիւ քարոզիչներ կը շրջէին մեծ քաղաքներու մէջ: Կրօնական եղբայրակցութիւններու անդամակցութիւնը մեծապէս կ'աճէր: Կրօնական գրականութեան ընթերցումը կը տարածուէր: Արդ, չենք կրնար ըսել, թէ 1500-ին Գերմանիան կամ նոյնիսկ որեւէ այլ եւրոպական երկիր Հռոմեական եկեղեցիին դէմ յեղափոխական ընդդիմութիւն կը ցուցաբերէր:

Սակայն մակերեսին տակ կ'եռային դժգոհութեան ուժեղ հոսանքներ: Տնտեսականօրէն Վերածնունդի շրջանի պապականութիւնը իր զեխութեամբ սնանկացումի եզրին կը գտնուէր եւ Իտալիոյ մէջ իր քաղաքականութիւնը պարտադրելու համար մեծ գումարներու կարիք ունէր: Այս ծախսերը դիմագրաւելու համար պապական վարչամեքենան նոր ու ծանր տուրքեր կը

սահմաններ բարձրաստիճան հոգեւորականութեան եւ ան ալ իր հերթին կը ճնշէր պարզ եկեղեցականութեան ու աշխարհականներուն վրայ: Գերմանիոյ մէջ Հոռմ համագոր կը դառնար ազահութեան: Տուրքերու գանձումի այս դրութիւնը պատճառ կ'ըլլար եկեղեցականութեան սիմոնականութեան, թիւր նախասիրութիւններուն եւ անբարոյականութեան: Յատկապէս ծխական հոգեւորականութիւնը անմխիթար վիճակ կը պարզէր ուսումի խեղճութեամբ, աղքատութեամբ, հարձերով բնակութեամբ, որուն համար տարեկան տուրք կու տար իր եպիսկոպոսին, եւ անբարոյ ընթացքով: Յարաբերաբար նախորդ դարերուն՝ նոյնիսկ եթէ այս բոլոր յոռի երեւոյթները այնքան ալ չափազանցուած չէին, սակայն այսօր զարգացած աշխարհական դասակարգ մը կար, որ այլեւս չէր հանդուրժէր Եկեղեցիի այս վիճակը:

ԺԲ. դարու նման, Միջին դարերու վերջին շրջանի կրօնական «գարթօնքը» ինքզինք կը զգացներ: Եկեղեցին աշխարհականացումի կամ հակակրօնականացումի վտանգին դէմ-յանդիման չէր գտնուէր, այլ կը հրաւիրուէր ըլլալու Նոր կտակարանի «անբիծ եւ առաքելական Եկեղեցին»: Գիտակից մարդէր, աւելի լաւ Եկեղեցի ուզելով, աւելի աստուածաշունչական Եկեղեցի կը հասկնային: ԺՁ. դարու սկիզբը, Տեզիտերիոս Երազմոսի գլխաւորութեամբ, քրիստոնէայ մարդկայնականներ կը վերադառնային ԺԵ. դարու այն կարգախօսին, որ ժողովական դրութեան հաստատումով «Եկեղեցիի գլուխին եւ անդամներուն բարեկարգութիւնը» կը պահանջէր: Անոնք լատին քրիստոնէութեան բարոյական եւ հոգեւոր վերանորոգութիւնը Աստուածաշունչի եւ ազատ արուեստներու համատեղ որդեգրումին մէջ կը տեսնէին՝ որպէս սրբութեան եւ մարդկայնականութեան ներդաշնակութիւնը: Այս քրիստոնէական եւ դասական մշակոյթի դէպի աղբիւրներ մղումը կամ վերակառուցումով բարեկարգութիւնը մարդկայնականներուն ու բողոքական բարեկարգիչներուն այն հասարակ յայտարարն էր, որ քաղաքներուն մէջ գտնուող կրթեալ դասակարգին ուղեգիծը կը դառնար: Դժբախտաբար, Հռոմէական եկեղեցին

այս կրօնական բարեպաշտութեան վերագարթօնքի ալիքին դիմաց կը ձախողէր հոգեւորականութիւնը բարեկարգելու ու աշխարհիկ տարրը առաջնորդելու իր բարոյական եւ հոգեւոր դերակատարութիւնը ստանձնելուն մէջ:

Բարեկարգութեան նախօրեակին, ժողովրդական բարեպաշտութիւնը կ'ունենար զանազան զարգացումներ: Ան կը զբաղէր մահուան, քաւարանային տանջանքներու եւ Վերջին դատաստանի բերելիք անձնական փրկութեան հարցերու քննարկումով: Եկեղեցին սորվեցուցած էր, թէ մէկու մը յաւիտենական վախճանը պիտի ճշդուէր համաձայն այն կեանքին, որ ան ապրած էր եկեղեցական խորհուրդներու ճամբով իր ստացած շնորհները իրագործելով, որովհետեւ միայն սիրոյ գործերով արտայայտութիւն գտած հաւատքը փրկարար ներգործութիւն կը բերէր: Միջին դարերը յատկանշող հաւատքի եւ արժանիքի այս փոխառնչութիւնը կ'առաջնորդէր կասկածի հետեւեալ հարցադրումներուն՝ «Ես իսկապէս Աստուծոյ կամքը կատարած եմ: Աստուածային շնորհին արժանանալու համար բաւարար բան ըրած եմ»: Աւելին՝ Եկեղեցիի խորհուրդները, այս պարագային՝ յատկապէս ապաշխարութեան խորհուրդը, հաւատացեալները ազատագրելու փոխարէն կը ճնշէին, մանաւանդ երբ անոնց բերած հոգեւոր արժանիքներուն վրայ բարդուէին նիւթի եւ քաղաքականութեան տարրերը:

Յստակ էր, թէ մտահոգ հաւատացեալին կրօնական մխիթարութիւն բերող պատգամը, երբ յատկապէս ան նաեւ եկեղեցական չարաշահութիւններէ ձեռքազատումը եւս կ'ընդգրծէր, ոտքի պիտի հանէր Հռոմեական եկեղեցիին հանդէպ վերապահութիւններ ունեցող լայն շրջանակները: Թէեւ կրօնքն ու քաղաքականութիւնը անքակտելիօրէն համատեղ ապրող մարդեր զանազան պատճառներով Բողոքական բարեկարգութեան կը յարէին, սակայն մէկ բան յստակ էր, թէ ան ժողովրդային մեծ յաջողութիւն կ'ունենար, որովհետեւ կը խոստանար գոհացնել քրիստոնէութեան մխիթարութեան կարօտ մարդերու կարիքները: Այս մարդերը Միջին դարերու Եկեղեցիի թշնամիները չէին, այլ իրենց փրկութեան հետամուտ

այն անձերն էին, որոնք, իրենց պատասխանը Եկեղեցիին մեջ չգտնելով, աւանդական քրիստոնէութեան եւ անոր ներկայացուցիչներուն դէմ կ'ելլէին խաբուած ըլլալու գայրոյթով:

Բարեկարգութեան կարելոր նախամուտ կը դառնար Գերմանիոյ մտաւորական շրջանակներուն մեջ խաղաղասէր մարդկայնական Յովհաննէս Ռոշլինը ներաքաշող վիճարկում մը: Հրէութենէ քրիստոնէութեան նորադարձ՝ Փֆեֆերքըրն 1509-ին հրեաներուն գիրքերը գրաւել հրահանգող հրամանագիր մը ձեռք կը ձգէր Մաքսիմիլիան կայսրէն: Անոր նեցուկ կը դառնար Քեօլնի տոմինիկեան հաւատաքննիչ Յակոբ Հոխսրաթըն (1460–1527), մինչ Ռոշլին, ընդատաջելով Մայնցի արքեպիսկոպոսի հարցադրումին, հրեական գրականութիւնը ընդհանրապէս ընդունելի կը նկատէր եւ կը ջատագովէր եբրայերէնի առաւել իմացումն ու հրեաներուն հետ իրենց գրականութեան բարեկամական քննարկումը՝ փոխան գիրքերու գրաւումին: Հակասութիւններու փոթորիկ կը բարձրանար: Յովհաննէս որպէս հերետիկոս կ'ամբաստանուէր եւ Յակոբի կողմէ դատի կը բերուէր: Հարցը Հոռոմ կը հասնէր եւ 1520-ին կը վճռուէր ի հեճուկս Յովհաննէսի:

Նոր ուսումի ջատագովները այս քայլը գիտութեան դէմ շղթայազերծուած տգէտ եւ անտեղի յարձակում կը համարէին ու Ռոշլինը կը պաշտպանէին: Այս մարդկայնական շրջանակէն Գրոթոնս Ռուպիանոս (1480?–1539?) եւ Ուլրիխ Հուրընցի (1488–1523) կը հեղինակէին 1515–1517-ին հրատարակուած երգիծական շատ նշանաւոր երկ մը՝ *Շփոթահար մարդերու նամակները*: Այս երկը, ակնարկելով Յովհաննէսի եւ նոր ուսումի հակառակորդներուն, ծաղրանքի առարկայ կը դարձնէր անոնց անշնորհ լատիներէնն ու արծարծուող հարցերուն անձանօթութիւնը: Ասով այն տպաւորութիւնը կը ձգուէր, թէ Ռոշլինի հակառակող կողմը ուսումի եւ յառաջդիմութեան դէմ էր: Ռոշլինի շուրջ յարուցուած այս հարցը կը միացնէր Գերմանիոյ մարդկայնականները եւ խրամատ կը բանար անոնց ու պահպանողականներուն միջեւ, որոնց մեջ աչքառու կը դառնային տոմինիկեանները:

Երբ այս արշարը իր գագաթնակետին հասած էր, 31 հոկտեմբեր 1517-ին Գերմանիոյ մէջ նոր բացուած եւ անձանօթ համալսարանէն վանական դասախօսի մը եկեղեցական զեղծարարութեան դէմ ծայր առած աննախընթաց բողոքը անմիջական պատասխան կը ստանար եւ Եկեղեցիի կեանքին մէջ ամենամեծ յեղափոխութիւնը կը յառաջացնէր:

Այս բողոքողը կը կոչուէր Մարթին Լուտեր, որուն մասին անվարան կրնանք ըսել, թէ աշխարհի պատմութեան մեծագոյն դէմքերէն մին է: Ան կազմակերպիչ, քաղաքագէտ կամ նոյնիսկ յեղափոխական չէր, այլ ժողովուրդը ոտքի կը հանէր իր կրօնական խոր հաւատքով եւ Աստուծոյ հանդէպ իր ունեցած անխախտ վստահութեամբ ու անձնական յարաբերութեամբ, որ փրկութեան ապահովութիւնը կը ներշնչէր առանց Միջին դարերու Եկեղեցիի նուիրապետական եւ խորհուրդներու կառոյցին անհրաժեշտութեան: Հռոմէական կաթոլիկ քննադատներու կողմէ երկար դարեր հալածուած Լուտերը այսօր՝ մեծ յարգանքի արժանացած է կաթոլիկ շրջանակներու մէջ՝ որպէս տիպար կրօնաւոր եւ աստուածաբանական երկխօսութեան բարեկամ, անշուշտ շնորհիւ արդի միջեկեղեցական շարժումին ու քննական պատմաբանութեան: Ինչ ալ ըլլայ մեր կեցուածքը Լուտերի հանդէպ, ան իր յարգարժան տեղը կը գրաւէ Եկեղեցիի պատմութեան մէջ:

Մարթին Լուտեր ծնած էր 10 նոյեմբեր 1483-ին Էյսլէպընի մէջ, ուր իր հայրը պղինձի հանքագործ էր: Ծնողները համեստ եւ բարեպաշտ ծագում ունէին եւ իրենց զաւակները կրօնական խստակեցութեամբ չէին դաստիարակեր: Լուտերի ծնունդէն քանի մը ամիս ետք անոնք Մանսֆելտ կը փոխադրուէին, ուր հայրը, մեծ յարգանքի արժանանալով քաղաքական կեանքի մէջ եւ տէր դառնալով հարստութեան, կ'որոշէր իր ութ զաւակներէն երկրորդ մանչը՝ Մարթինը, օրէնսգէտ դարձնել: Մանսֆելտի, Մակտըպըրկի եւ Էյզընախի մէջ ուսանելէ ետք՝ 1501-ին, Լուտեր Էրֆուրթի համալսարանը կը մտնէր որպէս ուշիմ, ընկերասէր եւ երաժշտասէր ուսանող մը: Այդ օրերուն Էրֆուրթ կը նկատուէր Գերմանիոյ ամենամարդկայնական համալսա-

րաններին մին եւ Լուսեր բնականօրէն կ'ենթարկուէր այս նոր շարժումի ազդեցութեան: Ան թէւ բնաւ մարդկայնական չէր դառնար բառին բովանդակ իմաստով, սակայն դասական լեզուներու, մանաւանդ յունարէնի, ուսումը եւ Աստուածաշունչի ու Եկեղեցիի հայրերու երկերուն հիմամբ դպրոցական աստուածաբանութեան քննադատութիւնը կը կապէին զինք այս շարժումին:

Երիտասարդ Լուսեր խորապէս կը գիտակցէր, թէ Գերմանիոյ կրօնական զարթօնքի հիմնական յատկանիշը մեղքի եւ անոր պատճառած մտահոգութեան ուժեղ անդրադարձն էր: Յունուար 1505-ին, արժանանալէ ետք արուեստներու մագիստրոս վկայականին, մայիսին ան օրէնսգիտութեան ուսումին կը հետեւէր: Դասընկերոջ մը մահը եւ Էրֆուրթէն վերադարձի ճամբուն վրայ իր կայծակէ փրկուիլը մեծապէս կը ցնցէին զինք եւ վանական դառնալ կ'ուխտէր ս. Աննային: Հակառակ հօրը անհամաձայնութեան՝ 17 յուլիս 1505-ին ան Էրֆուրթի օգոստինոսեան վանքը կը մտնէր՝ հաւատալով, որ վանական կեանքը հոգիին փրկութեան ամենէն ապահով ուղին էր: Օգոստինոսեան գերման եղբայրներու այս վանքը, որ վերջերս բարեկարգուած էր Անդրեաս Փրովէսի կողմէ (1429–1503) եւ այժմ կը գտնուէր Յովհաննէս Սթուայփիթզի (1460?–1524) հսկողութեան տակ, ժողովրդային յարգանք կը վայելէր եւ կը նկատուէր Միջին դարերու վանականութեան լաւագոյն ներկայացուցիչներէն մէկը: Ան մեծ կարեւորութիւն կու տար քարոզախօսութեան եւ Աստուածաշունչի սերտողութեան: Անոր վանականներէն մին էր Օգոստինոսի մեծ մասնագէտ Գրիգոր Ռիմինացին, որուն մասին Լուսեր մեծ հիացումով պիտի ըսէր, թէ պեղագեանութենէ զուրկ միակ դպրոցական աստուածաբանն էր: Անշուշտ Օգոստինոսի հակապեղագեան ճառերը եւս մեծ դեր պիտի ունենային Լուսերի աստուածաբանական կազմաւորումին մէջ: Իսկ մասնաւորաբար Յովհաննէսի հանդէպ իր երախտագիտութիւնը յայտնելով՝ Լուսեր աւելի ուշ պիտի հաստատէր, թէ ան էր Բարեկարգութեան ռահվիրան:

Վանքին մեջ Լուտեր շուտով նշանաւոր կը դառնար: 1507-ին ան քահանայ կը ձեռնադրուէր: Յաջորդ տարին մեծաւորները զինք Ուիթընպըրկ կ'ուղարկէին Արիստոտէլի բարոյագիտութեան մասին դասախօսելու եւ 1502-ին «իմաստուն» Ֆրետերիք Գ.-ին (1486–1525) կողմէ բացուած համալրասարանին մեջ մնայուն դասախօս դառնալու համար: 1509-ին հոն կը ստանար իր պսակաւոր աստուածաբանութեան վկայականը եւ նոյն տարին ետ Էրֆուրթ կը դրկուէր ուսումնասիրելու Լոմպարտցիի նշանաւոր *Նախադասութիւններու չորս գիրքերը*՝ համապատասխան վկայականի մը արժանանալու համար: 1510–1511-ին միաբանութեան կողմէ յատուկ առաքելութեամբ ան Հռոմ կը դրկուէր: Լուտեր Ուիթընպըրկ կը վերադառնար եւ այլեւս հոն կը մնար, 1512-ին աստուածաբանութեան դոկտոր դառնալով եւ որպէս համալսարանի Աստուածաշունչի դասախօս փոխարինելով Յովհաննէս Սթուայփիթըր: Ան մեկնողական դասախօսութիւններու շարք մը կու տար Սաղմոսներու (1513–1515), Նամակ հռոմայեցիներունին (1515–1516), Նամակ գաղատացիներունին (1516–1517) եւ Նամակ եբրայեցիներունին (1517–1518) մասին: Իր դոկտորական ուսումին եւ դասախօսութիւններուն պատրաստութեան համար Լուտեր կ'ընտելանար Միջին դարերու դպրոցական աստուածաբանութեան եւ նորայայտ մարդկայնական գիտութեան՝ դիմելով Յակոբ Լըֆեր Էթափլեցիի, Յովհաննէս Ռոշլինի եւ Տեգիտերիոս Երազմոսի երկերու ընթերցանութեան: Պէտք չէ մտահան ընել, թէ վարչական կարողութիւններու կողքին Լուտեր նաեւ առաջնակարգ եւ փայլուն աստուածաբան էր: 1512-ին իր վանքին ուսումնական տնօրէն կը նշանակուէր եւ 1515-ին՝ փոխանորդ 11 օգոստինոսեան վանքերու: Մինչ այդ արդէն իսկ քարոզիչի արտօնութիւն ունէր նախ իր վանքին մեջ 1511-ին եւ ապա Ուիթընպըրկի ծովսին մեջ 1514-ին, ու որպէս քարոզիչ մեծ տպաւորութիւն կը թողուր: Ի մի բան՝ ան կը յատկանշուէր որպէս հաւատացեալ, ուսեալ, նուիրեալ եւ աշխուժ վանական մը:

Մակայն հակառակ այս վանական բազմազբադուածութեան՝ Լուտեր հոգեկան խաղաղութիւն չէր գտներ: Ան ինքզինք մեղաւոր կը զգար սուրբ եւ արդար Աստուծոյ դիմաց ու այս զգացումը օրէ-օր աւելիով կ'աճէր՝ հակառակ ի գործ դրուած ապաշխարութեան եւ մենակեցութեան: Յովհաննէս Մթուայփիթօզ կը բացատրէր իրեն, թէ ճշմարիտ ապաշխարութիւնը կը սկսէր Աստուած սիրելով եւ ո՛չ պատժող Աստուծմէ վախնալով: Թէեւ Լուտերի աչքերը Աւետարանին ճշմարտութեան բացող առաջին անձը Յովհաննէսը կ'ըլլար, սակայն Լուտեր Աստուած գտնելու երկար եւ դանդաղ ընթացք կ'ունենար: Մինչեւ 1509 ան ինքզինք կը նուիրէր հետագայ դպրոցականութեան ուսումնասիրութեան: Ան ասոնց կը պարտէր իր տրամաբանելու կարողականութիւնները, յայտնութիւնը անդրանցող պատճառականութեան հանդէպ կասկածը եւ փրկութեան համար միայն Աստուծոյ կամքին շեշտադրումը, որովհետեւ վերեւ յիշուած հեղինակները թէեւ մեղաւորին արդարացումէն առաջ ու յետոյ անոր ըրած արժանաւոր գործերը կ'ընդգծէին, սակայն անոնց փրկութիւն շնորհելու հանգամանքը Աստուծոյ ազատ կամքին կը վստահէին: 1510-ին, երբ Օգոստինոսն ու վերջին Միջին դարերու շրջանի օգոստինոսեանները կ'ուսումնասիրէր, աստուածաբանութեան մեջ Արիստոտէլի ունեցած տիրական ներգործութիւնը մերժող նոր ուղիներ կը բացուէին իր առջեւ:

Երբ Լուտեր Նամակ հռոմայեցիներունին մասին կը դասախօսէր, արդէն իսկ համոզուած էր, թէ փրկութիւնը Աստուծոյ հետ նոր յարաբերութիւն մըն էր, որ հիմնուած չէր մարդկային որեւէ արժանաւոր գործի վրայ, այլ Քրիստոսով տրուած թողութեան հանդէպ մեր ունեցած ամբողջական վստահութեան: Սուրբ Աստուծոյ ներկայութեան սրբութեամբ ապրելու աստուածային օրէնքը մեղաւորին մեղաւորութեան գիտակցութիւնը տալու, հպարտը խոնարհեցնելու ու ինքնարդարացածը խորտակելու համար էր եւ ո՛չ պարզապէս փրկութիւն բաշխելու: Աւետարանը, իր արմատական պատգամով, թէ *«անհաւատը կ'արդարանայ»* հաւատքով եւ ո՛չ գործերով (հմմտ.

Հո 1.17, 4.5), խոստովանող մեղաւորները Աստուծոյ հետ կը հաշտեցնէր: Ուրեմն փրկուածը, թէեւ չէր դադրեր մեղաւոր ըլլալէ, ազատօրէն եւ ամբողջապէս թողութիւն կը ստանար եւ Քրիստոսով Աստուծոյ հետ իր ունեցած այս նոր եւ երջանկալից յարաբերութեամբ Աստուծոյ կամքին համաձայն կ'ապրէր: Հաւատքը, որպէս սիրտին ամուր վստահութիւնը՝ Քրիստոսով Աստուծոյ գութին վրայ հաստատուած, սիրոյ գործերու կը մղէր. սակայն ո՛չ պարտադրաբար, - որովհետեւ փրկութիւնը այս գործերով պայմանաւորուած էր, - երախտագիտաբար, որովհետեւ փրկութիւնը արդէն իսկ ապահովուած էր: Մէրը հաւատքին ինքնաբոլիս պտուղն էր եւ դրացին սիրելու կը մղէր մարդը՝ ո՛չ Աստուծմէ ընդունուած ըլլալու պայմանաւորութեամբ: Արդ, հաւատքն էր եւ ո՛չ սէրը, ինչպէս դպրոցական աստուածաբանութիւնը կ'ուսուցէր, որ հոգին կը կապէր Աստուծոյ:

Լուտեր Պօղոս առաքեալին նման կը վերաշէշտէր այն ուսուցումը, թէ փրկութիւնը Աստուծոյ հետ ուղիղ անձնական յարաբերութիւն մըն էր. այսինքն՝ «անստեղծ շնորհին» հետ եւ ո՛չ Եկեղեցիի հաստատած «ստեղծուած շնորհներու» ճամբով: Այս յարաբերութիւնը հաստատուած էր եւ ապահովուած Աստուծոյ այն գութով, որուն արժանի էին արարածները առանց Քրիստոսի մարդկութեան համար յանձն առած չարչարանքներուն: Քրիստոս կը կրէր մեր մեղքերը, որպէսզի մենք Քրիստոսի արդարութեամբ, հաւատքով իր հետ կենդանի միութեան մէջ ըլլանք: Կարգ մը գերման խորհրդագագացներ կ'օժանդակէին Լուտերի ըսելու, թէ այս կերպարանափոխող վստահութիւնը մարդու մը գործերէն կախեալ չէր, այլ Աստուծոյ կողմէ որպէս նուէր կը տրուէր խոնարհ մեղաւորներուն:

Սեպտեմբեր 1517-ին Լուտեր կը հեղինակէր իր *Վերապահութիւն դպրոցական աստուածաբանութեան*-ը, ուր «Ինիսունեօթը թէզեր»-ով դէմ կ'արտայայտուէր Միջին դարերու դպրոցականութեան՝ ներառեալ «հնութեան ճանապարհ»-ը (թոմականներ եւ սգոթականներ) եւ «արդիականութեան ճանապարհ»-ը (օգիսմականներ): Ան կը յայտարարէր, թէ այն ուսուցումը, որ Աստուած միշտ շնորհ կը բաշխէր բոլոր անոնց,

որոնք իրենց մարդկային բնութեան հպատակելով իրենց կարողականութեան համաձայն բարին կը կատարէին, սխալ եւ պեղագեանութենէ աւելի գէշ էր: Ան նաեւ կը դատապարտէր նախկին դպրոցականները, որոնք կ'ուսուցէին, թէ մեղաւորներ ներումի կ'արժանանային, երբ իրենց փրկութիւնը ձեռք կը բերէին շնորհաձիր կեանքին մէջ իրագործուած արժանաւոր գործերով: Լուտերի համար, արդարացումի շրջագիծին մէջ «արժանիքի» որեւէ ակնարկութիւն հայեոյիչ, հերետիկոսական եւ պեղեգեան կը համարուէր: Այս հիմամբ, ան կտրականապէս կը մերժէր Եկեղեցիի աւանդական ուսուցումին մէջ տեղ գտած գործի եւ արդարացումի ամեն փոխառնչութիւն:

Լուտեր ասուպային ներշնչումով այս տեսակետներուն չէր հասներ: Անոր այսպէս կոչուած «աւետարանական շրջադարձը» երկար տարիներու վրայ կ'երկարէր՝ սկսելով 1513–1515-ի Սաղմոսները ընդգրկող դասախօսութիւններէն մինչեւ անոնց երկրորդ շարքին ներկայացումը 1518-ին: Այս շրջանին անոր կեցուածքը աւելի կը բիրեղանար, երբ մանաւանդ կը մասնակցէր քաւութեան թուղթերու հակամարտութիւններուն եւ եկեղեցական դատարաններուն մէջ հարցաքննութեան կը բերուէր: Մինչ 1515–1516-ին Լուտեր տակաւին կ'ըսէր, թէ խոնարհութեամբ արտայայտուած հաւատքը կ'արդարացնէր մեղաւորը, 1519-ին արդէն իսկ կ'ուսուցէր, թէ մեղաւորը կ'արդարանար, կ'ընդունուէր, մեղքերէն կ'արձակուէր եւ թողութեան կ'արժանանար միայն հաւատքով. այսինքն՝ միմիայն Աւետարանի ձրի ներողամտութեան վրայ իր ունեցած ամբողջական վստահութեամբ, Աստուծոյ խօսքով:

1517-ի սկիզբը Լուտերի շուրջ կը խմբուէին համախոհներ: Մեծ համակրութիւն կը շահէր Ուիթընպըրկի համալսարանին մէջ, երբ Աստուածաշունչն ու Եկեղեցիի հայրերը նախադասելով դէմ կ'արտայայտուէր արիստոտէլութեան եւ դպրոցականութեան: Իր գործընկերներէն Անդրէաս Պոտենսթայն Գարլսթատթցի (1480–1541) եւ Նիկողայոս Ամստորֆ (1483–1565) կըլլային իր ջերմ պաշտպանները: Ուիթընպըրկի

համալսարանը արդեն իսկ Լուսերական բարեկարգութեան կեդրոնը կը դառնար:

1517-ի ասարտին Լուսեր կը պարտաւորուէր դէմ արտայայտուելու կոպիտ զեղծարարութեան, երբ Լեւոն Ժ. պապ (1513–1521) Ալպրէիթ Պրանտընպըրկցին (1490–1545) արքեպիսկոպոս կը նշանակէր միաժամանակ Մայնցի, Մակտըպըրկի եւ Հալպերսթատի: Միաժամանակ երեք թեմերու վրայ իշխանութիւն ունենալու եկեղեցական կանոններուն դէմ եղող այս հրամանագիրը ձեռք բերելու համար՝ Պրանտընպըրկցի պարտաւոր էր մեծ գումար վճարել, որ փոխ կ'առնէր Օկսպուրկի Ֆուկըր դրամատունէն: Իր պարտքերը փակելու համար՝ Պրանտընպըրկցիի նաեւ կ'արտօնուէր քաւութեան թուղթեր վաճառել, որ պապականութիւնը սկսած էր 1506-էն հրապարակել՝ Հռոմի Սուրբ Պետրոս տաճարը կառուցելու համար: Քաւութեան թուղթերու գանձիչներէն էր տոմինիկեան պերճախօս վանական Յովհան Թեթզել (1470–1519), որ զանոնք գրաւիչ դարձնելու համար ճոխ գոյներով ներկել կու տար: Լուսեր գաղափար չունէր Պրանտընպըրկցիի եւ պապին նիւթական գործառնութենէն: Անոր ընդվզումը հովուական եւ աստուածաբանական էր՝ հիմնաւորելով, թէ քաւութեան թուղթերը թիր ապահովութիւն կը ներշնչէին ու ճշմարիտ քրիստոնէութեան կը հակասէին, որ Քրիստոսի եւ քրիստոնէային խաչը կրելը կը դաւանէր ու ո՛չ գալիք պատուհասէն խուսափումը: Երբ Յովհան Սաքսոնիա կը մօտենար, ուր մտնելու արտօնութիւն չունէր եւ սակայն Ուիթընպըրկէն բազմաթիւ ծխականներ սահմանը անցնելով անոր մօտ գացած եւ քաւութեան թուղթեր առած էին, Լուսեր քաւութեան թուղթերու զեղծարարութեան դէմ կը քարոզէր ու իր նշանաւոր «Ինիսունհինգ թէգեր»-ը պատրաստելով՝ 31 հոկտեմբեր 1517-ին օրինակներ կը դրկէր Ալպրէիթ Պրանտընպըրկցիին եւ իր թեմակալ Յերոնիմոս Պրանտընպըրկցի եպիսկոպոսին: Կը կարծուի, թէ նոյն օրը ան նաեւ իր «Ինիսունհինգ թէգեր»-ը կը կ'պցնէր Ուիթընպըրկի եկեղեցիի դուռին, որ որպէս համալ-

սարանի յայտարարութիւններու յատուկ ցուցատախտակ կը ծառայէր:

Ինչո՞ւ լատիներէնով գրուած եւ ակադեմական շրջանակներուն ուղղուած «Ինիսունհինգ թեզեր»-ը այսքան աղմուկ կը բարձրացնէին: Անոնց ոճն ու բովանդակութիւնը նուազ հրահրիչ էին քան սեպտեմբեր 1517-ի «Ինիսունեօթը թեզեր»-ը, բայց այս անգամ Լուտեր Հռոմէական եկեղեցիին եկամտաբեր աղբիւրներէն մին եւ պապական հեղինակութիւնը թիրախ ընտրած էր: Թէեւ այս թեզերը չէին ըսեր, թէ պապը իրաւունք չունէր քաւութեան թուղթեր շնորհելու, սակայն կը հարցադրէին, թէ անոնք ի՞նչ ազդեցութիւն ունէին քաւարանին յարաբերաբար եւ վստահաբար, եթէ պապը իմանար, թէ անոնք շահարկումի առարկայ կը դառնային, ան պիտի ընդդիմանար այս զեղծարարութեան:

Թէեւ այս թեզերը Լուտերի ամբողջ մտածողութիւնը չէին ցոլացնէր, սակայն անոր կարգ մը յեղափոխիչ սկզբունքները կը պարզէին: Ապաշխարութիւնը զոջումի միակ արարք չէր, այլ մարդու մը ամբողջ կեանքը ընդգրկող սիրտի եւ միտքի շարունակական փոփոխութիւն: Քրիստոնեան հետամուտ էր աստուածային կարգապահութեան եւ ո՛չ անկէ խուսափող: Եկեղեցիի ճշմարիտ գանձը պապական իշխանութեան ենթակայ Քրիստոսի եւ սուրբերուն բաշխած առատ արժանիքները չէին, այլ՝ «*Աստուծոյ փառքին եւ շնորհին ամենասուրբ Աւետարանը*», որ ապաշխարող մեղաւորներուն ձրիօրէն կը տրուէր հաւատացեալ քարոզիչներուն կողմէ (տե՛ս, J. Pelikan and H. T. Lehmann, eds., *Luther's Works*, 55 volumes, St. Louis and Philadelphia, 1955–1976, 31:31 [thesis 62]). ասկէ ետք նշուած որպէս *Luther's Works*): Գերմանիոյ խառնակ կացութեան մէջ շատ նշանակալից էր, որ մեծ յարգանք վայելող, թէեւ խոնարհ, կրօնական առաջնորդ մը այսպիսի խստութեամբ կը խօսէր ապաշխարութեան խորհուրդին առնչուած հովուական, աստուածաբանական եւ տնտեսական զեղծարարութիւններուն դէմ: Շարաթներու ընթացքին «Ինիսունհինգ թեզեր»-ը գերմաներէնի թարգմանուելով կը տարածուէին ամբողջ Գերմանիոյ մէջ: Զա-

նոնք տարածողները գլխաւորաբար գերման քաղաքներու մարդկայնականներու ընկերակցութիւններն էին, որոնց շարքերուն մէջ, Ուիթընպըրկէն դուրս, Լուտեր կը գտնէր իր առաջին դաշնակիցները:

Լուտեր չէր նախատեսած այս ըմբոստութիւնը: Լուտերի դէմ կ'ելլէր ժամանակին իր ընկերը եղած եւ Ինկուլսթատի համալսարանի աստուածաբանութեան դասախօս Յովհան Մայրը Էքցին (1486–1543), որ *Կոթողներ* գրութիւնը շրջանառութեան մէջ կը դնէր: Լուտեր որպէս հերետիկոս կ'ամբաստանուէր: Ան իր կեցուածքը կը պաշտպանէր «Քաւութեան թուղթեր եւ շնորհ» քարոզով եւ Յովհանի դէմ կը հրապարակէր իր *Աստղեր*-ը: 1518-ի սկիզբը Ալպրէխթ Պրանտընպըրկցի արքեպիսկոպոս եւ տոմինիկեաններ Լուտերը պաշտօնապէս կ'ամբաստանէին Հռոմի մէջ: Այս վէճը ւարստելու համար օգոստինոսեաններու մեծաւոր Գաբրիէլ Վոլթացիին կը յանձնարարուէր ապրիլ 1518-ին Լուտերը Հէյտըլպըրկի ընդհանուր ժողովին կանչել: Իր նշանաւոր «Հէյտըլպըրկի թէգերով», հոս Լուտեր ազատ կամքի եւ աստուածաբանութեան մէջ Արիստոտելի պատճառած սահմանափակութեան դէմ կը խօսէր եւ իր Խաչի աստուածաբանութեան գլխաւոր երեսները կը պարզէր: Այս առիթ կ'ըլլար նաեւ, որ ան շահէր նոր համակիրներ, որոնցմէ կ'արժէ առանձնացնել Մարթին Պուսերը (1491–1551) եւ Յովհաննէս Պրենզը (1499–1570), որոնք աւելի ուշ Սթրազպուրկի եւ Վուրթեմպերկի բարեկարգիչները պիտի դառնային: Նոյն ժամանակաշրջանին Լուտեր նաեւ կը հրատարակէր քաւութեան թուղթերու մասին իր առաւել մշակուած տեսակէտները՝ *Բացատրողականներ* անունով:

Լուտեր պապականութեան դէմ պայքարիլ չէր փափագեր: Ան կը հաւատար, թէ քաւութեան թուղթերու զեղծումներուն մէջ պապը իր նման պէտք էր կեցուածք ճշդէր, սակայն դէպքերը այնպէս կը զարգանային, որ ան անխախտօրէն իր տեսակէտներուն պէտք էր կառչէր եւ կամ տիրող անիրաւութեան գործակից դառնար: Յունիս 1518-ին, Լեւոն Ժ. պապի հրահանգով, պապական պալատի պատասխանատու եւ գրա-

քրննիչ տոմինիկեան Սիլվեսթրը Փրիերիաս (1456?–1523) Լուտերի պատասխան կը գրէր: Ան կը հաստատէր, թէ «Հռոմէական եկեղեցին կարդինալներով եւ մանաւանդ իր գերագոյն գլուխով կը ներկայանար, ու ան որ կ'ըսէր, թէ քաւութեան թուղթերու հարցով անոր կատարածը սխալ էր, հերետիկոս է» (տե՛ս, B. J. Kidd, ed., *Documents Illustrative of the Continental Reformation* (Oxford, 1911; reprint, 1970), pp. 31–32): Լուտեր Հռոմ կը կանչուէր 60 օրուան ժամկետի ընթացքին: Այս վճիռն ու Սիլվեսթրի պատասխանը Լուտերի կը հասնէր օգոստոսի սկիզբը:

Լուտեր փութով կրնար դատապարտուիլ, եթէ իրեն պաշտպան չունենար իր իշխանը՝ Ֆրետերիքը: Չենք գիտեր, թէ Ֆրետերիք որքանով կը համակրէր Լուտերի կրօնական հաւատալիքներուն, սակայն ան չէր թողուր որ Ուիթընպըրկի իր դասախօսը երթար Հռոմ, ուր ան միայն դատապարտութեան պիտի ենթարկուէր: Ֆրետերիքի քաղաքական միջամտութեամբ Լուտեր Օկսպուրկի մէջ պապական նուիրակ եւ համբաւուր աստուածաբան ու Թովմաս Ագուինացիի մասնագէտ Թովմաս Վիոցի-Գայթթանցի կարդինալին (1469–1534) կողմէ ունկնդրութեան կ'արժանանար: Պապը գաղտնօրէն յանձնարարած էր Վիոցի-Գայթթանցիին վեճի չբռնուիլ Լուտերի հետ եւ զայն ամեն գնով ձերբակալել: Ֆրետերիքի ազդեցութեամբ՝ Վիոցի-Գայթթանցի Վատիկանի վարչամեքենայէն կը խնդրէր աւելի ճկուն ըլլալ եւ կը համաձայնէր Լուտերը ընդունիլ առանց վիճաբանելու առիթ տալու: 12–14 հոկտեմբեր 1518-ին Վիոցի-Գայթթանցի եւ Լուտեր հանդիպումներ կ'ունենային: Վիոցի-Գայթթանցի կը հրահանգէր Լուտերի մանաւանդ յետս կոչել քաւութեան թուղթերու մասին պապականութեան հասցէին իր ըսածները: Լուտեր կը մերժէր, եւ 20 հոկտեմբերին Օկսպուրկէն կը հեռանար՝ պապին դիմելով՝ «զայն աւելի լաւ լուսաբանելու համար»: Այսքանով ալ չգոհանալով՝ Լուտեր Ուիթընպըրկէն ընդհանուր ժողովի գումարումի կոչ կ'ուղղէր: Հռոմի մէջ Լուտերի արժանացած համակրելի ունկնդրութիւնը կը բացայայտուէր Լեւոն Ժ. պապին նոյն ամիս հրապարակած կոնդա-

կով, ուր քաուրթեան թուղթերը կը բանաձեւուէին Լուտերի քննադատութեան համաձայն:

1518-ի ամառը Ուիթընպըրկի յունարէն լեզուի դասախօս կը նշանակուէր երիտասարդ գիտնական եւ Ռոշլինի զարմիկ Փիլիպպոս Մելանգթոն (1497–1560), որ անբաժանօրէն Լուտերի կը միանար: Երկուքը իրարու հակապատկերն էին: Մելանգթոն ամչկոտ եւ քաշուած նկարագիր ունէր ու շատ լաւ զարգացումի տէր էր: Լուտերի ուժեղ անահատկանութեան ազդեցութեան տակ՝ ան իր կարողութիւնները ի սպաս կը դնէր լուտերական տեսակէտներու տարածումին:

Մաքսիմիլիան կայսր 12 յունուար 1519-ին կը մահանար եւ նոր կայսրի ընտրութիւնը խնդրայարոյց կը դառնար: Լեոն Ժ. պապ Սպանիոյ Չարլզ եւ Ֆրանսայի Ֆրանսիս իշխաններուն թեկնածութեան դէմ էր, որովհետեւ անոնցմէ որեւէ մէկուն կայսր ընտրութիւնը Իտալիոյ վրայ օտար ազդեցութիւնը պիտի աճեցնէր. կը մնար Ֆրետերիքի թեկնածութիւնը: Ուրեմն այս օրերուն Ֆրետերիքի հովանին վայելող Լուտերի դէմ ըլլալը ձեռնտու չէր: Պապը իր սենեկապան Գարլ Միլթիթզ Սաքսոնացին որպէս պապական նուիրակ, բացառիկ յարգանքի ցուցանիշ ոսկեայ վարդով, Ֆրետերիքի մօտ կ'նուարկէր: Գարլ, խորհելով, որ կրնար այս վէճը լուծել, ինքնագլուխ Յովհան Թեթզելի հետ կը տեսնուէր եւ ապա 4–6 յունուար 1519-ին Լուտերի հետ հարցազրոյց կ'ունենար: Լուտեր կը համաձայնէր վիճարկելի նիւթերու մասին չարտայայտուիլ, եթէ իր հակառակորդները ընէին նոյնը՝ հարցը գերման ուսեալ եպիսկոպոսներուն յղել եւ խոնարհաբար նամակ գրել պապին:

Սակայն գործնականօրէն համաձայնութեան յանգիլը անկարելի կը դառնար: Լուտերի Ուիթընպըրկի գործընկեր Անդրէաս Պոտենսթայն Գարլսթատթցի, հակադարձելով Յովհան Մայրը Էքցիի 1518-ին, կ'ըսէր, թէ Աստուածաշունչը ամբողջ Եկեղեցիի հեղինակութենէն գերիվեր էր: Յովհան հրապարակային վիճարկում կը պահանջէր, Անդրէաս համաձայն կ'ըլլար, եւ Լուտեր եւս միջամտելով կ'առարկէր, թէ Աստուածաշունչին յարաբերաբար Հռոմէական եկեղեցիի գե-

րագահութիւնը պատմականօրէն եւ ըստ Աստուածաշունչին՝ չէր արդարանար: Յունիս եւ յուլիս 1519-ին այս մեծ վիճարկումը տեղի կ'ունենար Լայփցիկի մէջ: Անդրէաս միջակ յաջողութիւն կ'արձանագրէր Յովհանի դիմաց: Լուտեր աւելի փայլուն ելոյթ կ'ունենար, սակայն Յովհան ճարպիկօրէն ծուղակը կը ձգէր Լուտերը, երբ ան Յովհաննէս Հուսի տեսակէտները պաշտպանելով կ'ըսէր, թէ Կոնստանսի ժողովը սխալած էր դատապարտելով Յովհաննէսը: Յովհան յաղթանակած ըլլալու գոհունակութեամբ կը յայտարարէր, թէ ով որ ընդհանուր ժողովին անսխալականութիւնը կը մերժէր, «հեթանոս եւ մաքսաւոր էր»: Լուտեր նեղ կացութեան կը մատնուէր: Ան արդէն իսկ մերժած էր պապին անսխալականութիւնն ու վճռաբեկ իշխանութիւնը եւ հիմա ընդհանուր ժողովները սխալական կը համարէր: Այս քայլերը Միջին դարերու եկեղեցական ամբողջ հեղինակութիւնը փուլ կը բերէին եւ վերջին խօսքը միայն Աստուածաշունչին կը ձգէին: Յովհան կը կարծէր, թէ հարցը պիտի փակուէր, եթէ պապը դատապարտութեան կոնդակ հրապարակէր Լուտերի դէմ:

Այդ կոնդակը լոյս կը տեսնէր 15 յունիս 1520-ին:

Լուտեր այլեւս բաց պատերազմի մէջ կը գտնուէր: Անոր գաղափարները հետզհետէ աւելի կը բիրեղանային: Ուրիշի Հուլթընցիի նման մարդկայնական համախոհներ կը խմբուէին անոր շուրջ՝ հաւատալով, թէ ան կրնար Հռոմի դէմ պայքարը գլխաւորել: Տիգիքական ուժը բացառելով՝ Լուտեր ինքզինք կը նուիրէր Գերմանիոյ պապականութենէն հոգեւոր ազատագրութեան՝ իբրեւ Հակաքրիստոս համարելով զայն: Ան նաեւ կը բացայայտէր միայն հաւատքով արդարանալու իր վարդապետութիւնը: Մայիս 1520-ին կը հրապարակէր իր *Բարի գործերու մասին* երկը եւ հաստատելէ ետք, թէ Քրիստոսի հանդէպ եղած հաւատքը *«բոլոր բարի գործերէն աւելի առաջնահերթ, վեհ եւ թանկարժէք էր»*, որովհետեւ միայն հաւատքը կրնար մեղաւորին խիղճը Աստուծոյ հանդէպ վստահութեան եւ կամքը իր նմանին հանդէպ սիրոյ մղել, հետեւաբար դատապարտելի էին որպէս *«նեղ իմաստով բարի գործեր սահմանուած Եկեղե-*

ցիի մէջ աղօթելը, պահեցողութիւնը եւ ողորմութիւնը» (տե՛ս, *Luther's Works*, 44:23–24): Ամենօրեայ կեանքը Աստուծոյ ծառայութեան նուիրելը, քան աշխարհէն մեկուսացած վանական մենակեաց կեանքը, Լուտերի մեծագոյն նպաստը պիտի հանդիսանար բողոքական մտածողութեան, ինչպէս նաեւ ամենաշատկանշական շեղումը հին եւ Միջին դարերու քրիստոնէական կատարելութեան գաղափարականէն:

1520-ին Լուտեր կը նախաձեռնէր գրական երեք մեծ աշխատասիրութիւններու: Առաջինը լոյս կը տեսնէր օգոստոսին եւ կը կոչուէր *Գերման ազգի քրիստոնէական ազնուականութեան*: Մեծ եռանդով եւ մաքուր գերմաներէնով գրուած այս երկը շուտով կը տարածուէր Գերմանական կայսրութեան մէջ: Ան կը գրէր, թէ պապականութիւնը ոտքի պահող երեք սիւները խորտակուած էին: Հոգեւորականութեան աշխարհականութենէն գերիվեր ըլլալը անհիմն էր, որովհետեւ բոլոր հաւատացեալները իրենց մկրտութեամբ քահանաներ էին: Ընդհանրական քահանայութիւնը կը խորտակէր նաեւ երկրորդ սիւնը, որ պապականութեան պատկանող Աստուածաշունչի մեկնութեան մենաշնորհն էր: Իսկ փուլ եկած երրորդ սիւնը միայն պապին կողմէ հրաւիրուող բարեկարգչական ժողովն էր: Լուտեր կը գրէր, թէ «վաւերական եւ ազատ ժողովը» պէտք էր աշխարհական իշխանութիւններուն կողմէ հրաւիրուէր: Ան նաեւ բարեկարգութեան ոչ-աստուածաբանական այլ գործնական ուղեգիծ մը կը մշակէր, որուն համաձայն՝ պէտք էր պապական թիւր կառավարումը, նշանակումներն ու տուրքերու գանձումը աւարտէին, անտեղի ճնշումները դադրէին, Գերման եկեղեցիի մտահոգութիւններու բեռը վստահուէր «Գերմանիոյ առաջնորդին», հոգեւորականներու ամուսնութիւնը արտօնուէր, սուրբերու տօներու քանակը նուազէր՝ ի շահ աշխատանքի եւ ուսելիքի ու խմիչքի ժուժկալութեան, մուրացկանութիւնը, ներառեալ շրջուն միաբանութիւններունը, արգիլուէր, հանրատուները փակուէին, զեխութիւնը խափանուէր եւ համալսարանական աստուածաբանական կրթութիւնը բարեկարգուէր: Անկասկած Լուտերի այս մօտեցումը խոր ազդեցութիւն կը

գործեր: Լուտեր կը դառնար Եկեղեցին բարեկարգելու ձգտող բոլոր մտահոգ անձերուն ներկայացուցիչը:

Երկու ամիս ետք Լուտեր լատիներէնով կը հրատարակեր իր *Եկեղեցիի բարելոնեան գերութիւնը* երկը, որուն մէջ Եկեղեցիի խորհուրդները կը քննարկէր եւ անխնայօրէն կը քննադատէր Հռոմէական եկեղեցին: Ան «խորհուրդ» հասկացութիւնը կը վերապահէր «այն թողութեան խոստումներուն, որոնք արտաքին նշաններով կը փոխանցուէին» եւ կ'ըսէր, թէ ըստ Աստուածաշունչին՝ Քրիստոս հաստատած էր միայն երկու խորհուրդ՝ մկրտութիւնն ու Վերջին ընթրիքը (տե՛ս, *Luther's Works*, 36:124): Թէեւ ապաշխարութիւնը (գղջում, խոստովանութիւն, արձակում) արտաքին նշան չունէր, սակայն խորհուրդի համարժէք էր որպէս մկրտութեան վերադարձի ամենօրեայ հրաւեր: Լուտեր կը փափագէր անհատական խոստովանութիւնը պահել «որպէս անփոխարինելի դարման խղճահար քրիստոնէային» (տե՛ս, *Luther's Works*, p. 86): Բոլոր խորհուրդներու պարագային ալ կեդրոնական նշանակութիւն ունեցողը նշանը չէր, այլ թողութեան աստուածային խօսքը, որ միայն հաւատքով կը ստացուէր: Այս հասկացողութեան լոյսին տակ վանական ուխտերը, ուխտագնացութիւնները եւ արժանիք բերող գործերը՝ մեղքերու թողութեան համար մարդերու կողմէ հաստատուած եւ իրագործուող փոխառութիւններ էին այն ձրի պարգեւին, որ արդէն իսկ մկրտութեամբ Աստուծմէ ուղղակի շնորհուած էր: Լուտեր նաեւ կը քննադատէր սուրբ հաղորդութեան գինին հաւատացեալներուն չմատակարարելը, կասկածներ կը յայտնէր գոյացափոխութեան մասին եւ մանաւանդ կը մերժէր սուրբ պատարագին Աստուծոյ ընծայուած զոհ ըլլալը: Ան կը յայտարարէր, թէ միւս խորհուրդները (դրոշմ, պսակ ամուսնութեան, ձեռնադրութիւն եւ վերջին օծում) խորհուրդներ չէին կրնար նկատուիլ՝ ըստ Աստուածաշունչի:

Հակառակ փոթորկոտ վերիվայրումներուն եւ Գերմանիոյ մէջ հրապարակուած պապական դատապարտութեան կոնդակին՝ 1520-ին Լուտեր կը հեղինակէր իր երրորդ ջատագովական երկը՝ *Քրիստոնէային ազատութիւնը*: Ան խոր վստա-

հութեամբ կը ներկայացնէր քրիստոնէային գոյութեան խոր-
հուրդը. «Քրիստոնէան ինքն իր տէրն է եւ որեւէ մէկուն ենթա-
կայ չէ, սակայն միաժամանակ ան բոլորին ծառան է եւ բոլորին
ենթակայ» (տե՛ս, *Luther's Works*, 31:344): Հաւատացեալներ
ազատ էին, որովհետեւ միայն հաւատքով արդարացած էին,
այլեւս գործերու օրէնքին տակ չէին եւ Քրիստոսի հետ անա-
կան նոր կապ մը հաստատած էին: Հաւատացեալներ ծառաներ
էին, որովհետեւ սիրոյ պարտաւորութեամբ Աստուծոյ կամքին
կը հնազանդէին եւ իրենց դրացիներուն օգտակար կը հան-
դիսանային: Այս երկին նախաբանը Լեւոն Ժ. պապին ուղղուած
«բաց նամակ» մըն էր, որ պապին անձին հանդէպ բարի տրա-
մադրութիւններ սնուցելով հանդերձ պապական ատեանն ու
պապականութեան հանգամանքները կը դատապարտէր՝ ներ-
կայացնելով պապը որպէս «գայլերու մէջ նստած գառնուկ մը»:
Թէեւ Լուտերի տեսիլը աստիճանաբար աւելի պիտի յստակա-
նար, սակայն Աւետարանի անոր ըմբռնումը արդէն իսկ իր
գլխաւոր գիծերուն մէջ ամբողջական էր 1520-ին:

Մինչ այդ Յովհան Մայրը Էքցի եւ Ճիրոլամօ Ալէանտորը
(1480–1542) որպէս պապական նուիրակներ Գերմանիա կը
բերէին պապական կոնդակը: Անոր հրապարակումը Ուիթըն-
պըրկի մէջ կ'արգիլուէր, իսկ Գերմանիոյ այլ մասերուն մէջ ան
գաղջ կամ վանողական ընդունելութեան կ'արժանանար: Ճիրո-
լամօ կը յաջողէր գայն Հոլանտայի մէջ հրապարակել եւ Լուտե-
րի գիրքերը այրել տալ Լուվէնի, Լիէժի, Անթվերփի եւ Քեօլնի
մէջ: 10 դեկտեմբեր 1520-ին Լուտեր կը հակադարձէր Ուիթըն-
պըրկի ուսանողներուն եւ բնակիչներուն ներկայութեան այրե-
լով պապական կոնդակն ու կանոնագիրքը՝ առանց քաղաքա-
կան իշխանութիւններու միջամտութեան: Յստակ էր, թէ Գեր-
մանիոյ մէկ կարեւոր տոկոսը եկեղեցական յեղափոխութեան
մէջ էր եւ կացութիւնը Գերմանական կայսրութեան գերագոյն
իշխանութիւններուն ուշադրութեան առարկան պէտք էր դառ-
նար:

18 յունիս 1519-ին, երբ Լայփցիկի վէճը կը շարունակուէր,
Մաքսիմիլիանի թոռը՝ Չարլզ Ե. (1500–1558), կը բազմէր Հռո-

մեական սրբազան կայսրութեան գահը: Այսպէսով Չարլզ, որ արդէն իսկ Սպանիոյ, Հոլանտայի եւ Աւստրիոյ Հափսպուրկ գերդաստանի տարածքներուն ժառանգորդն ու Իտալիոյ մէջ բաւական ընդարձակ տարածքներու եւ Ատլանտեան ովկիանոսէն անդին նորագիտ տարածքներու տէրն էր, Շարլըմայնէն ի վեր ամենարնդարձակ տարածքը ունեցող եւրոպացի տիրակալը կը դառնար: Սակայն Գերմանիոյ մէջ անոր հեղինակութիւնը կը սահմանափակուէր տեղական իշխանութիւններուն կողմէ: Չարլզի երիտասարդ եւ անձանօթ ըլլալուն՝ կրօնական պայքարներու մէջ եղող երկու կողմերն ալ կը յուսային՝ վայելել անոր օժանդակութիւնը: Խորքին մէջ ան իր մեծ մօր՝ Գասթիյի Իզապելլային նման համոզուած կաթոլիկ մըն էր եւ միաժամանակ կը բաժնէր անոր բարեկարգչական տեսակէտներն ու հոգեւորականութեան բարոյական, դաստիարակչական եւ վարչական մակարդակի բարձրացումը, սակայն չէր ցանկար Եկեղեցիի վարդապետական ու նուիրապետական Միջին դարերու կառոյցին մէջ փոփոխութիւն մտցնել:

Գերմանիոյ մէջ իր կառավարութիւնը կարգաւորելու եւ Ֆրանսայի ու Սպանիոյ Իտալիոյ մէջ ունեցած մրցակցութեան դէմ պատերազմի պատրաստուելու համար՝ յունուար 1521-ին Վորմզի մէջ Չարլզ խորհրդարանը ժողովի կը հրաւիրէր: Թէեւ օրակարգի վրայ այլ հրատապ հարցեր կային, սակայն ամեն ոք Լուտերի հարցին առաջնահերթութիւն կու տար: Պապական նուիրակ Ճիրոլամօ Ալէանտըր անմիջական դատապարտութիւն կը պահանջէր, երբ մանաւանդ արդէն իսկ 3 յունուար 1521-ին հաղորդագրկումի պապական կոնդակը լոյս տեսած էր: Քանի որ Լուտեր պապին կողմէ դատապարտուած եւ հաղորդագրկուած էր, խորհրդարանը իրաւասութիւն ունէր այս վճիռի գործադրութիւնը միայն պահանջելու, – կ'առարկէր Ճիրոլամօ: Միւս կողմէ՝ Լուտեր մեծ ժողովրդականութիւն կը վայելէր եւ իր իշխանը՝ Ֆրետերիք, որ ճարպիկ դիւանագետ մըն էր, կը պնդէր, թէ Լուտեր ցարդ բաւարար ունկնդրութեան չէր արժանացած: Ֆրետերիք եւ այլ ազնուականներ կը փափագէին, որ խորհրդարանը նախ լսէր Լուտերը եւ ապա որոշումի յանգէր:

Չարլզ այս երկու տեսակետներուն մէջ կը տարուբերեր. ան թէեւ համոզուած էր, որ Լուտեր դատապարտելի հերետիկոս մըն էր, սակայն չէր ուզեր կտրականօրէն դէմ կենալ գերման զգացումներուն եւ միաժամանակ կ'ուզեր Ֆրանսայի դէմ իր պայքարին մէջ պապը իր կողմը շահիլ:

Լուտեր կայսերական հսկողութեան տակ Վորմզ կը բերուէր: Ան Ուիթընպըրկէն ճամբայ կը դրուէր ժողովրդային մեծ խանդավառութեամբ: 17 ապրիլ 1521-ին ան կայսրին եւ խորհրդարանին կը ներկայանար: Իր գիրքերը ցոյց տալով՝ հարց կու տային անոր, թէ կը հրաժարէր անոնց հեղինակութենէն: Լուտեր պատասխանելու համար ժամանակ կը խնդրէր: Մէկ օր ժամանակ կը տրուէր իրեն եւ յաջորդ օրը երեկոյեան ան դարձեալ ժողովի կու գար: Ան կ'ընդունէր, թէ հակադարձութիւններու յորձանքին մէջ կարգ մը մարդերու հանդէպ ծայրայեղ տեսակետներ պարզած էր, սակայն իր գրածներուն բովանդակութենէն չէր կրնար հրաժարիլ, եթէ իր սխալը «*Աստուածաշունչին կամ տրամաբանութեան հիմամբ չհաստատուէր*» (տե՛ս, *Luther's Works*, 32:112): Կայսրը, չհաւատալով, որ ընդհանուր ժողովին անսխալականութիւնը ժըխտող այսպիսի համարձակութիւն արտօնուած էր, կ'աւարտէր վիճաբանութիւնը: Լուտեր կը գոչէր. «Այլ կարելիութիւն չեմ տեսներ. ահաւասիկ հոս ձեր ներկայութեան եմ. Աստուած թող օգնէ ինձի. ամէն»: Այս խօսքերը Լուտերի անտեղիտալիութիւնը կը հաստատէին: Ան, ի պաշտպանութիւն ճշմարտութեան, իր համոզումներուն համար պատմական մեծ վկայութիւն կու տար իր ազգի գերագոյն ատեանին առջեւ: Իր քաջութիւնը հաստատող աւելի մեծ ապացոյց կարելի չէր գտնել:

Լուտերի ունկնդիրները երկու մասերու բաժնուած էին. ան կը մերժուէր կայսրին եւ հոգեւորական առաջնորդներուն կողմէ, սակայն դրական ազդեցութիւն կը գործէր բազմաթիւ գերման ազնուականներուն վրայ, ներառեալ Ֆրետերիքը: Ֆրետերիք թէեւ կ'ընդունէր, թէ Լուտեր բիրտ կեցուածք կ'որդեգրէր, սակայն համոզուած էր, թէ որպէս բարեկարգիչ պետք էր իր աշխատանքը շարունակէր: Ժողովը ի վնաս Լուտերի կը

վճռեր: Ան կը ձերբակալուէր կայսրին կողմէ եւ անոր գիրքերը հրոյ ճարակ կը դառնային: Այս վճիռը բնաւ յետս չէր կոչուէր, եւ Լուտեր ամբողջ կեանքին ընթացքին որպէս հերետիկոս եւ ըմբոստ կը մնար կայսերական դատապարտութեան տակ:

Եթէ Գերմանիա քաղաքական կեդրոնական ուժեղ հեղինակութիւն ունենար, Լուտեր անմիջապէս մարտիրոսի մահուան կ'արժանանար: Սակայն նոյնիսկ կայսերական վճիռը չէր գործադրուէր շնորհիւ Ֆրետերիքի նման շրջանային տիրական ղեկավարի մը նեցուկին, որ չուզելով բացայայտօրէն Լուտերը պաշտպանել, զայն բարեացակամ միջոցներով ձերբակալել կուտար եւ Էյզընսխի մօտ գտնուող Ուրբթալըկի դղեակը կը բանտարկէր: Ամիսներ շարունակ Լուտերի թաքստոցը անծանօթ կը մնար. սակայն ան գրիչով կը շարունակէր իր շղթայագերծած պայքարը: Ան առաւել խստութեամբ կը քննադատէր Հռոմէական եկեղեցին, սակայն այս ժամանակաշրջանի իր ամենէն արդիւնալից աշխատանքը կ'ըլլար Նոր կտակարանի գերմաներէն թարգմանութիւնը, որուն դեկտեմբեր 1521-ին կը նախաձեռնէր եւ որ սեպտեմբեր 1522-ին կ'աւարտէր:

Անշուշտ Լուտեր Աստուածաշունչը գերմաներէնի թարգմանող առաջին անձը չէր, սակայն նախկին թարգմանութիւնները Վուլկաթայէն եղած էին եւ այնքան ալ հարազատ չէին: Լուտեր իր թարգմանութիւնը ո՛չ միայն յունարէն բնագիրէն կը կատարէր, հիմք ընդունելով Երազմոսի աշխատանքը, այլեւ Աստուածաշունչը դիւրընթեռնելի կը դարձնէր: Այս իմաստով՝ ան ապագայ գերման գրականութեան բիւրեղացումի կալուածին մէջ եւս օգտակար կը հանդիսանար: Բայց այս թարգմանութիւնը մեծ դերակատարութիւն կ'ունենար մանաւանդ գերման կրօնական կեանքի զարգացումին մէջ: Աստուածաշունչին հանդէպ, որպէս Աստուծոյ խօսքի, իր ունեցած խոր յարգանքին կողքին, Լուտեր ունէր նաեւ իր քննադատական մօտեցումը, երբ մանաւանդ հարցը կը վերաբերէր այն գիրքերուն, որոնք Քրիստոսի եւ շնորհով հաւատքով միայն արդարացումի հարցը կը շօշափէին: Այս սկզբունքէն մեկնելով՝ ան կը վճռէր, թէ Նամակ երբայեցիներունը, Ընդ-

հանրական նամակ Յակոբոսինը, Ընդհանրական նամակ Յուդայինը ու Յովհաննէսի յայտնութիւնը նուազ արժէք ունէին եւ չէին պատկանէր «Նոր կտակարանի ճշմարիտ ու գլխաւոր գիրքերու շարքին» (տե՛ս, *Luther's Works*, 35:394): Լուտերի համար նոյնիսկ Աստուածաշունչին մէջ արժէքներու համակարգ գոյութիւն ունէր:

Երբ Լուտեր Աստուածաշունչի թարգմանութեան նախաձեռնած էր, Մելանգթոն Ուիթընպըրկի մէջ լոյս կ'ընծայէր իր *Աստուածաբանութեան գլխաւոր կէտերը*: Կարելի է ըսել, թէ այս երկով լուտերական կարգաւորեալ աստուածաբանութիւնը կը տարածուէր: Յաջորդ հրատարակութիւններով ան պիտի ընդարձակուէր, խորանար եւ քարեփոխուէր:

Բ. ԳԼՈՒԽ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԽԶՈՒՄՆԵՐ

Մարթին Լուտերի Ուրբաթըրկ եղած ժամանակ թէև Ուիթընպըրկ կը գրկուէր անոր առաջնորդութենէն, սակայն եկեղեցական յեղափոխութիւնը կը շարունակուէր անոր գործակիցներուն ղեկավարութեամբ: Համալսարանին մէջ Լուտերի գործընկերներն էին Անդրէաս Պոտենսթայն Գարլսթատթցի, Նիկողայոս Ամստրֆ եւ Մելանգթոն: 1521-ի կէսին ասոնց կը միանային Յովհաննէս Պուկընհակըն (1485–1558) եւ Եուսթոս Եոնաս (1493–1555):

Խումբին ղեկավարութիւնը կը ստանձնէր Անդրէաս:

Յարդ Լուտերի ձգտումները հաւաքական պաշտամունքի կամ վանական կեանքի մէջ փոփոխութիւններ չէին բերած, սակայն անոնք մօտ ատենէն զգալի պիտի դառնային: Հոկտեմբեր 1521-ին Լուտերի ջերմեռանդ հետեւող Գաբրիէլ Չուիլինկ վանականը (1487?–1558) կը մերժէր սուրբ պատարագը եւ եկեղեցական ուխտերը: Ան մեծաթիւ հետեւորդներ կ'ունենար մանաւանդ Ուիթընպըրկի օգոստինոսեան վանքէն, ուր շատեր կը լքէին վանականութիւնը: Նոյն կիրքով Գաբրիէլ եւս կը մերժէր սրբապատկերներու գործածութիւնը: 1521-ի Սուրբ ծնունդին Անդրէաս կը պատարագէր դղեակի եկեղեցիին մէջ՝ առանց քահանայական զգեստաւորումի եւ սուրբ հաղորդութեան զոհագործական մատուցումի, եւ հացին հետ զինին եւս մատչելի դարձնելով ժողովուրդին: Խոստովանութիւններն ու պահքերը կը դադրէին: Ան կ'ուսուցէր, թէ բոլոր քահանաները պէտք էր ամուսնանային եւ յունուար 1522-ին ինք եւս ամուսնութիւն կը կնքէր: Ան նաեւ կը մերժէր սրբապատկերներու, երգեհոնի եւ գրիգորեան շարականներու գործածութիւնը հրապարակային պաշտամունքներու ընթացքին: Իր պնդումով՝ Ուիթընպըրկի քաղաքապետութիւնը կ'արգիլէր կրօնական եղբայրակցութիւններու գոյութիւնը եւ կը բռնազրբաւէր անոնց ստացուածքները, կը վճռէր, որ իրենց արա-

րողութիւնները գերմաներէնով կատարէին, կը դատապարտէր սրբապատկերներու եկեղեցիներուն մէջ գործածութիւնը եւ կը խափանէր մուրացկանութիւնը՝ հրամայելով, որ կարիքաւորները պէտք էր դիմէին քաղաքապետարանի օժանդակութեան: Ժողովրդային շարժումը աւելի կը բորբոքէր, երբ Զուիքաուէն 27 դեկտեմբեր 1521-ին երեք արմատական քարոզիչներ՝ Նիկողայոս Սթորչ, Մարկոս Թովմաս Սթուպնըր եւ Թովմաս Տրեշարլ Ուիթընպըրկ կը ժամանէին: Այս «մարգարէները» աստուածային ներշնչումով կ'արգիլէին երեխաներու մկրտութիւնը եւ կը քարոզէին աշխարհի մօտալուտ վախճանը:

Այս փոթորիկը կը մղէր ժողովուրդը սրբապատկերներու վրայ յարձակելու եւ Ֆրետերիք իշխանի ու այլ գերման իշխաններու եւ կայսերական իշխանութեան տհաճութիւնը գրգռելու: Քաղաքապետութիւնը Լուտերէն կը խնդրէր Ուիթընպըրկ վերադառնալ: Ֆրետերիք քաղաքական նկատառումներով կ'արգիլէր Լուտերի վերադարձը, սակայն 6 մարտ 1522-ին ան Ուիթընպըրկ կու գար: Լուտեր ութ օր անընդհատ կը քարոզէր եւ իր հեղինակութիւնը կը վերահաստատէր: Ան կ'ըսէր, թէ Աւետարանը մեղքի գիտակցութիւնը կ'արթնցնէր մարդուն մէջ եւ զայն Քրիստոսով թողութեան արժանանալու ու իր նմանը սիրելու կը մղէր: Մեծ փոթորիկ պատճառած փոփոխութիւնները մի միայն արտաքին երեւոյթներ էին եւ միայն խիստ օրէնքները պահելու մէջ տկարութիւն ունեցողներուն կողմէ պէտք էր գործադրուէին: Լուտեր կացութեան տէր կը դառնար: Անդրէաս Պոտենսթայն Գարլսթատթցի իր հեղինակութիւնը կը կորսնցնէր եւ քաղաքէն կը հեռանար: Շատ մը փոփոխութիւններ առ այժմ կը վերահաստատուէին եւ պաշտամունքի նախկին կարգ կանոնը վերստին կ'որդեգրուէր: Այսպէսով Լուտեր պահպանողական կեցուածք կ'որդեգրէր: Ան ո՛չ միայն Հռոմէական եկեղեցիի հետեւորդներուն կը հակադրուէր, այլ՝ նաեւ բոլոր անոնց, որոնք արագ փոփոխութիւններ մտցնելու հակում ունէին: Բարեկարգութեան կողմնակիցները բաժան-բաժան կ'ըլլային: Սակայն այս քայլը Լուտերի իմաստութեան կը պարտինք: Բազմաթիւ գերման

իշխանաւորներ բարեացակամութեամբ կը վերաբերէին անոր հետ, երբ Վորմզի մէջ դատապարտուած Լուտեր կը դառնար ամբոխը հանդարտեցնող միակ հեղինակութիւնը: Այս բոլորին մէջ մասնաւորաբար շատ կենսական էր Ֆրետերիքի դրական նեցուկը, առանց որուն Լուտեր անկասկած պարտութեան պիտի մատնուէր:

Մինչ այդ կայսրը Իտալիոյ տիրելու համար Ֆրանսայի դէմ մղուած պատերազմով զբաղած էր եւ 1521–1530-ին նոյնիսկ Գերմանիա չէր գտնուեր, որ բարեկարգութեան դէմ պայքարէր: Լեոն Ժ. պապ կը վախճանէր դեկտեմբեր 1521-ին, որուն կը յաջորդէր Չարլզ Ե.-ի դաստիարակը՝ Ատրիան Զ.: Պապ մը, որ Միջին դարերու ուղղափառութեան ջերմ պաշտպան ըլլալով հանդերձ՝ կը հաւատար պապականութեան բարոյական եւ վարչական բարեփոխութիւններուն, սակայն միայն 20 ամիս գահակալելով չէր յաջողէր Լուտերի հերետիկոսական շարժումին դէմ դնել եւ զայն աստուածային պատիժ կը համարէր: Լուտերի հանդէպ համակրանքը արագօրէն կ'աճէր ո՛չ միայն Մաքսոնիոյ, այլեւ Գերմանիոյ քաղաքներուն մէջ: Նոյեմբեր 1522-ին խորհրդարանը նիստի կը հրաւիրուէր Նուրենպերկի մէջ եւ Ատրիան Զ. պապական նուիրակի մը հետ հրահանգ կ'ուղարկէր՝ պահանջելով Լուտերի դէմ Վորմզի վճիռի վերահաստատումը, միաժամանակ ընդունելով, թէ եկեղեցական վարչական կեանքին մէջ բացթողումներ կային: Խորհրդարանը մերժողական պատասխան կու տար եւ Եկեղեցիի բարեկարգութեան համար յատուկ ժողով կը պահանջէր, որ մէկ տարւան ընթացքին պէտք էր Գերմանիոյ մէջ հանդիպէր եւ մի միայն հիմք ունենար «ճշմարիտ, բիւրեղ, հարազատ սուրբ Աւետարանի» քարոզութիւնը: Խորհրդարանը կը վերայայտնէր նաեւ պապականութեան վարչական ընթացքին հանդէպ իր ունեցած հին գանգատները: Անշուշտ խորհրդարանին այս վերաբերումը Լուտերին եւ անոր հետապնդած դատին համար յաղթանակ մըն էր: Այնպէս կը թուէր, թէ ամբողջ գերման ժողովուրդը բարեկարգութեան նեցուկ կը հանդիսանար:

Այս բարեյաջող պայմաններուն մէջ «աւետարանական» (այսինքն՝ անոնք, որոնք կը յայտարարէին, թէ «ըստ Աւետարանի բարեկարգուած էին») եկեղեցական համայնքներ փութով կը կազմաւորուէին Գերմանիոյ զանազան շրջաններուն մէջ՝ առանց կանոնագրութեան եւ յստակ պաշտամունքի կարգի: Լուտեր արդէն իսկ համոզուած էր, թէ հաւատացեալներու այսպիսի համայնքներ ամբողջական իրաւասութիւնը ունէին իրենց հովիւները նշանակելու կամ պաշտօնանկ ընելու: Ան միաժամանակ կ'ըսէր, թէ այս համայնքներուն ժամանակաւոր ղեկավարները, ինչպէս «ի պահանջել հարկին եպիսկոպոսները», մեծ պատասխանատութիւն ունէին Աւետարանը տարածելու մէջ: Սակայն Լուտեր շուտով այս «ազատ եկեղեցականութեան» դրութենէն դուրս պիտի ելլէր ապստամբ գիւղացիները զսպելու եւ ընդարձակ տարածքներու մէջ եկեղեցական կազմակերպուածութիւն իրագործելու համար՝ գործակցելով աշխարհիկ իշխանութիւններու հետ ու միշտ պնդելով, թէ անոնց հոգեւոր հեղինակութիւնը միայն ժամանակաւոր հանգամանք ունէր:

Աւետարանական նոր պաշտամունքը կարգաւորելու համար, 1523-ին Լուտեր կը հրատարակէր իր *Կարգ հասարակաց պաշտամունքին*-ը, ուր կ'ընդգծէր քարոզախօսութեան կեդրոնական տեղը: Իր *Պատարագի բանաձեւ*-ին մէջ տակաւին լատիներէնը օգտագործելով հանդերձ՝ կը զեղչէր գոհագործական բաժինները, հաւատացեալները հացով եւ զինիով կը հաղորդէր եւ անոնց կողմէ ժողովրդական շարականներու երգեցողութիւնը կը քաջալերէր: Իսկ իր *Մկրտութեան կարգ*-ին մէջ գերմաներէնով ամփոփ մկրտութեան արարողութիւն մը կը խմբագրէր: Անհատական սուրբ պատարագներն ու ննջեցեալներուն համար մատուցուած սուրբ պատարագները՝ ասոնց առնչուած նիւթական նուէրներով կը դադրէին, սակայն Լուտեր այնպէս մը կը տնօրինէր, որ այս առթիւ քահանաներուն տրուած նուէրները քաղաքապետարանին կողմէ ամսական դրութեան վճարումով փոխարինուէին: Լուտեր կ'ըսէր, թէ պաշտամունքի կարգին մէջ կարելի էր փոփոխութիւններ կա-

տարել՝ առանց խախտելու «Աստուծոյ խօսքին» կեդրոնական տեղը: Բարեկարգեալ զանազան համայնքներ զգալի տարբերություններ կ'ունենային, սակայն հիմնական փոփոխությունը գերմաներէնի գործածութեան արագ տարածումն էր, որուն համար ալ 1526-ին Լուտեր լոյս կ'ընծայէր իր *Գերման պատարագը*: Լուտեր քրիստոնեային սուրբ պատարագի պատրաստութեան համար անհատական խոստովանութիւնը շատ փափագելի սակայն ոչ-ստիպողական կը նկատէր: Երբ համեմատենք Բարեկարգութեան զարգացումը այլ շրջաններու հետ, Լուտերի պաշտամունքի մօտեցումի եղանակը շատ պահպանողական կը համարենք՝ հիմնուած այն սկզբունքին վրայ, թէ «ինչ որ Աստուածաշունչին հակառակ չէր, Աստուածաշունչին համար էր, եւ փոխադարձաբար»: Հետեւաբար ան աւանդական շատ մը տարբեր կը պահպանէր. ինչպէս՝ զգեստները, խորանը, խաչակնքումն ու սրբանկարները:

Վորմզի իրադարձութեան յաջորդող տարիներուն, Բարեկարգութիւնը արագօրէն կը տարածուէր Գերմանիոյ մէջ: Այս շրջանին ինչ որ «յեղափոխական» բնոյթ ունէր «լուտերականի» կասկած կը սնուցէր թէ՛ յեղափոխականներուն եւ թէ՛ անոնց հակառակորդ կաթոլիկներուն կողմէ: Սակայն աւետարանական այս նախնական շարժումը միաձեւ չէր եւ շատ անկանոն զարգացում կ'ունենար՝ խոր տարբերություններ դրսեւորելով «լուտերական» քարոզախօսութեան, ծիսական բարեկարգութեան եւ քաղաքական կեցուածքներու մէջ: 1524-ին եւ 1525-ին շարժումը ներքին բաժանումներ կ'արձանագրէր, եւ Լուտեր կը դադրէր ազգային հերոս ըլլալէ ու կը վերածուէր Բարեկարգութիւնը իրագործելու կոչուած խմբակի մը ղեկավարը:

Այս ներքին բաժանումները առաջին հերթին կը սկսէին նախապէս Լուտերի զօրակցած մարդկայնականներուն վերապահութեամբ: Անոնց առաջնորդը՝ Տեգիտերիոս Երագմոս, շատ քիչ համակրանք ունէր Լուտերի միայն հաւատքով փրկութեան վարդապետութեան հանդէպ: Ըստ անոր՝ բարեկարգութիւնը կ'իրագործուէր դաստիարակութեամբ, նախապաշարումներէ ձերբազատումով եւ քրիստոնեական ճշմարտութեան «սկզբը-

նադրիւրներ» վերադարձով: Տեգիտերիոս կը մերժէր Լուտերի ժողովրդային գրգռութիւն յառաջացնող գրութիւնները: Ան, ինչպէս նաեւ մարդկայնականները առհասարակ, կը մտահոգւէր գերման համալսարաններու ուսանողութեան քանակական նուազումով, որ կրօնական հակամարտութեան հետեւանքն էր եւ զուտ գիտական հարցերու հանդէպ անտարբերութիւն կը սնուցէր: Թէեւ կը քաջալերուէր Լուտերը քննադատելու, սակայն Տեգիտերիոս կը խուսափէր այդ քայլին դիմելէ: Վերջապէս 1524-ի աշնան ան Լուտերը կը հարցադրէր փրկութեան մէջ ազատ կամքին ունեցած դերակատարութեան առնչութեամբ: Խոր տրամաբանութեամբ գրուած իր *Ազատ կամքի մասին պարսաւ* երկին մէջ ան կրօնքը աստուածաշնչական ենթահողի վրայ բարոյական եւ ո՛չ վարդապետական մեկնութեան կ'ենթարկէր: Ան կ'եզրակացնէր, թէ Միջին դարերու եկեղեցիի մարդկային ազատութեան եւ աստուածային շնորհի կարիքի վարդապետութիւնը նախընտրելի էր Լուտերի նախասահմանութեան ծայրայեղութենէն, որովհետեւ հեռու էր մանիքութենէ եւ պեղազեանութենէ: Մէկ տարի ետք, Լուտեր կը պատասխանէր *Կամքին կապանքը* երկով: Ան հատուած առ հատուած կը հակադարձէր Տեգիտերիոսի գրութեան: Աստուածաշունչը որպէս գերագոյն եւ միացեալ վկայութիւն ընդունելով՝ Լուտեր կը պաշտպանէր մարդկութեան անվերապահ ենթակայութիւնը ամենակալ Աստուծոյ եւ անոր ազատօրէն բաշխած շնորհի պարգեւին: Ան ինքզինք նախասահմանական կը հռչակէր եւ նոյնիսկ այնպիսի վարդապետութիւններ կը բանաձեւէր, որոնք ճակատագրապաշտութեան կը մերձենային: Լուտերի եւ Տեգիտերիոսի բաժանումը անխուսափելի էր: Մինչ հին սերունդի մարդկայնականներուն մեծամասնութիւնը կը լքէր Լուտերը, բազմաթիւ երիտասարդ մարդկայնականներ կը միանային անոր եւ տեղական աւետարանական շարժումներու առաջնորդութիւնը կը ստանձնէին:

Գերմանիոյ մէջ շատեր Լուտերը կիսաբարեկարգիչ կը նկատէին: Այսպիսի ծայրայեղական մըն էր իր հին բարեկամը՝ Անդրէաս Պոտենսթայն Գարլսթատթցին, որ Ուիթընպըրկի մէջ

իր վարկը կորսնցնել էտք աւելի ծայրայեղութեան կը դիմեր եւ Օրլամունտի մէջ մեծաթիւ հետետորդներ ունենալով՝ կը հակադրուէր Լուտերին եւ սաքսոն իշխանութեան: Ան կը մերժէր կրթութեան արժէքը, գիւղացիի նման կը հագնէր եւ կ'ապրէր, սրբանկարները կը փշրէր եւ սուրբ պատարագի մէջ չէր ընդունէր Քրիստոսի ֆիզիքական ներկայութիւնը: Առաւել ծայրայեղական մըն էր Թովմաս Մունցըր (1488?–1525), որ յայտնութենական տեսիլներ ունենալով թէ՛ Հռոմէական Եկեղեցիի հետետորդները եւ թէ՛ լուտերականները կը քննադատէր որպէս «դպիրներ», որոնք «ներքին խօսքը» կը խեղդէին Աստուածաշունչի տառին կառչումով: Որպէս նախկին կաթոլիկ քահանայ՝ Մունցըր խորապէս կը սերտէր Աստուածաշունչը, Եկեղեցիի հայրերը եւ գերման խորհրդագրացները եւ կը դառնար Լուտերի սկզբնական շրջանի հետետորդներէն: 1521–1522-ին ան նախ Զուիքաուի եւ ապա Պոհեմիոյ մէջ աւետարանական եռանդուն քարոզչութեան կը լծուէր՝ նպատակադրելով հիմնել «առաքելական նոր Եկեղեցին», համոզուած ըլլալով, որ կրօնքի մասնագէտներուն եւ քահանաներուն դաւաճանութեամբ Եկեղեցին երկար ատենէ ի վեր կորսնցուցած էր իր աստուածատուր մաքրութիւնը: 1523-ին ան պատուելի կը դառնար Թիրինկիոյ մէջ, ուր աւետարաններու ինքնատիպ մեկնութիւն կը կատարէր եւ բարեկարգութեան ծրագիր կը մշակէր եւ կտրականօրէն կը հեռանար Լուտերի տեսակետներէն:

Մունցըր կը յանգէր այն գաղափարին, թէ միայն Սուրբ Հոգին ստացած անձը կրնար Աստուածաշունչը ճշգրտօրէն հասկնալ: Սուրբ Հոգին միայն ընտրեալին մէջ կը հանգչէր. այսինքն՝ անոնց մէջ, որոնք վերածնած էին յուսահատութեան մեջէն անցնելով եւ կը կրէին Քրիստոսի «դառնահամ» խաչը: Արդ, Սուրբ Հոգիով ներքին մկրտութիւնն էր ճշմարիտ մկրտութիւնը. ջուրով արտաքին մկրտութիւնը կենսական չէր: Մունցըր իւրայատուկ տիպար մըն էր: 1523-ին ան Ալսթետի մէջ կը մշակէր առաջին բողոքական արարողակարգը: Որպէս ճարտար քարոզիչ կը փորձէր համախմբել ընտրեալներու այն Եկեղեցին, որ արդարութեան եւ սիրոյ վրայ հիմնուած նոր

համակարգ պիտի ստեղծեր: Ան կ'ընդդիմանար Լուտերի հեզասահ եւ խաղաղ բողոքականութեան ու կը ջատագովեր, ի պահանջել հարկին, արիւնի յեղափոխութիւնը՝ վերջ դնելու համար քահանայական եւ իշխանական անարդարութեան: Շուտով ան գիւղական շրջանակներու ապստամբութիւններուն ղեկավարը կը դառնար: Լուտեր չէր բաժներ Անդրէաս Պոտենսթայն Գարլսթատթցիի ու Մունցըրի մօտեցումները եւ զանոնք ծայրայեղական կ'որակեր: Այսպէսով Բարեկարգութիւնը բաժանումներ կը դիմագրաւեր:

Երրորդ բաժանումը աւելի լուրջ հետեւանքներ կ'ունենար, երբ գիւղացիութիւնը կ'ապստամբեր եւ Լուտերը դէմ-յանդիման կը դնէր ընկերային յեղափոխականներուն՝ աղարտելով անոր համբաւը որպէս ժողովրդային առաջնորդի: Միջին դարերուն, երբ գերման գիւղացիութիւնը աստիճանաբար կը կորսնցնէր իր վայելած ազատութիւնը, անհանգստութեան նշաններ ցոյց կու տար, յատկապէս հարաւ-արեւմտեան Գերմանիոյ մէջ, մանաւանդ յարաբերաբար դրացի Զուիցերիոյ գիւղացիութեան վայելած լաւ պայմաններուն: Գիւղացիութեան ապստամբութեան մեծապէս կը նպաստէին աւանդական հոգեւոր հեղինակութեան դէմ լուտերական յարձակումն ու «քրիստոնէական ազատութեան» եւ «աստուածային արդարութեան» քարոզչութիւնը: Մայիս եւ յունիս 1524-ին հարաւ-արեւմտեան Գերմանիայէն ծայր առած ապստամբութիւնը յաջորդ տարուան գարնան արդէն իսկ համատարած էր: Փետրուար 1525-ին սուապեան գիւղացիները 12 յօդուածներու մշակումով կը պահանջէին, որ իւրաքանչիւր համայնք իրաւասութիւն ունենար իր հովիւը ընտրելու կամ պաշտօնանկ ընելու, ցորենէն գանձուած տուրքերը յատկացուէին հովիւին նիւթական գնահատումին ու համայնքային այլ ծախսերու, հօտերու տուրքերը ջնջուէին, ճորտութիւնը աւարտէր, որսորդութիւնը սահմանափակուէր, անտառներու գործածութիւնը արտօնուէր աղքատներուն, պարտադիր աշխատանքը կարգաւորուէր եւ համապատասխանաբար վճարուէր, արդար վարձքեր ճշդուէին, նոր օրէնքներ չսահմանուէին, համայնքներէն խլուած

հասարակաց հողատարածքները համայնքներուն վերադարձրելին ու վերանային մահուան տուրքերը:

Լուտեր սկզբնապես երկու կողմերուն մէջ ալ սխալ մօտեցում կը տեսնէր: Ապրիլ 1525-ին իր հրապարակած «Խաղաղութեան կոչ»-ին մէջ կ'ըսէր, թէ 12 յօդուածներով գիւղացիութիւնը արդար պահանջներ կը սահմանէր, բայց գիւղացիութեան զայրոյթը մասնաւորաբար ուղղուած կը նկատէր իշխանաւորներուն, որ կատաղի եւ բռնատէր կ'որակէր: Սակայն ըստ Լուտերի՝ իւրաքանչիւր քաղաքական յեղափոխութիւն Աստուծոյ դէմ ապստամբութիւն էր եւ գիւղացիներուն յանուն Աստուածաշունչի եւ աստուածային օրէնքի դրած ընկերային ու տնտեսական պահանջները կը հիմնուէին Աւետարանի մեղսալից մեկնաբանութեան վրայ: Աւելին, երբ այս ապստամբութիւնը վայրագ միջոցներու կը դիմէր եւ անիշխանութեան կը վերածուէր, Լուտեր գիւղացիութեան դէմ կը հեղինակէր *Կողոպտող եւ սպանող գիւղացի ամբոխին դէմ* գրքոյկը, եւ իշխանաւորները կը մղէր մինչեւ իսկ զինեալ ուժով ձգմելու այս ապստամբութիւնը: 24 փետրուար 1525-ին Ֆրանսայի Ֆրանսիս Ա. թագաւորին պարտութիւնը Փաւիոյ մօտ պատճառ կը դառնար, որ Գերմանիոյ իշխանները կարողանային զսպել գիւղացիութեան ապստամբութիւնը, որ արիւնի մէջ կը խեղդուէր մայիս եւ յունիս 1525-ին: Լուտերի կողմէ թիրաբար այս շարժումին գաղափարական առաջնորդը համարուած Մունցըրը կը ձերբակալուէր, կը չարչարուէր եւ Ֆրանքենհաուզընի ճակատամարտէն ետք 15 մայիս 1525-ին կը զլխատուէր՝ շուրջ 6000 այլ գիւղացիներու շարքին:

Գիւղացիներու պատերազմը կը հանդիսանար Բարեկարգութեան պատմութեան դարձակէտը: Ասկէ ետք քաղաքական ուժեր ուշադիր հսկողութեան կ'ենթարկուէին զայն՝ փորձելով ձգմել կամ ավետարանական եկեղեցիներու յատուկ կանոններ ճշդել իրենց սահմաններուն մէջ: Բարեկարգութիւնը թէեւ ժողովրդային նոյն գրաւչութիւնը չունէր այլեւս, սակայն չէր դադրէր ժողովրդային ինքնաբոլի շարժում ըլլալէ, երբ մանաւանդ յաջորդող տասնամեակին Գերմանիոյ բազմաթիւ

քաղաքները կը թափանցէր: Բարեկարգութեան նախաձեռնութիւնը միշտ կ'առնուէր աշխատատրական դասակարգին կողմէ եւ ո՛չ վարպետներէն. այս իսկ պատճառով ալ աշխատատր խաւը կը շարունակէր մնալ լուտերական շարժումին ողնայարը: 1525-ի աւարտին բարեկարգիչներու միջեւ բաժանումը արդէն իսկ զգալի կը դառնար: Բարեկարգութեան հանդէպ դիրքերը կը կարծրանային, որովհետեւ եկեղեցական ապստամբութիւնը թոյլատրելի չէր, եւ բարեկարգչական յառաջդիմութիւնը եկեղեցական իշխանութեան կողմէ օրինական սահմանափակումներու կ'ենթարկուէր:

Մինչ այդ, սեպտեմբեր 1523-ին կը վախճանէր Ատրիան Զ. պապը եւ անոր կը յաջորդէր Կղեմէս Է. (1523–1534), որ եկեղեցական հարցերով զբաղելու փոխարէն աշխարհիկ իտալացի իշխանի կեանք կ'ապրէր: 1524-ի գարնան Նուրենպերկի մէջ գումարուած գերման խորհրդարանի նիստին Կղեմէս Է. որպէս իր պատուիրակը կ'ուղարկէր մեծ կարողութիւններու տէր Լորենզո Գամփեչիօ կարդինալը (1474–1539), որ սակայն մեծ ազդեցութիւն չէր կրնար բանեցնել ժողովականներուն վրայ: Խորհրդարանը կը խոստանար Վորմզի դաշնագիրը պարտադրել Լուտերի՝ «որքան որ կարելի էր» եւ կը պահանջէր յաջորդ աշնան «գերմաններու ընդհանուր ժողով» գումարել Մբլըրի մէջ: Լորենզո խորհրդարանէն դուրս աւելի յաջողութիւն կ'արձանագրէր, երբ 7 յուլիս 1524-ին Ռեկենսպուրկի մէջ կայսրին եղբայրը, Պաւարիոյ դուքսերը եւ հարաւային Գերմանիոյ կարգ մը եպիսկոպոսները ներառող լիկան կը կազմէր Հռոմի տեսակէտը պաշտպանելու համար:

Մինչ Հռոմ հարաւային Գերմանիոյ մէջ կը զօրանար, Լուտեր կարելոր յաջողութիւններ կ'արձանագրէր այլ ճակատներու վրայ: Ասոնցմէ ամենահիմնականը 1524-ին Հեսսի Փիլիպպոս իշխանին (1518–1567) Լուտերի յարիլն էր: Միաժամանակ Փրուսիոյ Ալպերթ, Պրանտընպըրկի Գեորգ, Մեքլենպըրկի Հենրի եւ Մանսֆելտի Ալպերթ իշխանները հետաքրքրուած էին աւետարանական դատով: 1524-ին Մակտը-

պրրկ, Նուրենպերկ, Սթրազպուրկ, Օկսպուրկ, Էսլինկըն եւ Ուլմ կարեւոր քաղաքները եւս անցած էին Լուտերի կողմը:

Գիւղացիութեան ապստամբութեան օրերուն, 5 մայիս 1525-ին, Լուտերի պաշտպան Ֆրետերիք Իմաստուն կը մահանար եւ անոր կը յաջորդէր եղբայրը՝ Յովհաննէս «ուղղամիտ» (1525–1532): Այս փոփոխութիւնը ի նպաստ Լուտերի էր, որովհետեւ Յովհաննէս գործուն լուտերական մըն էր: 13 յունիս 1525-ին Լուտեր կ'ամուսնանար նախկին մայրապետ Կատարինէ Պորայի հետ (1499–1552):

Գիւղացիութեան ապստամբութեան զսպումը Գերմանիոյ իշխանութիւնը կը պահէր իշխաններուն ձեռքը եւ քաղաքական դիրքորոշումներ կը ճշդուէին ի նպաստ կամ ի հեճուկս Բարեկարգութեան: Ռեկենսպուրկի կաթոլիկ լիկային կողքին կեդրոնական եւ հիւսիսային Գերմանիոյ մէջ Սաքսոնիոյ Գեորգ դուքսին եւ այլ իշխաններու կողմէ ուրիշ կաթոլիկ լիկա մըն ալ կը կազմուէր յուլիս 1525-ին Տեսաուի մէջ: Ի պատասխան՝ Հեսսի Փիլիպպոս իշխանը եւ Սաքսոնիոյ Յովհաննէսը Թորկաուի մէջ կը կազմէին լուտերական լիկա մը: Փետրուարին ոյ մէջ կայսերական յաղթանակէն ետք գերի կ'իյնար Ֆրանսայի Ֆրանսիս Ա. թագաւորը: Կայսրը նոր յաղթանակներ կը տանէր եւ յունուար 1526-ին իր կնքած Մատրիտի դաշինքով Ֆրանսիսը ազատ կ'արձակէր: Երկու իշխանաւորներն ալ կը խոստանային միացեալ ուժերով խափանել հերետիկոսութիւնը: Լուտերականութիւնը դժուար կացութիւն մը կը դիմագրաւէր: Պապը այս կացութիւնը կը շրջէր, երբ կ'անդրադառնար, թէ կայսերական ուժը կը զօրանար Իտալիոյ մէջ: Ան կայսրին դէմ կը կազմէր իտալական լիկա մը, որուն մայիս 1526-ին կը միանար Ֆրանսայի կայսրը եւս: Ֆրանսիս Ա. կը դրժէր Մատրիտի դաշինքը եւ Գոնէակի լիկայով Ֆրանսան, պապը, Ֆլորանսն ու Վենետիկը կը համախմբուէին: Պատերազմի վտանգը զգալի կը դառնար, եւ կայսրը ժամանակ չունէր այլեւս զբաղելու Գերմանիոյ կրօնական պայքարներով:

1526-ի ամառը, երբ գերման խորհրդարանը նիստ կը գումարէր Սբէյըրի մէջ, թէեւ կայսրը կը հրամայէր կրօնական

հարցերուն մէջ փոփոխութիւն չմտցնել եւ Վորմզի դաշնագիրը գործադրել, սակայն լուտերականներ կը համոզէին ժողովականները, թէ կացութիւնը փոխուած էր այն օրէն ի վեր, երբ կայսրը այս բոլորը կը հրահանգէր Սպանիայէն: Թուրքերու յառաջացումն ու 29 օգոստոս 1526-ին Մոհազսի մէջ Հունգարիոյ Լուի Բ. թագաւորը պարտութեան մատնելը պարտադիր կը դարձնէր զինուորական միութիւնը: Խորհրդարանը կ'եզրակացնէր, որ կայսրութեան իւրաքանչիւր շրջանի իշխանաւոր *«պարտաւոր էր այնպիսի կեցուածք որդեգրել, որ հաշուետու ըլլար Աստուծոյ եւ կայսերական մեծութեան»* (տե՛ս, B. J. Kidd, ed., *Documents Illustrative of the Continental Reformation* (Oxford, 1911; reprint, 1970), p. 185):

Թէեւ այս որոշումը միջանկեալ զիջում մըն էր, սակայն լուտերական իշխաններ զայն կը գործադրէին իրենց շրջաններուն մէջ եկեղեցական հարցերը ըստ կամս լուծելու որպէս օրինական հեղինակութիւն: Այսպէսով լուտերական շրջանային եկեղեցիներ կեանքի կը կոչուէին: Այս շարժումը նոյնիսկ սկսած էր խորհրդարանին առած որոշումէն առաջ: Կայսրութեան սահմաններէն դուրս Պրանտընպըրկի Ալպերթը (1511–1568) 1525-ին Փրուսիոյ մէջ ժառանգական կը դարձնէր իր դքսութիւնը Լեհաստանի տիրութեան տակ եւ կը քաջալերէր լուտերականութիւնը իր շրջանին մէջ: Սաքսոնիոյ մէջ Յովհաննէս իշխանը կառավարութիւնը միջամուխ կը դարձնէր կրօնական հարցերուն եւ կ'արտօնէր Լուտերի *Գերման պատարագը եւ աստուածային պաշտամունքի կարգը* երկին հրատարակութիւնը 1526-ին խորհրդարանի նիստէն առաջ:

Սաքսոնիոյ մէջ, որ լուտերական շրջանային եկեղեցիներու կազմութեան տիպարը կը դառնար, Յովհաննէս իշխան կը նշանակէր եկեղեցական վարդապետութիւնն ու անոր գործադրութիւնը քննող այցելուներ՝ ըստ Մելանգթոնի 1527-ին ճշդած յօդուածներուն, որոնք յաջորդ տարի աւելի կը մշակուէին: Եպիսկոպոսներու հին իրաւասութիւնները կը նուազէին, թեմը ծուխերու կը բաժնուէր եւ վարչական, ոչ-հովուական, հարցերու մէջ հովիւին վրայ հսկիչ կ'ունենար, որ

հաշուետու էր իշխանին: Իրենց կոչումին տեր չեղող հոգեւորականներ պաշտօնանկ կ'ըլլային, պաշտամունքի նոյնութիւն կ'որդեգրուէր եւ վանական կալուածներ ու եկեղեցական հիմնադրամներ յարքունիս կը գրաւուէին՝ սկզբունքով ի նպաստ եկեղեցիներու եւ ծխական դպրոցներու, սակայն ընդհանրապէս իշխանին արկղը կը մտնէին: Ի մի բան՝ լուտերական նահանգային եկեղեցիներ կը կազմուէին իրենց ընտրողական շրջաններով՝ ամբողջ բնակչութիւնը ներառելով որպէս մկրտուած անդամներ, եւ կը փոխարինէին եպիսկոպոսներով կառավարուած նախկին եկեղեցիները: Աւետարանական Գերմանիոյ միւս շրջանները եւս կը հետեւէին Սաքսոնիոյ օրինակին: Ժողովուրդին քրիստոնէական դաստիարակութիւն ջամբելու եւ տասնամեակէ մը ի վեր տիրող դէպքերուն պատաճառած շփոթը փարատելու համար՝ 1529-ին Լուտեր կը հրատարակէր երկու *Քրիստոնէական*-ներ, որոնցմէ *Փոքր քրիստոնէական*-ը Բարեկարգութեան ամենակարեւոր նպաստներէն մին կը հանդիսանայ:

Տիրող քաղաքական պայմանները մեծապէս կը նպաստէին լուտերական շրջանային եկեղեցիներու կազմութեան: Կայսրը մեծ պատերազմի դէմ-յանդիման կը գտնուէր եւ կը ձգտէր իր իշխանութեան տակ առնել Իտալիան: Անոր եղբայրը՝ Ֆերտինանտ, 3 նոյեմբեր 1527-ին Հունգարիոյ թագաւոր կը դառնար եւ թուրքերու դէմ կը պատերազմէր: Կարելի չէր ազդու միջամտութիւն կատարել Գերմանիոյ մէջ: 6 մայիս 1527-ին բազմաթիւ գերման գունդերէ բաղկացած կայսերական բանակ մը կը գրաւէր Հռոմը, Կղեմէս Է. պապը Սուրբ Հրեշտակ դղեակին մէջ կը բանտարկէր եւ աւերներ կը գործէր: Թէեւ 1528-ի սկիզբը բախտին անհիւր ֆրանսացիներուն կողմը կը դառնար, սակայն կայսերական բանակները կը սկսէին իրենց ազդեցութիւնը բանեցնել: 29 յունիս 1529-ին Պարսելոնայի մէջ պապը կը պարտաւորուէր կայսրին հետ խաղաղութեան դաշինք կնքել, իսկ 5 օգոստոս 1529-ին, Գամպրայի դաշինքով, Ֆրանսա կը դադրեցնէր պատերազմը: 1521-ին սկսած պատերազմը կ'աւարտէր, եւ Չարլզ Ե. այլեւս կրնար լուտերական ապստամ-

բութինը կասեցնելով զբաղիլ: Հեսսի Փիլիպպոս եւ Սաքսոնիոյ Յովհաննէս իշխանները կը խաբուէին Օթթօ Փաքի այն խօսքերէն, թէ կաթոլիկներ իրենց վրայ պիտի յարձակէին: 1528-ին Փիլիպպոս կը զինուէր, երբ ի յայտ կու գար, թէ Օթթոյի տեղեկութիւնները կեղծ նամակէ մը քաղուած էին: Յամենայն դէպս Օթթոյի այս քայլը եկեղեցական երկու խմբաւորումներու յարաբերութիւնները կը սրէր:

Փետրուար 1529-ին, երբ խորհրդարանը Սբէյրքի մէջ նիստի կը հրաւիրուէր, կաթոլիկ մեծամասնութիւնը ատելութեամբ լեցուած էր լուտերականներուն դէմ: Ժողովականներ մեծամասնական որոշումով կը վճռէին, որ եկեղեցական այլ փոփոխութիւններ պիտի չկատարուէին, հռոմէական պաշտամունքը պիտի արտօնուէր ամեն տեղ եւ հռոմէական հեղինակութիւններ ու կրօնական կարգեր պիտի տիրանային իրենց նախկին իրաւասութիւններուն, կալուածներուն եւ եկամուտներուն: Այս բոլորը գործնականօրէն կը միտէին ջնջել լուտերական շրջանային եկեղեցիները: Երբ լուտերականներ այս որոշումը չէին կարողանար բեկանել, 19 ապրիլ 1529-ին պաշտօնական բողոքագիր կը յղէին խորհրդարան եւ այդ պատմական վաւերագիրով որպէս «բողոքական» կը բնորոշուէին: Այս բողոքագիրը կը փոխանցէին Սաքսոնիոյ Յովհաննէս, Հեսսի Փիլիպպոս, Լունպրկի Էրնըսթ, Պրանտընպրկ-Անսպախի Գեորգ ու Անհալթի Վոլֆկանկ իշխանները եւ Սթրագպուրկ, Ուլմ, Կոնստանս, Նուրենպերկ, Լինտաու, Գեմփթըն, Մեմինկըն, Նորտլինկըն, Հէյլպրոն, Իսնի, Մէնթ Կալէն, Ռէօթլինկըն, Ուէզընպրկ եւ Ուինստցհայմ քաղաքները:

Բողոքականութեան ապագան մութ էր: Կացութիւնը միութիւն կը պարտադրէր, որուն նախաձեռնութիւնը կը վստահուէր Հեսսի Փիլիպպոսին: Այս վճռական հանգրուանին Բարեկարգութիւնը կը դիմագրաւէր Սաքսոնիոյ եւ Զուիցերիոյ բարեկարգիչներուն միջեւ աճող բաժանումին ու կրկնամկրրտականներու արագ տարածումին վտանգները:

Գ. ԳԼՈՒԽ
ՈՒԼՐԻՒ ԶՈՒԻՆԿԼԻ
ԵՒ ԶՈՒԻՑԵՐԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Զուիցերիան թեև անուանապես մաս կը կազմեր Հռոմեական սրբազան կայսրութեան, սակայն գործնականօրէն վաղուց անկախ էր: Անոր 13 շրջանները կը կազմէին թոյլ հասարակապետութիւն մը, եւ իւրաքանչիւրը ինքնավար հանրապետութիւն մըն էր: Զուիցերիան Եւրոպայի ամենէն ազատ երկիրն էր: Անոր զաւակները որպէս նշանաւոր վարձկան զինուորներ կը ծառայէին Ֆրանսայի թագաւորներուն եւ պապերուն: Թէև ընդհանուր զարգացումը ցած էր զուիցերիացիներուն մէջ, սակայն մարդկայնականութիւնը քաղաքներ թափանցած էր եւ ԺՁ. դարուն տեղ գրաւած էր յատկապէս Պազէլի մէջ: Զուիցերիական բարեկարգութիւնը պիտի դրսեւորուէր մարդկայնականութեամբ, տեղական ինքնակառավարումով, եկեղեցական իշխանութեան ընդդիմութեամբ եւ յատկապէս հողատէր վանքերու մերժումով:

Ուրիխ (Հուլտրիխ) Զուինկլի, գերմանախօս Զուիցերիոյ գլխաւոր բարեկարգիչը, ծնած է 1 յունուար 1484-ին Ուայլտհուսի մէջ, ուր հայրը գիւղապետ էր եւ լաւ պայմաններ կը վայելէր: Նախնական կրթութիւնը ծննդավայրին մէջ ստանալէ ետք ան նախ կ'երթար Պազէլ եւ ապա Պերն՝ 1496–1498-ին աշակերտելու մարդկայնական Հենրիխ Ուոլֆլին Լուփուլոսի: 1500–1502-ին ան կը յաճախէր Վիեննայի համալսարանը, ուր դասականներու դասախօսն էր հռչակաւոր Գոնրատ Սելթիս: 1502–1506-ին իր ուսումը կը շարունակէր Պազէլի համալսարանին մէջ եւ կը ստանար արուեստներու պսակաւոր եւ մագիստրոս վկայականները: Հոս ան կ'աշակերտէր մարդկայնական Թովմաս Ուիթընպախի (1472–1526), որ իրեն կը սորվեցներ Աստուածաշունչի հեղինակութեան եւ մեղքերու թողութեան համար Քրիստոսի մահով վճարած փրկագինի եզակիութիւնը եւ քաւութեան թուղթերու անարժէք ըլլալու վարդապետութեան:

ինը: Այս ուսուցումներուն համար Չուինկլի իր երախտագիտութիւնը կը յայտնէր Ուիթընպախի: Այսպիսի ուսուցումներու ազդեցութեան տակ ինք եւս մարդկայնական կը դառնար եւ կը ձգտէր քրիստոնէութեան սկզբնաղբիւրները ուսումնասիրելու ու քննադատական մօտեցում ունենալու նախապաշարումներուն հանդէպ:

1506-ին Չուինկլի Կլարուսի հովիւ կը նշանակուէր եւ 10 տարի կը ծառայէր հոն: Այս տարիներուն ան կը խորանար յունարէնի եւ եբրայերէնի մէջ ու կը կարդար Երազմոսի երկերը. առաւել՝ կը սերտէր դասականները, Աստուածաշունչը եւ Եկեղեցիի հայրերը: Ան հիւսիսային մարդկայնականներուն խմբակին մէջ կը դառնար ազդեցիկ քարոզիչ եւ յարգալից անդամ ու կը մերժէր գուիցերիացիներուն վարձկան զինուորութիւնը, ի բաց առեալ պապը: Որպէս հովիւ իր ծուխի երիտասարդները իտալական գանազան քաղաքներ շրջագայութեան կը տանէր:

Չուինկլի խորապէս համոզուած էր, որ վարձկան զինուորութիւնը հայրենասիրութեան հետ խոտոր կը համեմատէր, մինչ անդին Կլարուսի մէջ ֆրանսացիներ կը շարունակէին այս ապաբարոյ սովորութիւնը: 1516-ին ան կը փոխադրուէր Էյնսիէտէլնի ուխտաւորներու եկեղեցին: Հոս աւելի կը տարածուէր իր քարոզիչի եւ գիտնականի համբաւը: Հոս անուղղակիօրէն կ'ընդդիմանար նաեւ ֆրանչիսկեան վանական Պերնհարտ Սանսոնի քաւութեան թուղթերու վաճառքին: Մինչ այդ Չուինկլի կը ճանչցուէր որպէս Ալպեան լեռներէն հիւսիս ապրող յունարէնի եւ եբրայերէնի լաւագոյն գիտնականներէն մին: Ան կը հասատատէր, որ Էյնսիէտէլնի մէջ աւետարանական ուղղութեան հակած էր եւ ո՛չ Լուտերի ծանօթանելէ ետք: 1518-ին ան կ'ընդունէր պապական թոշակաւոր հովիւ դառնալու հրաւերը, մինչ այդ արդէն կուսակրօնութեան հանդէպ վերապահութիւններ կը ցուցաբերէր:

1 յունուար 1519-ին Ցիւրիխի մէջ Չուինկլի պապական թոշակաւոր հովիւ կը նշանակուէր՝ առ ի գնահատանք իր վարձկան զինուորութեան ընդդիմութեան եւ քարոզիչի ու գիտնականի համբաւին: Հոս, Մատթէոսի աւետարանէն սկսե-

լով, ան կը նախաձեռնէր Աստուածաշունչի համար առ համար բացատրութեան՝ առանց աւանդական դպրոցական մեկնաբանութեան հետեւելու: Սեպտեմբեր 1519-ին ան կը վարակուէր Կապոյտ հազի համաճարակէն եւ մահուան դէմ-յանդիման գալով՝ ինքնաքննութեան կը դիմէր ու կ'ապրէր աստուածային առաքելութեան գիտակցութիւնը: 1520-ին ան կը կորսնցնէր եղբայրը եւ իր հոգեւոր կեանքին մէջ առաւել կը խորանար ներթափանցելով մահուան խորհուրդին ու կը հրաժարէր թոշակաւոր հովիւի պաշտօնէն: 1521-ին ան Լուտերի երկերը կը սերտէր: Յունուար 1523-ին, Չուինկլիի քարոզութեան ազդեցութեամբ, Յիրիիի քաղաքապետական խորհուրդը կը ջնջէր վարձկան զինուորութիւնը:

Թէեւ մինչեւ հիմա Չուինկլի բարեկարգչական ուղղութեան կը հետեւէր, սակայն իր եռանդուն գործունէութիւնը կը սկսէր 1522-ին: Չուինկլիի պարագային գլխաւոր հարցը իր անձնական փրկութիւնը չէր, ինչպէս էր Լուտերի պարագային, այլ այն էր, թէ քրիստոնէանէր միմիայն աւետարանական ոգիով մեկնաբանուած Աստուածաշունչին պէտք էր հնազանդէին: Չուինկլիի միմիայն Աստուածաշունչով արդարացումի սկզբունքին հետեւողութեամբ՝ մարտ 1522-ին կարգ մը քաղաքացիներ մեծ պահքը չէին պահէր, եւ ան խօսքով ու գիրով նեցուկ կը կանգնէր անոնց: Կոնստանսի եպիսկոպոսը յանձնախումբ մը կը դրկէր Յիրիի, որպէսզի խափանէր այս նորարարութիւնը: Շրջանային կառավարութիւնը կը վճռէր, թէ Նոր կտակարանը պահքեր չէր սահմանած, սակայն անոնք պէտք էր պահուէին կարգապահութիւնը չխախտելու համար: Այս վճիռով քաղաքացիական հեղինակութիւնը կը մերժէր եպիսկոպոսին հեղինակութիւնը եւ Յիրիիի բոլոր եկեղեցիները իր հովանիին տակ կ'առնէր:

Չուինկլի կը հաւատար, որ եկեղեցական գերագոյն հեղինակութիւնը քրիստոնէայ համայնքն էր, այսինքն՝ միմիայն Տէր Յիսուս Քրիստոսով համախմբուած տեղական հաւաքականութիւնը, որ աստուածային ներշնչումով գրուած Սուրբ գիրքին հեղինակութեամբ իր փրկութեան համար կը վկայէր:

Այս հեղինակությունը յանուն համայնքին կը դրսևորուեր բոլորին վստահուած համապատասխան պաշտօններով՝ Աստուածաշունչի սկզբունքներուն համաձայն: Միմիայն Աստուածաշունչին հրահանգները ի գորու էին: Այս սկզբունքէն մեկնած՝ Չուինկլի Լուտերէն աւելի վանողական վերաբերում կ'ունենար հին ծիսակարգին հանդէպ: Յիրիխի շրջանային կառավարութիւնը Չուինկլիի առաջարկած փոփոխութիւնները աստիճանաբար կը գործադրեր, երբ մանաւանդ ան որպէս Աստուածաշունչի հեղինակաւոր մեկնաբան եւ ժողովրդային ղեկավար՝ կը համոզեր կառավարութիւնը, թէ այսպէտով իր հեղինակութիւնը առաւել պիտի գորանար կրօնական մարզին մէջ: Յունուար 1523-ին քաղաքապետական խորհուրդը Աստուածաշունչի գերագոյն հեղինակութեան նուիրուած հրապարակային վիճարկում կը կազմակերպեր: Չուինկլի հանդէս կու գար 67 հակիրճ յօդուածներով՝ հաստատելու համար, թէ Աւետարանը իր հեղինակութիւնը Եկեղեցիէն չէր ստանար, փրկութիւնը միմիայն հաւատքով կարելի էր, սուրբ պատարագը քաւարար ներգործութիւն չունէր, բարի գործերը փրկութիւն չէին երաշխաւորեր, սուրբերու բարեխօսութիւնը արժէք չունէր, վանական ուխտերը պարտադիր չէին եւ քաւարան գոյութիւն չունէր: Ան նաեւ կը յայտարարէր, թէ Եկեղեցիի միակ գլուխը Քրիստոս էր եւ եկեղեցականներ պէտք էր ամուսնանային: Աւելի քան 600 անձ կը մասնակցէր այս վիճարկումին եւ քաղաքապետական խորհուրդը Չուինկլիին յաղթական կը յայտարարէր ի հեճուկս իր հռոմայեցի ընդդիմախօսներուն, ու կը հաստատէր, թէ ան հերետիկոս չէր, այլ որպէս Աստուածաշունչի հաւատարիմ մեկնաբան՝ պէտք էր շարունակէր իր քարոզութիւնը, եւ բոլորն ալ պէտք էր քարոզէին միայն այն, ինչ որ Աստուածաշունչին կը համապատասխանէր: Այս վճիռը ոչ միայն Չուինկլիի անձնական յաղթանակն էր, այլեւ անպաշտօն կերպով կ'ամրապընդէր Բարեկարգութիւնը Յիրիխի մէջ:

Յիրիխի մէջ լարուածութիւնը կը խորանար եւ սրբանրկարներու գործածութեան շուրջ կը յարուցուէին հարցեր: Չուինկլի եւ իր օգնական հովիւր՝ Լեոն Չուտ (1482–1542),

կ'առաջարկէին հրապարակային ուրիշ վիճարկում՝ այս անգամ զբաղելու սուրբ պատարագի եւ սրբանկարներու հարցով: Այս վիճարկումը շուրջ 900 անձի մասնակցութեամբ տեղի կ'ունենար հոկտեմբեր 1523-ին: Զուինկլի եւ Չուտ կը մերժէին սրբանկարներու մեծարումն ու սուրբ պատարագին քաւարար բնոյթը եւ աստուածաշնչական բացատրութիւններով կ'արդարացնէին աշխարհականներուն հացով եւ գինիով հաղորդուիլն ու արարողութիւններուն տեղական բարբառներով կատարումը: Զուինկլի դարձեալ կը յաղթէր, սակայն այս անգամ քաղաքապետական խորհուրդը աւելի զգուշաւոր կեցուածք կ'որդեգրէր: Ան սուրբ պատարագի լատիներէն մատուցումը եւ հաղորդութեան միայն հացով բաշխումը կը պահպանէր ու միայն անձնական սրբանկարները եկեղեցիներէն կը վերցնէր: Նաեւ կը նշանակէր Զուինկլին ու Չուտը ներառող 14 անձերէ բաղկացած յանձնախումբ մը, որպէսզի այս հարցերով զբաղէր: Զուինկլի համաձայն էր այս աստիճանական փոփոխութիւններու քաղաքականութեան: Ան Չուտին կը գրէր. «Կամաց-կամաց մեր նպատակին կը հասնինք»: Աւելի արմատական տարրեր արագ փոփոխութիւններ կ'ուզէին եւ դուրս կ'ելլէին Զուինկլիի ղեկավարութենէն:

1524-ին ու 1525-ին որոշադրիչ փոփոխութիւններ տեղի կ'ունենային, եւ Հոռմի հետ անջրպետը կը լայննար: Քաղաքապետական խորհուրդին հրահանգով՝ յունիս եւ յուլիս 1524-ին դուրս կը բերուէին Յիւրիխի եօթը եկեղեցիներու սրբանկարները, արձաններն ու մասունքները: Դեկտեմբերին վանքերը կը փակուէին եւ անոնց ստացուածքները դաստիարակչական նպատակներու կը յատկացուէին ու աղքատներուն կը բաշխուէին: Սուրբ պատարագի լատիներէն մատուցումը կը դադարէր 1525-ի աւագ շաբաթէն՝ հակառակ քաղաքապետական խորհուրդին մէջ գտնուող փոքրաթիւ կաթողիկոսներու ընդդիմութեան: Տեղական բարբառով սուրբ պատարագ կը մշակուէր եւ սուրբ հաղորդութիւնը հացով ու գինիով կը բաշխուէր: Փոփոխութիւնը կատարեալ էր: Եպիսկոպոսական հեղինակութիւնը կը դադարէր, արարողութիւնները գերմաներէնով կը

կատարուէին, քարոզը կեդրոնական տեղը կը գրաւէր, եւ նախկին վարդապետութիւններն ու ծէսերը կը խափանուէին: Զուիսկլի այս բոլորը կը բացատրէր իր 1525-ին լոյս ընծայած աստուածաբանական գլխաւոր երկին մէջ՝ *Ճշմարիտ եւ կեղծ կրօնքին բացատրողականը*: Մինչ այդ, 2 ապրիլ 1524-ին, ան հրապարակաւ կ'ամուսնանար այրի Աննա Ռէյնհարտի հետ, որուն հետ արդէն իսկ 1522-ի սկիզբը գաղտնի ամուսնացած էր: Այս ամբողջ դէպքերու ընթացքին պապեր չէին միջամտեր, որովհետեւ Յիւրիխի զինուորական օժանդակութեան կարիքը ունէին՝ որպէս Զուիցերիոյ մեծագոյն նահանգի ու վարձկան զինուորութեան վստահելի աղբիւրի:

Զուիսկլի ուշադրութեամբ կը հետեւէր Զուիցերիոյ այլ շրջաններու եւ Գերմանիոյ մէջ տեղի ունեցող եկեղեցական յեղափոխութիւններուն ու իր կարելիութեան սահմաններուն մէջ նեցուկ կը կանգնէր բոլորին: Պազել աւետարանական դատին կը հակէր մասնաւորաբար 1522-էն ի վեր Յովհաննէս Օգոլամփատիոսի (1482–1531) ի գործ դրած ջանքերուն շնորհիւ: Հոն լատիներէն սուրբ պատարագը կը խափանուէր 1529-ին: Զուիցերիական շրջաններուն մեծագոյնը՝ Պերն, 1528-ին Բարեկարգութեան կողմնակից կը դառնար շնորհիւ ժողովրդական վիճարկումներու եւ աւետարանական քարոզութիւններու, որոնց մէջ Զուիսկլի մեծ դերակատարութիւն կ'ունենար: Մէնթ Կալէն մարդկայնական Վատիանոսի (1484–1551) ջանքերով Բարեկարգութեան կողմը կ'անցնէր, ինչպէս նաեւ Շուաֆ-հաուզըն եւ Կլարուս շրջաններն ու Ալզասի Կոնստանս եւ Մուլհաուզըն քաղաքները: Պերնի Զուիսկլիական բարեկարգութեան հակումը շատ կարեւոր քայլ մըն էր: Անով Յիւրիխ եւ զուիսկլիականներ Զուիցերիոյ հասարակապետութեան մեկուսացումէն դուրս կու գային ու վերջապէս Յովհաննէս Կալվին կը յաջողէր ազատագրել նաեւ Ժնևը Սաւոյի կաթոլիկ դուքսերու տիրապետութենէն: Վճռական նշանակութիւն կ'ունենար նաեւ հարաւային Գերմանիոյ Սթրազպուրկ քաղաքի զուիսկլիականութեան հակումը՝ փոխան լուտերականութեան: Հոս աւետարանական շարժումը կը սկսէր 1521-ին Մատթէոս Զելլի (1477–

1548) ջանքերով եւ 1523-էն ետք յառաջ կը տարուէր Գափիթոյի (1478–1541) ու խաղաղասէր Մարթին Պուսերի (1491–1551) կողմէ եւ յաջողութեամբ կը պսակուէր 1529-ին:

Զուինկլի եւ Լուտեր կարեւոր հարցերու մէջ համաձայն էին իրարու, սակայն խառնուածքով ու իմացական եւ կրօնական կազմաւորումով կը տարբերէին իրարմէ: Լուտեր իր ասպարէզին կը նախաձեռնէր որպէս ուշ Միջին դարերու դպրոցական, ֆրանչիսկեան վանական ու Աստուածաշունչի համալսարանական դասախօս եւ իր աւետարանական փորձառութիւնը կ'ապրէր վանքին մէջ իր ունեցած կրօնական սուր պայքարներով: Զուինկլի հովիւ էր եւ քարոզիչ, մարդկայնականութեան հետեւորդ, Երազմոսի մարդկայնականութեամբ խորացած եւ վերջապէս փոփոխուած՝ Պօղոս առաքեալի եւ Օգոստինոսի ուսումով ու անձնական մեղաւորութեան եւ տառապանքի փորձառութեամբ: Ան լաւապէս ծանօթ էր Լուտերի սկզբնական երկերուն, սակայն իր վարդապետական շեշտադրումը կը տարբերէր: Լուտերի համար քրիստոնէական կեանքը Աստուծոյ շնորհած թողութեամբ եւ հաշտութեամբ պայմանաւոր ազատութիւնն էր: Զուինկլիի համար ան Աստուածաշունչով յայտնուած Աստուծոյ կամքին հնազանդութիւնը անդրանցող իրականութիւն մըն էր:

Երկուքին իրարմէ ունեցած տարբերութիւնը մասնաւորաբար ի յայտ կու գար Վերջին ընթրիքի մեկնաբանութեան մէջ, եւ այս անհամաձայնութիւնը վերջապէս կը թուլացնէր աւետարանական շարքերը: Լուտերի համար Քրիստոսի «այս իմ մարմինս է» խօսքերը տառացիօրէն ճշմարիտ էին. ան կ'ուսուցէր, թէ Քրիստոսի մարմինն ու արիւնը ճշմարտապէս գոյ էին սրբագործուած հացին եւ գինիին մէջ եւ անոնք, որոնք հաւատքով կը ստանային զանոնք՝ կ'արժանանային փրկութեան՝ մեղքերու թողութեամբ, իսկ անոնք, որ անարժանութեամբ կը ստանային՝ կը դատապարտուէին: Մակայն արդէն իսկ 1521-ին հոլանտացի իրաւաբան Գորնելիոս Հոէն կ'ըսէր, թէ «այս իմ մարմինս է» նախադասութեան ճիշդ մեկնաբանութիւնը «այս իմ մարմինս կը խորհրդանշէ» է: 1523-ին Զուինկլի կ'իմանար

Հոենի այս մեկնաբանութիւնը եւ համաձայն կը գտնուէր անոր խորհրդանշական իմաստին ու հաղորդութեան մէջ որեւէ ֆիզիքական տարր չէր ընդունէր: Քրիստոս հոգեւորապէս ներկայ էր ո՛չ հացին եւ գինիին մէջ, այլ հաւատացեալի հոգիին մէջ, որ մինակը կրնար ստանալ հաղորդութեան շնորհած քարիքը: Հաղորդութեան հացն ու գինին միայն արտաքին եւ երեւելի նշաններն էին ներքին ու հոգեւոր շնորհին, որոնք արդէն իսկ գոյ էին եւ «ուտելը» «հաւատալուն» համագօր կը դարձնէին: Վերջին ընթրիքը գոհաբանութեան եւ յիշատակի հասարակաց ճաշ մըն էր, որ հաւատացեալները կը համախըմբէր իրենց Տիրոջ հանդէպ իրենց հաւաքական հաւատարմութիւնը արտայայտելու:

1526-ին Լուտերի եւ Զուինկլիի լարուածութիւնը այնքա՛ն կը սրէր, որ մէկ կողմէ Լուտեր եւ Յովհաննէս Պուկընհակըն ու միւս կողմէ՝ Զուինկլի եւ Յովհաննէս Օգոլամփատիոս իրարու դէմ գրականութիւն կը մշակէին: Լուտերի ամենակարեւոր երկը կը հանդիսանար 1528-ին լոյս տեսած *Խոստովանութիւն Քրիստոսի ընթրիքին*-ը: Երկու կողմերն ալ անտեղիտալի պայքար կը մղէին: Ըստ Զուինկլիի՝ Լուտերի այն տեսակետը, թէ Քրիստոս մարմնապէս ներկայ էր հաղորդութեան մէջ՝ կաթոլիկ նախապաշարումէն անտրամաբանական մնացորդ մըն էր: Ֆիզիքական մարմին մը միայն մէկ տեղ կրնար գտնուիլ, եւ Քրիստոսի մարմինը համբարձումէն ի վեր երկինքի մէջ էր. առաւել, ֆիզիքական բաներ չէին կրնար հոգեւոր իրականութիւններ փոխանցել: Իսկ ըստ Լուտերի՝ Զուինկլիի մեկնաբանութիւնը մեղսալից վերաբերում մըն էր այն իրողութեան, թէ տրամաբանութիւնը Աստուածաշունչի «պարզ խօսքերէն» գերիվեր էր եւ միաժամանակ ժխտումն էր Քրիստոսի մարդեղութեան: Ան կը բացատրէր, թէ Քրիստոս մարմնապէս միաժամանակ կրնար ներկայ ըլլալ 10.000 սեղաններու վրայ, որովհետեւ ան իր աստուածային բնութեամբ անկարելի բաները կարելի կը դարձնէր եւ կը փոխանցէր իր մարդկային բնութեան: Լուտեր նաեւ կը հաստատէր, թէ հաւատացեալը կրնար Քրիստոսի աստուածամարդկայնութեան մասնակից դառնալ: Վերջապէս

Լուսեր Զուինկլին եւ անոր հետեւորդները քրիստոնեայ չէր համարեր, իսկ Զուինկլի կ'ըսէր, թէ Լուսեր հռոմէականներէն աւելի արմատական էր: Զուինկլիի տեսակէտները գերմանա-խօս Զուիցերիոյ եւ հարաւ-արեւմտեան Գերմանիոյ մէջ ընդունելի կը դառնային: Հռոմէական կողմը կ'ուրախանար աւետարանականներուն այս բաժանումէն եւ գերման ու գուիցերիացի բողոքականներուն տեսակէտներուն սրութիւնը աւելի կը քաջալերէր՝ ընդգծելով լուսերականութեան մէջ գտնուող կաթոլիկ տարրերը:

Զուինկլի բոլոր բարեկարգիչներուն մէջ քաղաքականօրէն ամենատաղանդաւորն էր եւ կը մշակէր այնպիսի հեռատես ծրագրեր, որոնք սակայն վերջապէս չէին իրագործուեր: Ուրի, Շգուայգ, Անթըրվոլտըն, Զուկ ու Լուսերն գիւղական շրջանները պահպանողական կաթոլիկ էին եւ Յիւրիխի գորավիզ չէին հանդիսանար ու ապրիլ 1524-ին հերետիկոսութեան ընդդիմանալու համար լիկա մը կը կազմէին: Մայիս 1526-ին գուիցերիական հասարակապետութիւնը Պատընի մէջ վիճարկում կը կազմակերպէր: Զուինկլի կը մերժէր վիճարկումին մասնակցիլ, եւ Յովհաննէս Օգոլամփատիոս աւետարանական տեսակէտը կարողապէս կը պաշտպանէր: Մինչ այդ, բացի Յիւրիխէն, Զուիցերիոյ բոլոր շրջանները տակաւին պաշտօնապէս կաթոլիկ էին, եւ այս վիճարկումին կաթոլիկները յաղթանակ կ'արձանագրէին: Յիւրիխ կը մեկուսանար. սակայն փետրուար 1528-ին Պերն պաշտօնապէս բողոքական կը դառնար: Յունիս 1528-ին Յիւրիխ, Կոնստանս եւ Պերն մաս կը կազմէին «քրիստոնէական քաղաքացիական դաշինքին», որուն տարուան աւարտին կը միանար Սէնթ Կալէն եւ 1529-ին կը միանային Պիէլ, Մուլիաուզըն, Պագէլ եւ Շուաֆհաուզըն: Մթորագպուրկ դաշինքին կը միանար 1530-ին, սակայն լիկան տակաւին պէտք եղած ազդեցութիւնը չէր կրնար բանեցնել եւ Զուինկլիի ակնկալութիւններուն չէր համապատասխաներ: Զուիցերիական միութիւնը առաւել կը խախտէր, երբ պահպանողական հռոմայեցիներ կը կազմէին «քրիստոնէական միութիւն» լիկան, եւ 1529-ին իրենց կը միանար նաեւ

Աւստրիան: Թշնամութիւններ ծայր կ'առնէին: Սակայն երբ Աւստրիան գործնական օգնութիւն չէր ցուցաբերեր հռոմէական կողմին, 25 յունիս 1529-ին Գափեյի մէջ երկու կողմերուն միջեւ դաշինք կը կնքուէր ի նպաստ Յիւրիխի եւ զուինկլիականներուն, եւ կը լուծուէր աւստրիական լիկան:

Հիմա Յիւրիխ կը գտնուէր իր զօրութեան գագաթնակէտին եւ կը նկատուէր աւետարանական պայքարին քաղաքական կեդրոնը: Սակայն խաղաղութիւնը տակաւին դիւրաբեկ էր, եւ երբ 1531-ին Յիւրիխ կը փորձէր հռոմէական շրջաններուն մէջ կերակուրի սահմանափակումով աւետարանական քարոզութիւն կատարել, կը յայտնուէր ընդհանրումի վտանգը: Հակառակ Չուինկլիի զգուշացումներուն, Յիւրիխ պայքարի չէր նախապատրաստուած: Հռոմէական շրջանները աւելի արագ կը շարժէին եւ 11 հոկտեմբեր 1531-ին Գափեյի մէջ պարտութեան կը մատնէին Յիւրիխի աւետարանականները: Չուինկլի կը վիրաւորուէր ընդհանրումներու ընթացքին եւ մերժելով բժշկական խնամք ստանալ՝ կը մահանար: Ընդդիմադիրներ անոր մարմինը կը հրկիզէին եւ աղբով կը խառնէին, որպէսզի հետեւորդները իր մասունքները որպէս բողոքական սուրբ չմեծարէին: Վերստին խաղաղութիւն կը տիրէր, Յիւրիխի բոլոր դաշինքները կը լուծուէին եւ իւրաքանչիւր շրջան իրաւասութիւն կը ստանար իր կրօնական ներքին հարցերը կարգաւորելու: Գերմանախօս Չուիցերիոյ մէջ Բարեկարգութեան յառաջխաղացքը ժամանակաւորապէս կը կասէր: Յիւրիխի եկեղեցիին մէջ Չուինկլիի կը յաջորդէր խաղաղասէր Հենրիխ Պուլինկըր (1504–1575): Չուիցերիական բարեկարգչական շարժումը պիտի բարեփոխուէր եւ զարգանար Յովհաննէս Կալվինի շնորհիւ եւ այն եկեղեցիները, որոնք իրենց հոգեւոր հայրը կ'ընդունէին զինք եւ մասամբ մըն ալ Չուինկլին, «բարեկարգեալ» պիտի կոչուէին եւ զատորոշուէին «լուտերականէն»:

Դ. ԳԼՈՒԽ ԿՐԿՆԱՄԿՐՏԱԿԱՆՆԵՐԸ

Ինչպես նշած էինք, Անդրեաս Պոտենսթայն Գարլըսթատթցի կես բարեկարգիչ նկատուած էր Լուտերի գործակիցներուն կողմէ: Շատեր նոյն կարծիքը ունէին Ջուինկլիի մասին: Կային անձեր, որոնք առաւել փոփոխութիւններ կը փափագէին մտցնել Յիրիխի մէջ: Ասոնցմէ էին զարգացած քահանայ եւ կանոնիկոսի գաւակ՝ Ֆելիքս Մանգ (1500?–1527), եւ Յիրիխի ականաւոր ընտանիքէ մը սերած եւ Ջուինկլիի նման Վիեննայի ու Պազէլի համալսարաններուն մէջ որպէս մարդկայնական կազմաւորուած Գոնրատ Կրեպըլ (1498–1526): 1523-ի աւարտին, ասոնք եւ ուրիշներ Ջուինկլիին կը նկատէին Աստուածաշունչի սկզբունքներուն դաւաճանած եւ փոխան Աստուծոյ խօսքին՝ Յիրիխի աշխարհական հեղինակութիւններուն շնորհիւ բարեկարգութեան նախաձեռնած սուտ մարգարէ: Այս ծայրայեղականները հրապարակ կու գային հոկտեմբեր 1523-ի երկրորդ վիճարկումի ընթացքին, երբ կը քննարկուէր սրբանրկարներու եւ սուրբ պատարագի վերացումը եւ աշխարհական հեղինակութիւնները ի նպաստ Բարեկարգութեան չէին դիրքորոշուէր:

Հոկտեմբեր 1523-ի վիճարկումին կարող մասնակիցներէն էր Ինկոլսթատ համալսարանի աստուածաբանութեան դոկտոր եւ Լուտերի ընդդիմադիր Յովհան Էքի աշակերտ ու գործակից՝ Պաղտասար Հուպմայրը (1480?–1528): 1521-ին Հուպմայրը Ջուիցերիոյ հիւսիսը գտնուող Վոլտշաթի քարոզիչ կը նշանակուէր եւ 1522-ին, Լուտերի երկերուն աւետարանական ազդեցութեան ներքեւ, բարեկարգութեան կը ձեռնարկէր: Մայիս 1523-ին ան կասկածի տակ կ'առնէր երեխաներու մկրտութիւնը եւ հարցը Ջուինկլիի հետ քննարկելէ ետք՝ կ'եզրակացնէր, թէ ան եւս կը բաժնէր իր տեսակէտը: Ան իր քննադատութիւնը կը հիմնաւորէր այն սկզբունքին վրայ, թէ երեխաներու մկրտութեան համար Աստուածաշունչը բաւարար

տունեալներ չէր հայթայթեր: 1524-ին Գոնրատ Կրեպըլ եւ Ֆելիքս Մանգ նոյն եզրակացութեան կը յանգէին ու 1525-ին Հուլիանայրի հետ գործադրութեան կը դնէին իրենց այս համոզումը:

17 յունուար 1525-ին այս հարցին շուրջ անոնք Ջուինկլիի հետ կ'ունենային հրապարակային վիճարկում, որուն հետեւանքով քաղաքապետական խորհուրդը յունուար 18-ին կ'որոշէր, որ բոլոր երեխաները մինչեւ ութ օր պէտք է մկրտուէին եւ ոչ-արտօնեալ քարոզութիւններն ու պաշտամունքային հաւաքները դադրէին: Ընդդիմադիրներուն համար այս որոշումը երկրաւոր ուժի մը Աստուծոյ խօսքին հեղինակութիւնը դրժելուն համագօր կը նկատուէր: 21 յունուարի գիշերը ընդդիմադիրներու խմբակ մը կը հաւաքուէր Ֆելիքս Մանգի մօտ տունը եւ աղօթքէ ետք նախկին քահանայ Գեորգ Պլուրոք (1492?-1529) կը խնդրէր, որ Գոնրատ Կրեպըլ մկրտէր զինք: Գոնրատէ մկրտուելէ ետք՝ Գեորգ իր հերթին կը մկրտէր 15 ուրիշներ: Մինչ այդ քաղաքապետական խորհուրդը կը յորդորէր Գոնրատը եւ Ֆելիքսը իրենց տեսակէտը տարածելէ կասիլ ու Յիւրիխի քաղաքացիութիւն չունեցող անոնց բոլոր գործակիցներուն, ներառեալ Ուիթիգոնի քահանայ Ուիլիլմ Ռուպլին (1484?-1559) եւ Լուսովիկ Հաթսըրը (1500?-1529), կ'արգիլէր հոն մնալ:

Յաջորդ շաբաթ աշխարհական հեղինակութիւններուն ընդդիմացողներ արթնութեան հաւաքներ կը կազմակերպէին Յիւրիխի մօտ գտնուող Ջուիգոն գիւղին մէջ: Անոնք բնակարաններու մէջ աղօթքի կը հաւաքուէին, եւ վերստին ծնունդի փորձառութիւնը ունեցողներ ջուրի սրսկումով կը մկրտուէին: Այս կերպով հաւատացեալներու մկրտութիւնը գործադրելէ ետք՝ Վերջին ընթրիքի պարզ նշումով կը տօնախմբէին իրենց անդամակցութիւնը Քրիստոսի: 1525-ի Մուրբ գատիկին Պաղտասար Հուլիանայր կը մկրտուէր Ուիլիլմ Ռուպլիի ձեռամբ:

Այս վճռական արարքներով ընդդիմադիրներ «Ճշմարիտ հաւատացեալներու եկեղեցի» անունով առանձին համայնք կը կազմէին: Ասոնց ընդդիմացողները զիրենք կը կոչէին հակամկրտականներ կամ աւելի ճիշդ՝ կրկնամկրտականներ: Այս երկու տիտղոսներն ալ չէին համապատասխաներ ճշմար-

տութեան, որովհետեւ անոնք մեծահասակներու մէկ մկրր-տութիւն կը ճանչնային եւ դէմ էին միայն երեխաներու մկրտութեան: Անոնք իրար պարզապէս եղբայրներ եւ քոյրեր կը կոչէին, սակայն Բարեկարգութեան օրերէն կը ճանչցուէին որպէս կրկնամկրտականներ:

Զուիսկլի խստօրէն կ'ընդդիմանար այս կրկնամկրտա-կաններուն կամ գուիցերիացի եղբայրներուն այնպէս, ինչպէս կը կոչուին այսօր, սակայն մեծ յաջողութիւն չէր ունենար զանոնք իրենց կեցուածքէն շեղելու մէջ: Գոնրատ Կրեպըլ եւ հետեւորդները կը տարբերէին Զուիսկլիէ, որովհետեւ քրիստո-նէական հաւատքը որպէս Քրիստոսի աշակերտութիւն եւ սրբակեաց կեանքի հոգեւոր վերածնունդ կ'ըմբռնէին: Ասոնց համար ճշմարիտ Եկեղեցին երեխայութեան ատեն մկրտուելով Քրիստոսը խոստովանող բոլոր հաւատացեալներէ չէր բաղ-կանար, այլ այնպիսիներէ, որոնք հասուն տարիքին մկրտուե-լով քրիստոնէական հաւատքը գիտակցաբար կը խոստո-վանէին եւ հաւատքի պտուղներ կու տային՝ դառնալով հա-մոզուած հաւատացեալներ: Այս սկզբունքէն մեկնած՝ կրնա-մըկրտականներ կը մերժէին անդամակցիլ Զուիսկլիի հաս-տատած նահանգային եկեղեցիներուն, կը կազմէին առանձին համայնքներ եւ Եկեղեցի ու կը դառնային պետութեան բա-ժանումին առաջին գործադրողները: Անոնք կը պնդէին, թէ նկատի ունենալով, որ վաւերական հաւատքը կամաւոր էր, կրօնական բոլոր ճնշումները մերժելի էին եւ հետեւաբար կրօնական դարաւոր միաձեւութիւնը նախապայման չէր կրնար ըլլալ հասարակաց խաղաղութեան ու կարգապահութեան: Մանաւանդ այս կէտն էր, որ զիրենք հալածանքի կ'ենթարկէր: Անոնց անջատողականութիւնը ընկերութեան կարգապահութեան վտանգ կը նկատուէր, երբ մանաւանդ, Լեոի քարոզին հիմամբ, երդում ընել եւ զինուորական ծառայութիւն կատարել կը մերժէին ու կը խախտէին ժամանակակից քաղաքական կեանքին երկու հիմքերը: Սակայն իրենք համոզուած էին, թէ Զուիսկլիի աստուածաշնչական սկզբունքները տրամաբանօ-

րեն ի գործ կը դնէին եւ առաջին դարերու քրիստոնէական ճշմարիտ կեանքը կ'ապրէին:

7 մարտ 1526-ին Յիւրիխի քաղաքապետական խորհուրդը կը հրամայէր խեղդամահ ընել կրկնամկրտականները, սակայն կը գոհանար պատժելով միայն չորս անձ: Շրջանի առաջին կրկնամկրտական նահատակը կ'ըլլար Ֆելիքս Մանգ, որ 5 յունուար 1527-ին Լիմաթ գետին մէջ կը խեղդուէր: Գոնրատ Կրեպլը այս մահապատիժէն կը փրկուէր, որովհետեւ արդէն իսկ համաճարակէ կը մահանար:

Մինչ այդ, Վոլտշաթի մէջ Պաղտասար Հուպմայրը կրկնամկրտականներու մեծ համայնք մը կը խմբէր եւ կրկնամկրտական քարոզութեան կը նախաձեռնէր: Ըստ իրեն՝ Աստուածաշունչը Եկեղեցիի միակ օրէնքն էր եւ Աստուծոյ խօսքով պէտք էր դատուէին քրիստոնէական քարոզութիւնը, ապաշխարութիւնը, հաւատքը, մկրտութիւնն ու գործերը. եւ մանաւանդ գործերը հայելին պէտք է դառնային քրիստոնէական կենդանի կեանքին: Սակայն երբ Վոլտշաթի բնակչութիւնը գիւղացիական ապստամբութեան կը մասնակցէր, բարեկարգչական այս շարժումը կը դադրէր, եւ Հուպմայրի քաղաքէն հեռանալուն բերումով՝ կաթոլիկներ դարձեալ կը զօրանային: Յիւրիխի մէջ բանտարկուելէ եւ հալածուելէ ետք Հուպմայրը նախ Օկսպուրկ եւ ապա Սորաւիա կ'անցնէր, ուր յաջողութեամբ կը տարածէր կրկնամկրտականութիւնը:

Այս հալածանքներուն հետեւանքով կրկնամկրտակա-նութիւնը Գերմանիոյ, Չուիցերիոյ եւ Հոլանտայի մէջ կը տարածուէր: Կայսրութեան կաթոլիկ մասերուն մէջ կրկնամկրտականներ լուստերականներէն աւելի մեծ թիւ կը կազմէին: Նահանգային իշխանութիւններ ասոնց դէմ վճիռներ կ'արձակէին: Աւստրիոյ Ֆերտինանտը եւ եղբայրը՝ Չարլզ Ե., այս քայլին կը դիմէին 4 յունուար 1528-ին: Հակառակ ամեն տեսակի արգելքներու, կրկնամկրտականներ աւելի խնդրայարոյց կը դառնային: 1529-ի Սբէլըրի եւ 1530-ի Օկսպուրկի գերման ընդհանուր ժողովներուն կաթոլիկներ եւ բողոքականներ կ'որոշէին կրկնամկրտականները մահով պատժել: Կաթոլիկ

Աւստրիոյ եւ Պաւարիոյ մէջ այս օրէնքը ամենայն խստութեամբ կը գործադրուէր: Իսկ աւետարանական շրջաններու մէջ, կրկնամկրտականներ խնդրայարոյցներ եւ ոչ հերետիկոսներ նկատուելով, գաղթելու կարելիութիւն կը ստանային: Իսկ երբ կը մերժէին մեկնիլ եւ իրենց քարոզութիւնը շարունակել, որպէս խաղաղութիւնը խախտողներ մահուան կը դատապարտուէին: Միայն Հեսսի, Ուորթըմպլըրկի եւ Սթրազպուրկի մէջ անոնք զերծ կը մնային մահուան դատապարտութենէն:

Կրկնամկրտականներ Զուիցերիայէն, հարաւային Գերմանիայէն եւ Մորաւիայէն կը տարածուէին: Երբ անոնք Յիրիխի մէջ կը հալածուէին, Զուիցերիոյ այլ շրջանները կ'անցնէին: Կրկնամկրտական համայնքներ կը կազմուէին Ալպեան լեռներու բոլոր շրջաններուն մէջ: Անոնք շատ շուտ կ'աճէին, եւ տեղական իշխանութիւններ անոնց հանդէպ քայլեր կ'որդեգրէին: 29 դեկտեմբեր 1529-ին Պազելի քաղաքապետական խորհուրդը հրապարակային վիճարկում կը կազմակերպէր աւետարանական եւ կրկնամկրտական քարոզիչներու միջեւ ու ապա կ'արգիլէր կրկնամկրտական շարժումը: 1530–1531-ին երեք հաւատացեալ մահուան կը դատապարտուէր եւ շատեր կ'աքսորուէին: 1–9 յուլիս 1532-ին Պերնի շրջանի Զոֆինկըն քաղաքին մէջ տեղի կ'ունենար 23 կրկնամկրտականներու հրապարակային վիճարկումը, եւ կրկնամկրտականներ հոս եւս կը դատապարտուէին: 1529–1571-ին տեղի կ'ունենար 40 հրապարակային դատապարտութիւն կրկնամկրտականներուն դէմ: Նոյն իրավիճակը կը տիրէր Ափենզել եւ Արկու շրջաններուն մէջ: Կրկնամկրտականներու վարդապետութեան կեդրոնը կը դառնային Կրաուպունտըն քաղաքը եւ Չուր շրջանը: Հոս գլխաւոր քարոզիչը Գէորգ Պլուրոքն էր, որ 6 սեպտեմբեր 1529-ին Թիրոլի մէջ խարոյկ կը բարձրացուէր: Երկար ատեն կրկնամկրտականներ աշխուժ գործունէութիւն կ'ունենային այս շրջանին մէջ եւ Զուինկլիի յաջորդը՝ Հենրիխ Պուլինկըր, գիրով կը պայքարէր անոնց դէմ: Կրաուպունտընի կրկնամկրտականներ կանոնաւորաբար կապ կը պահէին Մո-

րաւիոյ եւ Իտալիոյ, մանաւանդ Վենետիկի իրենց համակիրներուն հետ:

Գերմանիոյ մէջ սկիզբը Օկսպուրկ կը դառնար կրկնամըկրտականներու գլխաւոր կեդրոնը: Հոս, մայիս 1526-ին, Պաղտասար Հուպմայրը կը մկրտէր Հանս Տենքը (1500?-1527), որ իր հերթին կը մկրտէր Հանս Հութը եւ ան կը դառնար նոր հայմայնքին հիմնադիրը: Հութ նաեւ միսիոնարական առաքելութեան կը լծուէր Մորաւիոյ եւ Աւստրիոյ մէջ: Տենքի առաջնորդութեամբ՝ 20 օգոստոս 1527-ին Օկսպուրկի մէջ հարաւային Գերմանիոյ եւ Աւստրիոյ կրկնամկրտականները մեծաթիւ սինոտ կը գումարէին, հետագային ծանօթ որպէս «Մարտիրոսներու սինոտ», եւ կը քննարկէին Հութի յայտնութենական գաղափարները: Հութ ինքզինք Աստուծոյ կողմէ ղրկուած մարգարէ մը կը նկատէր եւ կ'ըսէր, թէ սուրբերու հալածանքէն ետք կայսրութիւնը թուրքերու ձեռամբ պիտի կործանէր. ապա սուրբերը պիտի համախմբուէին եւ բոլոր քահանաներն ու անօրէն իշխանները անոնց ձեռամբ պիտի փճանային, եւ Քրիստոս երեւելիօրէն պիտի իշխէր աշխարհի վրայ: Ժողովականներուն մեծամասնութիւնը կը մերժէր այս տեսակէտները, եւ Հութ կը խոստանար զանոնք միայն ինքնիրեն վերապահել: Սինոտը կ'որոշէր միսիոնարներ ղրկել նաեւ Աւստրիա, Պաւարիա, Վորմզ, Պազէլ եւ Ցիւրիխ: Այս տեղերը ղրկուածներուն մեծամասնութիւնը կը նահատակուէր: Սեպտեմբեր 1527-ին Հութ կը բանտարկուէր Օկսպուրկի մէջ եւ իր սենեակին մէջ բռնկած հրդեհէն կը մահանար. 7 դեկտեմբեր 1527-ին անոր մարմինը հրապարակաւ կը հրկիզուէր:

Սինոտէն ետք Տենք կ'երթար Ուլմ, Նուրենպերկ եւ Պազէլ, ուր համաճարակով կը մահանար: Ան կրկնամկրտականներու ամենանշանաւոր դէմքերէն մին էր: Ան մարդկայնական կազմաւորում ունէր եւ 1524-ին Նուրենպերկի Սուրբ Սեպալտ նշանաւոր դպրոցին տեսուչը կ'ըլլար: Սակայն երբ ան Մունցբրի հոգեւոր գաղափարներուն հանդէպ համակրանք կը ցուցաբերէր, 1525-ին պաշտօնանկ կ'ըլլար, թէեւ աւելի ուշ, Օկսպուրկի մէջ, կրկնամկրտականներուն կը միանար՝ հաւա-

նաբար անոնց քրիստոնեական աշակերտութեան եւ խաղաղասիրութեան գաղափարականէն հմայուած: Մահէն առաջ Տենք իր բոլոր կապերը կը խզեր կրկնամկրտականներուն հետ, որովհետեւ քրիստոնեական կեանքի ամեն երեւելի կազմակերպութեան կը մերժեր: Ան իր հաւատքը Աստուածաշունչէն գերիվեր եղող ներքին լոյսին վրայ կը խարսխէր: Ան Քրիստոսի մէջ կը տեսներ սիրոյ գերագոյն տիպարը եւ կ'ըսէր, թէ քրիստոնեան անմեղ կեանք պէտք էր ապրէր: Իր գրութիւնները կը բացայայտէին, թէ ան քրիստոնեական պղատոնականութեան եւ խորհրդագագացութեան ու մանաւանդ «գերման աստուածաբանութեան» հետեւորդ մըն էր:

1526–1533-ին Սթրազպուրկ կը դառնար կրկնամկրտականութեան գերման կեդրոնը: 1524-էն կրկնամկրտական բնիկ համայնք մը կար հոս՝ հինադրուած աշխարհական քարոզիչ Կդեմէս Զիկլըրի կողմէ: 1526-էն զուիցերիացի եղբայրներու համայնք մըն ալ կը կազմուէր Ֆրիպուրկի Սուրբ Պետրոս վանքի նախկին վանական Միքայէլ Սաթլըրի առաջնորդութեամբ, որ 1525-ին Յիրիխէն վտարուած էր: Ան ամեն տեղ յարգանքի կ'արժանանար իր քրիստոնեական խոր բարեպաշտութեան համար: Սթրազպուրկի քարոզիչները, մանաւանդ Գափիթօ եւ Մատթէոս Զելլ ու անոր կինը՝ Կատարինէ, բարեկամ էին իրեն: Մարթին Պուսեր, կրկնամկրտականներուն մէջ քրիստոնեական համայնքին միութեան սպառնացող վտանգ տեսնելով, կը խորհէր, թէ կրնար զանոնք համոզել, որ իրենց անջատողականութենէն հրաժարէին: 1526-ին Տենք Օկսպուրկէն Սթրազպուրկ կու գար եւ բաւական հետեւորդներ կը սիրաշահէր: 22 դեկտեմբերին Պուսեր զայն հրապարակային վիճարկումի կը հրաւիրէր: Քաղաքապետական խորհուրդը Տենքը Սթրազպուրկէն դուրս կը դնէր եւ ան Վորմզի վրայով Օկսպուրկ կը վերադառնար, ուր 1527-ին Մարտիրոսներու սինոտին կը մասնակցէր: Տենքէն ետք Սաթլըր եւս կամաւորաբար կը հեռանար Սթրազպուրկէն: 24 փետրուար 1527-ին Շլաէթիւմի մէջ ան կը նախագահէր զուիցերիացի եղբայրներու սինոտին, որ կը զումարուէր կեղծ եղբայրները չէզոքացնելու

համար: Մինտըր եօթը յօդուած կ'որդեգրէր, որոնք հաւանաբար Մաթլըրի կողմէ խմբագրուած էին:

«Շլաէյթհըմի խոստովանութիւնը», որ աւետարանական կրկնամկրտականներու կողմէ խմբագրուած բանաձեւ մըն էր, կը հաստատէր հաւատացեալներուն մկրտութիւնը: Եկեղեցին կը նկատուէր վերածնած եւ մկրտուած քրիստոնէաներու տեղական համայնքներու ամբողջութիւնը, որ որպէս Քրիստոսի մարմին կը խմբուէր Վերջին ընթրիքին շուրջ: Կը հաղորդագրուէին անոնք, որոնք այս սկզբունքը չէին ընդունէր: Մարմնական ամեն տեսակ ճոխութիւն կը մերժուէր: Հոռմէական, լուտերական եւ գուինկլիական պաշտամունքի կերպերը կը համարուէին որպէս ոչ-քրիստոնէական: Հովիւր այլեւս շրջուն քարոզիչ չէր, այլ կը ծառայէր տեղական համայնքին մէջ եւ ճշդուած պարտականութիւններ կը կատարէր, որոնք էին Աստուածաշունչը կարդալ եւ ուսուցել, հասարակաց աղօթքը առաջնորդել ու Վերջին ընթրիքին նախագահել, որմէ յանուն Եկեղեցիին կրնար գրկել անոնք, որոնք անարժան էին: Թէեւ աշխարհիկ իշխանութիւնը այս անկատար աշխարհին մէջ անհրաժեշտութիւն էր, քրիստոնէաներ անոր հետ գործ չունէին. անոնք զէնք չէին կրէր, բռնութիւն չէին գործադրէր եւ երդում չէին կատարէր: Այս գաղափարները հետագային զանազան կերպերով մկրտչականներու, ժողովականներու եւ քուէ-գրքներու կողմէ պիտի որդեգրուէին եւ մեծ ազդեցութիւն ունենային Անգլիոյ եւ Ամերիկայի կրօնական կեանքին վրայ: Մինտէն անմիջապէս ետք Մաթլըր կը ձերբակալուէր արստրիացիներուն կողմէ եւ խարոյկի մահուան կը դատապարտուէր 21 մայիս 1527-ին: Իսկ ութ օր ետք իր կինը խեղդամահ կ'ըլլար:

Մթրագպուրկի կրկնամկրտական համայնքը կը շարունակէր ծաղկիլ շնորհիւ ժամանող նոր առաջնորդներու: Մեպտեմբեր 1528-ին Թիբոլէն հոս կու գար Փիլկրամ Մարփէք (1495?-1556) եւ մեծաթիւ հետեւորդներ կ'ունենար: Դեկտեմբեր 1531-յունուար 1532 ան Պուսերի հետ կապ կը հաստատէր ու քաղաքէն կը վտարուէր: Շրջան մը Ուլմի մէջ մնալէ ետք ան կը

հաստատուեր Օկսպուրկի մէջ: 1530-ականներէն մինչեւ մահը Մարփէք կը դառնար հարաւային Գերմանիոյ կրկնամկրտականութեան գլխաւոր կազմակերպիչը եւ իր տեսակէտները կը պաշտպանէր բեղուն երկասիրութիւններով, որոնց մէջ կրկնամկրտական վարդապետութիւնները կը ջատագովէր աստուածաշնչական սկզբունքներով: 1542-ին ան քրիստոնէական մը կը գրէր եւ իր կեանքի աւարտին *Պատասխաններ* անունով երկը կ'աւարտէր ընդդէմ արմատական բարեկարգիչ Գասպար Շուէնգֆելտի (1489–1561):

1533-էն ետք Սթրազպուրկի իշխանութիւնները աւելի խիստ կեցուածք կ'որդեգրէին անջատողականներուն դէմ, երբ մասնաւորաբար Մելխիոր Հոֆման (1495?–1543) ծայրայեղ յայտնութեանական վարդապետութիւններ կը քարոզէր: Այս տարօրինակ մարդը Սվապիոյ մէջ ծնած էր եւ 1522-ին լուտերական դարձած: Ապա ան աշխարհական քարոզիչ եղած էր եւ շրջած Պալթեան երկիրները, Շուէտ, Դանիա եւ Հոլսթայն ու միշտ կաթոլիկ քահանաներու եւ լուտերական քարոզիչներու հետ բախում ունեցած իր շփոթեցուցիչ աւետարանական տեսակէտներուն համար: Յունիս 1529-ին ան Սթրազպուրկ կու գար եւ կրկնամկրտականներուն հետ շփում կ'ունենար ու կը վերամկրտուէր: Տեղական եկեղեցիներուն հանդէպ ունեցած ընդդիմութեամբ՝ կը զարգացնէր Յովհաննէսի յայտնութեան վրայ հիմնուած յայտնութեանական ինքնատիպ տեսակէտ մը: Ան Լուտերը կը նկատէր «սկիզբին առաքեալը»՝ Յուդան, եւ ինքզինք՝ «աւարտին առաքեալը»: Ան կը կանխատեսէր, թէ Վերջին դատաստանը տեղի պիտի ունենար 1533-ին եւ Սթրազպուրկէն պիտի տարածուէր ամբողջ աշխարհի մէջ: Երբ իր ձերբակալութեան լուրը կը ստանար, ան ապրիլ 1530-ին կը փախէր Էմտըն, ուր բազմաթիւ հետեւորդներ կ'ունենար ու զանոնք կը համոզէր, որ իրենցմէ զատ բոլորը պիտի փճանային: Երբ իր հետեւորդները կաթոլիկ իշխանութիւններուն կողմէ խիստ հալածանքի կ'ենթարկուէին, ան երկու տարի կ'արգիլէր հաւատացեալներուն մկրտութիւնը եւ 1531-ին «նոր Երուսաղէմ»՝ Սթրազպուրկ կը վերադառնար: 1533-ի գարնան դարձեալ

Մթրագպուրկ կու գար եւ մայիսին կ'ենթարկուէր երկու դատա-
վարութիւններու: Ապա 10–13 յունիս 1533-ին Պուսեր զինք
քննութենէ կ'անցընէր: Հոֆման ցկեանս բանտարկութեան կը
դատապարտուէր, սակայն իր համոզումներէն չէր հրաժարեր:

Մորաւիոյ մէջ կրկնամկրտականներ լէգգընշթայններու
կալուածներուն վրայ կը տեղադրուէին: Յուլիս 1526-ին Պաղ-
տասար Հուպմայրը Նիկոլսպըրկ կու գար եւ գերմանախօս
լուտերական ծուխը կրկնամկրտական կը դարձնէր: Բարձրա-
գոյն Աւստրիայէն եւ Թիրոլէն հազարաւոր գաղթականներ հոս
կը ժամանէին եւ բազմաթիւ համայնքներ կը հաստատէին:
Հուպմայրը ասոնց գլխաւոր ղեկավարը կ'ըլլար, սակայն յուլիս
1527-ին ինքզինք աւստրիական իշխանութիւններուն կը յանձ-
նէր եւ 10 մարտ 1528-ին, Վիեննայի մէջ, խարոյկի մահուան կը
դատապարտուէր, իսկ մի քանի օր յետոյ իր կինը Տանուպի մէջ
խեղդամահ կ'ըլլար:

Մորաւիոյ եղբայրներուն մէջ կը ծագէին բազմաթիւ
անհամաձայնութիւններ: Մայիս 1527-ին Հանս Հուրթի եւ Պաղ-
տասար Հուպմայրի միջեւ կը ծագէր մեծ հարց մը. Հուրթ կ'ըսէր,
թէ աշխարհի վերջը պիտի գար 1528-ին, եւ կը ջատագովէր
արմատական խաղաղութիւն մը: Հուպմայրը կը շեշտէր աշ-
խարհիկ իշխանութեան անհրաժեշտութիւնը եւ կը յորդորէր
գայն ենթարկուիլ, ինչպէս նաեւ զինուորագրուիլ եւ տուրքեր
վճարել: Աւելին, ան կ'ըսէր, թէ աշխարհիկ իշխանութիւնը
կրնար ամբողջապէս քրիստոնէայ ըլլալ եւ համաձայն կը
գտնուէր արդար պատերազմի ու մահուան դատապարտութե-
ան: Այս բոլորով՝ Հուպմայրը կրկնամկրտական չէր նը-
կատուէր: Հուրթի համակիր եղբայրներ, Յակոբ Ուայտմանի
գլխաւորութեամբ, կը լքէին Նիկոլսպըրկը եւ Օսթերլիցի մէջ
համայնք կը հաստատէին 1528-ին, որ շուտով կ'աճէր եւ քանի
մը հազար կը հաշուէր: Անոնք հասարակաց ինչքերու ընկե-
րային կեանք կ'որդեգրէին, սակայն ամեն կողմէ կը դատա-
պարտուէին, թէ անձնական ինչքերու իրաւունքէ կը զրկէին
զիրար:

Օսթերլիցի համայնքն ալ իր հերթին բաժան-բաժան կ'ըլլար, մինչեւ որ Յակոբ Հուրըր Թիրուլցի առաքեալը 1529–1536-ին կը կազմակերպէր զայն, սակայն ինք եւս Ինսպրըրկի մէջ մարտիրոսական մահ կը ճաշակէր: Հուրըրեան եղբայրներ տնտեսապէս այնքան լաւ կը կազմակերպուէին, որ իրենց հասարակաց կեանքը բնական պայմաններով կը շարունակէին Մորաւիոյ մէջ՝ մինչեւ 1622, Հունգարիոյ մէջ՝ մինչեւ 1685 եւ Ուքրանիոյ մէջ՝ մինչեւ 1874: 1874–1877-ին հուրըրեան խումբեր Ռուսիայէն Հիւսիսային Ամերիկա կը գաղթէին եւ Հարաւային Տաքթթայի, Մոնթանայի, Մանիթոպայի եւ Ալպերթայի մէջ կը հաստատուէին: Հուրըրի կը յաջորդէին կարող եպիսկոպոսներ Հանս Ամոն (1536–1542), Պետրոս Ռայտըմըն (1542–1556), որ 1540-ին կը գրէր կրկնամկրտական հաւատքը պարզաբանող *Հաւատքի պատումը* գիրքը, Պետրոս Ուալփոթ (1556–1578) եւ Գլուսա Պրէյտըլ (1585–1611):

Բարեկարգութեան շրջանի աւարտին Մորաւիայէն զատ կրկնամկրտական համայնքներ կային Զուիցերիոյ, Փալաթինաթի, Հոլանտայի, Ֆրիզլանտի, Փրուսիոյ եւ Լեհաստանի մէջ: 1530–1540-ականներուն անոնք աշխուժ էին նաեւ լուտերական գլխաւոր տարածքներ նկատուած Հեսսի եւ Սաքսոնիոյ մէջ: Հեսսի Փիլիպպոսը կը փորձէր ճկունութեամբ վարուիլ կրկնամկրտականներուն հետ: Անոնք, որոնք դարձի չէին գար, կը բանտարկուէին: Կրկնամկրտականներու ամենածայրայեղ առաջնորդը Թովմաս Մունցըրի նախկին գործակից Մելխիոր Ռինգն էր, որ իր կեանքին վերջին 10 տարիները բանտը կ'անցըներ եւ հոն ալ կը մահանար շուրջ 1540-ին: 30 հոկտեմբեր–2 նոյեմբեր 1538-ին Մարպուրկի մէջ Մարթին Պուսեր հեսսեան կարգ մը կրկնամկրտականներուն հետ կը բանակցէր եւ զանոնք իր կողմը կը շահէր:

Սաքսոնիոյ եւ Թիրիինկիոյ մէջ կրկնամկրտականներ իստօրէն կը հալածուէին: Լուտեր զանոնք անիրաւօրէն Անդրէաս Պոտենսթայն Գարլսթատթցիի եւ Մունցըրի հետեւորդ կը համարէր ու հաւատքը խեղաթիւրողներ կը նկատէր՝ պատճառաբանելով, թէ անոնք կը հաւատային, որ փրկութիւնը

գործերով եւ օրէնքով կը ձեռքբերուի: Ընդհանրապէս խաղաղասէր նկատուած Մելանգթոն եւս անոնց ուժեղ թշնամին էր եւ զանոնք ընկերային կարգապահութեան վտանգ կը նկատէր: Մաքսնիոյ մէջ անոնց գլխաւոր թշնամին էր Ճասթուս Մենիուս, որ 1530–1544 բազմաթիւ գրութիւններ կը հեղինակէր անոնց դէմ, որոնցմէ գլխաւորներն էին «Կրկնամկրտականներու վարդապետութիւնն ու գաղտնիքը՝ ժխտուած Աստուածաշունչով» եւ «Կրկնամկրտականներու ոգին»:

Հետաքրքրական է նշել, թէ բարեկարգիչներու հետագայ երկերուն մեծ մասը, ինչպէս՝ Լուտերի *Գաղատացիներու նամակին մեկնաբանութիւնը* եւ Կալվինի *Քրիստոնէական կրօնքի հաստատութիւններ*-ը, աւետարանական հաւատքը կը լուսաբանէին մէկ կողմէ ի հակադրութիւն հռոմէական կաթոլիկութեան եւ միւս կողմէ՝ կրկնամկրտականութեան:

Ե. ԳԼՈՒԽ

ԳԵՐՄԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1529-ին Ֆրանսայի դեմ պատերազմը յաջողութեամբ աւարտելէ եւ Կղեմէս Է. պապին հետ հաշտուելէ ետք Չարլզ Ե. կը կարողանար վերջապէս միջամուխ ըլլալ Գերմանիոյ հարցերուն: 1529-ի Սբէյըրի խոհրդարանական նիստը, լուտերականներու եւ կրկնամկրտականներու տարածումէն ահագանգուած, կ'արգիլէր լուտերականներուն յառաջխաղացքը եւ կը վերահաստատէր հռոմէական եպիսկոպոսական հեղինակութիւնը: Լուտերական փոքրամասնութիւնը կը բողոքէր: Այս կացութեան մէջ Հեսսի Փիլիպպոսը կը փորձէր պաշտպանողական լիկա կազմել՝ ի մի խմբելով գերման եւ գուիցերիացի բոլոր աւետարանական ուժերը: Այս ծրագիրին գլխաւոր արգելքը երկու կողմերուն իրարմէ ունեցած վարդապետական տարբերութիւններն էին, սակայն Փիլիպպոս կը յուսար ժողովի ընթացքին լուծել զանոնք: Թէեւ Լուտեր դեմ էր այս փորձին, սակայն վերջապէս 1 հոկտեմբեր 1529-ին, Փիլիպպոսի Մարպուրկի դղեակին մէջ, Լուտեր եւ Մելանգթոն կը հանդիպէին Ջուինկլիի եւ Յովհաննէս Օգոլամփատիոսի հետ: Այլ երկրորդական ղեկավար դեմքերու կարգին Պուսեր եւ Սթրազպուրկէ ժամանած ուրիշ ներկայացուցիչներ եւս կը մասնակցէին այս ժողովին, որ ծանօթ է որպէս «Մարպուրկի ժողով»:

Լուտեր թէեւ կասկածով կը մօտենար գուիցերիացիներուն Սուրբ Երրորդութեան եւ սկզբնական մեղքի վարդապետութիւններուն, սակայն գլխաւոր տարբերութիւնը Վերջին ընթրիքին մէջ Քրիստոսի մարմնական ներկայութիւնն էր: Լուտեր տառացիօրէն կ'ըմբռնէր «այս է մարմին իմ» նախադասութեան մեկնաբանութիւնը: Ջուինկլի կը պաշտպանէր այն դասական հասկացողութիւնը, թէ ֆիզիքական մարմին մը նոյն ատեն երկու տեղ չէր կրնար ըլլալ: Համաձայնութեան հասնիլը անկարելի կը դառնար: Ջուինկլի կը պնդէր, թէ վերջապէս երկու կողմերն ալ քրիստոնէայ եղբայրներ էին. սակայն Լուտեր կը

յայտարարեր, թե հաւատքի եղբայր կրնար ընդունիլ միայն այն անձը, որ հաւատքի հիմնական կէտերուն շուրջ ամբողջապէս համամիտ էր: Զուինկլիէն աւելի Պուստերին ակնարկելով՝ Լուտեր կ'արտասանէր իր նշանաւոր խօսքը, թէ «*Ղուք մեզմէ տարբեր ոգի ունիք*»:

Մելանգթօն չէր յուսաւքուեր եւ կը յանձնարարէր, որ Լուտեր հաւատքի 15 յօդուած խմբագրէր: 14 յօդուածներու շուրջ համաձայնութիւն կը գոյանար: 15-րդ յօդուածը կը վերաբերէր Վերջին ընթրիքին մէջ Քրիստոսի ներկայութեան, եւ այս մէկը անլուծելի կը մնար: Երկու կողմերն ալ կը ստորագրէին Մարպուրկի յօդուածները՝ նախատեսելով, թէ «*հարաքանցիկը կողմ հրարու հանդէպ քրիստոնէական սէր պիտի ցուցաբերէր՝ ըստ իր խիղճին*» (*Luther's Works*, 38:88): Լուտեր եւ Զուինկլի որպէս յաղթական կը հեռանային Մարպուրկէն: Լուտերականներ կ'որոշէին ասկէ ետք որեւէ քաղաքական հասարակապետութեան մաս կազմել հաւատքի համաձայնութեան հիմամբ: Յունիս 1529-ին Լուտերի եւ ուիթընպըրկեաններուն կողմէ խմբագրուած եւ Մարպուրկի մէջ ներկայացուած «Շուապախի յօդուածներ»-ը այս նպատակին կը ծառայէին: Սաքսոնիոյ եւ Պրանտընպըրկ-Անսպախի մէջ այս յօդուածները կը դառնային քաղաքական հասարակապետութեան փորձաքարը: Հարաւային Գերմանիոյ կարեւոր քաղաքներէն միայն Նուրենպերկը կ'ընդունէր զանոնք: Մելանգթօնի նախատեսած աւետարանականներու լիկան կարելի չէր ըլլար կազմել: Լուտերականներ եւ գուիցերիացիներ իրենց անջատ ճամբով կ'երթային եւ բաժանումը վերջնական կ'ըլլար:

Յունուար 1530-ին կայսրը Իտալիա կը գտնուէր պապէն թագադրուելու համար եւ խոհրդարանական նիստ կը հրաւիրէր Օկսպուրկի մէջ: Ան կը յայտնէր, թէ կրօնական տարբերութիւններու վերացումը պիտի ըլլար օրակարգի նիւթը եւ կը խոստանար լսել բոլորին տեսակէտները: 20 յունիս 1530-ին ժողովը կը գումարուէր եւ լուտերականներ իրենց Հաւատքի բանաձեւը իրենց հետ կը տանէին: Ուիթընպըրկի աստուածաբաններ «Շուապախի յօդուածներ»-ուն կողքին մայիս 1530-ին

կը մշակեին կաթոլիկները քննադատող «Թորկաուի յօդուածներ»-ը եւս: Յօդուածներու այս երկու հաւաքածոներուն հիմամբ Մելանգթոն կը խմբագրէր Օկսպուրկի հաւատքի խոստովանութիւնը, որ գերմաներէնով ժողովականներուն կը կարդացուէր 25 յունիս 1530-ին: Այս խոստովանութիւնը կը կրէր ստորագրութիւնը Սաքսոնիոյ Յովհաննէս եւ անոր ժառանգորդ Յովհաննէս Ֆրետերիք, Պրանտընպըրկ-Անսպախի, Գէորգ, Պրանսուիք-Լունպըրկի՝ Էրնըսթ եւ Ֆրանզ, Հեսսի Փիլիպպոս եւ Անհալթի Վոլֆկանկ իշխաններուն ու Նուրենպերկի եւ Ռէթթլինկընի ներկայացուցիչներուն: Ժողովին փակումէն առաջ Հէյլպրոն, Գեմփթըն, Ուէզընպըրկ եւ Ուիինսցհայմ քաղաքները եւս իրենց հաւանութիւնը կը յայտնէին այս խոստովանութեան:

Օկսպուրկի հաւատքի խոստովանութիւնը կը խմբագրուէր գլխաւորաբար Մելանգթոնի կողմէ: Թէեւ Լուտեր դէպքերուն զարգացումին մասին մանրամասնօրէն տեղեակ կը պահուէր, սակայն կայսերական արգելքին պատճառով չէր կրնար Օկսպուրկ գալ եւ կը մնար մերձակայ Գոպըրկ դղեակին մէջ: Մինչեւ վերջին օրը Մելանգթոն Օկսպուրկի հաւատքի խոստովանութիւնը վերատեսութեան կ'ենթարկէր եւ հերձուածը բառնալու մտահոգութեամբ՝ շարք մը զիջումներ կ'ընէր կաթոլիկներուն: Այս քայլով ան կ'ուզէր ցոյց տալ, թէ լուտերականներ նոր վարդապետութիւն չէին մշակէր եւ չէին հեռացած Ընդհանրական եկեղեցիի, նոյնիսկ Հռոմեական եկեղեցիի, ուսուցումներէն, ինչպէս արդէն իսկ ան բացայայտած էր իր միւս գրութիւններուն մէջ: Այս Հաւատքի խոստովանութիւնը որոշ չափով իր նպատակին կը ծառայէր, երբ բազմաթիւ հին հերետիկոսութիւններ կը դատապարտէր եւ գուինկլիութիւնն ու կրկնամկրտութիւնը ամբողջապէս կը մերժէր, սակայն Աստուածաշունչի միակ հեղինակութիւն ըլլալը բացայայտ կերպով չէր նշէր, պապականութիւնը կտրականապէս չէր ուրանար, հաւատացեալներու քահանայութիւնը չէր հաստատէր եւ գոյացափոխութիւնն ու քաւարանը չէր ժխտէր: Մելանգթոն աւետարանական շեշտ կը դնէր Օկսպուրկի հաւատքի

խոստովանութեան մէջ՝ շնորհով արդարացումը ընդգծելով քրիստոնէական վարդապետութեան եւ կեանքին մէջ: Եկեղեցիի աւետարանական նկարագիրը կը յայտնուէր սուրբերու բարեխօսութեան, սուրբ պատարագի մատուցումի, աշխարհականներու միայն հացով հաղորդութեան ու վանական ուխտերու եւ պահքերու մերժումով: Լուտեր Օկսպուրկի հաւատքի խոստովանութեան լրիւ համաձայն կը գտնուէր եւ գնահատանքով կ'աւելցնէր, թէ ինք Մելանգթօնի նման այսքան մեղմ կեցուածք չէր կրնար որդեգրել:

Չուինկլի իր տեսակետները կայսրին կը փոխանցէր, սակայն բաւականաչափ ուշադրութեան չէր արժանանար: Աւելի յատկանշական կը դառնար 9 յուլիս 1530-ին զուինկլիական հակում ունեցող հարաւային Գերմանիոյ Սթրազպուրկ, Կոնստանս, Մեմինկըն եւ Լինտաու քաղաքներու ներկայացուցած Հաւատքի միացեալ խոստովանութիւնը, որ խմբագրուած էր Պուսերի կողմէ եւ զուինկլիական ու լուտերական տեսակետներուն միջեւ միջնորդի դեր կատարելու կը կոչուէր:

Պապական նուիրակ Գամփեչիօ կարդինալը կը յանձնարարէր, որ կաթոլիկ աստուածաբաններ Օկսպուրկի մէջ քննարկէին Օկսպուրկի հաւատքի խոստովանութիւնը: Այս յանձնարարութեան կը համաձայնէր կայսրը: Քննարկող մասնագետներուն մէջ կը գտնուէր Լուտերի գլխաւոր ընդդիմադիր Յովհան Մայրը Էքցի: Կաթոլիկ աստուածաբաններ կը մշակէին բնագիր մը, որ կայսրին եւ կաթոլիկ իշխաններուն կողմէ որպէս խնդրայարոյց կը վերադարձուէր իրենց: Վերջապէս բարեփոխուած բնագիր մը խորհրդարան կը ներկայացուէր 3 օգոստոս 1530-ին:

Կայսրը տակաւին կը յուսար հաշտութեան գետին հարթել եւ ժողովական յանձնախումբեր կը նշանակուէին. սակայն ամեն ճիգ կը բախէր Լուտերի ընդդիմութեան: Կաթոլիկ մեծամասնութիւնը կը կառչէր խորհրդարանի լուտերականները անվաւեր յայտարարող վճիռին եւ մինչեւ 15 ապրիլ 1531 ժամկետ կը ճշդէր, որպէսզի անոնք իրենց մուլար ուղիէն

ետդարձ կատարեին: Առաւել, գուինկլիականներուն եւ կրկնամկրրտականներուն կը յանձնարարէր նման քայլերու դիմել: Վերջապէս մինչեւ մէկ տարի նաեւ ընդհանուր ժողով կը պահանջէր՝ Եկեղեցիին մէջ տիրող անկարգութիւնները վերջնականօրէն լուծելու համար: Կաթոլիկ մեծամասնութիւնը կ'ակնկալէր, որ կայսերական օրէնսդիր ատեանները կաթոլիկութեան ի նպաստ որոշում կայացնէին: Լուտերականներ կը բողոքէին եւ կը յայտարարէին, թէ իրենց Հաւատքի խոստովանութիւնը անվաւեր չէր հռչակուած եւ կը պահանջէին Մելանգթոնի խմբագրած Հաւատքի խոստովանութեան վրայ կեդրոնանալ: 1531-ին հրատարակուած այս Հաւատքի խոստովանութիւնը լուտերականութեան դասական երկերէն մին պիտի դառնար:

Այս զարգացումներուն լոյսին տակ կը կազմուէր պաշտպանողական ճակատ մը: Նոյնիսկ Լուտեր, որ բրտութեամբ կայսրին ընդդիմանալը մեղք կը համարէր, այլեւս իրաւաբաններու որոշումներուն կ'ապաւինէր: Սուրբ ծնունդի տօնին լուտերական իշխաններ Շմալգալտընի մէջ կը հաւաքուէին եւ լիկա մը կը կազմէին: Պուսեր, որ մեծ դերակատարութիւն կ'ունենար այս ուղղութեամբ, կը համոզէր Սթրազպուրկը Օկսպուրկի հաւատքի խոստովանութիւնը ընդունիլ եւ կը նախապատրաստէր Գերմանիոյ հարաւային միւս քաղաքները եւս նոյն քայլին դիմելու: 27 փետրուար 1531-ին Շմալգալտընի լիկան կ'ամբողջանար եւ Սաքսոնիա, Հեսս, Պրանսուիք, Անհալթ, Մանսֆելտ, Սթրազպուրկ, Կոնստանս, Ուլմ, Ռէթթլինկըն, Մեմինկըն, Լինտաու, Իսնի, Պիպերախ, Մակտըպըրկ, Պրեմըն եւ Լուպէք քաղաքները ի մի կու գային:

Արտաքնապէս Չարլզ Ե. ուժեղ կը թուէր, սակայն այս միացեալ ընդդիմութեան դիմաց տկար կը մնար: Կաթոլիկ իշխաններ իրարու եւ կայսրին հետ հաշտ չէին: Պապը կը խուսափէր ընդհանուր ժողովի գումարումէն: Տրանսայի հետ տակաւին լեզու չէր գտնուած: 15 ապրիլ 1531-ի ժամկետը ապարդիւն կ'անցնէր: Հոկտեմբեր 1531-ին Զուինկլի կը մահանար Գափելի մէջ եւ գուիցերիական աւետարանականները,

գրկուելով իրենց եռանդուն ղեկավարեն, կը հակէին հարաւային Գերմանիոյ բողոքականութեան, եւ Ուիթընպըրկի հետ յարաբերութիւնները աւելի կը սերտանային: 1532-ի գարնան նոր վտանգ կը սպառնար կայսրութեան, երբ թուրքեր կ'արշաւէին: 1529-ին թուրքեր արդէն Վիեննան գրաւած էին եւ կրօնական վէճեր կը հեշտացնէին անոնց յառաջխաղացքը: 23 յուլիս 1532-ին կայսրը Շմալգալտընի լիկային հետ Նուրենպերկի մէջ կը կնքէր դաշինք մը, որուն համաձայն՝ աշխարհականացումին առնչուած բոլոր դատերը չեղեալ կը համարուէին եւ բողոքականներուն համար իրավիճակի փոփոխութիւն չէր նախատեսուեր մինչեւ ընդհանուր ժողով կամ գոնէ խորհրդարանի նոր նիստ: Չարլզ Ե. կը մեկնէր Գերմանիայէն եւ մինչեւ 1541 Իտալիոյ ու Սպանիոյ մէջ կը մնար: Այսպէսով բողոքականներուն դիրքը մեծապէս կ'ամրապնդուէր եւ բողոքական տարածքներու մէջ գտնուող եկեղեցիները կը զօրանային:

Լուտերականութիւնը նաեւ նոր տարածքներու կը տիրանար: 1534-ին անոնք կը գրաւէին Անհալթ-Տեսաու, Մէքլենպըրկ, Փոմերանիա, Հանովըր, Ֆրանքֆուրթ եւ Օկսպուրկ քաղաքները: Աւելի յատկաշնական յաղթանակ կը դառնար 1534-ին Հեսսի Փիլիպպոսին կողմէ Ուըրթըմպըրկի դքսութեան գրաւումը կայսրին եղբօր՝ Ֆերտինանտի ձեռքէն, եւ անոր դուքսին՝ Ուլրիխի վերահաստատումը, որուն մէջ Հափսպուրկ տոհմի իշխանութեան տակ գտնուող կաթոլիկներուն իրարու հանդէպ ունեցած նախանձը վճռորոշ դերակատարութիւն կ'ունենար: Գեորգ դուքսին մահէն ետք, 1539-ին լուտերականներ նաեւ Սաքսոնիոյ կը տիրէին եւ Բարեկարգութեան հանդէպ համակրութիւններ կը պարգուէին Պրանտընպըրկի մէջ:

1534-1535-ի Մունսթըրի յեղափոխութիւնը կ'անշքացնէր կրկնամկրտականներու ազդեցութիւնը Գերմանիոյ մէջ եւ կը նպաստէր լուտերականներու տարածումին: Կրկնամկրտականներ ընդհանրապէս խաղաղասէր, կրօնասէր եւ հալածանքներու ընթացքին համբերատար մարդիկ էին: Մունսթըրի յեղափոխութիւնը տեղի կ'ունենար Մելխիոր Հոֆմանի նման

կրկնամկրտական ծայրայեղ դեկավարներով: 1525–1535-ի տասնամեակը նաեւ կը յատկանշուէր այն իրողութեամբ, որ խաղաղասէր անտարանական կրկնամկրտականներ յստակօրէն չէին զատորոշուէր յեղափոխական կրկնամկրտականներէն, որոնց պարագլուխներէն մին էր Մունցըր:

Մելիխոր Հոֆմանի վախճանաբանութեան նուիրուած քարոզութիւնը Հոլանտայի մէջ կը շահէր բազմաթիւ աշակերտներ: Ասոնցմէ էր Յովհաննէս Մաթիս Վարլէմէն փռապան մը, որ ինքզինք Ենովք մարգարէն կը հռչակէր եւ ծայրայեղ գաղափարներ կը տարածէր Հոլանտայի ու Գերմանիոյ մերձակայ շրջաններուն մէջ: Մինչ նոր ժամանակաշրջանի գալուստին համար Հոֆման կ'ապաւինէր Աստուծոյ զօրութեան, Մաթիս իր ուժով կ'ուզէր բռնադատել զայն՝ շահագործելով ժողովրդային դժգոհութիւնը:

Այս ուսուցումը ամենէն ազդեցիկ կերպով կը տարածուէր Ուէսթֆալիոյ Մունսթըր քաղաքին մէջ, ուր Պերնթ Ռոթման լուտերական քարոզիչը յունուար 1534-ին կրկնամկրտական գաղափարներ որդեգրած էր: Յովհաննէս Մաթիս եւ ապա Լէյտընէն դերձակ մը՝ Յովհաննէս Պոզըլսըն, Մունսթըր կը ժամանէին: Այնպէս կը թուէր, թէ անհաւատ Սթրագպուրկի տեղ Աստուած Մունսթըրը կ'ընտրէր որպէս նոր Երուսաղէմ: Մեծաթիւ ծայրայեղականներ Մունսթըր կը խմբուէին: Փետրուար 1534-ին անոնք կը տիրանային քաղաքին եւ նոր կարգին չինազանդողներ դուրս կը դրուէին: Եպիսկոպոսը քաղաքը պաշարել կու տար: Ապրիլին խոյս տուած պահուն Մաթիս կը սպանուէր: Պոզըլսըն թագաւոր կը հռչակուէր: Բազմակնութիւնը կը հաստատուէր, բոլոր ստացուածքները համայնապատկան կը դառնային եւ ընդդիմադիրները կը ջարդուէին: Մակայն պայքարը անյոյս էր: Կաթոլիկ եւ լուտերական զօրքերու օժանդակութեամբ՝ 25 յունիս 1535-ին եպիսկոպոսը կը գրաւէր քաղաքը եւ բոլոր դեկավարները մահուան կը դատապարտուէին: Գերման կրկնամկրտականներուն համար այս պատահարը աղէտ մըն էր եւ այս տիպի ծայրայեղականութիւնը անոնց վերագրուած մակդիրի կը վերածուէր:

Խաղաղասեր Մեննո Սիմոնսի (1496–1561) իմաստուն առաջնորդությամբ՝ կրկնավերական շարժումը կը ձեռքբերվեր իր արմատականութենէն: Սիմոնս ծնած էր Ֆրիզլանտի մէջ եւ 1524-ին կաթոլիկ քահանայ ձեռնադրուած: Թէեւ երեխաներու մկրտութեան եւ գոյացափոխութեան դէմ էր ան, սակայն մինչեւ յունուար 1536 կը շարունակէր քահանայութիւնը, երբ Մունսթըրի յեղափոխութիւնը իր մէջ կ'արթնցնէր անհովիւ մնացած հօտին հասնելու պահանջը եւ կրկնավերականներուն միանալով՝ 1537-ի սկիզբը ձեռնադրութիւն կ'ընդունէր: Սիմոնս իր բոլոր ճիգը կը թափէր հիւսիսային շրջաններուն մէջ կրկնավերականներուն մնացորդացը ի մի բերելու: Ինք եւ իր «մենոնայթ» կոչուած հետետորդները կը յաջողէին Հոլանտայի եւ հիւսիսային Գերմանիոյ մէջ համայնքներ հաստատել եւ վերացնել աւետարանական կրկնավերականութիւնը: Ան 1540-ին կը հրատարակէր իր գլխաւոր ուսուցումները ամփոփող հատորը՝ *Քրիստոնէական վարդապետութեան հիմքը*:

Չարլզ Ե. կը շարունակէր փորձել ընդհանուր ժողով գումարել՝ Եկեղեցիի բարեկարգութեան համար: Կղեմէս Է. պապը չէր ընդառաջեր կայսրին հրաւերին: Պօղոս Գ. (1534–1549) կը յաջորդէր Կղեմէս Է.-ի, որ, բարեպաշտ անձ մը ըլլալուն, իր նախորդէն աւելի մտահոգ կը թուէր Բարեկարգութեան ստեղծած մտահոգիչ կացութեամբ: Ան անմիջապէս կարդինալ կը կարգէր Գասպար Գոնթարինին (1483–1542), Յակոբ Սատուլէթոն (1477–1547), Ռեճինալտ Փոլը (1500–1558) եւ Յովհաննէս Պետրոս Գարաֆան (1476–1559)՝ բոլորն ալ բարոյականի, կրթութեան ու վարչական տնօրինումներու մէջ բարեկարգիչ անձեր, որոնք 1537-ին իրենց եկեղեցական բարեկարգութեան յանձնարարականները պապին կը ներկայացնէին: Մայիս 1537-ին Պօղոս Գ. Մանթուայի մէջ ընդհանուր ժողով կը հրաւիրէր, սակայն Չարլզ Ե.-ի եւ Ֆրանսիս Ա.-ի միջեւ սկսած նոր պատերազմը (1536–1538) ժողովին գումարումը կ'արգելակէր: Չարլզ Ե. շատ խանդավառ էր այս ժողովով եւ կը պահանջէր, որ փետրուար 1537-ին Շմալգալտընի մէջ հաւաք-

ւած բողոքական ղեկավարները անպայման մասնակցէին անոր: Կայսերական հրահանգը զանոնք նեղ կացութեան կը մատնէր: Անոնք երկար ատենէ ի վեր ընդհանուր ժողով կը պահանջէին, եւ 1518-էն ի վեր Լուտեր նոյնիսկ զայն գումարելու կոչ ըրած էր: Սակայն անոնք այժմ կ'անդրադառնային, թէ քաւական քուէներ պիտի չկարողանային ապահովել իրենց պահանջները պաշտպանելու համար եւ կը մերժէին մասնակցիլ իտալական քաղաքի մը մէջ եւ պապի մը տիրական ներկայութեան գումարուելիք ընդհանուր ժողովին:

Չարլզ Ե., տեսնելով, որ ընդհանուր ժողով գումարելը անկարելի պիտի ըլլար, կը ձեռնարկէր վերամիացումի խօսակցութիւններուն: Այս հանդիպումները տեղի կ'ունենային Հակենաուի մէջ՝ յունիս 1540-ին, Վորմզի մէջ՝ 1540-ի աւարտին եւ Ռեկենսպուրկի մէջ՝ ապրիլ 1541-ին: Մելանգթոն, Պուսեր, Կալվին եւ այլք՝ կը մասնակցէին բողոքականներուն կողմէ, մինչ Յովհան Մայրը Էքցի, Գասպար Գոնթարինի եւ այլք կը ներկայացնէին կաթոլիկ կողմը: Այնպէս կը թուէր, թէ արդարացումի գլխաւոր հարցին շուրջ համաձայնութիւն պիտի գոյանար, սակայն տեսակէտներու տարբերութիւնները այնքան խոր էին, որ այդ յոյսը շուտով կը ցնդէր:

Չարլզ Ե. կը համոզուէր, որ հաշտութիւնը անհասանելի էր եւ բողոքականներ ընդհանուր ժողովին պիտի չմասնակցէին, եթէ իրենց զինուորական եւ քաղաքական ազդեցութիւնը չնուազէր: Բողոքական շահերու միացումը կայսերական հեղինակութեան համար վտանգ մըն էր եւ կը սպառնար նոյնինքն կայսրութեան միասնականութեան: Արդ, կայսրը աստիճանաբար եւ զգուշութեամբ կը գործադրէր իր մեծ ծրագիրը: Ան կ'որոշէր ընդհանուր ժողովը անպայման գումարել, սակայն մինչ այդ բողոքականներուն ուժը այնպէս պետք էր տկարացընէր, որ անոնք պարտաւորուած ըլլային ընդունելու ժողովին վճիռը: Այն ատեն միայն ժողովը կը յաջողէր, մանր զիջումներ ընելով, վերամիացնել քրիստոնէութիւնը եւ սրբագրել բողոքականներու ու կաթոլիկներու դատապարտած բացթողումները: Այս ծրագիրը իրագործելու համար ան պետք էր առնէր երեք

հիմնական քայլեր. առաջին՝ եթե կարելի ըլլար՝ քաղաքականապես մասնատել Շմալգալտրնի լիկան, երկրորդ՝ պաշտպանուիլ ֆրանսական յարձակումին դէմ, երրորդ՝ գոնէ ժամանակաւորապէս նուազեցնել հետզհետէ աճող թրքական ներխուժումի վտանգը:

Բողոքականութիւնը բաժնելու կայսերական նպատակը օժանդակութիւն կը գտնէր Բարեկարգութեան պատմութեան համար հետաքրքրական զարգացումով: Հեսսի Փիլիպպոս՝ Շմալգալտրնի լիկային քաղաքական հանճարը, թէեւ նուիրեալ բողոքական մըն էր, սակայն իր ժամանակաշրջանի բազմաթիւ իշխաններուն նման բարոյապէս անկեալ մըն էր: Ան թէեւ Սաքսոնիոյ Գեորգ դուքսի աղջիկին հետ ամուսնացած էր եւ եօթը զաւակ ունեցած, սակայն այլեւս անոր հանդէպ հաւատարիմ չէր: Իր շնութիւնները այնքան կը տանջէին իր խիղճը, որ 1526–1539-ին միայն մէկ անգամ սուրբ հաղորդութիւն կը ստանար: Ան իր հոգիին փրկութեան կը ցանկար, սակայն չէր ուզեր իր վարքը փոխել: Ան նոյնիսկ երկրորդ ամուսնութեան մասին կը մտածէր՝ իր անբարոյութիւններէն ձերբազատուելու հեռանկարով: Ան ինքզինք կը համոզէր, թէ Հին կտակարանը կը քաջալերէր բազմակնութիւնը եւ Նոր կտակարանը չէր արգիլեր զայն: Այս տրամաբանութեամբ ան կը մերձենար իր քրոջ բարեկամուհիներէն 17 տարեկան գրաւիչ Մարգարիտ Սալին: Սալին մայրը արգելք չէր հանդիսանար ամուսնութեան, եթէ Սաքսոնիոյ դուքսը եւ այլ հեղինակաւոր անձեր հաստատէին, թէ կնքուածը օրինաւոր ամուսնութիւն էր: Փիլիպպոսի առաջին կինը եւս իր համամտութիւնը կը յայտնէր: Փիլիպպոս, համոզուած ըլլալով հանդերձ, թէ իր առած քայլը ճիշդ էր, կը փափագէր Ուիթընպըրկի աստուածաբաններուն կարծիքը եւս ստանալ: Ան Սթրազպուրկ գտնուող Պուսերի կը դիմէր եւ կը սպառնար, որ եթէ անկէ դրական պատասխան չստանար՝ կայսրին կամ պապին պիտի դիմէր: Պուսեր Փիլիպպոսի պատգամաբերը կը դառնար Լուտերի, Մելանգթոնի եւ Սաքսոնիոյ դուքսին քով ու հարցը սկզբունքայնօրէն կը ներկայացնէր անոնց՝ առանց նշելու, թէ ան որոնց ամուսնութեան կ'առնչուէր:

10 դեկտեմբեր 1539-ին Լուսեր եւ Մելանգթոն իրենց կարծիքը կը հաղորդէին: Անոնք կ'ըսէին, որ թէեւ բազմակրնութիւնը ստեղծագործութեան հիմնական օրէնքով արգիււած էր, սակայն զայն հաստատելով հանդերձ, հովուական պատճառներով կարելի էր բացառութեան կարգով եւ խիղճի մտօք զայն շրջանցել, ինչպէս էր Փիլիպպոսի պարագան: Աւելի ճիշդ էր, որ Փիլիպպոս երկրորդ կին առնէր, քան շնութեամբ ապրէր կամ ամուսնալուծումի դիմէր: Առաւել, Լուսեր կը պնդէր, որ խոստովանողաբար Փիլիպպոսին տրուած այս խրատը օրէնքի չվերածուէր եւ ամուսնութիւնը խիստ գաղտնի մնար ու երկրորդ կինը միայն հարձ նկատուէր: 4 մարտ 1540-ին Փիլիպպոս կ'ամուսնանար Մարգարիտին հետ, մտերմիկ, սակայն ոչ-գաղտնի շրջանակի մէջ: Մելանգթոն, Պուսեր եւ Սաքսոնիոյ դուքսին ներկայացուցիչը ներկայ կը գտնուէին արարողութեան: Ամուսնութիւնը գաղտնի պահելու փորձը կը ձախողէր՝ հակառակ Լուսերի պնդումին, որ Փիլիպպոս ձերմակ սուտ խօսէր, սակայն ան կը մերժէր սուտ խօսիլ:

Գայթակցութիւնը մեծ էր թէ՛ բողոքականներուն եւ թէ՛ կաթոլիկներուն համար: Բազմակնութիւնը կայսերական օրէնքով արգիւլուած էր: Բազմակին իշխան մը իր թագէն կը գրկուէր: Միւս աւետարանական իշխանները չէին ուզեր պաշտպանել Փիլիպպոսը: Կայսրը միջամտելու առիթը չէր փախցնէր: 13 յունիս 1541-ին ան Փիլիպպոսէն խոստում կը ստանար, որ օտար պետութեան մը հետ ո՛չ անձնապէս եւ ո՛չ ալ յանուն Շմալգալտընի լիկային դաշինք պիտի կնքէր: Ֆրանսայի, Անգլիոյ, Դանիոյ եւ Շուէտի հետ սկսուած բանակցութիւնները, որոնք մեծապէս պիտի զօրացնէին Շմալգալտընի լիկային դիրքը ի հեճուկս կայսրին, պէտք էր անմիջապէս դադրէին: Աւելին, Փիլիպպոս պէտք էր խոստանար չօգնել Գլեւեսի Ուիլերմ դուքսին, որուն Կելտերսի պատկանելիութեան դէմ էր կայսրը: Կայսրին՝ Փիլիպպոսը սիրաշահիլը մեծապէս կը բաժնէր Շմալգալտընի լիկան, հակառակ այն իրողութեան, որ Սաքսոնիոյ դուքսը Ուիլերմի տագրն էր եւ ամեն գնով կ'ուզէր օգնել անոր: Հետեւանքը այն կ'ըլլար, որ 1543-ին կայսրը

Ուիլերմը պարտութեան կը մատնէր, կը ստիպէր, որ ան լուտերականութիւնը ուրանար, եւ Կելտերսը կը կցէր իր կալ-
ւածներուն: Այսպէսով բողոքականները կը կորսնցնէին նաեւ
Քէօլնի արքեպիսկոպոսութիւնը:

Չարլզ իր ծրագիրին մնացեալ մասը եւս յաջողութեամբ
կը պսակէր: 1542-ին Պօղոս Գ. պապ կը համաձայնէր ընդհա-
նուր ժողով հրաւիրել, թէեւ իտալական, սակայն կայսրութեան
պատկանող Թրենթ քաղաքին մէջ: Պատերազմին պատճառով
յետաձգուելէ ետք ժողովը կը գումարուէր դեկտեմբեր 1545-ին եւ
ընդհատեալ նիստերով կը տեւէր մինչեւ 1563: 1544-ին Սբէյրի
մէջ գումարուած խորհրդարանի ժողովին Չարլզ անորոշ
երաշխիքներ կու տար բողոքականներուն եւ կը զօրակցէր
Ֆրանսայի ու թուրքերու դէմ մղուող պատերազմներուն: Կարե-
լի կ'ըլլար Ֆրանսան շուտով նուաճել: Չարլզ կը դաշնակցէր
Անգլիոյ Հենրի Ը. թագաւորին հետ եւ մինչեւ Փարիզի դուռերը
հասնելէ ետք, հակառակ Հենրիի ընդդիմութեան եւ Եւրոպայի
զարմանքին, խաղաղութեան դաշինք կը կնքէր Ֆրանսայի
թագաւորին հետ՝ առանց նկատառելի շահ ապահովելու, թէեւ
այսպէսով կանխած կ'ըլլար մօտաւոր ապագային Ֆրանսայի
գերման բողոքականութեան ընձեռելիք օգնութիւնը: Հոկտեմ-
բեր 1545-ին Պարսկաստանի դէմ պատերազմող եւ ներքին
հարցերով տկարացած թուրքերը եւս դաշինք կը կնքէին
կայսրին հետ: Այս բոլոր զարգացումները մեծապէս կը նպաս-
տէին, որ Չարլզ մահացու հարուած հասցնէր Գերման բողոքա-
կանութեան:

Բողոքականութեան համար այս աննպաստ օրերուն
Լուտեր մահկանացուն կը կնքէր իր ծննդավայր Էյսլէպըն
քաղաքին մէջ 18 փետրուար 1546-ին: Անոր կեանքի վերջին
տարիները տառապալից եղած էին: Երկարատեւ առողջական
բարդութիւններ կը դիմագրաւէր: Բարեկարգիչներուն միջեւ
եղող տարակարծութիւնները զինք կ'անհանգստացնէին: Մա-
նաւանդ միայն հաւատքով արդարացումի քարոզութիւնը չէր
կրցած բարեփոխել հաւաքականութիւններու ընկերային եւ
քաղաքական կեանքը: Իր միակ միսիթարութիւնը տունի ջեր-

մութիւնն ու Աւետարանի հանդէպ ունեցած կատարեալ վստահութիւնն էր: Իր նախաձեռնած գործը միակ անձի մը իրագործումը ըլլալէ դադրած էր: Զանգուածներ իրեն պէտք չունէին այլեւս, սակայն իր յիշատակը յաւերժ պիտի մնար որպէս Եկեղեցիի պատմութեան տիտաններէն մին:

Նախքան պատերազմի մտնելը Չարլզ առաւել կը տարտղներ բողոքական ուժերը: Թէեւ Սաքսոնիան Հենրի դուքսին իշխանութեան օրով (1539–1541) ամբողջապէս բողոքական կը դառնար, սակայն անոր երիտասարդ որդիին՝ Մորիցի օրով (1541–1553) պատկերը կը փոխուէր: Ան քաղաքական մեծ կարողութիւններ ունէր, սակայն կրօնական հարցերով ծանրաբեռնուած այս շրջանին փոխանակ զանոնք հաշուարկելու՝ միայն իր քաղաքական յառաջխաղացքով մտահոգ էր: Հեսսի Փիլիպպոս իշխանին փեսան եւ Սաքսոնիոյ Յովհաննէս Ֆրետերիք դուքսին (1532–1547) զարմիկը ըլլալով հանդերձ՝ ան երկուքին հետ ալ բարեկամական կապեր չունէր: Յունիս 1546-ին կայսրը գաղտնօրէն կը սիրաշահէր Մորիցը՝ խոստանալով պատերազմի յաջող աւարտէն ետք իրեն փոխանցել զարմիկին ընտրողական իրաւունքը եւ այլ իրաւասութիւններ: Պատերազմին կրօնականի փոխարէն քաղաքական բնոյթ տալու համար՝ Չարլզ Ֆրետերիքը եւ Փիլիպպոսը որպէս անհաւատարիմ տարրեր կալանքի ենթարկելու հրաման կ'արձակէր վերջապէս: Շմալգալտընի լիկան անակնկալի դիմաց կը գտնուէր: Մորիցի՝ Չարլզին ենթարկուիլը մեծ հարւած մըն էր բողոքականներուն համար: 24 ապրիլ 1547-ին Սաքսոնիա կը պարտուէր Մուիլպըրկի ճակատամարտին եւ Ֆրետերիք կը ձերբակալուէր: Փիլիպպոս, տեսնելով որ ընդդիմանալը ապարդիւն էր, կամաւորապէս կը յանձնուէր կայսրին: Մորից կը տիրանար իրեն տրուած խոստումներուն: Քաղաքականօրէն բողոքականութիւնը խորտակուած էր: Միայն քանի մը հիւսիսային քաղաքներ, մասնաւորաբար Մակտըպըրկ, որոշ ընդդիմութիւն կը ցուցաբերէին:

Սակայն քաղաքականօրէն բողոքականութիւնը խորտակած կայսրը պապին հետ համերաշխ չէր: Պատերազմի սկիզբը

Պօղոս Գ. կ'օժանդակէր Չարլզին՝ բայց վախնալով, որ ան շատ կը զօրանար՝ հետագային կը նահանջէր: Կայսրը կը փափագէր, որ Թրենթի ժողովը դանդաղ ընթանար, մինչեւ որ ինք կարենար համոզել բողոքականները զայն ընդունիլ: Ան նոյնիսկ որոշ զիջումներ ընելու պատրաստ էր իր նպատակին հասնելու համար: Իսկ պապը կ'ուզէր, որ ժողովը փութով սահմանէր կաթոլիկ հաւատքը եւ ցրուէր: Ապրիլ 1546-ին արդէն իսկ համաձայնութեան յանգիլը կը բարդանար, երբ ժողովը հաւատքի հարցերուն մէջ Աւանդութիւնը որպէս հեղինակութեան աղբիւրներէն մին կը բանաձեւէր: Առաւել, կայսերական ազդեցութիւնը տկարացնելու համար, մարտ 1547-ին պապը ժողովը Պոլոնիա կը փոխադրէր: Կայսրը կը մերժէր այս քայլը եւ ժողովին ցարդ առած որոշումները անվաւեր կը համարէր: Չարլզ կ'ակնկալէր, որ մինչեւ կաթոլիկ-բողոքական հերձուածին բարձումը ժողովը կրօնական համաձայնութիւն ապահովէր Գերմանիոյ բարեկեցութեան համար եւ այս նպատակով եկեղեցական յանձնաժողովի մը պարտականութիւն կու տար միջանկեալ ուղեգիծ մշակել: Թէեւ այս ուղեգիծը մեծ մասամբ կաթոլիկեան էր, սակայն սուրբ հաղորդութեան բաժակէն ըմպել կ'արտօնէր աշխարհականներուն, կը թոյլատրէր հոգեւորականութեան ամուսնութիւնը եւ կը սահմանափակէր պապին կարգ մը իրաւասութիւնները: Կաթոլիկ իշխաններ կը մերժէին այս ուղեգիծը: Պապը կը դատապարտէր զայն: Չարլզ զայն ժամանակաւոր վերամիացումի փաստաթուղթ որպէս որդեգրել տալէ կը խուսափէր, սակայն 30 յունիս 1548-ի Օկսպուրկի խորհրդարանի ժողովին բողոքականներուն կողմէ գործադրելի կը դարձնէր: Մորից կ'որդեգրէր զայն որպէս Սաքսոնիոյ մէջ գործադրելի լայնօրհեան միջանկեալ ուղեցոյց, որ միայն հաւատքով արդարացումի թէզը կը ջատագովէր եւ միաժամանակ ի գործ կը դնէր Եկեղեցիի կառավարումի կաթոլիկ եղանակը: Մելանգթոն պարտադրուած կ'ընդունէր զայն՝ անկարեւոր նկատելով անոր կաթոլիկեան բաժինները եւ այս կեցուածքին համար խստիւ կը քննադատուէր Մակտրպըրկի ծայրայեղ բողոքականներէն, մասնաւորաբար Մաթիաս Ֆլագ-

իոս Իլիրիզոսէն (1520–1575) եւ Նիկողայոս Ամստոքֆէն (1483–1565): Մանաւանդ Մաթիաս շատ կը փորձէր լուտերականութիւնը ժողովրդային խաւերուն մէջ կենսունակ պահել, սակայն լուտերական աստուածաբաններու միջեւ պայքարը արդէն ծայր առած էր:

Մակերեսայնօրէն այնպէս կը թուէր, թէ Չարլզ իր նպատակին կը հասներ: 1549-ին Պօղոս Գ. կը վախճանէր, եւ անոր կը յաջորդէր կայսրին աւելի հետեւող Յուլիոս Գ. (1550–1555): 1552-ին նոր պապը անգամ մը եւս ժողովը Թրենթ կը հրաւիրէր եւ բազմաթիւ բողոքական աստուածաբաններ դրական կը պատասխանէին: Խորքին մէջ այս բոլորին հետեւանքով Գերմանիա մեկուսացած վիճակ ուներ, երբ մէկ կողմէ բողոքականութիւնը կայսերական լուծին տակ կը հեծէր եւ միւս կողմէ՝ կաթոլիկ իշխաններ դժգոհ էին Չարլզի վայելած միահեծանութենէն ու իր որդին կայսերական գահին վրայ որպէս իրեն յաջորդ բազմեցնելու բռնագրօս ճիգէն, որ կը յանգէր զայն որպէս Սպանիոյ Փիլիպպոս Բ. ունենալուն: Սաքսոնիոյ Մորիցը դժգոհ էր, որ իր աները՝ Հեսսի Փիլիպպոս իշխանը, տակաւին բանտարկուած էր եւ կը գիտակցէր, որ իր հպատակները լուտերական ըլլալով ինք միայն որպէս լուտերական դեկավար կրնար իր փառասիրութիւնը սնուցել:

Յանուն կայսրին, որպէս թէ Մակտրպըրկի ընդդիմութիւնը ճզմելու համար, Մորից բանակ մը կը կազմէր եւ հիւսիսային Գերմանիոյ լուտերական իշխաններուն հետ համաձայնութեան կը յանգէր: Ան, օժանդակութեան փոխարէն, Ֆրանսայի Հենրի Բ. թագաւորին (1547–1559) կը զիջէր Գերմանիոյ սահմանամերձ Մեց, Թուլ եւ Վերտեն քաղաքները: Չարլզ կ'անդրադառնար սարքուած խաղին, սակայն անհրաժեշտ քայլերու չէր դիմէր: Հարուածը ուժեղ կ'ըլլար: Հենրի Լորէն կ'արշաւէր եւ խոստացուած քաղաքները կը գրաւէր: Մորից փութով հարաւ կ'իջնէր եւ կը փորձէր կայսրը ձերբակալել, որ հազիւ իր շունչը Ինսպրըրկ կ'առնէր: Չարլզի մեծ ճիգերով արձանագրած բոլոր յաջողութիւնները կ'աւարտէին՝ ոչ այնքան լուտերականութեան, որքան իշխաններու տեղա-

կան անկախութեան ձեռքբերումով: 2 օգոստոս 1552-ին Բասաուիի դաշինքով պայքարը իր վախճանին կը հասնէր:

Բասաուիի դաշինքով կրօնական հարցին լուծումը կը փոխանցուէր խոհրդարանի յաջորդ ժողովին, որ պիտի կարողանար միայն երեք տարի յետոյ գումարուիլ: Մինչ այդ իշխաններու մրցակցութիւնները կը ջլատէին Գերմանիան: 1553-ին Մորից կը մահանար Ալպրէխթ Պրանտընպըրկցիին դէմ մղուած պատերազմին: Բողոքականութեան հանդուրժելը անխուսափելի համարելով՝ Չարլզ կայսրութեան դէկը իր եղբօր՝ Ֆերտինանտին կը յանձնէր, թէեւ վերջինը կայսր կը դառնար միայն 1558-ին: Խոհրդարանը ժողով կը գումարէր Օկսպուրկի մէջ: Լուտերականներ աշխարհականացումին յաջորդած շրջանի բոլոր եկեղեցական կալուածներուն ամբողջական սեփականութիւնը կը պահանջէին: Բոլոր կաթոլիկ տարածաշրջաններուն մէջ լուտերականներուն հանդէպ հանդուրժողութիւն կը պարտադրէին, սակայն առանց իրենց տարածքներուն մէջ նոյն վերաբերումը ունենալու կաթոլիկներուն հանդէպ: Այս չափազանցուած պահանջները բնականաբար կը մերժուէին եւ 25 սեպտեմբեր 1555-ի Օկսպուրկի խաղաղութեան դաշինքը փոխզիջումի կը յանգէր: Անով կայսրութեան կաթոլիկներուն եւ լուտերականներուն համահաւասար իրաւունքներ կը շնորհուէին, սակայն միւս անտարանականները ճանաչում չէին ստանար: Իւրաքանչիւր աշխարհական իշխան պիտի ճշդէր, թէ իր իշխանութեան սահմաններուն մէջ ո՛ր դաւանանքին պիտի հետեւէին իր հպատակները եւ միայն այդ դաւանանքը պիտի արտօնուէր: Իսկ եկեղեցական տարածքներուն եւ ստացուածքներուն համար կը վերահաստատուէին 1552-ի Բասաուիի դաշինքին տրամադրութիւնները: Այսպէսով բոլոր լուտերական ստացուածքները կը պահպանուէին, իսկ եթէ կաթոլիկ հոգեւոր պաշտօնեայ մը լուտերական դառնար, անոր ստացուածքները կաթոլիկներուն պիտի մնային: Այն անձերը, որոնք իրենց նախասիրած դաւանանքին կ'ուզէին հետեւիլ, կրնային իրենց ստացուածքները վաճառել եւ այլ շրջան փոխադրուիլ:

Լուտերականութիւնը օրինաւորապէս կը հաստատուէր:

Գերմանիան վերջնականապէս կը կիսուէր: Գերման եկեղեցին մաքրագտելու Լուտերի երազը, ինչպէս նաեւ կաթոլիկներու ցանկացած երեւելի միութիւնը յօդս կը ցնդէին:

Ծեր ղեկավարները մէկը միւսին ետեւէն կը մահանային: Լուտեր ինը տարի առաջ արդէն մահացած էր: Մելանգթօն կը մահանար 1560-ին: Չարլզ Ե. 1555-ին Հոլանտայի եւ 1556-ին Սպանիոյ իշխանութենէն կը հրաժարէր ու Սան Եուսթէ քաշտելէ ետք՝ 1558-ին կը կնքէր իր մահկանացուն:

Զ. ԳԼՈՒԽ ՄԿԱՆՏԻՆԱԻԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ

1397-ի Գալմարի միութեան դաշինքով՝ Դանիա, Նորվեկիա եւ Շուէտ դանիական մականին տակ կը մտնէին: 1460-էն ետք Շլեսուիկ-Հոլսթայն եւս անոնց կը կցուէր: Սակայն այս երկիրներուն մէջ թագաւորութիւնը ազդեցիկ չէր: Իսկ եկեղեցական առաջնորդները ժողովուրդէն չէին սիրուած, բռնութեամբ կը կառավարէին, յաճախ օտարածին էին եւ մրցակից էին ազնուականներուն: Ամբողջ Եւրոպայի մէջ բողոքականութիւնը հոս առաւելաբար կը քաղաքականանար: Բարեկարգութեան խնորրումի օրերուն Դանիոյ թագաւորն էր Քրիստիան Բ. (1513–1523), որ Վերածնունդի համակիր բռնատէր մըն էր: Ան կը հաւատար, որ ազնուականներն ու եկեղեցականները իր թագաւորութեան մեծագոյն չարիքն էին: Լուտերականութեամբ ասոնց ուժը ջախջախելու նպատակով՝ 1520-ին լուտերական քարոզիչ Մարթին Ռէյնհարտը իր քով կը հրաւիրէր, սակայն մեծ յաջողութիւն չէր կրնար արձանագրել: 1521-ին, կարճ պահ մը, Անդրէաս Պոտենսթայն Գարլսթատթի կը դառնար Քրիստիան Բ.-ի խորհրդատուն եւ օրէնք մը ներմուծել կու տար, որուն համաձայն՝ կ'արգիլուէր Հռոմի գանգատիլ, վանքերը կը բարեկարգուէին, եպիսկոպոսներուն իրաւասութիւնները կը սահմանափակուէին եւ եկեղեցականներուն ամուսնութիւնը կ'արտօնուէր: Ընդդիմութիւնը կը զօրանար, եւ 1523-ին ազնուականութիւնը թագաւորը գահընկէց ընելով անոր տեղ թագաւոր կը բերէր անոր հօրեղբայրը՝ Ֆրետերիք Ա. (1523–1533):

Ֆրետերիք Ա. թէեւ համակիր էր լուտերականութեան, սակայն ազնուականութեան կողմէ կը պարտադրուէր ճանչնալու ազնուականներուն առանձնաշնորհումները եւ արգիլելու հերետիկոսական ամեն քարոզութիւն: Հակառակ այս կանխազգուշացումներուն՝ լուտերականութիւնը կը ներթափանցէր շնորհիւ նախկին վանական եւ Ուիթընպըրկի ուսանող

ամբոխավար քարոզիչ Հանս Թաուսընի (1494–1561), որ իր առաքելութեան կը սկսէր 1524-ին: Ֆրետերիք Ա. 1526-ին Թաուսընը իր հովիւր կը նշանակէր: Նոյն տարին նաեւ եպիսկոպոսներուն նշանակումի հաստատումը իր իրաւասութեան կ'ենթարկէր: 1527-ին այս տնօրինութիւնը օրէնքի կը վերածուէր, լուտերականներ հանդուրժողութեան կ'արժանանային եւ քահանաներու ամուսնութիւնը կ'արսօնուէր: Մեծաթիւ ազնուականներ համաձայն կ'ըլլային թագաւորին այս քայլերուն, եկեղեցականներու իրաւունքներու կապտումին իրենց կողմնակցութեամբ: 1530-ին, երբ նոյն տարին Օկսպուրկի խոստովանութիւնը կը խմբագրուէր, Թաուսըն եւ համակիրները դանիական խորհրդարան կը յղէին «Գոբէնհակընի 43 յօդուածներ»-ը: Մէկ տարի առաջ Քրիստիան Բեթըրսընի դանիերէն թարգմանած Նոր կտակարանը լոյս կը տեսնէր եւ լայն շրջանառութեան մէջ կը դրուէր: Թէեւ պաշտօնական որոշում չէր առնուէր, բայց լուտերականութիւնը մեծ տարածում կը գտնէր մինչեւ Ֆրետերիք Ա.-ի մահը՝ 1533-ին:

Ֆրետերիք Ա.-ի մահով բոլորը շուարումի կը մատնուէին: Յաջորդութեան համար իր երկու որդիներէն աւագը՝ Քրիստիան Գ. (1536–1559), ծայրայեղ լուտերական մը, ազնուականներուն թեկնածուն էր, իսկ եպիսկոպոսները կը նախընտրէին կրտսերը՝ Հանսը: Այս մրցակցական մթնոլորտին մէջ Քրիստիան Գ. կը տանէր յաղթանակը: Եպիսկոպոսները կը բանտարկուէին, անոնց իրաւասութիւնները կը ջնջուէին եւ թագաւորութիւնը կը տիրանար Եկեղեցիի ստացուածքներուն: Քրիստիան Գ. կը դիմէր Ուիթընպըրկի օժանդակութեան: 1537-ին Լուտերի գործակիցներէն Յովհաննէս Պուկընհակըն եօթը լուտերական «եպիսկոպոս» տիտղոսով եկեղեցական կը ձեռնադրէր՝ ընդառաջելով թագաւորին փափագին: Այսպէսով Դանիոյ եկեղեցին լուտերական կազմակերպուածութիւն կը զգենար:

Նորվեկիա, առանձին թագաւորութիւն ըլլալով հանդերձ, կը գտնուէր Դանիոյ թագաւորի իշխանութեան տակ: Ֆրետերիք Ա.-ի օրով Բարեկարգութիւնը մեծ ազդեցութիւն չէր ունենար

հոն: Կրօնական պայքարներու ընթացքին Նորվեկիոյ հոգեւորականութեան պետը՝ Թրոնտհէլմի Օլաֆ Էնկելարեգթսոն արքեպիսկոպոսը, Քրիստիան Գ.-ի իշխանութեան գլուխ անցնելէն ետք կը լքեր երկիրը: Նորվեկիան դանիական նահանգի կը վերածուէր, եւ Դանիոյ լուտերական կրօնական սահմանադրութիւնը հոս եւս ի զօրու կը դառնար: Սակայն Քրիստիան Գ. Նորվեկիոյ մէջ լուտերականութեան արմատացումով լրջօրէն չէր զբաղէր՝ համոզուած ըլլալով, որ Բարեկարգութիւնը, փոխանակ ի վերուստ պարտադրուելու, պետք էր ժողովրդային համակրանքով տարածուէր:

Նման իրավիճակ կը տիրէր Դանիոյ պատկանող Իսլանտիոյ մէջ, ուր Բարեկարգութիւնը դանդաղ յառաջընթաց կ'արձանագրէր: Սգալիոթի Կիսեր Էյնարսըն եպիսկոպոսը, որ, Գերմանիոյ մէջ ուսում առած լուտերականութեան համակիր մըն էր, 1540-ին լուտերական բարենորոգութիւններ կը ներմուծէր: Նոյն տարին իսլանտերէն Նոր կտակարանը կը հրատարակուէր: 1548-ին կաթոլիկ հակազդեցութիւն ի գործ կը դրուէր Հոլումի Յովհաննէս Արեսըն եպիսկոպոսին կողմէ՝ թօթափելու համար դանիական լուծը: 1554-ին լուտերականներ կը ճգմէին այս ընդդիմութիւնը եւ հակառակ ժողովրդային գաղջ վերաբերումին՝ իրենք զիրենք կը պարտադրէին:

Շուէտի բարեկարգութիւնը սերտօրէն կ'առնչուէր ազգային անկախութեան պայքարին: Քրիստիան Գ. շուէտական գահին տիրացումին համար բուռն մաքառումի կը դիմէր: Ուփսալայի արքեպիսկոպոս Կուսթաֆ Թրոլ կը դառնար անոր ջերմ պաշտպանը: Թրոլ Լեւոն Ժ. պապէն իր ընդդիմադիրներուն հաղորդագրկումի իրաւունքը ձեռք կ'անցընէր՝ հակառակ այն իրողութեան, որ այս ընդդիմութիւնը կրօնական հանգամանք չունէր եւ միայն քաղաքական էր: 1520-ին Քրիստիան Գ. անպատմելի խժոժութիւններով կը գրաւէր Սթոքհոլմը եւ թագաւոր կը դառնար: Սթոքհոլմի խժոժութիւնները պատճառ կը դառնային, որ շուէտացիներ ապստամբէին Քրիստիան Գ.-ի դէմ եւ Կուսթաւոս Վասայի գլխաւորութեամբ իրենց երկիրէն

վտարէին դանիացիները եւ 1523-ին Վասան իրենց թագաւորը դարձնէին (1523–1560):

Մինչ այդ Շուէտի մէջ լուտերականութիւնը կ'ուսուցուէր 1519-ին Ուիթընպըրկի մէջ ուսանած եւ Սթրենկնաս հաստատւած երկու եղբայրներու՝ Օլաֆ (1493?–1552) եւ Լարս (1499–1573) Բէթըրսոններու կողմէ, որոնք նաեւ Լարս Անտըրսոն աւագ սարկաւագը (1482–1552) իրենց կողմը կը շահէին: 1524-ին Վասա թագաւոր ամբողջապէս կը համակրէր այս կրօնական առաջնորդներուն: Անտըրսոն՝ դիւանապետ եւ Լարս Բէթըրսոն աստուածաբանութեան դասախօս կը նշանակուէին Ուփսալայի համալսարանին: 27 դեկտեմբեր 1524-ին Օլաֆ Բէթըրսոնի, այժմ քարոզիչ Սթոքհոլմի մէջ, եւ կաթոլիկ Պետրոս Կայի միջուտեղի ունեցած վիճարկումը կը պսակուէր բարեկարգեալներուն յաղթանակով: 1526-ին Օլաֆ լոյս կ'ընծայէր իր շուէտերէն Նոր կտակարանը: Ան իր եղբօր օգնութեամբ նաեւ Հին կտակարանը կը թարգմանէր եւ 1541-ին շուէտերէն ամբողջ Աստուածաշունչը կը հրատարակէր: Կրօնական համոզումէ մեկնած՝ թէեւ թագաւորը իր ամբողջական նեցուկը կը յայտնէր լուտերականութեան, սակայն միաժամանակ, գրաւելով Եկեղեցիի կալուածները, կը փորձէր բարելաւել իր թագաւորութեան նիւթական անձուկ վիճակը:

Յունիս 1527-ին Վասա կը դիմէր խիստ վճռական քայլի: Ան եպիսկոպոսներէն կը պահանջէր թեմական եւ վանական բոլոր կալուածներուն եւ 1454-էն ազնուականութեան Եկեղեցիի նուիրած բոլոր կալուածներուն թագաւորութեան վերադարձը եւ «Աստուծոյ անխաթար խօսքին» քարոզութիւնը: Վասայի նպատակը Եկեղեցին կայսերական հեղինակութեան ենթարկելն էր: Ան թէեւ Շուէտի եկեղեցիի տիրակալն էր եւ այժմ գրեթէ անոր բոլոր կալուածներուն սեփականատէրը, սակայն կրօնական հարցերուն մէջ իր ուժը պահպանողականօրէն ի գործ կը դնէր: Շատ մը նախկին առաջնորդներ կը լքէին երկիրը: Թագաւորը կը նշանակէր նոր եպիսկոպոսները, որոնք 1528-ին կը ձեռնադրուէին Վասթերասի Պետրոս Մակնի եպիսկոպոսին կողմէ, որ իր հերթին եպիսկոպոսացած էր կաթոլիկ եղած

օրերուն եւ ահաւասիկ իր շնորհիւ առաքելական յաջորդութիւնը կը փոխանցուէր Շուէտի լուտերական եպիսկոպոսութեան: 1529-ին Օրէպրոյի սինտըր յաւելեալ բարեկարգութիւններ կը ներմուծէր: 1529-ին շուէտական եկեղեցական արարողութիւնը եւ 1531-ին «շուէտական սուրբ պատարագը» կը խմբագրուէին: 1531-ին Լարս Բեթըրսոն կը դառնար Ուփսալայի արքեպիսկոպոսը՝ առանց իր եպիսկոպոսակիցներուն վրայ իշխանութիւն ունենալու, որովհետեւ այդ հանգամանքը թագաւորը ինքն իրեն վերապահած էր: Հոգեւորականներ կ'ընդունէին Բարեկարգութիւնը եւ կը շարունակէին վարել իրենց պաշտօնները, սակայն թագաւորին կողմէ կատարուող փոփոխութիւնները ժողովուրդին բարեացակամութեան չէին արժանանար եւ շատ աւելի երկար ժամանակ պիտի տեւէր Շուէտի աւետարանական դառնալը: Հոս լուտերականութիւնը, իր վարդապետութեամբ ու գործնական երեսներով, շատ պահպանողական էր: Շուէտի բարեկարգութիւնը նաեւ կ'ազդէր Ֆինլանտիոյ վրայ, որ այս օրերուն Շուէտական թագաւորութեան ենթակայ էր: Վասայի որդիին՝ Յովհաննէս Գ.-ի իշխանութեան ժամանակ (1568–1592) Շուէտի եկեղեցին կաթոլիկութեան ետդարձ կատարելու փորձ պիտի ընէր, սակայն այս քայլը պիտի աւարտէր 1593-ին, երբ Ուփսալայի սինտըր պաշտօնապէս պիտի որդեգրէր Օկսպուրկի հաւատքի խոստովանութիւնը՝ որպէս Շուէտի հաւատքի հանգանակը:

Է. ԳԼՈՒԽ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԵՒ ԺՆԵՒԻ ՄԷՋ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԼՎԻՆԷՆ ԱՌԱՋ

Յիրիխը՝ հիւսիսային, իսկ Պերնը հարաւային Զուիցերիոյ ամենէն ազդեցիկ քաղաքներն էին: Պերն մնայուն կերպով Սաւոյի դուքսերուն հետ պայքարի մէջ էր մանաւանդ Ժնեւի լիճին հարեւանութեան մէջ գտնուող ֆրանսախօս տարածքներուն (Վոյի երկիրներ) տիրելու համար: 7 փետրուար 1528-ին Պերն կ'ընդունէր բողոքականութիւնը եւ կառավարութեան քաջալերանքով ու Կիյոմ Ֆարէլի (1489–1565) քարոզութեամբ Վոյի երկիրներուն մէջ եւս կը տարածուէր բողոքականութիւնը: Ֆարէլ ծնած էր Ֆրանսայի Տոֆինէ նահանգի Կաբ քաղաքին մէջ: Փարիզի մէջ ուսանած ատեն ան կ'ազդուէր մարդկայնական Յակոբ Լըֆէր Էթափլեցիէն, եւ 1521-էն կը քարոզէր չափաւորական բարեկարգիչ Կիյոմ Պրիստննէի՝ Սոյի եպիսկոպոսի հովանիին ներքեւ: Որպէս ճարտասան՝ ան այնքան համբաւ կը վայելէր Բարեկարգութիւն քարոզելուն համար, որ կը ստիպուէր Ֆրանսայէն հեռանալ: 1524-ին ան Պազէլի մէջ Բարեկարգութիւնը կը ջատագովէր եւ հոնկէ ալ դուրս կը դրուէր: Այա ան կ'այցելէր Սթրազպուրկ եւ Պուսերի հետ կը բարեկամանար:

Նոյեմբեր 1526-ին Ֆարէլ կը քարոզէր ֆրանսախօս Զուիցերիոյ Էկլ քաղաքին մէջ՝ Պերնի կառավարութեան պաշտպանութեամբ: Երբ բարեկարգութեան գաղափարախօսութիւնը կը յաղթանակէր Պերնի մէջ, Ֆարէլի առաքելադաշտը կ'ընդարձակուէր: 1528-ին Էկլ, Օլլոն եւ Պեքս կ'ընդունէին Բարեկարգութիւնը եւ կը փշրէին սրբանկարները ու կը դարձնէին սուրբ պատարագի մատուցումը: Ֆարէլ Լոզանը դարձի բերելու ապարդիւն փորձերէ ետք նոյեմբեր 1529-ին Նուշաթել կը հասնէր եւ հոս եւս կը հաստատուէր Բարեկարգութիւնը: 1530-ին Սորա եւս Բարեկարգութիւնը կ'ընդունէր, իսկ բողոքական Պերնի եւ կաթոլիկ Ֆրիպուրկի միացեալ

ազդեցութեան տակ եղող Կրանտարնի եւ Օրայի մէջ երկու տիպի պաշտամունքը կը շարունակուէր: Սեպտեմբեր 1532-ին Ֆարէլ կը մասնակցէր Գողեան Ալպեան լեռներու մէջ գումարուած սինոտին, երբ վոլտընսներու մեծամասնութիւնը Բարեկարգութիւնը կ'ընդունէր: Վոլտընսներու քարոզիչը կը դառնար Ֆարէլի գործակից Պետրոս Օլիւթեանը (1506?-1538), որուն ֆրանսերէն թարգմանած Աստուածաշունչը կը հրատարակուէր 1535-ին:

Հոկտեմբեր 1532-ին Ֆարէլի ժնեւի մէջ Բարեկարգութիւն քարոզելու ճիգը յաջողութիւն չէր արձանագրեր: Ան ամեն տեղ բուռն ընդդիմութեան կը բախէր, սակայն իր ազդեցիկ ներկայութիւնը զգալի կը դառնար: Իր գլխաւոր գործակիցը կ'ըլլար Լոզանի ապագայ բարեկարգիչ Պետրոս Վիրէ (1511-1571):

1532-ին, Ֆարէլի քարոզութեան օրերուն, ժնեւ 1520-ականներուն սկսած քաղաքական յեղափոխութեան խմորումին մէջն էր: Աշխարհագրականօրէն ժնեւ՝ որպէս վաճառականական քաղաք, կը գտնուէր Ալպեան լեռներու բանուկ քառուղիին վրայ, ուր ազատականութեան եւ անբարոյականութեան հանդուրժելի մթնոլորտ կը տիրէր՝ հակառակ այն իրողութեան, որ հոս կային բազմաթիւ վանքեր ու եկեղեցական հաստատութիւններ: Ժնեւի ազատական մթնոլորտը կը շարունակէր տիրական մնալ՝ հակառակ Սաւոյի դուքսերուն բանեցուցած սահմանափակումներուն: ԺՁ. դարուն սկիզբը երեք ուժ կ'իշխէր քաղաքին եւ մերձակայ գիւղերուն մէջ՝ եպիսկոպոսը, անոր ժամանակաւոր գործավարը եւ քաղաքացիներուն տարեկան ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած չորս ներկայացուցիչներն ու զանձապահը: Ընդհանուր ժողովի կողքին կար նաեւ 25 քաղաքացիներէ բաղկացած փոքր ժողովը: Գլխաւոր հարցերը կը քննարկուէին փոքր ժողովէն նշանակուած 60 քաղաքացի ներառող ժողովին կողմէ, իսկ 1527-ին 200 քաղաքացիներու ժողովն ալ կ'աւելնար՝ բաղկացած փոքր ժողովի անդամներէն եւ 175 այլ ընտրեալներէ: 1290-էն ի վեր Սաւոյի դուքսերը կը նշանակէին եպիսկոպոսին ժամանակաւոր գոր-

ծավարը եւ 1444-էն ի վեր եպիսկոպոսութիւնը կը պահէին իրենց ազդեցութեան տակ: Արդ, ազատութեան պայքարը կը մղուէր Սաւոյի դուքսերէն եւ անոնց նշանակած եպիսկոպոսէն ու ժամանակաւոր գործավարէն ձերբազատուելու համար:

1519-ին քաղաքացիներու յեղափոխական խմբակ մը (ծանօթ որպէս հասարակապետականներ), որ զուիցերիական դաշնութիւնը կը նախասիրէր ի հեճուկս Սաւոյի, կաթոլիկ Ֆրիպուրկի հետ կը դաշնակցէր: Սաւոյի Չարլզ Գ. դուքսը անմիջապէս կը հակազդէր եւ կը գլխատէր Ժնեւի ընդդիմութեան պարագլուխներէն Ֆիլիպերթ Պերթելիէն: 1525-ին յեղափոխականներ երկրորդ ապստամբութիւնը կը կազմակերպէին Ժնեւէն աքսորուած Պեզանսոն Հիւկի գլխաւորութեամբ: 1526-ին Հիւկ դաշինք կը կնքէր Պերնի եւ Ֆրիպուրկի հետ: Ընդհանուր ժողովը իր համամտութիւնը կը յայտնէր, եւ Ժնեւ Զուիցերիոյ քաղաքական թատերաբեմին վրայ կը յայտնուէր: Օգոստոս 1527-ին Պետրոս Պոմօյի եպիսկոպոսը, չկարենալով Ժնեւը իր հեղինակութեան տակ պահել, կը հեռանար եւ Սաւոյի կը հակէր: Ժամանակաւոր գործավարին եւ եպիսկոպոսին աւանդական իրաւասութիւնները փոքր ժողովին եւ նորակազմ 200 քաղաքացիներու ժողովին կը փոխանցուէին: Չարլզ Գ. դուքսը կը յարձակէր Ժնեւի վրայ, սակայն Պերն եւ Ֆրիպուրկ օգնութեան կը փութային հոկտեմբեր 1530-ին, եւ դուքսը կը ստիպուէր յարգել Ժնեւի ազատութիւնը:

Մինչեւ հիմա Բարեկարգութեան հանդէպ աննշան համակրանք կը սնուցուէր Ժնեւի մէջ, մինչ Պերն անմիջապէս կը ջանար աւետարանական հաւատքը հաստատել հոն՝ թէ՛ կրօնական կեանքը եւ թէ՛ քաղաքական յեղափոխութիւնը իր ազդեցութեան տակ պահելու հեռանկարով: Յունիս 1532-ին բողոքական ազդեցութիւնը զգալի կը դառնար, երբ պապը քննադատող եւ բարեկարգչական պահանջներ ընդգծող պաստառներ կը պարգուէին: Սակայն Ժնեւի միւս դաշնակից քաղաքը՝ Ֆրիպուրկը, բուն կաթոլիկ էր եւ Ժնեւի կառավարութիւնը չէր համարձակէր բացայայտ լուտերականութիւն դրսեւորել:

Հոկտեմբեր 1532-ին, Պերնի հովանաւորութեամբ, Ֆարէլ երկու գործակիցներով՝ Պետրոս Օլիւթեան եւ Անտոն Սոնիէ, Շնեւ կու գար, սակայն ընդունելութիւն չգտնելով կը հեռանար քաղաքէն: Մէկ ամիս անց Ֆարէլ Շնեւ կը դրկէր իր գործակիցներէն Անտոն Ֆրոմէնը (1508?-1581), որ որպէս ուսուցիչ՝ հոն կը հաստատուէր եւ բարեկարգչական վարդապետութիւնը կը տարածէր: 1 յունուար 1533-ին Ֆրոմէն ամբոխը կը հաւաքէր եւ քարոզութեան կը պատրաստուէր, սակայն բուռն ընդդիմութեան հանդիպելով կը հեռանար Շնեւէն: Բողոքականներուն թիւը զգալի աճ կ'արձանագրէր, եւ Սուրբ գատիկին անոնք Վերջին ընթրիքը կը կատարէին Շնեւի մէջ: Դեկտեմբերին Ֆրոմէն Շնեւ կը վերադառնար եւ յունուար 1534-ին Պետրոս Վիրէի եւ տոմինիկեան վանական ու կաթողիկոսութեան ջերմ պաշտպան Կի Ֆուրպիթիի հետ հրապարակային վիճարկում կ'ունենար: Ըմբոստութիւն ծայր կ'առնէր: Մարտին Ֆարէլ եւ հետեւորդները, արդէն կարելոր թիւ կազմած, վանական մատուռ մը կը գրաւէին եւ քարոզութիւններու կը սկսէին:

Շնեւի կառավարութիւնը նեղ կացութեան կը մատնուէր: Իր կաթողիկ դաշնակից Ֆրիպուրկը կը պահանջէր, որ Ֆարէլ լռութեան դատապարտուէր, իսկ իր բողոքական դաշնակից Պերնը Ֆուրպիթիի ձերբակալութիւնը կը պահանջէր՝ պատճառաբանելով, թէ ան ժնեւցիները որպէս Պերնի ենթականեր ամբաստանած էր: Շնեւի կառավարութիւնը կը պատժէր Ֆուրպիթին եւ Ֆրիպուրկի հետ յարաբերութիւնները կը խզէր: Պերն կը մնար Շնեւի միակ գուիցերիական դաշնակիցը: Աքսորեալ եպիսկոպոսը, Սաւոյի դուքսին օժանդակութեամբ, կը յարձակէր Շնեւի վրայ եւ կը պաշարէր գայն: Ֆարէլ եւ Վիրէ այս քայլը շահագործելով բողոքականութիւնը կ'առնչէին Շնեւի անկախութեան տիրանալու պայքարին: 1 հոկտեմբեր 1534-ին փոքր ժողովը եպիսկոպոսական աթոռը թափուր կը հռչակէր, թէւ Շնեւ տակաւին ամբողջապէս բողոքականութիւնը չէր ընդունած:

1535-ի սկիզբը Ֆարէլ Շնեւի իշխանութիւններուն կը դիմէր, որ բողոքական ղեկավարներուն եւ կաթողիկ հոգեւորա-

կաններուն միջեւ հրապարակային վիճարկումի արտօնութիւն շնորհէին, սակայն եպիսկոպոսը կ'արգիլէր իր հոգեւորականութեան մասնակցիլ անոր: Ամբողջ յունիս ամիսը այս վիճարկումը տեղի կ'ունենար Ֆարէլի ու Վիբէի եւ կաթոլիկ աշխարհականներուն միջեւ, եւ բողոքականներ յաղթանակ կ'արձանագրէին: 23 յուլիս 1535-ին անոնք Մատրլէն եկեղեցին կը գրաւէին ու 8 օգոստոսին՝ Սուրբ Պետրոս մայր տաճարը, եւ կը փշրէին սրբապատկերները: 10 օգոստոսին Շնեւի կառավարութիւնը կ'արգիլէր սուրբ պատարագի մատուցումը: Մայր տաճարի հոգեւորականներն ու մայրապետները կը հեռանային քաղաքէն: 31 մայիս 1536-ին Շնեւի ընդհանուր ժողովը կը քուէարկէր «ապրիլ աւետարանական օրինադրութեան ու Աստուծոյ խօսքին համաձայն, եւ դադրեցնել բոլոր սուրբ պատարագներն ու պապականութեան կողմէ սահմանուած արարողութիւնները, նաեւ վերցնել սրբապատկերներն ու կուռքերը»:

Մինչ այդ եպիսկոպոսն ու Սաւոյի դուքսը կը շարունակէին իրենց ճնշումները ի գործ դնել Շնեւի վրայ: Յունուար 1536-ին Պերն օգնութեան կը հասնէր Շնեւի եւ կ'ապահովէր իր ազդեցութիւնը: 7 օգոստոս 1536-ին Պերն կը ճանչնար Շնեւի անկախութիւնը: Շնեւ բողոքականութիւնը կ'ընդունէր աւելի քաղաքական, քան կրօնական պատճառներով եւ իր կրօնական հաստատութիւնները ըստ այնմ բարեփոխութեան ենթարկելու քայլերու կը դիմէր: Ֆարէլ, այս բարեփոխութիւններու իրագործումը իր ուժերէն գերիվէր համարելով, զայն կը վստահէր իր ֆրանսացի ընկերոջ՝ Յովհաննէս Կալվինի:

Ը. ԳԼՈՒԽ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԼՎԻՆ

Յովհաննէս Կալվին ծնած էր 10 յուլիս 1509-ին Նոյնի մէջ, Բիզարտիի շրջան՝ Փարիզէն շուրջ 60 մղոն հիւսիս-արեւելք: Անոր հայրը՝ Ճերար Գովէն, Նոյնի եպիսկոպոսարանին քարտուղարը եւ մայր տաճարի ծուխին իրաւաբանն էր: Ան նաեւ բարեկամն էր ազդեցիկ Անժէ իշխանական տունին, որմէ սերած էին Նոյնի երկու ժամանակակից եպիսկոպոսները: Իր հերթին Կալվինն եւս կը բարեկամանար Անժէներու երիտասարդ անդամներուն հետ եւ անոնց շնորհիւ կ'ընտելանար բարեկարգեալները յատկանշող քաղաքավար ընկերութեան կենցաղին: Իր հօր ազդեցութեամբ՝ Կալվինն առանց կաթոլիկ քահանայ ձեռնադրուելու Նոյնի շրջանին մէջ կարգ մը եկեղեցական պաշտօններ կը ստանձնէր 12 տարեկանէն առաջ:

1523-ին Կալվին Փարիզի համալսարանի ուսանող էր: Ան նախ կ'ուսանէր Մարշի գոլեճին մէջ, ուր լատիներէն կ'ուսուցէր Մաթուրին Գորտիէ (1479–1564): Կալվինն ասոր կը պարտէր իր գրական լատիներէնի պայծառ ոճը: Ան արուեստներու ճիւղի ուսումը կը շարունակէր կիսավանական Մոնթէյկու գոլեճին մէջ, ուր արիստոտէլեան իմաստասիրութեան եւ տրամաբանութեան մէջ կը հմտանար՝ դասախօս ունենալով սկոլտիացի աստուածաբան Յովհաննէս Մէյճըրը (1470–1550) եւ արուեստներու մագիստրոս վկայականը կը ստանար 1528-ին: Ուսանողական տարիներուն ան ջերմ բարեկամութիւն կը մշակէր թագաւորին բժիշկ եւ մարդկայնականութեան ուժեղ պաշտպան Կիլյոմ Գոբի ընտանիքին հետ:

Սկզբնապէս Կալվինի հայրը կը փափագէր, որ իր տղան աստուածաբան դառնար եւ քահանայ ձեռնադրուէր, սակայն 1527-ին Նոյնի մայր տաճարի ծուխին հետ հարցեր ունենալով՝ Կալվինը իրաւաբանութեան հետեւելու կը մղէր: Կալվին կը յաճախէր Օրլէանի համալսարանը, ուր կը դասախօսէր այդ

օրերու հռչակաւոր օրէնսգէտ Պետրոս Էսթուպլին (1480–1537): Ապա, 1529-ին, ան կը մտնէր Պուրժի համալսարանը, ուր կ'աշակերտէր Անդրէաս Ալչադիի (1493–1550): Մարդկայնականութեան հանդէպ մեծ հետաքրքրութիւն ունենալով՝ երկու համալսարաններուն մէջ ալ գերման գիտնական եւ ցլեանս բարեկամ Մելիսիոր Վոլմարի (1496–1561) օժանդակութեամբ ան յունարէն կը սորվէր: Ան իրաւաբանութեան վկայականը ձեռք կը բերէր, բայց հօր մահը՝ 1531-ին, զինք ինքնաշխատութեան կը մղէր եւ յունարէնի ուսումը շարունակելով հանդերձ երբայերէնի ուսման կը սկսէր Ֆրանսիս Ա. թագաւորի՝ 1530-ին Փարիզի մէջ հիմնած մարդկայնական Ֆրանս գոլէճին մէջ: Այրիլ 1532-ին Կալվին կը հրատարակէր իր առաջին երկը՝ *Մեկնութիւն Սենեկայի գթութեան ճառին*, որ ճարտասանութեան գոհար մըն էր եւ միաժամանակ բարոյական արժէքներու սքանչելի վերլուծութիւն մը: Այս երկին մէջ Կալվին չէր արձարծեր ժամանակակից կրօնական հարցերը. այլ՝ պարզապէս հանդէս կու գար որպէս մարդկայնական գիտնական:

Կալվին քաջատեղեակ էր նորայայտ վարդապետութիւններուն: Վոլմար Բարեկարգութեան ջատագովներէն էր, ինչպէս նաեւ Օրլէանի իր դասընկերներէն Պետրոս Ռոպերթ (1506?–1538): Առաւել, Ֆրանսայի մէջ եւ այլուր, մարդկայնականութիւնը կը նկատուէր բարեկարգչական շարժում մը, որուն ամենէն ակներեւ ներկայացուցիչը երկարատեւ կ'ըլլար Յակոբ Լըֆէր Էթափլեցին, որ 1507-ին կը հաստատուէր Փարիզի Սեն-Ժերման Բրէյի վանքը եւ համախոհ աշակերտներու խումբ մը կը կազմէր իր շուրջ: Իր աշակերտներէն էին Կիյոմ Պրիստննէ (1470–1534)՝ Ֆրանսական բարեկարգեալ կուսակցութեան առաջնորդը եւ 1516-էն Մոյի եպիսկոպոսը, Կիյոմ Պուտէ (1467–1540), որուն ջանքերով Ֆրանս գոլէճին կը շնորհուէր կայսերական հովանաւորութիւնը, Ֆրանսուս Վադապլ (մահացած՝ 1547-ին)՝ Կալվինի երբայերէնի ուսուցիչը Ֆրանս գոլէճի մէջ, Ճերար Ռուսէլ (1500?–1550)՝ Կալվինի բարեկամն ու ապա Օլերոնի եպիսկոպոսը, Լուի Պերգինացի (1490–1529), որ բողոքականութեան համար խարոյկի մահը յանձն կ'առնէր, եւ

Կիյոմ Ֆարել՝ նշանաւոր բարեկարգիչը: Շատ մը մարդկայնականներ կը համակրէին այս մարդերուն, որոնցմէ միայն վերջին երկուքը կը հեռանային Հռոմէական եկեղեցիէն: Ասոնց ուժեղ պաշտպանն էր Ֆրանսիս Ա. թագաւորին քոյրը՝ Մարգարիտ Անկուլեմցին (1492–1549), որ 1527-ին Նաւարի թագուհին կը դառնար եւ բողոքականութեան հանդէպ վերապահ կը մնար: Լուսերի գիրքերը շատ կանուխէն Ֆրանսսա կը հասնէին եւ կը կարդացուէին այս շրջանակին կողմէ, որուն անդամներէն քիչեր կ'անդրադառնային զարգացող դէպքերուն ու անոնց հետեւանքներուն, թէեւ գիտականօրէն կ'անդրադառնային, թէ ի՛նչ էին հրատապ հարցերը: Այս հանգրուանին Կալվին կը միանար այս խմբակին՝ առանց մեծ կարեւորութիւն ընծայելու անոր անդամներուն:

1532–1534-ին Կալվին կ'ապրէր ապագային իր կողմէ բնորոշուած «անակնկալ դարձը»: Այս դարձին հետեւանքներուն մասին յստակ բան չենք գիտեր, միայն պարզ էր, թէ անոր սիրտը կը կազմէր այն համոզումը, որ աստուածային նախախնամութիւնը Կալվինը այլ ուղղութեան կ'առաջնորդէր եւ անոր կարծրացած սիրտը կը կակուղցնէր: Այս պահէն կրօնքը առաջնահերթ կը դառնար Կալվինին համար: Նոյնիսկ չենք կրնար յստակօրէն ըսել, թէ այս հանգրուանին կը մտածէր կապերը խզել Հռոմէական եկեղեցիին հետ: Ան կը շարունակէր մաս կազմել Փարիզի մարդկայնական շրջանակին, որուն առաջնորդներն էին Ճերար Ռուսել եւ իր մտերիմ ընկերը՝ Նիկոլայոս Գոբ:

1 նոյեմբեր 1533-ին Փարիզի համալսարանի նորոգ ընտրեալ տեսուչը՝ Գոբ, իր պաշտօնական խօսքին մէջ Բարեկարգութեան ձգտում կը դրսեւորէր՝ ակնարկելով Երազմոսի եւ Լուսերի: Կը կարծուի, թէ Կալվին գրած էր այդ ճառը. մէկ բան յստակ էր, թէ ան կը համակրէր անոր բովանդակութեան: Մեծ աղմուկ կը բարձրանար այս առթիւ, եւ Ֆրանսիս Ա. թագաւոր «լուսերականներուն» դէմ կեցուածք կը ճշդէր: Կալվին կը ստիպուէր ապաստանիլ Անկուլեմի իր ընկերոջ՝ Լուի Թիլէթցիի տունը: Ան հետզհետէ կը համոզուէր, որ պէտք էր անջատ-

ւեր կաթովիկութենէ եւ 4 մայիս 1534-ին Նոյն կ'երթար իր հրաժարականը տալու: Մանաւանդ հոկտեմբեր 1534-էն ետք, երբ Անտոն Մարգուր սուրբ պատարագի դէմ իր անհեռատես թեզերը կը պարզէր, ան, ինքզինք անապահով զգալով Ֆրանսայի մէջ, յունուար 1535-ին բողոքական Պազէլ կը մեկնէր:

Մարգուրի արարքը տեղիք կու տար հալածանքի նոր ալիքի, որուն զոհերէն մին կը դառնար Կալվինի ընկերը՝ փարիզցի վաճառական Էսթիէն Ֆորճեցի: Ֆրանսիս Ա. գերման բողոքականները կը դատապարտէր Չարլզ Ե.-ի օգնութեանը ապաւինելուն համար, եւ արդարացնելով ֆրանսական հալածանքները՝ փետրուար 1535-ին նամակ կը հրապարակէր՝ անկարգ համարելով Ֆրանսայի բողոքականները եւ յայտնելով պետական անհրաժեշտ քայլերու դիմելու հրամայականը: Կալվին կը կարեւորէր իր հաւատակիցները պաշտպանելու հարցը: Ան անմիջապէս կ'աւարտէր Անկուլեմի մէջ սկսած երկը եւ մարտ 1536-ին կը հրատարակէր զայն *Քրիստոնէական կրօնքի հաստատութիւններ* խորագիրով, որուն յառաջաբանը Ֆրանսայի թագաւորին ուղղուած նամակ մըն էր: Այս նամակը Բարեկարգութեան գլուխ գործոցներէն մին կը նկատուի: Շատ քաղաքավար ոճով գրուած՝ ան բողոքական տեսակետը կը պարզէր եւ ցոյց կու տար, թէ բողոքականներ կայսրին դէմ չէին: Յարդ ո՛չ մէկ ֆրանսացի բողոքական այսպիսի յստակութեամբ եւ ուժգնութեամբ չէր արտայայտուած եւ 26 տարեկան Կալվին անով իսկ կը դառնար ֆրանսական բողոքականութեան ղեկավարը:

Քրիստոնէական կրօնքի հաստատութիւններ երկը, որ նախապէս վեց գլուխներէ բաղկացած քրիստոնէական մըն էր եւ տրամաբանական հետեւողութեամբ ու ժողովրդային մատչելիութեամբ կը ներկայացնէր քրիստոնէական վարդապետութեան ու կեանքի բարեկարգութեան ըմբռնումը, Կալվինի կողմէ 80 գլուխի կը վերածուէր եւ 1559-ին որպէս կոթողական երկ կը հրատարակուէր: Որպէս երկրորդ սերունդի բարեկարգիչ՝ Կալվին չէր յաւակներ նորարար մտածող ըլլալ: Ան կ'ընդունէր, թէ շատ պարտական էր Լուտերի: Ան Լուտերի

հաւատքով արդարացումի եւ խորհուրդներու վարդապետութիւնները կը համարէր աստուածային խոստումներուն կնիքը: Ան նաեւ կ'ըսէր, թէ շատ օգտուած էր Պուսերէ, մանաւանդ անոր այն գաղափարներէն, թէ ամեն բան Աստուծոյ փառքով ստեղծուած էր, նախասահմանութիւնը քրիստոնէական վստահութիւնը կը յայտնէր եւ Աստուծմէ ընտրեալներուն շարունակական ճիգը Աստուծոյ կամքին հնազանդութեան մէջ մնալուն մէջ էր: Այս բոլորը սակայն Կալվինի կողմէ գեղեցկօրէն դասաւորուած եւ յստակացած էին իր այս երկին մէջ:

Կալվին կ'ուսուցէր, թէ մարդկային վեհագոյն գիտութիւնը Աստուած եւ մեր անձը ճանչնալն էր: Բնութիւնը, մեր խիղճին իսկ թելադրականութեամբ կը պարգեւէր այս ճանաչողութիւնը. սակայն փրկութեան առաջնորդող ամբողջական ճանաչողութիւնը միայն Աստուածաշունչով կը տրուէր եւ որուն վկան հաւատացեալ ընթերցողին սիրտին հայելին հանդիսացող Հոգին էր՝ որպէս Աստուծոյ ձայնը: Այս աստուածային ուսուցումները ցոյց կու տային, թէ Աստուած բարի էր եւ աղբիւրը ամեն բարութեան: Մարդկային հիմնական պարտաւորութիւնը Աստուծոյ կամքին հնազանդ ըլլալն էր: Սկզբնապէս մարդը բարի էր եւ կրնար Աստուծոյ կամքին հնազանդիլ, բայց Ադամի անկումով ան կը կորսնցնէր բարութիւնը եւ առանձինն չէր կրնար անոր հասնիլ: Արդ, ո՛չ մէկ մարդկային արարք արժանիք կը համարուէր Աստուծոյ կողմէ, եւ բոլոր մարդերը միայն կորուստի ենթակայ էին: Այս անօգնական եւ անյոյս վիճակէն ոմանք անարժանօրէն Քրիստոսով կը փրկուէին: Ան կը վճարէր մեղքի մուրհակը փոխարէն անոնց, որոնց համար կը մեռնէր: Քրիստոսի այս ինքնամատուցումն ու անոր ստացումը մարդերու կողմէ աստուածային ազատ արարք մըն էր, որ միայն Աստուծոյ սէրը կը ցոլացնէր:

Ինչ որ Քրիստոս ըրած էր՝ անարժէք կը մնար, եթէ մարդուն կողմէ չընկալուէր: Այս ընկալումը կ'իրականանար՝ Սուրբ Հոգիով, որ երբ, ինչպէս եւ ուր որ ուզէր կը գործէր՝ բերելով ապաշխարութիւն եւ հաւատք, այնպիսի հաւատք,

Լուտերի ընդգծածին նման, որ հաւատացեալին եւ Քրիստոսի կենսական միութիւնն էր: Հաւատքի այս նոր կեանքը փրկութիւնն էր, փրկութիւն՝ արդարացումի համար: Հաւատացեալներ աստուածահաճոյ գործեր կը կատարէին, որովհետեւ Քրիստոսի հետ այս կենդանի միութեան մէջ մտած էին: Կալվին կը գրէր. «Մենք առանց գործերու չենք արդարացած, սակայն գործերով ալ չենք արդարացած» (*Institutes*, 3.16.1 (edition of 1559)). (հմմտ. J. T. McNeill, ed., and F. L. Battles, trans. *Calvin: Institutes of the Christian Religion*, 2 vols. [Philadelphiam, 1960]): Այսպէսով Կալվին փորձաքարի կը զարներ Հռոմէական եկեղեցիի «գործերու» ըմբռնումը, երբ փրկութեան հասնելու նոր ըմբռնումը կը պարզէր: Քրիստոնէային համար Աստուածաշունչին մէջ գտնուած Աստուծոյ օրէնքը իր փրկութեան երաշխիքը չէր, այլ օրէնքին պահպանութիւնը Աստուծոյ կամքին արտայայտութիւնն էր, որ արդէն իսկ փրկուած քրիստոնէան պիտի ձգտէր կատարել: Օրէնքին քրիստոնէական կեանքի առաջնորդ ըլլալը Կալվինի տեսակէտն էր: Ասով կալվինականութիւնը միշտ շեշտը կը դնէր նկարագիրին վրայ: Ըստ Կալվինի՝ անձ մը իր նկարագիրին համար կը փրկուէր եւ ո՛չ իր նկարագիրով: Ամեն բանէ աւելի քրիստոնէական կեանքը աղօթքով կը սնանէր:

Քանի որ ամեն բարիք Աստուծմէ էր եւ մեղաւորներ չէին կրնար նախաձեռնել իրենց դարձը կամ ընդդիմանալ անոր, ոմանց փրկուած եւ ուրիշներուն կորսուած ըլլալը աստուածային արարք մըն էր՝ ընտրութեան եւ դատապարտութեան վարդապետութեան վրայ հիմնաւորուած: Միայն աստուածային ամենաորոշիչ կամքով կարելի էր բացատրել այս երեւոյթը: Կալվինի համար ընտրութիւնը, նախասահմանութիւնը, ենթադրական չէր, այլ ապահովութիւն ներշնչող քրիստոնէական վարդապետութիւն: Աստուծոյ՝ մէկուն ի նպաստ անձնական փրկութեան ծրագիր ունենալը վստահութեան անխորտակելի ժայռ մըն էր, ո՛չ միայն անձին համար, որ իր անարժան ըլլալը կ'ընդունէր, այլ նոյնիսկ, երբ այդ անձը շրջապատուած էր ընդդիմադիր ուժերով, որոնք նաեւ կրնային քահանաներ եւ

թագաւորներ ըլլալ: Նախասահմանութիւնը հաւատացեալը Աստուծոյ գործակից կը դարձնէր անոր կամքին գործադրումին համար:

Աստուած երեք ոլորտ կը հաստատէ քրիստոնէական կեանքին համար. առաջին՝ Եկեղեցին, երկրորդ՝ խորհուրդները, երրորդ՝ քաղաքացիական կառավարութիւնը: Եկեղեցին կը բաղկանար «*Աստուծոյ ընտրեալներէն*» (*Institutes*, 4.1.2), սակայն շատ հաւանաբար նաեւ կը ներառէր «*ամբողջ մարդկութիւնը ... որ մէկ Աստուած եւ մէկ Քրիստոս կը պաշտէր*» (*Institutes*, 4.1.7): Ճշմարիտ Եկեղեցիին մէջ «*ստախօսութիւնն ու զեղծարարութիւնը տեղ չունէին*» (*Institutes*, 4.2.1): Ըստ Նոր կտակարանին՝ Եկեղեցիին մէջ կան հովիւներ, ուսուցիչներ, աւագներ եւ սարկաւագներ, որոնք իրենց ծառայութիւնը կը մատուցեն իրենց հաւատացեալներուն համաձայնութեամբ: Անոնց կոչումը կրկնակի է. Աստուծմէ տրուած եւ ժողովուրդէն հաստատուած: Այսպէսով Կալվին հաւատացեալներուն իրաւասութիւն կու տար իրենց պաշտօնէաները ընտրելու, թէեւ Ժնեւի մէջ պայմաններու բերումով կը պարտաւորուէր այդ իրաւասութիւնը քաղաքին կառավարութեան փոխանցել: Առաւել, ըստ Կալվինի՝ տեղական Եկեղեցին կը տնօրինէր իր կարգ-կանոնը՝ մինչեւ իսկ հաղորդագրկումը: Ասկէ աւելին չէր կրնար սահմանել Կալվին, սակայն Բարեկարգութեան բոլոր առաջնորդներն ալ պետութեան կողմէ Եկեղեցիին վրայ բանեցուած վերահսկողութեան դէմ էին: Աստուածային տնօրինութեամբ, քաղաքացիական կառավարութիւնը պարտաւոր էր պաշտպանել Եկեղեցին սխալ վարդապետութիւններէ եւ պատժել այն յանցաւորները, որոնց պատիժը հաղորդագրկումով չէր աւարտէր:

Կալվին կ'ընդունէր միայն երկու խորհուրդ՝ մկրտութիւնը եւ Վերջին ընթրիքը: Ընթրիքի ընթացքին Քրիստոսի ներկայութեան առնչութեամբ՝ ան, Պուսերի նման, Լուտերի եւ Զուինկլիի միջեւ կ'ընտրէր միջին ուղի մը՝ պահելով Լուտերի թելադրած ոգին եւ Զուինկլիի սահմանած արտաքին երեւոյթը: Զուինկլիի նման ան կը մերժէր Քրիստոսի ֆիզիքական ներ-

կայութիւնը, սակայն հաւատքով ըմբռնելի՝ անոր ճշմարիտ հոգեւոր ներկայութիւնը կը հաստատէր: Ան կը գրէր. «Քրիստոս, մարմին ըլլալով, մեր հոգիներուն կեանք կը փչէ, խորքին մէջ ան իր կեանքը կը փոխանցէ մեզի, թէւէ Քրիստոսի իսկական մարմինը մեր մէջ չի մտնէր» (Institutes, 4.17.32):

Քրիստոնէական կրօնքի հաստատութիւններ երկի հրատարակութենէն ետք, 1536-ի գարնան, Կալվին Ֆերրարա, Իտալիա, կ'երթար ազատամիտ եւ հիւրընկալ Ռընէ դքսուհին աւետարանական դատին կողմը շահելու համար: Ապա ան Ֆրանսա կ'անցնէր եւ եղբօրն ու քրոջը հետ Սթրազպուրկ կը ժամանէր: Պատերազմը կը ստիպէր, որ շուտով՝ յուլիս 1536-ին, վերադառնար Ժնեւ, ուր Ֆարէլի յախուռն ճառախօսութիւնը կը համոզէր զինք, որ հոն մնար:

Կալվին Ժնեւի մէջ իր աշխատանքը կը սկսէր շատ համեստօրէն՝ Աստուածաշունչի դասախօս դառնալով: Մէկ տարի ետք ան նաեւ քարոզիչ կը նշանակուէր: Ան Ֆարէլի վրայ մեծ ազդեցութիւն կ'ունենար: Անոնց առաջին միացեալ ճիգը կ'ըլլար Պերնի հոգեւորականներն ու քաղաքացիական իշխանութիւնը համոզել Վոյի եւ Լոզանի մէջ Բարեկարգութիւնը ամրապնդելու: Լոզանի մէջ Վիրէ հովիւ կը նշանակուէր եւ այս պաշտօնը կը վարէր մինչեւ 1559: Կալվին սերտ բարեկամութիւն կը մշակէր անոր հետ: Ապա Կալվին եւ Ֆարէլ իրենց ուշադրութիւնը կը կեդրոնացնէին Ժնեւի վրայ: Առաջին հերթին՝ յունուար 1537-ին, անոնք Կալվինի խմբագրած առաջարկները կը ներկայացնէին փոքր ժողովին, որով կ'ուզէին, որ Վերջին ընթրիքը ամիսը մէկ անգամ մատակարարուէր, եւ քաղաքին զանազան մասերուն մէջ քաղաքացիական իշխանութեան կողմէ նշանակուէին մաքուր կեանք ապրող անձեր, որոնք, հոգեւորականներուն հետ գործակցաբար, յանուն Եկեղեցիի կարգապահութեան հրաւիրէին անարժանները ու ի պահանջել հարկին՝ հաղորդագրկէին: Այսպէսով Կալվին կը փորձէր Ժնեւը իտալական քաղաքի վերածել եւ տեղական Եկեղեցին անկախացնել: Երկրորդ քայլը կ'ըլլար Կալվինի կողմէ պատրաստուած քրիստոնէականի մը որդեգրումը

յաջողցնել եւ երրորդը՝ իւրաքանչիւր քաղաքացիի կողմէ ընդունուած եւ հաւանաբար Ֆարէլէ խմբագրուած Հաւատքի հանգանակը հաստատել: Փոքր ժողովը, կարգ մը փոփոխութիւններ մտցնելէ ետք, կ'ընդունէր կատարուած առաջարկները:

Կալվինի արձանագրած յաջողութիւնները անմիջապէս կ'ականահարուէին: Լոզանի հովիւ Պետրոս Գարոլի որպէս արիոսական կ'ամբաստանէր Կալվինն ու Ֆարէլը: Անոնք կը պաշտպանէին իրենց ուղղափառութիւնը, սակայն իրենց վայելած ժողովրդականութեան մէջ բաւական կորուստ կ'արձանագրէին: Նոր կարգապահութեան եւ Հաւատքի հանգանակին որդեգրումը եւս խնդրայարոյց կը դառնար: Յունուար 1538-ին 200 քաղաքացիներու ժողովը կը քուէարկէր, թէ Վերջին ընթրիքը բոլորին համար բաց պէտք էր ըլլար եւ այսպէսով կը հակասէր Կալվինի ձգտած կարգապահութեան: Յաջորդ ամիս ընդդիմութիւնը կը շահէր քաղաքացիական իշխանութեան ընտրութիւնը եւ այս որոշումները կը պարտադրէր: Պերնի մէջ գործադրուող պաշտամունքը որոշապէս կը տարբերէր Ժնեւէն եւ ընդդիմութիւնը կ'որոշէր, որ ան գործադրութեան դրուէր նաեւ Ժնեւի մէջ: Կալվին եւ Ֆարէլ,– ընդունելով հանդերձ, թէ Պերնի եւ Ժնեւի պաշտամունքներուն միջեւ եղած տարբերութիւնները աննշան էին,– այս քայլը քաղաքացիական իշխանութեան կողմէ Եկեղեցիի ազատութեան միջամտութիւն նկատելով՝ անընդունելի կը համարէին, եւ 23 ապրիլ 1538-ին անոնց գործունէութիւնը կը խափանուէր: Այնպէս կը թուէր, թէ անոնց աշխատանքը Ժնեւի մէջ ամբողջական ձախողութեան դատապարտուած էր:

Երբ զուիցերիական բողոքական իշխանութիւններուն միջամտութիւնը անգոր կը մնար, Կալվինի եւ Ֆարէլի աշխատանքը շարունակելու համար Ժնեւի մէջ Ֆարէլ Նուշաթելի մէջ հովիւ կը դառնար եւ հոն ալ կը հաստատուէր, իսկ Կալվին, Պուսերի հրաւերով՝ կ'անցնէր Սթրազպուրկ, ուր ֆրանսացի գաղթականներու եկեղեցիին հովիւը եւ աստուածաբանութեան դասախօս կ'ըլլար: Քաղաքը կը պատուէր Կալվինը եւ զինք իր ներկայացուցիչներէն մին կը նշանակէր, երբ Չարլզ Ե.

բողոքականներու եւ կաթողիկոսներու վերամիացումին կը ճգնէր: Այսպէսով Կալվին կը վայելէր Մելանգթոնի եւ գերման միւս բարեկարգիչներուն մտերմութիւնը եւս: 1540-ին Կալվին կ'ամուսնանար Իտելէթ Պուրեցիի հետ, որ մինչեւ իր մահը (1549) հաւատարիմ գործակից պիտի դառնար Կալվինի: Կալվին Սթրազպուրկի մէջ ո՛չ միայն կ'ընդարձակէր իր *Քրիստոնէական կրօնքի հաստատութիւններ* երկը, այլեւ կը հեղինակէր *Մեկնութիւն Հռոմայեցիներու նամակին* երկը, որ Բարեկարգութեան մեկնաբանական գրականութեան շարք մըն էր, եւ *Պատասխան Սատոլէթոյին* երկը, որ Բողոքականութեան սկզբունքներուն բացայայտումը կը կատարէր:

Մինչ այդ Ժնեւի մէջ տեղի կ'ունենար քաղաքական յեղափոխութիւն մը, որուն Կալվին որեւէ կերպով առնչուած չէր: Իր գործունէութիւնը խափանող կողմը 1539-ին դաշինք կը կնքէր Պերնի հետ, որուն հետեւանքով ան յաջորդ տարի ընտրութիւնը կը կորսնցնէր եւ կը դատապարտուէր իբրեւ դաւաճան: Կալվինի համակիր կողմը դարձեալ իշխանութեան գլուխ կու գար եւ անոր ղեկավարները կ'ուզէին, որ ան վերադառնար: Կալվին դժուարաւ կը համոզուէր եւ 13 սեպտեմբեր 1541-ին Ժնեւ կու գար:

Կալվին անմիջապէս Ժնեւի եկեղեցիին նոր կանոնագրութիւնը՝ *Եկեղեցական կարգադրութիւններ*, որ 1537-ին կատարուած առաջարկութիւններէն աւելին կը պարունակէր, վաւերացնել տալու ճիգ կ'ընէր, սակայն բոլորովին չէր հասներ իր նպատակին: *Եկեղեցական կարգադրութիւններ*-ուն համաձայն՝ Քրիստոս իր Եկեղեցիին մէջ հովիւի, ուսուցողի, աւագի եւ սարկաւագի չորս պաշտօնները կը հաստատէր, եւ ասոնք կը ճշդէին իւրաքանչիւրին պարտականութիւնները: Հովիւները շաբաթը մէկ անգամ հաւատացեալներուն հետ պէտք էր հանդիպէին՝ հովուական պաշտօնի թեկնածուներ գտնելու, հասարակաց հարցեր քննարկելու եւ քարոզախօսելու համար: Ուսուցողները հաւատացեալներուն ուղիղ վարդապետութիւնը պէտք էր սորվեցնէին եւ Ժնեւի դպրոցներուն ուսուցիչներ պատրաստէին, որովհետեւ Կալվին շատ կը կարեւորէր

քաղաքի կրօնական դաստիարակութիւնը: Աւագները Կալվինի դրութեան մէջ կեդրոնական տեղը կը գրաւէին: Անոնք փոքր ժողովին կողմէ ընտրուած 12 աշխարհականներ էին, երկուքը՝ փոքր ժողովի անդամներէն, չորսը՝ 60 քաղաքացի ներառող ժողովէն եւ վեցը՝ 200 քաղաքացիներու ժողովէն: Անոնք եւ հովիւները, որոնք 1542-ին ինը հատ էին, միասնաբար կը կազմէին վարիչ խորհուրդը եւ պէտք էր ամեն հինգշաբթի հանդիպէին ու եկեղեցական կարգապահութիւնը վերատեսէին: Անոնք կրնային մինչեւ իսկ հաղորդագրկել յանցաւորը. իսկ եթէ աւելի ծանր պատիժի կարիք ըլլար, պարտաւոր էին զայն յղել քաղաքացիական իշխանութեան: Կալվինի համար Եկեղեցիին անկախութեան երաշխիքը կը կայանար հաղորդագրկումի իրաւունքին մէջ, եւ ան ոգի ի բոնին կ'աշխատէր զայն հաստատել տալու, ինչ որ միայն 1555-ին ի գորու կը դառնար:

Եկեղեցական կարգադրութիւններ-ուն կողքին Կալվին կը պատրաստէր նոր քրիստոնէական մը եւ կը մշակէր նոր պաշտամունքի կարգ մը, որ հիմնուած էր Սթրազպուրկի իր ֆրանսական ծուխին եւ առհասարակ Սթրազպուրկի եկեղեցիներու պաշտամունքին վրայ: Ժնեւի պայմաններուն պատշաճեցնելու համար՝ Կալվին բաւական բարեփոխութիւններ կը ներառէր այս պաշտամունքի կարգին մէջ: Ան գրաւոր եւ ազատ աղօթքներ կը նախատեսէր: Կալվին բնաւ հակառակութիւն չէր յայտնէր ճշդորոշուած պաշտամունքի կարգի դրութեան, որուն հանդէպ իր հոգեւոր յաջորդները աւելի ուշ Մեծն Բրիտանիոյ եւ Ամերիկայի մէջ կը ցուցաբերէին: Նոր պաշտամունքը նաեւ կեդրոնական տեղ կու տար հաւատացեալներու երգեցողութեան: Կալվին կը նախընտրէր Վերջին ընթրիքին շաբաթը մէկ պաշտամունքը, սակայն *Եկեղեցական կարգադրութիւններ*-ը ամիսը մէկ կը ճշդէր, իսկ խորհուրդը՝ տարին չորս անգամ:

Կալվինի առաջնորդութեամբ, որ պարզապէս Ժնեւի հովիւներէն մին էր, որոնց թիւը 1564-ին կը բարձրանար 19-ի, դաստիարակութեան եւ վաճառականութեան մարզերը կը զարգանային վարիչ խորհուրդի հետեւողական հսկողութեամբ: Կալվին կը ձգտէր Ժնեւը վերածել կատարելագործուած քրիս-

տոնէական համայնքի: Աւետարանականութիւնը մեծ թիւով գաղթականներ կը բերէր՝ ընդհանրապէս Ֆրանսայէն, Ինչպէս նաեւ Իտալիայէն, Հոլանտայէն, Սկոտիայէն եւ Անգլիայէն, որոնք ընկերային դիրքերու, ուսումի եւ դրամի տէր մարդիկ էին ու ժնեւի հաւաքական կեանքին մէջ կարելոր դէմքեր կը դառնային: Կալվին եւ իր գործակից հովիւները օտարականներ էին: 1548-ին Կալվինի հաստատած դրութեան դէմ ընդդիմութիւնը անհամեմատելիօրէն կ'աճէր եւ արտայայտութիւն կը գտնէր երկու եղանակներով. առաջին՝ անոնք, որոնք որեւէ կարգապահութեան կը հակառակէին, երկրորդ՝ ժնեւի այն աւանդապահ ընտանիքները, որոնք օտարամուտ Կալվինը եւ անոր հետ եղող հովիւներն ու ժամանող գաղթականները վտանգ կը նկատէին անկախութեամբ յատկանշուած քաղաքին համար: Այս երկրորդ խմբակը, որ «ազատական» կը կոչուէր, կը դեկավարուէր նախապէս Կալվինի ջերմ պաշտպան Ամի Բերինի կողմէ:

Ամենասուր պայքարը տեղի կ'ունենար 1548–1555-ին, երբ աւանդապահ ընտանիքները կը մտահոգուէին, թէ գաղթականները քաղաքական բանալի պաշտօններու պիտի տիրանային, մինչ անոնք մեծ մասամբ Կալվինի համակիրներն էին ու անոր դիրքը կը հաստատէին: Թէեւ Կալվինի համբաւը ժնեւէ դուրս հետզհետէ աւելի կը տարածուէր, սակայն անոր տեղական աշխատանքը ձախողելու շարունակական վտանգը կը դիմագրաւէր:

Կային անհամաձայնութեան բազմաթիւ կէտեր, սակայն մասնաւորաբար անոնցմէ երկուքը խնդրայարոյց կը դառնային: Առաջինին պատճառը կ'ըլլար Փարիզի մէջ նախկին կարմեղեան հոգեւորական եւ այժմ ժնեւի մէջ ապրող բողոքական բժիշկ Յերոնիմոս Պոլսեկ (մահացած՝ 1584-ին): Հաւատացեալներու ժողովին ընթացքին ան Կալվինը կը դատապարտէր՝ ըսելով, թէ նախասահմանութիւնը Աստուծոյ կողմէ մեղքի պատճառականութեան վարդապետութիւնն էր եւ սխալ էր: Այս քննադատութեամբ Կալվինի ամենահիմնական հեղինակութիւնը, որ Աստուածաշունչի մեկնաբանութիւնն էր եւ որով ան

Ժնեւը իր իշխանութեան տակ կը պահէր, յարձակումի կ'ենթարկուէր: Հոկտեմբեր 1551-ին Կալվին Պոլսեկի այս քննադատութիւնը քաղաքացիական կառավարութեան ժողովին կը տանէր, եւ Պոլսեկ դատի կը կանչուէր: Ժողովականներ Կալվինը արդարացի կը գտնէին, եւ ան հազիւ կը յաջողէր Պոլսեկը քաղաքէն արտաքսել եւ վերահաստատել իր նախասահմանութեան վարդապետութիւնը՝ որպէս քրիստոնէական անխախտելի ճշմարտութիւն մը: Պոլսեկ կաթողիկոսութեան կը վերադառնար եւ Կալվինը վարկաբեկող կենսագրական կը գրէր:

Փետրուար 1553-ին քանի մը տարիներէ ի վեր հաւասարակշռուած քաղաքի ընտրութիւններուն արդիւնքները կ'ըլլային ի շահ Կալվինի ընդդիմադիրներուն, եւ նոր դժուարութիւններ կը յարուցէին՝ սպառնալով արդէն իսկ որոշ բարդութիւններ դիմագրաւող անոր հեղինակութեան: Կալվինի անկումը անխուսափելի էր, երբ երկրորդ դէպքը, որ իր առճակատումն էր Միքայէլ Սերվեթուսի (1511–1553) հետ, տեղի կ'ունենար եւ կը փրկէր զինք ու վերջնական յաղթանակի կ'առաջնորդէր: Սերվեթուս Կալվինի տարեկից սպանացի մըն էր եւ մեծ, թէեւ աննախատեսելի, հանճարի տէր անձ մը: 1531-ին ան կը հրատարակէր իր *Սուրբ Երրորդութեան սխալները* երկը: Սերվեթուս, իր ինքնութիւնը ծածկելու համար, Փարիզի մէջ բժշկութիւն կ'ուսանէր Վիլենով անունով եւ նշանաւոր կը դառնար Ուիլերմ Հարվիի արիւնի շրջագայութեան գիւտին նախատեսութեամբ: Ան Ֆրանսայի Վիէն քաղաքը կը փոխադրուէր, բժշկութիւն կ'ընէր, արքեպիսկոպոսին անձնական բժիշկը կը դառնար եւ միաժամանակ կը գրէր իր *Քրիստոնէութեան վերահաստատումը* երկը, որ լոյս կ'ընծայէր 1553-ին: Ըստ Սերվեթուսի՝ Սուրբ Երրորդութեան նիկիական վարդապետութիւնը, քաղկեդոնական քրիստոսաբանութիւնն ու երեւաններու մկրտութիւնը Եկեղեցիի խեղաթիւրումին գլխաւոր պատճառներն էին: 1545-ին ան Կալվինի հետ խնդրայարոյց թղթակցութեան կը նախաձեռնէր եւ խիստ քննադատութեան կ'ենթարկէր անոր *Եկեղեցական կարգադրութիւնները*:

Կալվինի ընկերը՝ Կիյոմ Թրիեցին, եւ աւելի ուշ Կալվին ինքնին հռոմէական եկեղեցական իշխանութիւններուն կը բացայայտէին Սերվեթուսի ինքնութիւնը: Ան խարոյկի մահւան կը դատապարտուէր, սակայն խոյս կու տար Վիէնի բանտէն: Անհասկնալի պատճառներով ան Ժնեւ կը մտնէր եւ օգոստոս 1553-ին կը ձերբակալուէր: Այժմ Սերվեթուսի դատապարտութիւնը ուժի ցուցադրութեան փորձաքար կը դառնար Կալվինի եւ ընդդիմութեան համար. վերջինս չէր կրնար բացայայտօրէն հերետիկոս մը պաշտպանել, սակայն չէր ալ ուզեր հեզասահ յաղթանակ պարգեւել Կալվինի: Սերվեթուս դատը շահելու մեծ յոյսեր կը սնուցէր: Ան կը պահանջէր Կալվինի աքսորը եւ անոր ստացուածքներուն իրեն փոխանցումը: Սերվեթուս դատը կը կորսնցնէր եւ 27 հոկտեմբեր 1553-ին խարոյկով իր մահկանացուն կը կնքէր: Թէեւ քանի մը ընդդիմադիր ձայներ կը լսուէին, մանաւանդ Պազելէն Սեպասթիան Գասթելիոյինը (1515–1563), սակայն ժողովուրդին մեծամասնութիւնը կը բաժնէր Մելանգթոնի այն կարծիքը, թէ ամեն բան արդար գործադրուած էր: Կալվին նոր յաղթանակ կ'արձանագրէր: Զուիցերիական եկեղեցիներ Սուրբ Երրորդութեան վարդապետութեան սպառնացող չարափառութեան վտանգէն կը ձերբազատուէին, իսկ Կալվինի հակառակորդները կը խորտակուէին, երբ ժողովուրդին կողմէ անընդունելի նկատուած անձ մը պատժելուն մեջ այնքան ձգձգումներ կ'ընէին:

1554-ի եւ 1555-ի ընտրութիւններուն Կալվին մեծ յաղթանակներ կ'արձանագրէր: Յունուար 1555-ին վարիչ խորհուրդը մնայուն իրաւասութիւն կը ստանար հաղորդագրկելու առանց կառավարութեան միջամտութեան: Մեծ մասամբ կալվինական տարրերէ բացկացած կառավարութիւնը նաեւ մեծաթիւ գաղթականներ կ'ընդունէր Ժնեւ՝ իր դիրքը ամրապնդելու համար: 16 մայիս 1555-ին Կալվինի հակառակորդներուն կողմէ սկսած փոքր ապստամբութիւն մը պատճառ կը դառնար, որ բազմաթիւ ընդդիմադիր ղեկավարներ որպէս դաւաճան պատժուէին: Այսպէսով Կալվինի համակիր կողմը Ժնեւի ամբողջական տէրն ու տիրականը կը դառնար: Թէեւ Պերն տակաւին

թշնամի էր, սակայն 1557-ին Սաւոյի դուքս եւ Սպանիոյ անունով Սէն-Գուէնթենի մէջ ֆրանսացիներուն յաղթած Էմմանուէլ Ֆիլիպերթ իր դքսութեան տիրութիւնը կը պահանջէր ֆրանսացիներէն: Այս հասարակաց վտանգը Պերնն ու Ժնեւը դաշնակցութեան կը մղէր յունուար 1558-ին, երբ առաջին անգամ ըլլալով Ժնեւ իր հին դաշնակիցին հետ համահաւասար մակարդակի վրայ կը գտնուէր: Այս բոլոր դժուարութիւնները յաղթահարելէ ետք, Կալվին իր աշխատանքը կը պսակէր 1559-ին հիմնադրելով Ժնեւի ակադեմիան, որ երկար տարիներէ ի վեր արդէն Ժնեւի համալսարանն է: Ժնեւի ակադեմիան լուտերականներէն զատորոշուող Բարեկարգեալ եկեղեցիներուն աստուածաբանական ուսումի մեծագոյն կեդրոնը կը դառնար անմիջապէս, ուր հարիւրաւոր հովիւ կը կազմաւորուէր Ֆրանսայի, Հոլանտայի, Անգլիոյ, Սկոտլիոյ, Գերմանիոյ եւ Իտալիոյ համար:

Կալվինի ազդեցութիւնը Ժնեւէն անդին կը հասնէր: Շնորհիւ իր *Հաստատութիւններ*-ուն, Ժնեւի եկեղեցական կառավարումի դրութեան, ակադեմիային, մեկնողական գրականութեան եւ աշխուժ թղթակցութեան՝ ան կը դառնար Ֆրանսայի, Հոլանտայի, Սկոտլիոյ եւ Անգլիոյ մաքրակրօն բողոքականներուն ներշնչումի աղբիւրը: Անոր ազդեցութիւնը նաեւ Լեհաստան եւ Հունգարիա կը հասնէր եւ նախքան իր մահը՝ նաեւ հարաւ-արեւմտեան Գերմանիա: Կալվինի մտածողութեամբ այնպիսի ազդեցիկ մարդեր կը թրծուէին, որ իրենք զիրենք աստուածային կամքին հնազանդութեամբ Աստուծոյ հետ գործակցելու կոչուած ընտրեալներ կը նկատէին եւ աներկիւղ կը պատգամէին, որ Աստուած Աստուածաշունչը պարգեւած էր մարդոց բարի կեանքին եւ ուղափառ պաշտամունքին համար: Կալվինի հոգեւոր աշակերտները ամեն տեղ կը յատկանշուէին այս հասարակաց գիծերով: Կալվինի անջնջելի դրոշմը արդարօրէն իրեն կը վերապահէր «միակ միջազգային բարեկարգիչը» ըլլալու տիտղոսը, որ իրեն կը շնորհուէր 27 մայիս 1564-ին, երբ ան իր մահկանացուն կը կնքէր:

Կավվին իրեն համագոր յաջորդ չէր ունենար: Աշխատանքը այնքան ընդարձակուած էր, որ մէկ անձով կարելի չէր վարել: Մակայն Կավվինի արժանատի յաջորդը կը դառնար Թէոտոր Պեզան (1519–1565), որ աւելի հանդուրժողական ըլլալով հանդերձ՝ ամբօրէն փարած էր նոյն իտէալներուն:

Թ. ԳԼՈՒԽ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Բարեկարգութեան պատմութիւնը Անգլիոյ մէջ պատմութիւնն է Անգլիոյ եկեղեցիի եւ ժողովուրդի աստիճանական բողոքականացումին, որ տեղի կ'ունենար Հենրի Ը.-ի (1509–1547) եւ անոր երեք զաւակներուն ու յաջորդներուն թագաւորութեան շրջանին՝ Եղուարդ Զ. (1547–1553), Մարի (1553–1558) եւ Եղիսաբեթ Ա. (1558–1603): Անգլիական բարեկարգութեան անմիջական առիթը, սակայն, ո՛չ անպայմանօրէն բաւարար պատճառը, Հենրիի՝ Արակոնի Կատարինէն ամուսնալուծումին «մեծ հարցն» էր, որ վերջապէս կը յանգեր անգլիացիներուն անհնազանդութեան Հռոմէական եկեղեցիի հանդէպ եւ Եկեղեցիի հարստութեան ու իրաւասութիւններուն իլումին: Այս դիտանկիւնէն՝ բարեկարգութիւնը մեծ մասամբ վճռակամ թագաւորին, անոր խոհական նախարարներուն եւ ճկուն խորհրդարանին կողմէ պարտադրուած պետական արարք մըն էր: Միաժամանակ այս քաղաքական ապստամբութիւնը վերջապէս կը վերածուէր թագաւորին ամուսնութեան հարցերուն առնչուած Եկեղեցիի ընդոծին բարեկարգութեան եւ ժողովրդային կրօնական ըմբոստութեան:

Երբ Հենրի Ը. կը թագաւորէր, Անգլիոյ եկեղեցին թէ՛ կառոյցի եւ թէ՛ անձնակազմի տկարութիւն ունէր: Առաջնորդները առհասարակ թագաւորական ստրուկներ էին, որոնք իրենց պաշտօնները ստանձնած էին, որովհետեւ թագաւորութեան հաւատարիմ էին եւ թագաւորական գանձարկղին նկատառելի վնաս չէին հասցներ: Անոնք ընդհանրապէս աշխարհիկ իրաւաբաններ էին եւ ո՛չ աստուածաբաններ, ու մասնաւորաբար այս պատճառով ալ միաձայնութեամբ համաձայն կը գտնուէին Հենրիի պապականութենէն խզումին: Եպիսկոպոսներուն եւ բարձրաստիճան հոգեւորականութեան թագաւորութեան հովանաւորութեամբ նոր պաշտօններու տիրացումը սիմոնականութեան եւ այլ ախտերու պատճառ կը

դառնար եւ ծուխերը տգէտ ու աղքատ հովիւներուն ձեռքը կը ձգէր: Մինչ ծխատէր քահանաներ իրենց ուսուցելու եւ քարոզելու պարտաւորութիւններուն մէջ կը թերանային, վանական հոգեւորականութիւնը յարգելի բացառութեամբ չէր հետեւեր իր կանոնագրութեան եւ որպէս տիպար չէր ծառայեր հոգեւոր ապրումներու:

Հենրիի իշխանութեան առաջին տարիներուն հակա-կղերական շարժումը ծայր կ'առնէր: Աշխարհականներ կ'ընդ-դիմանային Եկեղեցիի տուրքերու բեռան եւ բռնատիրական հեղինակութեան թէ՛ իրենց սեփականութեան եւ թէ՛ հոգիներուն վրայ: Հակակղերականութիւնը բողոքականութեան եւ անգլիական մարդկայնականութեան ճամբայ կը հարթէր եկեղեցական բարեկարգութեան ու եղծումներու՝ աստուածա-շընչական քննադատութեան բարձումով: Մարդկայնակա-նութիւնը Անգլիա կը հասնէր ԺԵ. դարու աւարտին եւ ազդեցիկ պաշտպաններ կ'ունենար կարգ մը բարձրաստիճան հոգեւորականներու ու ազնուականներու մէջ: Յովհաննէս Գոլէթ, որ 1504-ին Լոնտոնի Սուրբ Պօղոս տաճարին տեսուչը կը դառնար, Օքսֆորտի մէջ 1496-ին արդէն իսկ Պօղոս առաքեալի նամակ-ներուն մասին մարդկայնական ոգիով կ'ուսուցէր եւ 1508-ին կը հիմնէր Սուրբ Պօղոս դպրանոցը: 1512-ին ան կը քարոզէր իր «Հոգեւորականութեան հաւաքը» նշանաւոր քարոզը եւ կը քննադատէր հոգեւորականներուն աշխարհիկ կենցաղը եւ կը բանաձեւէր բարեկարգութեան ծրագիր մը: Երազմոս եւս 1511–1514-ին Գեմպրիճի մէջ կը դասախօսէր, երբ արդէն իսկ 1499-ին առաջին անգամ ու ապա 1506-ին Անգլիա այցելած էր եւ բազմաթիւ բարեկամներ ունեցած, ներառեալ Յովհաննէս Ֆիշըրը (1459?–1535) եւ Թովմաս Մորը:

«Երազմոսեան» աստիճանական բարեկարգութեան յոյսերը ի դերեւ կ'ելլէին, երբ Լուտերի յեղափոխական գրութիւնները Անգլիա կը հասնէին եւ 1519–1520-ին լայն շրջանա-ռութեան մէջ մտնելով երիտասարդ համալսարանական-ներուն եւ Լոնտոնի ու հիւսիսային Գերմանիոյ հետ առեւտուր կատարող այլ ծովային քաղաքներու վաճառականներուն մէջ

մեծ ընդունելութիւն կը գտնէին: Շուրջ 1520-էն Գեմպրիճէն գիտնականներ «փոքր Գերմանիա» կոչուած Ուայթ Հորս պանդոկը կը հաւաքուէին նոր վարդապետութիւններու մասին կարծիքներու փոխանակում ունենալու համար: Ասոնց մէջ կը գտնուէին Անգլիոյ բողոքականութեան առաջին սերունդի ներկայացուցիչներէն Ռոպերթ Պարնէս (1495–1540), Թովմաս Պիլնի (1495?–1531), Հիւկ Լաթիմըր (1485?–1555), Յովհաննէս Ֆրիթ (1503?–1533), Մայլս Գովըրտէյլ (1488–1568), Թովմաս Գրենմըր (1489–1556), Նիկողայոս Ռիտլէյ (1500?–1555), Մատթէոս Փարքըր (1504–1575) եւ շատ հաւանաբար նաեւ Ուիլիերմ Թինտլէյ (1495?–1536). ասոնցմէ հինգը եպիսկոպոս պիտի ըլլային եւ բացի Գովըրտէյլէն ու Փարքըրէն բոլորն ալ իրենց հաւատքին համար պիտի նահատակուէին:

Այս խմբակին ամենէն ակնառու դէմքը Ուիլիերմ Թինտլէյն էր, որ Պրիւքսէլի մօտ Վիլվորտի մէջ կը նահատակուէր: 1522-ին ան կ'որոշէր Նոր կտակարանը անգլերէնի թարգմանել, սակայն Լոնտոնի եպիսկոպոս Գիւսպըրթ Թանսթըլէն անտեսելով 1524-ին կ'այցելէր Լուտերի եւ 1525-ին Քեօլնի ու Վորմզի մէջ Նոր կտակարանի գեղեցիկ անգլերէն թարգմանութիւնը կը հրատարակէր Երազմոսի յունարէն բնագիրին եւ Լուտերի գերմաներէն Աստուածաշունչին հիմամբ: 1526-ին այս թարգմանութիւնը կ'ողողէր Անգլիան՝ հակառակ իշխանութիւններուն զայն կասեցնելու արգելքին: Ան սիրալիբ ընդունելութիւն կը գտնէր մանաւանդ Լոնտոնի վաճառականներուն եւ հակակղերականներուն մէջ, որոնք «աստուածաշնչական կրօնքի» ջատագովներն էին: Անգլիոյ եկեղեցիի առաջնորդները Լուտերի ուսուցումին եւ տեղական լեզուով շրջանառութեան դրուած Աստուածաշունչին դէմ աստելութեամբ կը լեցուէին: Ֆիշըր եւ Մոր՝ ամենանշանաւոր երազմոսեանները, կը դառնային Անգլիոյ ամենատեղեղ հակալուտերականները: Իսկ, ինչպէս պիտի տեսնենք, Հենրի թագաւորի Գենթըրպըրիի արքեպիսկոպոսն ու նախարարապետը մեծապէս պիտի համակրէին լուտերականութեան ու անգլիական բողոքականութեան եւ պիտի քաջալերէին Անգլիոյ եկեղեցիի հաւասարակշռուած

բողոքականութիւնը՝ հակառակ թագաւորին աճող պահպանողականութեան եւ հակադարձութիւններուն:

Հենրի Ը. իմացական կարողութիւններով օժտուած գործնական անձ մըն էր, որ նաեւ մեծ հետաքրքրութիւն ունէր դպրոցական աստուածաբանութեան հանդէպ, կը համակրէր մարդկայնականութեան եւ ժողովրդականութիւն կը վայելէր, սակայն միաժամանակ անձնակեդրոն, յամառ եւ կասկածամիտ էր: Իր գահակալութեան սկզբնական շրջանին ան կը վայելէր հմուտ դիւանագէտ Թովմաս Վոլսիի (1474?-1530) նեցուկը, որ 1514-ին Եորքի արքեպիսկոպոս կը նշանակուէր եւ 1515-ին թագաւորին կողմէ՝ դիւանապետ ու լորտ, եւ Լեւոն Ժ. պապին կողմէ կարդինալ կ'ըլլար: 1518-ին պապը զինք նաեւ Սուրբ աթոռի մասնաւոր պատուիրակ կը դարձնէր: Այսպէսով Վոլսի Եկեղեցիի եւ պետութեան մէջ մեծ ուժ կ'ունենար, սակայն Անգլիոյ եւ իր բախտը աւելի սերտօրէն պապականութեան կ'առնչէր: Իր հերթին Հենրի եւս Սուրբ աթոռին բարեպաշտ զաւակն էր: Երբ Լուտերի գրութիւնները շրջանառութեան մէջ կը դրուէին Անգլիոյ մէջ, անոնց գործածութիւնը կ'արգիլուէր, եւ 1521-ին Հենրի Լուտերի դէմ կը հրապարակէր իր «Եօթը խորհուրդներուն հրամայականը», որուն համար Լեւոն Ժ. պապը իրեն կը շնորհէր «Հաւատքի պաշտպան» տիտղոսը:

1509-ին Հենրի կ'ամուսնանար Արակոնի Կատարինէին հետ, որ Սպանիոյ Ֆերտինանտին եւ Իզապելլային աղջիկն էր ու Հենրիի աւագ եղբոր՝ Արթըրի այրին: Յուլիոս Բ. պապ մահացած եղբոր այս այրիին վերամուսնութեան արտօնութիւն շնորհած էր 1503-ին: Նորապսակ գոյգը վեց զաւակներով կը բախտաւորուէր, սակայն միայն մէկը՝ Մարին ողջ կը մնար: 1527-ին Հենրի իր ամուսնութեան վաւերականութեան մասին կրօնական կասկածներ կը յարուցէր՝ հիմնուելով Ղետական 20.21-ին վրայ, որ եղբոր այրիին հետ ամուսնութիւնը կտրականօրէն կ'արգիլէր: Հենրիի այս կեցուածքը միայն զգացական չէր, որովհետեւ ան բաւական սիրուհիներ ունէր: Թէեւ Վարդերու պատերազմը 1485-ին աւարտած էր, սակայն Հենրիի

մահէն ետք օրինաւոր ժառանգորդ այր գահաժառանգին բացակայութիւնը կրնար քաղաքացիական նոր պատերազմի դուռ բանալ եւ քանի որ Կատարինէ շատ հաւանաբար այլեւս զուակ պիտի չբերէր, Հենրի կը փափագէր նոր կին ունենալ:

Վոլսի համաձայն էր թագաւորին ամուսնալուծումին, որովհետեւ ան կը յուսար, որ Հենրի ֆրանսացի իշխանուհիի մը հետ կ'ամուսնանար եւ այսպէսով սպանական քաղաքականութենէն հեռանալով կը փարէր ֆրանսականին: Իսկ Հենրի այլ ծրագրեր ունէր: Ան 1525-էն ի վեր կապուած էր իր սիրուհիին՝ Մարի Պոլէյնի քրոջ՝ Աննայի: Բարդ բանակցութիւններ տեղի կ'ունենային, եւ Վոլսի ամէն ճիգ կը թափէր թագաւորին ամուսնալուծումը յաջողցնելու համար, մինչ Կատարինէ արժանապատիւ կեցուածք կ'որդեգրէր՝ հակառակ իր հանդէպ ցոյց տրուած խստութեան: Կղեմէս Է. պապը գրեթէ համաձայն էր ապահարզան շնորհելու, սակայն եւրոպական քաղաքականութեան մէջ կը պարզուէր այլ զարգացում մը, որ Չարլզ Ե.-ի յաղթանակն էր, եւ պապը կը ստիպուէր կայսերական կամքին ենթարկուիլ: Չարլզ ամէն գնով կը ջանար, որ իր մօրաքոյրը՝ Կատարինէ չանտեսուէր: Հենրի կը նեղանար, որ Վոլսի չէր յաջողէր պապը համոզել եւ 1529-ին զայն դիւանապետութենէն կ'արձակէր: 29 նոյեմբեր 1530-ին Վոլսի կը մահանար Լոնտոնի ճամբուն վրայ, ուր կ'երթար դաւաճանութեան մեղքով դատուելու: Հոկտեմբեր 1529-ին Մոր դիւանապետ կը նշանակուէր. ան անմիջապէս հերետիկոսներու դէմ հալածանք կը շղթայագերծէր եւ խարոյկի մահուան կը դատապարտէր նաեւ Անգլիոյ բողոքականութեան առաջին մարտիրոսներ՝ Պիլինին եւ Ֆրիթը:

Հենրի կը շարունակէր իր ամուսնալուծումին հարցը հետապնդել եւ կ'անսար Գեմպրիճի մէջ դասախօսող եւ արդէն իսկ բողոքականութեան յարած Գրենմըրի այն առաջարկին, որ այս ուղղութեամբ պէտք էր եւրոպական համալսարաններուն կարծիքին դիմէր: 1530-ին այս մէկը եւս մասնակի յաջողութիւն կ'արձանագրէր, երբ նոյնիսկ հակապապ Ուիթընպըրկը կ'ըսէր, թէ թագաւորին Կատարինէի հետ ամուսնութիւնը օրինական

էր: Յամենայն դէպս Հենրիի եւ Գրենմըրի միջեւ կը հաստատուէր ուժեղ բարեկամութիւն մը, որ կարելոր հետեւանքներ պիտի ունենար:

Պապէն յոյսը կտրելով՝ Հենրի կ'ապաւինէր օտար լուծի թօթափումի ազգային զգացումներու արծարծումին եւ իր քաղաքական սպառնալիքին, որ եթէ պապը իր փափագը չկատարէր, ամբողջովին պիտի խզէր իր կապերը պապականութեան հետ: Յունուար 1531-ին ան ամբողջ հոգեւորական դասը կը դատապարտէր Վոլսին որպէս պապական նուիրակ ընդունելուն համար՝ հակառակ այն իրողութեան, որ ինք վաւերացուցած էր այս նշանակումը: Ան ո՛չ միայն հոգեւորականութեան ներումին համար շատ բարձր սակ կը ճշդէր, այլեւ Եորքի եւ Գենթըրպըրիի արքեպիսկոպոսներուն շնորհիւ հաղորդագրութիւն մը կը հրապարակէր, որուն մէջ հոգեւորականութիւնը կ'ըսէր, թէ Հենրի «միակ պաշտպանն ու գերագոյն գլուխն է Անգլիոյ եկեղեցիին եւ հոգեւորականութեան», որուն վրայ հոգեւորականութիւնը կը յաւելէր «այնքան, որքան Քրիստոսի օրէնքը կը թոյլատրէ» նախադասութիւնը: 15 մայիս 1532-ին խորհրդարանը կը դիմէր թագաւորին, որ բոլոր եկեղեցական օրէնքներուն պատասխանատուութիւնը ստանձնէր, եւ հոգեւորականութիւնը թագաւորին ենթարկուելով կը հաստատէր, թէ ո՛չ մէկ եկեղեցական նոր օրէնք չէր կրնար աւելնալ առանց թագաւորին արտօնութեան եւ եղած օրէնքներն ալ միայն կրնային վերատեսութեան ենթարկուիլ թագաւորին կողմէ նշանակուած հոգեւորականներու ու աշխարհականներու յանձնաժողովին կողմէ: Յաջորդ օրը Մոր կը հրաժարէր դիւանապետութենէն: Աւելի ուշ խորհրդարանը կ'որդեգրէր օրէնք մը, թէ ո՛չ մէկ տարեկան տուրք պիտի վճարուէր Հռոմի՝ առանց թագաւորին համամտութեան:

Յունուար 1533-ին Հենրի գաղտագողի կ'ամուսնանար Աննա Պոլէյնի հետ, որ յղի էր: Մարտին խորհրդարանը նոր օրէնքով մը կ'արգիլէր հոգեւոր եւ աշխարհիկ բոլոր դիմումներուն Հռոմ յղումը: Այս օրէնքը ամբողջապէս կը ջնջէր պապական հեղինակութիւնը Անգլիոյ մէջ: Մինչ այդ Հենրի

տարեկան տուրքերու Հոռմ վճարումը կը պայմանաւորէր Կդեմէս Է. պապի կողմէ Գրենմըրի՝ Գենթըրպըրիի արքեպիսկոպոս նշանակումին հաստատումով: Գրենմըր արքեպիսկոպոս կը դառնար 30 մարտին, իսկ 23 մայիսին յատենի կը լուծէր Հենրիի ու Կատարինէի ամուսնութիւնը եւ 28 մայիսին օրինական կը յայտարարէր Հենրիի ու Աննա Պոլէյնի ամուսնութիւնը: Նոր թագուհին 1 յունիսին կը թագադրուէր եւ 7 սեպտեմբերին կը ծնէր աղջիկ մը՝ իշխանուհի Եղիսաբէթ:

Մինչ այս դէպքերը տեղի կ'ունենային, 11 յուլիս 1533-ին Կդեմէս Է. Հենրին հաղորդագրկող կոնդակ մը կը հրապարակէր: Հենրի կը պատասխանէր 1534-ին խորհրդարանին մէջ որդեգրուած շարք մը օրէնքներով, որոնք կը հաստատէին, թէ պապին տրուելիք բոլոր վճարումները արգիլուած էին, բոլոր եպիսկոպոսները թագաւորին կողմէ որոշուելէ ետք պիտի ընտրուէին եւ պապին հանդէպ հնազանդութեան ու հեղինակութեան կապուած բոլոր օրէնքները ի գօրու չէին: Մայիս 1534-ին պապական գերիշխանութիւնը պաշտօնապէս կը ջնջուէր: 3 նոյեմբերին խորհրդարանը կ'որդեգրէր համբաւաւոր «Գերիշխանութեան օրէնքը», որուն համաձայն Հենրի եւ անոր յաջորդները կը համարուէին «*Անգլիոյ եկեղեցիի միակ երկրաւոր գերագոյն պետը*», առանց «*այնքան, որքան Քրիստոսի օրէնքը կը թոյլատրէ*» յաւելեալ նախադասութեան, եւ ամբողջական իշխանութիւն կը ստանային «*հերետիկոսութիւններն*» ու «*զեղծումները*» բառնալու (H. Bettenson, ed., *Documents of the Christian Church*, 2nd ed. (London, 1963), p. 322): Այս օրէնքը ձեռնադրութեան ու խորհուրդներու մատակարարումի իշխանութիւն չէր տար թագաւորին, սակայն մնացած բոլոր պարագաներուն մէջ պապը կը փոխարինէր թագաւորով: Հոռմի հետ խզումը ամբողջական կ'ըլլար, եւ այս օրէնքները ի գօրու կը դառնային: Մայիս 1535-ին Անգլիոյ զարթուգեան կամ չարթըրհաուզ միաբանութեան պատկանող խումբ մը վանականներ կ'ընդդիմանային թագաւորին գերիշխանութեան եւ խժողովօրէն կը սպանուէին: Յունիսին եւ յուլիսին Ֆիշըր եպիսկոպոս եւ նախկին դիւանապետ Մոր նոյն յանցանքով կը գլխատուէին:

Ֆիշըրի նահատակութիւնը տեսնելով՝ միւս բարձրաստիճան հոգեւորականները կ'ենթարկուէին թագաւորին:

1529–1536-ին խորհրդարանին որդեգրած բարեկարգութեան բոլոր օրէնքներուն միջ ուժը Թովմաս Գրոմուէլն էր (1485?–1540), համեստ ծագումով այս զինուորը, դրամատէրն ու վաճառականը, որ Վոլսի կ'օգտագործէր որպէս վաճառականական եւ խորհրդարանական նեցուկ: 1531-ին ան կ'անդամակցէր թագաւորական սեղմ խորհուրդին, 1534-ին կը դառնար թագաւորին գլխաւոր քարտուղարը եւ 1535-ին կը նշանակուէր թագաւորին եկեղեցական հարցերուն ընդհանուր փոխանորդը: Գրոմուէլ Եկեղեցիի եւ պետութեան մասին իր գիտութիւնը կը պարտէր Մարսիլիոս Փատովացիի *Պաշտպան խաղաղութեան*-ին. առաւել, ան լուտերականութեան կը համակրէր եւ կը ցանկար Աստուածաշունչը անգլերէնի թարգմանել: Ան «անգլիացի Մաքիաւէլի» մը չէր եւ ո՛չ ալ «խաբող եւ անարգող» մը, այլ սկզբունքի տէր եւ յաճախ անխնայ ու պարտադրաբար զեղծումներ քաջալերող մը: Ան անվերապահօրէն ենթակայ չէր թագաւորին եւ ո՛չ ալ կը փափագէր, որ ան միահեծան իշխող մը ըլլար: Ան շատ լաւ օրէնսգէտ ու դիւանագէտ էր եւ միշտ կը գործէր օրէնսդիր մարմիններուն շնորհիւ: Մեծ մասամբ իրեն կը պարտինք Անգլիոյ քաղաքական կերպարանափոխութիւնը, ուր թագաւորը կ'իշխէ խորհրդարանին շնորհիւ: Հենրիի բարեկարգութեան կողմնակիցները Գրոմուէլի մէջ կը տեսնէին իրենց այն գլխաւոր ղեկավարը, որ իր կարողութեամբ ու դիրքով կրնար թուղթի վրայ արձանագրուած օրէնքները կեանքի կոչել:

Գրոմուէլի գլխաւոր ծրագրերէն մին թագաւորութիւնը մնայուն ու անձեռնմխելի հիմնադրամով օժտելն էր, որուն համար անպայմանօրէն եկեղեցական նիւթական աղբիւրներուն կարիքը ունէր: Բարեկարգութիւնը արդէն ամեն տեղ կը գրաւէր եկեղեցական կալուածներն ու դրամը: Աւելին՝ Գրոմուէլ, Գրենմըր եւ անոնց համակիր բարեկարգիչներ կրօնական պատճառներով կ'ընդդիմանային վանականութեան: 1535-ին Գրոմուէլ յանձնաժողով մը կը նշանակէր,

որպեսզի վանքերու կացութեան մասին զեկոյց պատրաստէր: Հապճեպ եւ միակողմանի պատրաստուած զեկոյցը 1536-ին խորհրդարան կը ներկայացուէր եւ վանքերու մասին մուգ պատկեր կը պարզէր: Խորհրդարանը բոլոր վանական հաստատութիւնները թագաւորին եւ «անոր ապագայ ժառանգորդներուն» կը փոխանցէր՝ այսպէսով ապահովելով տարեկան նուագոյնը 200 փաունտ: Գրեթէ 300 վանք այս տնօրինութեան կ'ենթարկուէր, թէեւ անոնցմէ մօտ 80-ը ժամանակաւոր ներումի կ'արժանանար: Յամենայն դէպս, մինչեւ 1540 բոլոր մեծ վանքերը «կամաւորաբար» իրենց դուռերը կը փակէին: 1536–1540-ին Անգլիոյ եւ Ուելլզի մէջ փակուած վանքերը շուրջ 800-ի կը հասնէին եւ շուրջ 9000 վանական, եղբայր եւ քոյր իրենց վանքերէն կ'արտաքսուէին:

Վանքերու փակումը հոգեւորականութեան եւ ժողովուրդին կողմէ ընդդիմութեան չէր հանդիպէր: Վանական կալուածները վաճառող կայսերական պաշտօնեաները մեծ մասամբ կաթոլիկ աշխարհականներ էին: 1536-ին եւ 1537-ին հիւսիսային Անգլիոյ մէջ տեղի կ'ունենային «Շնորհի ուխտագնացութիւն» անունով բնորոշուած չորս ապստամբութիւններ, որոնք անմիջապէս կը զսպուէին: Ասոնք թէեւ կրօնական պահպանողականութեան պիտակին տակ կը կազմակերպուէին, սակայն խորքին մէջ տնտեսական ու աշխարհիկ հանգամանք ունէին եւ վանքերուն ու պապականութեան անունով մղուած «կրօնական պատերազմներ» չէին: Առաւել, վանքերու փակումը ընկերային եւ տնտեսական աղէտներու դուռ չէր բանար: 1540-ականներուն Անգլիոյ մէջ տեղի ունեցած գիւղացիական ըմբոստութիւնները բնաւ առնչութիւն չունէին վանքերու փակումին հետ:

Յունուար 1536-ին կը մահանար Արակոնի Կատարինէն եւ Հենրի մասամբ կը ձերբագատէր Չարլզ Ե.-ի միջամտութեան սարսափէն: Այս միջոցին Հենրի կ'ապրէր այլ յուսախաբութիւն մը, երբ Աննա Պոլէյն արու ժառանգորդ չէր ծներ եւ առաւել՝ պոլէյնականներուն առնչութեամբ Գրոմուէլ կասկածներ կը սնուցէր թագաւորական սեղմ խորհուրդին մէջ: Մայիս 1536-ին

Պոլեյն անբարոյականութեամբ կ'ամբաստանուէր եւ 18 մայիսին կը գլխատուէր: 17 մայիսին Գրոմուէլ արդէն անվաւեր հռչակած էր Պոլեյնի Հենրիի հետ կնքած ամուսնութիւնը: 30 մայիսին Հենրի կ'ամուսնանար Ճէյն Սիմուրի հետ, որ ծնունդ կու տար տղայ զաւակի մը, որ 12 հոկտեմբեր 1537-ին Եդուարդ անունով կը մկրտուէր: 12 օր ետք Սիմուր կը մահանար:

Մինչ Հենրիի Հռոմի հանդէպ ունեցած ընդդիմութիւնը կը սաստկանար, բողոքականութիւնը կը տարածուէր եւ մեծաթիւ հետեւորդներ կը շահէր վերին ու միջին խաւերուն մէջ, ներառեալ Սիմուր գերդաստանը, որոնց աղջիկն էր Հենրիի երրորդ թագուհին: 1530-ականներու աւարտին, Անգլիոյ մէջ Բարեկարգութիւնը մի միայն պետական երեւոյթ չէր: Գրոմուէլ եւ Գրենմըր բողոքականութեան տարածումին մէջ մեծ դերակատարութիւն կ'ունենային, սակայն Հենրի կը շարունակէր ուղղափառ կաթոլիկ մնալ՝ պապին հեղինակութիւնը իրեն փոխանցուած ըլլալու պայմանով: 1535-ին եւ 1536-ին Գրոմուէլ պատուիրակներ կը դրկէր Ուիթընպըրկ՝ լուտերական ղեկավարներու հետ վարդապետական խօսակցութիւններ ունենալու համար, սակայն Հենրի հետամուտ չէր բողոքական հաւատքի բանաձեւ մը որդեգրելու: 1536-ին, երբ Անգլիոյ եկեղեցին Հաւատքի հանգանակ ունենալու ստիպողութեան տակ կը գտնուէր, Հենրի կը բանաձեւէր իր «10 յօդուածներ»-ը եւ առաւելագոյն զիջումը կը կատարէր բողոքականութեան: Ան կ'ըսէր, թէ հաւատքի հեղինակութեան աղբիւրներն էին Աստուածաշունչը, Տիեզերական երեք հաւատամքները եւ «Տիեզերական» առաջին չորս ժողովները: Կը հաստատէր երեք խորհուրդ՝ մկրտութիւն, ապաշխարութիւն եւ Վերջին ընթրիք, մնացեալ չորսը ո՛չ կ'ընդունուէին եւ ո՛չ ալ կը մերժուէին: Արդարացումը կը կատարուէր միայն Քրիստոսի հանդէպ եղած հաւատքով, սակայն խոստովանութիւնն ու թողութիւնը եւ բարեգործութիւնը անհրաժեշտ էին: Քրիստոս ֆիզիքապէս ներկայ էր Վերջին ընթրիքին մէջ: Սրբանկարները չափաւորապէս պէտք էր մեծարուէին: Սուրբերու պէտք էր դիմուէր, սակայն ո՛չ «որովհետեւ անոնք Քրիստոսէ շուտ կը լսէին մեզ»:

Ննջեցեալներուն համար մատուցուած սուրբ պատարագները փափագելի էին, սակայն կը մերժուէր այն գաղափարը, թէ «Հռոմի եպիսկոպոսը» քաւարանէն կրնար հոգի մը փրկել:

Այս օրերու Գրոմուէլի ամենակարեւոր իրազործումը կը հանդիսանար Գրենմըրի քաջալերած անգլերէն Աստուածաշունչերու հրատարակութիւնը: 1535-ին աքսորական Գովըրտէյլ առաջին ամբողջական անգլերէն Աստուածաշունչը կը հրատարակէր հաւանաբար Ցիւրիխի մէջ. նոր Աստուածաշունչը նոյն տարին Անգլիա կը հասնէր եւ կը վերահրատարակուէր: 1537-ին Յովհաննէս Ռոճըրզի (1500?–1555) թարգմանած երկրորդ ամբողջական անգլերէն Աստուածաշունչը կը հրատարակուէր Լոնտոնի մէջ՝ ծանօթ որպէս «Մատթէոսի աստուածաշունչ», որովհետեւ Ռոճըրզ «Թովմաս Մատթէոս» կեղծանունը օգտագործած էր: Գրենմըր,– Գրոմուէլի շնորհիւ,– օգոստոս 1537-ին զայն թագաւորութեան մէջ վաճառելու համար՝ ձեռք կը բերէր թագաւորին արտօնութիւնը: Անմիջապէս յետոյ ան նաեւ Գովըրտէյլի Աստուածաշունչին համեմատաբար աւելի աժան վաճառքին արտօնագիրը եւս կ'ապահովէր: 1538-ին Գրոմուէլ կը խրախուսէր եպիսկոպոսները, որ աշխարհականներուն Աստուածաշունչի ընթերցումը քաջալերէին եւ կը հրամայէր, որ ժամկէտ ճշդուէր իւրաքանչիւր հովիւէ անգլերէն Աստուածաշունչը տրամադրելու իր ժողովուրդին: Մակայն այս նոր թարգմանութիւնները անբաւարար նկատելով՝ Գրոմուէլ կը ձեռնարկէր Գովըրտէյլի Աստուածաշունչին վերատեսութեան: Ապրիլ 1539-ին կը հրատարակուէր Գովըրտէյլի վերատեսեալ Աստուածաշունչը՝ ծանօթ որպէս «Մեծ աստուածաշունչը», որուն 1540-ի երկրորդ հրատարակութեան Գրենմըր կ'աւելցնէր նշանաւոր յառաջաբան մը: Անգլերէն Աստուածաշունչին ժողովրդականացումը մեծապէս կը նպաստէր Անգլիական բարեկարգութեան տարածումին եւ կարելիութիւնը կու տար ժամանակակից Եկեղեցիին ինքզինք տեսնելու Նոր կտակարանի քրիստոնէութեան հայելիին մէջ:

Անգլերէն Աստուածաշունչերու հրատարակութեան գուգահեռ՝ 1544-ին լոյս կը տեսնէր Գրենմըրի հեղինակած երգա-

րանը, որ թագաւորական հրամանով կը գործածուէր եկեղեցիներուն մէջ: Այս երգարանը նախաքայլն էր Գրեւորքի նախաձեռնած աղօթագիրքին, որուն պատրաստութեան կը նուիրուէր 1540–1547-ին:

1536-էն Հենրի թագաւորը արտաքին միջամտութիւններէ զերծ կը մնար, որովհետեւ 1536–1538-ին Չարլզ Ե. եւ Ֆրանսիս Ա. դարձեալ իրարու դէմ կը պատերազմէին: Երբ յունիս 1538-ին անոնք խաղաղութեան դաշինք կը կնքէին, Հենրի վտանգալից կացութիւն կը դիմագրաւէր: Պապը Ֆրանսայէն եւ Սպանիայէն միացեալ յարձակում կը պահանջէր ապստամբ Հենրիին դէմ: Հենրի, ի գին կարելոր զիջումներու, դիւանագիտականօրէն այս վտանգը կը շրջանցէր: Ան ցոյց կու տար, թէ ուղղափառ կաթոլիկ էր ամեն բանով՝ բացի պապին վերապահուած դիրքէն, եւ վերջնականօրէն կը բանաձեւէր Անգլիոյ եկեղեցիի հաւատքը: Ապա՝ յունիս 1539-ին, խորհրդարանը կ'որդեգրէր «Վեց յօդուածներ»-ը, որուն համաձայն՝ գոյացափոխութիւնը կը դառնար Անգլիոյ եկեղեցիի վարդապետութիւնը եւս եւ մերժումի պարագային՝ խարոյկի մահուան սպառնալիքը կ'ընդգրծուէր. կը մերժէր քահանաներու ամուսնութիւնը եւ հացով ու գինիով սուրբ հաղորդութեան մատակարարումը. կուսակրօնութեան ուխտը պարտադիր կը դարձնէր. առանձին սուրբ պատարագներն ու խոստովանութիւնները կը հրահանգէր: Այս բոլորը, որոնք ծանօթ էին որպէս «վեց թել ունեցող արիւնտ գաւազանը», ի զօրու կը մնային մինչեւ Հենրիի մահը: Քաղաքական ճակատի վրայ Գրոմուէլ կը յանձնարարէր Հենրիին այնպիսի ամուսնութիւն կնքել, որ գերման բողոքականներուն հաճելի ըլլար եւ զինք միացնէր Չարլզ Ե.-ի ընդդիմադիրներուն հետ: Գլեւեսի Աննան,– Գլեւեսի Ուիլերմ դուքսին եւ Սաքսոնիոյ Յովհաննէս Ֆրետերիքի կնոջ քոյրը,– յարմարագոյն թեկնածուն կը նկատուէր ամուսնութեան, որ տեղի կ'ունենար 6 յունուար 1540-ին:

Երբ առաջին անգամ կը տեսնէր Աննան, Հենրի անոր գրաւչութեան չէր հիանար եւ կարճ ժամանակ ետք ամուսնալուծում կը պահանջէր: Գրոմուէլ այս հարցը կը ձգձգէր,

որովհետեւ գիտէր, թէ թագաւորը կը փափագէր ամուսնանալ Կատարինէ Հովըրտի հետ, որ Նորֆոլքի դուքս Թովմաս Հովըրտի զարմուհին էր եւ Թովմաս թագաւորական սեղմ խորհուրդին մէջ կաթոլիկ ազդեցիկ մեծամասնութեան առաջնորդն էր: Այս խորհուրդին մէջ Թովմասի գլխաւոր դաշնակիցը Ուինչըսթըրի Ստեփանոս Կարտինըր եպիսկոպոսն (1490?–1555) էր: Գրոմուէլ առաջին անգամ ըլլալով լրջօրէն բախումի մէջ էր թագաւորին հետ, որուն կրօնական կեցուածքը Թովմասի եւ Կարտինըրի ազդեցութեան տակ կը գտնուէր: Գրոմուէլ անմիջապէս պաշտօնանկ կ'ըլլար, 10 յունիս 1540-ին կը ձերբակալուէր եւ առանց դատավարութեան խորհրդարանական վճիռով որպէս հերետիկոս եւ դաւաճան կը դատապարտուէր: Թագաւորին ամենահաւատարիմ ծառան 28 յուլիսին կը գլխատուէր: Մինչ այդ, 10 յուլիսին, Գրենմըր Հենրիի եւ Գլենէսի Աննայի ամուսնութիւնը անվաւեր կը նկատուէր, եւ Աննա կը գոհանար՝ ստանալով կարգ մը թագաւորական կալուածներ: 9 օգոստոսին Հենրի Կատարինէ Հովըրտի հետ կ'ամուսնանար, սակայն նոյեմբեր 1541-ին նոր թագուհին անբարոյականութեամբ կ'ամբաստանուէր եւ փետրուար 1542-ին կը գլխատուէր: Յուլիս 1543-ին Հենրի կ'ամուսնանար Կատարինէ Փարրի հետ, որ Հենրիէն աւելի երկար կ'ապրէր: Հենրի կը մահանար 28 յունուար 1547-ին: Անոր կը յաջորդէր զաւակը՝ Եդուարդ Զ. (1547–1553):

Հենրիի մահուան օրերուն Բարեկարգութեան համակիրները տիրական էին թագաւորական սեղմ խորհուրդին մէջ: Կաթոլիկութեան վերջին քաղաքական ջատագով Հովըրտ գերդաստանը Հենրիին հինգերորդ թագուհիին անբարոյականութեամբ եւ Թովմաս Հովըրտի զաւակին՝ Հենրի Հովըրտի արկածախնդրութիւններով կը կորսնցնէր իր ազդեցութիւնը, երբ մանաւանդ Հենրի Հովըրտ եւս 19 յունուար 1547-ին որպէս դաւաճան կը գլխատուէր: Իսկ Թովմաս Հովըրտ կը դատապարտուէր բանտարկութեան: Ստեփանոս Կարտինըր եւս յունիս 1548-ին կը բանտարկուէր եւ 1551-ին պաշտօնագուրկ կ'ըլլար: Բողոքական խմբակին ղեկավարն էր Հերթֆորտի

իշխան Եդուարդ Միմուրը՝ Ճեյն Միմուրի եղբայրը եւ նոր թագաւորին մօրեղբայրը: Այս խմբակը կը վայելէր նաեւ Կատարինէ Փարրի եւ անոր շրջանակին նեցուկը, որոնք միաժամանակ երազմուսեան մարդկայնականութեան եւ Գրենմըրի առաջարկած չափաւորական Բարեկարգութեան համակիր էին: Միմուրեան խմբակին տիրութիւնն ու Եդուարդ թագաւորին Բարեկարգութեան հանդէպ ունեցած բարեպաշտութիւնը կարելիութիւն կու տային եռանդուն քարոզիչներուն Անգլիոյ եկեղեցին հռոմէական ու Հենրի թագաւորի ըմբռնած կաթոլիկութենէն հեռացնելու եւ բացայայտօրէն բողոքականութեան մերձեցնելու: Այս ուղղութեամբ՝ Անգլիոյ գործուն բողոքականները մեծապէս պարտական էին զուիցերիացի եւ գերման բարեկարգիչներ Պուսերի, Չուինկլիի, Պուլինկըրի եւ Կալվինի, աւելի քան Լուտերի եւ լուտերական աստուածաբաններուն: Եդուարդի գահակալութեան աւարտին՝ իր հաւատքի խոստովանութեամբ եւ գործնականապէս Անգլիան կը դառնար բողոքական երկիր:

Եդուարդ Զ. ինը տարեկանին թագաւոր կ'ըլլար: Հետեւաբար իշխանութիւնը կը գտնուէր հերթֆըրտներուն ազդեցութեան տակ եղող թագաւորական սեղմ խորհուրդին ձեռքը, որ թագաւորութեան պաշտպանն ու Եդուարդ Միմուրը որպէս Սոմըրսըթի դուքս հաստատողը կը դառնար: Միմուր ընդհանրապէս ճանչցուած էր որպէս կարող զինուոր մը, սակայն տկար քաղաքագէտ մը, որ միաժամանակ զրկեալներու պաշտպանն էր եւ այս օրերուն փառքի հետամուտ կը դառնար: Ան երկու տարի իշխանութիւնը միահեծանօրէն իր ձեռքը կը պահէր եւ այս ժամանակաշրջանին ծայրայեղ բողոքականութիւնը Անգլիա կը ներթափանցէր: 1547-ին խորհրդարանը կը ջնջէր նախկին հերետիկոսութեան եւ Հենրիի յաւելած դաւաճանութեան օրէնքները, յետս կը կոչէր «Վեց յօդուածներ»-ը, Աստուածաշունչի հրատարակութեան, ընթերցումի ու ուսուցումի արգելքը կը վերցնէր եւ կը հրահանգէր սուրբ հաղորդութեան ընթացքին գինիի մատակարարումը աշխարհականներուն: Նոյն տարին յարքունիս կը գրաւուէին եկեղեցապատկան

վերջին կալուածները եւս, որոնք այն մատուռներն էին, ուր զանոնք կառուցողներու հոգիներուն համար հոգեհանգստեան սուրբ պատարագներ կը մատուցուէին: Ասոնց կը յաջորդէին մատուռներու, եկեղեցիներու, անկելանոցներու եւ կրօնական եղբայրակցութիւններու ու կազմակերպութիւններու պատկանող կալուածներուն գրաւումը: 1548-ին սրբանկարներու գործածութիւնը եկեղեցիներուն մէջ կը խափանուէր: 1549-ին օրինական կը դառնար քահանաներուն ամուսնութիւնը:

Ստեղծուած շփոթը փարատելու, բարեկարգութիւնները շարունակելու եւ կարգապահութիւնը պարտադրելու համար՝ 21 յունուար 1549-ին խորհրդարանը կ'որոշեցրէր «Միաձեւութեան օրէնքը» եւ կը պարտադրէր Հասարակաց անգլերէն աղօթագիրքի գործածութիւնը: Այս աղօթագիրքը, ծանօթ որպէս «Եդուարդ Զ.-ի առաջին աղօթագիրք», մեծ մասամբ կը պարտինք Գրենմըրի, որ օգտագործած էր Անգլիոյ Միջին դարերու արարողութիւնները, 1535-ին Գուինոնէսի Ֆերնանտէզ կարդինալին հրատարակած հռոմէական ժամագիրքը եւ Քեօլնի Հերման Վիէտ արքեպիսկոպոսին 1543-ին հրատարակած աղօթագիրքը: 1549-ի աղօթագիրքին մէջ գտնուած բազմաթիւ հին ծեսեր, ինչպէս՝ ննջեցեալներուն կարգը, թաղումի ընթացքին սուրբ հաղորդութեան հաւատացեալներուն մատակարարումը, մկրտութեան ընթացքին դրոշմն ու Սատանայէն հրաժարումը եւ հիւանդներու օծումը, անմիջապէս կը դադրէին գործածութենէ: Միջին դարերու եկեղեցական զգեստները առայժմ կը պահպանուէին: Սուրբ պատարագի ընթացքին արտասանուած բանաձեւին մէջ յստակ կը նշուէր, թէ հաւատացեալը Քրիստոսի մարմինով եւ արիւնով կը հաղորդուէր:

Մինչ այդ Եդուարդ Միմուր քաղաքական բարդութիւններ կը դիմագրաւէր: Սկովտիոյ մէջ Ֆրանսայի ազդեցութեան աճը տեսնելով՝ ան բրիտանական երկու կայսերական ընտանիքներու միացումին համար կը նպատակադրէր Եդուարդ թագաւորը ամուսնացնել սկովտիացի իշխանուհի Մարի Մթիուրթի հետ, որպէսզի վերջինս «սկովտիացիներու թագուհին» դառնար: Իր նպատակին հասնելու համար ան Սկովտիա

կը ներխուժեր եւ 10 սեպտեմբեր 1547-ին Փինքիի մէջ ծանր պարտութեան կը մատնէր սկովտիացիները: Սակայն զայրացած սկովտիացիներ Սթիուըրթը կ'ամուսնացնէին Ֆրանսայի գահաժառանգ եւ ապագայի Ֆրանսիս Բ.-ի հետ, ու այս մէկը կարեւոր նշանակութիւն կ'ունենար Բարեկարգութեան Սկովտիոյ մէջ հաստատումին համար: Սթիուըրթ Ֆրանսա կը փոխադրուէր եւ ֆրանսական ուժեղ բանակը կը գրաւէր Անգլիոյ հիւսիսային սահմանը: Սիմուրի այս ձախող քայլը նաեւ տնտեսական մեծ վնաս կը պատճառէր, երբ մանաւանդ Անգլիա դրամական անկում եւ գիւղացիական դժգոհութիւն կը դիմագրբաւէր: Թէեւ խորհրդարանը կը միջամտէր՝ փրկելու համար հասարակաց հողատարածքները, սակայն 1549-ին հարաւային Անգլիոյ մէջ ծայր կ'առնէին շարք մը գիւղացիական ապստամբութիւններ: Ամենալուրջ ապստամբութիւնը տեղի կ'ունենար Նորֆոլքի մէջ՝ Ռոպերթ Գեթ վաճառականին գլխաւորութեամբ, որը վերջապէս կը զսպուէր Վորուիքի Յովհաննէս Տուտլի իշխանին կողմէ: Սիմուր քաղաքական մեծ սխալ կ'ընէր այս ապստամբութիւնը անձամբ չզսպելով եւ այս ճակատագրական քայլը Տուտլիի վստահելով:

1549-ի ապստամբութիւնները Եդուարդ Սիմուրի ազդեցութիւնը զգալիօրէն կը տկարացնէին: Թագաւորական սեղմ խորհուրդին գրեթէ բոլոր անդամները իր դէմ կ'ելլէին, եւ ան հոկտեմբեր 1549-ին պետական հարուածով պաշտօնանկ կ'ըլլար: Այս բոլորին ղեկավարը Տուտլին էր, որ փետրուար 1550-ին Սիմուրի կը յաջորդէր, սակայն բնաւ «Թագաւորութեան պաշտպան» տիտղոսին չէր տիրանար: Ան թէեւ Սիմուրը մահուան դատապարտութենէն կը փրկէր պետական հարուածի ատեն, սակայն 1552-ին կը յաջողէր զայն գլխատել տալ, որովհետեւ Սիմուր բնաւ իր հակառակորդին ուժը հաշուի չէր առած: Հակադրուելով Սիմուրի բռնատիրական ղեկավարութեան՝ Տուտլի հաւաքական ղեկավարութիւն կը վարէր թագաւորական սեղմ խորհուրդին շնորհիւ եւ իր իշխանութիւնը կ'ենթարկէր վարչական ու տնտեսական կարեւոր բարեկարգումներու: Տուտլիի բողոքականութիւնը թէեւ մի-

միայն քաղաքական հանգամանք ուներ, սակայն ան, անձնական համոզումներէ եւ թագաւորութեան շահերէն մեկնելով, աւելի կը համակրէր ծայրայեղ բարեկարգիչներուն: Ուժեղ բողոքական թագաւորի մը նեցուկը վայելելով՝ Տուտիլի երեք տարիներու իշխանութիւնը Անգլիան կը վերածէր Զուիցերիական բարեկարգութեան հետեւող բողոքական երկիրի:

1549-ի աղօթագիրքը ժողովրդականութիւն չէր գտներ: Մասնաւորաբար Տեւոնի եւ Գորնվոլի մէջ պահպանողականներ կ'ընդդիմանային անոր գործածութեան: Բողոքականներ անոր մէջ կաթոլիկ տարրերու ճոխութիւն կը նկատէին եւ Գրենմըր եւս կը բաժնէր այս տեսակէտը: Այս քննադատութեան կը միանային 1547-էն Անգլիա ապաստանած համաւար բողոքականներ՝ իտալացի Պետրոս Մարթիր (1500–1562) եւ Պերնարտինօ Օչինօ (1487–1564), լեհ Յովհաննէս Լասքի (1499–1560) եւ մանաւանդ Մարթին Պուսեր Սթրազպուրկցի, որ 1551-ին կը հեղինակէր *Գրաքննութիւն* հատորը, ուր ցոյց կու տար 1549-ի աղօթագիրքին սխալները: Գրենմըր եւ գործակիցները կը վերատեսէին աղօթագիրքը եւ կը վերահրատարակէին ապրիլ 1552-ի «Միաձեւութեան օրէնքին» հնազանդելով: Այս երկրորդ աղօթագիրքին մէջ հին ծէսերէն շատ բան կը զեղչուէր: Նննջեցեալներուն կարգը դուրս կը հանուէր, խորանը սուրբ հաղորդութեան սեղանով կը փոխարինուէր, Վերջին ընթրիքին համար փոխան նշխարի կ'օգտագործուէր պարզ հաց, Միջին դարերու եկեղեցական զգեստներու գործածութիւնը լրի կ'արգիլուէր ու միայն քահանայական շապիկը կ'արտօնուէր եւ սուրբ հաղորդութեան մատակարարումին համար նոր դրութիւն կը մշակուէր՝ գուինկլիականութեան համադրութեամբ:

Գրենմըր նաեւ երկար ժամանակէ ի վեր հաւատքի բանաձեւումով զբաղած էր եւ թագաւորական սեղմ խորհուրդին հրամանով 1552-ին իր աշխատանքը կը ներկայացնէր վեց աստուածաբաններու, որոնց մէջ կը գտնուէր Յովհաննէս Նաքս: Արդիւնքը կ'ըլլար «42 յօդուածներ»-ու խմբագրումը, որ 12 յունիս 1553-ին երիտասարդ թագաւորին կողմէ կը վաւերացուէր եւ գործածութեան կը դրուէր: «42 յօդուածներ»-ը

երկրորդ աղօթագիրքէն շատ աւելի բողոքական էին, թէև բողոքական ծայրայեղութեան եւ աւանդական կաթոլիկութեան դէմ խմբագրուած էին: 1552-ին Գրենմըր կը պատրաստէր նաև վերատեսուած կանոնագիրքը, որ սակայն ո՛չ թագաւորին եւ ո՛չ ալ խորհրդարանին կողմէ գործածութեան դրուելու արտօնութեան չէր արժանանար: Մինչ այդ 1550-էն եպիսկոպոսական թափուր աթոռները կը լեցուէին համբաւաւոր բարեկարգիչներով եւ եղուարդեան եպիսկոպոսութիւնը կ'ունենար բողոքական ծայրայեղ դրոշմ:

Տուտլի շատ լաւ գիտէր, թէ իր դիրքը կախեալ էր թագաւորէն եւ Մարի Թուտըրը գահէն հեռու պահելէն: 1553-ի ամառը յայտնի կ'ըլլար, որ Եղուարդ թագաւոր թոքախտէ կը տառապէր: Շատ հաւանաբար նաև Եղուարդի թելադրութեամբ՝ Տուտլի կը փորձէր Անգլիոյ եկեղեցին բողոքական պահելու համար արմատական քայլի դիմել: Հենրի Ը-ի կտակին համաձայն՝ գահը կը փոխանցուէր Եղուարդի, Մարիի եւ Եղիսաբէթի, այս յաջորդականութեամբ, եւ երբ Թուտըր շառաւիղը դադրէր՝ ամենաերիտասարդը եղող Մարիով, Կրէյ գերդաստանի ժառանգորդները կը դառնային գահին օրինական տէրը: 11 յունիս 1553-ին Եղուարդ կը ժառանգագրկէր իր Մարի ու Եղիսաբէթ կէս-քոյրերը եւ իրեն յաջորդ կը նշանակէր Ճէյն Կրէյը, որ Տուտլիի աւագ տղուն՝ Կիլտֆորտ Տուտլիի կինն ու Հենրի Ը-ի քրոջ՝ Մարիի թոռնուհին էր: Գրենմըր կը պարտաւորուէր այս նշանակումը հաստատել: 6 յուլիս 1553-ին Եղուարդ Զ. կը մահանար:

Այս ծրագիրը կը ձախողէր: Տուտլի չէր յաջողէր Մարին չեղոքացնել եւ այս թաքուն ծրագիրը երեւան կ'ելլէր: Նոյնիսկ Անգլիոյ ամենաբողոքական շրջանը նկատուող Լոնտոնը Մարիին նեցուկ կը կանգնէր: Ժողովուրդը խաղաղութեան, միութեան ու օրինական յաջորդութեան կողմնակից էր եւ ո՛չ քաղաքացիական պատերազմի: Մարին գահ կը բարձրանար, եւ Տուտլի կը գլխատուէր՝ մերժելով իր բողոքական ըլլալը: Ստեփանոս Կարտինըրը բանտէն կ'ազատուէր, Ուինչըսթըրի աթոռին վրայ կը վերահաստատուէր եւ դիւանապետ կը

դառնար: Գրենմըր եւ բողոքական եպիսկոպոսներ կը բանտարկուէին: 1553-ին խորհրդարանը Մարիի յաջորդականութիւնը կը վաւերացնէր անոր մօր՝ Հենրի Ը.-ի հետ ամուսնութիւնը օրինաւոր նկատելով: Եղուարդ Զ.-ի ներմուծած եկեղեցական օրէնքները կը ջնջուէին, եւ հասարակաց պաշտամունքը կը վերահաստատուէր Հենրի Ը.-ի վերջին օրերուն նմանութեամբ: Սակայն 1534-ի «Գերիշխանութեան օրէնքը» տակաւին ի գօրու կը մնար: Մարի զգուշաւորութեամբ կը գործէր՝ հետեւելով իր զարմիկին՝ Չարլզ Ե. կայսրի դեսպան Սիմոն Ռենարտի խրատին: Ռենարտ ամեն գինով կը փորձէր նախ ապահովել Մարիին ամուսնութիւնը Չարլզ Ե.-ի զաւակին՝ Փիլիպպոսի հետ, որ շուտով Սպանիոյ Փիլիպպոս Բ. թագաւորը պիտի դառնար: Այս ամուսնութիւնը կը կնքուէր 25 յուլիս 1554-ին, սակայն բնաւ ժողովրդականութիւն չէր վայելէր, որովհետեւ արտաքին միջամտութեան վտանգ կը սպառնար Անգլիոյ:

Հակառակ այն իրողութեան, որ Բարեկարգութեան համակիր եպիսկոպոսներ պաշտօնանկ կ'ըլլային, սակայն Հռոմի հետ հաշտութեան չէր նախաձեռնուէր: 1553-ի աւարտէն մինչեւ 1555-ի կէսը շուրջ 800 հոգեւորական եւ աշխարհական բողոքական կ'ապաստանէր Գերմանիոյ եւ Զուիցերիոյ Էմտըն, Ֆրանքֆուրթ, Սթրազպուրկ, Պազէ, Յիւրիխ եւ Ժնեւ քաղաքները, ուր բարեկարգեալ բողոքականութեան աշակերտած էին: Լուտերական նահանգները Մարիի կողմէ աքսորուած այս բողոքականներուն հանդէպ անհիւրընկալ էին՝ հերետիկոս նկատելով զանոնք եւ վախնալով անոնց ապաստան տալու քաղաքական հետեւանքներէն: Այս ապաստանեալներուն ամենակարեւոր իրագործումներէն մէկը կ'ըլլար Ժնեւի աստուածաշունչին հրատարակութիւնը՝ ապրիլ 1560-ին: Կալվինական ազդեցութիւն պարունակող այս Աստուածաշունչը Եղիսաբեթի գահակալութեան շրջանին շատ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր, մինչեւ որ 1611-ին հրատարակուէր զայն փոխարինող «Վաւերացեալ» տարբերակը:

Մինչ անգլիացի բարեկարգիչները աքսորի մեջ կը գտնուէին, Մարի կամաց-կամաց կը նախաձեռնէր կաթոլիկութեան վերահաստատումին՝ արթնցնելով եկեղեցական կալուածներու վերագրաւումին սարսափը: Երբ վստահութիւն կը ստանար, թէ պապականութիւնը եկեղեցական կալուածներուն վերատիրանալու հետամուտ չէր, ան կ'արտօնէր, որ Հենրի Ը-ի գարմիկը՝ Ռէճինըլտ Փոլ կարդինալ (1500–1558), դառնար Անգլիոյ պապական նուիրակը: Խորհրդարանը կը վերահաստատէր պապական հեղինակութիւնը, եւ 3 նոյեմբեր 1554-ին Փոլ անգլիացիները հերետիկոսութենէ կը ձերբազատէր ու Հռոմէական հնազանդութեան կ'ենթարկէր: Ապա, խորհրդարանը հերետիկոսութեան դէմ եղած նախկին օրէնքները կը վերահաստատէր եւ ջնջելով Հենրի Ը-ի եկեղեցական օրէնսդրութիւնը՝ Եկեղեցին 1529-էն առաջ ունեցած իրավիճակին կը վերադարձնէր՝ վերապահելով եկեղեցական կալուածները ներկայ սեփականատէրերուն:

Կը սկսէր խիստ հալածանք մը, որուն առաջին զոհը կը դառնար Աստուածաշունչի թարգմանիչ Յովհաննէս Ռոճըրզ, որ ժողովրդային աննախընթաց խանդավառութեամբ 4 փետրուար 1555-ին Լոնտոնի մէջ խարոյկի մահուան կը դատապարտուէր: Մինչեւ տարեվերջ Անգլիոյ զանազան քաղաքներուն մէջ նման նահատակներուն թիւը կը հասնէր 75-ի: 16 հոկտեմբերին խարոյկով իրենց մահկանացուն կը կնքէին նաեւ Վորչեսթըրի Հիւկ Լաթիմըր եւ Լոնտոնի Նիկողայոս Ռիտլէյ եպիսկոպոսները: Այլ նշանաւոր նահատակ մը կը դառնար Կլուչեսթըրի եւ Վորչեսթըրի նախկին եպիսկոպոս ու Զուինկլիական կամ Զուիցերիական բարեկարգութեան նշանաւոր դէմքերէն Յովհաննէս Հուփըր: Մարի եւ Ստեփանոս Կարտինըր կ'ուզէին մանաւանդ հարուածել բողոքական հոգեւորականութեան գերագոյն ներկայացուցիչ Գրենմըր արքեպիսկոպոսը: Թէեւ Գրենմըր սկզբունքի տէր մարդ էր, սակայն միւս նահատակ բարեկարգիչներուն նման հերոսական ոգիի տէր չէր: 25 նոյեմբեր 1555-ին ան Հռոմի կողմէ կը հաղորդագրուէր, եւ Ռէճինըլտ Փոլ զայն որպէս Գենթըրպըրիի արքեպիսկոպոս կը

փոխարիներ: Գրենմըր այժմ անտանելի տագնապ կը դիմագրբաւեր: Ինք Հենրի Ը.-ի օրերուն ընդունած էր, թէ Անգլիոյ գահակալը Անգլիոյ եկեղեցիի գերագոյն պետն էր, իսկ հիմա, որ ամբողջ էութեամբ բողոքական էր, չէր ուզեր կաթոլիկ գահակալի մը նոյն իրաւասութիւնը շնորհել: Սակայն ան տեղի կուտար եւ կը յայտարարէր, թէ օրէնքով սահմանուած պապական հեղինակութիւնը կ'ընդունէր: Մարի ամեն գինով կ'ուզէր ոչընչացնել Գրենմըրը, որ իր մայրը պոռնիկ եւ զինք պոռնիկի զաւակ նկատած էր: Ան պէտք է սպանուէր, սակայն այնպիսի ժողովրդական ոճով, որ բողոքականութիւնը եւս անոր մահով անարգուէր: Գրենմըր կը պարտաւորուէր նաեւ գիրով բողոքականութիւնը ուրանալ, սակայն Օքսֆորտի մէջ մահուան դատապարտութեան օրը, 21 մարտ 1556-ին, բացառիկ կորովով կը լեցուէր: Ան իր կատարած բոլոր զիջումներէն ետ դարձ կը կատարէր, իր բողոքական հաւատքը կը յայտարարէր եւ բողոքականութեան ուրացումը ստորագրած ձեռքը կրակի մէջ պահելով զայն լրիւ կ'այրէր:

Սեպտեմբեր 1555-ին Փիլիպպոս Անգլիայէն կը հեռանար: Մարի Փիլիպպոսի մեկնումն ու իր ամուլ ըլլալը կը վերագրէր աստուածային պատիժի եւ հալածանքը աւելի կը սրէր մինչեւ իր մահը: Ընդհանրապէս հարաւ-արեւելեան Անգլիոյ շրջաններու աշխատաւոր դասակարգին պատկանող շուրջ 300 անձ խարոյկի մահուան կը դատապարտուէր: Անոնց մէջ կային աւելի քան 50 կին եւ մեծ թիւով երիտասարդներ: Հոլանտայի հետ համեմատած՝ Մարիի իշխանութեան շրջանին նահատակուածներուն թիւը աննշան էր, սակայն Անգլիոյ պատմութեան մէջ խարոյկի մահուան դատապարտութիւնը այսպիսի նախընթաց չունենալով՝ անգլիացիներ ընդվզած էին: Այս մարտիրոսութիւնները, որոնք Յովհաննէս Ֆոքսի (1516–1587) 1563-ին լոյս ընծայած *Արարքներ եւ յուշարձաններ* լայն ժողովրդականութիւն վայելած երկին մէջ պիտի յիշատակուէին, նախորդ բոլոր իշխանութիւններէն աւելի հակահռոմէական զգացումներ կ'արթնցնէին եւ Բարեկարգութիւնը աւելի կ'ամրապնդէին պարզ ժողովուրդին մէջ: Առաւել, 1530-

ականներուն Գրոմուելի եւ Գրենմըրի կողմէ սկսած եւ Եդուարդ Զ.-ի օրով ամրապնդուած աստուածաբանական եւ ծիսական փոփոխութիւնները մնայուն դրոշմ կը ձգէին: Մարի չէր յաջողեր հոսանքն ի վեր թիավարել եւ անոր քաղաքականութիւնը անկարգ իրավիճակ կը ստեղծէր: Անոր կեանքի վերջին տարին ֆրանսացիներ կը գրաւէին եւրոպական ցամաքամասին վրայ գտնուող Անգլիոյ պատկանող վերջին տարածքը եւս՝ Գալէն, որ անցեալի ազգային հպարտութեան խորհրդանշան մըն էր միաժամանակ: 17 նոյեմբեր 1558-ին Մարի կը մահանար, իր իշխանութիւնը կը նուաստանար, կարդինալ Ռէճինըլտ Փոլ կը յաջորդէր եւ կարճ ժամանակ ետք Եղիսաբէթ հեգասահօրէն կը տիրանար գահին:

Եղիսաբէթ Ա. (1558–1603), որ երկարատեւ ապօրինի նկատուած էր, Հենրի Ը.-ի օրով խորհրդարանին կողմէ որդեգրուած օրէնքի մը համաձայն՝ ապահոված էր իր գահաժառանգի յաջորդականութիւնը: Ծնունդով ու դաստիարակութեամբ եւ Հռոմի կողմէ իր մօր ամուսնութեան մերժումով՝ ան բողոքական մըն էր. թէեւ Մարիի իշխանութեան շրջանին, երբ իր կեանքը կը վտանգուէր, Հռոմի կողմը կը հակէր: Եղիսաբէթ, իր կրօնական համոզումները չբացայայտելով եւ ծայրայեղ բողոքականներուն չհամակրելով հանդերձ, կաթոլիկութեան հանդէպ յստակ վերապահութիւն կը ցուցաբերէր: Իր գահ բարձրանալուն մէջ մեծ դերակատարութիւն կ'ունենար Սպանիոյ Փիլիպպոս Բ.-ը, որ շուտով իր ամենաբուն թշնամին պիտի դառնար: Փիլիպպոս թէեւ բարեպաշտ կաթոլիկ էր, սակայն չէր փափագէր, որ Ֆրանսան, Անգլիան եւ Սկոտլանտի կայսերական գոյգի մը մականին տակ մտնէին, որովհետեւ եթէ Եղիսաբէթ Անգլիոյ թագուհին չըլլար, Մարին՝ «սկոտլիացիներու թագուհին», այն իշխանին կինը, որ 1559-ին Ֆրանսայի Ֆրանսիս Բ. թագաւորը պիտի դառնար, Անգլիոյ գահուն պիտի տիրանար: Եղիսաբէթ նաեւ կը ստանար օժանդակութիւնը Անգլիոյ ամենահեռատես դիւանագետին՝ Ուիլլեմ Սեսիլի (1520–1598), առաւել ծանօթ որպէս լորտ Պըրկլի, որ անմիջապէս որպէս իր քարտուղարը կը նշանակէր եւ որ մինչեւ մահը կը դառնար

Եղիսաբեթի գլխաւոր խորհրդականը: Եղիսաբեթ նաեւ հարագատ անգլիացի էր եւ ամբողջապէս կը համակրէր իր ազգի քաղաքական եւ տնտեսական ձգտումներուն: Այս բոլոր տրւեալները իր շուրջ կը խմբէին բազմաթիւ կարող անձեր, որոնք համոզուած էին, թէ ան Անգլիան կրօնական զգացումներէն գերիվեր կը դասէր:

Բողոքական բարեկարգիչները գոհացնելու համար՝ Եղիսաբեթ կը փորձէր իր փոփոխութիւնները զգուշութեամբ կատարել, սակայն անոնք կը պարտադրէին, որ ան աւելի արագ շարժեր: 29 ապրիլ 1559-ին խորհրդարանը կ'որդէգրէր նոր «Գերիշխանութեան օրէնքը», հակառակ Մարիի համակիր եպիսկոպոսներու բուռն ընդդիմութեան: Այս օրէնքը կը մերժէր պապին հեղինակութիւնն ու անոր ըլլալիք բոլոր վճարումներն ու դիմումները: Մակայն Եղիսաբեթի պնդումով՝ Անգլիոյ գահակալը փոխան «Գերագոյն պետի» կը կոչուէր «Գերագոյն կառավարիչ» Անգլիոյ եկեղեցիին, որ կաթոլիկներն ու բողոքականները առաւել գոհ պահող տիտղոս մըն էր, սակայն գործնականօրէն հիմնական փոփոխութիւն չէր բերեր: Կ'որոշուէր հերետիկոսութիւնը սահմանել Աստուածաշունչին, Եկեղեցիի «Տիեզերական» առաջին չորս ժողովներուն եւ խորհրդարանի որոշումներուն համաձայն: Յանձնախումբ մը կը վերատեսէր Եդուարդ Զ.-ի ժամանակ գործածութեան դրուած երկրորդ աղօթագիրքը, թէեւ թագուհին կը նախընտրէր 1549-ի առաջին աղօթագիրքը: Կատարուած վերատեսութիւնները կը գոհացընէին թագուհիին պահպանողական ճաշակը եւ ընդունելի կը դառնային չափաւորական կաթոլիկներուն: Պապին դէմ եղած աղօթքը եւ Վերջին ընթրիքի պահուն կատարուած ծնրադրումը փառաբանութիւն նկատելը կը վերանային: Վերջինը Յովհաննէս Նաքսի պնդումով ներմուծուած էր 1552-ի աղօթագիրքին մէջ: Սուրբ հաղորդութեան հացին եւ գինիին մէջ Քրիստոսի ֆիզիքական ներկայութիւնը դիտմամբ անորոշ կը մնար, միայն կ'ըսուէր, թէ հաւատացեալը պէտք էր հացով եւ գինիով հաղորդուէր՝ ինչպէս որոշուած էր Եդուարդ Զ.-ի օրով:

«Գերիշխանութեան օրէնքէն» ետք կ'որդեգրուէր «Միա-
ձեւութեան օրէնքը», որ կը հրահանգէր 24 յունիս 1559-էն ետք
պաշտամունքը նոր ծիսակարգին համաձայն կատարել եւ
եկեղեցական սպասներու ու զգեստներու համար որդեգրել
Եդուարդ Զ-ի իշխանութեան երկրորդ տարուան որոշումները:
Այսպէսով, երբ աւանդական զգեստներու գործածութիւնը կ'որ-
դեգրուէր, Մարիի կողմէ աքսորական բարեկարգիչները Անգ-
լիա վերադարձած եւ Եղիսաբէթի կողմէ եպիսկոպոսական
աթոռներ գրաւած ըլլալով, ուժգնօրէն կ'ընդդիմանային: Այս
երեւոյթը յստակօրէն ցոյց կու տար, որ Եկեղեցին եւ անոր
պաշտամունքը պապականութենէ մաքրագործելու ճիգը տի-
րական էր Անգլիոյ եկեղեցիին մէջ:

«Գերիշխանութեան օրէնքին» կ'ընդդիմանային բոլորը,
ի բաց առեալ Մարիի շրջանէն մնացած երկու եպիսկոպոսները,
թէեւ պարզ հոգեւորականութեան մէջ ընդդիմութիւնը նուազ էր:
Նոր եպիսկոպոսներու կարիքը կար եւ Եղիսաբէթ իր մօր հովիւ՝
Մատթէոս Փարքըրը (1504–1575) կը նշանակէր Գենթըրպըրիի
արքեպիսկոպոս: Փարքըր Գրենմըրի նման զարգացած էր եւ
չափաւորական բողոքական էր: Մարիի օրերէն մնացած եպիս-
կոպոսներ կը մերժէին Փարքըրի օծումին մասնակցիլ, եւ 17
դեկտեմբեր 1559-ին ան կ'օծուէր Հենրի Ը-ի ու Եդուարդ Զ-ի
օրերուն եպիսկոպոսացած Ուիլեմ Պարլոյի, Յովհաննէս Սքո-
րիի, Մայլս Գովըրտելլի եւ Յովհաննէս Հոճկինի ձեռամբ:
Անմիջապէս անգլիգան նոր եպիսկոպոսութեան հիմքը կը
դրուէր: Աղօթագիրքին մէջ գտնուող Հաւատքի նոր հանգա-
նակին բանաձեւումը դիտմամբ կը յետաձգուէր, սակայն 1563-
ին՝ 1553-ի «42 յօդուածներ»-ը կը վերատեսուէին եւ որպէս «39
յօդուածներ» Անգլիոյ եկեղեցիի Հաւատքի բանաձեւը կը դառ-
նային:

1563-ին Եղիսաբէթ ինքզինք տիրականօրէն կը հաս-
տատէր: Սակայն երկու ճակատ ընդդիմութիւն ցոյց կու տար.
առաջին՝ 1570-ին պապը Եղիսաբէթը կը հաղորդագրկէր եւ կը
դիմէր անգլիացիներուն, որ զայն գանձնկէց ընեն, երկրորդ՝
ծայրայեղ բարեկարգիչներ, որոնք մաքրակրօն պիտի կոչուէին,

առաւել բարեկարգութիւն կը պահանջէին: Հետաքրքրական է, որ Անգլիական բարեկարգութիւնը Լուտերի, Զուինկլիի, Կալվինի եւ Նաքսի պէս նշանաւոր կրօնական առաջնորդներ չէր ունենար եւ Եղիսաբէթի իշխանութենէն առաջ ժողովրդային մակարդակի վրայ հոգեւոր զարթօնք չէր ապրեր: Թէեւ Բարեկարգութիւնը ժողովրդային շարժում կը դառնար Եղիսաբէթի օրերուն, սակայն ան այս մարզին մէջ դերակատարութիւն չէր ունենար:

Ժ. ԳԼՈՒԽ ՄԿՈՎՏԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

ԺԶ. դարու սկիզբը Սկովտիան աղքատ, յետամնաց եւ աւատապետական համակարգ ունեցող երկիր մըն էր: Թագաւորները տկար էին, իսկ ազնուականները՝ անկարող: Եկեղեցին կալուածատէր էր եւ գրեթէ երկիրին կէսը իրեն կը պատկանէր, սակայն եկեղեցական պաշտօնները ընդհանրապէս ազնուական գերդաստաններու երիտասարդներուն կը վերապահուէին, եւ այսպէսով եկեղեցապատկան կալուածներուն մեծամասնութիւնը աշխարհական ազնուականներուն ձեռքն էր: Տկար թագաւորութիւնը Եկեղեցիին կ'ապաւինէր ընդդէմ աշխարհիկ ազնուականութեան: Թէեւ ԺԵ. դարուն համալսարաններ կը հիմնուէին Սէնթ Էնտրուզի, Կլասկոյի եւ Ապըրտինի մէջ, բայց Եւրոպայի այլ համալսարաններուն հետ համեմատած ազդեցիկ չէին: Վանքերը եւ ծխական եկեղեցիները եւս անկումի եւ անտեսումի մէջ էին՝ գտնուելով տգէտ եւ անբարար վճարող քահանաներուն ձեռքը: Բարեկարգութեան մեծ փափագ կար ամենուր: Երբ 1560-ին Բարեկարգութիւնը կը հաստատուէր Սկովտիոյ մէջ, առաջնահերթութիւն կը ստանար եկեղեցական կառավարումի բնագաւառը, եւ աստուածաբանական ու ծիսական հարցերը երկրորդական կը նկատուէին:

Սկովտիացիներ, վախնալով, որ Անգլիա իրեն կը կցէր Սկովտիան, քաղաքականօրէն կը հակէին Ֆրանսայի կողմը: Ֆլոտէնի (1513), Սոլվէյ Մոսի (1542) եւ Փինքիի (1547) մէջ Անգլիայէն կրած պարտութիւններէն ետք Սկովտիա աւելի կը հակադրուէր Անգլիոյ եւ կը համոզուէր, որ անգլիական գերհրճօրութիւնն անգամ չէր կրնար Սկովտիան գրաւել: Միւս կողմէ՝ Սկովտիոյ Ֆրանսայի հետ դաշնակցիլը Անգլիոյ համար լուրջ վտանգ մըն էր, նոյնիսկ աւելի լուրջ քան Անգլիոյ պապականութենէն խզումը: Հետեւաբար Անգլիա եւ Ֆրանսա կը ջանային իրենց համակիր տարրեր ունենալ Սկովտիոյ մէջ: Տակլըս տիրական գերդաստանը Անգլիոյ կողմն էր, իսկ Համիլ-

թըն գերդաստանը՝ Ֆրանսայի: Ֆրանսայի ուժեղ նեցուկներ էին նաև Սկովտիոյ առաջնորդը՝ Սենթ Էնտրուզի Յակոբ Պիթըն եպիսկոպոսը (մահացած՝ 1539-ին) եւ անոր զարմիկն ու յաջորդը՝ Դաւիթ Պիթըն կարդինալը (1494?–1546): Թէև 1513–1542-ին գահակալող Յակոբ Ե. թագաւորը Հենրի Ը.-ի հետ արենակցական կապ ունէր եւ անոր թոռը՝ Յակոբ Զ. 1603-ին, Եղիսաբէթի մահէն ետք, Անգլիոյ Յակոբ Ա.-ը պիտի դառնար եւ միացնէր Անգլիոյ ու Սկովտիոյ թագաւորութիւնները, ան Ֆրանսայի կողմը կը հակէր եւ նախ կ'ամուսնանար Ֆրանսիա Ա.-ի աղջիկին հետ ու անոր մահէն ետք՝ ֆրանսացի կաթոլիկ ազդեցիկ Կիզ գերդաստանի Մարի Լորէյնցիի աղջիկին հետ: Այս ամուսնութեամբ Մարին կը դառնար «սկովտիացիներուն թագուհին» (1542–1587):

Բողոքականութիւնը Սկովտիա կը ներթափանցէր Բարեկարգութեան առաջին տարիներէն: Մարպուրկի մէջ ուսանած Փաթրիք Համիլթըն (1504?–1528) լուտերականութիւն քարոզելու յանցանքով խարոյկի մահուան կը դատապարտուէր 29 փետրուար 1528-ին: Բողոքականութիւնը դանդաղօրէն կը տարածուէր եւ 1534-ին ու 1540-ին այլ դատապարտութիւններ եւս տեղի կ'ունենային: Թէև 1543-ին խորհրդարանը կ'արտօնէր Աստուածաշունչի ընթերցումն ու թարգմանութիւնը, սակայն այս որոշումը ժամանակաւոր հանգամանք կ'ունենար՝ որպէս հետեւանք անգլիական ազդեցութեան, մինչ Դաւիթ Պիթըն կարդինալ եւ Ֆրանսայի կողմնակիցներ ուժեղ ճնշում կը բանեցնէին: Այս ժամանակաշրջանի ամենէն ազդեցիկ քարոզիչը Գեորգ Ուիշարթն էր (1513?–1546), որ 2 մարտ 1546-ին Պիթընի հրամանով խարոյկի մահուան կը դատապարտուէր: 29 մարտ 1546-ին Պիթըն կը սպանուէր թէ՛ որպէս փոխվրէժ Ուիշարթի մահուան եւ թէ՛ իր ֆրանսական քաղաքականութեան համար: Ընդդիմադիրներ կը գրաւէին Պիթընի Սուրբ Անդրէաս դղեակը: 1547-ին Ուիշարթի բարեկամ բողոքական քարոզիչ մը՝ Յովհաննէս Նաքս, կ'ապաստանէր դղեակին մէջ եւ կը դառնար ընդդիմադիրներուն հոգեւոր ուսուցիչն ու Սկովտիական բարեկարգութեան հերոսը:

1505–1515-ի միջոցին Հատինկյթըն ծնած Յովհաննէս Նաքսի մասին կենսագրական բաւարար տեղեկութիւններ չկան: Ան թէւ քահանայ կը ձեռնադրուէր, սակայն երբ Ուիշարթ կը ձերբակալուէր՝ անոր պաշտպան կը դառնար: Ֆրանսական բանակը կը գրաւէր Սուրբ Անդրէաս դղեակը եւ Յովհաննէս որպէս բանտարկեալ 19 ամիս Ֆրանսա կը փոխադրուէր: 1549-ին, երբ Եդուարդ Զ.-ի օրով բողոքական կառավարութիւնը կ'իշխէր, ան Անգլիա կ'անցնէր ու կայսերական հովիւներէն մին կը դառնար եւ 1552-ին Ռոչեսթըրի եպիսկոպոսութիւնը կը մերժէր: Երբ Մարի Թուտըր գահ կը բարձրանար, 1554-ին Նաքս Ֆրանսքուրթ կ'երթար, սակայն Եդուարդի աղօթագիրքը քննադատած ըլլալով՝ անգլիացի ապաստանեալներուն մօտ չէր կրնար մնալ եւ կ'անցնէր Ժնէւ, ուր Կալվինի հաւատարիմ աշակերտը կը դառնար եւ կ'օժանդակէր Ժնէւի անգլերէն Աստուածաշունչին պատրաստութեան: Աքսորի այս շրջանին Նաքս անաստուած իշխողներուն դէմ զինեալ պայքարի գաղափարականը կը մշակէր, որուն դէմ կ'ըլլար Կալվին:

Մինչ այդ, 1547-ին անգլիացիներ Փինքիի յաղթանակով աւելի կը թշնամանային սկոտլիացիներուն հետ: «Սկոտլիացիներուն թագուհի» Մարին Ֆրանսայի գահաժառանգին հետ կ'ամուսնանար եւ 1548-ին ապահովական պատճառներով Ֆրանսա կ'երթար: 1554-ին անոր մայրը՝ Մարի Լորէյնցին, կը դառնար Սկոտլիոյ փոխիշխանուհին:

Սկոտլիոյ ազնուականներուն եւ ժողովուրդին մեծամասնութեան համար Ֆրանսայի կողմնակից ըլլալը կը համահաւասարէր Անգլիոյ ենթակայ ըլլալուն: Բողոքականութիւնն ու ազգային անկախութիւնը իրարու կ'ընդելուզուէին, եւ Նաքս կը դառնար այս զոյգ պայքարներուն ղեկավարը: 1555-ին ան Սկոտլիա կու գար եւ վեց ամիս կը քարոզէր, սակայն որովհետեւ տակաւին յեղափոխութեան հողը պատրաստ չէր, ան Ժնէւ կը վերադառնար եւ անգլիախօս ապաստանեալներու եկեղեցիի հովիւը կ'ըլլար: Մինչ այդ ան Սկոտլիոյ մէջ արդիւնաբեր սերմեր ցանած էր արդէն: 3 ղեկտեմբեր 1557-ին կարգ մը

բողոքականներ եւ հակաֆրանսական ազնուականներ իրարու հետ կը դաշնակցէին «Աստուծոյ ամենասուրբ խօսքն ու անոր հայմայնքը ստեղծելու» եւ կը ճանչցուէին որպէս «համայնքին տէրերը»: Այս ընդդիմութիւնը աւելի կը գրգռուէր, երբ 24 ապրիլ 1558-ին Մարի Սթիուրթը կ'ամուսնանար Ֆրանսայի գահաժառանգին հետ: Սկովտիան Ֆրանսայի պատկանող նահանգի կը վերածուէր, որովհետեւ եթէ այս ամուսնութենէն տղայ մը ծնէր, ան Սկովտիոյ եւ Ֆրանսայի թագաւորը պիտի դառնար: Իսկ ֆրանսական իշխանութիւնը աւելի կ'ամրապնդուէր, որովհետեւ Սթիուրթը գաղտնաբար կը համաձայնէր, որ եթէ ժառանգորդներու ծնունդ չտար, Սկովտիան Ֆրանսայի պիտի պատկանէր: 1558-ին Եղիսաբէթ Անգլիոյ թագուհին կը դառնար, սակայն «սկովտիացիներուն թագուհի» Մարին զայն անօրինական զաւթիչ կը համարէր եւ ինքզինք անգլիական գահին օրինական ժառանգորդը ցոյց կու տար:

Այս պայմաններուն մէջ, սկովտիական անկախութեան եւ բողոքականութեան ախոյեանները կ'աճէին եւ միացեալ ճակատ կը կազմէին: Եղիսաբէթ տրամադիր էր օժանդակելու բարեկարգիչներուն իր պաշտպանութեան իսկ սիրոյն: Նաքս պահը յարմար կը նկատէր, 2 մայիս 1559-ին Սկովտիա կը վերադառնար եւ ինը օր ետք Փրքթի մէջ կը քարոզէր: Ամբոխը քաղաքին վանական հաստատութիւնները կը կործանէր: Մարի Լորէյնցի փոխիշխանուհին այս քայլը ապստամբութիւն կը համարէր: Անոր տրամադրութեան տակ գտնուող ֆրանսական բանակն ու ընդդիմադիրները փութով կը զինուէին: Երկու ուժերը գրեթէ հաւասար էին, եւ արդիւնքը անորոշ էր: Հակառակ Նաքսի սկզբունքին՝ եկեղեցիներ կը քանդուէին եւ վանական ինչքեր կը կողոպտուէին Սկովտիոյ բազմաթիւ շրջաններուն մէջ: 10 յուլիս 1559-ին Ֆրանսայի Հենրի Բ.-ը կը մահանար, եւ Լորէյնցի ամուսինը՝ Ֆրանսիս Բ., կը յաջորդէր անոր: Ֆրանսական նոր զօրքեր կը հասնէին Սկովտիա: Բարեկարգիչներուն վիճակը կը վատթարանար: Վերջապէս յունուար 1560-ին կը հասնէր անգլիական օժանդակութիւնը: 11 յունիս 1560-ին Լորէյնցի կը մահանար, եւ իր դատը կ'աւարտէր: 6

յուլիսին Ֆրանսա եւ Անգլիա դաշինք կը կնքէին ու ֆրանսական զօրքերը կը հեռանային Սկովտիայէն, եւ ֆրանսացիներ կը դադրէին կառավարութեան մէջ կարեւոր պաշտօններ ստանձնելէ: Յեղափոխութիւնը անգլիական օժանդակութեամբ կը յաղթանակէր՝ միաժամանակ առանց զիջելու Նաքսի ներշնչած սկովտիական ազգային անկախութենէն:

Բարեկարգիչներ սկովտիական խորհրդարանին մէջ ազդեցիկ կը դառնային: 17 օգոստոս 1560-ին մեծ մասամբ Նաքսի կողմէ խմբագրուած Կալվինական հաւատքի հանգանակը կ'որդեգրուէր որպէս Սկովտիոյ հաւատամքը: Շաբաթ մը ետք պապական հեղինակութիւնը կը ջնջուէր եւ սուրբ պատարագը կ'արգիլուէր՝ այս արգելքը երեք անգամ չգործադրողը մահուան դատապարտող վճիռով: Թէեւ Ֆրանսա նստող թագաւորն ու թագուհին կը մերժէին այս որոշումները վաւերացնել, սակայն ժողովուրդը իր կամքը արտայայտած էր:

Նաքս եւ իր համախոհները կը ձգտէին իրենց աշխատանքը յաջողութեամբ պսակել: Դեկտեմբեր 1560-ին տեղի կ'ունենար ժողով մը, որ սկովտիական «ընդհանուր ժողով» կը համարուէր: Յունուար 1561-ին խորհրդարանին կը ներկայացուէր *Կարգապահութեան առաջին գիրքը*-ը, որ Կալվինի կողմէ մշակուած դրոթիւնը կը փորձէր ամբողջ թագաւորութեան մէջ ի գործ դնել՝ «երիցականութիւնը» առաւել յղկուած կերպով արտայայտելով: Ան կ'առաջադրէր, որ իւրաքանչիւր ծուխ ունենար իր հովին ու պաշտօնեաները, որոնք իրենց պաշտօնները պիտի վարէին հաւատացեալ ժողովուրդին համամտութեամբ: Հովինն ու պաշտօնեաները միաժամանակ կարգապահական խորհուրդը պիտի կազմէին՝ մինչեւ իսկ հաղորդագրկումի վճիռ արձակելու իրաւունք ունենալով: Մեծ քաղաքներուն մէջ հովուութիւններ պիտի հաստատուէին, հովիւներն ու հաւատացեալները սինտոններով պիտի կառավարուէին, իսկ բոլորին վրայ պիտի հսկէր ընդհանուր ժողովը: Ժամանակի կարիքներէն մեկնելով՝ նաեւ «ընթերցողներ» պիտի նշանակուէին այն վայրերուն համար, ուր հովիւներ չկային եւ կամ ծառայութեան դաշտը ընդարձակ էր, առաւել՝ «վերահսկիչներ», որոնք առանց

հոգեւոր հեղինակութեան՝ վարչականօրէն պիտի կազմակերպէին ծուխեր եւ հովութեան թեկնածուներ յանձնարարէին: Այս եկեղեցական տնօրինութիւններուն կողքին *Կարգապահութեան առաջին գիրք*-ը ազգային դաստիարակութեան եւ աղքատներու օժանդակութեան օրէնքներ կը սահմանէր: Նաքս կ'ուզէր, որ Եկեղեցի, դաստիարակութիւն եւ աղքատներ հին Եկեղեցիի ստացուածքներէն օգտուէին, սակայն խորհրդարանը կ'ընդդիմանար: Եկեղեցական կանոնադրութիւնը աստիճանաբար օրինական կը դառնար, սակայն ազնուականներ չէին ուզեր եկեղեցապատկան կալուածները վերադարձնել, եւ Եկեղեցին աղքատութեան կը մատնուէր: Այս աղքատութեամբ Սկովտիոյ եկեղեցին ժողովրդավար նկարագիր կ'ունենար, որովհետեւ ժողովուրդին տնտեսական մասնակցութեան կ'ապաւինէր եւ ո՛չ ազնուականութեան կամ թագաւորութեան նպաստին:

Աստուածաշնչական հիմնաւորումէ զուրկ բոլոր եկեղեցական սովորութիւնները կը ջնջուէին: Կիրակին կը հանդիսանար միակ սուրբ օրը: Հասարակաց պաշտամունքի համար Նաքս կը պաստրաստէր *Գիրք հասարակաց կարգի* գիրքը, յաճախ ծանօթ որպէս «Նաքսի պաշտամունքի գիրքը», որ 1564-ին կը վաւերացուէր ընդհանուր ժողովին կողմէ: Ան մեծ մասամբ հիմնուած էր Ժնեւի անգլիական համայնքին պաշտամունքի գիրքին վրայ, որ իր հերթին ներշնչուած էր Կալվինի պաշտամունքի գիրքէն: Ընդհանուր ժողովը կ'արտօներ, որ Նաքսի խմբագրած պաշտամունքի գիրքին կողքին նաեւ ազատ աղօթքներ կատարուէին:

Իր դիրքը ամրացնելու համար՝ Նաքս կը պարտաւորուէր դիմել պաշտպանողական քայլերու: Ֆրանսայի Ֆրանսիս Բ. թագաւորը կը մահանար 5 դեկտեմբեր 1560-ին, եւ օգոստոս 1561-ին Մարի Սթիուըրթ Սկովտիա կը վերադառնար ու որպէս երիտասարդ այրի՝ համակրանքի կ'արժանանար: Ան այլեւս Ֆրանսայի թագուհին չէր, եւ անոնք, որոնք բողոքականութիւնը պաշտպանած էին ազգային եւ ո՛չ կրօնական համոզումով, անցած կը նկատէին ֆրանսական տիրապետութեան վտանգը: Սթիուըրթ մեծ շրջահայեցութեամբ կը շարժէր: Ան իր կրօնա-

կան համոզումները չէր ծածկեր եւ հակառակ Էտինպըրկի Մէնթ Ճայլէսի հովիւր դարձած Նաքսի դժգոհութեան՝ իր մատնան մէջ ամեն օր սուրբ պատարագի կը մասնակցէր. սակայն 1560-ին ներմուծուած կրօնական փոփոխութիւններուն միջամուխ չէր դառնար: Ան կը ջանար Անգլիոյ գահին Եղիսաբէթի յաջորդը դառնալ, սակայն Եղիսաբէթ անտարբեր կը գտնուէր: Սթիուըրթ կը հետեւէր իր կէսեղբօր եւ «համայնքին տէրերու» ղեկավար ու ապագայի Մորէի իշխան՝ Յակոբ Սթիուըրթի խրատներուն: Մարի կը փորձէր Նաքսը սիրաշահիլ, սակայն ան տեղի չէր տար եւ կը շարունակէր մարմնաւորել բողոքական հոսանքին ոգին: Սակայն Մարի Սթիուըրթ կը յաջողէր բողոքական ազնուականները իրեն ենթարկել եւ նեղ կացութեան մատնել Նաքսը: Սուրբ պատարագի մատուցումը կ'աճէր: Նաքս կը մտահոգուէր, որ Մարի Սթիուըրթ օտար իշխանի մը հետ ամուսնանալով կրնար կաթոլիկ թագաւորի մը փոխանցել Սկովտիոյ գահը: Սպանիոյ Փիլիպպոս Բ.-ի տղուն հետ ամուսնութեան հաւանակութեան խօսք կ'ըլլար: Սակայն Սկովտիոյ բողոքականութեան համար առաւել աղէտաբեր կը դառնար 29 յուլիս 1565-ին Մարի Սթիուըրթի ամուսնութիւնը իր զարմիկին՝ Տարնլիի լորտ Հենրի Սթիուըրթի (1545–1567) հետ: Հենրի Սթիուըրթ թագաւոր դառնալու իրաւունքը ուներ Մարի Սթիուըրթէ ետք: Ան Անգլիոյ կաթոլիկներուն մէջ մեծ ժողովըրդականութիւն կը վայելէր եւ հակառակ այն իրողութեան, որ Անգլիոյ մէջ բողոքական նկատուած էր, հիմա ինքզինք կաթոլիկ կը դաւանէր: Այս ամուսնութիւնը Եղիսաբէթի համար վտանգ մըն էր Անգլիոյ մէջ եւ կաթոլիկ կողմը կը զօրացնէր Սկովտիոյ մէջ: Յակոբ Սթիուըրթ կը հակառակէր այս ամուսնութեան եւ աքսորի կը դատապարտուէր: Մարի Սթիուըրթ աստիճանաբար կը չէզոքացնէր Յակոբ Սթիուըրթի համակրող բողոքական իշխանները, սակայն կը զրկուէր իր իմաստնագոյն խորհրդականէն:

Յարդ Մարի Սթիուըրթ խորամանկօրէն կը գործէր, սակայն իր սխալները պատճառ կը դառնային, որ սկովտիական բողոքականութիւնը վերակազմակերպուէր: Հենրի

Մթիուրբթ կը հակառակէր Մարի Մթիուրբթի, իսկ ան այս հակառակութեան առաւել սրումին պատճառ կը դառնար, երբ կը համակրէր իտալացի Դաւիթ Ռիզիոյին, որ իր արտաքին գործերու քարտուղարն էր եւ բողոքականներուն կողմէ թշնամի կը համարուէր: 9 մարտ 1566-ին Հենրի Մթիուրբթ եւ կարգ մը բողոքական ազնուականներ Ռիզիոն դաւադրաբար կը սպանէին Հովիտուտի պալատին մէջ: Մարի Մթիուրբթ ճկունութեամբ վրէժ կը լուծէր, երբ Հենրի Մթիուրբթէն դաւադիրներուն ինքնութիւնը կ'իմանար եւ զանոնք պաշտօնանկ կ'ընէր, իսկ նուազ յանցանք ունեցողները կը պահէր: 19 յունիս 1566-ին կը ծնէր Մարի Մթիուրբթի ու Հենրի Մթիուրբթի զաւակը՝ Սկովտիոյ Յակոբ Ե.-ը եւ Անգլիոյ Յակոբ Ա.-ը: Մարի Մթիուրբթ ուրախ էր, որ Սկովտիոյ գահը կ'ապահովէր:

Մարի Մթիուրբթ իր ամուսինէն վրէժ լուծելու համար կը դիմէր բողոքական ազնուական եւ Պոթուելի իշխանագուն Յակոբ Հեփպըրնի (1536?–1578), որ քաջ եւ մարտունակ անձ մըն էր ի հակադրութիւն Հենրի Մթիուրբթի: Մարի Մթիուրբթի գործակցութեամբ՝ Հեփպըրն կը փորձէր Հենրի Մթիուրբթը չեզոքացնել: Մարի Մթիուրբթ հարսանեթ ունեցող Հենրի Մթիուրբթը Կլասկոյէն Էտինպըրկի ծայրամասը կ'նուղարկէր: 10 փետրուար 1567-ին Հենրի Մթիուրբթի բնակած տունը կը ոմբահարուէր, եւ ան կը մահանար: Ժողովուրդը Հեփպըրնը կը դատապարտէր այս ոճիրին համար, սակայն Մարի Մթիուրբթ կեղծ դատով զայն ազատ կ'արձակէր: 3 մայիս 1567-ին Հեփպըրնի կինը կ'ամուսնալուծուէր իր ամուսինէն զայն անբարոյ համարելով եւ 15 մայիս 1567-ին Հեփպըրն եւ Մարի Մթիուրբթ բողոքական ծէսով իրարու հետ կ'ամուսնանային:

Այս անամօթ արարքները Սկովտիոյ մէջ եւ Անգլիոյ ու ամբողջ Եւրոպայի կաթոլիկ հասարակութեան մէջ ընդհանուրատելութիւն կ'արթնցնէին Մարի Մթիուրբթի հանդէպ: Սկովտիոյ բողոքականներն ու կաթոլիկները միասնաբար Մարի Մթիուրբթին դէմ կ'ելլէին: 24 յուլիս 1567-ին ան կը պարտաւորուէր գահը փոխանցել իր մէկ տարեկան տղուն եւ Մորէի Յակոբ Մթիուրբթ իշխանը փոխանորդ կարգելով՝ կը բան-

տարկուէր Լոխլիւրն դղեակին մէջ: 29 յուլիս 1567-ին Նաքս կը քարոզէր Յակոբ Ե.-ի գահակալութեան հանդէսին: Մարի Սթիուրթի անկումին կը յաջորդէր բողոքականութեան յաղթանակը, եւ դէկտեմբերին խորհրդարանին կողմէ բողոքականութիւնը կը հաստատուէր որպէս երկիրին դաւանանքը: Մայիս 1568-ին Մարի Սթիուրթ Լոխլիւրնէն փախչելով Անգլիա կ'ապաստանէր ու փետրուար 1587-ին Եղիսաբէթի կեանքին սպառնացած ըլլալու յանցանքով մահուան կը դատապարտուէր:

Նաքսի առաքելութիւնը հասած էր աւարտին: 24 նոյեմբեր 1572-ին ան կը մահանար՝ հանդիսանալով Սկոտլիոյ պատմութեան կրօնական ու ազգային դիմագիծը ընդգծած ամենէն ազդեցիկ անձը: Նաքսի աշխատանքը կը շարունակէր Անդրէաս Մելվիլ (1545–1623), որ 1568–1574, մինչեւ իր Սկոտլիա վերադարձը, Ժնեւի մէջ կ'ուսուցէր: Ան Կլասկոյի եւ Սուրբ Անդրէասի համալսարաններուն բարեկարգիչը կ'ըլլար, կը կատարելագործէր Սկոտլիոյ երիցական բողոքականութիւնը եւ զայն անտեղիտալիօրէն կը պաշտպանէր Յակոբ Ե.-ի օրով երեւան եկած կայսերական եւ եպիսկոպոսական ոտնձգութիւններուն դէմ ու այս պատճառով ալ իր կեանքին վերջին 16 տարիները արքայութեան կը մնար իր երկիրէն:

ԺԱ. ԳԼՈՒԽ
ԿԱԹՈՒԿ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՀԱԿԱԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

ԺՁ. դարու կեսին բողոքականության յարատև աճը ուժեղ հակադարձություն կը յառաջացնէր Հռոմէական եկեղեցիին կողմէ: Պօղոս Գ.-ի օրերէն (1534–1549) պապեր կը ձեռնարկէին եկեղեցական բարեկարգութիւններու՝ զսպելու համար բողոքական ապստամբութիւնը, սրբագրելու եկեղեցական չարաշահումները, բողոքական հերձուածողական ու հերետիկոսական ուսուցումներուն փոխարէն օրինականացնելու Եկեղեցիի հեղինակաւոր ուսուցումները եւ վերագրուելու իրենց կորսնցուցած հողային տարածքները: Այս պաշտպանողական հակադարձութիւնը արդարօրէն կը կոչուի Հակաբարեկարգութիւն, թէեւ ան կրնայ նաեւ միակողմանիօրէն պատմական պատկեր ներկայացնել, որովհետեւ Կաթոլիկ բարեկարգութիւնը նաեւ ինքնաբոլի արտայայտութիւններ կ'ունենար՝ Բողոքական բարեկարգութենէն անկախ եւ առաջ: Այս շարժումները շարունակութիւնն էին Միջին դարերու այն ճիգերուն, որոնք կը միտէին անձնական կրօնական վերանորոգութիւն եւ եկեղեցական բարեկարգութիւն բերել արդի բարեպաշտութեան, ժողովական դրութեան, քրիստոնէական մարդկայնականութեան, ապաշխարողական քարոզութեան, վանականութեան ու կրօնական եղբայրակցութիւններու հիմնադրումի բնագաւառներուն մէջ:

Այս բոլորին լոյսին տակ կարելի է արդարօրէն խօսիլ ԺՁ. դարու հարազատ Կաթոլիկ բարեկարգութեան մասին, որուն նպատակն էր ամբողջական բարեկարգութիւն հաստատել Հռոմէական եկեղեցիին մէջ: Սակայն այս հոգեւոր վերանորոգութեան հոսանքը պիտի չվայելէր պապերուն եւ բարձրաստիճան հոգեւորականներուն նեցուկը, եթէ Բողոքական բարեկարգութիւնը զիրենք չանհանգստացնէր: Աւելին՝ բողոքականութիւնը զսպելու եւ սահմանափակելու կարիքն էր, որ

Կաթոլիկ բարեկարգութիւնը հրամայական կը դարձնէր: Ուրեմն՝ Կաթոլիկ բարեկարգութիւնն ու հակաբարեկարգութիւնը այսպէսով իրարու սերտօրէն կ'առնչուէին:

Կաթոլիկ զարթօնքի երկու կեդրոններն էին Սպանիան եւ Իտալիան, ուր Հոլանտայի եւ Գերմանիոյ հոգեւոր աւանդութիւնները մեծ ազդեցութիւն ունեցած էին:

Լուտերի Հռոմէն անջատուելէն սերունդ մը առաջ Սպանիա աշխուժ բարեկարգութիւն կ'ապրէր Իզապելլա թագուհիին եւ Սիսներոյի Ֆրանչիսօ Հիմենէզ կարդինալին ղեկավարութեամբ: Այս բարեկարգութիւնը կը յատկանշուէր ծխատէր քահանաներու բարոյականութեամբ եւ դաստիարակութեամբ, վանական բարեփոխումներով, աստուածաշնչական դասընթացքներու քրիստոնէական մարդկայնականութեան սկզբունքներուն համաձայն կատարումով, դասական ուղղափառութեան հետապնդումով եւ Սպանական հաւատաքննութեամբ հերետիկոսութեան զսպումով: Հոգեւոր կեանքի ծաղկումը կը յատկանշուէր նաեւ լռակեաց խորհրդագագցութեամբ, ներանձնական աղօթքով, վերանորոգ դպրոցական աստուածաբանութեամբ, Ագուինացիի ուսուցումներուն վերագնահատումով եւ ամենէն ազդեցիկ նոր եկեղեցական միաբանութեան՝ Յիսուսի ընկերակցութեան հիմնադրութեամբ: «Սպանական զարթօնքը» Կաթոլիկ բարեկարգութեան ու հակաբարեկարգութեան ամենակարեւոր հանգրուանն էր. սակայն պէտք չէ անտեսել նաեւ կրօնական զարթօնքի տեղայնական իտալական գրգիռներուն բերած նպաստը:

ԺԵ. դարու աւարտին եւ ԺԶ. դարու սկիզբը Իտալիոյ մէջ կը կազմուէին բազմաթիւ կրօնական եղբայրակցութիւններ: Այս կէս-աշխարհական եւ կէս-հոգեւորական կազմակերպութիւնները անձնական բարեպաշտութեան եւ բարեսիրական ծառայութեան կը նուիրուէին՝ յատկապէս զբաղելով որբերու եւ սիֆիլիսի անբուժելի հիւանդութենէն տառապողներու խնամքով: Մեծամասնութեամբ աշխարհականներէ բաղկացած ամենահոշակաւոր կազմակերպութիւնն էր «Աստուածային սուրի եղբայրակցութիւնը», որ հիմնուած էր 1497-ին Ճենովայի մէջ ս.

Կատարինէ Ճենովացիի աշակերտ եւ կենսագիր Էթթորէ Վերնացայի կողմէ: 1514–1517-ին Վերնացա Հռոմի մէջ կը հիմնէր մասնաճիւղ մը, որուն առաջնորդները կը դառնային հաւատացեալ քահանայ եւ ապագային որպէս ս. Կայեթան սրբադասուած Կայեթանօ Թիենացին (1480–1547) եւ Գիեթիի եպիսկոպոս, պապական դիւանագէտ եւ ապագայի Պօղոս Դ. Պապ՝ Յովհաննէս Պետրոս Գարաֆա (1476–1559): 1524-ին Թիենացի եւ Գարաֆա Հռոմի մէջ կը հիմնէին Թէաթին միաբանութիւնը, որուն համար Գարաֆա կանոնագրութիւն մըն ալ կը գրէր 1526-ին: Այս միաբանութիւնը կը բաղկանար այն քահանա-ներէն, որոնք վանական ուխտ կը կատարէին, մեծաւորի մը իշխանութեան տակ համայնական կեանք կ'ապրէին եւ կը նուիրուէին թէ՛ իրենց քահանայական կոչումին ու թէ՛ հոգեւորականութեան կեանքի եւ ծառայութեան մակարդակի բարձրացումին: Անոնց պաշտօնական անունն էր «Աստուածային նախախնամութեան քահանաներ», սակայն աւելի ծանօթ էին որպէս «թէաթիններ», որ կ'ակնարկէր Գարաֆայի Գիեթիի (լատիներէն՝ Թէաթի) թեմին: Այս միաբանութեան անդամները իրենց կալուածներէն եւ անոնց հասոյթէն կը հրաժարէին եւ իրենց աղքատութիւնը, խստակեցութիւնն ու բարեսիրական ծառայութիւնը մեծ ժողովրդականութեան կ'արժանանային: Հակառակ իրենց փոքրաթիւ ըլլալուն՝ անոնք մեծ նպաստ կը բերէին Կաթոլիկ բարեկարգութեան:

Իտալիոյ մէջ Կաթոլիկ բարեկարգութեան բազմաթիւ առաջնորդներ սերտօրէն առնչուած էին թէաթիններու եւ այլ միաբանութիւններու: Ասոնցմէ ակներեւ էր Վենետիկի սենատի անդամ եւ դեսպան Գասպար Գոնթարինին (1483–1542), որ 1530–1535-ին Վենետիկի մէջ բարեկարգչական ծայրայեղական շարժումին մէջն էր եւ որուն կ'անդամակցէին նաեւ Գարաֆա (1527-ի Հռոմի գրաւումէն ետք թէաթիններ Վենետիկ անցած էին), Սուրբ Գեորգ Մաճորէ պենետիկտեան վանքի արքահայր՝ Գրիգոր Գորթէս (մահացած՝ 1548-ին) եւ մարդկայնական գիտնական ու Հենրի Ը.-ի զարմիկ՝ անգլիացի Ռեճինալտ Փոլ (1500–1558): 1516-ին Գոնթարինի իր *Եպիսկոպոսին պաշտօնը* երկին

մէջ կ'ընդգծեր եպիսկոպոսութեան հոգեւոր վերանորոգութեան անհրաժեշտութիւնը, որ օրուան ամենահրատապ պահանջն էր եւ Կաթօլիկ բարեկարգութեան հիմնաքարը կը դառնար: Գոնթարինիի իտեալը կը մարմնաւորուէր 1524–1542-ի Վերոնայի բարեկարգիչ եպիսկոպոս եւ թէաթիններու պաշտպան Յովհաննէս Մատթէոս Կիպերթիի մէջ (1495–1543): 14 տարի Վատիկանի վարչամեքենային մէջ նուիրումով ծառայելէ ետք, երբ Կիպերթի թեմակալ առաջնորդ կ'ըլլար, անոր ուշադրութեան առանցքը կը հանդիսանար հոգեւորականութեան հաւատացեալներու հոգեւոր խնամքին տալիք հոգածութիւնը: Այս բնագաւառին մէջ անոր սահմանած հրահանգները մաս կը կազմէին Թրենթի ժողովի կարգապահական օրէնսդրութեան կողմէ որդեգրուած դրութեան եւ իր օրինակը կը ներշնչէր յետթրենթեան Եկեղեցիի ամենահռչակաւոր հովուական ոգի ունեցող եպիսկոպոսը՝ ս. Գարլօ Պորոմէոն (1538–1584), որ 1560-էն ի վեր Միլանի արքեպիսկոպոս-կարդինալն էր: Թէաթիններուն հետ կապ ունեցող բարեկարգիչ մըն էր նաեւ Յակոբ Մատուլէթօ (1477–1547)՝ Գարբենթրասի զարգացած եպիսկոպոսը, որ կը փորձէր ժնեւցիները Հռոմէական եկեղեցի վերադարձնել եւ որուն դէմ իր նշանաւոր *Պատասխան Մատուլէթոյին*-ը կը գրէր Կալվին:

Թէաթիններու ժամանակակից երկու քահանայական միաբանութիւն եւս կը հաստատուէր Իտալիոյ մէջ: Առաջին՝ «Սուրբ Պօղոսի քահանաներ»-ը Միլանի մէջ կը հիմնուէր 1533-ին, ս. Անտոն Մարիա Չաքարիայի (մահացած՝ 1539-ին) ու անոր երկու գործակիցներուն կողմէ եւ ընդհանրապէս կը կոչուէր «Բարնաբացիներ»՝ իր սեփականութիւնը եղող Միլանի Սուրբ Բարնաբաս եկեղեցիի անունով: Երկրորդ՝ սոմասկիններ, որ ս. Ճիրովամօ Ամիլիանիի կողմէ (մահացած՝ 1537-ին) կը հիմնուէր Սոմասկայի մէջ, հիւսիսային Իտալիա, 1532-ին: Այս երկու միաբանութիւնները, թէաթիններուն նման, մղում կ'առնէին անձնական սրբակեցութեան, քահանայութեան բարեկարգութեան եւ աղքատներուն ու զրկեալներուն, մանաւանդ

հիւսիսային Իտալիոյ պատերազմներէն տուժած զոհերուն, ըն-
ձեռելի օգնութեան սկզբունքներէն:

Կաթոլիկ բարեկարգութեան մէջ կարեւոր դեր կ'ունե-
նային նաեւ կիներու կրօնական կազմակերպութիւնները:
Ասոնցմէ ամենանշանաւորներն էին այն աղջիկներն ու այրի-
ները, որոնք 1535-ին Պրեշայի մէջ կը համախմբուէին ս. Անժելա
Մերիչիի (1474?–1540) գլխաւորութեամբ: Ասոնք «ուրսուլեան-
ներ» կը կոչուէին, որովհետեւ իրենք զիրենք կ'ընծայէին ս.
Ուրսուլայի եւ իրենց բնակարաններուն մէջ ապրելով ու իրենց
ծխական եկեղեցիներուն մէջ պաշտամունքի մասնակցելով
հանդերձ՝ կ'ուխտէին ինքնուրացումի կեանք ապրիլ, իրենց
մեծաւորներուն հնազանդիլ, բարեսիրութիւն կատարել եւ
մանաւանդ երիտասարդուհիներուն կրօնական դաստիա-
րակութիւն ջամբել: Պրեշայի եպիսկոպոսը 1536-ին կը հաս-
տատէր ուրսուլեաններու հիմնադրումը, եւ անոնք շուտով կը
տարածուէին հիւսիսային Իտալիոյ, մանաւանդ Միլանի, իսկ
հետագային՝ Ֆրանսայի մէջ: Թէեւ Մերիչի նպատակադրած էր
աշխարհիկ միաբանութիւն մը հիմնել, սակայն ուրսուլեաններ
վերջապէս վանական միաբանութեան կը վերածուէին: 1546-ին
անոնք կ'որդեգրէին իրենց տարազը, 1572-ին կը հաստատէին
համայնական կեանքի ուխտերը, իսկ 1612-ին Փարիզի ուր-
սուլեանները կը դառնային ս. Օգոստինոսի կանոնը գործադ-
րող վանական միաբանութիւն մը: Ուրսուլեան վանքեր շուտով
կը բազմանային յատկապէս Ֆրանսայի ու Քանադայի մէջ եւ կը
յատկանշուէին աղջիկներու դաստիարակութեամբ: Միաբա-
նութեան ամենանշանաւոր դէմքերէն կը հանդիսանար Մարի
Կույար (1599–1672), ծանօթ նաեւ որպէս «Մարի մարդեղա-
ցումի», աշխարհահռչակ խորհրդագրացը, որ 1639-ին կը հիմ-
նէր Քուէպէքի վանքը:

ԺՁ. դարուն Իտալիոյ մէջ հիմնադրուած միաբանութի-
ւններէն ամենակարեւորը եւ Յիսուսեաններէն ետք ամենէն
ազդեցիկը կը դառնային Գարուչիները, որոնք իրենց անուա-
նումը կը ստանային իրենց կրած քառածայր գլխարկէն: 1525-
ին Գարուչիսեան միաբանութիւնը կը հիմնուէր Մատթէոս

Պասչիոցիի (1495?–1552) եւ անոր երեք ընկերներուն՝ Լուտովիքո ու Ռափայէլ Ֆոստպրոնցի եղբայրներուն եւ Պօղոս Գիոճացիի կողմէ եւ պապական վաւերացում կը ստանար 1528-ին: Չորս հիմնադիրներն ալ ֆրանչիսկեան էին եւ ս. Ֆրանսիսիկանոնի սկզբնական հարազատ պահպանումին ձգտելով՝ կը նուիրուէին ամբողջական աղքատութեան, աւետարանական քարոզութեան, բարոյալից նկարագրի եւ հիւանդներու ու աղքատներու խնամքին: Պասչիոցի կ'ըլլար գաբուշինեան կենցաղի նախաձեռնողը, իսկ Լուտովիքո՝ կազմակերպիչը: Հակառակ ֆրանչիսկեան մեծաւորներու ընդդիմութեան, որոնք մտահոգուած էին, թէ իրենց ամենանուիրեալ անդամները պիտի կորսնցնէին, գաբուշիններ առանձին միաբանութիւն կը դառնային եւ արագ աճ կ'արձանագրէին: Անոնք 1535-ին կ'ունենային շուրջ 700 անդամ, իսկ 1550-ին՝ շուրջ 2500: 1572-էն ետք, երբ Իտալիայէն դուրս եւս վանքեր կը հիմնէին, միաբանութիւնը ամբողջ աշխարհի մէջ կը տարածուէր:

Կրօնական վերանորոգութեան նուիրուած եւ մասնաւորաբար Իտալիոյ եւ Սպանիոյ մէջ ի յայտ եկած այս շարժումները պապականութեան վրայ կ'ազդէին՝ մանաւանդ Պօղոս Գ.-ի գահակալութեան շրջանին (1534–1549): Թէեւ Ատրիան Զ. (1522–1523) բարենորոգութեան ձգտած էր, սակայն իր կարճ գահակալութեան ընթացքին շօշափելի քայլերու չէր կրցած դիմել: Առաւել, ո՛չ Լեոն Ժ. (1513–1521) եւ ո՛չ Կղեմէս Է. (1523–1534) կացութեան լրջութիւնը ըմբռնած էին, եւ իրենց Եկեղեցիի պետի պատասխանատուութիւնը ստանձնելու փոխարէն, իտալացի իշխաններու նման, զբաղած էին քաղաքական եւ տոհմային շահերով: Յամենայն դէպս, հակառակ այն իրողութեան, թէ նախքան հոգեւորական դառնալը բարոյական խախտումներ ունեցած էր եւ իր ընտանիքի անդամներուն բարօրութեան նպաստած, Պօղոս Գ. իր նախորդներէն աւելի գիտակից էր Եկեղեցիի սպառնացող վտանգներուն: Իր գահակալութեան առաջին օրերուն ան բարեկարգիչ եպիսկոպոսներ կարդինալ կը նշանակէր: Ասոնց մէջ էին Գասպար Գոնթարիւնի, Յովհաննէս Պետրոս Գարաֆա, Յակոբ Սատուլէթօ եւ Ռեճի-

նալտ Փոլ. ապա ասոնց կը միանար Գրիգոր Գորթես, իսկ Յովհաննէս Մատթէոս Կիպերթի կը մերժէր կարդինալ դառնալ: Գոնթարինիի փափագով՝ 1536-ին Պօղոս Գ. այս բոլոր անձերը, առաւել երեք ուրիշներ յանձնաժողովի անդամ կը նշանակէր եւ ասոնց կը վստահէր եկեղեցական ընդհանուր ժողովի ընթացքին քննարկելի բարեկարգութիւններու առաջարկներուն նախապատրաստութիւնը: 1537-ին յանձնաժողովը իր զեկոյցը կը ներկայացնէր եւ արհաբար կը հաստատէր, որ Եկեղեցիին մէջ ի յայտ եկող անկարգութիւններու գլխաւոր պատճառը պատկերուն եւ կարդինալներուն ընչաքաղցութիւնն էր: Պօղոս Գ. կ'որդեգրէր կարգ մը առաջարկներ եւ կը նախաձեռնէր Վատիկանի վարչամեքենայի բարեկարգութեան:

Թէեւ Գարաֆա Միջին դարերու վարդապետութեան ջերմ պաշտպան էր, Գոնթարինի եւ Փոլ կը համակրէին Լուտերի արդարացումի վարդապետութեան, ինչպէս նաեւ նոյն վարդապետութեան կը համակրէր օգոստինոսեաններու մեծաւոր Ճիբոլասօ Սերիփանսօ (1492–1563): Այս անձերուն արդարացումի վարդապետութեան հաշտեցումի միտող տեսակէտները պիտի մերժուէին Թրենթի ժողովին՝ հակառակ այն իրողութեան, որ բնաւ բողոքական գաղափարներ չէին: Սակայն Իտալիոյ մէջ նկատառելի թիւ կար, գլխաւորաբար միաբանութիւններու անդամներէ, իշխանուհիներէ եւ հոգեւորական մարդկայնականներէ բաղկացած, որ իրենց համակրանքին մէջ շատ աւելի անդին կ'անցնէր: Ասոնք շատ էին Վենետիկի մէջ, ուր Անտոն Պրուգիոլիի Նոր կտակարանի թարգմանութիւնը կը հրատարակուէր 1530-ին եւ ամբողջ Աստուածաշունչը՝ 1532-ին: Ասոնցմէ ամենանշանակալիցը Նափոլիի մէջ Յովհաննէս Վալտեսցիի (1500?–1541) շուրջ հաւաքուած խմբակն էր: Վալտեսցի երազմոսեան մարդկայնական մըն էր, որ 1529-ին Հռոմ կու գար ու կը լծուէր Չարլզ Ե.-ի ծառայութեան եւ 1534-ին վերջնականապէս կը հաստատուէր Նափոլի: Թէեւ ան որպէս բարեպաշտ կաթոլիկ կը մահանար, սակայն կ'ընդգծէր Աստուածաշունչին ու Եկեղեցիի հայրերուն միակ հեղինակութիւնը եւ կը ջատագովէր Եկեղեցիի խորհուրդներուն եւ ծէսերուն յա-

տուկ կարեւորութիւն չտուող ներքին խորհրդագգաց բարեպաշտութիւնը: Իր աշակերտը՝ Պենետեթօ Մանթուացի, շուրջ 1540-ին կը հեղինակէր իր շրջանակի ամենաժողովրդական երկը՝ *Քրիստոսի մահուան բարիքները*:

Վալտեսցիի բարեկամներէն էին Պետրոս Մարթիրէ Վերմիկլի (1500–1562), որուն հայրը Ճիրովամօ Մաւոնարոլայի հիացողներէն էր, իսկ ինք՝ Նափոլիի Սուրբ Պետրոս օգոստինոսեան վանքին մեծաւորն էր եւ ապագային Սթրազպուրկի ու Օքսֆորտի մէջ բողոքական աստուածաբանութեան դասախօս կը դառնար, եւ Պերնարտինօ Օչինօ (1487–1564)՝ իր օրերու Իտալիոյ ամենանշանաւոր քարոզիչը, 1538–1541-ի գաբուչիններու ընդհանուր մեծաւորին փոխանորդը, ապա Գենթըրպըրիի բողոքական հոգեւորականութեան անդամ, հովիւ Յիրիխի մէջ եւ վերջապէս իր սխալ գաղափարներուն համար թափառական մը, որ իր մահկանացուն Մորաւիոյ մէջ կը կնքէր: 1542-ին Օչինոյի գաբուչիններէն հրաժարումը մեծ վտանգ կ'ըլլար միաբանութեան: Այս խմբակին բարեկամներէն էր նաեւ Գարաֆֆայի զարմիկը՝ Կալէաօ Գարաչիոլի, որ աւելի ուշ Կալվինի սերտ գործակիցը պիտի դառնար Ժնեւի մէջ: Սակայն այս իտալացի միսիոնարները անկազմակերպ էին, իշխանական նեցուկ չունէին եւ չէին յաջողեր պարզ ժողովուրդէն հետեւորդներ ներգրաւել: Իտալիոյ մէջ անոնք եզակի խմբակ մըն էին, Սպանիոյ իրենց համագոր մի քանի բողոքական խմբակներու նման:

Պօղոս Գ. պապը նախ կը տատամսէր արմատական քայլերու դիմելու, որովհետեւ մէկ կողմէ՝ Գոնթարինի հաշտութեան տարբերակը կ'առաջարկէր, իսկ միւս կողմէ՝ Գարաֆֆա վարդապետական հարցերու մէջ խստութիւնը եւ վարչական ու բարոյական հարցերու մէջ ճկունութիւնը կը ջատագովէր: Վերջապէս ան Գարաֆֆայի առաջարկած տարբերակը կ'որդեգրէր, եւ իր հետեւորդներն ալ նոյն ընթացքը կը շարունակէին: Գարաֆֆայի առաջարկով՝ 21 յուլիս 1542-ին Պօղոս Գ. Հռոմէական հաւատաքննութիւնը կը վերահաստատէր եւ զայն ամբողջ քրիստոնէութեան վրայ կը տարածէր, թէեւ ան կ'իրա-

գործուեր միայն պապին նեցուկ հանդիսացող քաղաքական շրջանակներուն մէջ: Հռոմէական հաւատաքննութիւնը կը յաջողէր կասեցնել Իտալական բողոքականութիւնը եւ կը դառնար Հակաբողոքականութեան ամենէն ազդու զենքերէն մէկը:

Աւելի կենսական կ'ըլլար Սպանիոյ մէջ սկսած միսիոնարական կաթոլիկ խանդավառութիւնը հրահրող եռանդը: Ս. Իգնատիոս Լոյոլա (1491–1556) կը հանդիսանար Բարեկարգութեան շրջանի գլխաւոր դէմքերէն մին: Ան ծնած էր հիւսիսային Սպանիոյ ասպետական ընտանիքի մը մէջ: Շրջան մը Ֆերտինանտ թագաւորին պալատին մէջ ծառայելէ ետք ան զինուոր կը դառնար: Երբ 1521-ին ֆրանսացիներ Փամփլոնսան կը գրաւէին, Լոյոլա իր քաջութիւնը ցոյց կու տար, սակայն ծանրապէս վիրաւորուելէ ետք չէր կրնար այլեւս բանակին մէջ ծառայել: Իր ապաքինումի ընթացքին ան սուրբերու վարքը եւ զարթուզեան Լուտուֆ Սաքսոնացիի հեղինակած *Քրիստոսի կեանքը* երկը կը կարդար: Ապա կ'որոշէր Քրիստոսի եւ Սուրբ կոյսի ասպետը դառնալ: Մարտ 1522-ին Մոնթսերաթի Սուրբ Մարիամ ուխտավայրը կ'երթար, իր զենքերն ու զինուորական տարազը սուրբ խորանին վրայ կը դնէր եւ աղքատի ցնցոտին կը հագնէր: Մարտ 1522–փետրուար 1523 կը մեկուսանար Մանրէսա քաղաքին մէջ, ուր կը սերտէր Թովմաս Քեմփացիի *Նմանութիւն Քրիստոսի* գիրքը, ինքզինք խիստ ապաշխարութեան կ'ենթարկէր եւ գերբնական տեսիլներ կ'ունենար:

Մանրէսայի մէջ իր ապրած խորհրդագագացական փորձառութեան լոյսին տակ Լոյոլա կը գրէր իր *Հոգեւոր վարժութիւններ* երկին առաջին տարբերակը, որ 1541-ին կ'աւարտէր Հռոմի մէջ: Այս գիրքին սպաներէնէ լատիներէն թարգմանուած առաջին հրատարակութիւնը 1548-ին տեղի կ'ունենար Հռոմի մէջ: Ան անհատական հոգեւոր կրթանքի համար չէր գրուած, այլ պէտք էր հոգեւոր առաջնորդին հսկողութեամբ կարդացուէր եւ ընթերցողները հոգեւոր նոր ապրելակերպի ընտրութեան առաջնորդէր: Ան կը հրաւիրէր ընթերցողները իրենց յաւիտենական վախճանը Աստուծոյ կապելու: Իրենց հոգիին փրկութեան եւ Աստուծոյ փառքին համար անոնք

Քրիստոսը պետք էր ընտրելին, իրենց մեղքերեն մերկանային եւ այս աշխարհին հանդէպ «հոգեւոր անտարբերութիւն» ցուցաբերելին՝ անոր բոլոր բարիքները Աստուած փառաւորելու համար օգտագործելով: Կարճ ասած, քրիստոնեան ինքզինք ամբողջապէս Աստուծոյ պետք էր յանձնէր, Եկեղեցիի կարգապահ անդամը դառնար եւ աներկբայօրէն հնազանդէր անոր: Լոյովեան հոգեւորութեան մէջ կեդրոնական տեղ գրաւած տառապող Քրիստոսի եւ անոր նուիրապետական Եկեղեցիին հանդէպ հնազանդութիւնը կը փոխարինէր լուստերականութեան մէջ ընդգծուած՝ խաչեալ Քրիստոսով Աստուծոյ անարժան մեղաւորին շնորհած գութը: Ահա հո՛ւ կը կայանար Բողոքական բարեկարգութեան եւ Կաթոլիկ բարեկարգութեան հակադրութեան գլխաւոր կէտը:

1523-ին Լոյովա ուխտաւորաբար Երուսաղէմ կ'երթար, որպէսզի իսլամներուն մէջ իբրեւ միսիոնար ծառայէր Քրիստոսի. սակայն ֆրանչիսկեաններ, որոնց կ'ուզէր միանալ, զինք վտանգաւոր համարելով, տուն կը ճամբէին: Համոզուելով, թէ իր առաքելութիւնը իրագործելու համար ուսումի կարիք ունէր, 1525-ին Պարսելոնայի մէջ մանչերու դպրոց մը կը մտնէր եւ ապա Ալզալայի (1526–1527) ու Սալամանգայի (1527) համալսարանները կը յաճախէր: Ի ծնէ առաջնորդ ըլլալով՝ իր շուրջ կը համախմբէր համախոհ անձեր եւ ի գործ կը դնէր իր հեղինակած հոգեւոր փորձերը: Սպանական հաւատաքննութեան կողմէ կասկածելի նկատուելով՝ ան շրջան մը կը բանտարկուէր: 1528-ին Փարիզի համալսարանի Մոնթէլկու գոլէճը կը մտնէր ճիշդ այն ատեն, երբ Կալվին հոնկէ կը մեկնէր: Ան հրապարակային գործունէութիւն չէր ունենար հոս, այլ իր շուրջ կը խմբէր մօտիկ ընկերներ եւ աշակերտներ, ինչպէս՝ Պետրոս Լըֆէր, Ֆրանսիս Ջելվերր, Տիեկօ Լայնէզ, Ալֆոնսօ Սալմերօն, Նիկողայոս Պոպատիլա եւ Սիմոն Ռոտրիկէզ: 15 օգոստոս 1534-ին Մոնմարթի մատուռներէն մեկուն մէջ այս անձերը կ'ուխտէին թուրքերը քրիստոնեայ դարձնելու համար որպէս միսիոնար երթալ Երուսաղէմ եւ եթէ իրենց առաքելութեան մէջ ձախողէին, կը խոստանային իրենք զիրենք ամբողջապէս

պապին տրամադրութեան տակ դնել: Այս խումբին անմիջապէս կը միանային երեք անձեր եւս՝ Գլոտ Ճայեցի, Փասկաս Պրոէ եւ Յովհաննէս Գոտուր:

Իրենց ուսումը աւարտելէ ետք՝ 1537-ին, այս տասը գործակիցները Վենետիկ կը հաւաքուէին իրենց խոստումը կատարելու համար, սակայն Երուսաղէմ պատերազմի մէջ ըլլալով իրենք զիրենք պապին կը մատուցէին: 1539-ի գարնան Լոյոլա զիրենք Հռոմ կը հրաւիրէր, եւ յունիսին անոնք կը կազմէին «Յիսուսի ընկերակիցներ» խմբակը՝ նպատակ ունենալով մանուկներուն ու անգրագէտներուն ուսում ջամբել, ժողովրդային քարոզիչներ դառնալ, հիւանդանոցներու մէջ հովիւ ըլլալ եւ միսիոնարութիւններու ու հոգեւոր հաւաքներու առաջնորդութիւնը ստանձնել: Մոնմարթի մէջ իրենց ըրած կուսակրօնութեան ու աղքատութեան ուխտերուն կողքին՝ անոնք կ'ուխտէին նաեւ հնազանդ ըլլալ պապին եւ երթալ հոն, ուր ան որոշէր դրկել զիրենք: Խմբակը բողոքականութեան դէմ պայքարելու համար չէր կազմուեր, թէեւ 1550-ականներուն այդ կը դառնար անոր գլխաւոր թիրախը: Լոյոլայի նպատակը իսլամական աշխարհ ներթափանցելն էր, ինչպէս Տրանչիսքօ Ձէյվերը (ս. Տրանսիս Ձէյվերը, 1506–1552) կը նախաձեռնէր Հնդկաց ովկիանոսի կղզիներու քրիստոնէացումին: Հակառակ եկեղեցական ընդդիմութեան եւ համակրելով Գոնթարինիի բարեացակամ վերաբերումին եւ Լոյոլայի կարողութիւններուն՝ Պօղոս Գ. 27 սեպտեմբեր 1540-ին կ'արտօնէր «Յիսուսի ընկերակիցներ» խմբակին գործունէութիւնը: Սակայն անոր կազմակերպչական երեսը տակաւին անորոշ կը մնար. յստակ էր միայն մէկ բան, թէ ան պիտի ունենար մեծաւոր մը, որուն ամբողջական հնազանդութիւն պիտի ցուցաբերէր եւ ծառայէր ուր որ այս մեծաւորը եւ պապը զինք դրկէին: Ապրիլ 1541-ին միաբանութեան առաջին մեծաւորը կ'ընտրուէր Լոյոլա եւ այս պաշտօնը կը վարէր մինչեւ իր մահը՝ 31 յուլիս 1556:

Յիսուսեաններուն կազմակերպութեանը աստիճանաբար տեղի կ'ունենար եւ կ'ամբողջանար Լոյոլայի մահէն ետք, թէեւ անոր կը պարտէր իր գլխաւոր բնագաւառներուն

դասաւորումը: Մեծաւորը միաբանութեան կողմէ ցկեանս կ'ընտրուէր, եւ միաբաններ պարտաւոր էին ամբողջական հնազանդութիւն ցուցաբերել անոր: Իսկ մեծաւորին վրայ կը հսկէին դարձեալ միաբանութեան կողմէ ընտրուած չորս օգնականներ, որոնք ի պահանջել հարկին կրնային զայն պաշտօնանկ ընել: Իւրաքանչիւր տարածաշրջան ուներ մեծաւորին կողմէ նշանակուած շրջանային մեծաւոր մը: Միաբանութեան անդամ դառնալու համար թեկնածուն պարտաւոր էր անցընել երկու տարուան նորընծայութեան շրջան մը, որուն կը յաջորդէր «դպրոցականութիւն» կոչուող անսահմանափակ շրջանը, որ մարդկայնական, իմաստասիրական, աստուածաբանական եւ այլ նիւթերու ուսումին յատկացուած էր: «Դպրոցականութիւնը» թեւակոխողը կը կատարէր աղքատութեան, կուսակրօնութեան եւ հնազանդութեան նախնական ուխտերը, միաբանութեան կ'անդամակցէր, կը ձեռնադրուէր եւ տարի մը եւս կ'անցընէր հոգեւոր պատրաստութեամբ, որ կը բնորոշուէր իբրեւ «երրորդ փորձարկութիւն»: Այս բոլորէն ետք ան որպէս «կազմաւորեալ հոգեւոր օժանդակ», միաբանութեան անդամ կը դառնար ու հոգեւոր մարզի պարտաւորութիւններ կը ստանձնէր եւ կամ որպէս լրիւ անդամ՝ կը կատարէր աղքատութեան, կուսակրօնութեան եւ հնազանդութեան անբեկանելի ուխտերը: Որպէս միաբանութեան լրիւ անդամ՝ որոշ ժամանակ ետք ան նաեւ կը կատարէր պապին ուղղակի հնազանդ ըլլալու չորրորդ ուխտն ալ: Միաբանութեան ղեկավար մարմինը կը բաղկանար չորրորդ ուխտը կատարած հայրերէն: Իրենց հովուական պարտաւորութիւնները չսահմանափակելու համար՝ յիսուսեաններ պաշտամունքի սահմանեալ ժամեր եւ յատուկ եկեղեցական զգեստ չունէին վանականներուն նման ու ամենօրեայ ժամերգութեան պարտադրեալ կատարումէն եւս զերծ էին եւ այսպէսով վանական աւանդութենէն խզեալ վիճակ կը պարզէին: Իւրաքանչիւր անդամ իր կեանքը կը կազմակերպէր Լոյովայի *Հոգեւոր վարժութիւններ* երկին համաձայն: Միայն ծիսական կեանքով եւ իր հոգեւոր խորհրդատուին հետ հաղորդակցութեամբ ընդմիջուած առանձնացումին ու լռութեան մէջ,

ենթական չորս շաբաթ ծրագրուած խորհրդածութեամբ Քրիստոսի կեանքին ու գործին վերլուծումը կը կատարէր եւ չարին դէմ կը պատերազմէր: Իր հերթին, հոգեւոր խորհրդատուն թեկնածուին կարիքներուն եւ կարողութիւններուն համաձայն անհրաժեշտ ուղղութիւնը կու տար:

Լոյովայի հիմնադրած միաբանութեամբ Վերածնունդի անհատականութիւնը եւ կամքի զոհողութիւնն ու հոգիին հնազանդութիւնը սքանչելիօրէն ի մի կու գային:

Յիսուսեաններ արագօրէն կը տարածուէին Իտալիոյ, Սպանիոյ ու Փորթուկալի մէջ, եւ Լոյովայի մահուան օրերուն շուրջ 1000-ի կը հասնէին. սակայն անոնց աճը կը դանդաղէր Ֆրանսայի եւ Գերմանիոյ մէջ: ԺՋ. դարու երկրորդ կէսին յիսուսեաններ կը հանդիսանային Կաթոլիկ վերագարթօնքի եւ ընդդէմ Բարեկարգութեան ամենէն ազդեցիկ միակ ուժը: Անոնց յաջողութեան գլխաւոր ազդակներն էին քարոզութիւնը, խոստովանանքը, դպրոցներն ու միսիոնարութիւնը: Յիսուսեան ազդեցութեամբ խոստովանանքին ու սուրբ հաղորդութեան յաճախակիութիւնը կ'օրինականային կաթոլիկ երկիրներու մէջ, եւ յատկապէս խոստովանանքին օժանդակելու համար՝ յիսուսեան բարոյականին ընդգծումը խստիւ կը քննադատուէր բողոքականներու եւ կաթոլիկներու կողմէ: Այսպիսի միջազգային ընկերակցութիւն մը նաեւ քաղաքական ուժ կը դառնար անդամներուն՝ իրենց մեծաւորներուն յղուած յաճախակի զեկոյցներուն օժանդակութեամբ:

Յիսուսեաններուն կողքին Թրենթի ժողովը կը դառնար Կաթոլիկ բարեկարգութեան եւ Բողոքական հակաբարեկարգութեան գլխաւոր ազդակը: Յիշեալ ժողովը վերջապէս դեկտեմբեր 1545-ին կը գումարուէր՝ ի պատասխան Չարլզ Ե.-ի փափագին եւ Պօղոս Գ.-ի հրաւերին: Մարտ 1547-ին իտալացի մեծամասնութիւնը զայն կը փոխադրէր Պոլոնիա, ուր կը շարունակէր գումարուիլ մինչեւ սեպտեմբեր 1549: Մայիս 1551-ին ան կը վերափոխադրուէր Թրենթ, ուր սպանացի մեծամասնութիւնը արդէն իսկ մնացած էր: 25 ապրիլ 1552-ին ան կը ցրուէր Սաքսոնիոյ Մորիցի կայսրին դէմ գլխաւորած բողոքա-

կան ընդդիմութեան ճնշումին հետեւանքով: Յունուար 1562-ին ան վերստին ի նիստ կը հրաւիրուէր եւ 4 դեկտեմբեր 1563-ին կ'աւարտէր իր աշխատանքը: Ժողովը երեք գլխաւոր ժամանակաշրջաններով 25 նիստ կը գումարէր: Առաջին ժամանակաշրջանին (1545–1547), երբ ամենակարեւոր վարդապետական որոշումները կ'առնուէին, ժողովին ոչ աւելի քան 72 քուարկող կը մասնակցէր. իսկ վերջին ժամանակաշրջանին (1562–1563) այս թիւը 200-ը կ'անցնէր: Քուէարկելու իրաւատւոթիւն ունէին եպիսկոպոսները, կրօնաւորներու միաբանութիւններու մեծաւորներն ու ազդեցիկ աբբահայրերը, եւ քուէարկութիւնը անհատական էր եւ ո՛չ ազգային, ինչպէս էր պարագան Կոնստանսի ժողովին: Միշտ ալ ժողովին մեծամասնութիւն էին իտալացիները, որոնք կ'արտայայտէին պապական այն փափագը, թէ վարդապետութեան պահպանութիւնը բարեկարգութենէն առաջնահերթ էր: Իսկ սպանացի եպիսկոպոսները կողմնակից էին կայսրին այն փափագին, թէ բարեկարգութիւնը վարդապետութեան պահպանութենէն աւելի հրամայական էր: Վերջապէս ժողովականներ կը համաձայնէին, թէ վարդապետութիւնն ու բարեկարգութիւնը համատեղ պէտք էր քննարկուէին, սակայն բոլոր որոշումները պէտք էր ենթարկուէին պապին վաւերացումին. այսպէսով ժողովը կը զօրացնէր պապական գերակայութիւնը: Ժողովի ընթացքին տիրական կը դառնային պապին համակիր աստուածաբանութեան մասնագէտներ՝ յիսուսեան Տիեկօ Լայնէզ (1512–1565) եւ Ալֆոնսօ Սալմերօն (1515–1585), որոնք բողոքականութեան դէմ աճող ազդեցութիւնը կը զօրացնէին:

Թրենթի ժողովի վարդապետական որոշումները շատ յստակօրէն եւ բացայայտօրէն կը մերժէին բողոքական հաւատալիքները: Ժողովը կը հաստատէր, որ մեղքերէ արդարացումը միայն հաւատքով իրագործելի չէր, այլ սիրոյ բխում եղող գործերով զարդարուած հաւատքով, հետեւաբար փրկութիւնը հիմնուած էր բնատուր արդարութեան վրայ: Աստուածաշունչն ու անգիր «առաքելական» աւանդութիւնները համահաւասարապէս աստուածային ճշմարտութեան աղբիւրներ էին եւ նոյն

մեծարանքով պետք էր ընկալուէին: Միայն Եկեղեցին իրաւունք ունէր վաւերականօրէն մեկնաբանելու Աստուածաշունչը, որուն սրբազան ու կանոնական բնագիրը լատին Վուլկաթան էր: Եկեղեցիին խորհուրդները եօթն էին եւ ո՛չ երկու կամ երեք: Ապաշխարութեան խորհուրդը խոստովանութիւն, զղջում եւ վնասներու հատուցում կը ներառէր, ու Եկեղեցիին կը պատկանէր ներում շնորհելու իրաւասութիւնը: Սուրբ պատարագի ընթացքին հացն ու գինին կը գոյացափոխուէին. սուրբ պատարագի մատուցումը կը վերաներկայացնէր խաչի խորանին վրայ Քրիստոսի ինքնամատուցած քաւչարար զոհագործումին անարին մատուցումը եւ ան ո՛չ միայն ողջերուն, այլեւ քաւարանին մէջ գտնուող հաւատացեալներուն համար ի զօրու էր, եւ այս պատճառով ալ «անհատական սուրբ պատարագները» յանձնարարելի էին: Սուրբ պատարագի գինիին բաժակը պետք չէր տրուէր աշխարհականներուն, եւ լատիններէնը պետք էր մնար ծիսական լեզուն:

Ահա այսպիսի եւ ասոնց նման այլ որոշումներով Թրենթի ժողովը փոխզիջումի բոլոր դուռերը կը փակէր եւ կը մերժէր Միջին դարերուն կաղապարուած բողոքական գլխաւոր վարդապետութիւնները: Ներկայի գիտական քննարկումները կու գան ըսելու, թէ Թրենթեան որոշումները յատուկ զգուշաւորութեամբ առնուած էին, հակաբողոքական չէին եւ կրնային աստուածաբանական մերձեցումի կարելիութիւններուն դուռ բանալ: Սակայն այդ օրերուն անոնք կաթոլիկ եւ բողոքական կողմերուն միջեւ հաշտեցումի բոլոր ճամբաները կը փակէին:

Թրենթի ժողովին նախաձեռնած բարեկարգչական քայլերը թէւ բազմաթիւ կաթոլիկներուն կողմէ անբաւարար կը համարուէին, սակայն Եկեղեցիի հովուական կեանքին, եւ հետեւաբար նաեւ հոգեւոր կեանքին, վերանորոգութեան ենթահողը կը դառնային: Ասոնցմէ գլխաւորը կը հանդիսանար եպիսկոպոսներուն իրենց աթոռներուն վրայ ունեցած վերատեսչութեան ու հովուական պատասխանատուութիւններուն սահմանումը: Այլեւս եպիսկոպոսը «Առաքելական աթոռին նուիրակը» կը դառնար իր թեմին մէջ եւ կը սահմանափակէր

Վատիկանի վարչամեքենային, պատուիրակներուն ու նրա րակներուն Միջին դարերու Եկեղեցիին մէջ վայելած բազմաթիւ առանձնաշնորհումները: Եպիսկոպոսական այս հեղինակութիւնը ի գործ կը դրուէր թեմական ժողովներու կանոնաւոր գումարումով եւ տարեկան հովուական այցելութիւններով: Առաւել, եպիսկոպոսներ պարտաւոր էին կանոնաւորաբար քարոզել, իրենց թեմին մէջ բնակիլ եւ միայն մէկ թեմի առաջնորդութիւնը ստանձնել: Ծուխերու հովիւներն ալ պարտաւոր էին փրկութեան Աւետարանը ուսուցել եւ տիպար օրինակ դառնալ իրենց հօտին: Այս բոլորին իրագործումին համար՝ Թրենթի ժողովին ամենակարեւոր որոշումը կ'ըլլար բացումը դպրեվանքերու, որոնք կը ծառայէին որպէս «աստուածապաշտութեան կոչուած սպասաւորներու մնայուն կրթարաններ»: Եթէ համալսարան չկար, եպիսկոպոսը պարտաւոր էր իր թեմին մէջ այսպիսի դպրեվանք հաստատել, որպէսզի արժանաւոր հոգեւորականներ կազմաւորուէին: Կրօնաւորական միաբանութիւններու եւ աշխարհիկ ամուսնութիւններու համար եւս բարեկարգչական օրէնքներ սահմանելու կողքին՝ ժողովը կը նախատեսէր արգիլեալ գիրքերու ցուցակ մը, որ պապը պետք էր պատրաստէր՝ հետեւելով Պօղոս Դ.-ի 1557-ի օրինակին: Այս որոշումը կը գործադրուէր 1571-ին, երբ Պիոս Ե. (1566–1572) Հռոմի մէջ կը հաստատէր արգիլեալ գիրքերու գրաքննութեամբ զբաղող բաժանմունքը:

Թրենթի ժողովին մասնակցած սպանացի տոմինիկեան աստուածաբան Մելխիոր Գանօ (1509–1560) կը դառնար կաթոլիկ դիրքորոշումին մեծագոյն պաշտպանը՝ շնորհիւ իր մահէն երեք տարի ետք լոյս տեսած *Տասներկու տեղիքներու աստուածաբանական գիրք* երկին: Ան կ'ուսուցէր, թէ աստուածաբանութիւնը հեղինակութեան վրայ կը հիմնուէր: Աստուածաշունչին հեղինակութիւնը կը հիմնուէր Եկեղեցիին՝ զատորոշելու եւ հաստատելու իրաւասութեան վրայ, որ կ'որոշէր, թէ ի՛նչ էր Աստուածաշունչը. սակայն քրիստոնէական վարդապետութեան ամբողջականութիւնը միայն Աստուածաշունչին մէջ խտացած չըլլալով՝ Եկեղեցի հասած եւ անկէ ճշորոշուած

Աւանդութիւնը հեղինակութեան այլ աղբիւր կը հանդիսանար: Գանօ Ֆրանչիսքօ Վիթորիացիի աշակերտն ու յաջորդը եղած էր Սալամանգայի համալսարանին մէջ: Հետեւաբար ան կարկառուն ներկայացուցիչներէն մին էր Վիթորիացիի հաստատած «նոր դպրոցականութեան», որ Ագուինացիի *Աստուածաբանութեան ամբողջութիւն*-ը աստուածաբանական գլխաւոր երկը եւ ո՛չ Լոմպարտցիի *Նախադասութիւններու չորս գիրքերը*-ը, եւ վարդապետական ու բարոյական աստուածաբանութիւնը կասկածելի տարբերէ մաքրելով՝ կը հաստատէր Աստուածաշունչին եւ Եկեղեցիի հայրերուն ուսուցումներուն վրայ:

Այս բոլորին ազդեցութեամբ՝ 1565-ին Եկեղեցիի բոլոր մակարդակներուն վրայ, եւ յատկապէս բարձրագոյն կարգերուն մէջ, կաթոլիկութիւնը վերապրում կ'ունենար: Պապերը, բարեկարգութեան եռանդով օժտուած, ժուժկալ կէանք կ'ապրէին եւ Հռոմ կը վերածուէր Վերածնունդի օրերէն աւելի շեշտակի եկեղեցական դրոշմ ունեցող քաղաքի մը: Բողոքականութեան հակադրուած, աստուածաբանականօրէն պահպանողական, սակայն միաժամանակ վարչական բարեկարգութեան համակրող եւ քրիստոնէական հաւատքին համար մինչեւ իսկ մահը յանձն առնող նոր ոգի կը տիրէր ամենուրեք: Այս մթնոլորտին ազդեցութեան տակ բողոքականութիւնը ո՛չ միայն նոր տարածքներ չէր մտներ, այլեւ հարաւային Գերմանիոյ մէջ իր արձանագրած յաջողութիւններուն մէջ զգալիօրէն կը նահանջէր: Կաթոլիկութիւնը կը յուսար վերաշահիլ իր կորսնցուցածը:

Կաթոլիկ վերագարթօնքը գիտական մակարդակի վրայ մասնաւորաբար ի յայտ կու գար յիսուսեան Ռոպերթօ Պելարմինոյի (ս. Ռոպերթօ Պելարմին, 1542–1621) հեղինակութիւններով: Ան ծնած էր Թոսգանիոյ մէջ եւ 1560-ին կ'անդամակցէր յիսուսեան միաբանութեան, 1576-ին յիսուսեաններու Հռոմի գովեճին մէջ կը դասախօսէր եւ 1599-ին կարդինալ կ'ըլլար: Իր *Հակաճառութիւններ մեզի ժամանակակից հերետիկոսներուն* եռահատոր երկը (1586–1593) Թրենթի ժողովին մշակուած կաթոլիկութեան ամենէն ազդեցիկ պատմական եւ տրամա-

բանական պաշտպանողականն էր՝ ընդդեմ Բողոքական բարեկարգութեան: Պատմական կաթոլիկութեան Պելարմինոյի հաւասարագօր պաշտպան մըն էր նաեւ Սեզար Պարոնիոս (1538–1607), որ Սուրբ Փիլիպպոս Ների աշխատականներու վանքին մէջ վանական եւ ապա մեծաւոր կ'ըլլար, 1596-ին կարդինալութեան կ'արժանանար եւ 1597-ին Վատիկանի մատենադարանապետութիւնը կը ստանձնէր: Պարոնիոսի 12 հատորներէ բաղկացած եւ 1588–1607-ին հեղինակած *Եկեղեցական տարեգրութիւն*-ը մասնաւորաբար կը գրուէր լուտերական աստուածաբան Մաթիաս Ֆլագիոս Իլիրիգոսի (1520–1575) եւ անոր վեց գործակիցներուն պատրաստած *Քրիստոսի եկեղեցիի պատմութիւնը* 13 հատորներէ բաղկացած եւ 1559–1574-ին գրուած աշխատասիրութեան դէմ: Թէեւ այս երկու կոթողական երկասիրութիւններն ալ միակողմանի էին, սակայն Պարոնիոս Վատիկանի արխիւներուն շնորհիւ նոր նիւթեր երեւան կը բերէր եւ բնագրերուն հարազատութեամբ կը գերազանցէր *Քրիստոսի եկեղեցիի պատմութիւնը*:

Կաթոլիկ բարեկարգութեան յաճախակի կրկնուող թեման արժանաւոր հոգեւորականութեան ձեռքբերումն էր: ԺՁ. դարուն սկիզբը այս նպատակը Կայեթանօ Թիենացին եւ թիենացիները կը խթանէր, իսկ դարուն աւարտին՝ Փիլիպպոս Ներեցին (ս. Փիլիպպոս Ներեցի, 1515–1595) եւ իր գործակիցները: Ներեցի ծնած էր Ֆլորանսի մէջ, ուսումը կը ստանար տոմինիկեաններուն քով՝ Սուրբ Մարկոս վանքին մէջ եւ 1533-ին Հռոմ գալով ինքզինք կը նուիրէր առանձնակեաց հսկումներու եւ ուխտատուներու ու ախտաժէտներու խնամքին: 1551-ին ան քահանայ կը ձեռնադրուէր եւ շուտով որպէս խոստովանահայր ու երեկոյեան ժամերգութիւններու ժամօրհնող «Հռոմի առաքեալ» տիտղոսին կը տիրանար եւ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր: Այս տիպի գործունէութիւնը ծնունդ կու տար աշխարհիկ քահանաներէ բաղկացած միաբանութեան մը, ծանօթ որպէս աղօթականներ, որ առանց ուխտադրութեան համայնքին մէջ կ'ապրէր եւ 1575-ին Գրիգոր ԺԳ. պապին (1572–1585) կողմէ պաշտօնական ճանաչումի կ'արժանանար: Այս

միաբանութեան անդամները կը փորձէին ժողովուրդը Աստուծոյ մերձեցնել աղօթքի, քարոզախօսութեան, խոստովանանքի եւ եկեղեցական երաժշտութեան ճամբով: Յաջորդ դարուն անոնք նշանաւոր կը դառնային իրենց հոգեւոր երգերով: Ներեցիի հետեւողներէն էր այս հոգեւոր երգերէն շատերուն հեղինակն ու Հռոմէական եկեղեցիի երաժշտութեան բարեկարգիչը՝ Յովհաննէս Փալեսթրինա (1525?–1594):

1611-ին Փարիզի մէջ կը հիմնուէր աղօթականներու ֆրանսական ճիւղը՝ Պետրոս Պերուլացիին կողմէ (1575–1629) եւ շուտով կը տարածուէր Ֆրանսայի ու Հոլանտայի մէջ: Մինչ Ներեցիի հռոմէական աղօթավայրը անկախ տուններէ կը բաղկանար, Պերուլացիի ֆրանսական աղօթավայրը մեծաւորի մը կողմէ կառավարուած կեդրոնաձիգ իշխանութիւն կը դառնար եւ 1613-ին Պօղոս Ե. պապին (1605–1621) կողմէ պաշտօնապէս կը հաստատուէր որպէս Յիսուս Քրիստոսի աղօթավայր: Անոր գլխաւոր առաքելութիւնը կ'ըլլար Թրենթի ժողովի որոշումներուն հաւատարմութեամբ քահանաներ կազմաւորել դպրեւանքերուն մէջ: Պերուլացի մարդացեալ Քրիստոսի հանդէպ իր ունեցած բարեպաշտութեամբ կը յատկանշուէր եւ զայն լաւագոյնս կը ցոլացնէր իր *Յիսուսի մեծութիւնները* ամենանշանաւոր երկին մէջ:

Կաթոլիկ զարթօնքը նաեւ կը յատկանշուէր խորհրդագրաց բարեպաշտութեան ծաղկումով, որուն մէջ Սպանիան կը գրաւէր առաջին տեղը: Այս հոգեւորութեան գլխաւոր երեւոյթը անձնուրաց լռութիւնն էր, երբ հոգին անձայն աղօթքով ու մտածականով աստուածային սիրոյն կը միանար եւ կամ ներքին յայտնութեամբ կը ներգրաւուէր: Աղօթքը կարելի էր միայն ամբողջական անձնուրացութեամբ, որովհետեւ Աստուած կը լնուր միայն այն հոգին, որ ինքզինք լրիւ կը դատարկէր: Այս բարեպաշտութեան ակնառու ներկայացուցիչներն էին Թերեզա Աւիլացին (ս. Թերեզա, 1515–1582) եւ իր աշակերտը՝ Յովհաննէս Ֆոնթիւերոցին (Խաչի ս. Յովհաննէսը, 1542–1591): Աւիլացի աղօթական կեանքը կը ներկայացնէր իր *Կատարելութեան ճանապարհը* (1565) եւ *Ներքին դղեակը* (1577) երկե-

րով, իսկ Ֆոնթիւերոցիի *Կարմեղոս լեռ բարձրանալը, Հոգիին խաւար գիշերը, Հոգիին երգը* ու *Սիրոյ կենդանի բոցը* գիրքերը կը բացայայտէին խորհրդագգաց վարդապետութիւնը եւ կը դառնային գրական գոհարներ: Ֆոնթիւերոցիի գիրքերը նախ լոյս կը տեսնէին 1618-ին Ալզալայի մէջ, իսկ անոնց քննական հրատարակութիւնը տեղի կ'ունենար 1912–1914-ին: Սպանացի այս երկու խորհրդագգացները կը նպաստէին Սպանիոյ կարմեղեան միաբանութեան բարենորոգութեան եւ բոլորի կարմեղեան եղբայրներու ու քոյրերու բազմաթիւ տուններու հաստատումին:

Թերեզեան խորհրդագգացութիւնը Ֆրանսայի մէջ թէւ գլխաւորաբար Պետրոս Պերուլացիի շնորհիւ կը տարածուէր, սակայն անոր կը նպաստէին նաեւ Ֆրանսուա Սալեցին (ս. Ֆրանսիս Սալեցի, 1567–1622), որ 1602-ին ժնեւի եպիսկոպոսը կ'ըլլար եւ կը յաջողէր Հռոմէական եկեղեցիէն հեռացածները վերադարձնել, եւ անոր աշակերտուհի՝ Ժանն Ֆրանսուա Շանթալը (ս. Ժէյն Շանթալ, 1572–1641): Սալեցիի *Ներածութիւն բարեպաշտ կեանքի* (1609) երկը ներանձնական բարեպաշտութիւնը փակարանէն դուրս կը բերէր եւ ցոյց կու տար, թէ մարդկային կամքին դրական ուժականութեամբ հոգեւոր կատարելութեան կրնային հասնիլ նաեւ պարզ աշխարհական հաւատացեալները եւ ո՛չ միայն վանականն ու մայրապետը: Այսպէսով կաթոլիկ բարեպաշտութեան նոր շեշտ կը դրուէր, թէ բարեպաշտ կեանքը դիւրահասանելի էր, երբ Եկեղեցիի խորհուրդներով, մանաւանդ յաճախակիօրէն սուրբ հաղորդութիւն ստանալով, կը սնուցուէր եւ կարող հոգեւոր խորհրդատուով կ'առաջնորդուէր:

1610-ին Անենսիի մէջ Սալեցի եւ Շանթալ կը հիմնէին այցելութեան միաբանութիւնը, որ նաեւ ծանօթ էր սալեզեան քոյրեր անունով: Սկզբնապէս ան հիւանդներուն եւ աղքատներուն այցելող հոգեւոր քոյրերու համախմբում մըն էր, սակայն 1618-ին աղջիկներու դաստիարակութեան նուիրուած կրօնաւորուհիներու պաշտօնական կարգ կը դառնար:

Կաթոլիկ վերագարթօնքը 202ափելի յաջողութիւններ կ'արձանագրէր նաեւ միսիոնարական մարզին մէջ, ուր սկզբնապէս գործուն դերակատարութիւն կ'ունենային ֆրանչիսկեաններ ու տոմիսիկեաններ եւ ապա անոնց կը միանային յիսուսեաններ: Այս միաբանութիւնները քրիստոնէայ կը դարձնէին Հարաւային, Կեդրոնական եւ Հիւսիսային Ամերիկաներու մեծ մասն ու Ֆիլիպինը: Այս միսիոնարներուն մէջ ամենանշանաւորն էր Լոյոլայի գործակիցներէն Ֆրանչիսքօ Ջէվլերը: Փորթուկալի Յովհաննէս Գ. թագաւորին խնդրանքով ան Լոյոլայի կողմէ Հնդկաստան կ'առաքուէր եւ մայիս 1542-ին, հասնելով Կոյա, աշխուժ գործունէութեան կը սկսէր: Ան կը քարոզէր հարաւային Հնդկաստանի, Մալայայի եւ Մոլուգասի մէջ: Ջէվլերը 1549-ին Ճաբոն կ'անցնէր եւ կը մահանար 1552-ին, երբ կը պատրաստուէր Չինաստան մտնել: Ջէվլերի առաքելութեան շնորհիւ կը բացուէին քրիստոնէութեան տարածումի նոր կարելիութիւններ:

1583-ին յիսուսեան Մատթէոս Ռիչի (1552–1610) որպէս միսիոնար կ'երթար Չինաստան: Սակայն անոր «բոլոր մարդերու ամեն բան» դառնալու մօտեցումը զինք նախնիներու պաշտամունքին մէջ կը ներքաշէր. տկարութիւն մը, որուն խստիւ կը հակառակէին այլ միսիոնարներ եւ յատկապէս տոմիսիկեանները: Հնդկաստանի մէջ առաջին քրիստոնէայ դարձողները կու գային անտեւուած եւ ցած դասակարգերէ: 1606-ին Մատուրայի մէջ յիսուսեան Ռոպերթօ Նոպիլիցին (1577–1656) կը զբաղէր բարձր դասակարգի դարձով: Ան թէեւ մեծ յաջողութիւն կ'ունենար, սակայն իր օգտագործած աշխատակարգերը կը քննադատուէին, եւ 1744-ին պապականութիւնը կ'արգիլէր անոր գործունէութիւնը: Յիսուսեան միսիոնարութիւնը ամենաշատ յաջողութիւնը կ'արձանագրէր Փարակուէլի մէջ, ուր միսիոնարներ կը ժամանէին 1583-ին: 1610-ին միսիոնարներ փարակուացիները կը խմբէին նորակառոյց փակ գիւղերու մէջ, ուր անոնք խաղաղ պայմաններու մէջ կրօնական դաստիարակութիւն կը ստանային եւ ամեն բանի համար իրենց միսիոնարներուն կ'ապաւինէին: Այս դրութիւնը առանց մնա-

յուն յաջողութիւն արձանագրելու կ'աւարտէր, երբ 1767-ին յիսուսեաններ երկիրէն դուրս կը դրուէին:

Զանազան միաբանութիւններու միջեւ մրցակցութիւնն ու միսիոնարական աշխատանքը վերահսկելու սկզբունքը կը մղէին Գրիգոր ԺԵ. պապը (1621–1623) 1622-ին հիմնադրելու «Հաւատքի տարածումի ժողովը», որուն պարտականութիւնը պիտի ըլլար Հռոմէն ղեկավարել միսիոնարական գործունէութիւնը:

ԺԲ. ԳԼՈՒԽ
ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ
ՖՐԱՆՍԱՅԻ, ՀՈԼԱՆՏԱՅԻ ԵՒ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ

Ֆրանսայի եւ Սպանիոյ իշխանական տոհմերուն միջեւ տեղի ունեցող մրցակցութիւնները եւ անոնց քաղաքական ու զինուորական հետեւանքները պատճառ կը դառնային, որ Բարեկարգութիւնը աճէր, եւ 1555-ի Օկսպուրկի խաղաղութեան դաշինքով Գերմանիան լուտերականներուն եւ կաթոլիկներուն միջեւ բաժնուէր, իսկ կալվինականներն ու կրկնամրկրտականները դուրս ձգուէին այս համաձայնութենէն: Ֆրանսայի մէջ Հենրի Բ. (1547–1559) կը յաջորդէր Ֆրանսիս Ա.-ի, մինչ Չարլզ Ե. իր որդիին՝ Փիլիպպոս Բ.-ի (1556–1598) կը փոխանցէր Սպանիոյ, Հոլանտայի, Իտալիոյ մէջ գտնուող սպանական տարածքներուն եւ նոր աշխարհի իշխանութիւնը. սակայն այս իշխանաւորներուն միջեւ տիրող հին թշնամութիւնը կը շարունակուէր: Սիկզբը Փիլիպպոս Բ. իր հօրմէն աւելի յաջողութիւններ կ'արձանագրէր պատերազմական ճակատի վրայ եւ օգոստոս 1557-ին Սէն-Գուէնթենի ու յուլիս 1558-ին Կրաւելիսի յաղթանակները կը ստիպէին Ֆրանսսան որ 2 ապրիլ 1559-ին Գաթո-Գամպրէզիի դաշինքը ստորագրէր: Այս դաշինքը կարելոր հանգրուան մըն էր Եւրոպայի պատմութեան մէջ, որովհետեւ Ֆրանսսան Իտալիոյ վրայ իր ունեցած երկարատեւ միահեծանութիւնը կը զիջէր եւ տասնամեակներ շարունակ քաղաքական ու կրօնական պատերազմներու մէջ մխրձուելով անկում կ'ապրէր: Սպանիա կը դառնար Եւրոպայի գերիզօր իշխանութիւնը եւ կը պարտադրէր, որ հիւժած Ֆրանսսան իր շահերը չխանգարէր:

Թէեւ 1559-էն ետք Հափսպուրկ եւ Վալուա տոհմերուն միջեւ եղած պայքարները կը նուազէին, սակայն Եւրոպան խաղաղութիւն չէր վայելէր: Միջազգային յարաբերութիւնները կը վատթարանային յարանուանական վէճերուն հետեւանքով՝ մանաւանդ յարձակողապաշտ կալվինականութեան եւ զարթ-

նած կաթոլիկութեան միջեւ: 1559-ին կը հիմնուէր ժնեւի ակադեմիան, ուրկէ հարիւրաւոր կալվինական քահանայ եւ միսիոնար կը դրկուէր ամբողջ Եւրոպա եւ մասնաւորաբար Ֆրանսա ու Հոլանտա: Կալվինի ու Թէոտոր Պեգայի շնորհիւ ժնեւը կը դառնար բողոքական միսիոնարութեան միջազգային կեդրոնը՝ նպատակ ունենալով տակաւին «դարձի չեկած» մարդիկ Բարեկարգեալ հաւատքին բերել՝ հեռացնելով «պապականութենէն» եւ «կռապաշտութենէն»: Սակայն այս յարձակողական բողոքականութեան կ'ընդդիմանար առաւել միացեալ ճակատ կազմած եւ կազմակերպուած կաթոլիկութիւնը, որուն պարագլուխն էր Փիլիպպոս Բ.: Համբերութեամբ եւ կարգապահութեամբ Փիլիպպոս ամեն ջանք կը գործադրէր սպանացի հափսպուրկներու գերիշխանութիւնը Եւրոպայի մէջ տարածելու եւ իր հողերուն միակ իշխանը դառնալու: Դաշնակցելով պապականութեան հետ՝ Փիլիպպոս իր աստուածատուր առաքելութիւնը կը նկատէր բողոքական հերետիկոսութիւնը իր տարածքներէն մաքրելը, արգիլել անոր Ֆրանսա թափանցումը եւ քրիստոնէաները ուղղափառ կաթոլիկ հաւատքին բերելը: Սպանական տիրապետութեան յաջորդ 30 տարին բողոքականութեան համար վտանգալից կը դառնար:

Ամենավտանգաւոր հանգրուանը կը հանդիսանար 1559-ը, երբ յուլիսին Հենրի Բ. կը մահանար, եւ ֆրանսական գահը կը փոխանցուէր Ֆրանսիս Բ.-ի (1559–1560), որուն կիներ՝ Մարին, Սկոտլոյ թագուհին էր եւ նաեւ ինքզինք Անգլիոյ թագուհին կը համարէր: Փիլիպպոս Բ. կ'օժանդակէր Եղիսաբէթ Ա.-ի Անգլիոյ գահը բարձրանալուն, որովհետեւ հակառակ կաթոլիկութեան ջերմ պաշտպան ըլլալուն՝ ան չէր կրնար հանդուրժել Ֆրանսան, Սկոտլիան եւ Անգլիան մէկ մականի տակ առնող թագուհիի մը, որ Մարին էր:

Կալվինի ազդեցութիւնը հետզհետէ կ'աճէր Ֆրանսայի մէջ, եւ ֆրանսացի բողոքականները, 1552-էն յետոյ «հիւկընօ» յորջորջուած, կը բազմանային՝ ի հեճուկս սաստիկ հալածանքներու: 1559-ին անոնք այնքան ուժեղ էին, որ իրենց առաջին ընդհանուր սինտըրը կը գումարէին Փարիզի մէջ եւ կ'որ-

դեգրելին Անտոն Ռոշեցիի պատրաստած կալվինական շեշտադրում ունեցող Հաւատքի հանգանակը եւ Կալվինի եկեղեցական սկզբունքներուն վրայ հիմնուած հովուական սահմանադրութիւնը: 1560-ականներուն սկիզբը շուրջ 2000 հիւկընօ ծուխ եւ մէկուկէս միլիոն համակիր գոյութիւն ունէին: Ասոնց տիրական մեծամասնութիւնը մասնաւորաբար հարաւային Ֆրանսայի քաղաքներու արհեստաւորական եւ մասնագիտական դասակարգէն էր: Հիւկընոները քաղաքականօրէն շատ ազդու էին շնորհիւ իրենց մէջ գտնուող ազնուականներուն, որոնց կարելոր տոկոսը իշխանական գերդաստաններէ կը սերէր:

Հենրի Բ.-ի մահով եւ Ֆրանսիս Բ.-ի յաջորդականութեամբ, նոր թագուհիին հօրեղբայրներով՝ Կիզ ընտանիքը գերազանցապէս ազդեցիկ կը դառնար: Կիզերը Լորէնէն էին եւ ֆրանսացի ազնուականութեան մեծամասնութեան կողմէ օտարական կը համարուէին: Անոնք ծայրայեղ կաթոլիկ էին եւ անոնց կարելոր դէմքերը երկու եղբայր էին՝ Չարլզ, «Լորէնի կարդինալ»-ը եւ որպէս Ռայմոն արքեպիսկոպոս ֆրանսացի հոգեւորականութեան պետը, եւ Ֆրանսիս, Կիզի դուքսը, որ Ֆրանսայի լաւագոյն զինուորի համբաւը կը վայելէր: Կիզ ընտանիքին հակառակորդն էր Պուրպոն ընտանիքը, որուն պետերն էին Անտոն Վենտոմցին, իր տկար կեցուածքով յատկանշուած Նաւարի պատուակալ թագաւորը եւ անոր շատ աւելի կարող եղբայրը՝ Լուի, որ Գոնտէի իշխանն էր: Շաթիյոն գերդաստանը եւս հակառակորդ էր կիզերուն, որոնց առաջնորդն էր թունդ կալվինական Կեսբըրտ Գոլինցին (1519–1572): Այս բոլոր բարձրաստիճան ազնուականները բողոքականութեան կը յարէին որպէս ընդդիմութիւն թագաւորութեան կեղրոնաձիգ իշխանութեան եւ կը մարմնաւորէին հին աւատապետական ազնուականութեան թշնամութիւնը ընդդէմ կայսրութեան, որ կը փորձէր իրենց աւանդական «ազատութիւն»ները խափանել: 1560-ականներուն ֆրանսացի ազնուականութեան գրեթէ կէսը Հռոմի հանդէպ իր ունեցած հաւատարմութենէն հեռացած էր: Ֆրանսացի ազնուականներուն եւ

համեստ խաւէ սերած կալվինականներուն շահերը կը ներդաշնակուէին այն սկզբունքով, թէ ներկայ իրավիճակը պէտք չէր շարունակուէր, երբ մանաւանդ Ֆրանսիս Բ.-ի իշխանութեան տակ հիւկընոններու հալածանքը կը սաստկանար: Յեղափոխութեան նախաքայլը կ'առնուէր մարտ 1560-ին, սակայն երիտասարդ թագաւորը գերի բռնելու եւ իշխանութիւնը Պուրպոններուն փոխանցելու փորձը ձախողութեան կը մատնուէր: Լուի Գոնտէցի, որ մասնակից էր այս քայլին, մահուան կը դատապարտուէր, սակայն 5 դէկտեմբեր 1560-ին Ֆրանսիս Բ. կը մահանար:

Մահացած թագաւորին եղբոր՝ Չարլզ Թ.-ի գահակալութիւնը (1560–1574) նոր խմբակցութիւն մըն ալ խառնակ պայքարին մէջ կը ներքաշէր: Տկարացած ըլլալով հանդերձ՝ կիզեր կը շարունակէին կաթոլիկ շահերու պաշտպանը մնալ Ֆրանսայի մէջ եւ գաղտնօրէն կը բանակցէին Սպանիոյ Փիլիպպոս Բ. թագաւորին հետ, որպէսզի ան կալվինականներուն դէմ խաչակրութեան սկսէր: Թէեւ Փիլիպպոս այս քայլին նախաձեռնելու կարողութիւնը չունէր, սակայն այս մտածումն իսկ բաւարար կ'ըլլար Անտոն Նաւարցին կաթոլիկներուն կողմը սիրաշահելու: Պատանի թագաւորին վրայ ամենաշատ ազդեցութիւնը կ'ունենար անոր մայրը՝ Կատարինէ Մետիչեցին (1519–1589), որ թէեւ կրօնական նախասիրութիւն չունէր, սակայն իր երեք զաւակներուն շնորհիւ կը փորձէր ամեն գնով պահել Վալուա գերդաստանը: Ան կ'ընտրէր բանակցութիւններու ճամբով թագաւորութեան իրաւունքները պաշտպանելու եւ կրօնական ու քաղաքական հաշտութեան հասնելու ուղին: Իրեն կ'օժանդակէր կարող դիւանագետ Միշէլ Հոփիթալցին (1507–1573), որ 1560-ին Ֆրանսայի դիւանապետը կը դառնար: Մետիչեցի կը փորձէր համերաշխութիւն հաստատել հակառակորդ երկու ազնուական տուններուն միջեւ, Գոնտէցին ազատ կ'արձակէր սեպտեմբեր 1561-ին եւ յունուար 1562-ին Փուլասիի մէջ կաթոլիկ ու բողոքական աստուածաբանները հրապարակային քննարկումի կը հրաւիրէր եւ հրովարտակով հիւկընոններուն իրաւասութիւն կը շնորհէր պարըս-

պապատ քաղաքներէն դուրս հրապարակային պաշտամունք եւ պարսպապատ քաղաքներուն մէջ անհատական պաշտամունք կատարելու: Փուսսիի քննարկումներն ու հանդուրժողութեան հրովարտակը կը հանդիսանային ֆրանսական բողոքականութեան բարձրակէտը:

Կաթոլիկներ, փոխանակ բաւարարուելու այս միջին լուծումով, պատերազմի կը դիմէին: 1 մարտ 1562-ին Կիզի դուքսը իր հետեւորդներուն կ'արտօնէր, որ Վասիի մէջ աղօթող հիւկընոններուն վրայ յարձակէին: Աւելի քան 100 հիւկընօ կը սպանուէր կամ կը վիրաւորուէր: Վասիի ջարդին կը յաջորդէր հիւկընոններու եւ կաթոլիկներու միջեւ 1562-1570 երկարող պատերազմներու շարքը: Անտոն Նաւարցին վիրաւորուած կը մահանար 1562-ին, Ֆրանսիս Կիզեցի դուքսը բողոքականի մը ձեռքով կ'ահաբեկուէր 1563-ին, եւ Լուի Գոնտեցի գերի կ'իյնար ու կը սպանուէր 1569-ին: Կեսբըրտ Գոլինցի հիւկընոններու դատին պաշտպանը կը դառնար: Օգոստոս 1570-ին Սէն-Շերման Լայի մէջ խաղաղութեան դաշինք կը կնքուէր, եւ ազնուական հիւկընոններ պաշտամունքի ամբողջական իրաւունք կը ստանային, իսկ Ֆրանսայի մէջ պարզ հիւկընոններուն պաշտամունքի երկու վայր կը ճշդուէր, մինչ չորս պարսպապատ քաղաք՝ Լա Ռոշել, Գոնեակ, Մոնթոպան եւ Լա Շարիթէ, որպէս ապաստանարան կը տրուէին հիւկընոններուն: Այսպէսով հիւկընոններ պետութեան մէջ զինեալ պետութիւն կը դառնային:

Այս հանգրուանին Ֆրանսայի կացութիւնը մեծապէս կը բարդանար Հոլանտայի մէջ տեղի ունեցող զարգացումներուն հետեւանքով: Թէեւ խորքին մէջ այս զարգացումները մեծ մասամբ քաղաքական ու տնտեսական բնոյթ ունէին, սակայն կրօնքը յարաճուն տեղ կը գրաւէր անոնց մէջ: Հոլանտան, որ 1555-ին Սպանիոյ Փիլիպպոս Բ.-ին կը տրուէր իր հօր՝ Չարլզ Ե.-ի կողմէ, կը բաղկանար 17 նահանգներէ, ուր վաճառականական շահեր ու անոնց առնչուած տուրքերու դրութիւնը իրարու կը բախէին: Լուտերականութիւնը կանուխէն մուտք կը գործէր Հոլանտա, սակայն ժողովրդային խաւերը ընդհանրա-

պէս կրկնամկրտականներ էին: Պելճիքայէն թափանցելով՝ 1561-ին կալվինականութիւնը հող կը շահէր միջին դասակարգին մէջ, յատկապէս հարաւային նահանգներու Արթուա, Հայնօ, Պրապանթ եւ Ֆլանտեր գործարաններու քաղաքներուն մէջ: Ազնուականութիւնը տակաւին կաթոլիկ կը մնար, եւ 1562-ին կալվինականներ միայն փոքրամասնութիւն էին հոն:

Չարլզ Ե. թէեւ դէմ էր բողոքական թափանցումներուն, սակայն ընդհանրապէս կը յարգէր Հոլանտայի նահանգներուն աւանդական իրաւունքներն ու ներքին ինքնավարութիւնը: Իսկ Փիլիպպոս Բ. նոյն վերաբերումը չէր ունենար, այլ Սպանիոյ նման կը ձգտէր քաղաքական եւ կրօնական միօրինակութիւն պարտադրել: 1559-ին ան իր խորթ քոյրը՝ Փարմայի դքսուհի Մարգարիտը (1522–1586), փոխանորդ կը դնէր եւ կը նշանակէր եռանդամ խորհրդակցական մարմին մըն ալ, որուն մէջ տիրական կը դառնար իր հաւատարիմ նախարարը՝ Անտոն Փերէնօ, առաւելաբար ծանօթ որպէս կարդինալ Կրանվել (1517–1586): Այս խորհրդակցական մարմինը նախապէս գործող եւ ազնուականներ եւս ներառած կառավարական ժողովին իրաւունքները կը խլէր: 1560-ին Փիլիպպոս պապին դիմելով Հոլանտայի եկեղեցական կառոյցը փոփոխութեան ենթարկել կու տար եւ 11 նոր թեմ ու երեք նոր գլխաւոր թեմ կը հաստատէր: Այսպէսով Հոլանտայի նախկին չորս թեմերը Ռայմզի եւ Քեյլնի օտար արքեպիսկոպոսներուն իշխանութենէն դուրս կը հանէր, սակայն կը բախէր ազնուականներուն ընդդիմութեան, որովհետեւ նոր առաջնորդները Փիլիպպոսի համակիրներն էին, մինչ նախապէս ազնուականներ իրենց երիտասարդ զաւակները կը բազմեցնէին այս աթոռներուն վրայ: Առաւել, Փիլիպպոս ամեն կարելիութիւն կը գործադրէր, ներառեալ տեղական հաւատաքննութիւնը, հերետիկոսութիւնը ճզմելու համար եւ ժողովրդային լայն խաւին ու մանաւանդ վաճառականական դասակարգին թշնամութեան առարկայ կը դառնար, որովհետեւ այս ճնշումներէն ձերբազատուելու համար գործաւորներ արտագաղթի կը դիմէին: Ազնուականներ ու վաճառականներ անհանդարտ կը դառնային այս քայլերուն դիմաց:

Այս փոփոխութիւններուն գլխաւոր ընդդիմադիրները կ'ըլլային երեք նշանաւոր ազնուական՝ կաթոլիկ կոմսեր Էկմոնթ ու Հորն եւ Հոլանտայի ամենահարուստ անձը՝ Օրանժի իշխան Ուիլեմ Նասացին (1533–1584): Վերջինս, որ ծնունդով լուտերական էր, անուանական կաթոլիկ կը դառնար եւ 1573-ին կալվինական ըլլալէ ետք՝ կը հանդիսանար հոլանտական անկախութեան հերոսը: 1564-ին այս երեքը կը ստիպէին, որ Կրանվել իր հրաժարականը տար, մինչ Փիլիպպոս Բ. զանոնք իր ծրագրերուն գլխաւոր խանգարիչները կը համարէր: Ան, փոխանակ հանդուրժողութեան ապաւինելու, Թրենթի ժողովին որոշումներուն գործադրութիւնը կը պահանջէր եւ խստագոյն միջոցներով հերետիկոսութիւնը պատժելու կը ձեռնարկէր: Մինչ այդ կրտսեր ազնուականութիւնը, ներառեալ Նասացիին փոքր եղբայրը՝ Լուի Նասացին (1538–1574), գործի կը լծուէին: Անոնք կրօնական ռազմավարութեան փոփոխութիւն առաջարկող բողոքագիր մը կը պատրաստէին եւ 5 ապրիլ 1566-ին զայն թագաւորին փոխանորդին կը ներկայացնէին: Այս ընդդիմադիրներուն անարգականօրէն տրուած «մուրացկաններ» անուանումը կը դառնար ընդդիմադիր կողմին պատուոյ տիտղոսը: Այս ժամանակաշրջանին նաեւ ժողովուրդը կ'ըմբոստանար՝ բողոքելով տնտեսական անտանելի պայմաններուն ու սովին դէմ: Կալվինականներ ազատօրէն կը քարոզէին հարաւային քաղաքներուն ու գիւղերուն մէջ եւ օգոստոս 1566-ին տեղի կ'ունենային պատկերամարտ պողոկումներ: Վեց շաբաթներու ընթացքին այս պողոկումները ամբողջ երկիրին մէջ կը տարածուէին եւ հարիւրաւոր եկեղեցի կ'աւերուէր ու կ'աւարուէր: Կալվինական պատուելիներու կամքին հակառակ կատարուող այս ծայրայեղութիւնները կը խրտչեցնէին չափաւորականները եւ բազմաթիւ կաթոլիկ ու բողոքական ազնուականներ կը մղէին Սպանիոյ բռնատիրութեան դէմ ելլելու: Ուիլեմ Օրանժցին, ձախողելով կաթոլիկ, կալվինական եւ լուտերական դաշնակիցները իր կողմը պահելու ճիգին մէջ, Գերմանիա կ'ապաստանէր ապրիլ 1567-ին, եւ յեղափոխութիւնը այսպէսով կը խեղդուէր իր սաղմին մէջ:

Մարգարիտ Փարմացին դարձեալ դէկը ձեռք կ'առնէր եւ առանց խստութիւն բանեցնելու կը փորձէր հաշտութեան եզր գտնել: Սակայն Փիլիպպոս Բ.-ին համար այս դէպքերը քաղաքական ու կրօնական բացայայտ ապստամբութիւն էին, եւ ան Ալպայի դուքս ու իր վայրենի զօրավար Ֆերտինանտ Ալվարեզը (1508–1582) 9000 սպանացի զինուորներով կը դրկէր ապրստամբներուն վրայ: Օգոստոս 1567-ին Ալվարեզ Պրիքսէլ կը հասնէր եւ անմիջապէս Հոլանտան կը վերագրաւ: Հաշտութեան ուղին ընտրած Փարմացի տարուան աւարտին Փարմա կը քաշուէր: Ալվարեզի վեցամեայ իշխանութեան շրջանին (1567–1573) աւելի քան 1000 ապստամբ կը սպանուէր, ներառեալ Էկմոնթը եւ Հորնը: Մայիս 1568-ին արտորեալ Ուիլեղմ Օրանժցին Գերմանիայէն Հոլանտա կ'արշաւէր, սակայն Ալվարեզ շատ դիրաւ կը կասեցնէր զայն: 1569-ին Ալվարեզ ծանր տուրքեր կը սահմանէր, ներառեալ տասը առ հարիւր վաճառքի եւ ներածումի տուրքը: Այս քայլը ո՛չ միայն տնտեսապէս կը քայքայէր Հոլանտան, այլեւ կը մեկուսացնէր վաճառական դասակարգը եւ ազգայնական զգացումին թափ կու տար: Սակայն Ալվարեզ կացութեան լրիւ տէրն էր, եւ Հոլանտան անոր լուծին տակ կը հեծէր: Այս անգամ ընդդիմութիւնը կու գար «ծովու մուրացկաններ»-էն, որոնք 1568-էն ի վեր սպանական նաւերով Հոլանտա արշաւող հոլանտացի, ֆլաման եւ ֆրանսացի ծովահէններ էին: Անոնց անուանական ղեկավարը Լուի Նասացին էր, եւ 1570-ին կիսապաշտօնական իրավիճակ կը ստանային Օրանժցիէն, որ տակաւին Գերմանիոյ մէջ կը փորձէր բողոքական իշխաններու նեցուկին ապաւինիլ: Մինչեւ 1572 «ծովու մուրացկաններ»-ը ապաստան կը գտնէին անգլիական նաւահանգիստներուն մէջ:

Ապրիլ 1572-ին «ծովու մուրացկաններ»-ը կը գրաւէին Պրիլի նաւահանգիստը, կարճ ժամանակ ետք՝ Ֆլաշինկը եւ մի քանի ամիսէն Հոլանտայի եւ Զիլանտի նահանգները ամբողջապէս իրենց իշխանութեան տակ կ'առնէին՝ կալվինական եւ Օրանժցիի համակիրներուն օժանդակութեամբ: Ժողովուրդը եւս կ'օժանդակէր ասոնց՝ Ալվարեզի բռնութեան դէմ ելլելով:

Յուլիսին Հոլանտի, Զիլանտի, Ֆրիզլանտի եւ Ութրեխտի գլխաւոր քաղաքները Օրանժցին իրենց փոխարքան կը հռչակէին: Հարաւային նահանգները մեծ մասամբ անպաշտպան էին, որովհետեւ Ալվարեզ իր զօրքը հարաւ տարած էր, ուր Նասսացին եւ դաշնակիցները Ֆրանսայէն եկած հիւկընօ գունդերով Հայնոյի վրայ կ'արշաւէին, մինչ Օրանժցին դէպի Պրապանթ եւ Գերմանիա կը յառաջանար: Օգոստոս 1572-ին Ֆրանսայի Չարլզ Թ. թագաւորը կը պատրաստուէր 15.000 զինուոր ուղարկել Ալվարեզին օգնելու համար: Սպանական իշխանութիւնը Հոլանտայի մէջ իր մեծագոյն անորոշութիւնը կը դիմագրբաւէր:

1570-ի Սէն-Ժերմանի խաղաղութեան դաշինքէն ի վեր հիւկընոնէր եւ Ֆրանսայի մէջ գտնուող սպանական իշխանութեան հակառակորդներ նախկին քաղաքականութեան վերադարձը կը քաջալերէին՝ ջանալով Ֆրանսան Սպանիոյ մրցակից դարձնել: Հոլանտայի ապստամբներուն տրուելիք անմիջական օժանդակութիւնը կը ծրագրուէր եւ կը պայմանաւորուէր կարգ մը տարածքներու Ֆրանսայի կցումով եւ մանաւանդ կը քաջալերուէր Կեսբըրտ Գոլինցիին կողմէ, որ մեծ ազդեցութիւն ունէր Չարլզ Թ.-ի վրայ: Ֆրանսայի մէջ հակառակորդ կողմերը մերձեցնելու նպատակով՝ Չարլզի քոյրը՝ Մարգարիտ Վալուացին, կ'ամուսնացնէին բողոքական Անտոն Նաւարցիի եւ կալվինական Ժանն Ալպերթցիի տղուն՝ Հենրի Նաւարցիին հետ: Զոյգին հարսանիքը տեղի կ'ունենար 18 օգոստոս 1572-ին ծայրայեղ կաթոլիկ Փարիզի մէջ, ուր կը հաւաքուէին հիւկընօ եւ կաթոլիկ ազնուականներն ու անոնց հետեւորդները:

Կատարինէ Մետիչեցին շատ դժգոհ էր Կեսբըրտ Գոլինցիին իր թագաւոր որդիին վրայ ունեցած ազդեցութենէն: Ան մէկ կողմէ մայրական բնագոյն կը մղուէր եւ միւս կողմէ՝ կը վախնար, որ Գոլինցիի քաջալերութեամբ՝ Չարլզ Թ.-ի Սպանիոյ դէմ պատերազմի մտնելը կրնար աղէտաբեր դառնալ Ֆրանսայի համար: Ան նախ կը ցանկար Գոլինցին ոճիրով չէզոքացնել: Այս մարզին մէջ Կիզի դուքսը՝ Հենրի, ամբողջապէս կը

համաձայն էր Մետիչեցիին, որովհետև իր հօր՝ Ֆրանսիսի 1563-ի սպանութեան պատասխանատուն կը նկատէր Գոլինցին: 22 օգոստոս 1572-ի մահափորձը կը ձախողէր, եւ Գոլինցի միայն կը վիրաւորուէր. սակայն Մետիչեցի խուճապի կը մատնուէր: Հիւկընոնէր կը մեկուսանային, եւ Մետիչեցի կը կազմակերպէր ընդհանուր կոտորած մը, որուն կ'օժանդակէին կիզերն ու Փարիզի ծայրայեղականները: 24 օգոստոսին, ս. Բարթոլոմէոսի տօնին, արիւնի հեղումը կը սկսէր: Գոլինցի կը սպանուէր նուազագոյնը 3000 այլ զոհերու հետ՝ Փարիզի մէջ, եւ շատ ատելի մեծ թիւով զոհեր կ'իյնային ամբողջ Ֆրանսայի տարածքին: Հենրի Նաւարցին իր կեանքը կը փրկէր բողոքականութիւնը ուրանալով:

Այս լուրը մեծ ուրախութիւն կը պատճառէր Մատրիտի եւ Հռոմի մէջ, որովհետև կաթոլիկութիւնը մեծ կորուստէ կը փրկէր: Ֆրանսայի ռազմավարութիւնը կը շրջուէր: Զինուորական ուժով Հոլանտա ներթափանցելու ծրագիրը կը կասէր: Սակայն Կատարինէ Մետիչեցի եւ մարտունակ կաթոլիկներ կացութիւնը չէին շահագործէր, որովհետև օգոստոս 1572-ի դէպքերը կը յանգէին քաղաքացիական վերանորոգեալ բախումներու: 1572–1580-ի հիւկընօ պատերազմները ատեր եւ դժբախտութիւն կը հնձէին, սակայն հիւկընոնէր տեղի չէին տար:

1574-ին Չարլզ Թ. կը մահանար, եւ անոր կը յաջորդէր չար եւ վախկոտ եղբայրը՝ Հենրի Գ. (1574–1589): Բաժանումի ցեցը կ'իյնար ֆրանսացի կաթոլիկներուն մէջ: Ասոնցմէ մաս մը, կառչած մնալով հանդերձ կաթոլիկութեան, կը յանգէր այն եզրակացութեան, թէ երկարատեւ պատերազմները կը քայքայէին Ֆրանսան եւ բերրի հող կը տրամադրէին սպանացիներուն: Այս խումբը «քաղաքագէտներ» կը կոչուէր եւ կը համոզուէր, թէ հիւկընոնէրուն հետ կնքուելիք խաղաղութիւնը անխուսափելի էր: Միւս կողմէ՝ կային անոնք, որոնք կաթոլիկութիւնը նախապատիւ համարելով կ'ըսէին, թէ կաթոլիկութեան յաղթանակին համար պատրաստ էին Ֆրանսան ենթարկել Սպանիոյ, եւ Ֆրանսայի զանազան մասերուն մէջ

Հռոմեական եկեղեցին պահպանելու համար խմբակցություններ կը հաստատեին: 1576-ին ասոնք կաթոլիկ լիկա կամ սրբազան միություն կը կազմեին՝ Հենրի Կիզեցիի ղեկավարութեամբ եւ Սպանիոյ ու պապին նեցուկով: Որպէս հակազդեցութիւն՝ քաղաքագետներ աւելի կը մերձենային հիւկընոներուն, որոնց առաջնորդն էր 1576-ին վերստին բողոքականութեան հակած Հենրի Նաւարցին:

Ս. Բարթողիմէոսի տօնի սպանողը կը փրկէր Ֆերտինանտ Ալպացին եւ ի դերեւ կը հանէր Ուիլէլմ Օրանժցիի Սպանիոյ Հոլանտայէն արտաքսումի յոյսերը: Յաջորդ երկու տարիները ուժեղ պայքարով կը յատկանշուէին, եւ Օրանժցին կը դառնար այդ ընդդիմութեան ոգին: Սկզբնական փուլերուն Ալպացի անպարտելի կը մնար: Մոնս, Մեխլին, Զութֆեն, Նարտըն եւ Հարլէմ սպանական բանակին դիմաց ծունկի կու գային, սակայն հոկտեմբեր 1573-ին սպանացիները չէին յաջողէր Ալգմարը գրաւել: Ալպացի կամաւորապէս կը հրաժարէր, եւ նոյեմբերին անոր կը յաջորդէր Լուի Ռեգուեսենցին (1525?–1576), որուն հրամանատարութեան ներքեւ սպանական ռազմավարութիւնը զգալի փոփոխութիւն կը կրէր: Ապրիլ 1574-ին Լուի Նասացին Մուգի մէջ ջախջախիչ պարտութիւն կրելով կը սպանուէր, սակայն հոկտեմբերին Լէյտընի հերոսական պաշտպանութիւնը բացայայտ կը դարձնէր, թէ սպանական ցարդ տրամադրելի ուժերով կարելի պիտի չըլլար գրաւել հիւսիսային Հոլանտան, երբ մանաւանդ անոնք չէին յաջողէր ծովը իրենց իշխանութեան տակ առնել: Մարտ 1576-ին Ռեգուեսենցին կը մահանար, եւ 4 նոյեմբերին անգլուի մնացած սպանական զօրքը կը գրաւէր Անթվերփը: 11 օրերու խժժութիւններով աւելի քան 7000 քաղաքացի եւ զինուոր կը մահանար: Սպանական ամեն երեւոյթի հանդէպ ցուցաբերուած հակադրութիւնը 8 նոյեմբեր 1576-ի Ղենդի խաղաղութեան դաշինքով կը միաւորէր Հոլանտայի հիւսիսային եւ հարաւային նահանգները եւ կոչ կ'ուղղէր սպանական բանակի արտաքսումին, Փիլիպպոս Բ.-ի հերետիկոսութեան դէմ հրապարակած հրովարտակներուն մերժումին եւ կալվինականներու՝ Հոլանտայի

ու Ջիլանտի մեջ պաշտամունքի ազատութեան՝ այն պայմանով, որ անոնք ալ իրենց հերթին իրենց հողատարածքներէն դուրս հակակաթոյիկ քայլեր պիտի չառնէին:

Սպանացի նոր հրամանատար Փիլիպպոս Բ.-ի խորթ եղբայր Յովհաննէս Աւստրիացին (1547–1578) այս պայմանները ընդունելէ զատ այլընտրանք չունէր: Սակայն մարտ 1577-ին սպանական բանակին հեռացումը կրօնական խաղաղութիւն չէր բերեր: Կալվինականութիւնը խանդավառ նեցուկ կը գտնէր Պրապանթի ու Ֆլանտերի մեջ, եւ 1577-ին ու 1578-ին կալվինական քարոզութեամբ, ինչպէս նաեւ ժողովրդական ընկերային դժգոհութեամբ հարաւային նահանգները այնպիսի ըմբոստութեան կը դիմէին, որ կը յիշեցնէր 1566-ի պատկերամարտական ցոյցերը: Ուոլուն նահանգներու ֆրանսախօս իշխող դասակարգը անվստահութիւն կը ցուցաբերէր հիւսիսային Հոլանտայի ղեկավարներուն եւ կալվինական քարոզիչներուն հանդէպ: Յունուար 1579-ին Ուոլուն նահանգները կը միաւորուէին՝ պահպանելու համար իրենց կաթոյիկ հաւատքը եւ ընկերային դիրքը: Հիւսիսային նահանգները կը հակադարձէին այս քայլին՝ կազմելով Ութրէխտի միութիւնը: Բողոքականներ հարաւային շրջաններէն հիւսիս կ'անցնէին, մինչ կաթոյիկներ հիւսիսէն հարաւ կը ներթափանցէին, եւ Ուիլերմ Օրանժցիի միացեալ Հոլանտայի ծրագիրը ցնորք կը դառնար կրօնական անհանդուրժողութեան պատճառով:

Մինչ այդ Յովհաննէս Աւստրիացին յուսախաբ վիճակի մեջ կը մահանար հոկտեմբեր 1578-ին: Անոր կը յաջորդէր իր զարմիկն ու Մարգարիտ Փարմացիի տղան՝ Ալեասանորօ Ֆարնէս իշխանը (1545–1592), որ սպա Փարմայի դուքսը կը դառնար: Ան տաղանդաւոր զօրավար եւ դիւանագետ էր: Դէպքերը շուտով ի նպաստ սպանական դատին կը զարգանային: Անոր դիւանագիտական եւ զինուորական յաջողութիւններով Ֆարնէս կայսերական հեղինակութիւնը կ'ամրապնդէր Ուոլուն նահանգներուն մեջ եւ զանոնք իր գործունէութեան կեդրոնատեղին կը դարձնէր՝ Հոլանտայի մեջ սպանական տիրակալութիւնը վերահաստատելու համար:

Վերջապես ան կը յաջողէր հարաւային տասը նահանգները եւ այսօրուան Պելճիքան փրկել Սպանիոյ եւ կաթոլիկութեան հաշուոյն, իսկ հիւսիսային եօթը նահանգները՝ Հոլանտ, Զիլանտ, Ուրթեխտ, Կելտըրլանտ, Ֆրիզլանտ, Օւերիսել եւ Կրոնինկըն, ինչպէս նաեւ Ֆլանտեր եւ Պրապանթ, 1581-ին Սպանիայէն իրենց անկախութիւնը կը հռչակէին: Թէեւ չորս տարի ետք Ֆարնէս կը վերագրաւեր Ֆլանտերն ու Պրապանթը, սակայն միւս հիւսիսային նահանգները կը պահպանէին իրենց անկախութիւնը՝ ի գին ամեն զոհողութեան, ներառեալ 10 յուլիս 1584-ի Ուիլերմ Օրանժցիին սպանութիւնը: 1580-ին Փիլիպպոս Բ. Օրանժցիին արդէն անկարգ հռչակած եւ գին սահմանած էր անոր գլուխին:

Այս պայքարներու շրջանին Հոլանտայի կալվինական եկեղեցիները կը կազմաւորուէին: Առաջին ազգային սինտոը 1571-ին կը գումարուէր Հոլանտայէն դուրս՝ Էմտընի մէջ: Երկու տարի յետոյ Օրանժցիին կ'ընդունէր կալվինականութիւնը: 1575-ին ան Լէյտընի մէջ կը հիմնէր համալսարան մը, որ շուտով աստուածաբանութեան եւ գիտութիւններու նշանաւոր հաստատութիւն կ'ըլլար: Հոլանտայի Բարեկարգեալ եկեղեցին, Ֆրանսայի եկեղեցիին նման, իր սահմանադրութեամբ երիցական էր, թէեւ պետութենէն անջատեալ ըլլալու հանգամանքը երկար ատեն խնդրայարոյց կը մնար եւ նահանգէ-նահանգ կը տարբերէր: Ազգային անկախութեան ձգտումն ու վաճառականական դրուածքը բողոքական Հոլանտան կը դարձնէր ԺԷ դարու սկիզբը ամենահանդուրժողական քրիստոնէական երկիրը: Անշուշտ կաթոլիկները հասարակաց պաշտամունքի եւ քաղաքական պաշտօնի իրաւունք չունէին, սակայն կրնային հոս ապրիլ եւ աշխատիլ: 1577-ին Օրանժցիին կրկնամկրտականներուն պաշտամունքի արտօնութիւն կը շնորհէր, եւ անոնք առաջին անգամ Հոլանտայի մէջ կը տիրանային այդ առանձնաշնորհումին: Այս հանդուրժողական ոգին կրօնական հալածանքներու ենթարկուածներուն համար շուտով Հոլանտան կը վերածէր ապահով ապաստանի եւ կ'աւելցնէր անոր ազգային ուժականութիւնը:

Սակայն իր ղեկավարին՝ Օրանժցիին մահը մեծ վնաս կը պատճառէր հոլանտացիներուն: Անոնք առանց պաշտպան իշխանութեան չէին կրնար գոյատեւել եւ նախ կը դիմէին Ֆրանսայի Հենրի Գ.-ին եւ ապա՝ Անգլիոյ Եղիսաբէթ Ա.-ին, սակայն երկուքն ալ կը մերժէին զիրենք: Փետրուար 1585-ին Պրիւքսէլ Փարմային կը յանձնուէր, իսկ օգոստոսին ալ՝ Անթվերփ: Դեկտեմբեր 1585-ին տեսնելով սպանացիներուն յաջողութիւնը՝ Եղիսաբէթ Լէյչեսթըրի իշխանին գլխաւորութեամբ բանակ կը դրկէր Հոլանտա: Առանց թագուհիին արտօնութեան՝ իշխանը ընդհանուր կառավարիչ կը դառնար, սակայն թէ՛ դիւանագիտականօրէն եւ թէ՛ զինուորապէս ձախողութիւն արձանագրելէ ետք՝ 1587-ին կը վերադառնար Անգլիա: Ֆարնէս կրնար կարող ընդհանուր կառավարիչ մը ըլլալ, սակայն Փիլիպպոս Բ. առաւել կարեւոր յանձնարարութիւն վերապահած էր անոր, որ Անգլիոյ վրայ տանելիք յաղթանակն էր:

Փիլիպպոս Բ. սկզբնական շրջանին քաղաքական պատճառներով կ'օժանդակէր Եղիսաբէթ Ա.-ին, սակայն երբ այդ հանգրուանը կ'անցնէր, անոր մէջ կը տեսնէր բողոքականութեան ջերմ պաշտպանը եւ կ'ուզէր զայն չէզոքացնել: Եղիսաբէթի իշխանութեան առաջին տարիները խաղաղ կ'անցնէին, որովհետեւ իր կաթոլիկ հպատակները հարցեր չէին յարուցեր: Սկովտիոյ թագուհին՝ Մարի, գահին ժառանգորդուհին էր, եւ երբ ան 1568-ին Անգլիա կը փոխադրուէր՝ հարցերը կը սկսէին: Սպանացիներէն քաջալերուած՝ 1569-ին կաթոլիկ յեղափոխութիւն տեղի կ'ունենար հիւսիսային Անգլիոյ մէջ, սակայն շուտով կը զսպուէր: 25 փետրուար 1570-ին Պիոս Ե. պապի կոնդակով Եղիսաբէթ Եկեղեցիէն կը հաղորդազրկուէր եւ գահընկէց կ'ըլլար: 1571-ին իտալացի դրամատերի մը անունով այսպէս կոչուած «Ռիտովֆի դաւ»-ը երեւան կու գար, որ կը միտէր Եղիսաբէթը սպանել եւ Մարին ամուսնացնել իշխանութեան առաջին ազնուականին՝ Նորֆոլքի դուքսին հետ: Խորհրդարանը օրէնք կ'անցընէր, թէ Եղիսաբէթի անձին եւ անոր ուղղափառութեան ու տիտղոսին վրայ կատարուած որեւէ յարձակում դաւաճանութեան համա-

գոր էր: 1572-ին Նորֆոլքի դուքսը մահուան կը դատապարտուէր:

Եղիսաբէթ Ա.-ի իշխանութեան առաջին տարիներուն Անգլիոյ կաթոլիկները Հռոմէն որեւէ հոգեւոր ուղղութիւն կամ օժանդակութիւն չէին ստանար: Այս բացթողումը դարմանելու համար՝ արքայական անգլիացի Ուիլիւմ Ալըն (1532–1594), որ 1587-ին կարդինալ կը դառնար, Ֆլանտերի մէջ դպրեկանք մը կը բանար, որպէսզի Անգլիոյ համար միսիոնարներ պատրաստէր: 1585-ին ան 250-է աւելի ուսանող կ'ունենար: Թէեւ այս ձեռնարկը զուտ հոգեւոր էր, սակայն քաղաքական իշխանութիւնները խոր թշնամութեամբ կը վերաբերէին այս քայլին հանդէպ: Հարցը կը բարդանար, երբ 1580-ին յիսուսեաններ եւս միսիոնարութեան կը նախաձեռնէին Ռոպերթ Փարսընսի (1546–1610) եւ Էտմունտ Գամփիոնի (1540–1581) գլխաւորութեամբ: Գամփիոն կը ձերբակալուէր եւ մահուան կը դատապարտուէր որպէս քաղաքական յանցապարտ, իսկ Փարսընս կը ճողոպրէր, Ալընը իրեն կողմնակից կը դարձնէր եւ կը ծրագրէր սպանական ներխուժումը Անգլիա բերել, կաթոլիկները ոտքի հանել ու Եղիսաբէթը գահագուրկ ընել: Այսպէսով ան իր կաթոլիկ եղբայրներուն եւ քոյրերուն դէմ կ'աշխատէր, եւ Անգլիոյ մէջ գտնուող կաթոլիկ հոգեւորականներուն մեծամասնութիւնը անիրաւօրէն որպէս իրեն գործակից մահուան կը դատապարտուէր: Անգլիոյ Հռոմէական եկեղեցին ահաւոր սարսափի մթնոլորտի մէջ կը յաղթահարէր այս հանգրուանը, սակայն Եղիսաբէթի գահակալութեան շրջանին 183 քահանայ եւ աշխարհական զոհ կու տար:

1586-ին Եղիսաբէթ Ա.-ի դէմ լարուած նոր թակարդ մը ի յայտ կու գար՝ ծանօթ որպէս «Պապինկթոնի դաւ», որուն անձամբ մասնակից էր Սկոտլիոյ Մարի թագուհին, որ 8 փետրուար 1587-ին կը գլխատուէր: Որպէս հակազդեցութիւն Փիլիպպոս Բ. կ'որոշէր արշաւել Անգլիոյ վրայ: Ան թէեւ կ'ուզէր խուսափիլ այս քայլէն, սակայն 1585-ի Լէյչեսթըրի իշխանին շնորհիւ Հոլանտայի մէջ Անգլիոյ կատարած ոտնձգութիւնները եւ այժմ Ֆրանսիս Տրէյքի շնորհիւ Գարիպեան կղզիներու ու

Մեքսիքոյի ծոցին մէջ սպանական շահերուն վնաս հասցնելը կը ստիպէին զինք զէնքի դիմելու: Առաւել, նախքան իր գլխատումը, Մարի Փիլիպպոսը Անգլիոյ գահին իր յաջորդը կը նշանակէր եւ ան նահատակ թագուհիին վրէժը լուծելու եւ իր օրինակութիւնը պաշտպանելու պարտաւորութիւնը կը զգար: Վերջապէս գրաւելով Անգլիան՝ Փիլիպպոս պիտի կարողանար կաթոլիկութիւնը վերահաստատել Անգլիոյ եւ Սկոտլոյ մէջ, Փարմայի Ալեքսանտրո Ֆարնէս դուքսին կարելիութիւն պիտի տար ըմբոստ Հոլանտայի հարցերը լուծելու եւ ինք առաւել վճռականօրէն պիտի կարենար միջամտել Ֆրանսայի հարցերուն:

Փիլիպպոս Բ. կը ծրագրէր նաւատորմիդով Լիզպոնէն հոլանտական նաւահանգիստները երթալ, հոն Ֆարնէսի զօրքերուն հետ միանալ եւ ապա միասնաբար Անգլիա ներխուժել: 1587-ին նաւատորմիդը պատրաստ էր շարժելու, սակայն ապրիլին Ֆրանսիս Տրէք անակնկալ յարձակում կը գործէր եւ արշաւանքը մէկ տարիով կը յետաձգուէր: Վերջապէս 28 մայիս 1588-ին «անպարտելի արմատան» 130 նաւերով եւ 30.000 զինուորներով ճամբայ կ'ելլէր Լիզպոնէն: Խորքին մէջ մղուելիք պատերազմը հին եւ նոր նաւային մարտավարութեան հանդիսադրումը պիտի ըլլար: Սպանացիներ մօտահաս զէնքերով սակայն դանդաղ շարժող նաւերով յարձակողական ռազմավարութիւն ունէին, իսկ անգլիացիները արագ շարժող նաւերով ու հեռահաս զէնքերով օժտուած էին: Առաւել, անգլիացիներ աւելի զինամթերք ունէին քան սպանացիները:

31 յուլիս 1588-ին պատերազմը կը սկսէր Փլիմութի մօտ եւ ամբողջ շաբաթ մը անգլիական ջրանցքը բուռն բախումներու թատերաբեմ կը դառնար: Ֆարնէսի բանակները չէին կրնար Փիլիպպոս Բ.-ի օգնութեան հասնիլ, որովհետեւ Հոլանտան բաւարար խորութեամբ ծովեզր չունէր անոր նաւերը խարսխելու. անշուշտ այս մէկը Փիլիպպոսի սխալ հաշուարկ ըրած ըլլալուն հետեւանքն էր, հակառակ Ֆարնէս քանիցս յայտնած վերապահութիւններուն: 8 օգոստոսին, երբ անգլիացիներ Գալէյի մէջ կը ցրուէին սպանական նաւերը, միւս կողմէ՝ շատ

աւելի մեծ թիւով անգլիական նաւեր սպանացիներուն դէմ ճակատ կը բանային Կրաւելինի մէջ: Ծանր պարտութիւն կրելով՝ անգլիական նաւեր դէպի Սկոտլիա ու Իրլանտա խոյս կու տային եւ նաեւ փոթորիկի բռնուելով աւելի անյոյս վիճակ կը պարզէին: Նաւերուն կէսը կը փճանար եւ զինուորներուն երկու երրորդը կը մահանար: Կայսրութեան ու կաթոլիկութեան վերահաստատումի Փիլիպպոսի ձգտումը կը խորտակւէր, երբ իր նաւերը անգլիական զէնքերուն դիմաց անզօր կը մնային եւ Անգլիոյ մէջ կաթոլիկ ապստամբութիւնը ոտքի չէր ելլեր:

Մինչ Փիլիպպոս Բ.-ի բոլոր յոյսերը ի դերեւ կ'ելլէին այսպիսի ամօթալի պարտութեամբ, 1588-ին ան տակաւին կը շարունակէր ի գին ամեն բանի բողոքականութիւնը արմատախիլ ընել Ֆրանսայէն եւ զայն տկար ու բաժանեալ պահել: 1584-ին Հենրի Գ.-ի միակ եղբօր՝ Անճուի դուքսին մահը հիւկընօ Հենրի Պուրպոն Նաւարցին կը դարձնէր գահին միակ ժառանգորդը: Այս յաջորդականութիւնը խափանելու համար՝ յունուար 1585-ին Փիլիպպոս Բ. եւ կաթոլիկ լիկան գաղտնաբար կը համաձայնէին, որ Հենրի Գ.-ի յաջորդէր Հենրի Նաւարցին հօրեղբայրը՝ Չարլզ Պուրպոն կարդինալը: Յուլիս 1585-ին, կաթոլիկ լիկային ճնշումով, Հենրի Գ. հիւկընոնները ամբողջապէս կ'իրաւագրկէր եւ սեպտեմբերին Սիքսթուս Ե. պապին (1585–1590) կոնդակով Հենրի Նաւարցին գահը ժառանգելու անկարող կը հռչակուէր: 1585–1589-ին հիւկընոններու պատերազմները կը մղուէին Հենրի Գ.-ի, կաթոլիկ լիկայի առաջնորդ՝ Հենրի Կիզեցիի եւ Հենրի Նաւարցիի միջեւ: Փարիզը ամբողջութեամբ Հենրի Կիզեցիին կը փարէր: 12 մայիս 1588-ին փարիզցիներ կը պարտադրէին, որ Հենրի Գ. հեռանար Փարիզէն: 23 դեկտեմբերին Հենրի Գ. սպանել կու տար Հենրի Կիզեցին: 13 օր ետք կը մահանար Կատարինէ Մետիչեցին:

Հենրի Կիզեցիին տեղ կաթոլիկ լիկայի առաջնորդ կը դառնար անոր եղբայրը՝ Մայէնի դուքս Չարլզը: Հենրի Գ. Հենրի Նաւարցին հետ լեզու կը գտնէր, եւ երկուքը միատեղ Փարիզը իրենց իշխանութեան տակ կը պահէին, երբ ծայրայեղ վանա-

կան մը կը դանակոծէր Հենրի Գ.-ը, որ 2 օգոստոս 1589-ին կը մահանար: Հենրի Նաւարցին, որ այժմ Ֆրանսայի Հենրի Դ. թագաւորը կը դառնար (1589–1610), ինքզինք անապահով կը զգար իր գահին վրայ: Մարտ 1590-ին կաթոլիկ լիկան կը պարտուէր Իվրիի մէջ եւ Ալէսանտրօ Ֆարնէս անգամ մը եւս Հոլանտայէն կը հրաւիրուէր այս անգամ Ֆրանսան փրկելու համար: Ան կ'արգիլէր, որ Հենրի Դ. 1590-ին Փարիզը եւ 1592-ին Ռուէնը գրաւէր: Մինչ այդ սպանական բանակներ Պրիթանի եւ Լանկըտոգ կը ներխուժէին: 3 դեկտեմբեր 1592-ին Ֆարնէս կը մահանար, եւ Հենրի Դ. կացութեան լրիւ տէրը կը դառնար: Չուտ քաղաքական պատճառներով ան ինքզինք կաթոլիկ կը հռչակէր եւ 25 յուլիս 1593-ին Հռոմէական եկեղեցի կը մտնէր, սակայն միայն երկու տարի ետք պապը անոր անդամակցութիւնը կը հաստատէր: Այս քայլը Հենրի Դ.-ի հպատակներուն մեծամասնութեան համար հաճելի կը թուէր, եւ խաղաղութիւնը կը վերահաստատուէր: Հենրի Դ. չէր մոռնար իր հին գործակիցները եւ ապրիլ 1598-ին, Նանթի հրովարտակով, հիւկընոներուն ժողովրդային ծառայութեան արտօնութիւն կը շնորհէր, անոնց հրապարակային պաշտամունքի իրաւունքները կը վերահաստատէր՝ ի բաց առեալ Փարիզը, Ռայմզը, Թուլուզը, Լիոնը եւ Տիժոնը, եւ հիւկընոներու զաւակները պարտադիր կաթոլիկ դաստիարակութիւն ստանալէ զերծ կը կացուցէր: Առ ի ապահովութիւն հիւկընոներ նաեւ իրենց պարսպապատ քաղաքներուն կը վերատիրանային: Մայիս 1598-ին Հենրի Դ.-ի կողմէ 1595-ին հրահրուած Ֆրանս-սպանական պատերազմը կ'աւարտէր Վերվենի դաշինքով:

13 սեպտեմբեր 1598-ին 71 տարեկան Փիլիպպոս Բ. կը մահանար: Ան ո՛չ միայն չէր յաջողէր Անգլիան գրաւել, այլեւ Ֆրանսա կատարած յարձակումի շրջանին առիթ կու տար՝ հոլանտացի ապստամբներուն Ուիլլեմ Օրանժցիի տղուն՝ Մորիս Նասացիի (1567–1625) գլխաւորութեամբ նախայարձակ դառնալու եւ Հոլանտայի Միացեալ Գաւառները գրաւելով՝ հոլանտական անկախութիւնը ամրապնդելու:

Նանթի հրովարտակէն ետք հիւկընօ եկեղեցիներ կ'ապրէին իրենց ամենաբեղմնաւոր շրջանը: Իրենց կազմակերպական կեանքը ընթացքի մէջ կը մտնէր եւ Սետանի, Սոմուրի, Մոնթոպանի, Նիմի ու այլ քաղաքներու դպրոցները կը ծաղկէին: Անոնք կառավարութեան մէջ զինեալ քաղաքական ուժ կը դառնային: Լուի ԺԳ.-ի աւագ նախարար՝ Ռիշըլիօ կարդինալին (1610–1643) կեդրոնաձիգ իշխանութիւնը զանոնք իր քաղաքականութեան արգելք կը համարէր: 14 ամիս ընդդիմանալէ ետք՝ 1628-ին անոնց Լա Ռոշել ամրոցը կը գրաւուէր, եւ անոնք կը կորսնցնէին իրենց քաղաքական կիսանկախութիւնը: 1629-ի Նիմի հրովարտակով կը պահպանուէին անոնց կրօնական առանձնաշնորհումները, սակայն անոնք յարաճուն յարձակումներու կ'ենթարկուէին յիսուսեան եւ այլ կաթոլիկ միսիոնարներու կողմէ: 1685-ին, երբ Լուի ԺԴ. (1643–1715) յետս կը կոչէր Նանթի հրովարտակը, հիւկընօներ հալածուած նահատակ Եկեղեցի կը դառնային եւ Ֆրանսական յեղափոխութեան նախօրեակին 300.000 հիւկընօ Անգլիա, Հոլանտա, Փրուսիա եւ Ամերիկա կը գաղթէր:

ԺԳ. ԳԼՈՒԽ
ԳԵՐՄԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Լուտերականության դժբախտությունը այն էր, որ ան զանազան երկիրներու մէջ գտնուող իր ներկայացուցիչները միութեան մէջ պահող կապ մը չունէր՝ ի բաց առեալ «բիրեղ վարդապետությունը», որ չէր հանդուրժեր առկայ տարբերությունները եւ չէր նպաստեր քրիստոնէական համայնական կեանքի ստեղծումին: Լուտերականության հաւատքի նախնական սահմանումը, որ սիրտին մէջ եղող հաստատ վստահությունն էր Քրիստոսով Աստուծոյ ձրիօրէն պարգեւած գութին, առաւելաբար հաւատքի իմացական ըմբռնողութեան կը վերաբերէր, ինչպէս Մելանգթոնն ալ բանաձեւած էր, գրելով՝ «ըմբռնողութիւն մը, որով անձ մը հաւատքի բոլոր կէտերը կ'ընդունի»: Այս պատճառ կը դառնար բողոքական նոր դպրոցականության զարգացումին:

1530-ականներուն Մելանգթոնի աստուածաբանական ազդեցությունը կը գերազանցէր Լուտերինը, երբ Մելանգթոնի աշակերտները որոշադրիչ ազդեցութիւն կը գործէին երկրորդ սերունդի լուտերականներուն վրայ: Մարդկայնական մտածողութեան ազդեցութեամբ Մելանգթոնն աստիճանաբար կը հեռանար Լուտերի հետ իր ունեցած համամտութենէն՝ կարգ մը կէտերու վրայ տարբեր շեշտադրումներ կատարելով: 1535-ին, երբ Մելանգթոն իր *Աստուածաբանութեան գլխաւոր կէտեր*-ը լոյս կ'ընծայէր, ան Լուտերի կամքի վարդապետությունը կը բարեփոխէր եւ կ'ուսուցէր, թէ փրկարար հաւատքը արդիւնք է քարոզուած խօսքին, Սուրբ Հոգիին եւ մարդկային կամքին միացեալ գործառնութեան. այս տեսակետը ընդհանրապէս ծանօթ է որպէս «համագորութիւն»: Ան նաեւ կը յաւելէր, թէ բարի գործերը «կենսական են յաւիտենական կեանքի ժառանգութեան համար», սակայն ո՛չ որպէս փրկութեան հիմք, այլ անհրաժեշտ ապացոյց: Այս վերջին տեսակետէն ան վերջապէս

կը ձերբագատուէր, սակայն իր կարգ մը հետետորդները կառչած կը մնային անոր: Տիրոջ ընթրիքին հարցով՝ Մելանգթոն Լուտերի հետ համաձայն չէր այն տեսակետին, թէ Քրիստոսի «իրաւ ներկայութիւնը» առկայ էր հացին եւ զինիին մէջ. ան կ'ըսէր, թէ Քրիստոս «հացին մէջ չէր, այլ՝ հացին հետ», եւ այսպէսով կ'ընդգծէր սուրբ հաղորդութեան հոգեւոր եւ ո՛չ ֆիզիքական հանգամանքը: Մելանգթոնի այս նոր տեսակետները կը ներառուէին իր 1540-ին հրատարակած այսպէս կոչուած Օկսպուրկի «Բարեփոխուած» խոստովանութեան մէջ: Այս տարբերութիւնները Լուտերի հետ կապի խզումի առիթ չէին դառնար, որովհետեւ Լուտեր համբերութեամբ կը հանդուրժէր իր երիտասարդ բարեկամին նորարարութիւններուն: Մելանգթոնի այս նորարարութիւններուն շեշտադրումներուն մէջ Լուտեր որոշ զգուշութիւն կը ցուցնէր, թէեւ իր կեանքի վերջին տարիներուն ան կ'անհանգստանար Մելանգթոնի ներկայութենէն: Սակայն այս տարբերութիւնները բաւական հարցեր պիտի յարուցէին լուտերական շրջանակներուն մէջ:

Այս հարցերէն մին կապ ունէր Մելանգթոնի 1548-ի Լայփցիկի համամտութեան դէմ ըլլալուն հետ: Մելանգթոնի համաձայն՝ հռոմէական բազմաթիւ երեւոյթներու վերահաստատումը կապ ունէր միայն «անկարեւոր» կէտերուն հետ: Իսկ Մաթիաս Ֆլագիոս Իլիրիգոսին եւ Նիկողայոս Ամստորֆին համար ոչինչ «անկարեւոր» կը համարուէր: Անոնք անխնայ կը յարձակէին Մելանգթոնի վրայ եւ կը միանային Յովհաննէս Պրենզի (1499–1570) հարաւային Գերմանիոյ մէջ ծայր առած ընդդիմութեան շարժումին: Այս վիճիւր աւելի կ'ընդլայնէր, երբ Սաքսոնիոյ իշխանները եւս, Մելանգթոնի Ուիթթենպըրկ մնալը որպէս իրենց հակառակորդ Մորիցի զօրակցութիւն նկատելով, կը միանային ընդդիմութեան եւ 1558-ին Ճինայի մէջ համալսարան մը կը հիմնէին եւ Ֆլագիոսը կը նշանակէին անոր դասախօսներէն մէկը: Ճինայի եւ Գոնիկսպըրկի համալսարանները Մելանգթոնի «ճշմարիտ լուտերականութեան» ընդդիմութեան գլխաւոր կեդրոնները կը դառնային:

Կը յարուցուէին այլ աստուածաբանական վէճեր եւս, որոնցմէ նշանաւոր կը դառնային «Օսիանտրբեան հակամարտութիւնը» եւ «Մէյճրբեան հակամարտութիւնը»: Անդրեաս Օսիանտրբ (1498–1552) լուտերականներուն եւ կալվինականներուն ընդդիմութիւնը կը գրգռէր, երբ կ'ուսուցէր, թէ արդարացումը ո՛չ թէ մեղաւորին «արդար յայտարարուիլն էր», այլ Քրիստոսի անոր մէջ բնակութեամբ «արդար դառնալը»: Միւս կողմէ՝ Գեորգ Մէյճրբ (1502–1574), պաշտպանելով Մելանգթոնի նախնական տեսակէտը, կը պնդէր, թէ կարելի չէր փրկուիլ առանց բարի գործերու, որովհետեւ անոնք հաւատքով արդարանալը կ'իմաստաւորէին: 1552-ին Մէյճրբ Ամսֆորտցիի յարձակումին թիրախը կը դառնար եւ աւելի ծայրայեղութեան երթալով կ'ըսէր, թէ բարի գործերը փրկութեան հասնելուն մէջ որոշադրիչ տեղ ունէին: Նոյն տարին Յովակիմ Ուէսթֆալ (1510–1574) կը քննադատէր Մելանգթոնի Տիրոջ ընթրիքի վարդապետութիւնը: Այս բոլոր զարգացումներուն լոյսին տակ, իր մահէն կարճ ժամանակ առաջ, որ տեղի կ'ունենար 19 ապրիլ 1560-ին, Մելանգթոն կ'ըսէր, թէ կը փափագէր մեռնիլ «աստուածաբաններու զայրոյթէն» փրկուելու համար:

Բողոքականութիւնը աւելի կը վտանգուէր, երբ կալվինականութիւնը կը տարածուէր Գերմանիոյ հարաւ-արեւմուտքը: Ֆրետերիք Գ.(1559–1576) կ'որդէգրէր Վերջին ընթրիքի՝ կալվինական տեսակէտը: Երիտասարդ աստուածաբաններ՝ Գասպար Օլեւիանոս (1536–1587) եւ Զաքարիա Ուրսինոս (1534–1583), 1562-ին Ֆրետերիք Գ.-ի տիրապետութեան տակ գտնուող տարածքներուն համար կը խմբագրէին Հայտըլպըրկի քրիստոնէականը: Սակայն 1555-ին կնքուած Օկսպուրկի խաղաղութեան դաշինքը կալվինականութիւնը չէր պաշտպաներ եւ ո՛չ միայն կաթոլիկներ, այլ լուտերականներ եւս կը բողոքէին անոր հանդէպ ցոյց տրուած հանդուրժողութեան դէմ:

Լուտերականներուն մէջ եւս ներքին վէճերը կը շարունակուէին: 1573-ին Սաքսոնիոյ իշխանը՝ Օգոստոս (1553–1586), Մելանգթոնի հակառակորդները կը վտարէր իր իշխանութեան տարածքներէն: Մինչ այդ Սաքսոնիան, իր Ուիթընպըրկի եւ

Լայփցիկի համալսարաններով, մելանգթոնեան աւանդութեան հետեւորդ էր: 1574-ին Օգոստոս կը հաւատար, որ այս աւանդութիւնը Տիրոջ ընթրիքին մէջ կալվինական տարրեր կը խառնէր եւ անոր հետեւորդ բազմաթիւ քարոզիչներ կը բանտարկէր ու կը չարչարէր, որով կալվինականութիւնը եւս կը հալածուէր:

1577-ին այս պայքարը կը հարուածէր լուտերականութեան Հաւատքի վերջին հանգանակը եւս՝ համաձայնութեան բանաձեւը, երբ անոր կը հակադրուէին կարգ մը խաղաղասէր աստուածաբաններ, որոնց առաջատարներն էին Թիւպինկընէն Յակոբ Անտրէա (1528–1590), Պրանսուիքէն Մարթին Շեմնից (1522–1586), եւ Լայփցիկէն Նիկողայոս Սելնեգրը (1532–1592): Յունիս 1580-ին, Օկսպուրկի խոստովանութեան յիսնամեակին առթիւ, անոնք կը հրատարակէին «Համաձայնութեան գիրք»-ը, ինչպէս նաեւ լուտերական այլ խոստովանողական բանաձեւերը՝ Տիեզերական երեք հաւատամքները, Օկսպուրկի խոստովանութիւնը, Օկսպուրկի խոստովանութեան Ջատագովութիւնը, «Շմալգալտի յօդուածներ»-ը եւ Ամփոփ ու Ընդարձակ քրիստոնէականները: 51 իշխաններու, 35 քաղաքներու ներկայացուցիչներու եւ աւելի քան 8000 պատուելիներու անունով, անոնք կը վաւերացնէին «Համաձայնութեան գիրք»-ը: Միայն փոքրաթիւ լուտերական իշխաններ եւ քաղաքներ կը մերժէին վաւերացնել զայն, եւ Լուտերի մտածողութիւնը աւելի «դպրոցական» հանգամանք կը զգենար:

1555-ի Օկսպուրկի խաղաղութեան շրջանին Գերմանիա մեծ մասամբ բողոքական կը դառնար: Գրեթէ բոլոր աշխարհիկ իշխողները բողոքական էին, սակայն կայսրը եւ խորհրդարանի անդամներուն երկու երրորդը կաթոլիկ էին. ասոնք կաթոլիկ վերագարթօնքին քաղաքական խթանը պիտի հանդիսանային Գերմանիոյ եւ ամբողջ կայսրութեան մէջ: Կաթոլիկ հակաբարեկարգութիւնը կը գլխաւորէին յիսուսեաններն ու հաւատացեալ կաթոլիկ իշխանները: Բողոքականութիւնը, դաւանական եւ քաղաքական մարզերու մէջ բաժան-բաժան ըլլալով, չէր կրնար միացեալ ընդդիմութիւն դրսեւորել:

Աւստրիոյ ու Պոհեմիոյ մէջ եւս բողոքականութիւնը կը տկարանար եւ կայսրութեան գրեթէ ամբողջ տարածքին յիսուեան քարոզչութիւնը նորադարձներ կ'ապահովէր կաթոլիկութեան: Բողոքականներու եւ կաթոլիկներու յարաբերութիւնները միշտ լարուած կը մնային:

Պաւարիոյ պենետիկտեան ծայրայեղ վանականներու կրօնական թափօրներէն մին ապստամբութեան կը վերածուէր 1606-ին: Պաւարիոյ դուքս՝ Մաքսիմիլիան (1597–1651), կայսրին հրահանգով կը գրաւէր քաղաքը եւ կ'արգիլէր աւետարանական պաշտամունքը: 1608-ին Ռեկենսպուրկի մէջ կաթոլիկ նահանգներ 1555-ին իրենցմէ գրաւուած բոլոր ստացուածքներու վերատիրացումը կը պահանջէին եւ իրենց պահանջը կը հիմնաւորէին Օկսպուրկի խաղաղութեան տրամադրութեան վրայ. սակայն երկու յաջորդական սերնդափոխութեամբ՝ ժամանակի ընթացքին այս նահանգները բողոքական կը դառնային:

Այս պայմաններուն մէջ խումբ մը բողոքական իշխաններ 4 մայիս 1608-ին կը կազմէին պաշտպանողական միութիւն մը Փալաթինաթի կալվինական իշխան Ֆրետերիք Դ.-ի (1583–1610) գլխաւորութեամբ: Անմիջապէս ասոր կը հակադրուէր կաթոլիկ իշխաններուն 10 յուլիս 1609-ին կազմած լիկան, որ կը գլխաւորէր Պաւարիոյ Մաքսիմիլիանը: Հիւսիսային Գերմանիոյ լուտերական ուժեղ նահանգները եւ կայսրը կը մերժէին միանալ պաշտպանողական միութեան: Եթէ Ֆրանսայի Հենրի Դ. թագաւորը ողջ ըլլար, պատերազմը անխուսափելի պիտի դառնար, որովհետեւ ան պաշտպանողական միութեան պիտի միանար Սպանական Հոլանտայի վրայ արշաւելու համար. սակայն 1610-ին Հենրի Դ.-ի ահաբեկութեամբ եւ Գերմանիոյ կայսերական յաջորդութեան անորոշութեամբ՝ դէպքերու զարգացումը կը յետաձգուէր:

Այսպէս բնորոշուած Երեսուն տարիներու պատերազմը (1618–1648) սկիզբ կ'առնէր Պոհեմիայէն: 1609-ին մեծ մասամբ բողոքական Պոհեմիոյ կէս յիմար կայսրը՝ Ռուտոլֆ Բ. (1576–1612), հրովարտակ կը հրապարակէր եւ կրօնական լայն

հանդուրժողութիւն կ'արտօնէր: Ռուտովֆի կը յաջորդէր եղբայրը՝ Մաթիաս (1611–1619), որ անգաւակ կը մնար եւ 1617-ին անոր կը յաջորդէր զարմիկը՝ Ֆերտինանտ Սթիրիացին, որ թունդ հակաբարեկարգչական էր: Կաթոլիկներ կը շահագործէին Ռուտովֆի հրովարտակը եւ որպէս հակազդեցութիւն՝ 23 մայիս 1618-ին բողոքականներ Փրակի դղեակէն վար կը նետէին Մաթիասը ներկայացնող երկու ազնուականները: Պոհեմիա կ'ըմբոստանար եւ նախայարձակ դառնալով կը սկսէր պատերազմի: Պոհեմացի ընդդիմադիրներ յաղթական կը դառնային եւ Մաթիասի մահէն ետք՝ 1619-ին, կալվինական Ֆրետերիք Ե.-ը (1610–1632) թագաւոր կ'ընտրէին: Նոյն շաբաթը Սթիրիացին կայսր կ'ընտրուէր եւ կը դառնար Ֆերտինանտ Բ. (1619–1637):

Ֆրետերիք Ե. Պոհեմիայէն դուրս նեցուկ չէր ունենար, մինչ Պաւարիոյ Մաքսիմիլիանը եւ Հոլանտայէն սպանացի գունդ մը կ'օժանդակէին Ֆերտինանտ Բ.-ի: Թիլլիի իշխան՝ Յովհաննէս Յերգալէսի (1559–1632) գլխաւորութեամբ, Փրակի մօտ 8 նոյեմբեր 1620-ին կաթոլիկներ կը յաղթէին պոհեմացիներուն, եւ Ֆրետերիք կը փախչէր Պոհեմիայէն: Ռուտովֆ Բ.-ի հրովարտակը չեղեալ կը համարուէր, պոհեմացի բողոքականներուն կալուածները յարքունիս կը գրաւուէին՝ մեծ մասամբ յիսուսեաններուն փոխանցուելով եւ Հակաբարեկարգութիւնը տիրական կը դառնար Պոհեմիոյ եւ Մորաւիոյ մէջ: Յարքունիս գրաւուած կալուածներուն տիրացողներէն Ալպրէխթ Վոլընշթայնը (1583–1634) շարունակուող պատերազմին մէջ կը դառնար նշանաւոր դէմք: Պաշտպանողական միութիւնը կը լուծուէր: Առաւել, բողոքականութիւնը նաեւ ճնշումի կ'ենթարկուէր Աւստրիոյ մէջ:

Մինչ այդ, 1620-ին, Ամպրոսիոս Սփինոլայի առաջնորդութեամբ, սպանական գունդեր Փալաթինաթ կ'արշաւէին եւ Յերգալէսի ու կաթոլիկ լիկայի բանակին կը միանային: Կաթոլիկութիւնը կը հաստատուէր Փալաթինաթի մէջ եւս, Ֆրետերիք Ե.-ի իշխանութիւնը կը տապալէր, եւ 1623-ին անոր

կալուածներուն մեծամասնութիւնը կը փոխանցուէր Պաւարիոյ Մաքսիմիլիանին:

Հիւսիս-արեւմտեան Գերմանիոյ մէջ, ուր բազմաթիւ եպիսկոպոսութիւններ բողոքական դարձած էին Օկսպուրկի խաղաղութեան դաշինքէն յետոյ, այժմ պատերազմի սպառնալիքին տակ էին եւ բողոքականութեան կրած աղէտները պատճառ կը դառնային, որ բողոքական օտար ուժեր ոտքի ելլէին: Սակայն ազդեցիկ քայլեր չէին առնուեր, ի բաց առեալ Դանիոյ Քրիստիան Դ.-ի (1588–1648) պարագան, որուն Անգլիա եւ բողոքական Հոլանտա քիչ մը օգնութիւն կը հասցնէին: Քրիստիանի թշնամութիւնը պատրուակելով՝ Ֆերտինանտ Բ. կայսերական ընդհանուր հրամանատար կը նշանակէր Վոլքընշթայնը: Վոլքընշթայն նշանաւոր արկածախնդիր մըն էր, որ բողոքական ծնած էր, անուանական կաթոլիկ էր եւ այժմ Պոհեմիոյ ամենահարուստ ազնուականն էր: Ի բնէ առաջնորդ ծնած՝ ան առանց ցեղի եւ դաւանանքի խտրութիւն դնելու, այլ միայն պատերազմելու ատակութիւն եւ իր անձին հանդէպ հաւատարմութիւն պահանջելով, կարճ ժամանակի մէջ կը կազմէր մեծ եւ ազդեցիկ բանակ մը:

25 ապրիլ 1626-ին Վոլքընշթայն Մանսֆելտի Էրնըսթ կոմսին գլխաւորած բողոքական բանակը պարտութեան կը մատնէր Էլպէի Տեսաու կամուրջին վրայ: Ան պարտեալ բողոքականները կը հալածէր մինչեւ Հունգարիա, ուր անոնք յումպէտս կը փորձէին կայսրին թշնամի Թրանսիլվանիոյ կալվինական իշխան Պեթիլէն Կապորի բանակին օժանդակութեամբ ետ մղել թշնամին: 27 օգոստոս 1626-ին Լութերի մէջ Քրիստիան Դ. Ցերգալէսի եւ կաթոլիկ լիկայի բանակին կողմէ պարտութիւն կը կրէր: Այս կաթոլիկ յաղթանակները կը շարունակուէին 1627-ին եւ 1628-ին: Հանովըր, Պրանսուիք, Սիլեսիա, Հոլսթայն, Շլէսուիկ, Փոմերանիա եւ Մեքլենպըրկ յաջորդաբար կը տապալէին: Սակայն Վոլքընշթայն չէր յաջողէր գրաւել շուէտացիներուն պաշտպանութիւնը վայելող Պալթեան ծովու Մթրալտունտ նաւահանգիստը եւ իմաստութիւնը կ'ունենար խաղաղութեան դաշինք կնքելու՝ նախքան Շուէտի Կուսթաւոս

Ատոլֆոս թագաւորին (1611–1632) պատերազմին միջամուխ դառնալը: Մայիս 1629-ին կնքուած դաշինքին համաձայն՝ Քրիստիան իր աշխարհագրական տարածքները կը պահէր՝ խոստանալով այլեւս չմիջամտել գերման քաղաքականութեան:

Կաթոլիկներ կը վճռէին իրենց յաղթանակներուն պտուղը քաղել: 6 մարտ 1629-ին Ֆերտինանտ Բ. «վերահատուցումի հրովարտակ» կը հրապարակէր եւ կը հրահանգէր 1552-էն ի վեր բողոքականներուն ձեռքը անցած բոլոր եկեղեցակապատկան կալուածները վերադարձնել կաթոլիկներուն եւ ասոնց իշխանութեան տակ գտնուող աշխարհագրական տարածքներէն արտաքսել բողոքականները, եւ լուտերականներէն բացի՝ ուրիշ բողոքական խմբաւորում օրինական չհամարել. այս վերջին կէտով կալվինականներ իրենց բոլոր իրաւունքներէն կը զրկուէին: Յաջորդ տարիներուն թէեւ այս հրովարտակին բոլոր տրամադրութիւնները չէին գործադրուեր, սակայն հինգ եպիսկոպոսութիւն, հարիւրաւոր վանք ու ծխական եկեղեցի ժամանակաւորապէս կաթոլիկներուն կը փոխանցուէին: Այս ընթացքը հեզասահօրէն կրնար շարունակուիլ, եթէ կաթոլիկներ ներքին հակամարտութիւններ չունենային: Պաւարիոյ Մաքսիմիլիանի գլխաւորած լիկան, նախանձելով Վոլքնշթայնի վայելած կայսերական զօրութեան, կը պահանջէր անոր հրաժարակար, եւ սեպտեմբեր 1630-ին կայսրը կը պարտաւորուէր ընդառաջել այս պահանջին:

Նոյնիսկ Վոլքնշթայնի պաշտօնէ արձակումէն առաջ կը պատահէր շատ կարեւոր դէպք մը, որուն հետեւանքը անմիջապէս ազդու չէր դառնար: Յունիս 1630-ին Շուէտի Ատոլֆոսը փոքր բանակով գերման նաւահանգիստ մը կը հասնէր: Երկու դրդապատճառ զինք կը մղէր պատերազմին մասնակցելու: Անշուշտ նախ ան որպէս բողոքականութեան ախոյեան կու գար, սակայն նաեւ կը ցանկար Պալթեան ծովը շուէտական լիճի վերածել եւ Պալթեան ծովու նաւահանգիստներուն վրայ կատարուած գերման կայսերական յարձակումները իր թագաւորութեան անմիջական վտանգ կը համարէր, որովհետեւ եթէ անոնք թշնամիին ձեռքը անցնէին, Շուէտ մեծ վտանգ պիտի

դիմագրաւեր: Ատուֆոս կայսերական զօրքերը անմիջապէս Փոմերանիայէն դուրս կը դնէր, ապա դանդաղ կը շարժէր, որովհետեւ բաւարար դաշնակիցներ չունէր: Յունուար 1631-ին ան Ֆրանսայի Լուի ԺԳ.-ի աւագ նախարար՝ Արմանտ Փլեսիսի հետ, ծանօթ որպէս կարդինալ Ռիշըլիօ (1585–1642), դաշինք կը կնքէր եւ իր տնտեսական բեռը կը թերթեւցներ: Ռիշըլիօ Սպանիոյ հափսպուրկներուն եւ Աւստրիոյ հանդէպ ունեցած Ֆրանսայի պատմական թշնամութիւնը կը վերահաստատէր եւ երբ ֆրանսական իշխանութեան քաղաքական յաջողութեան համար դաշնակիցներ կը գտնէր՝ նոյնիսկ անոնց բողոքական ըլլալը նկատի չէր առնէր: Ատուֆոսի յաջորդ դժուարին քայլը կ'ըլլար թէեւ բողոքական, սակայն կայսերական հակում ունեցող Պրանտընպըրկի եւ չէզոք դիրք որդեգրած Սաքսոնիոյ դաշնակցութիւնը ապահովել: 20 մայիս 1631-ին Յերգալէս կը գրաւէր Մակտըրպըրկը, անմարդկային չարչարանքներու կ'ենթարկէր բնակիչները եւ գրեթէ ամբողջ քաղաքը կրակով կ'աւերէր:

Բողոքականութեան այս կռուանին կորուստին կը յաջորդէր, յունիսին, Պրանտընպըրկի եւ Սաքսոնիոյ դաշնակցութիւնը Ատուֆոսի հետ: 17 սեպտեմբեր 1631-ին Ատուֆոս սաքսոնացիներու օժանդակութեամբ Պրէյթենֆելտի մէջ պարտութեան կը մատնէր Յերգալէսը: Հիւսիսային Գերմանիոյ կայսերական իշխանութիւնը մեծ ցնցում կ'ապրէր եւ Ատուֆոս Մայնցի մէջ կը հաստատուէր, մինչ այդ սաքսոններ Փրակը կը գրաւէին: Կայսրը դարձեալ Վոլընշթայնին կը դիմէր բանակ կազմելու համար եւ ապրիլ 1632-ին ան կը գլխաւորէր բանակը:

Ատուֆոս, Տոնաւորթի մօտ Յերգալէսը պարտութեան մատնելէ եւ մահացու վերքերով վիրաւորելէ ետք, կը յարձակէր Պաւարիոյ Մաքսիմիլիանին վրայ: Պաւարիոյ մայրաքաղաքը՝ Միւնիխ, կ'ենթարկուէր Ատուֆոսի: Մինչ այդ Վոլընշթայն սաքսոնները Փրակէն կը վտարէր եւ կ'արշաւէր Ատուֆոսի վրայ: Երկու բանակները շարքաթներ ամբողջ Նուրենպերկի մօտ կը պատերազմէին, եւ Յերգալէս կ'արշաւէր դէպի հիւսիս՝ ձգմելու համար սաքսոնները: Ատուֆոս զայն կը հալածէր եւ 16

նոյեմբեր 1632-ին Լութզենի մէջ կը յաղթեր անոր՝ գրեթէ սպանելով զայն: Ատոյ՛ֆոսի յաղթանակը մշտական կը դառնար. ան «վերահատուցումի հրովարտակը» մեռեալ տարրի կը վերածէր հիւսիսային Գերմանիոյ մէջ, եւ իր յիշատակը կը մեծարուէր գերման բողոքականներուն կողմէ:

Շուէտական շահերու հետապնդումի պատասխանատուն կը դառնար կարող դիւանապետ Ազսել Օգսենսճերնա, թէւ ամենատիրական բողոքական զօրավարն էր Պերնհարտ Սաքսելէյմարցին (1604–1639), որ նոյեմբեր 1633-ին կը գրաւէր հարաւային Գերմանիոյ կարեւոր քաղաքներէն Ռեկենսպուրկը եւ Տանուպի գիծը կը բանար բողոքական յառաջխաղացքին դիմաց: Մինչ այդ Վոլքնշթայն գրեթէ անշարժ կը մնար Պոհեմիոյ մէջ՝ մասամբ նախանձելով, որ մեծաթիւ սպանական զինուորներ հարաւային Գերմանիա ուղարկուած էին եւ մասամբ ալ զբաղելով Սաքսոնիայով, Շուէտով ու Ֆրանսայով: Յստակ չէր, թէ անոր միտքէն ի՞նչ կ'անցնէր. սակայն շատ հաւանաբար ան կը ցանկար Պոհեմիոյ թագին տիրանալ: Երբ ան չէր յաջողէր Ռեկենսպուրկը ազատագրել, կայսրին զայրոյթը կը բորբոքէր եւ 25 փետրուար 1634-ին զայն դաւադրաբար սպանել կու տար:

5 եւ 6 սեպտեմբեր 1634-ին Նորտլինկընի մէջ Սաքսելէյմարցի եւ շուէտական բանակներ ծանր պարտութիւն կը կրէին կայսերական ու սպանական միացեալ բանակէն: Այս բախումը վճռական կ'ըլլար, ինչպէս եղած էր Պրէյթենֆելտի ճակատամարտը երեք տարի առաջ: Փաստօրէն ի յայտ կու գար, թէ բողոքականներ չէին կրնար հարաւային Գերմանիոյ տիրանալ: 15 յունիս 1635-ին Փրակի մէջ խաղաղութեան դաշինք կը կնքուէր կայսրին եւ Սաքսոնիոյ միջեւ: 12 նոյեմբեր 1627-էն հաշուելով՝ կ'որոշուէր բոլոր եկեղեցապատկան կալուածները 40 տարի պահել զանոնք ունեցողներուն ձեռքը եւ անոնց վերջնական ճակատագիրը վճռել կաթոլիկ ու բողոքական համահաւասար թիւէ բաղկացած դատաւորներու ատեանին կողմէ: Կալվինականներու իրաւասութիւններուն նշումն անգամ չէր ըլլար: Յաջորդ շաբաթներու ընթացքին Գերմանիոյ

բազմաթիւ բողոքականներ համամիտ կը դառնային այս խաղաղութեան դաշինքին: Մակայն խաղաղութիւնը համատարած չէր դառնար:

30 տարի եւս պատերազմը ուժգնօրէն կը շարունակուէր: Ան կը կորսնցնէր իր հիմնական նպատակը եւ կը վերածուէր գերման հողին վրայ գերման մրցակիցներու օգնութեամբ մղուած պայքարի՝ ամրապնդելու համար դիրքը Սպանիոյ, Ֆրանսայի ու Շուէտի, եւ ասոնց մէջէն ամենաշահաւորը Ֆրանսան կը դառնար: Ֆերտինանտ Բ.-ի կը յաջորդէր զաւակը՝ Ֆերտինանտ Գ. (1637–1657), սակայն կացութիւնը անփոփոխ կը մնար: Գերմանիա ազդեցիկ ղեկավարներ չունէր, բացի Պրանտընպըրկի իշխան Ֆրետերիք Ուիլհելմէն (1640–1688), որ կը յաջողէր իր աշխարհագրական տարածքները ընդարձակել, սակայն երիտասարդ ըլլալով՝ չէր կրնար ազդել պատերազմի ընթացքին վրայ:

Երկար բանակցութիւններէ ետք վերջապէս 27 հոկտեմբեր 1648-ին կը կնքուէր Ուէսթֆալիոյ խաղաղութեան դաշինքը: Շուէտ կը տիրանար Պալթեան ծովուն վրայ գտնուող գերման ծովեզրին: Ալզասի մեծ մասը կը տրուէր Ֆրանսայի: Երկար ատենէ ի վեր գոյութիւն ունեցող Զուիցերիոյ անկախութիւնը կը ճանչցուէր: Պրանտընպըրկ կը ստանար Մակտըպըրկի արքեպիսկոպոսութիւնն ու Հալպերսթատի եւ Մինտենի եպիսկոպոսութիւնները՝ որպէս հաստուցում շուէտացիներուն ի նպաստ իր կատարած Փոմերանիոյ զիջումներուն: Պաւարիոյ Մաքսիմիլիանը կը պահէր Փալաթինաթի մէկ մասը, իսկ մնացածը կը տրուէր Ֆրետերիք Ե.-ի զաւակին՝ Գարլ Լուտվիկի: Աւելի կարեւոր կը դառնար կրօնական հարցերու լուծումը: Հոս Ուիլհելմ կը յաջողէր կալվինականները ներառել լուտերականներուն մէջ, եւ երկուքը միասին մէկ ամբողջութիւն ներկայացնել կաթոլիկներուն դիմաց: Գերման կալվինականներ ամբողջական իրաւունքներու կը տիրանային: 1635-ի խաղաղութեան դաշինքը կը ջրուէր եւ 1624-ը մեկնակէտ ընդունուելով՝ կ'որոշուէր այս թուականէն եկեղեցապատկան կալուածներուն տիրացած կաթոլիկներուն ու բողոքական-

ներուն ձեռքը պահել զանոնք: Մինչ աշխարհական իշխանաւոր մը կը շարունակէր տնօրինել իր հպատակներուն կրօնական հարցերը, Բարեփոխութիւն մը կը կատարուէր ըսելով, որ եթէ 1624-ին բաժանեալ կրօնական պաշտամունք տեղի կ'ունենար տուեալ վայրի մը մէջ, նոյն կողմը նոյն համեմատութեամբ պիտի պահպանէր իր իրաւասութիւնը: Լուտերականներ եւ կալվինականներ կը համաձայնէին, թէ խաղաղութեան դաշինքի թուականէն սկսեալ եթէ նոյնիսկ աշխարհական իշխանաւորը բողոքականութեան այս կամ այն կողմին հակէր տուեալ վայրի մը մէջ, անոր հպատակները իրենց կրօնական պատկանելիութիւնը պահպանելու ազատութիւն պէտք էր վայելէին: Միւս կողմէ, կայսրին պնդումով, Աւստրիոյ եւ Պոհեմիոյ բողոքականներուն ո՛չ մէկ առանձնաշնորհում կը տրուէր:

Ո՛չ մէկ կողմ գոհ կը մնար այս խաղաղութեան դաշինքէն: Պապը կը մերժէր զայն: Սակայն բոլորն ալ պատերազմէն ուժաքամ դարձած էին եւ խաղաղութեան դաշինքը գոնէ կաթոլիկութեան ու բողոքականութեան սահմանագիծերը կը ճշդէր: Եւ որպէս այսպիսին՝ ան մնայուն կը դառնար, եւ Բարեկարգութեան շրջանը փակուած կը համարուէր եւրոպական ցամաքամասին վրայ:

Գերմանիոյ համար Երեսուն տարիներու պատերազմը սարսափազդու չարիք մըն էր: Ամբողջ Գերմանիան անօրէն բանակներու ոտքի կոխան կ'ըլլար: Բնակչութեան թիւը 16 միլիոնէն վեց միլիոնի կ'իջնէր: Վաճառականութիւնն ու արտադրողականութիւնը կը քանդուէին: Առաւել՝ մտաւորական կեանքը, բարոյական արժէքներն ու կրօնական ապրումները արմատախիլ կ'ըլլային: Պատերազմի աւարտէն դար մը ետք, անոր գործած աւերը կը յամենար: Պատերազմի ամբողջ տեւողութեան, հոգեւոր կեանքի միակ փայլատակումը կը հանդիսանար լուտերական մեծագոյն հոգեւոր երգերու հեղինակ Պօղոս Կերհարտը (1607–1676): Իսկ պատերազմի սկզբնական տարիներուն զգալի էր նաեւ բողոքական խորհրդագրաց Յակոբ Պոհմ Կորլիցի (1575–1624) դրական գործունէութիւնը:

ԺԴ. ԳԼՈՒԽ
ՍՈԶԻՆԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԿԱՍ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ¹

Բարեկարգության շրջանին Քրիստոսի անձին եւ գործին առնչուած կարգ մը սահմանումներ փոփոխութեան կ'ենթարկուէին: Ասոնք նախ կը յայտնուէին կրկնամկրտական Լուտվիկ Հաթսըրի եւ Հանս Տենքի քով: Միքայէլ Սերվէթուսի արմատական գաղափարներուն մասին արդէն կարդացինք, սակայն ան իրեն հետեւող աշակերտներ չէր ունենար: Այս ժամանակաշրջանի գլխաւոր հակաերրորդութենականները Իտալիայէն էին, ուր կրկնամկրտական տարրեր եւ հոգեւորութիւն ընդելուզուած էին իտալական մարդկայնականութեան հետ եւ կը սպառնային քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան: 1550-ականներուն կարգ մը իտալացի ծայրայեղականներ եւ ակնառու բողոքական ապաստանեալներ կային Ժնեւի մէջ եւ շուրջ:

Իտալական սփիւռքի այս անդամները Սերվէթուսի 1553-ի մահով դատապարտուած էին լռութեան, սակայն անոր տեսակէտներուն ջերմ պաշտպան կը մնային Մատթեոս Կրիպպալտի (1506?–1564) եւ Յովհաննէս Վալենթինո Ճենթիլէ (1520?–1566). առաջինը Փատովայի, Թիւպինկընի եւ Կրենոպլի մէջ քաղաքացիական օրէնսդրութեան մեծահամբաւ դասախօս էր, որ 1555-ին իր սխալներուն համար Կալվինի կողմէ կը քննադատուէր, իսկ երկրորդը շուրջ 1556-ին Ժնեւ կու գար, 1558-ին իր հերետիկոսական տեսակէտներուն համար կը բանտարկուէր, իր տեսակէտներէն հրապարակային ամօթապարտ ետդարձ կը կատարէր եւ 1562–1564-ին Լեհաստան

¹ Միութենականութիւնը, իր հիմնադիրներուն անունով սոցինիանականութիւն ալ կոչուած, այն հերետիկոսութիւնն է, որ Սուրբ Երրորդութեան վարդապետութիւնն ու Քրիստոսի աստուածութիւնը կը մերժէ եւ Աստուծոյ միութիւնը միանձնութեամբ կը դաւանի (Ն.):

ապաստանել է ետք՝ 1566-ին կը գլխատուէր Պերնի մէջ: Այս երկուքէն աւելի նշանաւոր էր բժիշկ Գեորգ Պիանտրաթան (1515?-1588), որ որպէս իտալացի ծուխին աւագ պատասխանատու՝ տարի մը Ժնեւ կը մնար, սակայն աւելի հեռատես կ'ըլլար 1558-ին Լեհաստան երթալով եւ Լեհաստանի ու Թրանսիլվանիոյ իշխանական ընտանիքներուն բժիշկը դառնալով: Ան Թրանսիլվանիոյ մէջ կը հիմներ միութենական համայնք մը եւ 1571-ին կ'օրինականացնէր զայն Հունգարիոյ Յովհաննէս Բ. Սիկիզմունտ թագաւորին (1540-1571) հրամանագիրով: Այս յաջողութիւնը կը համարուի Եւրոպայի կրօնական հանդուրժողութեան կարեւոր իրագործումներէն մէկը: Պիանտրաթայի գլխաւոր գործակիցն էր Ֆրանսիս Տալտ (1510?-1579), որ յաջորդաբար Թրանսիլվանիոյ Լուտերական, Կալվինական եւ Միութենական եկեղեցիներուն կառավարիչը կ'ըլլար եւ 1565-ին բացայայտօրէն Սուրբ Երրորդութեան դէմ կը քարոզէր:

Նորափոխի հակաերրորդութենականութիւնը պիտի բնորոշուէր իրարու հօրեղբայր եւ զարմիկ եղող երկու Սոզինիներու անունով: Լելիօ Սոզինի (1525-1562) կը սերէր սիենացի համաբաւեալ օրէնսգէտներու ընտանիքէ եւ իր հերթին օրէնսդրութեան ուսանող էր: 1540-ականներուն բողոքական կը դառնար եւ Եւրոպայի մէջ յաճախակի ճամբորդութիւններու կը նախաձեռնէր: 1550-1551-ին Ուիթընպըրկ կ'ապրէր եւ կը վայելէր Մելանգթոնի ընկերակցութիւնը՝ հակառակ անոր Եկեղեցիի խորհուրդներուն հոգեւոր ըմբռնողութեան համաձայն չըլլալուն: Թէեւ Պազէլի եւ Ժնեւի մէջ լաւ ընդունելութեան կ'արժանանար, սակայն ան Ցիւրիխ կը հաստատուէր եւ հոն ալ մահկանացուն կը կնքէր: Մերվեթուսի մահը զինք Սուրբ Երրորդութեան հարցին մէջ կը մխրձէր, սակայն իր եզրակացութիւնները իր կենդանութեան ատեն չէին հրապարակուէր: Իր զարմիկը՝ Ֆաուսթօ Սոզինի (1539-1604) այս մարզին մէջ աւելի ազդեցիկ կը դառնար: 1561-1563-ին ան Սիենայէն Լիոն կը փոխադրուէր, թէեւ 1562-ին յաճախ Ժնեւ եւ Ցիւրիխ կը ճամբորդէր: Ցիւրիխի մէջ կը հաւաքէր իր հանգուցեալ հօրեղբօր

գրութիւնները եւ անոնց ազդեցութեան տակ Լիոնի մէջ կը գրեր Աւետարան ըստ Յովհաննէսի նախաբանին իր *Բացատրողական*-ը: 1563–1574-ին ան դարձեալ Իտալիա կ’անցնէր եւ արտաքնապէս կը յարէր Հռոմէական եկեղեցիին: 1574-ին ան Պազել կը հաստատուէր եւ 1578-ին կը գրէր գլխաւոր երկը՝ *Յիսուս Քրիստոս սպասաւորը*՝ 1594-ին Լեհաստանի մէջ հրատարակուած: Այս երկին, ինչպէս նաեւ վերեւ յիշուած *Բացատրողական*-ին մէջ, Ֆաուսթօ կը մերժէր Քրիստոսի «բնական» աստուածութիւնը եւ համբարձումի ատեն Հօր կողմէ անոր շնորհուած աշխարհի տիրութիւնը եւ ասոր փոխարէն կը նախընտրէր Քրիստոսի մէջ տեսնել Աստուծոյ արդարն ու տառապող ծառան: Պիանտրաթայի ստիպումով 1578-ին Թրանսիլվանիա կ’երթար, ուր ան Տաւիտի հետ դառն յարաբերութեան մէջ էր, որովհետեւ վերջինս կը պնդէր, թէ Քրիստոս պէտք չէ յիշուէր աղօթքներուն մէջ եւ պէտք չէ պաշտուէր: 1580-ին Ֆաուսթօ Լեհաստան կ’անցնէր, որ այդ տարիներուն Եւրոպայի ամենահանդուրժողական երկիրն էր եւ հոն կ’ապրէր մինչեւ իր մահը՝ 1604-ին:

Լեհաստանի մէջ Ֆաուսթոյի եւ այլոց ջանքերուն շնորհիւ հակաերրորդութենական բողոքականներ, Փոքր բարեկարգեալ եկեղեցի կոչուած, բաւարար ժողովրդականութիւն կ’ունենային եւ իրենց հաւատալիքները կը բանաձեւէին *Ռազովեան քրիստոնէական*-ին մէջ, որ 1605-ին «լեհ եղբայր»-ներու կեդրոնատեղիին՝ Ռազովի մէջ լոյս կը տեսնէր եւ որուն հեղինակները Ֆաուսթոյի կարգ մը աշակերտներն էին: *Ռազովեան քրիստոնէական*-ը սքանչելիօրէն կը համադրէր տրամաբանական պատճառաբանութիւնն ու գերբնականութիւնը՝ յայտնելով, թէ ճշմարտութեան հիմքը աստուածային ներշնչումով գրուած Աստուածաշունչն էր. սակայն Նոր կտակարանին հանդէպ մեր ունեցած վստահութիւնը առաւելաբար խարըսխուած էր հրաշքներուն եւ մանաւանդ զայն ամբողջացնող յարութեան հրաշքին վրայ: Նոր կտակարանը իր գերբնականութեամբ կը վաւերացնէր Հին կտակարանը: Երկուքին ալ նպատակը մարդուն ըմբռնողութեան դիմաց յաւիտենական

կեանքի ճամբան բանալն էր: Թէեւ երկուքին մէջ ալ կը պարզուէին պատճառականութիւնը հարցականի տակ դնող հարցեր, սակայն անոնց արժէքը պատճառականութեան չէր հակասեր: Հոն մարդուն կամքին ազատութիւնը կ'ընդգծուէր եւ սկզբնական մեղքն ու նախասահմանութիւնը կը ժխտուէին: Սուրբ Երրորդութեան եկեղեցաբանական վարդապետութիւնը ո՛չ աստուածաշնչական էր եւ ո՛չ ալ տրամաբանական: Աստուածաշունչը միայն կ'ունուցէր, թէ Աստուած գոյութիւն ունէր եւ հատուցող ու դատաւոր էր: Մարդիկ բնութեամբ մահկանացու էին եւ առանձինն չէին կրնար յաւիտենական կեանքի ճամբան գտնել: Այս պատճառով ալ Աստուած անոնց Աստուածաշունչն ու Քրիստոսի կեանքն ու անոր օրինակը տուած էր: Քրիստոս ալ մահկանացու մըն էր, սակայն ո՛չ պարզ մահկանացու մը: Իր կուսական հրաշալի ծնունդով Քրիստոս Աստուծոյ Միածին Որդին էր՝ օժտուած աստուածային իմաստութեամբ ու կարողութեամբ: Ան կատարելապէս կը ցուցնէր աստուածային կամքը եւ կ'ապրէր բարոյական կեանքը՝ իր դժուարակիր մահով կնքուած: Աստուած Քրիստոսը մեռելներէն կը յարուցէր եւ համբարձումով զայն որդեգրեալ աստուածութեան կը վերածէր եւ իր թագաւորակիցը կը դարձընէր այս աշխարհին համար: Այս պատճառով ալ Քրիստոս այժմ պաշտամունքի ու աղօթքի արժանի էր: Քրիստոնէական կեանքը Աստուծոյ մէջ եղող ուրախութիւնը, աղօթքն ու գոհաբանութիւնն էր՝ աշխարհուրացութեամբ, խոնարհութեամբ ու համբերատարութեամբ: Անոր հետեւանքները մեղքերու թողութիւնն ու յաւիտենական կեանքն էին: Տիրոջ ընթրիքը պէտք էր կատարել որպէս Քրիստոսի մահուան յիշատակութիւնը: Մկրտութիւնը վերստին ծնունդ չէր ապահովէր, երեխաներուն յարմար չէր եւ լաւագոյն պարագային կրնար միայն ընդգծել քրիստոնէայ դարձողներուն Քրիստոսի՝ իրենց Տիրոջ պատկանելիութիւնը: Ֆաուսթօ մկրտութիւնը քրիստոնէական վերստին ծնունդի նախապայման չէր ընդունէր. թէեւ իր մահէն ետք հաւատացեալներուն թաթախումով

մկրտութիւնը սոզինիանականութեան մասնայատուկ նշաններէն մին կը դառնար:

Ինչպէս տեսանք, սոզինիանականութիւնը կը շեշտէր հաւատացեալին բարոյական կեանքը: Փրկութիւնը միայն հաւատքով հասանելի չէր, այլ աստուածաշնչական ճշգրիտ ծանօթութեամբ եւ յաւիտենական կեանք առաջնորդող պատւիրաններու գործադրութեամբ, որ կարելի էր Յիսուս Քրիստոսով յայտնուած Աստուծոյ օրէնքին գործուն հնազանդութեամբ: Երբ սոզինիանականութիւնը հաւատքը որպէս ծանօթութիւն կ'ընդգծէր, ցոյց կու տար լուտերական եւ բարեկարգեալ ուղափառութեան մէջ տեղի ունեցող նոր զարգացումները: Երբ ան կը մերժէր միայն հաւատքով արդարանալն ու երրորդութենական եւ քրիստոսաբանական դարաւոր վարդապետութիւնները, ինքզինք վերջնականապէս կ'անջատէր դասական բարեկարգեալ քրիստոնէութենէն:

Մանաւանդ յիսուսեաններուն շնորհիւ՝ 1658-ին սոզինիանականութիւնը Լեհաստանի մէջ կը դադրէր գոյութիւն ունենալէ, սակայն համակիրներ կը գտներ Հոլանտայի եւ առաւելաբար Անգլիոյ մէջ, ուր բաւական ազդեցիկ կը դառնար:

ԺԵ. ԳԼՈՒԽ ԱՐՄԻՆԻԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԺՁ. դարու վերջին տասնամեակին եւ ԺԷ. դարու առաջին տարիներուն Հոլանտայի (Միացեալ Գաւառներու) Բարեկարգեալ եկեղեցին կը տուայտէր նախասահմանումի եւ պետութիւն ու Եկեղեցի յարաբերութեան դառն հակամարտութեան մէջ:

Մէկ կողմէ՝ կալվինականներ կը պնդէին, թէ Աստուած ընտրեալներն ու դատապարտեալները աշխարհի ստեղծագործութենէն առաջ նախասահմանած էր եւ Եկեղեցին պետութենէն ամբողջապէս անջատ պէտք էր գործէր եւ միաժամանակ պետութեան պաշտպանութիւնը վայելէր. այսպէտով անոնք կը ջատագովէին Ժնեւի եկեղեցիին՝ պետութեան Եկեղեցիի հոգեւոր առաքելութեան միջամուխ չդառնալու սկզբունքը եւ աստուածաբանականօրէն կը հետեւէին տեսակետներուն Ժնեւի մէջ Կալվինի յաջորդած Թէոտոր Պեզայի (1519–1605), որ Կալվինի նախասահմանութեան վարդապետութիւնը առաւել կը մշակէր եւ անկէ աւելի խորացնելով՝ իր աստուածաբանութեան սիրտը կը դարձնէր: Այսպէս պնդող կալվինականներուն մեծամասնութիւնը հարաւային Հոլանտայի գաղթականներն էին, որոնք «բարեկարգեալ» հաւատքէն զատ ուրիշ վարդապետութեան չէին ուզեր հանդուրժել: Միւս կողմէ՝ «արմինիանականներ» կ'ըսէին, թէ նախասահմանումը կը վերաբերէր միայն մարդուն արարեալ, անկեալ ու մեղաւոր վիճակին, եւ Աստուած մարդը կ'ընտրէր կամ կը դատապարտէր, որովհետեւ անոր կեանքը արդէն իսկ նախօրոք գիտէր. անոնք նաեւ կ'ըսէին, թէ քրիստոնէայ քաղաքական իշխանութիւններ պէտք էր նպաստէին Եկեղեցիի հոգեւոր ու աշխարհիկ բարօրութեան. արդ, անոնք Եկեղեցիին ի նպաստ օրէնքներ պէտք էր մշակէին եւ մասնակից դառնային հոգեւոր պաշտօնեաներու նշանակումին ու վերահսկողութեան:

Արմինիանականներու առաջնորդն էր Յակոբ Հարմենգունը (Յակոբ Արմինիուս) (1559/1560–1609): Ան ընդհանրապէս

մարդկայնական եւ տրամաբանող կը նկատուէր, սակայն առաւելաբար կը յատկանշուէր որպէս հոլանտացի բարեկարգեալներու աւանդութեան հարազատ հետեւորդ մը, որ Ժնեւի կալվինականներուն գրեթէ ոչինչ պարտական էր եւ կը հաւատար վարդապետական սահմանումներն ու վերացական աստուածաբանութիւնը անդրանցող Եկեղեցիի եւ քրիստոնէայ պետական կառոյցներուն Եկեղեցիի սխալ ընթացքը սրբազրելու միջամտութիւնը կը քաջալերէր: Աստուածաշնչական բարեպաշտութեամբ եւ ոչ-վարդապետական եկեղեցաբանութեամբ սնած հոլանտացի նշանաւոր բարեկարգեալներէն էին Տիրգ Գուրնհերթ (1522–1590) եւ Գասպար Գուլհաէս (1534–1615):

Արմինիոս ծնած էր Հոլանտայի Ուտեվոթըր քաղաքին մէջ եւ նախնական ուսումը կը ստանար Ութրեխտի Սուրբ Յերոնիմոս դպրոցին մէջ, որ ԺԵ. դարուն հիմնուած էր հասարակաց կեանքի եղբայրներուն կողմէ: 1575-ին, երբ սպանացիներ Ուտեվոթըր կ'ասպատակէին, ան իր մայրը, եղբայրները, քոյրերն ու ազգականները կը կորսնցնէր: Բարեկամներու օժանդակութեամբ՝ 1576–1581-ին ան Մարպուրկի եւ Լէյտընի համալսարաններուն մէջ բարձրագոյն ուսումի կը հետեւէր: Լէյտընի համալսարանը Ուիլեմ Օրանժցիին կողմէ կը հիմնուէր 1575-ին, եւ Արմինիոս կը դառնար համալսարանի առաջին ուսանողներէն: Ապա Ամսթերտամի վաճառականներու միութեան ծախսով ան Ժնեւ կը դրկուէր եւ 1582–1586-ին Թէոտոր Պեզայի քով կ'ուսանէր՝ հակառակ այն իրողութեան, որ անոր ուսուցումներուն համաձայն չէր: 1583–1584-ին տարի մըն ալ ան Պազելի մէջ կ'ուսանէր: Իտալիա այցելելէ ետք՝ 1587-ին, ան Հոլանտա կը վերադառնար եւ 15 տարի Ամսթերտամի մէջ հովիւ կ'ըլլար եւ կը յատկանշուէր որպէս տպաւորիչ քարոզիչ ու ազդեցիկ հովիւ: Թէեւ իր եկեղեցիի հաւատացեալներն ու Ամսթերտամի քաղաքական իշխանութիւնները խորապէս կը յարգէին զինք, սակայն իր հոգեւոր եղբայրներէն Պետրոս Բլանգիոս (1552–1622), որ ուժեղ կալվինական էր եւ ականաւոր ու հարուստ դարձած էր Հոլանտայի արեւելեան

Հնդկաստանի ընկերության քարտեզները պատրաստելով, կը հակադրուէր իրեն: 1603-ին ան Լէյտընի համալսարանի աստուածաբանութեան դասախօս կը դառնար՝ յաջորդելով Ֆրանչիսքո Եունոսի (1545–1602) եւ մինչեւ մահը հոն մնալով:

Լէյտըն հասնելէն մէկ տարի ետք Արմինիոս սուր վիճաբանութեան մէջ կը մտնէր աստուածաբանութեան այլ դասախօսի մը՝ Ֆրանչիսքո Կոմարոսի (1563–1641) հետ՝ նախասահմանումի շուրջ, որ առաւելաբար կը վերաբերէր նախասահմանումի կարգաւորումին. Աստուած յաւիտենականօրէ՞ն կը սահմանէր զանազան անհատներուն ընտրութիւնն ու դատապարտութիւնը եւ ապա՝ կ'արտօնէր անկումը, որպէս վերջնական վճիռ կամ Աստուած նախ կ'արտօնէ՞ր անկումը եւ ապա կը սահմանէր զանազան անհատներուն ընտրութիւնն ու դատապարտութիւնը: Կալվին այս մասին յստակ տեսակէտ չէր պարզած եւ նախասահմանումի կարգաւորում չէր ճշդած: Ուրեմն՝ Պեգա եւ Կոմարոս յանձն կ'առնէին այս կարեւոր պատասխանատուութիւնը եւ կ'ըսէին, թէ Աստուած յաւիտենապէս կը վճռէր կարգ մը անձերու փրկութիւնը եւ այլոց դատապարտութիւնը՝ մարդերու ստեղծագործութենէն առաջ: Ըստ անոնց՝ Աստուծոյ յաւիտենական ու անբեկանելի վճիռը նախապատիւ էր եւ բոլոր մնացած աստուածաբանական ու մարդաբանական նկատողութիւնները կը ճշդորոշէր:

Արմինիոս երկու տեսակէտներուն ալ չէր հետեւեր եւ այսպէտով դասական կալվինականութենէն եւս կը զատորոշուէր: Ըստ Արմինիոսի՝ առաջին տեսակէտը Աստուած մեղքին հեղինակը կը դարձնէր եւ միաժամանակ երկու տեսակէտներն ալ անհրաժեշտը չէին պարզեր: Արմինիոս կ'ուսուցէր, թէ Աստուած որպէս մեղքի Փրկիչ կը դրկէր Քրիստոսը եւ հաւատացեալներ միայն Քրիստոսով փրկութեան կը սահմանուէին: Աստուծոյ առաջին եւ գերագոյն կարգադրութիւնը Քրիստոսը դրկելն էր եւ նախասահմանումը միայն քրիստոսաբանականօրէն պէտք էր քննարկուէր: Արդ, անհատներու նախասահմանումը ինքնանպատակ չէր եւ պայմանաւորուած էր Քրիստոսը ընդունելով կամ մերժելով: Աստուած

կ'որոշեր փրկել անոնք, որ ինք գիտեր, թե Քրիստոսի պիտի հաւատային ու հաւատքը պահէին, նաեւ ան կը կամենար դատապարտել անոնք, որ պիտի չհաւատային եւ հաւատքը պիտի չպահէին: Այսպէսով նախասահմանումը կը հիմնաւորուէր միայն Աստուծոյ նախահիմնացումին վրայ: Այս շրջագիծին մէջ Արմինիոս մարդկային ընտրութեան, այսինքն՝ փրկուածներուն հաւատքին տեղ կու տար, մինչդեռ ընդհակառակը, դատապարտուածներուն փրկութեան չհասնիլը Աստուծոյ շնորհած փրկութեան մերժումը կը նկատէր: Սակայն փրկութիւնը կարելի կը դառնար աստուածային շնորհով եւ ոչ մարդկային արժանաւորութեամբ. առանց այս շնորհին մարդկային կամքը մեղքի գերին կը մնար, Սուրբ Հոգիին կ'ընդդիմանար եւ Աւետարանով տրուած Աստուծոյ շնորհը կը մերժէր: Ծնորհը կարելի կը դարձնէր մարդուն գործակցութիւնը Աստուծոյ հետ՝ հաւատքի ճամբով, սակայն այս գործակցութիւնը Սուրբ Հոգիին նորոգութեան արդիւնքն էր եւ ոչ նորոգութեան միջոցը: Թէեւ «գործակից շնորհի» ըմբռնումը կալվինականութեան մէջ գոյութիւն չունէր, սակայն Մելանգթոն իր կեանքի աւարտին որոշ ճկունութիւն դրսեւորած էր այս ուղղութեամբ:

Արմինիոսի մահէն ետք՝ 1609-ին, արմինիանականներու առաջնորդները կը դառնային Արմինիոսի մտերիմ բարեկամը՝ Յովհաննէս Ուիթընպոկաէթ (1557–1644) եւ նախկին ուսանողը՝ Սիմոն Պիսկոփ (1583–1643), որ շուտով Լէյտրնի համալսարանի աստուածաբանութեան դասախօսը կը դառնար: 1610-ին այս երկուքն ու 42 այլ պատուելի, ընդառաջելով Հոլանտայի նահանգներուն խնդրանքին, իրենց հաւատքին բանաձեւումը կը կատարէին ու զայն «ընդդիմութիւն» կ'անւանէին եւ ըստ այնմ՝ նաեւ իրենք կը կոչուէին «ընդդիմադիրներ»: Հակադրուելով կալվինականութեան տարրական նախասահմանումին՝ «ընդդիմութիւն»-ը կ'ուսուցէր, որ նախասահմանումը, հիմնուելով աստուածային նախահիմնացումին վրայ, անհատներուն հասանելի կը դարձնէր շնորհը: Հակադրուելով Քրիստոսի՝ միայն ընտրեալներուն համար մեռ-

նելուն, «ընդդիմութիւն»-ը կը հաստատէր, որ Քրիստոս կը մեռնէր բոլորին համար, սակայն բոլորը չէին ստանար անոր մահուան բարիքը, այլ միայն հաւատացեալները: Ան կալվինականներուն հետ համամիտ էր, թէ անհատներ չէին կրնար իրենց կարողութեամբ ապաշխարել ու հաւատալ, այլ շնորհին պէտք էր ապաւինէին: Արմինիանականներ կալվինականներէն արմատապէս կը տարբերէին՝ ըսելով, թէ անհատներ իրենց ստացած շնորհը կրնային կորսնցնել:

1604-էն արմինիանականութիւնը բողոքական Հոլանտայի մէջ վիճայարոյց կը դառնար, երբ աստուածաբանութիւնն ու քաղաքականութիւնը սերտօրէն իրարու կ'առնչուէին: Արմինիանականներ կը վայելէին Հոլանտա գաւառի քաղաքական ղեկավարին եւ Հոլանտայի Միացեալ Գաւառներու ղեկավարներէն տիրական դէմքին՝ Յովհաննէս Օլտընպարտնէլէլտթցիի (1547–1619) եւ համբաւաւոր իրաւաբանին, պատմաբանին եւ «Միջազգային օրէնքի հիմնադիր» տիտղոսը կրողին՝ Հիլկօ Կրոթիոսի (1583–1645) նեցուկը: Օլտընպարտնէլէլտթցի, Կրոթիոս եւ արմինիանականներ կրօնականօրէն եւ աստուածաբանականօրէն հանդուրժողական էին, իսկ իրենց քաղաքականութեան մէջ՝ հանրապետական, եւ կ'արտօնէին, որ աշխարհիկ իշխանութիւնը իր եկեղեցական ու քաղաքական իրաւասութիւնները ի գործ դնէր: Անոնք նաեւ համաձայն կը գտնուէին, որ Սպանիոյ հետ դաշինք կնքուէր եւ հիւսիսի ու հարաւի միջեւ տեղի ունեցող հարցը լուծուէր. արդարեւ, 1609-ին կը հաստատուէր այսպէս կոչուած «Տասներկու տարիներու դաշինքը»: Ասոնց կ'ընդդիմանար Ուիլլեմ Օրանժցիին տղան՝ Մորիս Նասացին (1587–1625), որ յաջող զինուորական մըն էր եւ կը ձգտէր հարաւային գաւառները Սպանիոյ տիրապետութենէն վերագատագրել: Բազմաթիւ կալվինականներ անոր հետ կը դաշնակցէին, որովհետեւ ծայրայեղ հակակաթոլիկ էին, կառավարութեան կեդրոնաձիգ դրութիւնը կը ջատագովէին եւ հետամուտ էին Եկեղեցիի քահանայակեդրոն առաջնորդութեան: Յուլիս 1618-ին Նասացի, իր բանակին օժանդակութեամբ, Հոլանտայի գլխաւոր քաղաքներուն մէջ պետական հարուածով

արմինիանականներուն հակառակորդ քաղաքական իշխանութիւն կը հաստատուէր: Օլտրնպարտնէլտրթցի դաւաճանութեամբ կ'ամբաստանուէր եւ 13 մայիս 1619-ին կը գլխատուէր: Կրոթիոս ցկեանս բանտարկութեան կը դատապարտուէր, սակայն 1621-ին իր կնոջ հետ կը յաջողէր փախուստ տալ բանտէն:

Մինչ այդ, արմինիանականներու ազդեցութենէն ձերբազատուած ազգային ժողովը կը հրաւիրուէր Հոլանտայի Միացեալ Գաւառներու կառավարիչին կողմէ, որպէսզի այս խնդրայարոյց հարցը լուծէր: Ժողովը կը գումարուէր Տորթի մէջ, 13 նոյեմբեր 1618–9 մայիս 1619-ին: Ժողովին կը մասնակցէին Հոլանտայէն, Անգլիայէն, Սկոտլիայէն եւ Զուիցերիայէն պատգամաւորներ: «Ընդդիմադիրներ» իրենք զիրենք պաշտպանելու համար միայն ժողովի կը հրաւիրուէին եւ լիիրաւ պատգամաւոր չէին համարուէր: Ժողովը կը դատապարտէր արմինիանականութիւնը եւ 93 կալվինական կանոն կ'որդեգրէր, որոնք Պելճիքական խոստովանութեան եւ Հայտըլպըրկի քրիստոնէականին հետ Հոլանտայի Բարեկարգեալ եկեղեցիի վարդապետութեան հիմքը պիտի կազմէին: 23 ապրիլ 1619-ին կ'ընդունուէր հինգ յօդուած, որոնք կը հանդիսանային կալվինականութեան արմինիանականութիւնը դատապարտող հինգ հիմնական կէտերը. առաջին՝ բացարձակ, աննախապայման ընտրութիւնը. երկրորդ՝ միայն ընտրեալներուն շնորհուած քաւութիւնը. երրորդ՝ «բնական մարդուն» ամբողջական մեղաւորութիւնը. չորրորդ՝ շնորհին դէմ մարդուն անդիմադրելիութիւնը. հինգերորդ՝ ընտրեալներուն վերջնական յաղթանակը:

Առաւել, երբ արմինիանականներուն կ'արգիլուէր քարոզել, շատեր կը ստիպուէին երկիրէն հեռանալ: 1625-ին Մորիս Նասացիի մահէն եւ անոր եղբօր՝ արմինիանականներուն համակիր Ֆրետերիք Հենրիի (1625–1647) իշխանութեան տէր դառնալէն ետք առնուած բոլոր որոշումները կը վերածուէին մեռեալ տառի: Բազմաթիւ արմինիանականներ կը վերադառնային, սակայն իրենց հաւատքը պաշտօնական ճանաչում չէր

ստանար մինչև 1795: Հոլանտայի մէջ արմինիանականութիւնը դանդաղ աճ կ'արձանագրէր: Ան այսօր գոյութիւն ունի որպէս «ընդդիմադիրներու» եղբայրութիւն կամ «ընդդիմութեան» Բարեկարգեալ եկեղեցի: Արմինիանական բարեպաշտութիւնը կը յատկանշուի իր իմացական եւ բարոյական վեհութեամբ: Արմինիանականութիւնը աւելի ազդեցիկ պիտի դառնար Անգլիոյ մէջ եւ շնորհիւ Յովհաննէս Ուեզլիի՝ պիտի վերածուէր քրիստոնէական ջերմագոյն բարեպաշտութեան:

ԺՋ. ԳԼՈՒԽ

ԱՆԳԼԻԳԱՆՈՒԹԻՒՆԸ, ՄԱՔՐԱԿՐՕՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱԶԱՏ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՁ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐԻՑՈՒԹԻՒՆԸ ՄԿՈՎՏԻՈՅ ՄԷՁ

Անգլիոյ Եղիսաբէթ Ա. թագուհիին իշխանութիւնը կը յատկանշուէր բարոյութիւններով: Անոր յարաբերութիւնները հռոմայեցի կաթողիկոսներուն հետ գերլարուած էին: Անգլիացիներ կրօնականօրէն բաժան-բաժան էին, ներքնապէս՝ անհամաձայն եւ արտաքին ճակատի վրայ՝ թշնամական: Եղիսաբէթ միայն քաղաքական ճկունութեամբ կը ջանար իր իշխանութիւնը յաջող ընթացքի մէջ դնել: Անոր դժուարութիւնները կը բազմանային, երբ մանաւանդ Հռոմի հանդէպ ճշդած իր կեցուածքէն կ'աճէր դժգոհներուն թիւը: Աւելին՝ Հենրի Ը.-ի, Եդուարդ Զ.-ի եւ Մարիի կրօնական անտարբերութեան օրերուն կը յաջորդէր ժողովրդային մակարդակի վրայ յարաճող կրօնական կեանքը:

Եղիսաբէթ Ա. իր կրօնական կեցուածքը կը բացայայտէր: Եկեղեցիի կեանքը բողոքական բնոյթ կրող նախկին պաշտամունքով կը յատկանշուէր ընդհանրապէս: Հոգեւորականութենէն փոքր խումբ մը կը մնար նախկին աւանդութեան կապուած, եւ Եղիսաբէթ իր գործերը հեզասահօրէն կատարելու համար այդ ուղղութեամբ հարց չէր յարուցեր, որովհետեւ այդ խումբը իր քարոզախօսութեամբ եւ հոգեւորութեամբ այնքան ալ տիրական ներկայութիւն չէր ժողովուրդին մէջ: Քաղաքական դիտանկիւնէ՝ Եղիսաբէթի մօտեցումը խոհական էր, եւ Անգլիա կը խուսափէր Ֆրանսայի ու Գերմանիոյ խռոված վիճակին մատնուելէ:

Սակայն Եղիսաբէթ Ա. դէմ-յանդիման կու գար աւելի ծայրայեղական բողոքականութեան, որ Անգլիոյ ազգային եկեղեցին բաւարար բարակարգեալ չէր համարէր: Մարիի իշխանութեան շրջանին արտորուած բազմաթիւ բողոքական-

ներ ժնեի, Յիւրիխի եւ Ֆրանքֆուրթի ազդեցութեան տակ գտնուելէ ետք տուն կը վերադառնային եւ բողոքականութեան ջատագովը կը դառնային: Ասոնք կրօնական խոր ապրումներ ունէին եւ թէւ Եղիսաբէթ Հռոմի հետ իր ունեցած վէճին համար անհրաժեշտ կը նկատէր ասոնց ապաւինիլ, սակայն միւս կողմէ՝ կը հաւատար, որ եթէ ասոնց առաջարկած բոլոր փոփոխութիւններուն տեղի տար, մինչեւ հիմա պահպանուած խաղաղութիւնը կը վտանգէր:

Այս ծայրայեղականներուն փափագած փոփոխութիւնները կրօնականօրէն հասկնալի էին: Ասոնց համար Աստուածաշունչը հիմնական հեղինակութիւնն էր եւ կը գերազանցէր Եկեղեցիի այն իրաւասութիւնը, թէ ինքն էր Աստուածաշունչին պահապանն ու մեկնաբանը՝ դարաւոր Աւանդութեան յենած: Ասոնք կ'ուզէին կաթոլիկութենէն մնացած ամեն նախապաշարում թօթափել եւ օժտել իւրաքանչիւր ծուխ կարող ու հոգեւոր ապրում ունեցող հովիւով: Ասոնք մասնաւորաբար կը մերժէին հետեւեալները. առաջին՝ եկեղեցական սքեմը՝ պատճառաբանելով, թէ ան պարզամիտ ժողովուրդին մէջ այն տպաւորութիւնը կը թողուր, որ հոգեւորականները մասնաւոր իրաւասութիւններ կը վայելէին եւ բոլոր հաւատացեալներու քահանայութեան կը հակադրուէին. երկրորդ՝ սուրբ հաղորդութիւն ստանալու համար ծնդրադրելը՝ պատճառաբանելով, թէ ան նշխարին եւ գինիին մէջ Քրիստոսի ֆիզիքական ներկայութեան տպաւորութիւնը կը թողուր. երրորդ՝ սուրբ պսակի ընթացքին մատանիի գործածութիւնը՝ պատճառաբանելով, թէ ան պսակադրութիւնը եկեղեցական խորհուրդի կը վերածէր. չորրորդ՝ մկրտութեան ընթացքին խաչակնքումը՝ պատճառաբանելով, թէ ան լոկ նախապաշարում էր: Որովհետեւ ասոնք կը փափագէին Եկեղեցին մաքրել, 1560-ի սկիզբները մաքրակրօն տիտղոսով կը ճանչցուէին: 1563-ին իրենց բարեկարգութիւնը Անգլիոյ եկեղեցիի օրէնսդիր մարմինը նկատուող Գենթըրպըրիի եկեղեցականներու համագումարին կը ներկայացնէին, սակայն միայն մէկ քուէով կը կորսնցնէին:

Մինչ այդ բազմաթիւ մաքրակրօններ պաշտամունքի եւ եկեղեցական զգեստի պարզ ձեւեր կ'որդեգրէին: Օքսֆորտի Մագթադինէ գոլէճի նախագահ Լորընս Համֆրիի (1527–1590) եւ Օքսֆորտի Քրիստոս եկեղեցիի տեսուչ Թովմաս Սամփսոնի (1517–1589) գլխաւորութեամբ,– երկուքն ալ Մարիի կողմէ արքայական մաքրակրօններ,– քննարկումի կը սկսէին եկեղեցական զգեստի որդեգրումին շուրջ, որ ծանօթ է «եղիսաբէթեան զգեստի հակադարձութիւն» բնորոշումով: Գէմպրիճի համալսարանը ընդհանրապէս մաքրակրօններուն կը համակրէր: Սակայն թագուհին բարեփոխութեան դէմ էր, եւ 1566-ին Մատթէոս Փարքըր արքեպիսկոպոս «Ծանուցումներ» (տե՛ս H. Gee and W. J. Hardy, eds., *Documents Illustrative of English Church History* (London, 1896), pp. 467–475) անունով ծանօթ հաղորդագրութիւնը հրապարակելով կը հրահանգէր, որ քարոզիչներ եպիսկոպոսներէն քարոզելու նոր արտօնագիր պէտք էր առնէին, խնդրայարոյց քարոզներ տալը արգիւտած էր, սուրբ հաղորդութիւն ստանալու ատեն պէտք էր ծնրադրել եւ եկեղեցական աւանդական զգեստը պէտք էր պահել: Այս տրամադրութիւններով՝ կարգ մը մաքրակրօն հոգեւորականներ պաշտօնանկ կ'ըլլային, ներառեալ Սամփսոնը, որ նաեւ շրջան մը բանտ կը դրուէր:

Եկեղեցական զգեստի հարցը աւելի կը բարդանար, երբ բարեկարգեալներ կը հարցադրէին, թէ Աստուածաշունչը Եկեղեցիին մէջ Աստուած պաշտելու նախապայման չէր դնէր յատուկ զգեստի պահանջը: Առաւել, երբ կարգ մը մաքրակրօններ Նոր կտակարանի ընթերցումի ընթացքին Ժնէւեան բարեկարգութեան դիտանկիւնէն կը մօտենային այս հարցին, Եկեղեցիի առաջնորդութեան անգլիական տարբերակը անընդունելի կը համարէին, երբ կը կարդային, թէ Եկեղեցիի կարգահապութեան երէցներ կը հսկէին, հոգեւոր պատասխանատուներ հաւատացեալներուն համամտութեամբ պաշտօնի կը կոչուէին եւ, ինչպէս Կալվին կը հաստատէր, թէ երբ Աստուածաշունչը եպիսկոպոսներ, երէցներ եւ հովիւներ բառերը կը գործածէր, զանոնք իրարու հոմանիշ կը նկատէր:

Եկեղեցիի հոգևոր առաջնորդութեան մէջ պաշտօն վարողներու հաւասարութեան այս սկզբունքէն մեկնած՝ սկովտիական երիցականութիւնը կը դառնար եպիսկոպոսներու կողմէ Եկեղեցիի առաջնորդութեան գլխաւոր ընդդիմադիրը:

Մաքրակրօններուն մէջ այս շարժումին ղեկավարը կ'ըլլար Թովմաս Գարթվրայթ (1535?–1603): Որպէս Գեմպրիճի համալսարանի Մարգարիտ ամպիոնի աստուածաբանութեան դասախօս՝ ան կը ջատագովէր իւրաքանչիւր ծուխի մէջ երեցներու նշանակումը, հովիւներու հաւատացեալներուն կողմէ ընտրութիւնը, արքեպիսկոպոսի ու աւագ սարկաւագի պաշտօններուն ջնջումը եւ հոգևորականներու հաւատացեալներուն հետ համահաւասարութիւնը: Ծայրայեղ մաքրակրօններ այս գործնական երիցականութիւնը կ'որդեգրէին: Գարթվրայթի կը հակադրուէր մաքրակրօններու գլխաւոր հակառակորդ Յովհաննէս Ուիթկիֆթ (1530–1604), որ եպիսկոպոսութեան բուռն պաշտպանութեան կը դիմէր, միաժամանակ հաստատելով, որ թէև Աստուածաշունչը այս մասին յստակ եղանակ չէր ճշդեր, սակայն Եկեղեցին իրաւունք ունէր զայն հաստատելու: 1572-ին Ուիթկիֆթ արդէն իսկ դասախօսի պաշտօնէն զրկուած Գարթվրայթը նոյնիսկ այլ տեղ դասախօսելու իրաւունքէն զրկել կու տար: Գարթվրայթ պարտադրուած կ'ըլլար թափառական կեանք ապրելու եւ մաքրակրօն երիցականութեան տարածիչը դառնալու:

1572-ին լոնտոնցի երկու հովիւ՝ Յովհաննէս Ֆիլտ (մահացած՝ 1588-ին) եւ Թովմաս Ուիլգոքս (1549?–1608), Գարթվրայթի ջատագոված փոփոխութիւնները ժողովրդային լայն տարածում գտած *Մաստ խորհրդարանին* գրքոյկին մէջ կ'ամփոփէին: Ուիթկիֆթ կը պատասխանէր ասոր եւ իր հերթին Գարթվրայթէ պատասխան կը ստանար: Կարգ մը մաքրակրօններ Գարթվրայթէն աւելի չափաւորական էին եւ կը հաւատային, որ Եկեղեցիի սահմանադրութիւնը քիչ մը փոփոխութեան ենթարկելը բարարար էր: Անհանդուրժելի արարողութիւններու խափանումը, աղօթագիրքին վերատեսութիւնը, ծուխերու մէջ երեցներու նշանակումը եւ եպիսկոպոսներու,

որպես հաւասարներու մէջ առաջինի, իւրաքանչիւր թեմի սինոտին նախագահելը կը գոհացնէր զիրենք: Սակայն երիցական ոգին կ'աճէր, եւ 1570-ականներուն Եկեղեցին զանազան երիցական փորձերով կառավարելու ճիգեր կը կատարուէին: Պատուելիներ եւ աշխարհականներ քարոզելու համար կը համախմբուէին: Կարգ մը տեղեր, առաջին անգամ ըլլալով 1572-ին Լոնտոնի մօտ՝ Վոնտսվըրթի մէջ, եկեղեցիներ կամաւոր ծխական հովուութիւն կը կազմէին: Երիցականութիւնը աւելի կը զարգանար, երբ 1574-ին Գեմպրիճի համալսարանի նախկին գիտնականներէն Ուոլթըր Թրաւըրս (1548?-1635) լոյս կ'ընծայէր իր *Եկեղեցական կանոնակարգի ամբողջական եւ սպարզ բացայայտում* հատորը: Երիցականութիւնը կը քաջալերւէր 1576-ին Գենթըրպըրիի Փարքըր արքեպիսկոպոսին յաջորդած Էսմունտ Կրիստալի կողմէ (1519?-1583), որ կը համակրէր մաքրակրօններուն եւ հովիւներուն ու աշխարհականներուն քարոզելու եւ զրուցելու համախմբումները չարգիլելուն համար պաշտօնանկ կ'ըլլար թագուհիին կողմէ:

Գարթվրայթ եւ անոր հետեւորդները դէմ էին Անգլիոյ եկեղեցիէն անջատումին: Անոնք կը ջանային մաքրակրօնութիւն մտցնել Եկեղեցիին մէջ եւ համբերել մինչեւ անոր առաջնորդութեան բարեփոխութիւնը: Այս սպասումը յուսաբեր կը դառնար, երբ սերունդի մը կեանքին ընթացքին Եկեղեցիի սահմանադրութիւնն ու պաշտամունքը չորս անգամ արդէն իսկ վերատեսնուած էր եւ շատ հաւանաբար հինգերորդ անգամուն կրնար աւելի մաքրակրօն դառնալ:

Սակայն այլ մաքրակրօններ անհամբեր էին եւ անմիջապէս աստուածաշնչական ենթահող ունեցող Եկեղեցի կը փափագէին ունենալ: Ասոնք անջատողականներ էին եւ ժողովական հովուութիւնը կը ջատագովէին: 19 յունիս 1567-ին Լոնտոնի մէջ քաղաքական իշխանութիւններ պսակի համար խմբուած այսպիսի անջատողական ժողովականներ կը ձերբակալէին եւ կը բանտարկէին: Ասոնք կը հաւատային, որ այլեւս Անգլիոյ եկեղեցիին մէջ անկաշկանդօրէն չէին կրնար Աստուծոյ խօսքին հետեւիլ եւ իրենց առաջնորդները կ'ընտ-

րէին՝ գլխաւորուած Ռիչըրտ Տիթօզի կողմէ: Սկզբնական օրերուն այս անջատողականները ժամանակաւոր բնոյթ ունէին:

Անգլիոյ մէջ անջատողականներու տեսակէտներուն առաջին ամենաջերմ պաշտպանը կը հանդիսանար Գեմպրիճի համալսարանին մէջ Գարթվրայթի աշակերտած եւ 1572-ին համալսարանաւարտ Ռոպերթ Պրատուն (1550?-1633): Նախապէս ծայրայեղ մաքրակրօն հովիւ մըն էր ան, որ շուրջ 1580-ին անջատողական կեցուածք կ'որդեգրէր եւ իր ընկերոջ Ռոպերթ Հարիսընի հետ 1581-ին անկախ համայնք մը կը հաստատէր Նորուիճի մէջ: Իր քարոզութիւններուն պատճառով ան յաճախ կը բանտարկուէր: Ինք եւ իր հաստատած համայնքը ապահովութեան համար կ'ապաստանէին Հոլանտայի Միտըլպըրկ քաղաքը, ուր 1582-ին Պրատուն հատոր մը լոյս կ'ընծայէր եւ նախ կը քննադատէր Անգլիոյ եկեղեցիին մէջ մնալու տրամադրութիւն ունեցող մաքրակրօնները եւ ապա ճշմարիտ Եկեղեցին կը սահմանէր որպէս ազատ կամքով իրարու քով եկած հաւատացեալներու խումբը: Ըստ Պրատունի՝ Եկեղեցին տեղական այն մարմինն էր, որ Քրիստոսի հաւատացողներէ կը բաղկանար եւ կամաւոր ուխտով Քրիստոսի եւ իրարու կը միանար: Այսպիսի Եկեղեցիի մը գլուխը Քրիստոս էր, որ իր սահմանած պաշտօնեաներով եւ օրէնքներով կը կառավարէր զայն: Իւրաքանչիւր Եկեղեցի ինքնավար էր եւ կ'ընտրէր իր հովիւը, ուսուցիչը, աւագները, սարկաւագներն ու այրիները՝ Նոր կտակարանին համաձայն, եւ իւրաքանչիւր անդամ ամբողջ մարմինին բարօրութեան հանդէպ պարտաւորութիւն ունէր: Ո՛չ մէկ Եկեղեցի միւս Եկեղեցիին վրայ հեղինակութիւն ունէր, այլ՝ իւրաքանչիւրը միւսին նեցուկ կը կանգնէր եղբայրական օժանդակութեամբ:

Անգլիոյ մէջ այսպիսի Եկեղեցիի սահմանումը կը դրսեւորուէր մասնաւորաբար մաքրակրօնութեամբ: Պրատուն չէր կրնար երկար ժամանակ Հոլանտա մնալ: Ան կարճ պահ մը Սկոտլիա կ'անցնէր եւ ապա Անգլիա կը վերադառնար, ուր հոկտեմբեր 1585-էն Անգլիոյ եկեղեցիին հետ հաշտ ընթացք

կ'որդեգրեր եւ իր կեանքի մնացած տարիները (1591–1633) կ'անցընէր Անգլիոյ եկեղեցիին հովուութեան մէջ:

Մինչ այդ Կրիստալի արքեպիսկոպոսութեան օրերուն Անգլիոյ եկեղեցիի ծառայութեան մէջ գտնուող բազմաթիւ մաքրակրօն հովիւներ կը մերժէին պաշտօնական աղօթագիրքին ամբողջական կամ մասնակի գործածութիւնը: Անոնք շեշտը կը դնէին սուրբ կարգապահութեան վրայ եւ Ուոլթըր Թրաւըրս այս մասին մաքրակրօնութեան ուղեցոյցի երկրորդ հատորը կը հրատարակէր: 1583–1604-ին Ուիթկիֆթ՝ որպէս Գենթըրպըրիի արքեպիսկոպոս, կը յաջորդէր Կրիստալի: Ան աստուածաբանութեամբ կալվինական էր եւ կարգապահութեամբ՝ մաքրակրօններուն դէմ եղող թագուհիին համակիր: Ան անմիջապէս կը հրահանգէր պաշտօնական աղօթագիրքին ու եկեղեցական զգեստին անվերապահ գործածութիւնը եւ կ'արգիլէր ոչ-պաշտօնական կրօնական խմբակներու հաւաքները: Մաքրակրօններ նեղ կացութեան կը մատնուէին: Ծայր կ'առնէր եպիսկոպոսները պախարակող երգիծական գրականութիւն մը, որ թէեւ մաքրակրօններու կողմէ քաջալերուած էր, սակայն միաժամանակ կը դատապարտուէր բազմաթիւ ուրիշ մաքրակրօններէ: Այս գրականութեան կասկածելի հեղինակ կը համարուէին Յոբ Թրոքմորթըն (1545–1601) կամ Յովհաննէս Փենրի (1559–1593):

Մաքրակրօններուն մէջ տիրող այն համոզումը, թէ իրենց շարժումը աստուածային նկարագիր ունէր, վերաբերումի փոփոխութիւն կը յառաջացնէր իրենց ընդդիմադիր անգլիկան դեկավարներուն մէջ: 1589-ին Լոնտոնի Խաչ Պօղոսի եկեղեցիին մէջ տուած իր քարոզով՝ Գենթըրպըրիի արքեպիսկոպոս Ուիթկիֆթի յաջորդած Ռիչըրտ Պանգրոֆթ (1544–1610) ո՛չ միայն կը դատապարտէր մաքրակրօնութիւնը, այլեւ եպիսկոպոսութիւնը աստուածային իրաւասութիւն կը հռչակէր: Ատրիան Մարալիա աստուածաբանը (1531–1613) նոյն տեսակէտը կը յայտնէր մէկ տարի ետք: 1593-ին նոյն տեսակէտը կը հաստատէր նաեւ Ուինչեսթըրի եպիսկոպոս Թովմաս Պիլսըն (1547–1616) իր *Քրիստոսի եկեղեցիի շարունակական դեկավա-*

րութիւնը գիրքին մէջ: 1594-ին եւ 1597-ին նուազ ծայրայեղական կ'ըլլար Ռիչըրտ Հուքըր (1553?–1600) իր *Եկեղեցական վարչաձեւի գործադրութիւնը* հատորին մէջ, ուր կ'ըսէր, որ թէւ Աստուածաշունչը յստակօրէն կը հիմնաւորէր եպիսկոպոսութիւնը, սակայն անոր մեկնութիւնը մաքրակրօններ ծայրայեղութեան հասցուցած էին: Այս տեսակէտները կը նպաստէին Բարձր եկեղեցիի հիմնադրութեան:

Մաքրակրօններու եւ անջատողականներու հալածանքին կը նպաստէր գերագոյն ատեանը, որ Հենրի Ը.-ի օրերէն եկեղեցական հարցերու տնօրինումով կը զբաղէր եւ 1592-ին ուժեղ հեղինակութիւն դառնալով՝ կրնար որեւէ մէկը դատապարտել ու բանտարկել Անգլիոյ ամբողջ տարածքին:

1587-ին իրաւաբան Հենրի Պարօ (1550?–1593) եւ հոգեւորական Յովհաննէս Կրինվուտ (մահացած՝ 1593-ին) Լոնտոնի մէջ անջատողական հանդիպումներ կազմակերպած ըլլալու յանցանքով կը ձերբակալուէին: Անոնք բանտէն Հոլանտայի մէջ հրատարակուած ձեռագիր գրութիւններ կը դրկէին, որոնց մէջ անգլիկաններն ու մաքրակրօնները կը նսեմացուէին եւ Պրատունէն աւելի ծայրայեղ անջատողականութիւնը կը քաջալերուէր: Կարգ մը անձեր, ներառեալ մաքրակրօն քահանայ Ֆրանսիս Ճանսըն (1562–1618), կը համակրէին այս նոր շարժումին: 1592-ին Լոնտոնի մէջ առանձին համայնք մը կը կազմուէր եւ Ճանսըն՝ անոր հովիւը եւ Կրինվուտ ուսուցիչը կը դառնային: 6 ապրիլ 1593-ին Պարօ եւ Կրինվուտ կախաղանի մահուան կը դատապարտուէին, որովհետեւ կը մերժէին թագուհիին եկեղեցական հարցեր տնօրինելու գերագահութիւնը: Նոյն տարին խորհրդարանը նոր օրէնքով աքսորուելու պատիժ կը սահմանէր բոլոր անոնց դէմ, որոնք թագուհիին եկեղեցական հարցեր լուծելու հեղինակութիւնը չէին ընդունէր, կը մերժէին եկեղեցի յաճախել եւ կամ անօրինական պաշտամունքի կը մասնակցէին: Լոնտոնի համայնքը կը պարտաւորուէր ապաստանիլ Ամսթերտամ, ուր բանտէն ազատուած Ճանսըն կը շարունակէր իր հովութիւնը եւ Հենրի Այնսվըրթ (1571–1623) կը ստանձնէր ուսուցչութիւնը:

Եղիսաբեթ Ա.-ի իշխանութեան վերջին տարիներուն տիրական կալվինականութիւնը եւս հակադարձութեան նշաններ ցոյց կու տար: 1595-ին հակամարտութիւնը ծայր կ'առնէր Գեմպրիճի մէջ, ուր Պետրոս Պարօ (1534–1599) կը ջատագովէր Արմինիոսի ազատական վարդապետութիւնները: Վիճարկումներու հետեւանքով թէեւ կալվինական «Լամպլէթի յօդուածներ»-ը կը հրապարակուէին եւ կալվինականութեան քննադատութիւնը կը սկսէր, սակայն առաւելաբար անկիլիզաններն էին, որ մաքրակրօնութեան վրայ պիտի յարձակէին:

24 մարտ 1603-ին կ'աւարտէր Եղիսաբեթ Ա.-ի երկարամեայ իշխանութիւնը: Անոր կը յաջորդէր սկոտիացիներու Մարի թագուհիին տղան՝ Յակոբոս Ա. (1603–1625), որ 1567-էն արդէն որպէս Յակոբոս Զ. Սկոտիոյ թագաւորն էր: Բոլոր կրօնական հոսանքները մեծ յոյսերով կ'ողջունէին նոր թագաւորը. կաթոլիկներ անոր արենակցական կապին կ'ապաւինէին, մաքրակրօններ՝ դաստիարակութեան եւ անգլիզաններ՝ աստուածային իրաւունքի պաշտպանութեան ու երիցական իշխանութեան ատելութեան: Միայն անգլիզաններուն յոյսերը կը պսակուէին, երբ ան կը յայտարարէր, որ «եթէ եպիսկոպոս չկայ, թագաւոր ալ չկայ»: Յարաբերաբար Եղիսաբեթի՝ Յակոբոս բոլոր տուեալները ունէր ժողովուրդին հիացումին արժանացող թագաւոր մը դառնալու:

Դէպի Լոնտոն ճամբուն վրայ, ապրիլ 1603-ին, աւելի քան 1000 մաքրակրօն տրամաբանական ինդրագիր մը կը ներկայացնէր Յակոբոս Ա.-ի, որուն պատճառով ան յունուար 1604-ին իր ներկայութեան ժողովի կը հրաւիրէր եպիսկոպոսներն ու մաքրակրօնները: Անգլիզաններուն բանբերն էր Լոնտոնի եպիսկոպոս դարձած Պանգրոֆթ: Մաքրակրօններուն խընդրանքները կը մերժուէին եւ միայն Աստուածաշունչի նոր թարգմանութեան արտօնութիւն կը տրուէր անոնց: 1611-ին կատարուած այս թարգմանութիւնը ծանօթ է որպէս Վաւերացեալ կամ Յակոբոս թագաւորի տարբերակ: Անգլիզաններու յաղթանակը աւելի կ'ամրանար, երբ 1604-ին թագաւորական վաւերացում կը ստանային եւ Եկեղեցիի կանոնակարգին մէջ

կը ներառուէին շարք մը կանոններ, որոնք մաքրակրօններուն կողմէ մերժուած էին: Այս բոլորին ետին կը գտնուէր Պանգրոֆթ, որ որպէս Գենթըրպըրիի արքեպիսկոպոս (1604–1610) Ուիթկիֆթի կը յաջորդէր: Անգլիկաններ նաեւ կը զօրանային հոգեւորականներու դաստիարակութեան հանդէպ աւելի բժախնդի դառնալով: Զարգացած հոգեւորականներուն մէջ նշանաւոր կը դառնար Լանսետթ Անտրուզը (1555–1626), որ 1605-ին Չիչեսթըրի եպիսկոպոսը կ'ըլլար:

Գեորգ Ապըթ (1611–1633)՝ որպէս Գենթըրպըրիի արքեպիսկոպոս, կը յաջորդէր Պանգրոֆթի: Ան կը յատկանշուէր որպէս կալվինականութեան ուժեղ համակիր եւ հոգեւորականութեան կողմէ անբաղձալի, որուն պաշտօնավարութիւնը ձախող աւարտ կ'ունենար, երբ անգլիկաններ կը տկարանային եւ անջատողականներ ու մաքրակրօններ զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրէին:

Յակոբոս Ա.-ի թագաւորութեան առաջին տարիներուն, անգլիկան նախկին հոգեւորական Յովհաննէս Սմայթ (1570?–1612) անջատողական սկզբունքներ կ'որդեգրէր եւ Կէյնզպորոյի համայնքին հովիւը կը դառնար: Անջատողական երկրորդ համայնք մըն ալ կը կազմուէր Ուիլերմ Պրուսթըրի (1560?–1644) Սկրուպիի տունին մէջ: Պրուսթըրիի համայնքին երիտասարդ անդամներէն կը դառնար Ուիլերմ Պրատֆորտ (1590–1657), իսկ անոր ղեկավարութիւնը կը ստանձնէր ուսեալ եւ քաղցրաբարոյ Յովհաննէս Ռապինսըն (1575?–1625), որ Սմայթի նման անգլիկան նախկին հոգեւորական եւ անջատողականութեան ջերմ պաշտպան էր: Երկու համայնքներն ալ, խոյս տալու համար ընդդիմադիրներէն, կ'ապաստանէին Հոլանտա. առաջինը 1608-ին Ամսթերտամ կ'երթար եւ երկրորդը՝ 1609-ին Լէյտըն:

Ամսթերտամի մէջ Սմայթ բախում կ'ունենար Ֆրանսիս Ճանսընի հետ եւ ըստ իր նոր կտակարանեան ուսումին՝ կը համոզուէր, թէ Եկեղեցիի անդամակցութեան առաքելական դրութիւնը մկրտութեամբ էր, որուն նախապայմանն էր զոջումը Աստուծոյ հանդէպ եւ հաւատքը Քրիստոսի վրայ: 1608-ին կամ 1609-ին ան նախ ինքզինք կը մկրտէր ջուրի հեղումով ու ապա՝

իր հետեւորդները, եւ հոլանտական հողի վրայ կը հիմնէր Անգլիոյ առաջին Մկրտչական եկեղեցին: Մմայթ նաեւ արմին-իանական կը դառնար հաւատալով, որ Քրիստոս միայն ընտրեալներուն համար չմեռաւ, այլ ամբողջ մարդկութեան: 1612-ին ան կը մահանար, եւ իր հետեւորդները վերջապէս կը միանային հոլանտացի մենոնայթներու համայնքին: Սակայն իր հետեւորդներէն խմբակ մը, Թովմաս Հելվիսի (1550?–1616?) եւ Յովհաննէս Մուրթընի (մահացած՝ 1625-ին?) գլխաւորութեամբ, կառչած կը մնար անգլիական Մկրտչական եկեղեցիին: 1611-ին կամ 1612-ին այս խմբակը Անգլիա կը վերադառնար եւ կը հանդիսանար Անգլիոյ առաջին Մկրտչական եկեղեցին, որ արմինիանական թեքում ունէր եւ որպէս ընդհանուր մկրտչականներ կը ճանչցուէր ու կրօնական հանդուրժողութեան ախոյեան կը դառնար:

Նոյն տարիներուն մաքրակրօն նոր ուղղութիւն մը կը խմորուէր Լէյտընի Ռապինսընի համայնքին անդամ Հենրի Ճագոպի (1563–1624), Հոլանտա արքայութեան համբաւեալ աստուածաբան Ուիլլեմ Ամսի (1576–1633) եւ նշանաւոր մաքրակրօն գրագետ Ուիլլեմ Պրատշոյի (1571–1618) կողմէ: Այս երեք անձերը Եկեղեցիին համայնական ղեկավարութեան ջատագովները կը դառնային: Անոնք կը խուսափէին Անգլիոյ եկեղեցիէն անջատուելէ եւ Անգլիոյ տարածքին համայնական ղեկավարութեան համակիր եկեղեցիներ կը հիմնէին: 1616-ին Ճագոպ Սաութօլըրգի եկեղեցիի հիմնադիրը կը դառնար:

1630-ականներուն Ճագոպի եկեղեցիէն խմբակ մը կը համոզուէր, որ հաւատացեալներ միայն պէտք էր մկրտուէին եւ կը հիմնէին առանձին Եկեղեցի, որ կը դառնար Անգլիոյ Կալվինական մկրտչականներու եկեղեցին, որուն հետեւորդները կը հաւատային, թէ միայն ընտրեալներ Աստուծոյ քաւութեան կ'արժանանային: Շուրջ 1641-ին այս Եկեղեցին կ'որդեգրէր ընկղմումով մկրտութիւնը, որ կը սկսէր կիրարկուիլ Անգլիոյ բոլոր մկրտչականներուն կողմէ:

Լէյտընի համայնքէն խմբակ մը Ամերիկա կ'երթար, մինչ Ռապինսըն մեծամասնութեան գլուխը կը մնար: Երկարատեւ

բանակցութիւններէ ետք՝ 1620-ին, «ուխտաւոր հայրեր», իրենց հոգեւոր առաջնորդ Պրուսթըրի գլխաւորութեամբ եւ Մէյֆրլաուըր նաւով, Ատլանտեան ովկիանոսը կը կտրէին: 21 դեկտեմբերին անոնք կը հիմնադրէին Փլիմութի համայնքը, որուն կառավարիչը կը դառնար խոհական եւ անձնագոհ Պրատֆորտ: Այսպէսով ոչ-անջատողականներ եւ անջատողականներ գրեթէ միաժամանակ Եկեղեցիի համայնական ղեկավարութեան սերմերը կը ցանէին Ամերիկայի Նիու Անգլիոյ շրջանին մէջ:

Մինչ այդ Ապրթ արքեպիսկոպոսի թոյլ ղեկավարութենէն օգտուելով՝ մաքրակրօնութիւնը կը շարունակէր իր դաստիարակչական ծաւալողական աշխատանքը արգիլեալ ծովսերուն մէջ՝ հովանաւորելով յետմիջօրէի քարոզչական ծրագրեր: Մաքրակրօններ կիրակի օրուան պահպանումին մէջ միշտ ալ խիստ եղած էին, եւ այս մէկը առաւել լուսաբանելու համար Նիկողայոս Պաունտէ (մահացած՝ 1613-ին) 1595-ին կը հրատարակէր իր *Շարքաթ օրուան վարդապետութիւնը* գիրքը: Մաքրակրօններ, ինչպէս նաեւ Ապրթ, ուժգնօրէն կ'ընդդիմանային Յակոբոս Ա.-ի 1618-ի այն տնօրինութեան, որ իր «Մարգանքներու գիրք»-ը հրամանագիրով ժողովրդային խաղերն ու պարերը կիրակի օր կատարել կը հրահանգէր: Մաքրակրօններուն համար այս մէկը Աստուծոյ կամքը չյարգելու արքայական հրահանգի համազօր էր: Առաւել, քաղաքական գործօններ եւս կը բարդուէին, երբ Յակոբոս խորհրդարանին որոշումները նկատի չէր առնէր, Գերմանիոյ բողոքականները չէր կրնար զսպել Երեսուն տարիներու պատերազմի սկիզբը եւ իր զաւակը չէր կրնար սպանացի իշխանուհիի մը հետ պսակել: Այս բոլորը պատճառ կը դառնային մաքրակրօններու հանդէպ համակրանքի աճումին, որովհետեւ անգլիգաններ անվերապահօրէն թագաւորին կողմնակից էին: 1625-ին՝ իր իշխանութեան մայրամուտին, Յակոբոսի վիճակը մտահոգիչ կը դառնար:

Թագաւորութեան հիւսիսային տարածքներուն մէջ եւս Յակոբոս Ա. սխալ քայլեր կ'առնէր: Յակոբոսի մանկութեան

օրերուն՝ 1572-ին, Սկովտիոյ Մորթըն կուսակալը անուանական եպիսկոպոսներ նշանակելով Եկեղեցիի հողերը սեփականացուցած էր: Այս եպիսկոպոսները հեղինակութիւն չունէին: 1581-ին Անդրեաս Մելվիլի գլխաւորութեամբ համաժողովը քահանաներուն կը շնորհէր եկեղեցական ատեանի ամբողջական հեղինակութիւնը եւ կը վաւերացնէր «Կարգապահութեան երկրորդ գիրքը»: Հակառակ Յակոբոսի ընդդիմութեան՝ 1592-ին Սկովտիոյ թագաւորն ու խորհրդարանը այս քահանայական դրութիւնը օրէնքով ընդունելի կը նկատէր:

Մակայն Յակոբոս Ա. տակաւին կը յամառէր թագաւորական հովանին վայելող եպիսկոպոսութեամբ փոխարինել այս ինքնավար քահանայական դրութիւնը: Ան անուանական եպիսկոպոսները ի նպաստ իրեն կը շահագործէր: 1597-ին ան կը վճռէր, թէ միայն ինք իրաւասութիւն ունէր համաժողով հրաւիրելու: Մելվիլ եւ այլ առաջնորդներ կ'աքսորուէին: 1610-ին Յակոբոս արդէն մեծ յառաջդիմութիւն արձանագրած էր եւ Սկովտիոյ մէջ, Անգլիոյ նման, եկեղեցական հարցերը քննելու կոչուած երկու բարձրագոյն ատեան կը հաստատէր ու իւրաքանչիւրին գլուխը արքեպիսկոպոս մը կը նշանակէր. առաւել, անգլիացի եպիսկոպոսներուն եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ առաքելական յաջորդականութեան իրաւունքը սկովտիական եպիսկոպոսներուն եւս կը փոխանցէր: 1612-ին խորհրդարանը այս եպիսկոպոսներուն թեմական ամբողջական ինքնավարութիւն կու տար: Ինը տարի ետք Յակոբոս նաեւ կը ստիպէր, որ սկովտիացիներ սուրբ հաղորդութիւնը ծնկադիր ստանային, դրոշմը եպիսկոպոսին ձեռամբ կատարուէր, եկեղեցական գլխաւոր տօները մեծ հանդիսութեամբ պաշտուէին եւ անհատական մկրտութիւնն ու սուրբ հաղորդութիւնը վերահաստատուէին: Յակոբոսի մահւան օրերուն Սկովտիոյ մէջ ծայր առած էր կրօնական դժգոհութիւնը:

Անգլիոյ ու Սկովտիոյ մէջ Յակոբոս Ա.-ի կը յաջորդէր իր որդին՝ Չարլզ Ա. (1625–1649): Ան ընտանեկան ու կրօնական կեանքի հակում ունէր եւ թագաւորներուն աստուածային

իրաւունքները կը շատագովեր: Կարճ ժամանակ ետք ան ոմանց հանդէպ ունեցած համակրանքին համար ժողովրդային վստահութենէ կը զրկուէր: Սակայն իր թագաւորութեան առաջին օրերէն ան անվերապահ զօրակցութիւնը կը վայելէր այս ժամանակաշրջանի ամենանշանաւոր մարդերէն Ուիլեմը Լաուտի (1573–1645):

Յակոբոս Ա.-ի օրերուն Լաուտ երիտասարդ անգլիկաններու ղեկավարներէն էր: Ուժեղ ընդդիմադիր ըլլալով կալվինականութեան՝ ան 1604-ին կը յայտարարէր, թէ առանց եպիսկոպոսներու ճշմարիտ Եկեղեցի գոյութիւն չունէր: 1622-ին ան կը հաստատէր, թէ Հռոմէական եկեղեցին ճշմարիտ Եկեղեցի մըն է եւ Ընդհանրական եկեղեցիի մէկ ճիւղը, որուն վաւերական մէկ մասն է Անգլիոյ եկեղեցին: Այս հաստատումով ան կը դառնար անգլո-կաթոլիկ աւանդութեան ռահվիրաներէն մին, թէեւ իր ժամանակակից մաքրակրօններն ու կաթոլիկները զինք կաթոլիկ կը համարէին: Երկու առիթներով կարդինալ դառնալու հրաւեր կը ստանար Հռոմէն: Ան եկեղեցական արարողութիւններու, սքեմի եւ պաշտամունքի միաձեւութեան պաշտպան էր: Նաեւ ան գործունէայ էր, սակայն իր խստաբարբառ լեզուին պատճառով շահած էր բազմաթիւ թշնամիներ: Մաքրակրօններ կատարեալ հակառակորդ մը կը նկատէին զինք: 1628-ին Չարլզ Ա. մաքրակրօն ուժեղ ներկայութիւն ունեցող Լոնտոնի թեմին եպիսկոպոս կը նշանակէր Լաուտը: 1633-ին ան կը դառնար Գենթըրպըրիի արքեպիսկոպոս: 1628-ին, երբ Պագինկըմի դուքսը կը սպանուէր, Լաուտ նաեւ Չարլզի քաղաքական խորհրդականը կ'ըլլար:

Խորհրդարանին ողնասիւնը հանդիսացող ազնուականութիւնը ուժեղ կալվինական էր եւ տուրքերու բարձրացումը միմիայն խորհրդարանի բովէն կ'ուզէր անցընել: Չարլզ Ա. ազնուականութեան համակրանքէն կը զրկուէր, երբ անսալով Լուստի խորհուրդին՝ Եկեղեցիին մէջ յաւելեալ իրաւասութիւններ կու տար արմինիանականներուն: Կալվինականները աւելի լռեցնելու հեռանկարով՝ 1628-ին «39 յօդուածներ»-ուն կ'աւելցնէր նախաբան մը, ըստ որուն՝ «ո՛չ ոք իրաւունք ունէր որեւէ

յօղուած իր կամքին համաձայն գործադրելու, այլ պարտեր զայն տառացիօրէն գործադրել»: Խորհրդարանը կ'ընդդիմանար Չարլզին: Ան աւելի անդին անցնելով՝ տուրքերու վճարումը պարտադիր կը դարձնէր եւ չվճարողները կը բանտարկէր: Արքայական հովիւներէն Ռոճըր Մէնուարինկ (1590–1653) կը վճռէր, թէ որովհետեւ թագաւորը որպէս Աստուծայ ներկայացուցիչը որոշումներ կ'առնէր, անոնք, որոնք տուրքերը չէին վճարէր, յաւիտենական դատապարտութեան պիտի ենթարկուէին: Խորհրդարանը Մէնուարինկը տուգանքի եւ բանտարկութեան կը դատապարտէր, սակայն Չարլզ ո՛չ միայն զայն կը պաշտպանէր, այլեւ եկեղեցական պաշտօններու մէջ կը բարձրացնէր եւ վերջապէս անոր եպիսկոպոսութիւն կը շնորհէր: Առանց վաւերական վճիռի՝ բանտարկութեան, տուրքերու եւ կրօնական հարցերու մէջ Չարլզի առած քայլերը թագաւորին եւ խորհրդարանին յարաբերութիւնները կը խզէին: 1629-ին Չարլզ կը լուծէր խորհրդարանը եւ մինչեւ 1640 խորհրդարանը ի նիստ չէր հրաւիրուէր: Դժբախտաբար անգլիկաններ թագաւորին արարքներուն ամբողջական հաւանութիւն կու տային:

Թագաւորին յենած՝ Լաուտ երկաթէ բազուկով խիստ միջոցներու կը դիմէր: Ան ազատ դասախօսութիւններն ու քարոզախօսութիւնները կը խափանէր, մաքրակրօն քարոզիչները կ'ըմբերանէր եւ «Մարգանքներու գիրք»-ը կը վերախրմբագրէր: Բազմաթիւ մաքրակրօններ կրօնական ու քաղաքական կեանքի բարելաւումի յուսախաբութիւն ապրելով՝ Ամերիկա կը գաղթէին: Անոնք պարզապէս ազատութիւն վայելելու համար Ամերիկա չէին երթար, այլ հոն իրենց հաւատացած աստուածաշնչական ուսուցումները քարոզելու: 1628-ին անոնք Մեսէչուսէց նահանգը կը գաղթէին, ուր 1629-ին քարոզելու արքայական արտօնագիր կը ստանային եւ Սալէմի մէջ եկեղեցի մը կը հիմնէին: 1630-ին կ'աճէր թիւը այն գաղթականներուն, որոնք Յովհաննէս Ուինթրօփի (1588–1649) գլխաւորութեամբ նոր երկիր կը ժամանէին: Շուտով եկեղեցիները կը բազմանային եւ իբրեւ առաջնորդ նշանաւոր կը դառնային

պոսթընցի Յովհաննես Գաթըն (1584–1652) եւ տորչեսթըրցի Ռիչըրտ Մաթեր (1596–1669): Գենեթիզըթի համայնքը կը կազմուէր 1636-ին, Հարթֆըրտի մէջ գլխաւոր պատուելի ունենալով Թովմաս Հուզըրը (1586–1647) եւ 1638-ին Նիու Հէյվընի մէջ՝ Յովհաննես Տաւընփորթը (1597–1670): Այս բոլոր ղեկավար դէմքերը անգլիական թեքում ունէին եւ անջատողական միտումներէ զերծ էին. սակայն որպէս ջերմ մաքրակրօններ Աստուածաշունչը Եկեղեցիի կազմակերպութեան միակ օրէնքը կը դաւանէին եւ կը հաւատային, թէ ան համայնական եկեղեցական կեանք կը յանձնարարէր: Ասոնք որպէս առանձին Եկեղեցի Նիու Անգլիոյ մէջ կը յաջողէին համայնական եկեղեցական դրութիւնը օրէնքով գրանցել. բան մը, որ իրենց հաւատակիցները չէին յաջողեր Անգլիոյ մէջ իրագործել: Մինչեւ 1640 գոնէ 20.000 մաքրակրօն Ատլանտեան ովկիանոսը անցնելով Ամերիկա կը հաստատուէր:

Առանց խորհրդարանի Չարլզ Ա. Անգլիան բարգաւաճութեան կ'առաջնորդէր, սակայն ծանր տուրքերն ու պարտադրեալ կրօնական միաձեւութիւնը անհանդարտ վիճակի մէջ կը պահէին դժգոհ զանգուածները: Փոթորիկը Սկոտիայէն կը սկսէր: Հոն Յակոբոս Ա. յաղթահարած էր երիցականութիւնը՝ եկեղեցապատկան հողեր բաշխելով ազնուականութեան: Իր իշխանութեան սկիզբը Չարլզ այս հողերը Սկոտիոյ եկեղեցիին վերադարձնելու հրաման կ'արձակէր, սակայն բոլորը չէին գործադրեր զայն եւ Սկոտիան աւելի միացեալ ընդդիմադիր կեցուածք կ'որդեգրէր:

Հակառակ իր մտցուցած բազմաթիւ փոփոխութիւններուն՝ Յակոբոս Ա. չէր համարձակած պաշտամունքի գլխաւոր երեսներուն դպչիլ: Սակայն Լաուտի պնդումով՝ 1637-ին Չարլզ Ա. Անգլիոյ եկեղեցիի արարողակարգը պարտադիր կը դարձնէր բոլորին: 23 յուլիսին Էտինսպըրկի մէջ ապստամբութիւն կը ծագէր: Ամբողջ Սկոտիան ոտքի կ'ելլէր: Փետրուար 1638-ին ճշմարիտ կրօնքի պաշտպանութեան ազգային ուխտը կը ստորագրուէր: Դեկտեմբերին ազգային համաժողովը եպիսկոպոսները պաշտօնանկ կ'ընէր եւ կը մերժէր Յակոբոսի ու

Չարլզի հաստատած եկեղեցական կառույցը: Չարլզ բանակով կը փորձէր զսպել այս ըմբոստութիւնը: 1639-ին թէւ սկովտիացիներուն հետ դաշինք կը կնքուէր, սակայն Չարլզ անպայման կ'ուզէր զանոնք իրեն հպատակեցնել: Ընթացող պատերազմի ծախսերը փակելու համար ան ապրիլ 1640-ին Անգլիոյ խորհրդարանը ժողովի կը հրաւիրէր, երբ սակայն պատգամաւորներ քաղաքական եւ կրօնական մարզերու մէջ արձանագրուած բացթողումները կը նշէին, ան անմիջապէս խորհրդարանը կը լուծէր: Պատերազմը կը շարունակուէր եւ սկովտիացիներ Անգլիա կը մտնէին: Չարլզ տնտեսական աւելի ծանր վիճակի կը մատնուէր եւ նոյեմբեր 1640-ին ստիպուած կ'ըլլար Անգլիոյ խորհրդարանը դարձեալ ի նիստ հրաւիրելու: Կը պարզուէր, թէ մաքրակրօն երիցականութեան կողմնակիցները մեծամասնութիւն էին խորհրդարանին մէջ: Լաուտ կը բանտարկուէր, եւ յուլիս 1641-ին բարձրագոյն աստեանը կը կազմալուծուէր: Յունուար 1642-ին Չարլզ Ա. իր դիրքը վերահաստատելու ձախող փորձ մը եւս կը կատարէր, երբ հինգ պատգամաւոր ձերբակալելու հրաման կու տար, եւ քաղաքացիական պատերազմը անխուսափելի կը դառնար: Հիւսիսն ու արեւմուտքը թագաւորին հետ էին, իսկ հարան ու արեւելքը՝ խորհրդարանին:

1643-ին խորհրդարանը եպիսկոպոսութիւնը կը լուծէր եւ 121 հոգեւորականներէ ու 30 աշխարհականներէ բաղկացած ժողով կը հրաւիրէր 1 յուլիս 1643-ին Ուէսթմինըսթըրի մէջ՝ Եկեղեցիի Հաւատքի հանգանակն ու կառավարութիւնը բանաձեւելու համար: Այս ժողովականներուն մեծամասնութիւնը կը բաղկանար երիցական մաքրակրօններէ: Խորհրդարանը նաեւ կ'անդրադառնար պատերազմին հասցուցած վնասներուն եւ Անգլիոյ, Սկովտիոյ ու Իրլանտայի մէջ կարելի եղած չափով կրօնական միօրինակութիւն մտցնելու համար կը փորձէր սկովտիացիները սիրաշահիլ եւ սկովտիացի ազդեցիկ անձեր, առանց քուէարկելու իրաւունք ունենալու, Ուէսթմինըսթըրի ժողովին անդամ կը դարձնէր: 1644-ին Ուէսթմինըսթըրի ժողովը պաշտամունքի եւ Եկեղեցիի երիցական դրութեամբ կա-

ռավարումի ուղեգիծը կը ներկայացնէր խորհրդարանին: Յունւար 1645-ին խորհրդարանը կը դադրեցնէր Անգլիոյ Եկեղեցիի աղօթագիրքին գործածութիւնը եւ զայն կը փոխարինէր այս նոր ուղեգիծով, որ խորքին մէջ Երիցական եւ Ժողովական Եկեղեցիներուն մէջ արդէն իսկ երկար ժամանակէ ի վեր կը գործածուէր: Վերջապէս 1646-ին եւ 1647-ին խորհրդարանը Եկեղեցիի երիցական կառավարումի դրութիւնը կը հրահանգէր: Յունուար 1645-ին Լաուտ յատուկ հրամանագիրով մահւան կը դատապարտուէր: 1646-ի աւարտին Ուէսթմինըսթըրի ժողովը խորհրդարանին կը յղէր իր համբաւեալ «Խոստովանութիւն»-ը (տե՛ս J. H. Leith, ed., *Creeds of the Churches: A Reader in Christian Doctrine from the Bible to the Present* (Garden City, N.Y., 1963), pp. 192–229): 27 օգոստոս 1647-ին Սկոտիոյ համաժողովին կողմէ ընդունուած այս «Խոստովանութիւն»-ը սկոտիական եւ ամերիկեան երիցականութեան հիմնական խարիսխը կը հանդիսանայ: Իսկ Անգլիոյ խորհրդարանը զայն կ'ընդունէր յունիս 1648-ին՝ անոր մէջ կարգ մը բարեփոխումներ կատարելէ ետք: 1647-ին Ուէսթմինըսթըրի ժողովը երկու «Քրիստոնէական»-ներ ալ կը պաստրաստէր. ընդարձակը՝ ամբողջ Եկեղեցիին համար, իսկ ամփոփը՝ մանուկներուն համար: Երկուքն ալ 1648-ին Անգլիոյ խորհրդարանին եւ Սկոտիոյ համաժողովին կողմէ կ'որդեգրուէին:

Ուէսթմինըսթըրի «Խոստովանութիւն»-ը եւ մանաւանդ ամփոփ «Քրիստոնէական»-ը կալվինականութեան համար մեծ արժէք կը ներկայացնէին: Ասոնց ամենայատկանշական կէտերէն մին կ'ակնարկէր ադամական մեղքին, որ նախածնողներէն կը փոխանցուէր մարդերուն եւ որմէ ձերբազատուելու համար «գործերու ուխտ»-ը բաւարար չէր, այլ «շնորհի ուխտ»-ը պէտք էր: «Գործերու ուխտ»-ը չէր կրնար մարդերը փրկել, որովհետեւ Ադամ Աստուծմէ իրեն եւ ամբողջ մարդկութեան տրուած բարիքը կը մերժէր իր անհնազանդութեամբ: «Գործերու ուխտ»-ը կը ձախողէր եւ Աստուած Քրիստոսով «շնորհի ուխտ»-ը կը կնքէր մարդերուն հետ: Այս ուխտերուն համապարփակ բացայայտումը կը կատարէր Ֆրանեզերի եւ Լէյտընի համալսարան-

ներու դասախօս Յովհաննէս Գոգեիոս (1603–1669), որ ցոյց կու տար, թէ մարդ մեղքի մէջ ինկած էր եւ ամբողջապէս պատասխանատու էր իր կործանումին: Նաեւ ասոնք կ'ընդգծէին մաքրակրօն վարդապետութեան կիրակի օրը սուրբ պահելու հրամայականը:

Մինչ այսպիսի աստուածաբանական եւ եկեղեցաբանական խօսակցութիւններ կը մշակուէին, քաղաքացիական պատերազմը կը շարունակուէր: 3 յուլիս 1644-ին արքայական բանակը Եորթի մօտ պարտութիւն կը կրէր շնորհիւ խորհրդարանի պատգամաւոր Օլիվըր Գրոմուէլի (1599–1658) զինուորական համեստ կարողութեան, որ նաեւ բարեպաշտ մարդու համբաւ ալ ունէր: 14 յունիս 1645-ին Գրոմուէլ արքայական բանակը վերջնական պարտութեան կը մատնէր Նասէպիի մօտ: 1646-ին Չարլզ Ա. սկովտիացիներուն անձնատուր կ'ըլլար, եւ անոնք ալ զայն անգլիական խորհրդարանին կը յանձնէին: Գրոմուէլի կազմած բանակը կը միաւորուէր Հոռմի եւ եպիսկոպոսութեան դէմ ըլլալու սկզբունքով եւ անջատողականներ, մաքրակրօններ ու մկրտչականներ կը ներառէր: Գրոմուէլ կը գիտակցէր նաեւ, որ մեծամասնութեամբ երիցականներէ բաղկացած խորհրդարանը բանակին համար եպիսկոպոսական իշխանութեան համագորութեամբ՝ անհանդուրժելի կը դառնար: Բանակը հանդուրժողութիւն կը պահանջէր: Բանակ ներթափանցած մաքրակրօններ իրենց համոզումներուն կառչած մնալու ազատութեան պահանջը կը պնդէին:

Բանակին այս պահանջը խորհրդարանին կողմէ վաւերացուած երիցականութեան ամբողջական տիրակալութիւնը կը կասեցնէր: Սկովտիացիներ կը դժգոհէին այս իրավիճակէն: Չարլզ Ա. կը փորձէր սկովտիացիները սիրաշահիլ՝ խոստանալով անոնց Անգլիա արշաւել եւ պաշտպանել երիցականութիւնը: 17–20 օգոստոս 1648-ին Փրեսթընի մօտ Գրոմուէլ կը ցրուէր արշաւող սկովտիական բանակը, եւ անգլիական բանակը կացութեան տէրը կը դառնար: 6 դեկտեմբերին խորհրդարանի երիցական պատգամաւորները կը վտարուէին: 30 յունուար 1649-ին հայրենադաւ Չարլզ կը դատուէր ու կը

գլխատուեր: Ապա, Գրոմուել Իրլանտան ու Սկոտլանդ կը գրաւէր եւ 1651-ին Վորչեսթըրի մօտ Չարլզի զաւակը՝ Չարլզ Բ.-ը (1660–1685) գահընկէց կ'ընէր: Այսպէսով ընդդիմութիւնը բոլոր ճակատներու վրայ կը զսպուէր:

Թէեւ Գրոմուել որեւէ մաքրակրօն հոսանքի չէր պատկանէր, սակայն աւելի կողմնակից էր անջատողականութեան: Պատերազմի ընթացքին շուրջ 2000 եպիսկոպոսական հոգեւորական իր իրաւունքներէն զրկուած էր: Հանդուրժողական ոգիով՝ Գրոմուել ի մի կը բերէր չափաւորական եպիսկոպոսականներ, մաքրակրօններ, երիցականներ, անջատողականներ եւ մկրտչականներ: Այս նոր տնօրինումը գոհ կը ձգէր բոլորը: Գրոմուել մինչեւ իր մահը՝ 3 սեպտեմբեր 1658, զինւորական բազուկով միահեծան կրօնական դրութիւն կը պարտադրէր Անգլիոյ մէջ:

Գրոմուելի կը յաջորդէր անոր զաւակը՝ Ռիչըրտ, որ հեղինակագուրկ էր: Անկարգութիւնը տիրական կը դառնար: Թագաւորութեան վերականգնումի համակիրներ եւ երիցականներ միասնաբար կը փորձէին մենատիրութիւնը վերահաստատել: 29 մայիս 1660-ին Չարլզ Բ. ազատութիւն պարգեւելու խոստումով կը մտնէր Լոնտոն, սակայն շուտով կը մերժէր երիցականներուն կրօնական պահանջներուն ընդառաջել:

Չարլզ Բ. երիցականութեան որոշ տեղ կ'ուզէր տալ Անգլիոյ եկեղեցիին մէջ եւ մաքրակրօն Եղուարդ Ռէյնըլտսը (1599–1676) Նորուիճի եպիսկոպոս կը նշանակէր: Սրբակեաց երիցական Ռիչըրտ Պաքսթըրը (1615–1691) կը մերժէր եպիսկոպոսանալ: 1661-ին Սաւոյի պալատին մէջ տեղի կ'ունենար եպիսկոպոսներու եւ երէցներու համագումար մը, որ սակայն շօշափելի արդիւնքի չէր յանգեր: Չարզ տկար ու անբարոյ էր եւ կրօնքին հանդէպ անտարբեր: Նոյնիսկ եթէ ան հեղինակութիւն ունենար, այս պայմաններուն մէջ դժուար թէ մաքրակրօններուն դէմ ծառայած ազգայնական ալիքը կարենար զսպել: Չարլզի օրով ընտրուած խորհրդարանը թագաւորամետ եւ անգլիզան էր: 1661-ին Գենթըրպըրիի ու Եորքի արքեպիսկո-

պոսական աթոռները միատեղ ժողով կը գումարէին եւ աղօթագիրքին մէջ բարեփոխութիւններ կը մտցնէին՝ սակայն լրիւ անտեսելով մաքրակրօն զգայնութիւնը: Մայիս 1662-ին Չարլզ կը հրապարակէր կրօնական միաձեւութեան հրամանագիր մը, որուն մէջ աղօթագիրքի արարողութիւններուն կատարումը միայն կը թոյլատրուէր եւ հոգեւորականներուն կը պարտադրուէր երդնուլ միայն զայն գործածել. առաւել, խստիւ կ'արգիլուէր ամեն պարագաներուն թագաւորին դէմ զէնք բարձրացնել:

Այս փոփոխութիւնները մաքրակրօնները կը վանէին Եկեղեցիէն: Շուրջ 1800 պատուելի կը նախընտրէր իր պաշտօնը լքել, քան թէ աղօթագիրքը միայն գործածել երդնուլ: Այսպէսով մաքրակրօններ առաջին անգամ ըլլալով այլեւս Անգլիոյ եկեղեցիէն կ'արտաքսուէին: Երիցականներ եւ անջատողականներ եւս դուրս կը մնային Անգլիոյ եկեղեցիէն: Թագաւորութիւնը զօրացնելու միտող պատիժներ կը գործադրուէին: 1664-ին, երբ հինգ անձերէ աւելի խմբաւորում ունեցող աղօթքի հաւաք տեղի կ'ունենար եւ աղօթագիրքը չէր գործածուէր, բանտարկութիւն եւ տուգանք կը սահմանուէր օրինականացներուն: Իսկ 1665-ին պատիժը աւելի կը սաստկանար եւ արտօնութիւն չունեցող քարոզիչներուն կը հրահանգուէր իրենց նախկին ծովսէն հինգ մղոն հեռու ապրիլ: Այսպիսիներուն նաեւ կ'արգիլուէր դպրոցի մէջ դասաւանդելը, որ իրենց ապրուստին միակ միջոցն էր: 1670-ին նաեւ յաւելեալ յատուկ տուրք կը սահմանուէր բոլոր անոնց համար, որոնք անօրինական պաշտամունքներու կը մասնակցէին: Հակառակ այս բոլոր կաշկանդումներուն՝ արգիլեալ համայնքներ կը բազմանային եւ քարոզախօսութիւնը կը ծաղկէր:

Չարլզ Բ. մահուան անկողինին մէջ կաթոլիկութիւնը կ'ընդունէր: Իր եղբայրը, ապագայի Յակոբոս Բ.-ը, 1672-էն ի վեր կաթոլիկ էր: Առաւել, Չարլզ գաղտնի նպաստ կը ստանար Ֆրանսայի Լուի ԺԴ. կաթոլիկ թագաւորէն: 15 մարտ 1672-ին Չարլզ ինքնագլուխ ներողութեան յայտարարութիւն մը կը հրապարակէր, որուն համաձայն՝ բողոքական ընդդիմադիր-

ները իրաւունք կ'ունենային հրապարակային պաշտամունք կազմակերպելու, կաթողիկէներ գերծ կը կացուցուէին իրենց դէմ նախապէս սահմանուած պատիժներէն եւ տուներու մէջ կատարուող պաշտամունքը օրինաւոր կը դառնար: Խորհրդարանը այս քայլը Հռոմի հանդէպ հակասահմանադրական զիջում կը նկատէր: Չարլզի ներողութեան յայտարարութիւնը չեղեալ կը համարուէր, եւ 1673-ին խորհրդարանը կը հրապարակէր նոր հրամանագիր մը, որուն համաձայն՝ անոնք, որոնք զինուորական կամ դիւանագիտական պաշտօն ունէին, պարտաւոր էին սուրբ հաղորդութիւնը Անգլիոյ եկեղեցիի ծեսին համաձայն ստանալ. այլապէս՝ իրենց պաշտօնը կը կորսընցնէին: Այս որոշումը ի զօրու կը մնար մինչեւ 1828 եւ բողոքական ընդդիմադիրներ իրենց իրաւունքներէն զրկուած կը մնային մինչեւ Չարլզի մահը՝ 1685-ին:

Յակոբոս Բ. (1685–1688) ամեն գնով կը փորձէր կաթողիկոսութիւնը վերահաստատել: Ան կ'անտեսէր 1673-ին խորհրդարանին հրապարակած հրամանագիրը եւ կաթողիկէներուն զինուորական ու դիւանագիտական պաշտօններ կուտար, կաթողիկ վանականներ կը բերէր, բոլոր պատիժները բեկանելու իրաւասութիւն կ'ունենար եւ գերագոյն ատեանը կը վերակազմէր: 4 ապրիլ 1687-ին ներողութեան յայտարարութիւն մը կը հրապարակէր եւ կրօնական ամբողջական հանդուրժողութիւն կը սահմանէր: Անշուշտ այս բոլորով ան կը նպատակադրէր Անգլիան դարձեալ հռոմէական կաթողիկ երկիր դարձնել: Բոլոր բողոքականները ահագանգի կը մատնուէին, իսկ սահմանադրական իշխանութեան համակիրներ խորհրդարանին զօրութեան տկարացումը կը տեսնէին: Բողոքական ընդդիմադիրներ թագաւորին դէմ կ'ելլէին: Ապրիլ 1688-ին, երբ Յակոբոս կը հրամայէր իր ներողութեան յայտարարութիւնը կարդալ բոլոր եկեղեցիներուն մէջ, եօթը եպիսկոպոս կը բողոքէր: Անոնք ատեան կը կանչուէին եւ ապա ազատ կ'արձակուէին՝ ուրախութիւն պատճառելով բողոքականներուն: Ուիլեմը Օրանժցի (1650–1702), որ Յակոբոսի Մարի աղջիկին հետ ամուսնացած էր, 5 նոյեմբեր 1688-ին Հոլանտայէն

Անգլիա կու գար եւ ընդդիմութեան ղեկավարը կը դառնար: Յակոբոս Ֆրանսա կը փախչէր: Իշխանութիւնը կը տապալէր, եւ 13 փետրուար 1689-ին Ուիլլէրմ Գ. եւ Մարի Անգլիոյ թագաւորն ու թագուհին կը հռչակուէին:

Հոգեւորականութիւնը երկար ատենէ կը սպասէր թագաւորներուն աստուածային իրաւունքին դէմ կեցուածք ճշդելու յարմար պահուն: Եօթը եպիսկոպոս, Ուիլլէրմ Սանգրոֆթի (1617-1693) գլխաւորութեամբ, կը մերժէր նոր գահակալներու հնազանդութեան ւսանդական երդումը կատարել, եւ շուրջ 400 հոգեւորական անոնց օրինակին կը հետեւէր: Ինչպէս նախապէս անգլիկաններն ու ընդդիմադիրները, ասոնք եւս պաշտօնանկ կ'ըլլային, սակայն տեղի չէին տար: Ասոնցմէ մաս մը Սկոտլիա կ'ապաստանէր եւ տեղոյն Եպիսկոպոսական եկեղեցիի ծիսական կեանքին կ'օժանդակէր:

1688-ի յեղափոխութենէն ետք բողոքական ընդդիմադիրներուն հանդէպ հանդուրժողութիւն կը դրսեւորուէր: 24 մայիս 1689-ի Հանդուրժողութեան հրամանագիրով անոնք, որոնք Ուիլլէրմ Գ.-ի եւ Մարիի հաւատարմութիւն կը յայտնէին, պապին իշխանութիւնը, գոյացափոխութիւնը, սուրբ պատարագը եւ Սուրբ կոյսի ու սուրբերուն բարեխօսութիւնը կը մերժէին եւ «39 յօդուածներ»-ը կ'ընդունէին, պաշտամունքի ազատութիւն կը վայելէին: Բողոքական այլազան եկեղեցիներ այլեւս իրաւունք կը ստանային կողք-կողքի ապրելու: Ընդդիմադիրները Անգլիոյ բնակչութեան տասը առ հարիւրը կը կազմէին եւ ունէին երեք խմբաւորում՝ երիցական, ժողովական եւ մկրտչական: Անոնք տակաւին պարտաւոր էին հարկ վճարել իշխանութեան եւ կը դիմագրաւէին այլ դժուարութիւններ, սակայն ձեռք ձգած էին իրենց համար այնքան կենսական կրօնական ազատութիւնը: Ժամանակի ընթացքին անոնք որպէս Անգլիոյ ազատ եկեղեցիները կը ճանչցուէին: Սուրբ Երրորդութիւնը ուրացողներ եւ հռոմէական կաթոլիկներ ասոնց ունեցած իրաւասութիւններէն զրկուած էին: Անոնք աստիճանաբար այսպիսի իրաւասութիւններու պիտի տիրանային 1778-ին, 1791-ին եւ 1829-ին:

Սկովտիոյ մէջ կրօնական վերականգնումի ճամբան դժուար հանգրուաններ կը թելակոխէր: Խորհրդարանը կը ջնջէր 1633-էն ի վեր Երիցական եկեղեցիին ի նպաստ եղած բոլոր որոշումները: Չարլզ Ա.-ի օրերուն նման՝ եպիսկոպոսութիւնը կը վերահաստատուէր: Սեպտեմբեր 1661-ին կը նշանակուէր չորս եպիսկոպոս, որոնցմէ գլխաւորը՝ Յակոբոս Շարփ (1618–1679), կը դառնար Սուրբ Անդրեասի արքեպիսկոպոսը: Ասոնք Անգլիոյ եկեղեցիէն կը ձեռնադրուէին: Շարփ իր Եկեղեցին լքած երիցական հովիւ մըն էր: Խորհրդարանը կը պարտադրէր, որ բոլոր եկեղեցական պաշտօն ստանձնողները 1638-ի եւ 1643-ի ուխտերէն հրաժարէին: 1663-ին եպիսկոպոսներով կառավարուող եկեղեցիներէն բացակայողներուն խորհրդարանը ծանր տուրքեր կը դնէր: Մանաւանդ հարաւարեւմտեան Սկովտիոյ մէջ բազմաթիւ պատուելիներ պաշտօնանկ կ'ըլլային: Անոնք, որոնք վերէւ յիշուած սահմանուած տուրքերը չէին վճարէր, կը ձերբակալուէին: 1664-ին գերագոյն ատեանը կը վերահաստատուէր: Երկու տարի ետք ընդդիմադիրները ոտքի կ'ելլէին եւ մեծ պարտութիւն արձանագրելէ ետք՝ երիցականութիւնը աւելի պատիժներ կը կրէր: 3 մայիս 1679-ին Շարփ կը սպանուէր: Ընդդիմադիրները դարձեալ կը կանգնէին, սակայն 22 յունիսին Պոթուել կամուրջի ճակատամարտին աւելի ծանր պարտութիւն կը կրէին: Վեց ամիս ետք թագաւորին Յակոբոս եղբայրը՝ Անգլիոյ ապագայ Յակոբոս Բ. թագաւորը, Սկովտիոյ իշխան կը նշանակուէր: Երիցականներ իրենց առաջնորդներէն Ռիչըրտ Գամերոնի (1648?–1680) անունով այլեւս «գամերոնեաններ» կը կոչուէին:

Յակոբոս Բ.-ի իշխանութեան սկիզբը «գամերոնեաններ» խիստ հալածանքի կ'ենթարկուէին: 1685-ին խորհրդարանը մինչեւ իսկ անոնց մահուան դատապարտութիւն կը հրահանգէր: Սակայն Յակոբոս Սկովտիոյ պարագային կը հետեւէր Անգլիոյ օրինակին: Ան կաթոլիկներուն պաշտօններ կու տար եւ 1687-ին կրօնական պաշտամունքի ազատութեան հանդուրժողութեան նամակներ կը ստորագրէր: Կաթոլիկներուն հանդէպ ցոյց տրուած այս համակրանքը կը բորբոքէր բողոքա-

կանները, եպիսկոպոսականներն ու երիցականները, եւ երբ Ուիլերմ Գ. եւ Մարի իշխանութեան կը տիրանային, հիւսիսային թագաւորութեան մէջ բազմաթիւ բարեկամներ կ'ունենային: Յամենայն դէպս, Սկովտիա Անգլիայէն աւելի բաժանբաժան էր: 11 մայիս 1689-ին Ուիլերմ եւ Մարի Սկովտիոյ իշխանութեան կը տիրանային: 1690-ին խորհրդարանը 1661-էն ի վեր մերժուած երիցականութիւնը կը վերահաստատէր, կը վաւերացնէր Ուէսթմինսթըրի հաւատքի հանգանակը եւ կառավարութեան կողմէ ճանչցուած կրօնք կը հռչակէր երիցականութիւնը: Գամերոնեան աշխարհականներ եւ եպիսկոպոսականներ կ'ընդդիմանային այս որոշումներուն, որովհետեւ ասոնցմով աշխարհիկ իշխանութեան Եկեղեցիին վրայ ունեցած անտեղի ազդեցութիւնը կը տեսնէին: 1707-ին Անգլիա եւ Սկովտիա՝ որպէս Մեծն Բրիտանիա, մէկ թագաւորութիւն կը դառնային, սակայն Սկովտիոյ անկախ Եկեղեցիի իրաւունքները կ'երաշխատուէին: Աննա թագուհիին օրով՝ 1712-ին, խորհրդարանը կու տար երկու կարելոր որոշում. առաջին՝ հիւսիսային Սկովտիոյ մէջ գտնուող եպիսկոպոսութիւնը հանդուրժողութեան կ'արժանանար, երկրորդ՝ թագաւորութիւնը կամ հողատէրերը երեցներ նշանակելու իրաւասութիւն կը ստանային:

ԺԷ. ԳԼՈՒԽ
ՔՈՒԷՅԳԸՐՆԵՐԸ (ԵՐԵՐԱՑՈՂՆԵՐԸ)

1640-ականներու եւ 1650-ականներու խառնակութիւններու շրջանին Անգլիոյ մէջ կը բազմանային կրօնական հոսանքները. ասոնցմէ ոմանք կրօնաքաղաքական էին, ուրիշներ՝ հազարամեայ վարդապետութեան հետեւողներ եւ այլք ունէին խորհրդագրաց հակումներ: Այս բոլորէն ամենայականնշականը Բարեկամներու ընկերակցութիւնն էր, որ ժողովրդականօրէն աւելի ծանօթ է որպէս «քուէյզըր», որովհետեւ անոր անդամակցողը Տիրոջ իր մէջ ներկայութեամբ միշտ կ'երերար: Գէորգ Ֆոքս (1624–1691) Անգլիոյ պատմութեան ամենահանճարեղ դէմքերէն մին է: Ան Ֆենի Տրայթընի մէջ կը ծնէր եւ օրինակելի կեանք կ'ապրէր՝ ոչ ոքի վնասելով: 19 տարեկանին, երբ անուանականօրէն քրիստոնէայ եղողներու կողմէ խրախճանքի կը հրաւիրուէր, կը տեսնէր, թէ ալքովամոլութիւնը ինչպիսի աւերներ կը գործէր, եւ կ'որոշէր իտեալական ու անկեղծ շրջանակի մէջ հոգեւոր կեանքի նուիրուիլ: Զանազան փորձեր ապարդիւն կը մնային, եւ 1646-ին ան իր կեանքին դարձակէտը կ'ապրէր, երբ կը համոզուէր, թէ ամեն անձ Տիրոջմէ լոյս կը ստանար եւ իր «ներքին լոյսին» հետեւելով «կեանքի լոյսն» ու հոգեւոր ճշմարտութիւնը կը գտնէր: Աստուածաշունչը Աստուծոյ ճշմարիտ խօսքն էր, սակայն յայտնութիւնը միայն անով պայմանաւորուած չէր, այլ ան կը ծառայէր Աստուծոյ ճշմարիտ աշակերտները լուսաւորելու: Աստուծոյ հոգին ուղղակիօրէն անոնց հետ կը խօսէր, աստուածային պատգամը անոնց կը փոխանցէր եւ անոնց մէջ ծառայութեան ոգին կ'արթնցնէր:

1647-ին Ֆոքս իր հոգեւոր ծառայութեան կը սկսէր: Ան կը հաւատար, թէ աստուածային կամքով ներքին լոյսը ստացողը Աստուծոյ կողմէ ծառայութեան կը հրաւիրուէր, որ նիւթական վարձրատրութեամբ պէտք չէր կատարուէր: Ֆոքսի հաւատալիքները կարելի է խտացնել հետեւեալ վեց կէտերուն մէջ.

ա) Եկեղեցիի խորհուրդները ներքին եւ հոգեկան իրականութիւններ էին, որոնց արտաքին ազդակները ո՛չ միայն անհրաժեշտ չէին, այլեւ մոլորեցուցիչ էին. բ) քրիստոնէային ճշմարիտ խօսքը պէտք չունէր երդումի ապաւինելու. գ) խօսքի եւ նկարագիրի աւելորդաբանութիւնները մարդուն իր նմանին հանդէպ ունեցած քրիստոնէական յարգանքը կը խաթարէին. դ) արուեստական տիտղոսներու կարիք չկար. թէեւ «թագաւոր» եւ «դատաւոր» տիտղոսները օրինականօրէն ընդունելի էին. ե) պատերազմը օրինական չէր եւ ստրկութիւնը խոտելի էր քրիստոնէային համար. զ) քրիստոնէաներ պարտաւոր էին վերափոխեալ սուրբ կեանք ապրելու:

Ֆոքսի անկեղծութիւնն ու ներքին հոգեւոր կեանքի ընդգծումը գրաւիչ տուեալներ կը դառնային իր շրջապատի բազմաթիւ մաքրակրօններուն համար: 1652-ին առաջին քուէզըր համայնքը հիւսիսային Անգլիոյ Փրեսթըն Փաթրիքի մէջ կը համախմբուէր: Երկու տարի ետք քուէզըրներ Լոնտոնի, Պրիսթըրլի եւ Նորուիճի մէջ կը տարածուէին: Ֆոքսի ամենահամբաւաւոր հետեւորդը կը դառնար Մարգարիտ Ֆել (1614–1702), որ այրիանալէ ետք կ'ամուսնանար Ֆոքսի հետ, եւ անոր Սուարթմոր Հոլի տունը քուէզըր քարոզիչներու կեդրոնատեղին կ'ըլլար:

Քուէզըրներու շարժումը Անգլիոյ մէջ ուժեղ ընդդիմութեան կը բախէր: 1661-էն առաջ Ֆոքս եւ աւելի քան 3000 քուէզըր բանտ կը դրուէին: Միսիոնարական եռանդով վառուած բազմաթիւ քուէզըրներ մինչեւ Երուսաղէմ, Արեւմըտեան հնդկական կղզիներ, Գերմանիա, Աւստրիա եւ Հոլանտա կ'երթային: 1656-ին անոնք նաեւ Մեսէչուսէց նահանգը կը հասնէին եւ անոնցմէ հինգ անձ հոն կախաղանի մահուան կը դատապարտուէր: Քուէզըրներու հանդէպ դրսեւորուած այս ուժեղ ընդդիմութիւնը արդարացուցիչ չէր, սակայն որոշ չափով նաեւ առնչուած էր անոնցմէ ոմանց կենցաղակերպին:

Այս կենցաղակերպը կարիքը ունէր կազմակերպական տաղանդի, որ պէտք էր Սուրբ Հոգիին անմիջական ներշնչումով առաջնորդուէր: 1666-ին Ֆոքս քուէզըրներու կենցաղավա-

րութեան կազմակերպական հիմնական երեսները կը ճշդեր, սակայն ուժեղ ընդդիմութեան կը բախեր: Ամսական հանդիպումներ կ'որոշուէին, որոնք քուէգրքներու կենցաղին հսկողութեան պիտի յատկացուէին: Նախքան Ֆոքսի մահը՝ 1691-ին, արդէն քուէգրքներու հիմնական յատկանիշերը սահմանուած էին:

Կրօնական ընդդիմադիր խմբակները ճնշելու համար ճշդուած օրէնքներէն ամենէն աւելի կը տառապէին քուէգրքները, որովհետեւ հակառակ բոլոր արգելքներուն՝ անոնք կը շարունակէին կազմակերպել իրենց հանդիպումները: Շուրջ 400 քուէգրք բանտի մէջ կը մահանար եւ շատ աւելի մեծ թիւ մը ծանր տուգանքներ կը կրէր: Այս բոլորը պատճառ կը դառնային նաեւ, որ այդ ժամանակաշրջանի կարկառուն դէմքերէն ոմանք միանային քուէգրքներուն: Ասոնցմէ էր Ծովակալ Ուիլեմ ֓ենի որդին՝ Ուիլեմ ֓են (1644–1718), որ 1666-ին քուէգրք կը դառնար եւ քարոզութեան կը նախաձեռնէր: Ան Անգլիոյ մէջ քուէգրքներու զլացուած ազատութիւնը Ամերիկայի մէջ կը փնտռէր եւ 1677-ին եւ 1678-ին շուրջ 800 քուէգրք Նիու Ճրքի դրկելէ ետք՝ Չարլզ Բ.-ի հրամանագիրով 1682-ին Ֆիլատելֆիոյ մէջ պաշտօնապէս կը հաստատէր քուէգրքներու համայնք մը:

1689-ի հանդուրժողութեան հրամանը այլ ընդդիմադիրներու կարգին՝ պաշտամունքի ազատութիւն կը շնորհէր նաեւ քուէգրքներուն:

Է. ՄԱՍ

ԱՐԴԻ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ

Ա. ԳԼՈՒԽ
ԱՐԴԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ
ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Միշտ հարց եղած է՝ Բարեկարգութիւնը Միջին դարերո՞ւն, թե՞ արդի պատմութեան կը պատկանի: Ան կը պատկանի միաժամանակ երկուքին: Բարեկարգութիւնը Միջին դարերուն կը պատկանի, երբ նկատի ունենանք անոր արտաքին հեղինակութեան յենած կրօնք ըլլալը, դաստիարակչական եւ կրթական կեանքի բոլոր բնագաւառները կրօնական ազդեցութեան տակ պահելը, միաձեւ պաշտամունքի գործադրութիւնը՝ զոնէ տուեալ երկրամասին մէջ եւ ադամական մեղքի, չար ոգիներու, կախարդութեան, Երկիրին հետ աստուածային յարաբերութիւններու ու կրօնական աշխարհայեացքի մօտեցումները: Սակայն վերեւ յիշուած երեւոյթները նաեւ կը կանխէին Միջին դարերը: Քանի մը օրինակներ բաւարար են հաստատելու համար այս: Մեղքն ու շնորհը Տերտուղիանոսի եւ Օգոստինոսի օրերէն լատին աստուածաբանութեան հիմնահարցերն էին, ինչպէս կը դառնային նաեւ Բարեկարգութեան հիմնահարցերը: Թէեւ Լուտեր Արիստոտելի չէր համակրեր, սակայն բողոքական հին իմաստասիրութիւնը առաւելաբար արիստոտելեան էր: Թէեւ Բարեկարգութիւնը վանականութիւնը չէր մերժեր, սակայն զոնէ կալվինականներ չէին քաջալերեր զայն:

Միւս կողմէ՝ որպէս կրօնական շարժում՝ Բարեկարգութիւնը կը բերեր քրիստոնէական հաւատքի նոր ըմբռնողութիւն մը: Ան կը խորտակէր Եկեղեցիի խորհրդակատարողական դարաւոր դրութիւնը: Մկրտութիւնն ու սուրբ հաղորդութիւնը կը պահուէին եւ կ'արժեւորուէին, սակայն աստուածային խոստումներու կնիքը կը նկատուէին փոխան շնորհի միակ միջոցներու: Սուրբ Հոգին, որուն ներգործութիւնը խորհուրդ էր, զանոնք շնորհաբեր նպատակներու համար կը գործածէր, սակայն անոնցմով չէր սահմանափակուեր, որով-

հետեւ անձ մը հաւատացեալ կը դառնար նաեւ Աստուծոյ գրաւոր խօսքին ընթերցումով եւ քարոզին ունկնդրութեամբ: Փրկութիւնը Աստուծմէ նախաձեռնուած ուղղակի ու անձնական յարաբերութիւն մըն էր, որ կենդանի Քրիստոսը կը բերէր հաւատացեալին կեանքին մէջ: Քրիստոսի հանդէպ հաւատքը, որ որպէս ներողամտութիւն ու զօրութիւն կ'ապրէինք, Աստուծոյ նուէրն էր: Մարդուն՝ Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւնը պարտքի ու վարձատրութեան եւ չարին յաղթահարելու ու արժանիք ձեռք բերելու միջոց չէր, այլ հաշտութեան վիճակ մը, եւ բարի գործերը անոր բնական արդիւնքն էին: Այս յատկանիշերը Բարեկարգութիւնը կ'առնէն արդի աշխարհին, որուն կազմաւորումին բնականօրէն ան եւս նպաստած է: Սակայն եթէ նկատի պիտի առնենք, թէ մարդկայնականութիւնը Բարեկարգութեան կողմէ անտեսուած է, կրնանք անվարան ըսել, թէ Բարեկարգութիւնը իր առաջին ժամանակաշրջանին Միջին դարերուն կը պատկանէր:

Որպէս եզրակացութիւն կը հաստատենք, որ կարելի չէ անջատումի գիծ քաշել Միջին դարերուն եւ արդի աշխարհին միջեւ: Մէկ բան յստակ է, որ Բարեկարգութիւնը քրիստոնէական աշխարհայեացքը փոփոխութեան կ'ենթարկէր: Փոփոխութիւն, որ երկու պատճառ ունէր: Առաջին՝ ԺԷ. դարու կէսէն մշակոյթի յարաճուն աշխարհականացումը. միջնադարեան եւ բարեկարգեալ Եկեղեցիի ազդեցութիւնը կրող պետութիւնն ու ընկերութիւնը կրօնական չէզոք քաղաքակրթութիւն կը մշակէին: Երկրորդ՝ մասնագիտական, վաճառականական ու աշխատաւորական դասակարգերու դաստիարակութեան եւ քաղաքականութեան մէջ ունեցած նկատառելի ազդեցութիւնը. ասոնք յատկապէս Միջին դարերէն յետոյ կը սկսէին բանալի դերակատարութիւն ունենալ, եւ ասոնց ազդեցութեան հետեւանքով պետութիւնը աւելի հանդուրժող կը դառնար բողոքական բազմազան համայնքներուն հանդէպ:

Բարեկարգութեան սկզբնական օրերուն գիտութիւնը կ'ըսէր, թէ աշխարհը տիեզերքի կեդրոնն էր, եւ Արեւն ու աստղերը անոր շուրջ կը դառնային: Վերածնունդը Իտալիոյ

մէջ յունական արեւակեղրոն դրութիւնը կը վերապրեցնէր, որ Նիկողայոս Կոպեռնիկոսի (1473–1543) կողմէ Լեհաստանի մէջ կը մշակուէր եւ կը հրապարակուէր անոր մահուան տարին: Այդ օրերուն այս նշմարներուն մեծ կարեւորութիւն չէր տրուէր, սակայն ասոնցմով աստղագիտութիւնը յառաջդիմութիւն կ'արձանագրէր: Թիգօ Պրահէ (1546–1601) եւ Յովհաննէս Քեփլըր (1571–1630) այս գիտը անելի կը զարգացնէին: Երկուքն ալ կ'ազդուէին Ֆրանսիս Պէլզընէ (1561–1626): Կալիլէօ Կալիլէի Փիզացի (1564–1642) գիտական բազմաթիւ նորութիւններ կը ներմուծէր եւ երկինքը ուսումնասիրող հեռադիտակին գիտը կը կատարէր: Կոպեռնիկոսի բերած գիտական նորութեան յաղթանակը կը պարտինք Կալիլէին. սակայն անոր տուած բացատրողականը, յատկապէս 1632-ի իր *Երկիւստութիւն*-ին մէջ, իմաստասիրական եւ եկեղեցական ընդդիմութիւն կը հանէր իր դէմ, եւ ան հաւատաքնութեան սպառնալիքին տակ յաջորդ տարի կը պարտաւորուէր ուրանալ իր պարզած տեսակէտը: Իսահակ Նիութըն (1642–1727) կը դառնար Կոպեռնիկոսի բերած գիտական նորութիւնը ժողովրդականացնողը, որ 1687-ին ուսողական հաշուարկումներով ցոյց կու տար, թէ երկնային մարմիններու շարժումները ձգողականութեամբ կը պարզուէին: Նիութընի եզրակացութիւնները գիտնականները կը մղէին մտածելու, թէ ֆիզիքական տիեզերքը այլեւս աստուածային բխումի պատահականութիւն չէր, այլ տրամաբանական օրէնքներով ըմբռնելի տարածք մը՝ հիմնուած մեքենականօրէն գործող պատճառի եւ արդիւնքի սկզբունքին վրայ: Մեր աշխարհը այլեւս ամեն բանի կեղրոնը չէր, այլ մասնիկ մը բազմաթիւ երկնային մարմիններու կարգին, որոնցմէ շատեր աշխարհէն անելի մեծ էին եւ կը շարժէին անսալով անփոփոխ օրէնքներու: Նիութըն կրօնասէր անձ մըն էր եւ շատ հետաքրքրուած էր աստուածաբանութեամբ, սակայն իր գիտական գիտերը շատերու կողմէ կը շահագործուէին՝ ստորագնահատելու համար քրիստոնէութիւնը:

Մինչ գիտութիւնը նոր երկինքն ու նոր երկիրը կը բացայայտէր, իմաստասիրութիւնը շեշտը կը դնէր պատճառակա-

նութեան վրայ: Տրանսազի եւ կաթոլիկ Ռընէ Տեքարթ (1596–1650) իր ուսումնական գործուն կեանքին մեծ մասը կ'անցընէր Հոլանտայի մէջ, ուր կը գրէր իր *Աշխատակարգաբանութիւն* (1637), *Առաջին իմաստասիրութիւն* (1641) եւ *Սկզբունքներ* (1644) երկերը: Ան կ'ըսէր, թէ միտքը իրեն փոխանցուած ծանօթութիւնը միայն կրնայ ամբողջապէս ըմբռնել: Պարզ ճանաչողութիւնը բաւարար չէ: Միտքին ներկայացող առարկաներն ու գաղափարները իրարու այնքան ընդելուզուած են, որ պէտք է վերլուծուին եւ պարզացուին, որպէսզի հասկնալի դառնան: Արդ, այս ծանօթութեան սկիզբը կասկածն է եւ յառաջխաղացք չ'արձանագրուիր մինչեւ այնպիսի մեկնակէտ գտնուի, որ կասկածելի չըլլայ: Ըստ Տեքարթի, ինչպէս նաեւ Օգոստինոսի, մարդ մտածող արարած մըն է: Նոյնիսկ կասկածի մէջ «կը մտածեմ, ուրեմն՝ գոյութիւն ունիմ»: Երբ այս «մտածող եսը» վերլուծենք, իրմէ գերիվեր գաղափարներ կը գտնենք իր մէջ եւ որովհետեւ ամեն բան իր պատճառը ունի, զանոնք իր մէջ դնող աւելի մեծ եւ իրաւ պատճառ մը պէտք է գոյութիւն ունենայ: Այդ պատճառը մեր մտածողութեան հետ կապ ունեցող Աստուածն է: Աստուծոյ մէջ մտածումն ու գոյութիւնը միացած են: Մեր գաղափարները իրաւ եւ աստուածանման կ'ըլլան միայն այն ատեն, երբ անոնք պայծառ եւ տրամաբանական են: Նիւթը, որ միտքին նման Աստուծմէ կը տրուի, ամեն բանի մէջ միտքին հակառակ է: Նիւթը միայն Աստուծոյ կողմէ իրեն տրուած մեքենական շարժումը ունի. արդ, անասունները միայն մեքենայ են: Մարդկային մարմինին եւ միտքին յարաբերութիւնները Տեքարթը շատ կը զբաղցնէին:

Տեքարթի բերած իմաստասիրական մանրամասնութիւնները ժողովրդային խաւերուն վրայ կ'ազդէին այն նորութեան համար, թէ ամեն բանի մեկնակէտը կասկածն էր եւ զայն պէտք էր փաստարկումներով փարատել: Այս տեսակէտը կարեւոր հետեւութիւններու պիտի տանէր մարդերը:

Հրեայ հոլանտացի Պարուի Սփինոզայի (1632–1677) ազդեցութիւնը Տեքարթի սկզբունքներուն համահունչ էր: Ան կ'ուսուցէր, թէ ամեն բան անսահման նիւթ էր, ամեն բան

Աստուած եւ բնութիւն էր, որուն կը ծանօթանանք մտածումով եւ դրսեւորումով. ասոնք ալ մարդուն ըմբռնելի կը դառնան անձերով եւ անոնց յատկութիւններով: Սփիւնոզայի մտածողութիւնը կը նպաստէր զարգացումի մէջ եղող պատճառականութեան:

Սակայն հիմնական հարցը այն էր, թէ մարդիկ ինչպէ՞ս կրնային գիտնալ: Ազդեցիկ պատասխան կու տար գերման հաշուազէտ, պատմաբան, պետական գործիչ ու իմաստասէր Կոթֆրայտ Ուիլհելմ Լայպնից (1646–1716), որ իր կեանքին վերջին 40 տարիները Հանովըրի մատենադարանապետն էր եւ շատ կը փորձէր կաթոլիկութիւնն ու բողոքականութիւնը վերամիացնել: Ան, հակադրուելով Սփիւնոզայի տիեզերքի մէջ մէկ նիւթ գոյութիւն ունենալու տեսակէտին, կ'ըսէր, թէ անթիւ նիւթեր կային եւ անոնցմէ իւրաքանչիւրը ուժի անբաժանելի կեդրոն էր: Ասոնցմէ իւրաքանչիւրը տիեզերքը կը ցոլացնէր՝ անզգայ նիւթէն մինչեւ գերագոյն գործօնութիւնը: Որքան յստակ կը դառնար գիտակցութիւնը, այնքան կը մօտենայինք Աստուծոյ: Սկզբնական ուժի անբաժանելի կեդրոնը Աստուած էր, որուն համար ամեն բան յստակ էր: Բոլոր գաղափարները Աստուծոյ մէջ էին եւ Աստուծմէ յստակութեան պէտք էր գային: Հոս ահաւասիկ դարձեալ կը յայտնուէր ճշմարիտին փորձարկումը, որ Տեքարթն ու Սփիւնոզան ալ կը չարչրկէր: Ո՛չ մէկ ուժի անբաժանելի կեդրոն կ'ազդէր միւսին վրայ, այլ բոլորն ալ ժամացոյցի նման ներդաշնակութեամբ իրարու հետ կը գործակցէին: Իւրաքանչիւր մարմին դարձած ուժի անբաժանելի կեդրոն՝ թուաբանական կէտի նման էր եւ ժամանակն ու տարածութիւնը զանոնք իրարու հետ կը համախմբէին: Աստուած աշխարհը կը ստեղծէր՝ ցոյց տալու համար իր կատարելութիւնը: Չար էին անկատարելութիւնը, ֆիզիքական ցարը, սահմանափակութիւնը եւ բարոյական սխալը, որոնք անհրաժեշտ էին, որովհետեւ Աստուած ասկէ աւելի կատարեալ աշխարհ չէր կրնար ստեղծել: Ըստ Լայպնիցի՝ մարդեր իրենց մէջ եղող գաղափարները յստակութեան ճամբով կը գիտնային:

Շատ տարբեր էր ժամանակակից անգլիացի ամենագրեցիկ իմաստասեր Յովհաննէս Լոգի (1632–1704) նոյն հարցումին տուած պատասխանը: 1690-ին լոյս ընծայած իր *Մարդկային հասկացողութեան ուսումնասիրութիւնը* նշանաւոր երկին մէջ ան կը մերժեր ընդոծին գաղափարներու գոյութիւնը: Ան կ'ըսէր, թէ միտքը ճերմակ թուղթ մըն էր, որուն վրայ զգայութիւններ իրենց տպաւորութիւնները կ'արձանագրէին, միտքը զանոնք գաղափարներու կը վերածէր եւ կը բարձրանար պարզ գաղափարներէ աւելի բարդ գաղափարներու: Լոգ կը հաւատար պատճառականութեամբ հասկացողութեան քննադատութեան եւ պատճառը կը հիմնէր փորձառութեան վրայ: Այս հիմամբ ալ ան Աստուծոյ գոյութիւնը պատճառի ու արդիւնքի հետեւանք կը նկատէր եւ բարոյականը թուաբանութեան ճշգրտութեան համագոր կը դասէր: Ան կը հաստատէր, որ կրօնքը պատճառաբանեալ պէտք էր ըլլար. ան կրնար պատճառէն ու փորձառութենէն գերիվեր ըլլալ, սակայն չէր կրնար հակասել պատճառին: 1695-ին Լոգ այս մասին կը գրէր իր *Քրիստոնէութեան իրաւացիութիւնը* երկին մէջ, ուր կ'ըսէր, թէ Աստուածաշունչը կը բովանդակէր պատճառականութիւնը գլոյ-անցնող պատգամ մը, որ հրաշքներով կը բացայայտուէր. սակայն ո՛չ միայն այս պատգամը, այլ նոյն իսկ զայն փոխանցող հրաշքը չէին կրնար պատճառականութեան հակասել: Լոգ անկեղծ քրիստոնէայ էր, սակայն խորհրդագագացութեան համակիր չէր: Ան կը բաւարարուէր ըսելով, թէ Յիսուս Մեսիան էր եւ անոր բերած բարոյական առաքինութիւնները գործադրելը պատճառաբանուած եւ համագոր էին լուսաւորեալ միտքի բնական ըմբռնումին:

Լոգ ջատագով էր նաեւ կրօնական հանդուրժողութեան: Ան կ'ըսէր, թէ կրօնքին միակ վաւերական զրահը պատճառականութիւնն էր: Ան նաեւ Անգլիոյ եւ Ամերիկայի քաղաքական մտածողութեան վրայ կ'ազդէր: Այս մարզին մէջ որոշ նրբութիւններով Լոգը կը կանխէին Հիւլօ Կրոթիոս (1583–1645), Թովմաս Հոպս (1588–1679) եւ Սամուէլ Փուֆընտորֆ (1632–1694): 1690-ին հրատարակած իր *Կատալարութեան մասին*

ուսումնասիրություններ գործին մեջ Լոզ կ'ըսեր, թե մարդիկ օժտուած էին կեանքի, ազատութեան եւ ինչքի բնական իրաւունքներով: Ասոնք ապահովելու համար կառավարութիւնը կը վայելէր զինք ընտրողներուն վստահութիւնը, ուր մեծամասնութեան կամքը պէտք էր իշխէր եւ երբ այդ կամքը խախտէր եւ մարդկային բնական իրաւունքները ոտնահարուէին, մարդիկ յեղափոխութեան դիմելու իրաւունք կը ստանային: Օրէնսդրական ու գործադիր իշխանութիւնները պէտք էր իրարմէ անջատուէին, եւ օրէնսդրականը գերիվեր պէտք էր նկատուէր: Ահաւասիկ այս կէտերով Լոզ մեծ ազդեցութիւն կ'ունենար անգլիական եւ ամերիկեան պետական կառոյցի կազմութեան մտածողութեան վրայ:

Միւս կողմէ՝ Շաֆթըսպըրիի իշխանաւոր Անտոն Աշլի-Գուփըր (1671–1713) իր *Մարդոց յատկանիշերը* երկով կը շօշափէր մարդկային բարոյականի հարցերը: Երբ Հոպս բարոյականին հիմքերը կը փորձէր պեղել մարդուն մեջ, ան կը յանգէր այն եզրակացութեան, որ մարդը միայն անձնակեղրոն արարած մըն էր: Իսկ Լոզի համար, երբ պատճառականութիւնը միայն Աստուծոյ օրէնքը կը յայտնաբերէր, ուրեմն՝ բարոյականը աստուածային հրահանգ մըն էր: Աշլի-Գուփըր կ'ըսէր, քանի որ մարդ անձնական իրաւունքներ եւ ընկերային յարաբերութիւններ ունէր, առաքինութիւնը կը կայանար այս երկուքին հաւասարակշռութեան մեջ: Այս ներդաշնակութիւնը կ'իրագործուէր ներքին «բարոյական զգացումով»: Աշլի-Գուփըրի համար ճիշդն ու սխալը կը սահմանուէին մարդկային բնութեամբ եւ ո՛չ Աստուծոյ կամքով: Այս պատճառով ալ նոյնիսկ ան, որ Աստուծոյ գոյութիւնը չէր ընդունէր, պարտաւոր էր իր բարոյական նկարագիրը անաղարտ պահել: Այս տեսակէտը նաեւ բարոյականին մեջ տիրական եղող վարձատրութեան ու պատիժի գաղափարը կը չէզոքացնէր եւ անաստուածն ու անբարոյականը իրարու համագօր չէր դասէր:

Գիտութեան եւ իմաստասիրութեան մեջ զարգացող այս տեսակէտները ԺԸ դարու Լուսաւորութեան ճանապարհը կը հարթէին: Լուսաւորութիւնը պատճառականութեան օրէնքը կը

տարածեր անհատական ու ընկերային կեանքին վրայ: Ինքնավարության, պատճառականության եւ ներդաշնակության անոր հիմնական սկզբունքները արդի աշխարհի մտածողության ու կեանքին վրայ մեծ ազդեցություն կը գործէին եւ քրիստոնէութիւնը կը դնէին այս նոր իրականութեան դեմ-յանդիման:

Բ. ԳԼՈՒԽ
ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ
ԱՄԵՐԻԿԱՆԵՐ ՄՈՒՏՔԸ

Քրիստոնեությունը հին աշխարհէն Ամերիկաներ կը բերուէր: Եւրոպական գաղութատիրութեան հետ Ամերիկաներ կը մտնէր եւրոպական քրիստոնեությունը եւս: Հարաւային Ամերիկա եւ Կեդրոնական Ամերիկա գաղթողները մեծ մասամբ կաթոլիկ ըլլալով՝ իրենց միատեսակ քրիստոնեությունը կը պարտադրէին տեղացի ժողովուրդներուն: Իսկ Հիւսիսային Ամերիկա գաղթող բազմատեսակ ժողովուրդներ հոն կրօնական խայտաբղէտ պատկեր ու հանդուրժողական ոգի կը պարզէին եւ կը նպաստէին կրօնական ազատութեան: Մակայն բոլոր Ամերիկաներու մէջ ալ եւրոպական քրիստոնեությունը կ'ազդուէր տեղական պայմաններէն: Մանաւանդ Հիւսիսային Ամերիկայի մէջ, երբ բազմաթիւ բողոքական յարանուանություններ իրենց եւրոպական մայր եկեղեցիներէն անկախութիւն ձեռք կը ձգէին, քրիստոնեական արանդություններ ամերիկեան եւ քանատական գոյն կը ստանային:

Հռոմէական կաթոլիկությունը կը հաստատուէր Կեդրոնական եւ Հարաւային Ամերիկաներ, երբ ասոնք կը գրաւուէին Սպանիոյ կողմէ: Եւրոպացի գաղթականներուն համար քահանաներ կը դրկուէին եւ նուիրապետական կարգեր կը ճշդուէին: Տեղացիներուն կաթոլիկ դարձը ընդհանրապէս կը վայելէր Սպանական թագաւորութեան նեցուկը, մինչ Պրագիլի պարագային՝ ան կը վայելէր Փորթուկալի թագաւորութեան, ֆրանչիսկեան, տոմինիկեան եւ յիսուսեան վանականներունը: Ասոնք բնիկ հնդիկներու ստրկութեան դէմ կը ծառանային եւ տեղական պայմաններուն համաձայն՝ կը սահմանէին միսիոնարական դրություններ, որոնք երկարատեւ ի զօրու կը մնային:

ԺՁ. դարու առաջին կէսին ֆրանչիսկեաններ կը գործէին Վենեզուելայի, Մեքսիքոյի, Փերուի, Պրագիլի եւ Արժանթինի

մէջ: ԺԶ. դարու աւարտին անոնք համայնքներ կը հիմնէին այսօրուան Նիու Մեքսիքոյի եւ Թէքսասի մէջ: 1770-ին անոնք միսիոնարական կեդրոններ կը հաստատէին Գալիֆորնիոյ մէջ, ուր իրենց գործունէութիւնը կէս դար կը ծաղկէր: Իսկ 1526-էն տոմինիկեաններ կը ծառայէին Մեքսիքոյի, Գոլոմպիոյ, Վենեզուելայի եւ Փերուի մէջ:

Յիսուսեաններու աշխատանքը աւելի գործուն կ'ըլլար: 1549-էն անոնք Պրագիլ կ'երթային եւ ապա Գոլոմպիա կ'անցնէին: 1568-ին Փերու եւ 1572-ին անոնք Մեքսիքո կ'երթային: ԺԷ. դարուն անոնք Էգուատորի, Պոլիվիոյ, Չիլիի եւ Փարակուէլի մէջ տարածուած էին: Այս նուիրեալ վանական միսիոնարներուն կը պարտինք Սպանական հռոմէական կաթողիկոսեան ներկայութիւնը յիշեալ երկիրներուն մէջ:

1551-ին Լիմայի եւ Նիու Մեքսիքոյի մէջ կը բացուէին համալսարաններ, որոնք կը դառնային նոր աշխարհի բարձրագոյն ուսումի ամենակարեւոր հաստատութիւնները: Սպանական տիրապետութեան շրջանին բնիկ ժողովուրդներու նախակրթական ուսումին անհրաժեշտ ուշադրութիւնը չէր տրուեր եւ անգրագիտութիւնը տիրական կը մնար:

1604-ին կը սկսեր կազմաւորուիլ ֆրանսական Քանատան՝ առաւելաբար կաթողիկ ազդեցութեամբ: Մանաւանդ յիսուսեաններ մեծ ջանք կը թափէին բնիկ հնդիկները դարձի բերելու: 1673-ին յիսուսեան միսիոնար Յակոբ Մարքէթ (1637–1675) Միսիսիփիին գիւտը կը կատարէր եւ Միսիսիփիի ձորին երկայնքին, մինչեւ Լուիզիանա, կը հաստատուէին միսիոնարական համայնքներ, որոնք սակայն մնայուն ներկայութիւն չէին դառնար: Բնիկ ցեղերը երկրագործական համայնքներ չէին ուզեր կազմել եւ ժանտախտի, այլոլամոլութեան ու ներցեղային պատերազմներու զոհ կը դառնային: Նիու Ֆրանսայի եկեղեցին ներգաղթով կ'աճէր եւ ֆրանսական Քանատայի Հռոմէական կաթողիկոսեան կերտիչը կը հանդիսանար Քուէպլէի առաջին եպիսկոպոս Ֆրանսուա Լաւալը (1623–1708):

Մինչ նոր աշխարհի սպանական եւ ֆրանսական գաղութները կաթողիկոսեամբ կը յատկանշուէին, անգլիական

գաղութները կ'ունենային բազմաթիւ եկեղեցական համայնքներ: Անգլիոյ եկեղեցին 1607-ին Վրճինիոյ մէջ արմատ կը նետէր եւ գաղութատիրական ամբողջ ժամանակաշրջանին պաշտօնապէս գրանցուած Եկեղեցի կը դառնար: Մակայն մնայուն եպիսկոպոս չունենալը անոր առաքելութիւնը կը նուազեցնէր, երբ աշխարհական պատասխանատուներ տեղական ազնուականութեան կամքին համաձայն կը կառավարէին ծուխերը: Լոնտոնի եպիսկոպոսը միայն անուանական հեղինակութիւն ունէր գաղութներուն վրայ եւ զանոնք կառավարող ներկայացուցիչներ կը նշանակէր: Այսպիսի ներկայացուցիչ մըն էր Յակոբոս Պլէր (1656–1743), որ 1685-էն մինչեւ իր մահը Վրճինիոյ մէջ կը ծառայէր եւ 1693-ին Ուիլերմ ու Մարի գոլէճը կը հիմնէր: Այս ներկայացուցիչները իսկական հեղինակութիւն չունէին, եւ անարժան հոգեւորականներ մեծ վնաս կը հասցընէին Եկեղեցիի առաքելութեան: Առաւել, բազմաթիւ ծուխեր իրարմէ հեռու էին եւ անոնց կարիքներուն հասնող բաւարար հոգեւորականներ չկային: Այս պատճառով ալ Անգլիոյ եկեղեցին չէր կրնար պէտք եղած հեղինակութիւնը բանեցնել եւ զանազան հակադիր համայնքներ կը կազմուէին:

Վրճինիոյ հիւսիսը գտնուող Մէրիլընտը 1632-ին անգլիացի հռոմէական կաթոլիկ Լորտ Պալթիմորին փոխանցուած առաջին գաղութը կը դառնար: Պալթիմոր իր հաւատացեալ հետետորդներուն անգլիական հովանին վայելող ապահով կայք շնորհելու համար կրօնական հանդուրժողութիւն կը հաստատէր: 1691-ին Մէրիլընտ թագաւորական գաղութ կ'ըլլար, եւ Թովմաս Պրէյի (1656–1730) ջանքերուն շնորհիւ՝ Անգլիոյ եկեղեցին 1702-ին պաշտօնապէս կը գրանցուէր: Պրէյի անունը նաեւ իրաւամբ կ'առնչուէր 1699-ին իր հիմնած Քրիստոնէական գիտութեան տարածումի ընկերակցութեան եւ 1701-ին իր հիմնած Աստուածաշունչի օտար տեղեր տարածումի ընկերակցութեան: Մակայն Անգլիոյ եկեղեցին չէր յաջողէր ժողովուրդին մեծամասնութիւնը ներգրուել եւ քուէյգրրներ, երիցականներ ու մկրտչականներ յարատեւ կը տարածուէին: Իսկ

հռոմեական կաթոլիկներ այլ գաղութներու մէջ օրինական արգելքներու կը բախէին:

1689-էն ետք Անգլիոյ եկեղեցին մեծ ջանք կը գործադրէր ամեն տեղ ներկայ ըլլալու: 1706-ին ան նախ ձեռք կը ձգէր Մէրիլընտը եւ ապա 1715-ին՝ Հարաւային Գարոլայնան եւ Հիւսիսային Գարոլայնան: Սակայն բողոքական զանազան յարանուանութիւններ եւս կ'աճէին Անգլիոյ եկեղեցիին զուգահեռ եւ բոլորն ալ կ'օգտուէին Աստուածաշունչի օտար տեղեր տարածումի ընկերակցութեան բարիքներէն: Անգլիոյ եկեղեցին ճորճիա կը ներթափանցէր 1733-ին եւ պաշտօնապէս կը գրանցուէր 1758-ին: Կրօնական հանդուրժողութենէն օգտուելով՝ հոս եւս կը հաստատուէին բողոքական զանազան յարանուանութիւններ:

1620–1638 Անգլիայէն ժամանած Անգլիոյ եկեղեցիի հաւատացեալներ եւ մաքրակրօններ Նիու Անգլիոյ շրջանը կը հաստատուէին եւ Փլիմութի, Մեսչուսէցի, Գենեթիզըթի ու Նիու Հելվընթի գաղութները կը հիմնէին: Մեսչուսէցի առաջնորդներուն նախաձեռնութեամբ եւ բոլոր գաղութներուն մասնակցութեամբ աշխատանք կը տարուէր Աստուածաշունչի օրէնքին վրայ հաստատուած հասարակապետութիւն հիմնելու: Ասոնք աւելի քան կէս դար կը ճգնէին իրենց վաճառականական ընկերութեան օրինագիծը նահանգային սահմանադրութեան վերածել եւ աստուածապետական աստուածաշնչական հասարակապետութիւն հիմնել: Հաւատալով, թէ իրենց պատուելիները ճիշդ ըմբռնած էին Աստուածաշունչը, անոնք 1636-ին Հարվըրտ գոլէճը կը բանային, որպէսզի ուսեալ ղեկավարներու բնաւ կարիք չունենային: Առաւել, յատուկ ճիգ կը գործադրէին բնիկ հնդիկները դարձի բերելու: Յովհաննէս Էլիոթ (1604–1690) 1649-ին Անգլիոյ մէջ կը հիմնէր Աստուածաշունչի Նիու Անգլիոյ մէջ տարածումի ընկերակցութիւնը, որ առաջին միսիոնարական ընկերակցութիւնը կը հանդիսանար: Նիու Անգլիոյ ժողովրդային ղեկավարութիւն ընդունող եկեղեցիներու հաւատացեալները Մեծն Բրիտանիոյ իրենց մաքրակրօն եղբայրներուն ու քոյրերուն աստուածաբանութեան կը հետեւէին եւ

կ'ընդունեին Ուեսթմինսթերի հաւատքի հանգանակը: Իրենց գոյութեան առաջին դարուն անոնք առաւելաբար վարչական տարակարծութիւններ կ'ունենային իրարու հետ, քան վարդապետական: 1631-ին նախ Մեսչուսէցի եւ ապա միւս մաքրակրօն գաղութներուն մէջ ժողովրդային ղեկավարութիւնը պաշտօնապէս կ'որդեգրուէր եւ կը փորձէր բոլոր այլախոհները միաւորելով կրօնական միաձեւութիւն մտցնել: 1662–1665-ին Գենեթիզըթի ու Նիու Հէյվընի, 1680-ին Նիու Համշիրի եւ 1691-ին Մեսչուսէցի ու Փլիմութի մաքրակրօնները ժողովրդային ղեկավարութեան դրութեան որդեգրումով կը միաւորուէին:

Սակայն այլ այլախոհ հոսանքներ երեւան կու գային: Աննշան թիւով մկրտչականներ սկիզբէն իսկ գոյութիւն ունէին Մեսչուսէցի մէջ եւ հակառակ կառավարութեան դրած արգելքներուն՝ անոնք 1665-ին Պոսթընի մէջ եկեղեցի մը կը հիմնէին եւ կամաց-կամաց Նիու Անգլիոյ մէջ կը տարածուէին: Քուէզըրներ 1656-ին Մեսչուսէց կը հասնէին եւ մաքրակրօններուն կը հակադրուէին: Անգլիոյ թագաւորութիւնը Անգլիոյ եկեղեցիին ի նպաստ քայլերու կը դիմէր եւ 1687-ին, Պոսթընէն սկսելով, Անգլիոյ եկեղեցիի արարողակարգը կը խարսխուէր Նիու Անգլիոյ մէջ: 1691-ին որդեգրուած նոր օրինագիծը կրօնական փոքրամասնութիւններուն սահմանափակ հանդուրժողութիւն կը սահմանէր, սակայն եկեղեցիներու սեփականութիւններուն առնչութեամբ հարցեր կը յարուցուէին: 1727–1729-ին Մեսչուսէցի եւ Գենեթիզըթի մէջ տուրքէ զերծ կացուցումի արտօնութիւն կը շնորհուէր կարգ մը ժողովրդային ղեկավարութիւնը որդեգրած կրօնական խմբակներուն:

Միայն արտաքին ազդակներ պատճառ չէին ըլլար, որ մաքրակրօններու սրբազան հասարակապետութիւն հաստատելու յոյսերը ի դերեւ ելլէին, այլեւ անոնց զաւակներն ու թոռները նոյն եռանդը ցոյց չէին տար: Սկզբնական իտէալը ընտրեալ անդամներու, սուրբերու եկեղեցի ըլլալն էր, որ 1657–1662-ին կը զիջէր աւելի համեստ ակնկալութիւններու: ԺԷ դարու աւարտին, Հարվըրտ գոլէճի մէջ ազատական գաղափարներ կը յայտնուէին եւ 1699-ին Պոսթընի Պրաթըլ փողոցի

ծայրայեղ եկեղեցիի հիմնադրութեամբ մաքրակրօններու նախնական հաւատքին շեղումը կը պարզուէր: Կիսաերիցականութեան հակում ունեցող Գենեթիզըթի ժողովրդային ղեկավարութեան դրութեան հետեւողները, Մեսէչուսէցի այս հոսանքներէն յուսախաբ դառնալով, որպէս հակազդեցութիւն՝ 1701-ին կը հիմնէին Ելլ գոլէճը: Առաւել՝ Գենեթիզըթի մէջ երեւան կու գային մկրտչական, քուէյզըր եւ ռոճըրական բնիկ շաբաթապահ այլախոհներ: 1707-ին եպիսկոպոսականներ Սթրաթֆորտ կը հաստատուէին, եւ ժողովրդային ղեկավարութեան դրութեան հետեւողներու առաջնորդներէն փոքր խումբ մը, Ելլ գոլէճի նախագահ Տիմոթէոս Գաթլըրի (1684–1765) եւ ապագայի Գոլումպիա համալսարանի առաջին նախագահ Սամուէլ Ճանսընի (1696–1772) գլխաւորութեամբ, կը միանար անոնց: Անգլիոյ եկեղեցիի աճումը մեծ մասամբ տեղի կ'ունենար Աստուածաշունչի օտար տեղեր տարածումի ընկերակցութեան օժանդակութեամբ, որ իր միսիոնարներէն մեծ թիւ մը գաղութներ կը դրկէր:

Յատկանշական էր Նիու Անգլիոյ Ռոտ Այլընտի գաղթականութեան պարագան: 1636-ին Ռաճըր Ուիլերմզ (1604?–1683), Մեսէչուսէցի եկեղեցիներուն հետ աստուածաբանական տարակարծութիւններ ունենալով, կը հաստատուէր Փրաւիտընս: Ռոտ Այլընտ կը դառնար կրօնական ազատութիւն որոնողներուն ապաստանարանը: 1639-ին Ամերիկայի առաջին Մկրտչական եկեղեցին Ռոտ Այլընտի մէջ կը հիմնուէր: Ուիլերմզ կարճ ժամանակ այս եկեղեցիին անդամ կը դառնար եւ յետոյ ճշմարիտ Եկեղեցիի փնտռութիւն կը ձեռնարկէր: Հակառակ բազմաթիւ անձնական հարցերու՝ Ռոտ Այլընտի կրօնական ազատութիւնը կը շարունակէր ի գօրու մնալ: Մանաւանդ քուէզըրները իրենք զիրենք շատ ապահով կը զգային հոս: Ուիլերմզ թէեւ չէր համակրէր ասոնց, սակայն ուժ չէր բանեցնէր ասոնց դէմ:

Թէեւ անգլիզանութիւնը հարաւային նահանգներու մէջ եւ ժողովրդային ղեկավարութեան դրութեան հետեւողները Նիու Անգլիոյ մէջ, ի բաց առեալ Ռոտ Այլընտը, պաշտօնապէս

կը գրանցուէին, սակայն այլախոհ խումբեր եւս կը գործէին թէ՛ հարաւային եւ թէ՛ հիւսիսային շրջաններուն մէջ: Կեդրոնական գաղութներու մէջ կրօնական այլազանութիւնը սկիզբէն իսկ տիրական կը դառնար: 1624-ին հոլանտացի վաճառականներ Նիու Հոլանտա կը հաստատուէին: 1628-ին առաջին հոլանտական Բարեկարգեալ եկեղեցին կը հիմնուէր Մենհէթըն կղզիի Նիու Ամսթերտամ քաղաքին մէջ եւ եւ կը դառնար Ամերիկայի երիցական թեքում ունեցող առաջին եկեղեցիներէն մէկը: 1584-ին ծնած Յովհաննէս Միքայէլոս, գալով Հոլանտայէն, կը դառնար անոր առաջին հովիւր: 1644-ին այս եւ այլ Բարեկարգեալ եկեղեցիներ պաշտօնապէս կը գրանցուէին, սակայն հոս ալ լուտերականներ, մենոնայթներ, անգլիացի մաքրակրօններ եւ հռոմէական կաթոլիկներ կը գտնուէին: Կառավարիչ Պետրոս Սթայվեսենթի (1647–1664) օրերուն փորձ կը կատարուէր միայն Հոլանտայի Բարեկարգեալ եկեղեցիի պաշտամունքը արտօնելու, սակայն երիցականութեան հակում ունեցող մաքրակրօններուն ալ որոշ դիրտութիւններ կը շնորհուէին: Մանաւանդ քուէյզըրներուն վրայ ճնշում կը բանեցուէր: 1664-ին հոլանտական ազդեցութիւնը կը դադրէր, երբ գաղութը որպէս Նիու Եորք կը փոխանցուէր անգլիացիներուն. սակայն Եպիսկոպոսական եկեղեցին հարաւային գաղութներուն մէջ չէր յաջողեր տիրական դառնալ, որովհետեւ այլ յարանուանութիւններ եւս աճ կ'արձանագրէին: 1709-ին գերման բարեկարգեալներու խումբ մը Նիու Եորք կը ժամանէր:

Քուէյզըրները առաջին անգամ որպէս միսիոնարներ Ամերիկա կը հասնէին 1656-ին եւ գրեթէ ամեն տեղ հալածանքի կ'ենթարկուէին. սակայն շուտով հանդուրժողութեան կ'արժանանային եւ կը տարածուէին: 1672-ին Գէորգ Ֆոքսի գաղութներ տուած այցելութիւնը զիրենք առաւել կ'արմատացնէր: Քուէյզըրներու աճումին գլխաւոր տարածքը միջին գաղութները կը դառնային: Անոնք առաջին անգամ պաշտօնապէս կրօնական ազատութիւն կը վայելէին 1677-ին Արեւմտեան Ճրրգիի մէջ: Արեւելեան Ճրրգին սկզբնապէս անգլիացի մաքրակրօն երիցականներով, հոլանտացի բարեկարգեալներով եւ սկոտիացի

երիցականներով բնակեցուած էր, սակայն պահ մը քուէ-
գրրներու ձեռքը կ'անցներ եւ յետոյ երիցականներուն կը զիջէր:
1702-ին, երբ երկու ճըրզիները կը միանային եւ կը կազմէին
Նիու ճըրզին, քուէգրրներու ազդեցութիւնը արդէն չբացած էր:

1681-ին, երբ քուէգրրներ Փենսիլվանիա կը հաստատ-
ւէին, կրօնական ազատութիւն կը վայելէին եւ բազմաթիւ
եկեղեցիներ հոս կ'ապաստանէին: Ո՛չ մէկ գաղութ Փենսիլ-
վանիոյ չափ կրօնական այլազանութիւն ունէր: Անգլիայէն եւ
Ուելլզէն մկրտչականներ բոլոր գաղութներէն աւելի հոս ուժեղ
ներկայութիւն կը դառնային: 1707-ին ներգաղութային հար-
ցերու մէջ մեծ դերակատարութիւն ունենալու կոչուած Ֆիլա-
տելֆիոյ մկրտչական ընկերակցութիւնը հոս կը կազմուէր:
Գերմանիայէն եւ Զուիցերիայէն մեծ թիւով մենոնայթներ
Փենսիլվանիա կու գային: Ասոնց կը հետեւէին Գերմանիայէն
եկող մկրտչականները: ԺԸ. դարուն Գերմանիայէն մեծաթիւ
լուտերականներ կը ժամանէին: Ամերիկա եկող առաջին
լուտերական խումբերը Շուէտէն էին, որոնք Տելլուէր գետի
ափին գաղութ կը հաստատուէին. ասոնց կը յաջորդէին Նիու
Եորքի մէջ հաստատուող հոլանտացի լուտերականները:
Սակայն լուտերական ամենէն ակնառու ներկայութիւնը Փեն-
սիլվանիոյ մէջ էր: Գերման բարեկարգեալներ եւս հոս կը
հասնէին եւ կը վայելէին հոլանտացի բարեկարգեալներու
առաջնորդներուն հովանին:

ԺԸ. դարու սկիզբը կրօնական, տնտեսական եւ
քաղաքական մեծ նշանակութիւն ունեցող սկոտիացի-իրլան-
տացի գաղթականներ կը հասնէին գրեթէ բոլոր գաղութները:
Այս սկոտիացի-իրլանտացիները Հիւսիսային Իրլանտա հաս-
տատուած երիցական սկոտիացիներ էին: Ասոնց ղեկավարն
էր Ֆրանսիս Մաքեմի (1658–1708), որուն ջանքերով 1706-ին
Ֆիլատելֆիոյ մէջ կը կազմուէր ամերիկեան առաջին Երիցա-
կան եկեղեցիներու ցանցը: Անգլիացի մաքրակրօն երիցակա-
ններ, կալվինական սկոտիացիներ ու սկոտիացի-իրլանտա-
ցիներ Երիցական եկեղեցիներու մէջ իրարու հետ պաշտա-
մունք կը կատարէին: Սկոտիացի-իրլանտացիներ եւս գրեթէ

բոլոր գաղութներու մէջ զգալի ներկայութիւն կը դառնային եւ մինչեւ արեւմտեան Վրճինիա, Հիւսիսային Գարոլայնա, Քենթաքի, Թենըսի, Հարաւային Գարոլայնա եւ Ալապամա կը հասնէին: Ասոնց աճը այնքան արագ տեղի կ'ունենար, որ Երիցական եկեղեցիներու ցանցին կազմաւորումէն ետք կը գոյացնէին սինոտ մը, որուն կ'անդամակցէին Լոնկ Այլընտի, Նիու Գէւըլի եւ Ֆիլատելֆիոյ եկեղեցիներու ցանցերը:

ԺԸ. դարուն եպիսկոպոսականներ կը գործէին միջին գաղութներու մէջ եւ կը տարածուէին շնորհիւ Աստուածաշունչի օտար տեղեր տարածումի ընկերակցութեան միսիոնարներուն:

ԺԸ. դարու կէսէն առաջ գրեթէ բոլոր գաղութներու մէջ կրօնական զանազանութիւնը ակներեւ էր, եւ ո՛չ մէկ յարանուանութիւն տիրական էր: Թէեւ կարգ մը յարանուանութիւններ տուեալ գաղութի մը մէջ տիրական էին, սակայն բոլոր գաղութները համադրող տիրական յարանուանութիւն մը գոյութիւն չունէր: Ամերիկայի մէջ գտնուող եկեղեցիները ներածուած էին: Եւրոպայի մէջ կազմուած եւ Ամերիկա փոխադրուած եկեղեցիները նոր պայմաններուն յարմարելու դժուարութիւն կ'ունենային: Հին երկիրին մէջ գործուն անդամներ նոր երկիրին մէջ չէին կրնար նոր կացութեան հետ ներդաշնակիլ: Եկեղեցիներ իրենց անդամներուն եռանդին նուազումով եւ նոր այլախոհներու երեւան գալով դժուար կացութեան կը մատնուէին: Աւելին՝ պատճառականութեան ազդեցութիւնները զգալի կը դառնային եկեղեցիներուն մէջ եւ հակակրօնական տրամադրութիւնը կը զարգանար: Թէեւ գաղթականութեամբ եկեղեցիներ կ'աճէին, անկրօնութիւնը համեմատաբար աւելի կը շատնար:

ԺԸ. դարու քանատական կեանքը Քանատան գրաւելու շարունակական պայքար կ'ըլլար Ֆրանսայի ու Անգլիոյ միջեւ, եւ վերջապէս կը յաղթէր Անգլիան: 1713-ին՝ Աննա թագուհիի պատերազմի աւարտին, Եւրոպայի մէջ ծանօթ որպէս «սպանական գահին տիրելու պատերազմ», թէեւ Ֆրանսան Հատսըն Պէյը, Նիուֆընլանտն ու Նովա Սգոշիոյ մեծ մասը կը

զիջէր Անգլիոյ, սակայն 1749-ին, երբ Հալիֆաքսը կը հիմնուէր, բողոքական համայնքներ մնայուն կայք կը հաստատէին հոս: Յաջորդ տասնամեակներուն կը հիմնուէին անգլիգան, լութերական, ժողովրդային դեկավարութեան դրութեան հետեւող, երիցական, մեթոտական եւ մկրտչական եկեղեցիներ: Մինչ այդ Ֆրանսական եւ հնդկական պատերազմի ընթացքին, ծանօթ նաեւ որպէս «եօթնամեայ պատերազմ», Քուէպէք քաղաքը եւ ապա Մոնթրէալը կը գրաւուէին անգլիացիներուն կողմէ: 1763-ի Փարիզի դաշինքով՝ Ֆրանսա Հիւսիսային Ամերիկայի իր բոլոր տարածքները կը կորսնցնէր: Քուէպէք նահանգը անգլիականացնելու ճիգերը կը դադրէին, երբ 1774-ին անգլիական խորհրդարանը ֆրանսացի քանատացիներուն կիսաինքնավար իշխանութիւն ունենալ կ'արտօնէր, հռոմէական կաթոլիկներուն հպատակութիւն ու հասարակական պաշտօն վարել կը շնորհէր եւ Եկեղեցիին իրաւասութիւն կու տար ժողովուրդէն տասանորդ գանձելու: Քուէպէք տիրականօրէն կաթոլիկ կը մնար, սակայն միւս նահանգներուն մէջ թէ՛ ֆրանսախօս եւ թէ՛ անգլիախօս կաթոլիկներ կը պարտաւորուէին գոյակցիլ ամբողջ Հիւսիսային Ամերիկան բնորոշող կրօնական բազմազանութեան հետ:

Գ. ԳԼՈՒԽ
ԱՍՏՈՒԱԾԱՅՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՆՈՐ
ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ ԵՒ ՍԿԵՊՏԻԿՈՒԹԻՒՆԸ²

ԺԷ. դարու աւարտի եւ ԺԸ. դարու սկիզբի ամենա-
յատկանշական երեւոյթներէն մին Լուսատրութեան ոգիին
տարածումով կրօնական Պատճառականութեան³ զարգացումն
էր: Նիւթոնեան յղացքին համաձայն՝ տիեզերքը օրէնքներու
համակարգ ունէր, որ «առաջին պատճառին» կողմէ հաս-
տատուած էր եւ մեքենականօրէն կը գործէր: Երկարատեւ
քաղաքակրթութիւններու եւ այլ կրօններու հետ շփումը
մարդոց հորիզոնը կ'ընդլայնէր եւ քրիստոնէական մշակոյթը
անդրանցող այլ մշակոյթներու դէմ-յանդիման կը դնէր: Յով-
հաննէս Լոգի համար ճշմարտութեան փորձաքարը պատճա-
ռականութիւնն էր: Ան բարոյականութիւնը կրօնքին հիմնական
նպատակը կը համարէր: Կրօնական պատճառականութեան
զարգացումը արդիւնք էր կրօնական պատերազմներու հան-
դէպ բացայայտուած բարոյական կեցուածքին: Պատճառակա-
նութիւնը անգլիական կրօնական մտածողութեան մէջ մեծ
դերակատարութիւն կ'ունենար: Մեղմ ասած, ան որպէս «գեր-
բնականութեան պատճառականութիւն» կը դրսեւորուէր, սա-
կայն քրիստոնէական աստուածայնութեան⁴ կը վերածուէր,
մինչ անոր ծայրայեղական թելը որպէս հակաքրիստոնէական
աստուածայնութիւն կազմակերպուած կրօնքին դէմ կ'ելլէր:

² Սկեպտիկութիւն = Կասկածապաշտութիւն (Ն.)

³ Ըստ պատճառականութեան՝ մտածումն ու արարքը պատճառէն կը
մղուին. գիտութեան եւ ճշմարտութեան հիմնական աղբիւրները պատճառն
ու տրամաբանութիւնն են. մարդը պէտք է պրպտէ երեւոյթներուն ետին
գտնուող ճշմարտութիւնը (Ն.):

⁴ Աստուածայնութիւնը Աստուծոյ կը հաւատայ փոխան յայտնութեան
պատճառին վրայ հիմնուելու: Ան կ'ըսէ, թէ Աստուած տիեզերքը ընթացքի
մէջ դրած է եւ այլեւս անոր հոլովոյթով չի զբաղիր (Ն.):

Աստուածայնութեան ռահվիրան էր Եդուարդ Հրրպըրթ Չերպըրիցի (1583–1648), որ 1624-ին ամբողջ մարդկութեան կողմէ ընդունելի բնական կրօնքին հիմնական եւ պարզ կէտերը կը նկատէր Աստուծոյ գոյութիւնը, Աստուծոյ մարդուն կողմէ պաշտելի ըլլալը, վաւերական ծառայութեան առաքինութիւնը, սխալ գործելէ ետք ապաշխարութիւնը եւ մահէն ետք վարձատրութիւնն ու պատիժը: Սակայն ԺԷ. դարուն սակաւաթիւ պատճառականներ այս բոլորը կ'ընդունէին: Լոգ, քրիստոնէական յայտնութիւնը ընդունելով հանդերձ, կը պնդէր, թէ ինչ որ յայտնուած էր՝ հիմնականօրէն պարզ եւ պատճառաբանեալ էր: Գրեթէ նոյն ըմբռնումը կը բանաձեւէր «գերբնականութեան պատճառականութեան» հաւատացող նշանաւոր քարոզիչ եւ Գենթըրպըրիի արքեպիսկոպոս Յովհաննէս Թիլոթսընը (1630–1694): Ան կ'ըսէր, թէ բնական հաւատքը յայտնութեամբ պէտք էր պսակուէր, այնպէս ինչպէս բարոյականը կը պսակէր աստուածայինը: Սակայն Յովհաննէս Թոլանտ (1670–1722), աստուածային յայտնութեան սահմանափակ տեղ տալով հանդերձ, ամբողջական աստուածայնութեան կը յանգէր եւ 1696-ին հրատարակած իր *Քրիստոնէութիւնը խորհրդաւոր չէ* գիրքով կը նախաձեռնէր Անգլիոյ մէջ աստուածայնութեան վիճարկումին: Յայտնութեան հաւատացողներ կ'ըսէին, թէ մարգարէներ եւ հրաշքներ կը հաստատեն զայն: Սակայն 1713-ին Անտոն Գոլինգ (1676–1729) լոյս կ'ընծայէր իր *Ազատ մտածողութեան մասին* երկը եւ մարգարէութիւնը անընդունելի կը համարէր: Մինչ այդ Թովմաս Վուլսթըն (1669–1733) կը քննադատէր հրաշքները: 1730-ին Մատթէոս Թինտալի (1657–1733) *Քրիստոնէութիւնը ստեղծագործութեան չափ հին է* երկը, յաճախ աստուածայնութեան սուրբ գիրքը նկատուած, շրջանառութեան մէջ կը դրուէր: Թինտալ աստուածայնութեան գլխաւոր երեւոյթները կ'ուրուագծէր: Ան կ'ըսէր, թէ ինչ որ առանց պատճառի կը գիտնայինք, միայն հաւատքով եւ առանց փաստի ըմբռնելի էին: Նախապաշարումէն ձերբազատուիլը ազատութիւն կը բերէր. հետեւաբար միայն պատճառաբանող ու տրամաբանող մտածողը ազատ մտածող էր: Մարդկութեան

մեծագոյն թշնամիները զայն նախապաշարումի մէջ պահողներն էին եւ ասոնց գլխաւոր տիպարները ամեն տեսակի «քահանաներն» էին: Յայտնութեան մէջ ինչ որ արժէք էր՝ արդէն իսկ բնական պատճառաբանեալ կրօնքով մարդերուն տրուած էր. արդ, ինչ որ քրիստոնէութեան մէջ արժէք էր՝ «ստեղծագործութեան չափ հին էր»: Այն ինչ որ այսպէս ասած «յայտնութեան» մէջ պատճառականութեան համար մութ էր, նախապաշարում էր եւ որպէս այդպիսին՝ անարժէք էր: Հրաշքները յայտնութեան վաւերական վկաներ չէին, որովհետեւ անոնք ինչ որ կը բացայայտէին, երբ պատճառականութեամբ հասանելի չէին, հետեւաբար կամ մակերեսային էին եւ կամ ալ անարգանք էին Արարիչին, որ կատարեալ մեքենական օրէնքներով ամեն բան կարգաւորած էր աշխարհի մէջ եւ այլեւս անոր ընթացքին չէր խառնուեր: Այնպէս կը թուէր, թէ աստուածայնութիւնը պատմական քրիստոնէութիւնն ու անոր հեղինակաւոր յայտնութիւնը քանդել կը սպառնար: Ան անարդար կերպով որպէս անաստուածութիւն կը դատապարտուէր, որովհետեւ անոր ջատագովները պարզապէս կը փորձէին կրօնքը նախապաշարումէն ձերբազատել եւ զայն իր նախնական պատճառական պարզութեան ու բիրեղութեան վերադարձնել:

Երբ յետադարձ ակնարկ նետենք աստուածայնութեան վրայ, յստակ կը դառնան անոր տկար կողմերը: Անոր ջատագոված նախնական, տիեզերական եւ պատճառաբանեալ կրօնքը այնքան երեւակայական էր, որքան ԺԸ. դարու չչփացած մանուկի մը նախնական եւ իտէալական ընկերային եւ քաղաքական վիճակը: Այն տեսակէտը, թէ ինչ որ բնական էր՝ ճիշդ էր, դատարկ լաւատեսութիւն էր: Աստուածայնութիւնը բնաւ գաղափար չունէր կրօնքի պատմական հոլովոյթէն: Անոր Աստուածը հեռաւոր Աստուած մըն էր, որ մասնաւորաբար բարոյական կարգ մը կրօնական սկզբունքներ սահմանելէ եւ սքանչելի մեքենական կարգաւորութիւն հաստատելէ ետք, այլեւս ընելիք չունէր: Հակառակ այն իրողութեան, որ աստուածայնութիւնը ինքզինք միայն ինքնագոյ ճշմարտութեան վրայ խարսխուած կը յայտարարէր, ան հաւատքի որոշ

իմացում կը դրսևւորէր: Այս բոլորով հանդերձ, աստուածայնութիւնը բարոյական գիտակցութեան եւ մարդասիրական մտահոգութեան կը նպաստէր:

Հակառակ այն իրողութեան, որ աստուածայնութիւնը պաշտպանողները սահմանափակ կարողութեամբ անձեր էին, բազմաթիւ մարդեր կը պատասխանէին անոր բերած մարտահրաւերներուն եւ մինչեւ որոշ տեղ անոր առաջադրած աշխատակարգերը օգտագործելով՝ տարբեր եզրակացութիւններու կը յանգէին: Ասոնցմէ ոմանք կտրականօրէն կը մերժէին աստուածայնութիւնը՝ ըսելով, որ ան կրօնական մարզին ո՛չ մէկ նպաստ կը բերէր: Ասոնցմէ էր Ուիլլեմ Լօ (1686–1761), որ 1732-ին Թինսալին կը պատասխանէր իր *Պատճառին պարագան* երկով: Լօ կ'ըսէր, թէ պատճառը ո՛չ միայն կրօնքին մէջ ճշմարտութիւն չէր գտներ, այլեւ մեր կիրքերու անկարգութիւններուն պատճառն էր եւ մեր սիրտերը կը փտեցնէր: Մարդուն հասողութենէն վեր է Աստուած ըմբռնելը: Աստուծոյ կամքը իմաստութիւն է եւ իմաստութիւնը անոր կամքն է: Անոր բարութիւնը տրամաբանութեան չի հնազանդիր:

Թէեւ աստուածայնութեան անուղղակի պատասխան մըն էր, սակայն ըստ իրեն՝ բոլոր անաստուածութիւնները խորտակող իմաստասիրութիւն մըն էր Գեորգ Պըրքլիի (1685–1753) կեցուածքը: Ան ամերիկացի հնդիկները քրիստոնէայ դարձնելու համար կը փորձէր միսիոնարական գոլեճ մը հիմնել Պերմուտայի մէջ, որոշ ատեն Ռոտ Այլընտ կ'ապրէր եւ 1734-ին Իրլանտայի Գլոբըն քաղաքին եպիսկոպոսը կ'ըլլար: Պըրքլի կ'ըսէր, թէ միայն միտքն ու գաղափարները գոյութիւն ունէին: Մարդեր նիւթին գիտութեան կը հասնին միմիայն մեր միտքերուն վրայ արձանագրուած տպաւորութեամբ, եւ որովհետեւ նմանը միայն իր նմանին վրայ կրնայ ազդել, մեր միտքերը միայն ուրիշ միտքերով կ'ազդուին: Որովհետեւ գաղափարները տիեզերական ու շարունակական են, անոնք արդիւնքն են մեր միտքին վրայ ազդող տիեզերական, յաւիտենական եւ շարունակական միտքի մը: Այս միտքը Աստուած է, եւ մեր բոլոր գաղափարները իրմէ կու գան: Սակայն գաղափարները միայն

մեր միտքին մեջ գոյութիւն չունին: Այն ինչ որ «բնութիւն» կը կոչենք, աստուածային միտքին մեջ գոյութիւն ունեցող գաղափարներու շղթայ մըն է, որ յստակ եւ շարունակական կարգ-կանոնով մեր միտքերուն մեջ տպաւորուած է, թէւ անոնց իրական ըլլալը միայն մեր միտքին մեջ ըմբռնողութիւն է: Մերժելով նիւթին իրական ըլլալը՝ Պըրքլի կը ձգտէր քանդել աստուածայնութեան այն ուսուցումը, թէ աշխարհը հսկայ մեքենականութիւն մըն է, սքանչելի ժամացոյց մը՝ իր ամենագէտ Արարիչին կողմէ ստեղծուած, որ այլեւս անոր հետ կապ չունի: Ան այս մէկը կը փոխարինէր տիեզերական շարունակական հոգեւոր գործարանաւորութեամբ: Թէւ Պըրքլի այս տեսակէտը իմաստասիրական շրջանակներու մեջ մեծ յարգանք կը վայելէր, սակայն ոչինչ կ'ըսէր պարզ մարդուն:

Թէւ իմաստասիրականօրէն այնքան ալ մասնայատուկ եւ մնայուն նպաստ չէր բերէր, սակայն իր օրերուն աւելի համբաւաւոր էր Յովսէփ Պաթլըրի (1692–1752) գործը: Ան երիցական էր եւ ապա Անգլիոյ եկեղեցիին կը միանար եւ 1738-ին Պրիսթըլի ու 1750-ին Տըրհամի եպիսկոպոս կը դառնար: 1736-ին լոյս տեսած անոր *Կրօնքին փոխաբերութիւնը* երկը ինամեալ աշխատանք մըն էր: Ան աստուածայնութեան ջատագովներուն կը պատասխանէր՝ ըսելով, թէ Աստուած գոյութիւն ունի, բնութիւնը ճշդուած կարգով հեզասահօրէն կը շարժի եւ մարդկային ծանօթութիւնը սահմանափակ է: Աստուած է բնութեան Արարիչը. եթէ նոյն բարդութիւնները կը դիմագրաւենք բնութիւնը հասկնալու համար, նոյնը կը համապատասխանէ նաեւ յայտնութեան եւ այս կը հաստատէ, թէ երկութիւն ալ Արարիչը նոյնն է: Անոնց դրական երեւոյթներն ալ մեզ նոյն եզրակացութեան կը յանգեցնեն: Անմահութիւնը վաւերական կարելիութիւն մըն է, որովհետեւ մեր ներկայ երջանկութիւնն ու դժբախտութիւնը մեր վարքէն կախում ունին, հաւանաբար ապագան ալ նոյնը պիտի ըլլայ: Ըստ Պաթլըրի՝ ամեն մարդ փորձութեան մեջ կը գտնուի իր կեանքի ներկայ հանգրուանին եւ հաւանաբար ան նաեւ իր ապագայ ճակատագիրին փորձութեան մեջը կը գտնուի: Մեր սահմա-

նափակ գիտութիւնը մեզի իրաւունք չի տար յայտարարելու, թէ յայտնութիւնը հաւանական չէ կամ անկարելի է, այլ յայտնութեան կարելիութիւնը պատմական հարց մըն է, որ կը հաստատուի հրաշքներով եւ մարգարեութիւններով: Իր օրերուն այս կէտերը անգլիական ու ամերիկեան համալսարաններուն մէջ եւ ընդհանրապէս աստուածայնութեան տրուած պատշաճ պատասխաններ նկատուելով հանդերձ՝ արդի ժամանակներուն կը քննադատուին եւ յարմար պատասխաններէ աւելի կասկածներ յարուցող տեսակետներ կը համարուին: Անոր ամենագրաւիչ կէտը մարդկային արարքներուն բարոյական հանգամանքն էր, որ աստուածայինին ներկայութիւնն էր մարդուն մէջ՝ որպէս խիղճ յայտնուած:

Աստուածայնութեան վրայ յարձակող նշանաւոր անգլիացի իմաստասէր մըն էր Դաւիթ Հիում (1711–1776): Ան կը ծնէր եւ կը մահանար Էտինսլըրկի մէջ: Ան Ֆրանսայի մէջ կ'ապրէր, հասարակական պաշտօններ կը վարէր, նշանաւոր քաղաքական տնտեսագէտ մը կը դառնար եւ կը գրէր իր մեծ ժողովրդականութիւն վայելած *Անգլիոյ պատմութիւնը* երկը: Կեանքի մայրամուտին իր քաղաքի գրական եւ մտաւորական շրջանակին մեծաւորը կը դառնար: Իր իմաստասիրական դրոյթը կը պարզէր 1739-ին լոյս տեսած իր *Մարդկային բնութիւնը* երկին մէջ, որուն կը յաջորդէին իր *Իմաստասիրական գրափորձեր* (1748) եւ *Կրօնքի բնական պատմութիւն* (1757) երկերը: Հիում պատճառականութեան եւ կրօնական սկեպտիկութեան ջատագով էր: Ան կ'ըսէր, թէ մեր ամբողջ գիտութիւնը փորձառութեամբ կը տրուէր մեզի, սակայն մենք զայն որպէս անջատեալ տպաւորութիւններ եւ զաղափարներ կը ստանայինք: Մեր բոլոր մտային տպաւորութիւնները, որոնք պատճառի ու արդիւնքի առնչուած էին, պարզապէս մեր քարացած եւ սակայն միաժամանակ անհիմն մտային սովորութեան հետեւանքն էին: Մեր միտքը այդպէս գործելու վարժութիւնը ունէր: Ինչ որ մեր սահմանափակութեամբ կ'ըմբռնէինք, կարգ մը փորձառութիւններ էին եւ կ'եզրակացնէինք, թէ անոնց միջեւ պատճառական կապեր կային:

Նիւթը եւս «կեղծուած» էր: Ուրեմն՝ եթէ պատճառի եւ արդիւնքի փոխյարաբերութիւնը չեզոքացնէինք, անոնց ետին եղող Աստուածն ալ կը չքանար: Նիւթին մերժումը իմ փորձառութիւններուս ետին ես մը չէր թողուր եւ անմահութիւնը եւս անհիմն կը դառնար: Հիում նաեւ կը յաւելէր, թէ պատմութիւնը ցոյց կու տար, որ բազմաստուածութիւնը կը կանխէր միաստուածութիւնը եւ հետեւաբար պատմութեան յենելով չէինք կրնար ընդունիլ աստուածայնութեան պաշտպանած միակ Աստուածը եւ պարզ, նախնական ու տրամաբանական բնական կրօնքը: Հիումի սուր քննադատութիւնը ո՛չ աստուածայնութեան հետեւորդներուն եւ ո՛չ ալ անոնց ընդդիմադիրներուն կողմէ ամբողջապէս հասկնալի կը դառնային:

Հիում կը քննադատէր մանաւանդ հրաշքները, որոնք իր օրերուն յայտնութեան եւ քրիստոնէութեան գլխաւոր յենարաններն էին: Ան կ'ըսէր, թէ մեր ամբողջ գիտութեան աղբիւրը փորձառութիւնն էր: Մեր փորձառութիւնը բնութեան միաձեւութիւնը աւելի կը հաստատէր, քան մարդկային անսխալական որեւէ վկայութիւն: Արդ, աւելի հաւանական էր, որ սխալի մը հետեւանք ըլլար հրաշքի մը արձանագրութիւնը, քան բնութեան բնական ընթացքի մը շեղումը: Սակայն նոյնիսկ եթէ վկայութիւնը հաստատէր, որ անբնական դէպքեր պատահած էին, անոնք ոչինչ կ'ապացուցէին բացի այն իրողութենէն, թէ անոնք աստուածային զօրութեան կողմէ այդ մասնաւոր նպատակին համար կը կատարուէին. այս մէկը աւելի դժուար կացութեան դիմաց կը դնէր մեզ: Այս տեսակէտները մնայուն հետք պիտի ձգէին, որովհետեւ այսօր քիչեր միայն հրաշքները քրիստոնէութեան հիմնական փաստերը կը նկատեն. ընդհակառակը, յայտնութիւնը հրաշքներէն գերիվեր կը դասուի եւ ինքնին աստուածային ու գերբնական կը համարուի: Հիումի շնորհիւ ո՛չ միայն հրաշքներու հանդէպ հաւատքը տեղի կու տար, այլեւ սկեպտիկութիւնը ծայր կ'առնէր Անգլիոյ մէջ:

Պատմաբան Եղուարդ Կիպոնի (1737–1794) քրիստոնէութեան կասկածոտ քննադատութիւնը կը գտնենք 1776-ին իր լոյս ընծայած *Պատմութիւն Հռոմէական կայսրութեան անկումի*

գիրքին ԺԵ.–ԺԶ. գլուխներուն մէջ, որ արժէք կը ներկայացնէ իր օրերու մտածողութեան ցոլացումը հանդիսանալուն պատճառով: Կիպոն կ'ըսէր, թէ քրիստոնէութիւնը կը տարածուէր որովհետեւ զայն քարոզելու եռանդը հրեաներէն ժառանգուած էր. ան անմահութիւն կ'ուսուցէր, հրաշքներ կը պատմէր, բարոյականը կը ջատագովէր եւ լաւապէս կազմակերպուած էր: Հաւանաբար այս բոլոր կէտերը նաեւ արդի պատմաբաններ պիտի հաստատէին: Սակայն անոնք այս կէտերուն մէջ կրօնքի բնոյթին եւ արձանագրած յաջողութիւններուն ըմբռնողութիւնը պիտի չգտնէին: Քրիստոնէութիւնը որպէս պատմական երեւոյթ այսպէս կ'ըմբռնէին նաեւ ԺԸ. դարուն Կիպոնը քննադատողները: Այդ օրերու տիրական բացատրութիւնը այն էր, որ Յիսուսի աշակերտները իրենց Աւետարանի ճշմարտութեան հաւատքը հրաշքներուն մէջ կը տեսնէին եւ պատրաստ էին մինչեւ իսկ իրենց կեանքը զոհելու Աւետարանին քարոզութեան համար: Կիպոն այս հաւատքը անդրանցելով քրիստոնէութեան տարածումը բացատրող այլ պատճառներ եւս կու տար եւ ԺԹ. դարը յատկանշելու կոչուած Աստուածաշունչի ու քրիստոնէական սկզբնաղբիւրներու ուսումնասիրութեան մեկնակէտը կը յուշէր:

Ուիլերմ Փալէ (1743–1805) կը հանդիսանար Անգլիոյ այս ժամանակաշրջանի քրիստոնէական տեսակէտը բիրեղացնող լաւագոյն ներկայացուցիչը: Իր *Քրիստոնէութեան փաստերը* (1794) եւ *Բնական աստուածաբանութիւն* (1802) երկերը այնքան յստակ եւ տրամաբանական էին, որ երկար ատեն մեծ ժողովրդականութիւն կը վայելէին: Ան կ'ըսէր, թէ այնպէս, ինչպէս ժամացոյցէն ժամագործ մը կը հաստատենք, նոյնպէս մարդկային սքանչելի մարմինէն Արարիչ մը կը հաստատենք: Հետեւաբար Աստուած գոյութիւն ունի եւ մարդերու արարքները պիտի դատէ, եւ այդ դատաստանը աշխարհին յայտնած է: Յայտնութեան նպատակն է մեզի ցոյց տալ ապագայի վարձատրութեան ու պատիժի վիճակները: Յայտնութիւնը Քրիստոսով տրուած է, եւ անոր աշակերտները զայն հրաշքներուն մէջ տեսած են: Յիսուսի աշակերտները, երբ քրիստոնէութեան

համար կը չարչարուէին, հրաշքներուն համար կը չարչարուէին: Առաքինութիւնը մարդերուն բարիք ընելն է՝ հաւատարիմ մնալով Աստուծոյ կամքին եւ յաւիտենական երջանկութեան հասնելու համար: Առաքինութեան այս բանաձեւումը, հրաշքներու այսպիսի ըմբռնողութիւնն ու Աստուծոյ գոյութեան մեքենական հաւատքը Փալէի ժամանակները յատկանշող երեւոյթներն էին: Փալէի մարդոց բարիք ընելու ուսուցումը պատճառ կը դառնար, որ ան ստրկութեան դէմ մաքառէր: Ան նաեւ կը նպաստէր, որ աստուածայնութիւնը քրիստոնէական ջատագովութեան դիմէր եւ սկեպտիկ իմաստասիրութեան դէմ պայքարէր:

Անգլիական աստուածայնութիւնը բարձր խաւի դասակարգերուն վրայ ազդող քրիստոնէական աստուածայնութիւնն էր: Մակայն միւս կողմէ՝ ծայրայեղ հակաքրիստոնէական աստուածայնութիւնը մի քանի ներկայացուցիչներով կը յարձակէր հաստատութենական քրիստոնէութեան վրայ: Պետրոս Անէթ (ծնած՝ 1693-ին) աստուածայնութեան վրայ իր յարձակումին մէջ կը կիրարկէր աստուածաշնչական խիստ քննադատութիւն: Հակաքրիստոնէական աստուածայնութեան ամենաուժեղ եւ ամենաժողովրդական ներկայացուցիչը կ'ըլլար անգլիացի քուէզըրի մը որդին՝ Թովմաս Փէյն (1737–1809): Անոր 1776-ին լոյս տեսած *Բնական զգացողութիւն* երկը մեծ ազդեցութիւն կ'ունենար Ամերիկեան յեղափոխութեան վրայ. իսկ անոր *Մարդուն իրաւունքները* երկը (1791) կը ծառայէր պաշտպանելու Ֆրանսական յեղափոխութեան սկզբունքները: Վերջապէս ան *Պատճառի ժամանակը* երկով (1794–1796) հակաքրիստոնէական շատ ուժեղ յարձակում կը գործէր աստուածայնութեան վրայ:

Անգլիական աստուածայնութիւնը բանականութեան զարգացումին վրայ կ'ազդէր Գերմանիոյ եւ մանաւանդ Ֆրանսայի մէջ, ուր ան մասնաւորաբար բարձր խաւի դասակարգերուն մէջ բազմաթիւ համակիրներ կ'ունենար: Ֆրանսացի աստուածայնութեան գլխաւոր ներկայացուցիչն էր Ֆրանսուա Մարի Արուէթ, որ ինքզինք Վոլթէր (1694–1778) կը կոչէր: Ան

աստուածայնութեան կը ծանօթանար Անգլիոյ մէջ, երբ 1726–1729-ին հոն պտոյտի կ'երթար եւ Անէթի երկերէն կ'ազդուէր: Վոյթեր ԺԸ. դարու Ֆրանսայի այն ներկայացուցիչն էր, որ բռնատիրութեան եւ մանաւանդ կրօնական հալածանքներու դէմ կը ծառանար եւ խստօրէն կը քննադատէր հաստատութենական կրօնքը: Այսպիսի քննադատութիւն Անգլիայէն աւելի կենսական էր Ֆրանսայի մէջ, որվհետեւ Անգլիոյ մէջ որոշ կրօնական հանդուրժողութիւն եւ զանազանութիւն կը տիրէր, իսկ Ֆրանսայի մէջ հռոմէական կաթօլիկութիւնը բացարձակ մենաշնորհ ունէր, եւ եթէ մէկ կողմէ պայքարը աստուածայնութեան եւ անաստուածութեան միջեւ էր, միւս կողմէ՝ միատեսակ քրիստոնէութեան դէմ էր: Որպէս վաւերական աստուածայնութեան ջատագով՝ Վոյթեր Աստուծոյ գոյութեան ու նախնական բնական կրօնքին եւ անոնց բերած պարզ բարոյականին կը հաւատար, իսկ կը մերժէր Աստուածաշունչի եւ Եկեղեցիի հեղինակութիւնը: Ան մեծ ազդեցութիւն կ'ունենար Ֆրանսական յեղափոխութեան խմորումին մէջ:

Աստուածայնութիւնը շատ կ'ազդէր ԺԸ. դարուն վրայ: Ան Փրուսիոյ Մեծն Ֆրետերիքի (1740–1786), Աւստրիոյ սրբազան հռոմէական կայսր Յովսէփ Բ.-ի (1765–1790) եւ ԺԸ. դարու փորթուկալցի ամենէն ազդեցիկ դիւանագետ՝ Փոմպալի մարգպետ Սեպասթիան Յովսէփ Գարվալիօ-Մելոցի (1699–1782) Հաւատքի հանգանակը կը դառնար: Հիւսիսային Ամերիկայի անգլիական գաղութներուն մէջ աստուածայնութեան շուրջ ծաւալող հակամարտութիւնները մեծ հետաքրքրութիւն կ'արթնցնէին եւ երեք գլխաւոր բանական բնիկ ուղղութիւն կը բանային: Մեսէչուսէցի հոգեւոր հովիւներ՝ Եպենեզըր Կէյ (1696–1787) ու Յովնաթան Մէյհիու (1720–1766) բանական գերբնականութեան ջատագովներ էին, Բենիամին Ֆրանքլին (1706–1790) ու Թովմաս Ճեֆրըսըն (1743–1826) աստուածայնականներ էին, եւ *Պատճառը մարդուն միակ վճիռը* երկի (1784) հեղինակ Էթհըն Ալըն (1737–1789) ու կոյր զօրավար Եղիա Փալմըր (1764–1806) հակաքրիստոնէական աստուածայնականներ էին:

Դ. ԳԼՈՒԽ
ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Կարգ մը մկրտչականներու եւ սոզինիանականներու կողմէ դրսեւորուող հակաերրորդութենական տեսակետները նաեւ Անգլիա կը ներթափանցէին: 1575-ին Եղիսաբէթ Ա.-ի հրահանգով արիոսական մկրտչականներ խարոյկի մահուան կը դատապարտուէին: Յակոբոս Ա.-ի հրահանգով Բարթողիմէոս Լեկըթ (1575?-1612) եւ Եդուարդ Ուայթմըն (մահացած՝ 1612-ին) իրենց հաւատքին համար 1612-ին խարոյկի մահուան դատապարտուած վերջին անգլիացիները կը դառնային: Քաղաքացիական պատերազմի օրերուն ծագած հակամարտութիւններով հակաերրորդութենական տեսակետներ առաւել կը բացայայտուէին: Օքսֆորտի շրջանաւարտ սոզինիանական Յովհաննէս Պիտըլ (1615-1662) յաճախ կը բանտարկուէր: Մաքրակրօն նշանաւոր բանաստեղծ Յովհաննէս Միլթըն (1608-1697) իր կեանքի վերջին տարիներուն արիոսական կը դառնար: Թովմաս Ֆիրմին (1632-1697) լոնտոնցի աշխարհականը Պիտըլի գլխաւոր հետեւորդը կ'ըլլար եւ հակաերրորդութենական գրականութիւն կը տարածէր:

ԺԸ. դարուն ուղղափառ եւ աստուածայնական շրջանակներուն մէջ երեւան եկած բանականութեան եւ կրօնքին հիմնական նպատակը բարոյականը նկատող տեսակետները՝ հակաերրորդութենական հոսանքները աւելի կը զօրացնէին: Երիցական պատուելի Թովմաս Էմլին (1663-1741) 1702-ին կը հրատարակէր մեծ ժողովրդականութիւն վայելելու կոչուած իր *Յիսուս Քրիստոսի աստուածաշնչական պատմութեան փնտրոտուքը* երկը: 1712-ին Սամուէլ Գլաքք (1675-1729), Ուեսթմինըսթըրի Սուրբ Յակոբոս եկեղեցիի հովիւն ու անգլիգան հոգեւորութեան ամենէն իմաստասէր մտաւորականը, լոյս կ'ընծայէր իր *Սուրբ Երրորդութեան աստուածաշնչական վարդապետութիւնը* երկը, որուն մէջ Նոր կտակարանը արիոսա-

կան մեկնութեան կ'ենթարկէր: Սակայն առաւելաբար երիցական եւ մկրտչական այլախոհներու մէջ հակաերրորդութեանական հետեւորդները կ'աճէին: 1717-ին Էքսըթըրի երիցական պատուելիներ Յովսէփ Հալէթ (1691?-1744) եւ Յակոբոս Փիրս (1674?-1726) կը ջանային ուղղափառութեան եւ արիոսականութեան միջեւ միջին ուղի բանաձեւել: ԺԸ. դարու ամենագարգացած այլախոհ Նաթանայէլ Լարսոնըր (1684-1768) նման տեսակէտներ կը պարզէր: Այսպէսով այս շարժումը կը տարածուէր, այլ յարանուանութիւններ եւս կ'ազդուէին այս շարժումէն եւ անոր հետեւորդներուն թիւը զգալի աճ կ'արձանագրէր:

Արիոսական հոսանքը Անգլիոյ մէջ առանձինն կազմակերպուած միութենականութեան հաստատումի ճամբան կը հարթէր: Միութենականութիւնը հապճեպօրէն ծայր կ'առնէր, երբ Անգլիոյ եկեղեցիի հոգեւորականներէն Թեոփիլոս Լինտսի (1723-1808) միութենական կը դառնար եւ հոգեւորականներու «39 յօդուածներ»-է ձեռքազատումին եւ միայն Աստուածաշունչին հաւատարիմ ըլլալու շուրջ 250 ստորագրութիւն ունեցող խնդրագիրը շրջանառութեան մէջ կը դնէր: 1772-ին խորհրդարանը կը մերժէր այս խնդրագիրը: 1773-ին Լինտսի կը հրաժարէր Անգլիոյ եկեղեցիի անդամակցութենէն եւ Լոնտոնի մէջ Միութենական եկեղեցի կը հիմնէր: Լինտսիի կը միանար այլախոհ հոգեւորական, հանրաձանօթ քիմիագէտ, թթուածինի գիտարար եւ Ամերիկեան ու Ֆրանսական յեղափոխութիւններու համակիր Յովսէփ Փրիսթլի (1733-1804), որ իր կեանքին վերջին 10 տարին Փենսիլվանիոյ մէջ կ'անցընէր: 1779-ին խորհրդարանը հանդուրժողութեան վճիռը կը բարեփոխէր՝ ըսելով, որ «39 յօդուածներ»-ու վարդապետական բաժինները պէտք էր համապատասխանէին Աստուածաշունչին, եւ 1813-ին Սուրբ Երրորդութիւնը ուրացողներուն պատիժները կը վերասահմանէր: Այս հանգրուանին անգլիական միութենականութիւնը կտրականօրէն կը մերժէր մարդոց կողմէ խմբագրուած Հաւատքի հանգանակները եւ փրկութիւնը միայն արդար

նկարագիրով իրագործելի կը սահմանէր, սակայն մեծ ժողովրդականութիւն չէր կրնար վայելել:

Անգլիական միութենականութիւնը նոյնպիսի շարժում սկսելուն կը նպաստէր Նիու Անգլիոյ մէջ, որուն վրայ եւս ԺԸ. դարու տրամաբանական մտածողութիւնը կ'ազդէր: Փրիսթլի եւ Ուիլերմ Հազլիթ (1737–1820) գաղութներու մէջ միութենականութեան տարածումի աշխատանքին կը լծուէին: 1787-ին Թագաւոր մատուռը՝ Նիու Անգլիոյ հնագոյն եպիսկոպոսական եկեղեցին, միութենականութեան առաջին եկեղեցին կը դառնար, իր հովիւին՝ Յակոբոս Ֆրիմընի (1759–1835) առաջնորդութեամբ: Եկեղեցին ժողովական դրութեամբ վարող բազմաթիւ անձեր կը համակրէին միութենականութեան, արմինիանական ազդեցութիւնը կը տարածուէր եւ հակաերրորդութենական տեսակետներ տիրական կը դառնային: Սակայն Եկեղեցին ժողովական դրութեամբ ղեկավարողներ օրինականօրէն ճանչցուած էին եւ չէին համարձակէր աստուածաբանական հակամարտութիւններու միջամուխ դառնալ: ԺԹ. դարուն միայն պահպանողական ու ազատական հոսանքներ իրարու պիտի բախէին եւ պիտի իրականանար միութենական հերձուածը:

Ե. ԳԼՈՒԽ
ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Դպրոցական լուտերականութիւնը, որ թէև Աստուածաշունչին վրայ հիմնուած էր, սակայն յստակ եւ հաստատ վարդապետական մեկնութիւններ կը պարունակէր եւ իմացական խոր հասկացողութիւն կը պարտադրէր. ան հետզհետէ կը տարածուէր: Շէշտը կը դրուէր բիրեղ վարդապետութեան եւ Եկեղեցիի խորհուրդներուն վրայ՝ որպէս քրիստոնէական կեանքը բաղկացնող բաւարար տուեալներու: Լուտերի ուսուցած հաւատացեալին եւ Աստուծոյ միջեւ եղած յարաբերութիւնը կը փոխարինուէր վարդապետական ամբողջ համակարգին հնազանդելուն հետ: Աշխարհականներուն դերը կրաւորական կը դառնար. անոնք պարտաւոր էին վարդապետութիւններուն անվերապահօրէն հնազանդիլ, Եկեղեցիի բեմէն անոնց մասին տրուած բացատրութիւնները մտիկ ընել, Եկեղեցիի խորհուրդները ընդունիլ եւ հետեւիլ Եկեղեցիի սահմանած կարգին: Ահա այս իսկ էր քրիստոնէական կեանք ապրիլը: Աւելի խոր բարեպաշտութեան մասին կը վկայէն ժամանակակից հոգեւոր երգերը եւ անհատական տիպարները, սակայն ընդհանրապէս արտաքին ու վարդապետական երեսը տիրական կը մնար: Այս երեւոյթը արդարօրէն մեռեալ ուղղափառութիւն կը նկատուէր: Նոր դպրոցական լուտերականութիւնը նաեւ կը յատկանշուէր իր օրերու տրամաբանական մտածողութենէն կրած ազդեցութեամբ եւ անոր հանդէպ որդեգրած հակադարձութեամբ:

Բարեպաշտութիւնը դպրոցականութենէ դարձակէտ մըն էր՝ քրիստոնէական փորձառութեան զգացական երեսին եւ աշխարհականներուն քրիստոնէական գործուն կեանք ապրելուն վրայ հիմնուած, որ աշխարհին հանդէպ ժուժկալ վերաբերումով կը դրսեւորուէր: Բազմաթիւ տուեալներ կ'ազդէին բարեպաշտութեան վրայ, որ լաւապէս ըմբռնելու համար պէտք է տեսնենք անոր գլխաւոր դէմքը հանդիսացող Փիլիպպոս

Յակոբ Սփենըրի (1635–1705) կեանքն ու գործը: Ան ԺԷ. դարու գլխաւոր կրօնական դէմքերէն մին էր եւ իր անձնական օրինակով ու ուսուցումով բարեպաշտութիւնը կը ցոլացնէր:

Սփենըր ծնած էր բարձր Ալզասի Ռափուլթուէլըր քաղաքին մէջ եւ կը դաստիարակուէր Սթրազպուրկի մէջ, ուր կը հմտանար աստուածաշնչական մեկնութեան մէջ եւ հաղորդակից կը դառնար եկեղեցական կարգապահութեան ու քրիստոնէականի ուսուցումի եզակի ուսումին, որմէ բազմաթիւ լուտերական շրջանակներ գերծ էին: Ուսումը կը շարունակէր Պազէլի ու Ժնեւի մէջ, ուր Բարեկարգութեան մէջ կը հմտանար առանց լուտերականութենէն հեռանալու: Սթրազպուրկի մէջ ան կը սերտէր Լուտերի աստուածաբանութիւնը: Ան մեծապէս կ'ազդուէր խորհրդագագացական հակում ունեցող Յովհան Արնտի (1555–1621) *Ճշմարիտ քրիստոնէութիւնը* երկէն: Առաւել, ան որոշ ազդեցութիւն կը կրէր նաեւ Պօղոս Կերհարտի կրօնական բանաստեղծութիւններէն եւ Բարեկարգեալ եկեղեցիներու անգլիական մաքրակրօններէն ազդուած այսպէս ասած հոլանտական բարեպաշտութենէն, որուն ղեկավարներն էին Ուիլլըմ Թիլինգ (1579–1629), Կիսպըր Վոլթ (1589–1677) եւ Եոտոգըս Լոտընսթէյնցի (1620–1677): Կասկածէ վեր է, որ Սփենըր մաքրակրօն գրականութենէն մեծապէս կ'ազդուէր, մանաւանդ Լէուիս Պէլլիի (մահացած՝ 1631-ին) մեծ ժողովրդականութիւն վայելած *Բարեպաշտութեան գործունէութիւնը* երկէն եւ Ռիչըրտ Պէքսթըրի (1615–1691) երկերէն:

1666-ին Սփենըր կը դառնար վաճառականական Ֆրանքֆուրթ քաղաքին հովիւր: Ան կը փորձէր եկեղեցական կարգապահութիւն պարտադրել, սակայն հեղինակութիւնը քաղաքային իշխանութեան ձեռքը կը մնար: Ան կ'աշխուժացնէր քրիստոնէական ուսուցումը: Անոր կեանքին ամենէն ակնառու նորութիւնը կը զուգադիպէր 1670-ին, երբ իր տունին մէջ քրիստոնէաներու փոքր խումբ մը կը հաւաքէր եւ Աստուածաշունչի սերտողութիւն, աղօթք ու կիրակնօրեայ քարոզներու քննարկում կը կատարէր՝ նպատակադրելով անհատական հոգեւոր կեանքի խորացումը: Այսպիսի հաւաքներ «բարեպաշտական

հաւաքներ» կը կոչուէին եւ որպէս բարեպաշտութիւն կը բնորոշուէին:

1675-ին Սփենըր բարեպաշտութեան սկզբունքները կը սահմանէր իր *Բարեպաշտ փափագներ* երկին մէջ: Ան իր ժամանակի գլխաւոր չարիքները կը համարէր կառավարութեան Եկեղեցիի գործերուն միջամտութիւնը, կարգ մը եկեղեցականներուն բարոյական չար օրինակը, աստուածաբանական հակասական մեկնութիւնները եւ աշխարհականներուն գինովութիւնը, անբարոյութիւնն ու անձնասիրութիւնը: Որպէս բարեկարգութիւն կ'առաջարկէր, որ զանազան ծուխերու մէջ Աստուածաշունչի սերտողութեան հաւաքներ կազմակերպուէին, եւ որովհետեւ բոլոր հաւատացեալները քահանայ էին՝ իրարու հանդէպ աջալրջութիւն ու օգնութիւն ցուցաբերէին: Քրիստոնէութիւնը կեանք էր եւ ո՛չ իմացական գիտութիւն: Հակամարտութիւնները օգտակար չէին: Եկեղեցականներ աւելի լաւ դաստիարակութեան եւ օրինակելի կեանքի կարօտ էին: Քարոզախօսութիւնը հաւատացեալներու քրիստոնէական կեանքի շինութեան պէտք էր ծառայէր եւ ո՛չ քարոզիչին կարողութիւնները փաստելու: Ճշմարիտ քրիստոնէութիւնը կեանքով կը ցոլար եւ կը սկսէր հոգեւոր բարեփոխութեամբ ու գիտակից նոր կեանքով: Սփենըր անգլիացի մաքրակրօններուն նման ճգնողական որոշ հակումներ կ'ունենար ճաշի, խմիչքի ու հագուստի չափաւորութեան մարզին մէջ եւ թատրոնէ, պարէ ու բախտախաղէ հեռու կը մնար, երեւոյթներ, որոնք իր ժամանակի լուսերականութեան համար անմեղ ժամանց կը նկատուէին:

Սփենըր այս գաղափարներուն համար ուժեղ ընդդիմութեան կը հանդիպէր: Ան որպէս հերձուածող կ'ամբաստանուէր. այս ամբաստանութիւնը եթէ մէկ կողմէ անարդար էր, որովհետեւ ան լուսերական դասական ըմբռնողութենէն չէր շեղած, միւս կողմէ՝ արդար էր, որովհետեւ անոր բերած նորութիւնները ժամանակակից լուսերական ուղղափառութեան չէին համապատասխանէր: Ան Հաւատքի հանգանակներուն փոխարէն՝ Աստուածաշունչին վրայ կը դնէր շեշտը: Անոր

այն ուսուցումը, որ եթե սիրտդ ուղիղ էր, իմացական մեկնությունները երկրորդական կը դասուէին, բուն ընդդիմութեան կը բախէր անոնց կողմէ, որոնք բիւրեղ վարդապետութիւնը կը շեշտէին: Սփենըր Աստուածաշունչի մտերմութիւնը կը ժողովրդականացնէր եւ վարդապետական չափանիշերը որպէս Աստուածաշունչին ուսուցած կէտերուն վերջնական վճիռ կը մերժէր: Ան Աստուածաշունչի բնոյթին ու պատմութեան ուսումնասիրութեան ճանապարհը կը հարթէր: Առաւել, ան երիտասարդութեան կրօնական դաստիարակութիւնը կը խթանէր եւ կը քաջալերէր աստուածաշնչական ու ջերմեռանդ քրիստոնէական կեանքը:

Ֆրանսֆուրթի մէջ Սփենըրի աշակերտներէն ոմանք, հակառակ իր ընդդիմութեան, իրենք զիրենք Եկեղեցիի պաշտամունքէն եւ խորհուրդներէն կը մեկուսացնէին: Սփենըրի կազմակերպած հանդիպումները կը բախէին ոստիկանութեան արգելքներուն: 1686-ին ան ուրախութեամբ Տրեգորնի դատարանի քարոզիչի պաշտօնին կ'ընդառաջէր: Մինչ այդ բարեպաշտական շարժումը Լայփցիկի համալսարան ներթափանցած էր: 1686-ին համալսարանի երիտասարդ դասախօսներէն Օգոստոս Հերման Ֆրանք (1663–1727) եւ իր կարգ մը գործակիցները հոն Աստուածաշունչի սերտողութեան դասընթացք կը հաստատէին: Սկզբնական փուլերուն անոր անդամները համալսարանի դասախօսներն էին, անոր աշխատակարգը գիտական էր եւ ան կը վայելէր համալսարանի տնօրէնութեան հովանին: Սակայն 1687-ին Ֆրանք, իր վկայութեամբ, աստուածային նոր ծնունդի փորձառութիւնը կ'ապրէր Լունպըրկի մէջ եւ Աւետարան ըստ Յովհաննէսի 20.31-ին վրայ քարոզ մը կը գրէր: Ան քանի մը ամիս Տրեգորնի մէջ Սփենըրի քով մնալէ ետք բարեպաշտութիւնը կ'ընդունէր: 1689-ին Ֆրանք Լայփցիկ կը վերադառնար եւ համալսարանին ու քաղաքին մէջ մեծաթիւ հետեւորդներ կ'ունենար: Լայփցիկ տակնուվրայ կ'ըլլար եւ պետական հրովարտակով հանդիպումները կ'արգիլուէին: Ֆրանքի հետեւող բազմաթիւ ուսանողներ այլ դասանիւթերը կը ձգէին եւ միայն անոր դասախօսութիւններուն կը

հետեւէին: Լայփցիկի համալսարանի աստուածաբանութեան դասախօս Յովհան Պենետիկտոս Գարփզովի (1639–1699) գլխաւորութեամբ՝ Ֆրանքի համալսարանական գործունէութիւնը կը սահմանափակուէր: Գարփզով Ֆրանքի ամենաբուն ընդդիմադիրը կը դառնար, եւ 1690-ին Ֆրանք կը պարտաւորուէր որպէս սարկաւազ Էրֆուրթ փոխադրուիլ:

Մինչ այդ Սփենըր բազմաթիւ խոչընդոտներ կը դիմագրաւէր Տրեգտընի մէջ: Սաքսոնիոյ հոգեւորականութիւնը զինք օտարական կը նկատէր: Լայփցիկի ու Ուիթընպըրկի սաքսոն համալսարանները կ'ընդդիմանային անոր: Հոգեւոր կեանքի շինութեան համար անոր նախաձեռնած հանդիպումները կը քննադատուէին: Իշխանաւոր Յովհաննէս Գէորգ Գ. (1647–1691) կը խափանէր անոր հովուական պատասխանատւութիւնը՝ զինովութեամբ մեղադրելով զայն: Այս բոլորէն ետք, երբ Պերլինի իշխանաւոր Ֆրետերիգ Գ. (1688–1701), որ Փրուսիոյ Ֆրետերիգ Ա. թագաւորը (1701–1713) պիտի դառնար, Պերլին կը հրաւիրէր Սփենըրը, ան անմիջապէս կ'երթար: Ան թէեւ չէր յաջողէր Ֆրետերիգ Գ.-ը բարեպաշտ դարձնել, սակայն ցկեանս Պերլին կը մնար եւ կ'ապրէր իր կեանքին ամենաերջանիկ ու յաջող շրջանը:

Պերլինի մէջ Սփենըր բարեպաշտութեան իր մեծագոյն ծառայութիւնը կը մատուցէր: Տրամաբանական դպրոցի հետեւորդ, աստուածաբանութեան քննադատ, գերման օրէնսդրութեան հիմնադիր, համալսարանական ուսումի համար գերմաներէնը լատիներէնով փոխարինող, կրօնական հանդուրժողութեան պաշտպան, կախարդութեան հակառակորդ եւ դատական դրութեան կողմէ չարչարանքի գործադրութեան ընդդիմադիր Քրիստիան Թովմասիոս (1655–1728) աստուածաբաններուն հակառակութեամբ 1690-ին Լայփցիկէն կը վտարուէր: Ան ուսանողներէն շատ սիրուած էր: Ան բարեպաշտ չէր, սակայն բարեպաշտներու հալածանքին կ'ընդդիմանար եւ կը պաշտպանէր Ֆրանքը Լայփցիկի իշխանութիւններուն դէմ: Ֆրետերիգ Գ., որ երկար ատենէ ի վեր իր տարածքին մէջ համալսարան մը կ'ուզէր հիմնել, Թովմասիոսի արքայական

ըլլալուն առիթը կ'օգտագործեր եւ 1694-ին կը հիմներ Հալլէի համալսարանը, ուր զայն ցկեանս իրաւաբանութեան բաժանմունքի պատասխանատու կը նշանակէր: Մինչ այդ Ֆրանք Էրֆուրթի մէջ բարեպաշտութիւն կը քարոզէր եւ կը բախէր տեղւոյն հոգեւորականութեան ընդդիմութեան: Գարփզովի հալածանքը մինչեւ Էրֆուրթ կը հասներ եւ 1691-ին իշխանութիւններ Ֆրանքը կ'արտաքսէին: Սփենըրի բարեխօսութեամբ ան եւ բարեպաշտութեան համակիրներ Հալլէի համալսարանին մէջ պաշտօնի եւ մերձակայ Գլաուչա գիւղին մէջ հովութեան կը կոչուէին: Ֆրանք համալսարանին մէջ աստուածաբանութիւն կը դասախօսէր, թէեւ մինչեւ 1698 չէր կրնար պաշտօնապէս աստուածաբանութեան բաժանմունքին անդամակցիլ, եւ կը յաջողէր Հալլէն բարեպաշտութեան կեդրոններէն մին վերածել:

Ֆրանք կազմակերպական մեծ կարողութիւններով օժտուած էր: Ան յաջող հովիւ եւ համալսարանի դասախօս էր, եւ դասարանին ու ծովիսին փորձառութիւններուն համադրումը շատ օգտակար կ'ըլլար ուսանողներուն: 1695-ին ան աղքատ երեխաներու համար կը բանար դպրոց մը, որուն կը յաջորդէին նախապատրաստական դպրոց մը եւ լատիներէնի դպրոց մը: Բարեպաշտութեան ոգիով կառավարուող այս կրթական հաստատութիւնները մեծ համբաւի կը տիրանային, ուր մինչեւ Ֆրանքի մահը 2200 երեխայ կ'ուսանէր: Ան նաեւ կը բանար որբանոց մը, ուր մինչեւ իր մահը 134 երեխայ կը պատըսպարուէր: Այս հաստատութիւնները, որոնցմէ ոմանք մինչեւ այսօր գոյութիւն ունին, գրեթէ առանց նիւթական միջոցներու կը հիմնադրուէին եւ Ֆրանք կը հաւատար, որ Աստուած զանոնք կը հոգար՝ ի պատասխան կատարուած աղօթքներու: Գերմանիոյ բոլոր կողմերէն նուէրներ կը հասնէին: Ֆրանք մեծապէս կը յաջողէր իր ծրագրերուն շուրջ համակիրներ խմբել եւ քարոզչութիւն կատարել: Նաեւ բազմաթիւ ազնուականներ այս հաստատութիւններուն հովանաւորները կը դառնային: 1710-ին Ֆրանքի ընկերոջ՝ Գարլ Հիլտըպրանտ Գանսթէյնի (1667–1719) հիմնած Աստուածաշունչի հիմնարկը եւս որոշ

չափով իր ճիգերուն արդիւնքն էր: Աստուածաշունչի հիմնարկին նպատակն էր Աստուածաշունչ հրատարակել եւ ջնջին գումարով վաճառել: Հիմնարկը երախտարժան գործ կը կատարէր:

Այս բոլոր նախաձեռնութիւններուն մէջ ամենայատկանշականը կը հանդիսանար միսիոնարութիւններու հանդէպ եռանդը: Երբ տակաւին բողոքականութիւնը միսիոնարութիւն ծաւալելու պարտաւորութիւնը չէր զգար, Ֆրանք եւ գործակիցները այս մէկը կ'ընդգծէին: 1706-ին, երբ Դանիոյ Ֆրետերիք Դ. (1699–1730) կը փափագէր առաջին միսիոնարները Հնդկաստան դրկել, ան կը դիմէր Ֆրանքի Հալլէի ուսանողներէն Բարթոլիմէոս Զիկընպակի (1683–1719) եւ Հենրիխ Փլութշոյի (1678–1747): ԺԸ. դարուն Հալլէի համալսարանէն եւ անոր քոյր հաստատութիւններէն 60 միսիոնար կը գործուղուէր: Ասոնցմէ ամենանշանաւորը կը հանդիսանար Քրիստիան Ֆրետերիք Շուարց (1726–1798), որ 1750-էն մինչեւ մահը Հնդկաստանի մէջ կը ծառայէր եւ միսիոնարներուն մէջ նշանաւոր կ'ըլլար:

Բարեպաշտութեան ազդեցութիւնը ազդու կը դառնար գերման Բարեկարգեալ եկեղեցիներուն մէջ եւս, ուր Թէոտոր Ունթերէյքի (1635–1693) եւ Յովակիմ Նեանտերի (1650?–1680) շնորհիւ բարեկարգեալ ու լուտերական բարեպաշտական երեւոյթներ կը միահիւսուէին: Բարեպաշտութեան թթիւմորը նաեւ Նորվեկիա, Շուէտ ու Դանիա կը հասներ եւ կրօնական բարեպաշտական եռանդ կ'արթնցնէր. առաւել, Ամերիկա հաստատուած բազմաթիւ գերման գաղթականներ կ'ազդուէին բարեպաշտական շարժումէն:

1727-ին Ֆրանքի մահուան ատեն, բարեպաշտութիւնը իր գագաթնակէտին կը հասներ Գերմանիոյ մէջ: Ան թէեւ Սփենըրի եւ Ֆրանքի կարողութեամբ օժտուած դէմքեր չէր ունենար, սակայն Յովիան Ալպրէխթ Պենկելի (1687–1752) ղեկավարութեամբ կը շարունակէր տարածուիլ Գերմանիոյ եւ յատկապէս Ուորթըմպըրկի մէջ: Բարեպաշտութիւնը իր անջնջելի կնիքը կը թողոր Գերմանիոյ վրայ եւ քահանայագործութեան, քարոզախօսութեան ու նոր սերունդի քրիս-

տոնէական դաստիարակութեան մարզերուն մէջ հոգեւոր զարթօնք կը բերէր: Առաւել, աշխարհականներուն Եկեղեցիի կեանքին մասնակցութիւնը կ'աճեցնէր եւ Աստուածաշունչի ծանօթութիւնը կը խորացնէր: Սակայն միաժամանակ բարեպաշտութեան ժխտական երեսները կը հանդիսանային Աստուծոյ արքայութեան մուտքի համար մղուող պարտադրեալ պայքարը, աշխարհին հանդէպ անբարեացակամ կեցուածքը, մանուկներու խաղին հանդէպ անհանդուրժողութիւնը, ոչբարեպաշտներու անկրօն համարումը եւ կրօնքի մտաւորական երեսին հանդէպ անտարբերութիւնը: Թէեւ բարեպաշտութիւնը մտաւորական առաջնորդներ չէր ունենար, սակայն մեծ նպաստ կը բերէր բողոքական Գերմանիոյ կրօնական կեանքի զարթօնքին:

Բարեպաշտութեան բերած նպաստներէն մէկն էր Կոթֆրայտ Առնոլտի (1666–1714) կողմէ Եկեղեցիի պատմութեան մեկնութիւնը: Ան Սփենըրի ընկերն էր եւ կարճ ժամանակ մը Կիսէնի մէջ դասաւանդելէ ետք Քուէտլինպըրկի մէջ ինքզինք կը մեկուսացնէր: Բարեկարգութենէն սկսեալ Եկեղեցիի պատմութիւնը վիճայարոյց կը դառնար եւ այն հասարակաց կարծիքը կը տիրէր, թէ իրենց ժամանակակից Եկեղեցիի կողմէ մերժուած դէմքերը միշտ մերժուած մնալու դատապարտուած էին: 1699-ին իր հեղինակած *Անաչառ եկեղեցին եւ հերետիկոսական պատմութիւնը* երկով Առնոլտ նոր գաղափար մը կը ներմուծէր: Ան, քննականօրէն կարդալէ ետք Եկեղեցիի պատմութիւնը, կ'եզրակացնէր, թէ ոչ ոք հերետիկոս էր այն հիմամբ, որ իր ժամանակակիցները զինք հերետիկոս կը համարէին: Ան անկողմնակալօրէն պէտք էր դատապարտուէր, որովհետեւ նոյնիսկ հերետիկոս նկատուածներուն տեսակէտները քրիստոնէական մտածողութեան մէջ իրենց արժանի տեղը ունէին: Սակայն Առնոլտ այս սկզբունքը ծայրայեղութեան կը տանէր եւ կ'ըսէր, թէ հերետիկոսները ուղղափառներէն աւելի մօտ էին ճշմարտութեան: Յամենայն դէպս, իր նպաստը անուրանալի է Եկեղեցիի պատմութեան քննական մօտեցումի մարզին մէջ:

Զ. ԳԼՈՒԽ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԼՈՒՏՎԻԿ ԶԻՆՁԵՆՏՈՐՖ ԵՒ ՄՈՐԱԻԻԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բարեպաշտական զարթոնքի ամենայատկանշական երևոյթներէն մին միացող եղբայրներու, – աւելի որպէս «մորա-իանական եղբայրներ» ծանօթ, – վերայայտնութիւնն էր՝ գլխաւորութեամբ կոմս Նիկողայոս Լուսովիկ Զինգենտորֆի: Զինգենտորֆ ծնած էր 26 մայիս 1700-ին Տրեգտընի մէջ: Հայրը Սասքոնիոյ պալատի բարձրաստիճան պաշտօնեաներէն էր եւ բարեկամը՝ Սփենըրի: Զինգենտորֆի ծնունդէն քիչ ետք հայրը կը մահանար, մայրը կը վերամուսնանար, եւ երեխան կը մեծնար բարեպաշտ մեծ մօր՝ պարոնէս Հենրիէթա Կատարինէ Կերստորֆի ինամքին տակ: Փոքր տարիքէն Զինգենտորֆ կը յատկանշուէր Քրիստոսի հանդէպ ունեցած խոր բարեպաշտութեամբ: 10–17 տարեկանին ան կ'ուսանէր Օգոստոս Հերման Ֆրանքի Հալլէի մանկավարժական դպրոցին մէջ: Թէեւ ան սկիզբը դժուարութիւններ կը դիմագրաւէր, սակայն հետզհետէ կը գնահատէր Ֆրանքի ջամբած բարեպաշտական դաստիարակութիւնը եւ 1715-ին իր առաջին հաղորդութիւնը կը ստանար: 1716–1719-ին, ընտանեկան պարագաներուն պնդումով, Զինգենտորֆ Ուիթընպըրկ կ'երթար իրաւագիտութիւն ուսանելու եւ հոն լուտերականութեան հանդէպ համակրանքով կը լեցուէր: 1719-ին եւ 1720-ին ան Հոլանտա ու Ֆրանսա կը ճամբորդէր, կը շփուէր այս ժամանակաշրջանի բազմաթիւ կարկառուն դէմքերուն հետ եւ իր կրօնական հակումները կը բացայայտէր: 1722-ին Զինգենտորֆ կ'ամուսնանար Հենրիխ Ռէուս ԻԹ. դուքսին քրոջ՝ Էրտմութ Տորթէյի հետ, որ իր իտեալ կողակիցը կը դառնար:

1721-ին Զինգենտորֆ Տրեգտընի պալատի ծառայութեան մէջ կը մտնէր: Սակայն իր գլխաւոր նպատակը կը դառնար բարեպաշտութիւն մշակել Տրեգտընի իր ընկերներուն մէջ եւ մանաւանդ Տրեգտընէն 70 մղոն հեռու գտնուող Պերթըլզտորֆ

գիւղի պապենական կալուածին վրայ ապրողներուն մէջ, ուր իր մտերիմ բարեկամ՝ Յովհան Անդրէաս Ռոթ հովիւ նշանակած էր:

Միացող եղբայրները Պոհեմիոյ եւ Մորաւիոյ մէջ դժուար օրեր կ'անցընէին: Անոնցմէ ոմանք Լեհաստան կ'ապաստանէին եւ հոն եւս բարդութիւններու կը բախէին: 1699-ին միացող եղբայրներ կը համոզէին Ֆրետերիք Գ.-ի Պերլինի պալատին կալվինական քարոզիչ եւ հօրենական անցեալով միացող եղբայրներու մօտ եղող Դանիէլ Էրնըսթ Եապլոնսքին, որ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանար: Չէիս բողոքականութիւնը մեծ վնասներ կրած էր Երեսուն տարիներու պատերազմէն եւ Պոհեմիոյ ու Մորաւիոյ մէջ հալածանքի ենթակայ էր: 1722-ին հիւսիսային Մորաւիա ապրող գերմանախօս միացող եղբայրներ Մաքսոնիա կ'ապաստանէին՝ ատաղձագործ Քրիստիան Տէյվիտի (1690–1751) առաջնորդութեամբ: Զինգենտորֆ կը թոյլատրէր, որ անոնք Պերթըլզտորֆի իր կալուածին վրայ Հերնհաթ անունով գիւղ մը կառուցէին եւ հոն հաստատուէին: Ասոնց կը միանային բազմաթիւ գերման եւ այլ բարեպաշտներ եւս: 1727-ին Զինգենտորֆ ասոնց հոգեւոր առաջնորդութիւնը կը ստանանէր: Սկիզբը որոշ դժուարութիւններ կ'ունենար, որովհետեւ ապաստանեալներ առանձին Եկեղեցի կ'ուզէին դառնալ, իսկ Զինգենտորֆ եւ Ռոթ կը փորձէին զանոնք ձուլել Լուտերական եկեղեցիին մէջ: Միւս կողմէ որեւէ գիւղ իրաւունք ունէր առանձին աշխարհիկ կազմակերպութիւն մը դառնալու եւ իր օրէնքները սահմանելու: Այս կարելիութիւններու լոյսին տակ 1727-ին Հերնհաթ կ'որոշէր երեցներով կառավարուիլ: Զինգենտորֆ՝ որպէս կալուածատէր, այս շարժումին դէկը կը ստանանէր եւ կը վերածնէր 13 օգոստոս 1727-ի սուրբ հաղորդութեան եկեղեցական արարողութեամբ միացող եղբայրութիւնը, որ ծանօթ է որպէս Մորաւիանական եկեղեցի:

Հերնհաթի աշխարհիկ կազմակերպութենէն շուտով կը ծլէր հոգեւոր շարժումը: Կը կազմուէր Երեցներու քառանդամ գործադիր վարչութիւնը, որ 1730-ին հովուական պաշտօններ

եւս կը ստանձնէր: Ընդհանուր երիցութիւնը կը ձեւաւորուէր եւ զայն առաջին ստանձնողը կ'ըլլար Լեոնարտ Տոպըր (1706?–1766), որ 1734-ին առաքելավայրէն Հերնհաթ կը վերադառնար: Զինգենտորֆի համար Հերնհաթի համայնքը Քրիստոսի այն բանակն էր, որ իր պատկերացուցած բողոքական նոր վանականութեան քրիստոնէական կենցաղը կրնար տարածել ամենուրեք՝ փոխան կուսակրօնութեան ուխտի ամենօրեայ աղօթքի կեանքը ապրելու: 1728-ին երիտասարդներն ու երիտասարդուհիները խիստ հսկողութեան տակ առանձին խումբերու մէջ կ'ապրէին: Երեխաներ իրենց ծնողներէն անջատուած կը դաստիարակուէին: Համայնքը նոյնիսկ կը փորձէր ամուսնութիւնները նախօրոք կարգաւորել: Համայնքին իտեալն էր աշխարհէն բաժնուած ապրիլ, սակայն ամեն տեղ երթալ Քրիստոսի թագաւորութիւնը հաստատելու համար: Երկու հակադիր հակումներ կը ձախողեցնէին այս ծրագիրը: Մորաւիանականներ կ'ուզէին հին միացող եղբայրներու զարթօնքը ապրիլ եւ առանձին յարանուանութիւն մը դառնալ: Սակայն Զինգենտորֆ, բարեպաշտական գաղափարաբանութեան հաւատարմութեամբ, կ'ուզէր Եկեղեցիին մէջ Եկեղեցի մը հաստատել եւ մորաւիանականները որպէս առանձին համայնք Լուտերական եկեղեցիին մէջ պահել եւ անոնց յաւելեալ հոգեւոր կեանք հայթայթել: Այս մօտեցումը թէ՛ լուտերականներէն եւ թէ՛ բարեպաշտներէն մեծ ընդդիմութեան կը բախէր, եւ անջատումը աւելի ընդունելի կը դառնար:

Մորաւիանականներու միսիոնարական ոգին միշտ ալ վառ կը մնար եւ այս մարզին մէջ անոնք բոլոր միւս բողոքականները կը գերազանցէին: Երբ Զինգենտորֆ Գոբենհակըն կ'երթար Դանիոյ Քրիստիան Զ.-ի (1730–1746) թագադրութեան ներկայ գտնուելու, կը հանդիպէր Արեւմտեան հնդկական կղզիներու ու Կրիսլէնտի դանիացիներուն եւ միսիոնարութեան նոր դաշտի կարելիութեամբ խանդավառուած կը վերադառնար տուն: Տոպըր եւ Դաւիթ Նիչմըն (1696–1772) 1732-ին Արեւմտեան հնդկական կղզիներ կը դրկուէին, իսկ Տէյվիտ եւ ուրիշներ 1733-ին՝ Կրիսլէնտ: 1735-ին, Օգոստոս Կոթլիպ Սպէն-

կընսարկի (1704–1792) գլխաւորութեամբ, ուրիշ խումբ մը Ամերիկայի Ճորճիա նահանգը կ'երթար: 1735-ին Եապլոնսքի եպիսկոպոս կը ձեռնադրէր Նիչմընը եւ հիմը կը դնէր արդի մորաւիանական եպիսկոպոսական յաջորդականութեան:

Մինչ այդ Զինգենտորֆի յարաբերութիւնները կը վատթարանային Սաքսոնիոյ իշխանութեան հետ: Աւատրիացիներ կը գանգատէին, թէ ան իրենց հպատակները կը նեղէր: 20 մարտ 1736-ին Զինգենտորֆ Սաքսոնիայէն դուրս կը դրուէր: Ան իր առաքելութիւնը կը ծաւալէր արեւմտեան Գերմանիոյ Ռոնընսպըրկ շրջանի եւ Պալթեան ծովը եզերող երկիրներուն մէջ: 1737-ին Պերլինի մէջ Եապլոնսքի եպիսկոպոս կը ձեռնադրէր Զինգենտորֆը: 1738-ին եւ 1739-ին Զինգենտորֆ Արեւմտեան հնդկական կղզիներ կ'երթար եւ 1741-ին՝ Լոնտոն, ուր արդէն մորաւիանականներ զգալի յաջողութիւն արձանագրած էին: Դեկտեմբեր 1741-ին ան Նիու Եորք կը ճամբորդէր եւ Սուրբ ծնունդի նախօրէին Փենսիլվանիոյ մէջ հաստատուած մորաւիանականներու կեդրոնը Բէթղեհէմ անունով կ'օժտէր: Հետագային Բէթղեհէմ Ամերիկայի մորաւիանականներու կեդրոնատեղին կը դառնար:

Ամերիկայի մէջ Զինգենտորֆ անդու կ'աշխատէր: Ան Փենսիլվանիոյ մէջ տարտղնուած գերման բողոքականները կը համախմբէր իր հաստատած Աստուծոյ եկեղեցին Հոգիին մէջ հաւաքով: Ան միսիոնարութեան կը նախաձեռներ բնիկ հնդիկներուն մէջ: Ան ութ մորաւիանական ծուխ կը հիմներ եւ դպրոցներ կը բանար: Պետրոս Պոհլըր (1712–1775) այս բոլորին վերահսկիչ կը նշանակուէր: Յունուար 1743-ին Զինգենտորֆ Եւրոպա կը վերադառնար եւ դեկտեմբեր 1744-ին Սպէնկընսպըրկ որպէս եպիսկոպոս ամերիկեան առաքելադաշտին պատասխանատուութիւնը կը ստանձնէր: Բնիկ հնդիկները քրիստոնէայ դարձնող մորաւիանականներու ամենէն նշանաւոր միսիոնարը կը հանդիսանար Դաւիթ Զէսպըրկըրը (1721–1808), որ 1740-էն մինչեւ իր մահը ինքզինք այս առաքելութեան կը նուիրէր:

Ահա այսպես Հերնհաթ կը վերածուէր միսիոնարներ կազմաւորող օճախի մը: Միսիոնարական աշխատանքը կը ծաւալէր մինչեւ Սուրիանա, Կույանա, Եգիպտոս եւ Հարաւային Ափրիկէ: 1771-ին մինչեւ իսկ Լապրատորի մէջ մնայուն միսիոնարութիւն կը հաստատուէր: Տիրական կը դառնար այն երէտոյթը, որ մորաւիանականներ ամենէն դժուար առաքելադատերը կ'երթային քրիստոնէութիւնը քարոզելու համար:

Մինչ այդ, հակառակ Զինգենտորֆի ճիգերուն, մորաւիանականութիւնը առանձին Եկեղեցի կը դառնար: 1742-ին ան որպէս առանձին Եկեղեցի կը ճանչցուէր Փրուսիոյ մէջ: 1745-ին ան իր եպիսկոպոսներով, երէցներով ու սարկաւագներով լաւապէս կը կազմակերպուէր, սակայն միշտ կը պահէր իր երիցական ղեկավարումի ոճը: 1749-ին Անգլիոյ խորհրդարանը Մորաւիանական եկեղեցին կը ճանչնար որպէս հին բողոքական եպիսկոպոսական Եկեղեցի: Հակառակ այս բոլորին՝ Զինգենտորֆ տակաւին կը հետապնդէր իր այն տեսակետը, թէ մորաւիանականութիւնը անջատեալ Եկեղեցի պէտք չէ դառնար: 1747-ին ան Սաքսոնիա վերադառնալու արտօնութիւն ձեռք կը ձգէր, 1748-ին մորաւիանականներ Օկսպուրկի հաւատքի խոստովանութիւնը կ'ընդունէին եւ 1749-ին Սաքսոնիոյ պետական Եկեղեցիի մէկ մասը կը համարուէին: Առաւել, անոնք իրենց յատուկ պաշտամունքը եւ եկեղեցական երաժշտութիւնը կը մշակէին: Մորաւիանական եկեղեցին թէեւ կը շարունակէր փոքր Եկեղեցի մը ըլլալ, սակայն անոր ազդեցութիւնը կը տարածուէր շնորհիւ իր Եւրոպայի սփիւռքին: Բազմաթիւ հաւատացեալներ, տեղական պետական եկեղեցիներու անդամ մնալով հանդերձ, մորաւիանականութեամբ կը հմայուէին:

Զինգենտորֆի եւ անոր հետեւորդներուն մշակած կարգ մը աստուածաբանական տեսակետները քննադատութեան կ'ենթարկուէին: Ան Քրիստոսի խաչի մահը տերունի արիւնի ու վերքերու մանրամասնութիւններով կը ծանրաբեռնէր: Այս տեսակէտը, նաեւ Զինգենտորֆի որդիին՝ Քրիստիան Ռենսթոսի (1727–1752) ջանքերով, յատկապէս կը տարածուէր Ռո-

նընպըրկի, Մարիենպորնի եւ Հերնհակի մէջ: Նաեւ Ջինգենտորֆի պնդումը, թէ քրիստոնեաներ Աստուծոյ արքայութիւնը մտնելու համար մանուկներու պէս պէտք էր ըլլային, տհասութիւն կը համարուէր: Այս ծայրայեղութիւնները առաւելաբար 1747–1749-ին կը շեշտուէին, սակայն ընդհանրապէս կը յայտնուէին եւ Ջինգենտորֆ անգամ կը հրաժարէր անոնցմէ: Մորաւիանականներուն համար այս ժամանակաշրջանը ինքնաքննութեան հանգրուան էր: Ջինգենտորֆի եզրակացութիւնը կը յանգէր «Մէկ ձգտում ունիմ եւ ան ալ Քրիստոս ինք է» հաստատումին:

1749–1755 Ջինգենտորֆ մեծ մասամբ Անգլիա կ'ապրէր: Ան իր բոլոր նիւթական կարելիութիւնները մորաւիանականութեան ի սպաս դրած էր եւ սնանկութեան մէջ կը գտնուէր: Մորաւիանականութիւնը կը ստանձնէր անոր պարտքերուն հատուցումը: Այս տնտեսական դառն փորձառութիւնը կը պարտաւորէր մորաւիանականները իրենց կանոնազրութեան մէջ ներառելու տնտեսական յանձնախումբի մը կազմութիւնը եւ ընդհանուր ժողովի մասնակցութեան համար սահմանել ծուխերուն կողմէ վճարելի նիւթական տուրք մը:

Ջինգենտորֆ իր կեանքի վերջին տարիները հովուական ծառայութեան կը նուիրէր: Ան ֆիզիքապէս կը տկարանար եւ իր կլինն ու միակ տղան կը կորսնցնէր: 9 մայիս 1760-ին ան կը մահանար Հերնհաթի մէջ: Միացող եղբայրները, որպէս Մորաւիանական եկեղեցի, անքան արմատացած էին, որ իր մահը հիմնական ցնցում չէր պատճառէր: Եկեղեցիի առաջնորդութիւնը ստանձնելու համար 1762-ին Սպէնկընպըրկ Ամերիկայէն Հերնհարթ կը վերադառնար եւ մինչեւ իր 1792-ի մահը կը վարէր այս պատասխանատու պաշտօնը: Ան թէեւ Ջինգենտորֆի կարողութիւններով չէր օժտուած, սակայն բարեպաշտ ու գործնապաշտ անձ մըն էր: Անոր հովանիին տակ մորաւիանականութիւնը առաւել կը զօրանար, կ'աճէր ու կը բիրտեղանար: Մորաւիանական եկեղեցին այլեւս մաս կը կազմէր քրիստոնէական ընտանիքին եւ կը յատկանշուէր իր աշխարհատարած միսիոնարական եռանդով:

Է. ԳԼՈՒԽ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶԱՐԹՕՆՔԸ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՉԱՐԼՁ ՈՒԷԶԼԻ ՈՒ ՄԵԹՈՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԺԸ. դարուն ծաւալած պայքարները ԺԸ. դարուն Անգլիոյ մէջ կրօնական թուլութիւն կը պատճառէին Անգլիոյ եկեղեցիին եւ այլախոհ եկեղեցիներուն: Պատճառականութիւնը տիրական էր կրօնական մտածողութեան մէջ, եւ քրիստոնէութիւնը կը համարուէր աստուածային օրէնքներու բարոյական շղթայ մը միայն: Յովսէփ Պաթլըր այս հակումին լաւագոյն ներկայացուցիչն էր: Կարգ մը մտաւորականներ անոր տեսակէտները կ'որդեգրէին, սակայն անոնցմէ փոքր թիւ մը միայն գործնական քայլերու կը դիմէր: Կարող քարոզիչներ կային, սակայն անոնք միայն բարոյախօսութեամբ կը բաւարարուէին: Եկեղեցիէն հեռացածները ետ բերելու աշխատանքը չէր հետապնդուեր: Պարզ խաւի մարդիկ հոգեւոր սնանկութեան մէջ էին: Ժողովրդային հաճոյքները անմակարդակ դարձած էին, գրաճանաչութեան կենսականութիւնը անտեսուած էր, բանտերը ախտաւորներով լեցուն էին եւ զինեմութիւնը համատարած էր:

Աւելին, Մեծն Բրիտանիան, երկրագործութենէ գործարանային արտադրութեան անցնելով, ճարտարարուեստի յեղափոխութիւնը կը դիմագրաւէր ԺԸ. դարու վերջաւորութեան: Յակոբոս Ուաթ (1736–1819), Յակոբոս Հարկրիվզ (մահացած՝ 1778-ին), Ռիչըրտ Արքրայթ (1732–1792), Էտմունտ Գարթվրայթ (1743–1823) եւ Ճոզիա Ուէճվուտ (1730–1795) իրենց զանազան մեքենական գիտերով կը նպաստէին այս շարժումին: Ճարտարարուեստական ու ընկերային փոփոխութիւնները եւ անոնց առնչուած հարցերը կրօնական կեանքին վրայ մեծ ազդեցութիւն պիտի ունենային:

ԺԸ. դարու սկիզբը կեանքի աւելի լաւ պայմաններու ստեղծումին ձգտող մարդիկ բանալի դերակատարութիւն կ'ունենային: Ուիլեմ Լօ ոչ միայն աստուածայնութեան ընդդի-

մացող մըն էր, այլ նաեւ 1728-ին իր լոյս ընծայած *Բարեպաշտ եւ սուրբ կեանքի լուրջ հրաւեր* երկով խոր ազդեցութիւն կ'ունենար Յովհաննէս Ուէզլիի վրայ: Եկեղեցիի ժողովական ղեկավարումի ջատագով Իսահակ Ուաթս (1674–1748) անգլիական արդի հոգեւոր երգերու հիմնադիրը կը համարուի: 1707-ին եւ 1719-ին անոր լոյս ընծայած Սաղմոսներուն վրայ հիմնուած հոգեւոր երգերը խոր ու կենդանի բարեպաշտութիւն կը մտցնէին Մեծն Բրիտանիոյ մէջ եւ Ատլանտեան ովկիանոսէն անդին եւս կը հասնէին:

Կրօնական կեանքը վերաջերմացնելու հաւաքական ճիգեր ի գործ կը դրուէին: Կը կազմուէին հոգեւոր ընկերակցութիւններ, որոնցմէ առաջիններուն կը հանդիպինք 1678-ին Լոնտոնի մէջ. անոնք ի մի կու գային աղօթելու, Աստուածաշունչ կարդալու, հոգեւոր կեանք ապրելու, սուրբ հաղորդութիւն ստանալու, աղքատներուն, զինուորներուն ու բանտարկեալներուն օգնելու եւ քրիստոնէութիւնը քարոզելու համար: Ասոնք շատ արագօրէն կը տարածուէին: 1700-ին շուրջ 100 հոգեւոր ընկերակցութիւն կար միայն Լոնտոնի մէջ. ասոնք Անգլիոյ տարածքին եւ Իրլանտայի մէջ եւս սփռուած էին: 1702-ին Էփուրբրի մէջ այսպիսի ընկերակցութիւն մը կը հիմնէր Յովհաննէս Ուէզլիի հայրը՝ Մամուէլ Ուէզլի: Ասոնք առաջնորդող ղեկավար մը չունէին, այլ ընկերակցութիւններու անդամներ իրենք զիրենք կը կազմակերպէին ըստ պահանջի ու յարմարութեան: Հոգեւորականներուն մեծամասնութիւնը, այս ընկերակցութիւնները ծայրայեղական համարելով, զանոնք չէին քաջալերեր, եւ 1710-էն ետք անոնք աստիճանաբար կ'անհետանային. սակայն շարունակուող ընկերակցութիւնները մեթոտականութեան սկզբնական քայլերուն վրայ մեծ ազդեցութիւն կ'ունենային:

Այս բոլոր հաւաքական նախաձեռնութիւնները տեղական ու մասնակի էին: Անգլիոյ բնակչութեան մեծամասնութիւնը հոգեւոր անտարբերութեան մէջ կը գտնուէր եւ մեղքի ու յաւիտենական վարձատրութեան եւ դատապարտութեան կոյր զգայնութիւն ունէր: Քրիստոսի հանդէպ հաւատար-

մութիւնը եւ անոր բերած փրկութեան ու հոգեւորոգ հաւատքի հասկացողութիւնը բացակայ էին: Տրամաբանութիւնը անդրանցող եւ սիրտը ջերմացնող հոգեւոր զարթօնքի կարիքը շատ զգալի էր: Աւետարանական զարթօնքը Անգլիոյ եւ անգլիախօս երկիրներուն մէջ մեծ փոփոխութիւն կը բերէր: Աւետարանական վերազարթօնքը կը սկսէր ԺԸ. դարու սկիզբը: Սկովտիոյ մէջ Եպենեզըր (1680–1754) եւ Ռալֆ (1685–1752) Էրսքինի առաջնորդութեամբ, աւետարանական շարժումը ծայր կ'առնէր: 1714-ին այնքան մեծ թիւով հաւատացեալներ եկեղեցի կու գային, որ Եպենեզըր ստիպուած կ'ըլլար եկեղեցիին մօտ գտնուող դաշտին մէջ քարոզել: 1717-ին ԺԷ. դարու հեղինակը անձանօթ, Եդուարդ Ֆիշըրի վերագրուած, *Արդի աստուածութեան էութիւնը* երկը կը վերահրատարակուէր Էթրիքի եռանդուն քարոզիչ Թովմաս Պոսթընի (1677–1732) նախաձեռնութեամբ: Այս շարժումին հետեւորդները կը սկսէին մեծ համակրանքի արժանանալ եւ ժողովրդային աղօթքի հաւաքներ կազմակերպել: 1730-ականներուն Ուէլզի մէջ Հաուրլ Հերիս (1714–1773) եւ Դանիէլ Ռաուլընտզ (1713–1790) աւետարանական զարթօնքը կը ղեկավարէին: Սակայն երեք մեծ առաջնորդներ՝ Յովհաննէս Ուէզլի, Չարլզ Ուէզլի ու Գեորգ Ուայթֆիլտ աւետարանական զարթօնքի տարածումին ռահվիրաները պիտի դառնային: Անգլիոյ եկեղեցիի անմիջականութեան մէջ, աւետարանական զարթօնքը չորս տասնամեակ երեք իրարու առնչուած խումբերով կը տարածուէր. առաջին՝ Յովհաննէսի եւ Չարլզի հովանին վայելող մեթոտականներ. երկրորդ՝ Ուայթֆիլտի առաջնորդած կալվինական մեթոտականներ. երրորդ՝ աւանդական ծուխերու պատկանող անգլիգան աւետարանականներ: 1779-ին այս խումբերը կը սկսէին Անգլիոյ եկեղեցիէն պաշտօնապէս անջատուիլ:

Յովհաննէս եւ Չարլզ Ուէզլի եղբայրներու հօրենական ու մօրենական մեծ հայրերը 1662-ին կը պատկանէին Եկեղեցիին ընդդիմացած հոգեւորականներու խումբին: Անոնց հայրը՝ Սամուէլ Ուէզլի (1662–1735), մեղմ նկարագիրով մարդ մը, 1696-էն մինչեւ իր մահը Էփուրթի անգլիգան եկեղեցիի հովին էր:

Ան հեղինակն էր *Քրիստոսի կեանքը* երկին եւ Յոբի մեկնութեան հատորի մը: Անոնց մայրը՝ Սուսաննա Անեալի, ուժեղ նկարագիր ունէր եւ բարեպաշտ անգլիգան էր: Յովհաննէս եւ Չարլզ իրենց հօր ու մօր կրօնական շունչին տակ կը մեծնային, սակայն առաւելաբար կ'որդեգրէին իրենց մօր ուժականութիւնը: Ուէզլիներ բազմանդամ ընտանիքի տնտեսական դժուարութիւնը դիմագրաւող 19 զաւակ էին, Յովհաննէսը 15-րդը եւ Չարլզը 18-րդը:

Յովհաննէս Ուէզլի ծնած էր 17 յունիս 1703-ին, իսկ Չարլզ Ուէզլի՝ 18 դեկտեմբեր 1707-ին: Երկուքն ալ 1709-ին երիցատունին մէջ ծագած հրդեհէն փրկուած էին, եւ Յովհաննէս, ակնարկելով այս աղետին, յաճախ կ'ըսէր, թէ ինք կրակէն անցած անձ մըն էր: 1714-ին Յովհաննէս Չարթըրհաուս դպրոցը եւ 1716-ին Չարլզ Ուէսթմինըսթըրը դպրոցը կը մտնէին՝ Լոնտոնի մէջ: Երկուքն ալ մեծ գնահատանքի կ'արժանանային իրենց դպրոցներուն մէջ: 1720-ին Յովհաննէս եւ 1726-ին Չարլզ Օքսֆորտի Քրիստոս եկեղեցի գոլեճի ուսանող կ'ըլլային: 1726-ին, առ ի գնահատութիւն իր իմացական կարողութեան, Չարլզ Լինքըն գոլեճի հետեւորդ անդամ կը դառնար: Այս պատիւին արժանացողը ձեռնադրուած պէտք էր ըլլար, եւ 25 սեպտեմբեր 1725-ին ան սարկաւազ կը ձեռնադրուէր: Ձեռնադրութենէն ետք ան հոգեւոր պայքարի մէջ կը նետուէր, 1738-ին դարձի կու գար եւ հոգեւոր կեանքի փնտրտուքը մինչեւ մահ կը շարունակէր:

1726–1729-ին Յովհաննէս Ուէզլի իր հօր օգնականը կը դառնար եւ 22 սեպտեմբեր 1728-ին քահանայ կը ձեռնադրուէր: 1729-ի գարնան Չարլզ Ուէզլի Օքսֆորտէն բաժնուելով իր երկու դասընկերներուն՝ Ռոպերթ Քիրքիլմի եւ Ուիլլերմ Մորկընի հետ կը հիմնէր փոքր ակումբ մը, որուն նպատակը թէեւ ուսումի մէջ խորանալն էր, սակայն ան նաեւ օգտակար գիրքեր կարդալու եւ իրարու հետ յաճախ սուրբ հաղորդութիւն ստանալուն կը ծառայէր: Նոյեմբեր 1729-ին, երբ ան Օքսֆորտ կը վերադառնար, այս խումբին առաջնորդը կը դառնար եւ այլ ուսանողներ եւս կը ներգրաւէր: Անոր նպատակն էր ապրիլ Ուիլլերմ Լոյի հոգեւոր կեանքի գաղափարականը: Օգոստոս 1730-էն

սկսեալ եւ Մորկընի ազդեցութեամբ՝ խումբը Օքսֆորտի բանտարկեալներուն այցելութիւններ կու տար: Խումբին անդամները պահք պահելու եւ եկեղեցիի կեանքին մասնակից ըլլալու պատճառով համալսարանականներուն կողմէ որպէս սուրբ ակումբի անդամներ ծաղրի առարկայ կը դառնային: Կարգ մը ուսանողներ նաեւ զանոնք մեթոտական կը կոչէին: Անշուշտ անոնք դասական մեթոտականներ ըլլալէ շատ հեռու էին տակաւին եւ պարզապէս իրենց հոգիներու փրկութեան ձգտող երիտասարդներ էին:

1735-ին Գեորգ Ուայթֆիլտ այս ակումբին կը միանար: Ան ծնած էր Կլուչեսթըրի մէջ, 16 դեկտեմբեր 1714-ին: Ան աղքատ պանդոկատերի մը զաւակն էր եւ 1733-ին Օքսֆորտի ուսանող կը դառնար: 1735-ի գարնան ան ծանրօրէն կը հիւանդանար եւ կ'ապրէր կրօնական դառն ցնցում մը, որ կը յաղթահարէր Աստուծոյ պարգեւած հոգեկան խաղաղութեամբ ու երջանկութեամբ: Յունիս 1736-ին ան եպիսկոպոս կը ձեռնադրուէր եւ երիտասարդ տարիքէն յաջող քարոզիչ կը դառնար: Ան ԺԸ. դարու ամենէն սիրուած անգլո-սաքսոն քարոզիչն էր: Ան կ'անտեսէր իր օրերու այնքան տիրական յարանուանական խտրութիւնը եւ ընդառաջելով բոլոր հրաւերներուն՝ կը քարոզէր ամեն յարանուանութեան պատկանող եկեղեցիի մէջ: Ան ծայր աստիճան պարզ անձ մըն էր: Իր պատգամը այն էր, թէ Աւետարանը Աստուծոյ թողութիւն պարգեւող շնորհը կը բաշխէր եւ Քրիստոսի հաւատալով խաղաղութիւն կը ստանայինք եւ մեր կեանքը երջանկալից ծառայութեան կը նուիրէինք: Իր բամբ ձայնով եւ քարոզած պատգամին անմիջականութեամբ՝ ան մեծ թիով հաւատացեալներ կը գրաւէր Եւրոպայի ու Ամերիկայի մէջ: Անոր ծառայութեան մեծ մասը Ամերիկայի մէջ կ'անցնէր: 1738-ին ան Ճորճիա կը գտնուէր: 1739-ին ան դարձեալ Ամերիկա կ'երթար եւ կը քարոզէր Նիու Անգլիոյ մէջ, ուր, 1740-ին, տեղի կ'ունենար ցարդ պատահած ամենէն մեծ հոգեւոր զարթոնքը: Ան մեծ յաջողութիւն կ'արձանագրէր նաեւ Ամերիկայի կեդրոնական նահանգներուն մէջ, թէւ այս բոլոր իրագործումներուն մնայուն հոգեւոր ներգործութիւնը հարցա-

կան կը դառնար: 1744–1765-ին ան յաճախ Ամերիկա կը գտնուէր: 1769-ին ան ամերիկեան իր վերջին քարոզչական շրջապտոյտը կը կատարէր եւ 30 սեպտեմբեր 1770-ին Մեսսչուսէցի Նիւպրիփորթ քաղաքին մէջ մահկանացուն կը կնքէր: Ան Ամերիկայի բոլոր բողոքական եկեղեցիներուն իր ծառայութիւնը կը մատուցէր: Ան կազմակերպչական մտահոգութիւն չունէր: Ուայթֆիլտ իր անունը կրող հետեւորդներ չէր ունենար, սակայն հազարաւոր անձերու հոգեւոր զարթօնք կը պատճառէր:

Մեթոտական ակումբի անդամները երկարատեւ կեցութիւն չէին ունենար Օքսֆորտի մէջ, եւ իրենց շարժումը հոն մնայուն ազդեցութիւն չէր ձգէր: 25 ապրիլ 1735-ին, երբ Սամուէլ Ուէզլի կը մահանար, Յովհաննէս եւ Չարլզ, ընտանեկան պարտաւորութիւններէ ձերբազատուած, միսիոնարութեան նուիրուելով 1733-ին Օկլըթհորփ զօրավարին կողմէ ճորճիոյ մէջ հիմնուած նոր գաղութը կը հասնէին: Երբ անոնք նաւով ճամբայ կ'ելլէին ճորճիա երթալու համար, քարոզչական փորձառութիւն չունէին. սակայն նաւուն մէջ Դաւիթ Նիչմըն եպիսկոպոսի գլխաւորութեամբ ճամբորդող 26 մորաւիանականներու հետ կը բարեկամանային: Երբ նաւը փոթորիկի կը բռնուէր եւ Յովհաննէս այս մորաւիանականներու Աստուծոյ հանդէպ ունեցած վստահութիւնը կը տեսնէր, խորապէս կը տպաւորուէր: Երբ Սաւանա կը հասնէր, Օգոստոս Կոթլիպ Սպէնկընպըրկ իրեն հարց կու տար. «Ո՞վ է Յիսուս Քրիստոսը»: Ան կը պատասխանէր. «Գիտեմ, որ ան աշխարհի փրկիչն է»: Սպէնկընպըրկ կ'աւելցնէր. «Այո. սակայն գիտե՞ս, որ ան նաեւ քեզ փրկեց»:

Յովհաննէս եւ Չարլզ Ուէզլի ճորճիոյ մէջ մեծ ճիգ կը թափէին, սակայն յաջողութեան չէին հասնէր: 1736-ին Չարլզ յուսախաբ ու հիւանդ տուն կը վերադառնար: Յովհաննէս կը շարունակէր իր առաքելութիւնը՝ քարոզելով գերմաներէն, ֆրանսերէն եւ իտալերէն լեզուներով: 1736-ին ան Սաւանայի մէջ կը կազմէր հոգեւոր խմբակ մը: Ան հեւասպատ աշխատանքի կը լծուէր, սակայն իր շուրջիները այս ընթացքէն չէին

ախորժեր: Ան ճշդապահ բարձրաստիճան հոգեւորական մըն էր, որ որոշումներ առնելու պարագային հաստատակամութիւն չունէր: Օրինակ՝ ան Սոֆի Հոփքիին հետ ամուսնանալու առաջարկը կ'ընէր, սակայն յետոյ չէր կրնար որոշել, թէ կուսակրօն կեանք պէտք էր ապրէր կամ ընտանիք կազմէր: Յովհաննէս նախապաշարումի կը հաւատար էւ միշտ իր որոշումները կ'առնէր Աստուածաշունչի բացած առաջին էջին թելադրականութեամբ կամ վիճակ ձգելով: Ան նոյնը կը կատարէր իր ամուսնութեան պարագային, եւ երբ արդիւնքը ժխտական կ'ելլէր, կը մերժէր Հոփքիին հետ ամուսնանալ: Հոփքի ուրիշ մարդու մը հետ կ'ամուսնանար եւ նոր ամուսինը կ'արգիլէր, որ Հոփքի Յովհաննէսի հոգեւոր խմբակին մաս կազմէր: Յովհաննէս Հոփքիին սուրբ հաղորդութիւն տալ կը մերժէր՝ պատճառաբանելով, թէ ան հոգեւոր պատրաստութեամբ չէր մօտենար սուրբ հաղորդութիւն ստանալու: Հոփքիի բարեկամները այս քայլը անոր Յովհաննէսի հետ չամուսնանալուն կը վերագրէին: Յովհաննէս ճորճիոյ մէջ իր հեղինակութիւնը կը կորսնցնէր եւ իր դէմ բազմաթիւ դատեր կը բացուէին: Ան 1 փետրուար 1738-ին կը պարտաւորուէր Անգլիա վերադառնալ: Ան տունդարձի ճամբուն վրայ եւս մահուան սարսափը կը դիմագրաւէր եւ մեծ յուսախաբութիւն կ'ապրէր իր միսիոնարութեան մէջ ինքզինք ձախողած նկատելով: Սակայն ան ամեն ջանք գործադրած նշանաւոր քարոզիչ էր: Թէեւ Յովհաննէս շատ սխալներ կը գործէր, սակայն իր քրիստոնէական կոչումին մէջ հաստատ կը մնար:

Բարեբախտաբար Յովհաննէս Ուէզլիի Անգլիա վերադարձէն մէկ շաբաթ ետք Յովհաննէս եւ Չարլզ Ուէզլի Լոնտոնի մէջ կը հանդիպէին մորաւիանական Պետրոս Պոհլըրի, որ մինչեւ մայիս հոն կը մնար ճորճիա ճամբորդութեան ճանապարհին վրայ: Պոհլըրի քարոզութիւնը հիմնուած էր ամբողջական հաւատք Աստուծոյ վրայ, անմիջական հոգեդարձ եւ ապա երջանկալից կեանք սկզբունքներուն վրայ: Ան, նախքան Ամերիկա ճամբորդելը, կը կազմէր հոգեւոր խմբակ մը, որուն նաեւ Յովհաննէս կ'անդամակցէր: Սակայն Յովհաննէս եւ

Չարլզ տակալին իրենց հոգեկան խաղաղութիւնը չէին գտած: 21 մայիս 1738-ին, երբ լուրջ հիւանդութեամբ մը կը գալարուէր, Չարլզ իր հոգեդարձը կ'ապրէր: 25 մայիսին Յովհաննէս եւս իր հոգեդարձի փորձառութիւնը կ'ունենար: Ան այս մասին կը պատմէր, թէ գիշերը, անտրամադիր վիճակի մէջ, կ'երթար Լոնտոնի Ալտըրսկէյթ փողոցին վրայ տեղի ունեցող անգլիգան հոգեւոր խմբակի մը հանդիպումին, ուր Լուտերի *Մեկնութիւն Հռոմայեցիներու նամակին* երկին յառաջաբանը կը կարդացէր: Յովհաննէս կը մանրամասնէ, թէ «Սօտաւորապէս 9-ին քառորդ կար, երբ Լուտեր կը նկարագրէր, թէ Քրիստոսի հանդէպ իր ունեցած հաւատքին պատճառով ինչպէս Աստուած իր սիրտին մէջ փոփոխութիւն մտցուցած էր, իմ սիրտս եւս գերբնական ջերմութեամբ պատուեցաւ: Չգացի, թէ միայն Քրիստոսի կը վստահիմ իմ փրկութեանս համար, եւ գերազանց ապահովութիւն մը ապրեցայ: Քրիստոս զիս մեղքերէս մաքրեց եւ զիս մեղքի ու մահուան օրէնքէն փրկեց»: Այս փորձառութեամբ՝ Յովհաննէս կը սկսէր քրիստոնէական ճշմարիտ կեանք ապրիլ եւ մշակել իր աստուածաբանութիւնը: Առաւել, քարոզելով, ուրիշներուն մէջ եւս նման փորձառութիւններ նշմարելով եւ Աստուծոյ հետ ուղղակի յարաբերութեան մէջ մտնելով՝ ան հաւատքի ամբողջական ազատութեան ու երջանկութեան կը տիրանար:

Յովհաննէս Ուեզլի կ'որոշէր մորաւիանականներուն մասին աւելին իմանալ, որովհետեւ անոնք իր հոգեդարձին մեծապէս օժանդակած էին: Իր հոգեդարձէն երեք շաբաթ ետք ան Գերմանիա կ'երթար: Մարիէնպորնի մէջ ան Նիկողայոս Լուտվիկ Ջինգենտորֆի կը հանդիպէր, երկու շաբաթ Հերնհաթի մէջ կը մնար եւ սեպտեմբեր 1738-ին Լոնտոն կը վերադառնար: Այս այցելութիւնը բազմաթիւ դրական երեսներով կ'ուրախացնէր Յովհաննէսը, սակայն ան նաեւ դժգոհ կը մնար, որ Ջինգենտորֆի չափէն աւելի մեծարանք կը շոայլուէր: Մորաւիանական բարեպաշտութիւնը Յովհաննէսի բոլոր ակնկալութիւնները չէր գոհացնէր: Ան մորաւիանականներէն աւելի կրօ-

նական ապրումներ ուներ, աւելի խորհրդապաշտ էր եւ աւելի մարդերու կարիքներուն գոհացումին ձգտող:

Յովհաննէս եւ Չարլզ Ուէզլի կը սկսէին ամեն տեղ Քրիստոսը քարոզել, թէւ բազմաթիւ եկեղեցիներ անոնց պատգամէն չէին խանդավառուեր եւ անոնք եկեղեցիներու փոխարէն հոգեւոր խմբակներու ժողովարաններուն մէջ կը քարոզէին: 17 փետրուար 1739-էն սկսեալ Ուայթֆիլտ Պրիսթըլի մէջ կը քարոզէր Քինկսվուտի հանքագործերուն: Ան կը բարեկամանար Հաուրլ Հերիսի հետ, որ 1736-էն սկսեալ, որպէս աշխարհական քարոզիչ, Ուէլզի մէջ մեծ համբաւի տիրացած էր: Ուայթֆիլտ Յովհաննէսը Պրիսթըլ կը հրաւիրէր: Ան թէւ վերապահութիւն կը յայտնէր բացօթեայ քարոզելուն, սակայն աւետարանին ծարաւը ունեցողներուն երթալու մղումը զինք Պրիսթըլ կը տանէր: 2 ապրիլ 1739-ին Յովհաննէսի Պրիսթըլի մէջ սկսած քարոզութիւնը աւելի քան 50 տարի պիտի շարունակուէր: Չարլզ շուտով իր երբօր օրինակին կը հետեւէր: Յովհաննէս Ուայթֆիլտի քարոզիչի յատկանիշերը չունէր, սակայն ժողովուրդը կը գրաւէր իր անկեղծութեամբ, գործնականութեամբ ու արհիութեամբ: Յատկապէս իր քարոզութեան սկզբնական շրջանին ան ամբոխին կողմէ յարձակումի կ'ենթարկուէր, սակայն իր առաքելութեան մէջ բնաւ չէր տկարանար: Իր քարոզութեան ազդեցութեան տակ ունկնդիրներ յաճախ կը գոռային, կը մարէին եւ այլ անբնական վիճակներու կը մատնուէին: Յովհաննէս եւ Ուայթֆիլտ կը հաւատային, որ այս երեւոյթները Աստուծոյ Հոգիին ներգործութիւնն էին եւ կամ Սատանային դէմ երեւելի ընդդիմութիւն էին: Չանազան եկեղեցիներու հոգեւորականներ կ'ընդդիմանային այս երեւոյթներուն:

Յովհաննէս Ուէզլիի կազմակերպչական կարողութիւնները շուտով ակնառու կը դառնային, սակայն մեթոտականութիւնը աստիճանաբար պիտի կազմաւորուէր եւ պիտի յարմարէր ժամանակի պայմաններուն: 1739-ին Պրիսթըլի մէջ ան կը հիմնէր իր առաջին մեթոտական ընկերակցութիւնը եւ 12 մայիս 1739-ին՝ առաջին մատուռը, իսկ նոյն տարուան աւարտին կը հիմնէր Լոնտոնի առաջին մատուռը:

Լոնտոնի մեջ մեթոտականներ միացած էին մորալիանականներուն, սակայն Յովհաննէս Ուէզլիի գաղափարականները զանոնք մորալիանականներէն կը հեռացնէր: Այս բաժանումը աւելի կը սրէր, երբ հոկտեմբեր 1739-ին Ջինզենտորֆի հետ կապի մեջ եղող Փիլիպպոս Հենրիխ Մոլթեր (1714–1780) մորալիանականներուն կ'ուսուցանէր, թէ երբ մէկը կասկածի մեջ էր, ճշմարիտ հաւատքէն հեռացած էր եւ ինքզինք եկեղեցիի խորհուրդներէն ու աղօթքէ հեռու պէտք էր պահէր եւ լռութեամբ պէտք էր սպասէր մինչեւ Աստուած անոր կրօնական յոյսը վերանորոգէր: Յովհաննէս այս ուսուցումին համաձայն չէր գտնուէր: Մորալիանականներ ու մեթոտականներ կը բաժնուէին, եւ Յովհաննէս 23 յուլիս 1740-ին իր հետեւորդներով Մեթոտական միացեալ ընկերակցութիւնը կը կազմէր: Ան թէեւ բարեկամական կապեր կը պահէր կարգ մը մորալիանականներու հետ, սակայն այլեւս անոնցմէ անկախ կը գործէր:

Յովհաննէս Ուէզլի Անգլիոյ եկեղեցիէն բաժնուելու մտադրութիւն չունէր: Այս պատճառով ալ ան եկեղեցիներ չէր հիմներ, այլ կրօնական ընկերակցութիւններու ժողովարանները կ'օգտագործէր իր հետեւորդներուն հետ: Այս ընկերակցութիւնները սկզբնապէս խմբակներու բաժնուած էին եւ քրիստոնէական կեանքը մշակելու կը ծառայէին: Այս եղանակը մորալիանական էր, սակայն Յովհաննէս աւելի ազդու քայլերու պիտի դիմէր: Պրիսթըրլի հոգեւոր խմբակի կազմութենէն ետք ան կ'որոշէր, անդամներուն տոմսակներ տալով, զանոնք փորձառական շրջանի համար հանդիպումներու մասնակցողներէն զատորոշել: Այս տոմսակները երեք ամիսը անգամ մը վերանորոգելի էին: Պրիսթըրլի մատուոյն պարտքը կը պարտաւորէր, որ ուրիշ քայլ մը եւս առնուէր: 15 փետրուար 1742-ին անդամներ 2ուրջ 12 անձերէ բաղկացած դասերու կը բաժնուէին եւ իւրաքանչիւրը առաջնորդ մը կ'ունենար, որ ամեն շաբաթ իւրաքանչիւր անդամէ բենի մը կը հաւաքէր: 25 մարտին նոյն դրութիւնը նաեւ Լոնտոնի մեջ կը հաստատուէր: Այս դրութիւնը տնտեսական օգնութենէն աւելի հոգեւոր վերատեսչութեան եւ

իրարու համարատու ըլլալուն մեծապէս կ'օժանդակէր եւ մեթոտականութեան գլխաւոր յատկանիշերէն մին կը դառնար:

Յովհաննէս Ուէզլի կը փափագէր, որ քարոզները ձեռնադրեալ հոգեւորականներու կողմէ տրուէին, սակայն իր շարժումին համակրող բաւարար հոգեւորական չէր կրնար գտնել: Թէեւ աշխարհական քարոզիչ Յովսէփ Համֆրիզ 1738-էն սկսեալ իր օգնականն էր, սակայն 1742-ին աշխարհական քարոզիչ Թովմաս Մաքսֆիլտն էր, որ պաշտօնապէս օգնականի պաշտօնը կը ստանձնէր: Շարժումին աճումը այլ աշխարհականներ եւս կը ներառէր. տնտեսներ ստացուածքներով կը զբաղէին, ուսուցիչներ դպրոցները կը ստանձնէին եւ յատուկ այցելուներ հիւանդներուն տեսութեան կ'երթային: Սկզբնական շրջանին Յովհաննէս բոլոր խմբակները անձամբ կ'այցելէր, որոնք ընդհանրապէս Լոնտոնի եւ Պրիսթըլի մէջ էին: 1744-ին Լոնտոնի մէջ ան քարոզիչները իր հետ հանդիպումի կը հրա-ւիրէր եւ ապա տարեկան համագումարներու դրութիւնը կը հաստատէր: Երկու տարի ետք շրջաններու դրութիւնը կ'որդեգրուէր եւ իւրաքանչիւր ճամբորդող քարոզիչներու կողքին տեղական առաջնորդներ կ'ունենային: Աւելի ուշ իւրաքանչիւր շրջան օգնականով մը կ'օժտուէր: Յովհաննէս իր աշխարհական քարոզիչներուն անհրաժեշտ կազմաւորումը տալու համար համապատասխան հրատարակութիւններու կը նախաձեռնէր: Ան նաեւ կը փորձէր անոնց եպիսկոպոսական ձեռնադրութիւն տալ, սակայն երբ կը ձախողէր, չէր արտօներ, որ չձեռնադրուած աշխարհական մը Եկեղեցիի խորհուրդները մատակարարէր:

Թէեւ Յովհաննէս Ուէզլի աստուածաբանականօրէն աւետարանական հիմնաւորում ունէր եւ իր խմբակները Անգլիոյ եկեղեցիին մաս կը համարէր, սակայն երկու վեճ զգալիօրէն հակամարտութիւն կը յառաջացնէր: Առաջինը կատարելութեան ըմբռնումին կը վերաբերէր: Յովհաննէս կը հաւատար, որ երբ քրիստոնէան Աստուած եւ իր նմանը սիրէր, մեղքի տիրապետութենէն կ'ազատագրուէր: Ան կ'ըսէր, թէ այս մէկը նպա-

տակ է եւ ոչ յաջողած իրագործում. առաւել՝ ան կը հաստատեր, որ փրկութիւնը գործուն հնազանդութիւն է Աստուծոյ կամքին:

Երկրորդ վեճը նախասահմանաձուլութեան կը վերաբերէր: 1740–1741-ին արմինիանական Յովհաննէս Ուէզլի եւ կալվինական Ուայթֆիլտ այս հարցին շուրջ նամակներ կը փոխանակէին: 1748-ին մեթոտականութիւնը ընդունած Հանթինկտընի Սելինա դքսուհին Ուայթֆիլտի նեցուկ կը կենար, երբ Յովհաննէսի տիրական առաջնորդութեան չէր համակրէր: Ան «Տիկին Հանթինկտընի բարեկամներ» պիտակին տակ խմբակներ կը հաստատէր եւ մատուռներ կը կառուցէր, առաջինը 1761-ին Պրայթընի մէջ, եւ Ուայթֆիլտը հովիւ կը նշանակէր. այսպէտով ան նաեւ իր կալվինական հակումը կը դրսեւորէր: 1769-ին նախասահմանաձուլութեան վեճը կը սրէր: 1770-ի համագումարին Յովհաննէս արմինիանական կեցուածքը կը պաշտպանէր եւ իրեն կը զօրակցէր իր նուիրեալ աշակերտը՝ գուիցերիացի Յովհաննէս Ուիլերմ Ֆլէչըրը (1729–1785), որ Անգլիա հաստատուած էր եւ Մէյտլիի եկեղեցիին մէջ կարեւոր աշխատանք կը տանէր: Այս համագումարէն սկսեալ ուէզլեան մեթոտականներ արմինիանական ուղղութեան կը հետեւէին, մինչ «Տիկին Հանթինկտընի բարեկամներ»-ու կալվինական մեթոտականները ուէզլեաններուն զուգահեռ կ'աճէին՝ իրարու հետ առանց թշնամական վերաբերում ունենալու, որովհետեւ մեթոտականութեան նոյն ոգին տիրական էր երկուքին մէջ:

Ուէզլեան մեթոտականութիւնը մեծապէս կ'աճէր: Յովհաննէս Ուէզլի բազմաթիւ բարեկամներ ու օգնականներ ունէր, սակայն իր պատասխանատւութիւններուն օժանդակող սակաւաթիւ մտերիմներով շրջապատուած էր: Եղբայրը՝ Չարլզ կ'օգնէր Յովհաննէսին ճամբորդութիւններու մասնակցելով, բայց աւելի փխրուն առողջութիւն ունէր: 1756-էն ետք Չարլզ շատ քիչ կը ճամբորդէր: Ան նախապէս Պրիսթըլի մէջ կը ծառայէր եւ 1771-էն մինչեւ իր մահը՝ Լոնտոնի մէջ: Ան Յովհաննէսէն աւելի պահպանողական ու անգլիզան էր: Ան հոգեւոր երգերու նշանաւոր հեղինակ էր մեթոտականներուն եւ բոլոր անգլիախօսներուն մէջ: 1751-ին Յովհաննէս այրի Մարի Վազլիի հետ կ'ա-

մուսնանար, սակայն երջանիկ չէր ըլլար: Յովհաննէս կատարելապէս իր քարոզչական աշխատանքին կը նուիրուէր եւ իր ամբողջական հեղինակութիւնը կը բանեցնէր մեթոտականներուն վրայ: Երբ մեթոտական խմբակներն ու քարոզիչները կը շատնային, բնականաբար նաեւ Եկեղեցիի խորհուրդներու մատակարարումին արտօնութեան հարցը երեւան կու գար: Յովհաննէս երկար ատեն այս հարցը կը ձգձգէր, սակայն մեթոտականներուն մէջ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ունեցողները շատ քիչ էին եւ դէպքերը այնպէս կը զարգանային, որ հակառակ իր ջանքերուն՝ մեթոտականութիւնը այլեւս Անգլիոյ եկեղեցիի հովանիին տակ չէր կրնար աճիլ:

Յովհաննէս Ուէզլի մեթոտականութիւնը Անգլիոյ եկեղեցիին մէջ պահպանելու շատ համակիրներ կ'ունենար: Այս անգլիկան աւետարանականները ընդհանրապէս համամիտ էին իր հոգեդարձի, անխախտ հաւատքի ու գործուն բարեգործական կրօնական կեանքի շեշտադրումներուն: Սակայն, միւս կողմէ, անոնք Յովհաննէսի իւրայատուկ մեթոտներուն եւ արմինիանական աստուածաբանութեան դէմ էին: Ուայթֆիլտ այս ընդդիմադիրներու մեծամասնութեան հոգեւոր հայրն էր: Ասոնք լաւապէս չէին կազմակերպուած եւ կը միանային Անգլիոյ եկեղեցիի աւետարանական թելին: Ասոնց մէջ նշանաւոր կը դառնար Հաուըրթի փոխանորդ Ուիլլեմ Կրիմշօ (1708–1763), որ 1734-ին հոգեդարձի կու գար ու աւետարանականութեան կը միանար: Ան Յովհաննէսի եւ Ուայթֆիլտի հետ բարեկամական կապեր կը պահէր: Աւետարանականներուն մէջ ակնառու կը դառնար Յովհաննէս Նիութընը (1725–1807), որ ժամանակին գերիներ վաճառող նաւապետ էր: Ան դարձի գալէն ետք որպէս քարոզիչ նախ Օլնիի մէջ կը ծառայէր եւ ապա Լոնտոնի Սուրբ Մարի Վուլնթ եկեղեցիի տեսուչը կը դառնար: Իր հեղինակած հոգեւոր երգերը ուրախ ու ինքնավստահ հաւատքով լեցուն էին: Որպէս հոգեւոր երգերու հեղինակ՝ նշանաւոր կը դառնար նաեւ աւետարանական Օգոստոս Թափլէյտի (1740–1778), որուն ամենէն նշանաւոր հոգեւոր երգն է «Ժամանակներու ժայռը»:

Օլնիի մեջ Նիուօրնի կը յաջորդէր Թովմաս Սգոթ (1747–1821) եւ իր հեղինակած *Ընտանիքին Աստուածաշունչը* երկով մեծ ժողովրդականութիւն կը շահէր Եւրոպայի ու Ամերիկայի մէջ: Ռիչըրտ Սեսիլ (1748–1810) Լոնտոնի ամենէն նշանաւոր քարոզիչներէն մին կը դառնար: Յովսէփ Միլնըր (1744–1797) Հիւլը անտարանական կեդրոնի կը վերածէր եւ մեծ ազդեցութիւն կ'ունենար իր *Քրիստոսի եկեղեցիին պատմութիւնը* երկով, որուն հեղինակութիւնը իր մահէն ետք եղբայրը Իսահակ կը շարունակէր եւ շեշտը կը դնէր քրիստոնէական գլխաւոր դէմքերուն վրայ աւելի քան քրիստոնէական անհամաձայնութիւններուն: Իսահակ Միլնըր (1750–1820) երկար ատեն Գէմպրիճի համալսարանը կը դասաւանդէր եւ մեծ դերակատարութիւն կ'ունենար զայն անտարանական հաստատութեան վերածելուն մէջ: Չարլզ Սայմըն (1759–1836) նոյն ոգիով կը շարունակէր գործել Գէմպրիճի մէջ:

Հոգեւորական չձեռնադրուածներ եւս անտարանականութեան տարածումին կը նպաստէին: Ասոնցմէ էին Ուիլիէրմ Գաուփըր (1731–1800), ԺԸ. դարու մեծագոյն բանաստեղծն ու Նիուօրնի ընկերը, եւ որպէս բարերարուհիի մեծ համբաւի տիրացած Հաննա Մոր (1745–1833), որ միաժամանակ Լոնտոնի գրականութեան, արուեստի ու թատրոնի շրջանակներուն քաջածանօթ էր եւ իր հերթին հոգեւոր թերթիկներ ու գիրքեր կը գրէր:

Անգլիգան անտարանականներ Անգլիոյ եկեղեցիին մէջ կը մնային, սակայն մեթոտական երկու հոսանքները ի վերջոյ անկէ կը բաժնուէին: 1779-ին տիկին Հանթինկտըն եւ հետեւորդները Անգլիոյ եկեղեցիէն կ'անջատուէին եւ ժամանակի ընթացքին Ուելշ Մեթոտական եկեղեցի կը կազմէին: Ուելզեան մեթոտականներ աստիճանաբար կը հեռանային Անգլիոյ եկեղեցիէն եւ Յովհաննէս Ուելզիի մահէն ետք, 1791-ին, վերջնականապէս կը խզուէին անկէ: Մինչ այդ, 1784-ին, երկու կարեւոր քայլեր կ'առնուէին: 28 փետրուարին Յովհաննէս պաշտօնապէս մարմին մը կը հաստատէր, որ իր մահէն ետք մեթոտական շարժումին վերահսկողութիւնը ու ստացուածքին տիրութիւնը

պիտի կատարեր. այսպեսով ան մեթոտականութեան ինքնակառավարութիւնը կ'երաշխատրէր: 1 սեպտեմբերին Յովհաննէս Անգլիոյ եկեղեցիի միւս երէցներուն կը միանար եւ Ամերիկայի համար երէցներ ու փոխանորդներ կը ձեռնադրէր: Այս քայլը Անգլիոյ եկեղեցիի դիտանկիւնէն արդէն անջատում կը նկատուէր, սակայն Յովհաննէս այդպէս չէր համարէր: Ուէզլեան մեթոտականութիւնը 1795-ին ամբողջական անկախութեան կը տիրանար իր հաստատած «Խաղաղութեան ծրագիրով»:

2 մարտ 1791-ին Լոնտոնի մէջ Յովհաննէս Ուէզլի մահկանացուն կը կնքէր, մինչեւ վերջին շունչը նոյն եռանդով գործելէ եւ Անգլիոյ ու Ամերիկայի համեստ ու միջին խաւերու կրօնական կեանքին վրայ իր անջնջելի դրոշմը ձգելէ ետք:

Սկովտիոյ մէջ Երիցական եկեղեցիէն մեթոտականներուն բաժանումը շատ աւելի կանուխ տեղի կ'ունենար, որովհետեւ երկիրի տիրութեան դրութիւնը իրաւունք կու տար տիրոջ մը իր նախասիրած երէցը նշանակելու տուեալ ծուխին վրայ: 1733-ին Եպէնեզըր Էրսքին Սթիրլինկցին կը բողոքէր այս դրութեան դէմ եւ իր սինոտին կողմէ պատժամիջոցներու ենթարկուելէ ետք՝ բազմաթիւ հետեւորդներով 1740-ի համաժողովին կողմէ պաշտօնանկ կ'ըլլար: Մինչ այդ այս բողոքողները արդէն սկովտիական առաջին Ազատ եկեղեցին կը հիմնէին, որ որպէս բաժանեալ եկեղեցի կը ճանչցուէր: Այս եկեղեցին արագօրէն կ'աճէր, սակայն օրինական բարդութիւններ կը դիմագրաւէր: Ի վերջոյ, 1820-ին, ան պաշտօնապէս որպէս Միացեալ բաժանեալ եկեղեցի ճանաչում կը ստանար:

Տիրութեան հարցը կը շարունակէր բաժանումի պատճառ դառնալ: Թովմաս Կիլեսփայ Գարնոզցի (1708–1774) կը մերժէր մասնակցիլ այն երէցին ձեռնադրութեան, որ առանց ծուխին հաւանութեան կը պարտադրուէր տուեալ եկեղեցիին ծառայելու հրահանգ ստանալ: Այս քայլին համար Գարնոզցի 1752-ի համաժողովին կողմէ պաշտօնանկ կ'ըլլար: 1761-ին ան եւ իր համախոհները կազմակերպութիւն մը կը հիմնէին, որ Օգնութեան եկեղեցի կը կոչուէր: 1765-ին 100.000 հաւատացեալներով այսպիսի 120 բաժանեալ ծուխեր կը կազմուէին:

Այս զարգացումները Սկոտլոնդ եկեղեցին իր հոգևոր զորութենէն կը դատարկէին: ԺԸ. դարուն բանական մտածողութիւնը Սկոտլոնդ, Անգլիա ու Գերմանիա կը ներթափանցէր: ԺԸ. դարու կէսին եւ ԺԹ. դարուն չափաւորականութիւնը տիրական կը դառնար: Չափաւորականներուն համար քրիստոնէութիւնը առաւելաբար բարոյական էր, քան գործնական ու վարդապետական: Տիրութեան համակրողներ չափաւորականներն էին, իսկ ծուխի ժողովրավարութեան կողմնակիցները՝ աւետարանականներ: Յամենայն դէպս, Սկոտլոնդ զարթօնքի ոգին բաժանեալներուն մօտ տիրական էր. թէեւ Սկոտլոնդ եկեղեցին մէջ կար ժողովրդային թեւ մը, որ զօրեղ աւետարանական էր: Ասոնցմէ էր Յովհաննէս Ուիթըրսփունը (1723–1794), 1768-ի Փրինսթըն համալսարանի նախագահը, որ 1753-ին չափաւորականները ձաղկող իր երգիծական *Եկեղեցական տիպարներ* երկը կը գրէր: Ահա այս չափաւորականները Սկոտլոնդ եկեղեցին ամենէն ազդեցիկ տարրը կը դառնային ԺԸ. դարու վերջին տասնամեակներուն եւ ամենէն աւելի կ'օգտուէին բաժանեալ եկեղեցիներու շարժումէն:

Ը. ԳԼՈՒԽ ՄԵԾ ԶԱՐԹՕՆՔԸ

ԺԸ. դարուն Ամերիկայի կրօնական կեանքի ամենէն ազդեցիկ եւ կերպարանափոխիչ շարժումը Մեծ զարթօնքն էր, որ ունէր բազմաթիւ փուլեր եւ պիտի տուէր աւելի քան կէս դար: Երբ քրիստոնէական դասական աւետարանչութիւնը այլեւս ազդեցիկ չէր եւ կը տիրէր մշակութային խառնակ վիճակ մը, այս զարթօնքը ոչ միայն անհատ քրիստոնեաներու կեանքը զգալիօրէն կը փոխէր, այլեւ խորապէս կ'ազդէր ամերիկեան եկեղեցիներու մեծամասնութեան աշխարհայեացքին վրայ: Այս դիտանկիւնէն ան նման էր Գերմանիոյ բարեպաշտական եւ Բրիտանիոյ աւետարանչական զարթօնքի շարժումներուն: Ան եկեղեցիի անդամակցութեան շեշտը կը դնէր ներքին փոփոխութեան ու դարձին վրայ: Եկեղեցին պատահական անձերու համախմբում մը չէր, այլ քրիստոնէական հաւատքի կեանքի փորձառութիւնը ապրած հաւատացեալներու: Մեծ զարթօնքը կը յատկաշնուէր խիստ բարոյականով ու խոր բարեպաշտութեամբ: Ան կը տարածուէր գրեթէ բոլոր եկեղեցիներուն մէջ եւ միաժամանակ խնդրայարոյց կը դառնար: Նոր հասկացողութիւն բերելով կրօնական հեղինակութեան եւ քրիստոնէական կենցաղավարութեան՝ ան բողոքական համայնքներուն կարելիութիւն կ'ընծայէր իրենց կեանքը նոր արժեւորումի ենթարկելու եւ ժամանակի կրօնական մարտահրաւերները դիմագրաւելու: Ան նաեւ կրթական կեանքն ու նոր դպրոցներու բացումը կը խթանէր: Որպէս ներնահանգային շարժում՝ ան նահանգներու յարաբերութիւնները կը սերտացնէր եւ անուղղակիօրէն կը սատարէր Ամերիկեան յեղափոխութեան:

Մեծ զարթօնքի առաջին նշոյլները կը յայտնուէին Նիու Ճըրզիի հոլանտացի բարեկարգեալ համայնքներուն մէջ 1720-ականներուն: Կրօնական կենսունակութեան թուլացումը ըզգալի էր կարգ մը բարեկարգեալ համայնքներուն մէջ, երբ հոլանտացիներ իրենց եկեղեցիները ազգայնականութեան ու

մշակոյթի պահպանումի խորհրդանիշ կը նկատէին: Երիտասարդ հովիւ մը՝ Թէոտոր Յակոբ Ֆրելինկիւզըն (1691–1748), որ Հոլանտայի մէջ մաքրակրօններու հետ բարեկամացած, ուսանած եւ ձեռնադրուած էր, քրիստոնէական հաւատքը աւելի խորիմաստօրէն ապրելու հրաւեր կ'ուղղէր իր ժողովուրդին: Ան զարթօնքի շարժում մը կը սկսէր եկեղեցիներուն մէջ եւ մեծաթիւ մարդիկ կը հրապուրէր: Ան բազմաթիւ տեղեր քարոզելու կը հրաւիրուէր: Ուրիշներ եւս կը հետեւէին իր օրինակին, եւ զարթօնքի պատգամը եկեղեցիներուն նոր անդամներ կ'ապահովէր: Միաժամանակ շատեր, մանաւանդ Նիու Եորքի հովիւները, կը խրոչէին զարթօնքի յուզականութենէն եւ կ'ընդդիմանային անոր: Հակառակ այս ընդդիմութեան, զարթօնքի ալիքները երկար տարիներ մեծ ազդեցութիւն կ'ունենային հոլանտացի բարեկարգեալ համայնքներուն մէջ:

Զարթօնքը կը ներգրաւէր երիցական առաջնորդներ եւս: Ուիլելմ Աւագ (1673–1745), որ մաքրակրօն համոզումներ ունէր, խումբ մը երիտասարդ տղաք, ներառեալ իր չորս տղաքը, հովութեան համար կը կազմաւորէր: 1736-ին ան Ֆիլատելֆիոյ հիւսիսը կը հիմներ դպրոց մը, որ Փրինսթընը կանխողներէն մին պիտի դառնար: Անոր զաւակը՝ Ճիլպեր Թենընթ (1703–1764), զարթօնքի շարժումին կը հակէր եւ որպէս Նիու Պրանսուիքի երիցական հովիւ՝ մեծ դերակատարութիւն կ'ունենար զարթօնքի շարժումին մէջ: Այս ժամանակաշրջանին երիցականութեան մէջ երկու մրցակից խումբ կար. առաջինը անգլիացի մաքրակրօններն էին, որոնք գործնապաշտ հաւատքը կ'ընդգծէին. երկրորդը սկոտիացիներն ու իրլանտացիներն էին, որոնք ուղղափառ վարդապետութիւնը կը ջատագովէին: Ուիլելմի խումբը մաքրակրօն էր, սակայն, գտնուելով միւսներով տիրապետուած շրջանի մը մէջ, 1738-ին Նիու Պրանսուիքի մէջ իր առանձին Երիցական եկեղեցի կը հիմներ: Միւսները, կամ հիները, կը մերժէին այս նոր Եկեղեցին եւ զայն իրենց սինոտէն կ'արտաքսէին: 1745-էն սկսեալ երիցականներ երկու սինոտ կ'ունենային. Նիու Եորքի սինոտը մաքրակրօններն ու զարթօնքի համակիրները կը ներկայացնէր, իսկ

Ֆիլատելիոյ սինտը՝ սկովտիացիներն ու իրլանտացիները, որոնք Ուէսթմինըսթըրրի խոստովանութեան հետեւողներ էին: Ժամանակի ընթացքին Նիու Եորքի սինտը աւելի կ'աճէր. Ուայթֆիլտի Ամերիկայի մէջ ծաւալած քարոզութիւնները եւս մեծապէս կը նպաստէին այս աճումին: 1758-ին, երբ երիցականներ կը վերամիանային, զարթօնքի համակիրներ իրենց ծայրայեղ տեսակետները կը բարեխառնէին եւ Եկեղեցիին մէջ կարեւոր տեղ կը գրաւէին: Ի վերջոյ զարթօնքը իր մնայուն դրոշմը կը դնէր Երիցական եկեղեցիին վրայ:

Մեծ զարթօնքը Նիու Անգլիա կը հասնէր, երբ Մեսէչուսէցի Նորթհամփթըն քաղաքին մէջ 1734–1735-ին կրօնական հաւաքներ կը կազմակերպուէին: Մեծ թիւով հաւատացեալներ կը հրապուրուէին, երբ մանաւանդ զարթօնքի շարժումի առաջնորդ Յովնաթան Էտուրըտզ (1703–1758) 1737-ին կը հեղինակէր *Աստուծոյ զարմանալի գործին՝ բազմահարիւր անձերու դարձին պատմութիւնը* երկը: 1739-ին Ճիլպեր եւ Ուայթֆիլտ նոր մղում կու տային զարթօնքի շարժումին, ու հարիւրաւոր հաւատացեալ դարձի կու գար: Սակայն հոս եւս զարթօնքը խնդրայարոյց կը դառնար: Ուայթֆիլտ իր տեսակետներուն հակառակ եղողները ճշմարիտ դարձի եկածներ չէր համարէր, եւ իր հետեւորդները այս ուղղութեամբ աւելի ծայրայեղ կեցուածք կ'որդեգրէին: Զարթօնքը նաեւ կը նահանջէր, երբ Յակոբոս Տավընփորթ (1716–1757) երկար ու անբովանդակ քարոզներ կը խօսէր եւ զարթօնքի շարժումին չմասնակցող պատասխանատու անձեր յանուանէ կը պախարակէր: Այս բոլորը պատճառ կը դառնային, որ մրցակից նոր եկեղեցիներ հիմնուէին: Հին եկեղեցիներու պատասխանատուներ, Պոսթընի առաջին եկեղեցիի հովիւ Չարլզ Չոնսիի (1705–1787) գլխաւորութեամբ, նոր եկեղեցիներու պատասխանատուներուն կը հակադարձէին: Զարթօնքի դէմ շղթայազերծուած շարժումին ճամբով արմինիանականութիւնն ու միութենականութիւնը եկեղեցիներուն մէջ աւելի կ'արմատանային: Զարթօնքը աստիճանաբար կը տկարանար Ժողովական եկեղեցիներուն մէջ, սակայն կ'ա-

ճեր մկրտչականներուն մէջ, որոնք Նիու Անգլիոյ մէջ տիրական ներկայութիւն կը դառնային:

Մեծ զարթօնքը հարաւային նահանգներ եւս կը տարածուէր եւ այլախոհական շարժումին կը նպաստէր: 1740–1750-ականներուն երիցականութիւնը արագօրէն կը տարածուէր Վրճինիայի մէջ եւ աւելի հարաւ կը հասնէր մանաւանդ Սամուէլ Տէյվիսի (1723–1761) քարոզութեամբ: Զարթօնք քարոզող մկրտչականներ եւս Նիու Անգլիայէն Վրճինիա կու գային եւ մկրտչական նոր եկեղեցիներ կը հաստատէին: Նահանգային քաղաքական իշխանութիւններ կը հալածէին զարթօնքի հետեւողները, սակայն անոնք աւելի կը տարածուէին: Թէեւ Ամերիկեան յեղափոխութեան գալուստով Մեծ զարթօնքը ընդհանրապէս կը մարէր, սակայն ան կը շարունակէր աճիլ մկրտչական ու մեթոտական շրջանակներուն մէջ:

Մեթոտականները աւելի ուշ՝ 1766-ին, կը ժամանէին Ամերիկա: Փիլիպպոս Էմպըրի (1728–1773) Նիու Եորքի մէջ եւ Ռոպերթ Սթրոպրիճ (մահացած՝ 1781-ին) Մերիլընտի մէջ կը սկսէին մեթոտականութիւն քարոզել: Աշխարհական գործուն քարոզիչ մըն էր նաեւ բրիտանական բանակի զօրավար Թովմաս Ուէպ (1724–1796): 1769-ին Յովհաննէս Ուէզլի ուր աշխարհական միսիոնար Ամերիկա կը դրկէր: Ասոնցմէ միայն մէկը՝ Ֆրանսիս Ազպըրի (1745–1816), պիտի շարունակէր ամերիկեան մեթոտականութեան ծառայել յեղափոխութենէն ետք: 1770-ականներուն մեթոտականութիւնը Մերիլընտի եւ Վրճինիայի մէջ արագօրէն կ'աճէր, որպէս Անգլիոյ եկեղեցիի կապուած լոյծ շարժում մը: Ամերիկեան մեթոտականներու առաջին համագումարը տեղի կ'ունենար 1773-ին Ֆիլատելֆիոյ մէջ: Յեղափոխութեան օրերուն մեթոտականներու աճը կը շարունակուէր եւ բնիկ ամերիկացի քարոզիչներ եւս կը միանային Մեթոտական եկեղեցիին:

Լուտերականներ թէեւ ուղղակիօրէն չէին ազդուեր Մեծ զարթօնքէն, սակայն ասոնք եւս որոշ բարեպաշտական զգայնութիւններ կը ցուցաբերէին: Այս ժամանակաշրջանին Ամերիկայի մէջ անոնց թիւը կ'աճէր գերման գաղթականներուն

շնորհիւ: Ասոնց առաջնորդը՝ Հենրի Մելլիփոր Մուհլընպըրկ (1711–1787), Հալլէն Ամերիկա կը դրկուէր եւ բարեպաշտներու ու ուղղափառներու միջեւ հաւասարակշռութիւն պահելով՝ աշխուժօրէն կը կազմակերպէր նոր եկեղեցիներ, գերման լուտերականութիւնը ժՇ. դարու կէսին Փենսիլվանիոյ ամենէն մեծ եկեղեցին կը դարձնէր եւ 1748-ին լուտերական մնայուն սինտոսին հիմը կը դնէր:

Նիու Անգլիոյ մէջ ծայր առած Մեծ զարթօնքը ժՇ. դարու աստուածաբանութեան մեծ նպաստ կը բերէր Յովնաթան Էտուըրտզի եւ անոր դպրոցին շնորհիւ: Էտուըրտզ ծնած էր 1703-ին Գեննեթիզըթի մէջ: Հայրը պատուելի էր: Էտուըրտզ 1720-ին Ելյը կ'աւարտէր եւ կարճ ժամանակ մը Նիու Եորքի մէջ հովիւ ըլլալէ ետք՝ կը սկսէր Ելյի մէջ դասաւանդել: 1727-ին՝ Նորթհամփթընի մէջ ան օգնական հովիւ կ'ըլլար եւ իր մեծ հօր՝ Մոդոմոն Սթոտըրտի (1643–1729) մահէն ետք հովութիւնը կը ստանձնէր: Ան փայլուն իմացականութեան տէր էր եւ իր օրերու իմաստասիրական ու գիտական երկերը կը կարդար, մասնաւորաբար խորանալով Յովհաննէս Լոզի եւ Յովհաննէս Նիութթընի գործերուն մէջ: Կանուխէն Աստուծոյ գերակայութեան եւ նախասահմանուածութեան կալվինական տեսակէտները ջատագովելով, ան իր աստուածաբանութիւնը կը մշակէր եւ զայն պատճառականութեամբ կը հիմնաւորէր: Ան ճշմարիտ հաւատացող մըն էր զարթօնքի շարժումին եւ զայն ոզի ի բռին կը պաշտպանէր: 1746-ին իր լոյս ընծայած *Կրօնական խանդադատանքներ* աստուածաբանական երկով ան զարթօնքը կը բանաձեւէր՝ օգտագործելով Լոզի հոգեբանական տեսակէտները: Որպէս հովիւ՝ ան կ'ըսէր, թէ միայն վաւերականօրէն ընտրեալ հաւատացեալները եկեղեցիի ամբողջական անդամ պէտք էր ըլլային: Այս կեցուածքին պատճառով 1750-ին անոր կ'արգիլուէր քարոզել՝ հակառակ այն իրողութեան, որ ան 1749-ին հրատարակած *Ամբողջական հաղորդութեան յատկանիշերը* երկին մէջ իր տեսակէտը յստակօրէն պարզած էր:

Էտուըրտզ Մեսէչուսէցի Սթոզպրիճ քաղաքին մէջ բնիկ ամերիկացի հնդիկներուն միսիոնար կը դառնար, կալվինական

տեսակետները կը պաշտպանէր արմինիանականութեան դէմ եւ ժԸ. դարու ազատական աստուածաբանութիւնը կը բանաձեւէր: Իր 1754-ին լոյս ընծայած *Ճան կամքի մասին* երկին մէջ կ'ըսէր, որ թէեւ բոլոր մարդիկ Աստուծոյ դառնալու բնական կարողութիւնը ունէին, սակայն գուրկ էին զայն կատարելու բարոյական կարողութենէն կամ հակումէն: Այս մէկը Աստուծոյ կերպարանափոխիչ շնորհով կ'իրագործուէր, սակայն անոր բացակայութիւնը չէր նշանակէր, թէ ենթական մեղաւոր էր: Էտուրբտոզ աստուածաբանական երկերու շարքի մը կը ձեռնարկէր, սակայն անոնցմէ միայն պատառիկներ կ'ամբողջացնէր: Անոնցմէ մին էր *Ճշմարիտ առաքինութեան իսկութիւնը*, որ յետ մահու 1765-ին լոյս կը տեսնէր: Ըստ իրեն՝ առաքինութիւնը իմացական էակին սերն էր. սակայն Աստուած էր մեծագոյն էակը, եւ ճշմարիտ առաքինութիւնը Աստուծոյ գերագոյն սիրոյն մէջ կը գտնուէր: Այս ճշմարիտ առաքինութիւնը պատճառականութեամբ չէր յայտնուէր, այլ անձնասիրութիւնը անդրանցող սիրոյ մէջ էր: Անանձնական բարեգործութիւնը անոր ինքնարտայայտութիւններէն մին էր, եւ ան ամբողջապէս Աստուծոյ պարգեւն էր: Յովնաթան Փրինսթընի նախագահ կ'ըլլար, սակայն հարսանեթով կը հիւանդանար եւ մի քանի շաբաթ ետք կը մահանար:

Էտուրբտոզի տեսակետները կը պաշտպանէին իրեն հետեւող հետեւեալ անձերը՝ Յովսէփ Պելամի (1719–1790), Սամուէլ Հոփքինս (1721–1803), Յովնաթան Էտուրբտոզ Կրտսեր (1745–1801) եւ Նաթանայէլ Էմոնս (1745–1840): Տասնամեակներ ամբողջ այս էտուրբտոզեան աստուածաբանները աստուածաբանական քննարկումները Նիու Անգլիոյ մէջ վառ կը պահէին եւ վիճարկումներ կ'ունենային հին կալվինականներուն հետ: Էտուրբտոզեան աստուածաբանները, ուսումի եւ արհեստի մէջ յաջողած անձեր ըլլալով հանդերձ, Էտուրբտոզի բանաստեղծական զգայնութիւնն ու տեալականը չունէին: Մասնաւորաբար Հոփքինս, շէշտելով անանձնական բարեգործութիւնը, ժԹ. դարու աստուածաբանական մտածողութեան մէջ բաժանումներ կը յառաջացնէր: Թէեւ Էտուրբտոզեան աստուածաբաններու

գործը Մեծ զարթոնքի բերած ցնցումն էտք կը ծաւալէր Նիու Անգլիոյ մէջ, սակայն անոնք մեծ նպաստ կը բերէին աւետարանական կալվինականութեան, որ իր մնայուն ազդեցութիւնը պիտի ունենար ամերիկեան կրօնական կեանքին վրայ:

Ամերիկեան զարթոնքը նաեւ Քանատայի վրայ կ'ազդէր: 1770-ականներուն Մեծ զարթոնքը կը սկսէր Նովա Սգոշիայի մէջ, երբ Գենեթիզըթէն ժողովական հաւատացեալներ հոն կը հաստատուէին: Ասոնց ղեկավարը կ'ըլլար Ռոտ Այլընտէն որպէս պատանի Նովա Սգոշիա հաստատուած Հենրի Ալին (1748–1784): Ան, քաջածանօթ ըլլալով մաքրակրօնութեան աւետարանական գրականութեան, 1775-ին քարոզութեան կը սկսէր եւ տեղէ-տեղ շրջելով՝ կը հմայէր մանաւանդ աշխատաւոր դասակարգը: Անոր եկեղեցաբանութիւնը ժողովական էր: Անոր քարոզութեամբ կազմուած Նոր լոյս համայնքները երկար կեանք չէին ունենար եւ ոմանք հետագային մկրտչականներուն կը միանային: Այսպէսով Նիու Անգլիոյ եւ Նովա Սգոշիայի մէջ առաւելաբար մկրտչականներ Մեծ զարթոնքի պտուղները կը քաղէին:

Թ. ԳԼՈՒԽ
ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶԱՐԹՕՆՔԻ
ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԱՐԴԻ ՄԻՍԻՈՆԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բրիտանիոյ մէջ սկսած Աւետարանական զարթօնքը իր նեղ պատեանէն դուրս կ'ելլէր եւ կը յուզէր քրիստոնէական հին համայնքները: Ասոնք ԺԸ. դարու առաջին կէսին փտութեան մէջ կը գտնուէին, եւ անոնց ղեկավարները սկզբնական շրջանին Յովհաննէս Ուէզլիի ու Ուայթֆիլտի կասկածով կը մօտենային, սակայն երբ Աւետարանական զարթօնքը կը տարածուէր, երիտասարդներ եռանդով կը կապուէին անոնց: Այս երիտասարդներուն մէջ բազմաթիւ ժողովական եկեղեցիներու հետեւողներ կային եւ ամենէն շատ անոնք կ'օգտուէին Աւետարանական զարթօնքէն: Ասոնց քարոզութիւնը կը զարգանար, եռանդը կ'աճէր եւ թիւը շուտով կը մեծնար: Ասոնց կը միանային նաեւ մեթոտականներ եւ աւանդական եկեղեցիներու հաւատացեալներ: Մկրտչականներ եւս կ'աճէին եւ 1770-ին աւետարանական խումբ մը՝ «Ընդհանուր մկրտչական նոր միութիւն» անունով կը բաժնուէր անոնցմէ՝ որպէս բողոք անոնց միութենական հակումին: Երիցականներ գրեթէ չէին ազդուէր Աւետարանական զարթօնքէն եւ անոնց թիւը կը նուազէր: Քուէյզըրներու համար եւս Աւետարանական զարթօնքը խորթ կը թուէր:

Մեթոտականներ իրենց բարեգործութեամբ յատկանշուած էին, եւ աւետարանականներ կը համակրէին այս մօտեցումին: Յովհաննէս Ուէզլիի առաջնորդութեամբ՝ մեթոտականներ իրենց աղքատ անդամներուն տնտեսապէս կ'օժանդակէին, գործ կը գտնէին, հիւանդները կը խնամէին, դպրոցներ կը բանային եւ համեստ խաւը ընկերային գետինի վրայ կը բարձրացնէին:

Ժողովական եւ Մկրտչական եկեղեցիներու հաւատացեալ Յովհաննէս Հովըրտ (1726–1790) մարդասիրականօրէն կը

յատկանշուէր իր լռութեամբ ու կրօնական ապրումով եւ որպէս կալուածատէր՝ կը նպաստէր դպրոցներու բացումին: 1773-ին ան Պետֆորտի կառավարիչը կ'ըլլար եւ կը ձեռնարկէր բանտերու բարեկարգութեան, երբ կը նշմարէր, թէ բանտապահներ ինչպէս իրենց դիրքը կը շահագործէին եւ կը տանջէին բանտարկեալները: Ան անձամբ բոլոր բանտերը կ'այցելէր եւ իր քննութեան արդիւնքը 1774-ին խորհրդարան կը ներկայացնէր: Ապա ան նոյնը կ'ընէր Սկոտլոնտ, Իրլանտայի եւ ամբողջ եւրոպական ցամաքամասին մէջ: Ան այսպէսով արժանի կը դառնար «բանտերու բարեկարգութեան հայրը» տիտղոսին: Իր կեանքի վերջին տարիներուն ան կը դառնար համաճարակը կանխելու միջոցներու ռահվիրայ եւ այդ ճանապարհին վրայ՝ հարաւային Ռուսիոյ մէջ, կը կնքէր իր մահկանացուն:

Բարի նպատակներու նուիրուած խումբ մը Հատըրսֆիլտի հովիւ Հենրի Վենի (1725–1797) եւ Գլաֆհամի հովիւ անոր որդիին՝ Յովհաննէս Վենի (1759–1813) շուրջ կը հաւաքուէր: Այս խումբը ընդհանրապէս անգլիզան աւետարանական աշխարհականներէ կը բաղկանար, «Գլաֆհամի աղանդ» անուանումը կը ստանար եւ ինքզինք գերութիւնը բառնալուն կը նուիրէր: Գերութիւնը Յովհաննէս Ուէզլիի եւ քուէյզըրներուն կողմէ եւս դատապարտուած էր: ԺԹ. դարու սկիզբը գլաֆհամցիներ մեծ աշխատանք կը տանէին զայն չէզոքացնելու համար: Զաքարիա Մագաուոլէյ (1768–1838) գերիներու նաւով կը ճամբորդէր՝ անոնց իրավիճակը ուսումնասիրելու համար: Գերութեան դէմ շղթայազերծուած խաչակրութեան ամենէն ազդեցիկ առաջնորդը կը դառնար աւետարանական նշանաւոր աշխարհական Ուիլիերմ Ուիլպրֆորս (1759–1833): Հարուստ, մեծ ժողովրդականութիւն վայելող եւ խորհրդարանի անդամ՝ ան 1784-ին Իսահակ Միլնըրի շնորհիւ այս շարժումին կը միանար: 1797-ին ան կը հրատարակէր իր *Գործնական տեսակէտ այս երկիրին մէջ աւելի բարձր եւ միջին դասակարգերու քրիստոնէաներու կրօնական դրութեան մէջ գտնուող հակասութիւններու* երկը, որ աւետարանական գրականութեան ամենէն ժողովրդական գիրքերէն մէկը կը դառնար: 1787-ին ան գերութիւնը բառնալուն կը

զինուորագրուէր, 1807-ին գերեզմանաւորութիւնը կը ջնջէր եւ 1833-ին գերութիւնը կը չեզոքացնէր Բրիտանական իշխանութեան ամբողջ տարածքին:

Աւետարանականներ կրօնական, մարդկային ու բարեւիրական բնագաւառներու մէջ իրարու հետ կամաւոր միութիւններու ճամբով կը գործակցէին: Աւետարանական զարթօնքը կը նպաստէր նաեւ քրիստոնէական գրականութեան տարածումին: Յովհաննէս Ուէզլի 1699-ին հիմնուած Քրիստոնէական գիտութիւնը տարածող ընկերակցութեան շնորհիւ կը պարզէր իր տեսակէտները: 1799-ին Ներհամայնքային կրօնական գրականութեան ընկերակցութիւնը կը կազմուէր Լոնտոնի մէջ: Բարեպաշտութիւնը Աստուածաշունչի ածան տպագրութեան Պարոն Գանսթէյնի հիմնարկը կը հաստատէր Հալլէի մէջ 1710-ին: 1804-ին Բրիտանական եւ Օտարներու Աստուածաշունչի ընկերակցութիւնը կը հիմնուէր Լոնտոնի մէջ: Շուտով ասոր նման ընկերակցութիւններ կը հիմնուէին Իրլանտայի, Սկոտլանդի ու Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ, եւ Աստուածաշունչը մեծ տարածում կը գտնէր:

Թէեւ մանուկներու կրօնական դաստիարակութիւնը հինէն գոյութիւն ունէր, սակայն Բարեկարգութիւնը այս բնագաւառին եւս մեծ կարեւորութիւն կ'ընծայէր: Այս մարզին մէջ առաջին կազմակերպ ու յաջող քայլը կ'ըլլար աւետարանական աշխարհական Ռոպերթ Ռէյքսի (1735–1811) կողմէ հիմնուած Կիրակնօրեայ վարժարաններու ընդարձակ ցանցը: Ան նկատի կ'առնէր, որ ամենօրեայ վարժարաններու մէջ կրօնական դաստիարակութիւն չէր ջամբուէր եւ մանուկներու միակ ազատ օրը՝ կիրակին, քրիստոնէական դաստիարակութեան կը յատկացնէր վճարովի ուսուցիչներ վարձելով. այսպէսով զանոնք նաեւ Եկեղեցիին կը մօտեցնէր: Ան Կիրակնօրեայ վարժարաններու լուրերը հաղորդող Կլաուչեսթըր թերթը եւս լոյս կ'ընծայէր: Կիրակնօրեայ վարժարաններ մեծ ընդունելութիւն կը գտնէին եւ Յովհաննէս Ուէզլիի ու նոր աւետարանականներուն կողմէ կը քաջալերուէին: 1785-ին Լոնտոնի մէջ եւ 1791-ին Ֆիլատելֆիոյ մէջ Կիրակնօրեայ վար-

Ժարաններուն նեցուկ կանգնող ընկերակցութիւններ կը կազմուէին: Պահպանողական հոգեւորականներ, Կիրակնօրեայ վարժարաններու շարժումին կ'ընդդիմանային՝ կիրակին սուրբ չպահելու ճիգ մը տեսնելով անոր բերած նորութեան մէջ: Ի վերջոյ Կիրակնօրեայ վարժարաններու ուսուցիչները կամաւոր կը դառնային եւ Եկեղեցիի կեանքին մէջ շինիչ դերակատարութիւն կ'ունենային:

Աւետարանական զարթօնքի բերած ամենէն յատկանշական նպաստներէն կը հանդիսանային արդի բողոքական միսիոնարութիւնները: Բարեկարգութեան ժամանակաշրջանին կաթոլիկ միսիոնարութիւնները արդիւնաւէտ էին, սակայն աշխարհագրական հեռաւորութիւններ եւ ներքին ու աստուածաբանական տարակարծութիւններ բողոքական միսիոնարութիւնները նոյն դրական արդիւնքին չէին յանգեցուցած: ԺԷ դարու հոլանտական արշաւանքներուն զուգահեռ՝ Սէլլոնի, Ճաւայի ու Ֆորմոզայի մէջ միսիոնարական աշխատանք կը տարուէր: Անգլիական առաջին օտարերկեայ միսիոնարական կազմակերպութիւնը՝ Նիու Անգլիոյ մէջ Աւետարանը տարածող ընկերակցութիւնը, 1649-ին խորհրդարանին կողմէ կեանքի կը կոչուէր՝ ի պատասխան Յովհաննէս Էլիոթի Մեսեչուսեցի բնիկ հնդիկներուն մէջ ծաւալած աշխատանքին: Էլիոթ նաեւ իր ծախսով բնիկ հնդկական Աստուածաշունչն ու իր այլ երկերը լոյս կ'ընծայէր: 1701-ին Աւետարանը օտար հողերու մէջ տարածող ընկերակցութիւնը կը կազմուէր: 1705-էն սկսեալ գերման բարեպաշտութիւնը Հալլէի հոլանտական միսիոնարութիւններուն կը նախաձեռնէր: 1732-ին մորալիանականներ իրենց միսիոնարութիւնը կը խրախուսէին, եւ քուէզրրներ եւս կարգ մը միսիոնարական նախաձեռնութիւններ կը ստանձնէին:

Ոչ-քրիստոնէայ ժողովուրդները դարձի բերելու շարժումը ծայր կ'առնէր Մեծն Բրիտանիոյ մէջ, երբ կառավարութեան հովանաւորութեամբ Յակոբոս Գուք զօրավար (1728–1779) 1768-էն մինչեւ իր մահը Խաղաղական ովկիանոսի իր հետախուզական ճամբորդութիւնները կը կատարէր: Այս շարժումին կը միանար կօշկակար եւ հետագայ մկրտչական քարո-

զիչ Ուիլերմ Գերի (1761–1834), որ միաժամանակ նշանաւոր լեզուագէտ, անտառախոյզ ու միսիոնար էր: 1792-ին ան իր *Քրիստոնէաներուն հեթանոսները դարձի բերելու պարտաւորութիւնը* երկը կը հրատարակէր: Անոր այս գիրքն ու Եսայի 54.2-ի բնաբանը ընդգրկող քարոզը Աւետարանը հեթանոսներուն մէջ տարածելու մկրտչական ընկերակցութեան ծնունդ կու տային: Ան այս ընկերակցութեան առաջին միսիոնարը կը դառնար Հնդկաստանի մէջ եւ իր գրած նամակներով շատեր միսիոնարութեան կը մղէր: 1795-ին, որպէս ներյարանուանական ընկերակցութիւն՝ կը կազմուէր Լոնտոնի Միսիոնարական ընկերակցութիւնը, մասնաւորաբար Կոստիքրթի Ժողովական եկեղեցիի պատուելի Դաւիթ Պոկի (1750–1825) եւ Ալտվինքըլի աւետարանական հովիւ Թովմաս Հաուիսի (1734–1820) ջանքերուն շնորհիւ: Այս ընկերակցութեան առաջին միսիոնարները 1796-ին Թահիթի կը դրկուէին: Ապագային ան Ժողովական եկեղեցիներու ընկերակցութիւն կը դառնար: 1779-ին Անգլիոյ եկեղեցիի աւետարանական թելը Եկեղեցիին Միսիոնարական ընկերակցութիւնը կը հիմներ, Գլաֆհամի հովիւ Յովհաննէս Վենի եւ Ընտանիքին Աստուածաշունչը թերթի խմբագիր Թովմաս Սգոթի գործակցութեամբ: 1817–1818-ին կը հիմնուէր Անգլիոյ Ուէզլիական մեթոտական միսիոնարական ընկերակցութիւնը: 1796-ին ճամբայ ելլելով՝ 1825-ին Սկովտիոյ եկեղեցիի միսիոնարական ընկերակցութիւնները կը կազմուէին: Բրիտանական միսիոնարական այս շարժումները այլ երկիրներ եւս նման քայլեր առնելու կը մղէին, եւ ԺԹ. դարու սկիզբը Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ եւ ամբողջ այդ ցամաքամասի տարածքին յարանուանական ու ներյարանուանական միսիոնարական ընկերակցութիւններ կը սկսէին գործել:

Ժ. ԳԼՈՒԽ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԸ

ԺԸ. դարու վերջին քառորդին անգլիական 13 նահանգներ մայր երկիրեն կ'անջատուէին եւ անկախ ազգ կը դառնային՝ յատկանշելով Ամերիկայի յեղափոխական ժամանակաշրջանը: Շատերու ուշադրութիւնը Մեծ զարթօնքով եկած կրօնական կեանքէն կը կեդրոնանար քաղաքական ու զինուորական դէպքերուն վրայ: Թագաւորութեան եւ նահանգներուն միջեւ աճող անհամաձայնութիւնը կը յանգէր 1775-ի յեղափոխութեան, 1776-ի անկախութեան հռչակումին, մինչեւ 1783 տեւած աներիջ պատերազմին եւ 1789-ի Ամերիկայի Միացեալ Նահանգներու սահմանադրութեամբ ծնած նոր ազգին: Յեղափոխութիւնը եկեղեցիներու հեղինակութիւնը կը նուազեցնէր: Բազմաթիւ քաղաքական ղեկավարներ Անգլիոյ կամ Ֆրանսայի աստուածայնութեան ազդեցութեան տակ կը գտնուէին: Աւելի քան սերունդ մը՝ մարդիկ յեղափոխութեամբ կը զբաղէին, քան կրօնքով:

Կրօնական տեսակէտէ այս ժամանակաշրջանի ամենէն յատկանշական երեւոյթը Ամերիկայի կրօնական ազատութիւնն էր: Այս մէկը յեղափոխական քայլ մըն էր, որովհետեւ արմատապէս հեռացում էր արեւմտեան քաղաքակրթութիւնը բնորոշած հազարամեայ կրօնական միաձեւութենէն: Կարգ մը եւրոպական երկիրներու մէջ, ինչպէս Հոլանտա եւ Անգլիա, կրօնական հանդուրժողութիւն կար. սակայն կրօնական ազատութիւնը որպէս ազգային սկզբունք որդեգրելը յատկանշական անդրադարձ ունեցող նորութիւն էր Ամերիկայի համար: Ոչ մէկ կրօնական կազմակերպութիւն կը յաջողէր բացարձակ մեծամասնութիւն դառնալ: Եւրոպայէն ներածուած պետական եկեղեցիներ տեղ չէին գտներ Ամերիկայի մէջ, եւ ամերիկեան ցամաքամասին ընդարձակութիւնը կը դժուարացնէր եկեղեցական միաձոյլ հաստատութիւններու հիմնադրութիւնը: Նահանգներու տնտեսական բարօրութեան տրուած նախա-

պատուօրինը կը նուազեցնէր կրօնական տարբերութիւնները: Անգլիոյ մէջ ծայր առած հանդուրժողութիւնը դրական անդրադարձ կ'ունենար Ամերիկայի մէջ, երբ, օրինակ, 1662-ին Չարզ Բ. Մեսէչուսէցի մէջ քուէյգրներ կախաղան բարձրացնելը կ'արգիլէր: Բարեկարգութեան ձախակողմեան խմբակներ (մեննայթ եւ այլք) եւ մաքրակրօններու ձախ թելին պատկանող խմբակներ (մկրտչական ու քուէյգրը) երեւան կու գային եւ կրօնական ազատութեամբ կը գոյակցէին: Անգլիոյ քաղաքացիական պատերազմի օրերուն կրօնական ազատութեան մասին քննարկումներ կը կատարուէին կարգ մը մաքրակրօն շրջանակներու մէջ: Ռոտ Այլընտի եւ Փենսիլվանիոյ մէջ այս քննարկումները կը յանգէին այն եզրակացութեան, թէ առանց կրօնական միաձեւութեան կարելի էր քաղաքացիական համերաշխ կեանք ապրիլ: Մեծ զարթօնքը մեծապէս կը նպաստէր կրօնական ազատութեան եւ եկեղեցական նոր խմբաւորումներու ծնունդին: Կրօնական ու քաղաքական առաջնորդներու առողջ մօտեցումները եւս օգտակար կը դառնային կրօնական ազատութեան խարսխումին:

Այս բոլորը կարելի կը դարձնէին կրօնական ազատութիւնը, որուն համար մղուած ամենէն սուր պայքարը տեղի կ'ունենար պետական ղեկավարումի մակարդակին վրայ: Վրճինիայի մէջ քաղաքական երկար վէճերէ ետք կը հաստատուէր կրօնական ազատութեան օրինագիծը, որուն բնագիրը Թովմաս Ճեֆրըսըն խմբագրած էր 1785-ին: Նիու Անգլիոյ մէջ կրօնական ազատութիւնը ժողովական դրութեամբ կառավարող դրութիւնը կը խափանուէր՝ 1818-ին Գենեթիգրթի մէջ, 1819-ին Նիու Համշիրի մէջ եւ 1833-ին Մեսէչուսէցի մէջ: Ազգայնօրէն եւս զանազան գործօններ կը նպաստէին կրօնական ազատութեան հաստատումին: Մահմանադրութեան 6-րդ յօդուածը կ'ըսէր, թէ «Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ որեւէ հասարակական պաշտօն ստանձնելու առթիւ տուեալ անձին կրօնական պատկանելիութիւնը նկատի պէտք չէ առնուի»: 1791-ին սահմանադրութեան առաջին վերատեսութիւնը կը յայտարարէր, թէ «Երբ Ծերակոյտը օրէնք մը կը սահ-

մանէ, կրօնական հաստատութեան մը նախասիրութիւն պէտք չէ ընծայէ եւ կամ անոր ազատ գործունէութիւնը պէտք չէ կաշկանդէ»: Ահա այսպէսով կրօնական միաձեւութիւնը կ'աւարտէր եւ բոլոր եկեղեցիները օրէնքին դիմաց համահաւասար կամաւոր ընկերակցութիւններ կը դառնային:

Ամերիկեան անկախութեան տիրացումը բոլոր եկեղեցիները նոր հարցերու դէմ-յանդիման կը դնէր: Անոնք որոնք եւրոպական եկեղեցիներու հետեւորդներ էին, կը պարտաւորուէին անկախ դառնալ: Յեղափոխութենէն ամենէն շատ տուժող եկեղեցին Անգլիոյ եկեղեցին կ'ըլլար: Մանաւանդ հիւսիսային նահանգներուն մէջ Անգլիոյ եկեղեցիին պատկանող շատ մը հովիւներ եւ հաւատացեալներ սերտ կապուածութիւն ունէին Անգլիոյ հետ: Անգլիոյ եկեղեցիին անուան գործածութիւնը անգամ հակակրանք կը ստեղծէր եւ զայն Բողոքական եպիսկոպոսական անուանումով փոխանակելու առաջարկ կ'ըլլար նոյեմբեր 1780-ին՝ Մերիլընտի մէջ գումարուած եկեղեցական համագումարի ընթացքին: Երկու տարի յետոյ Ուիլէրմ Ուայթ (1748–1836), Ֆիլատելֆիոյ Քրիստոսի եկեղեցիին հովիւն ու ամերիկեան անկախութեան ջերմ պաշտպանը, կը մշակէր Ամերիկեան բողոքական եպիսկոպոսական եկեղեցիի կազմակերպութեան ծրագիրը, որ, անջատուելով Անգլիոյ պետութենէն եւ Եկեղեցիէն, կ'ունենար հոգեւորականներէ ու աշխարհականներէ բաղկացած ներկայացուցչական մարմիններ: Ընդառաջելով Ուայթի առաջարկին՝ ութ նահանգներու ներկայացուցիչներ հոկտեմբեր 1784-ին Նիու Եորքի մէջ հանդիպում կ'ունենային եւ սեպտեմբեր 1785-ին Ֆիլատելֆիոյ մէջ Ամերիկեան բողոքական եպիսկոպոսական եկեղեցիի առաջին համաժողովը գումարելու հրաւեր կ'ուղղէին: Գենեթիզըթի եպիսկոպոսական հոգեւորականութիւնը այս հրաւերին չէր ընդառաջէր, այլ Սամուէլ Սիպլըրին (1729–1796) եպիսկոպոս կ'ընտրէր եւ յունիս 1783-ին ձեռնադրուելու համար Անգլիա կը դրկէր: Նկատի ունենալով, որ եպիսկոպոսական ձեռնադրութեան համար Անգլիոյ խորհրդարանի որոշումը պայման էր, ան

նոյեմբեր 1784-ին Ապրրտինի մեջ սկովտիացի եպիսկոպոսներու կողմէ կը ձեռնադրուէր:

1785-ի առաջին համաժողովը կ'որդեգրէր Ամերիկայի Միացեալ Նահանգներու Բողոքական եպիսկոպոսական եկեղեցիի կանոնագրութիւնը, որ մեծ մասամբ Ուայթի կողմէ խմբագրուած էր: Ան նաեւ Անգլիոյ եպիսկոպոսներուն դիմում կը կատարէր, որ Ամերիկայի համար եպիսկոպոսներ ձեռնադրէին: Միպրրիի սկովտիական ձեռնադրութիւնը թէւէ վաւերական էր, սակայն Անգլիոյ մայր եկեղեցիի ձեռնադրութիւնը առաւել փափագելի էր: Ամերիկայի Միացեալ Նահանգներու եպիսկոպոսական ժողովները եպիսկոպոսութեան թեկնածուներ կ'առաջարկէին: 1786-ին համաժողովը ի նիստ կը հրաւիրուէր եւ կը հաղորդէր, թէ Անգլիոյ եպիսկոպոսները խորհրդարանին որոշումը առած էին եւ Ուայթ Ֆիլատելֆիոյ ու Սամուէլ Փրովուսթ (1742–1815) Նիու Եորքի եպիսկոպոս ընտրուած էին: 4 փետրուար 1787-ին անոնք Գենթըրպըրիի արքեպիսկոպոսին կողմէ եպիսկոպոս կը ձեռնադրուէին:

Միպրրի եպիսկոպոս եւ Ուայթ ու Փրովուսթ եպիսկոպոսներ յեղափոխութեան շրջանին եկեղեցական տարբեր աւանդութիւններու պատկանած էին եւ այժմ իրարու հանդէպ որոշ լարուածութիւն կը ցուցաբերէին: Գենթիգըթ տակաւին համաժողովին չէր մասնակցէր, սակայն համաժողովի ընթացքին եպիսկոպոսներու եւ պատգամաւորներու առանձին համախմբումներ ունենալու որոշումը մասնակցութեան ճանապարհը կը հարթէր: 1789-ի համաժողովին բոլոր կողմերը միանալով աղօթագիրքը կը վերախմբագրէին ու Ամերիկայի պահանջներուն կը պատշաճեցնէին եւ կը հիմնադրէին Ամերիկայի Միացեալ Նահանգներու Բողոքական եպիսկոպոսական եկեղեցին:

Յեղափոխութեան աւարտին, ամերիկեան մեթոտականութիւնը եւս անկախ կը դառնար: Մեթոտականներն ալ Անգլիայէն եւ Եպիսկոպոսական եկեղեցիէն կ'անջատուէին: 1780-ին Յովհաննէս Ուէզլի ամեն ջանք կը գործադրէր, որ Լոնտոնի եպիսկոպոսը Ամերիկայի համար եպիսկոպոսներ

ձեռնադրեր, սակայն չէր յաջողեր: Ան համոզուած էր, որ հին եկեղեցիին մէջ քահանաներն ու եպիսկոպոսները նոյն կարգին կը պատկանէին եւ ինք՝ որպէս քահանայ, ի պահանջել հարկին, կրնար եպիսկոպոս ձեռնադրել: Արդ, Պրիսթըրլի մէջ, 1 սեպտեմբեր 1784-ին, ան, եւ Թովմաս Գոք (1747–1814) ու Յակոբոս Գրէյթըն (1739–1820) մեթոտական քահանաներ Ռիչըրտ Ուաթգոթն ու Թովմաս Վէյսին Ամերիկայի համար սարկաւազ եւ յաջորդ օրն ալ քահանայ կը ձեռնադրէր: Նոյն օրը Գոք նաեւ վերատեսուչ կը կարգուէր: Յովհաննէս Ուէզլի Ամերիկայի մեթոտականներուն լուր կը դրկէր, թէ յեղափոխութեան շրջանին Ամերիկայի մէջ նշանակալից գործունէութիւն ունեցած Ֆրանսիս Ազպըրին եւ Գոքը իրենց համար վերատեսուչ նշանակած էր: Սակայն Ազպըրի լաւ գիտէր, որ Ամերիկայի քարոզիչները պիտի նախընտրէին, որ ժողով գումարէին եւ իրենք զինք ու Գոքը վերատեսուչ ընտրէին: 24 դեկտեմբեր 1784-ին Պալթիմորի մէջ Ծննդեան համագումարը կը հիմնէր Մեթոտական եպիսկոպոսական եկեղեցին եւ վերատեսուչ կ'ընտրէր Ազպըրին ու Գոքը: Ազպըրի յաջորդաբար սարկաւազ, քահանայ ու վերատեսուչ կը ձեռնադրուէր եւ աւելի քան տասը անձ քահանայ կը ձեռնադրուէր: Յովհաննէս Ուէզլի դժգոհ կը մնար, որ Ազպըրի եւ Գոք եպիսկոպոս տիտղոսը կը սկսէին գործածել, սակայն 1787-ին այս գործածութիւնը պաշտօնական կը դառնար: 1792-ին առաջին համաժողովը կը գումարուէր եւ կը հաստատէր ընդարձակուող Մեթոտական եպիսկոպոսական եկեղեցիի անկախութիւնը:

Հոլանտական ու գերման Բարեկարգեալ եկեղեցիներու կապը Հոլանտայի հետ կը տկարանար եւ անոնք 1792-ին եւ 1793-ին Մայր եկեղեցիներէն լրիւ կը խզուէին:

Հռոմէական եկեղեցին անկախ չէր դառնար, անշուշտ, սակայն ան եւս Հռոմի հետ իր յարաբերութիւնները վերատեսութեան կ'ենթարկէր եւ ազգային հանգամանք կը զգենար: Ան փոքրամասնութիւն էր ամերիկեան անկախութեան օրերուն, սակայն կրօնական ազատութիւնը եւ Յեղափոխութեան շրջանին ազգայնական գործունէութիւնը մեծապէս կը նպաստէին

անոր աճումին: Ան նախապես կը գտնուէր Լոնտոնի առաքելական փոխանորդին հովանիին տակ, սակայն անկախութեան գալուստով՝ 1784-ին, Մէրիլընտի մէջ մեծ յարգանքի արժանացած Յովհաննէս Գարոլ (1735–1815) Պիոս Զ. պապին (1774–1799) կողմէ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն առաքելական նուիրակ կը նշանակուէր: Ներքին հարցեր հրամայական կը դարձնէին եպիսկոպոս մը ունենալ, սակայն ամերիկացի կաթոլիկներ չէին ուզեր օտար եպիսկոպոսի մը իշխանութեան տակ ըլլալ, եւ քահանաներ Հռոմ կը դիմէին իրենց եպիսկոպոսը ընտրելու արտօնութիւն ստանալու համար: Հռոմ կ'ընդառաջէր. 1790-ին Անգլիոյ մէջ Գարոլ կը ձեռնադրուէր Պալթիմորի եպիսկոպոս: 1791-ին Պալթիմորի մէջ կը գումարուէր Ամերիկայի Միացեալ Նահանգներու առաջին Հռոմէական կաթոլիկ սինոտը: 1808-ին Գարոլ Պալթիմորը կը վերածէր արքեպիսկոպոսութեան. Նիու Եորքի, Պոսթընի, Ֆիլատելֆիոյ ու Պարտսթաունի մէջ եպիսկոպոսութիւններ կը հաստատուէին: Գարոլի վախճանումի տարին Հռոմէական եկեղեցին հաստատուած էր արդէն Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ եւ ուներ աւելի քան հարիւր հոգեւորական. հետագային նոր գաղթականներու ժամանումով այս թիւը շատ աւելի պիտի աճէր:

Մորալիանականներ եւս Եւրոպայի հետ սերտ յարաբերութիւններ ունէին: 1775-ին ամերիկացի մորալիանականներ կը փորձէին կեդրոնաձիգ քաղաքականութիւն վարել եւ անկախ դառնալ, սակայն եւրոպացի առաջնորդներ չէին ուզեր իրենց ազդեցութիւնը կորսնցնել եւ կը շարունակէին պետական եկեղեցիի դիտանկիւնէն մօտենալ հարցերուն: Ամերիկայի մորալիանականներուն ինքնավարութիւնը միայն ԺԹ. դարուն պիտի իրագործուէր:

Ժողովական, Սկրտչական ու Քուէզըր եկեղեցիներ արդէն իսկ անկախ էին եւ Յեղափոխութիւնը մեծ փոփոխութիւն չէր պատճառէր անոնց: Երիցականներ եւս անկախ էին, սակայն առաւել կը վերակազմակերպուէին: 1780-ականներուն անոնք նոր կանոնագրութիւն մը կը մշակէին եւ իրենց

համաժողովը գերագոյն իշխանութեան վերածելով՝ 1789-ին Ֆիլատելֆիոյ մէջ առաջին համաժողովը կը գումարէին: Լուտերականներ եւս ինքնավար էին, սակայն Յեղափոխութեան օրերուն առաւել կը կազմակերպուէին: 1762-ին Մելխիոր Մուխլընպըրկ իր Ֆիլատելֆիոյ ծովին համար կանոնագրութիւն մը կը մշակէր, եւ Եկեղեցիի բոլոր պաշտօնեաները ծխականներուն կողմէ կ'ընտրուէին: Այսպէսով ամերիկեան լուտերականութեան երկու հիմնական բարեմասնութիւնները կը ճշդուէին. ծխական մակարդակի վրայ՝ ժողովական, եւ ազգային մակարդակի վրայ՝ երիցական քահանաներու սինոտով արտայայտուած: Մինոտական դրութիւնը աստիճանաբար հող կը շահէր: Նիու Եորքի սինոտը երկրորդը կ'ըլլար եւ 1786-ին կը հաստատուէր. անոր անմիջապէս կը յաջորդէր երրորդը՝ Հիւսիսային Գարոլայնայի մէջ: 1820-ին ընդհանուր սինոտը կը կազմուէր, սակայն բոլոր լուտերականները չէին մասնակցեր անոր: Ազգայնական ու աստուածաբանական անհամաձայնութիւններ պատճառ կը դառնային, որ լուտերականներ ազգային միութեան չհասնէին:

Տիեզերականները անկախութեան օրերուն Ամերիկայի մէջ երեւան եկած կրօնական նոր կազմակերպութիւն մըն էին: Բոլորին փրկութեան վարդապետութիւնը ԺԸ. դարուն Ամերիկայի մէջ եւ այլուր կը քարոզուէր, սակայն կազմակերպ տիեզերականութեան հայրը Յովհաննէս Մըրլէյ (1741–1815) էր, որ իր հայրենիքին՝ Անգլիոյ մէջ կ'ազդուէր Ուայթֆիլտի քարոզներէն եւ Յակոբոս Ռելիի (1722?–1778) գրութիւններէն: Ան որպէս Ռելիի աշակերտներէն մին, Ամերիկա կու գար 1770-ին եւ Նիու Անգլիոյ մէջ իր ծառայութեան կը ձեռնարկէր: Չափաւորական կալվինական Մըրլէյ կը հաւատար, թէ Քրիստոս ոչ ընտրեալներուն, այլ բոլոր մարդկութեան մեղքերը քաւած էր եւ Վերջին դատաստանին բոլորը անոր օրհնութեան պիտի արժանանային, երբ Աստուած իր գութով ամեն անհաւատութիւն պիտի ջնջէր. անոնք որոնք ամբողջական հաւատք ունէին, այժմէն այս խոստացուած օրհնութեան արժանացած էին:

1780-ին տիեզերականութիւնը առաւել մղում կը ստանար, երբ Ֆիլատելֆիայէն մկրտչական հովիւ Էլիանան Ուինչըսթըրը (1751–1797), Մըրէյէն անկախաբար, կը սկսէր տիեզերականութիւն քարոզել: Ան կ'ըսէր, թէ փրկութիւնը բոլորին տրուած էր Աստուծոյ կողմէ, սակայն ան իրագործելի էր, երբ անապաշխարներ երկարատեւ, բայց ոչ յաւիտենական, տանջանք կրէին: Աւելի ազդեցիկ էր Պոսթընի հովիւ Ուսէ Պալուն (1771–1852): Ան արիոսական էր, եւ ամերիկեան տիեզերականութիւնը առաւելաբար անոր կը հետեւէր՝ հաստատելով, թէ քաւութիւնը մարդերու հանդէպ Աստուծոյ ունեցած սիրոյն պտուղն էր եւ մեղքը պատիժի կ'ենթարկուէր այժմ ու վաղը, մինչեւ որ մարդիկ Աստուծոյ դառնային:

Տիեզերականութեան հետեւողները այնքան կ'աճէին, որ 1790-ին Ֆիլատելֆիոյ մէջ համաժողով կը գումարէին. երեք տարի ետք Նիու Անգլիոյ մէջ եւս համաժողով կը գումարէին: 1803-ին անոնք Ուինչըսթըրի մէջ հաւաքուելով իրենց սկզբունքները դաւանող Հաւատքի հանգանակ մը կը հրապարակէին: Տիեզերականութեան հետեւողները ընդհանրապէս համեստ խաւի մարդիկ էին:

Ամերիկեան յեղափոխութիւնն ու Մեծ զարթօնքը կրօնական ազատութեան բարիքը կը շնորհէին եկեղեցիներուն, որոնք այսպէսով աճումի նոր փուլ կը թեւակոխէին: Հասարակաց կեանքին մէջ շուրջ 14 դար արտայայտութիւն գտած քրիստոնէութիւնը նորանկախ ամերիկեան ազգին համար կենդանի ներգործութիւն կ'ունենար:

ԺԱ. ԳԼՈՒԽ ԳԵՐՄԱՆ ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Նախքան մեթոտականության երեւան գալը Անգլիան իր աստուածայնութեամբ, բանականութեամբ ու միութենականութեամբ մեծ յառաջդիմութիւն արձանագրած էր: Աւետարանական արթնութիւնը եթէ աստուածաբանականօրէն վարդապետական հին գաղափարներու վերադարձ մըն էր, միաժամանակ կը նպաստէր անգլիացիներու կրօնական զգացումները ի յայտ բերելուն: Գերմանիոյ մէջ բարեպաշտութիւնը կը կանխէր Լուսաւորութիւնը եւ ապա կը զարգանար անոր զուգահեռ: Բարեպաշտութիւնը կը նշէր աւանդական ուղղափառութեան աւարտը, սակայն հիները փոխարինող նոր աստուածաբաններու ծնունդ չէր տար: ԺԸ. դարու անգլիացի աստուածայնականներու ու անոնց ընդդիմադիրներուն քննադատական մօտեցումը եւ Ֆրանսայի աստուածայնականներու ժողովրդականացած մտայնութիւնը, ներթափանցելով Գերմանիա, խոպան դաշտ կը գտնէին: Այս պատճառով Լուսաւորութիւնը արագ աճ կ'ունենար հոս: Ան Անգլիայէն ու Ֆրանսայէն աւելի հոս աստուածաբանութեան վրայ կ'ազդէր, եւ ԺԹ. դարուն բոլոր բողոքական երկիրներուն մէջ կը տարածուէր:

Քրիստիան Վոլֆ (1679–1754) Լուսաւորութեան ամենէն ազդեցիկ ներկայացուցիչը կը դառնար Գերմանիոյ մէջ եւ կը հանդիսանար երկու սերունդներու իմաստասիրական ու աստուածաբանական մտածողութեան առաջնորդը: 1707-ին ան ուսողութիւն դասաւանդել կը սկսէր Հալլէի մէջ, ուր նաեւ կը մշակէր իր իմաստասիրութիւնը: Ան կ'ըսէր, թէ ճշմարտութիւնը միմիայն ուսողական տրամաբանութեամբ ի յայտ կու գար: Ճշմարտութիւնը միայն միտքին բիրեղ պատճառականութեամբ երեւան կ'ելլէր: Փորձառութեամբ մեր տեսածը կը հաստատէր այս տեսակէտը: Աշխարհը այլ էութենէ կախեալ էր եւ կազմուած ըլլալով պարզ էութիւններէ, որոնց իւրաքանչիւրը օժտուած էր իրեն յատուկ ուժականութեամբ: Մարմինները այս

էութիւններուն գումարումներն էին: Աշխարհը ուսողական օրէնքներով բանող մեծ մեքենայ մըն էր: Մարդու հոգին իր եւ այլ առարկաներուն մէջ գտնուող գիտակցութիւնն էր: Ան գիտութեան եւ փափագի կարողականութիւնները ունէր, որոնց բաւարարութիւնը հաճոյքն էր ու անբաւարարութիւնը՝ ցար:

Որովհետեւ աշխարհ այլ էութենէ կախեալ էր, ան պէտք է ունենար իր պատճառը: Ուրեմն Աստուած գոյութիւն ունէր եւ ան աշխարհի Արարիչն էր: Տրամաբանութիւնը աստուածային յատկանիշերը կը յուշէր: Որովհետեւ կատարելութիւնը բոլոր արարածներուն բարձրագոյն ձգտումն էր, ան առաքինութիւն էր: Բարի արարքը մարդուն տրուած աստուածային պարգէն մըն էր: Վոլֆ յայտնութիւնը չէր ժխտեր, սակայն կը հաստատէր, որ անոր գոյութիւնը ներդաշնակ կրնար ըլլալ միայն պատճառականութեան: Ան կ'ըսէր, թէ հրաշքները կրնային տեղի ունեցած ըլլալ, թէեւ այս մէկը անհաւանական կը նկատէր, եւ անոնք տեղի ունենալէ ետք՝ միաժամանակ կրնային որպէս բնութեան կարգ-կանոնի կասեցում եւ ապա անոր վերահաստատումը նկատուիլ: Վոլֆի համաձայն մարդիկ անհատապէս եւ հաւաքաբար դէպի կատարելութիւն կ'ընթանային: Այս բոլոր տեսակէտները կը բանաձեւէին տրամաբանութեան վրայ հիմնուած նոր աստուածաբանութիւն մը, որ Աստուծոյ, բնութեան, բարոյականութեան եւ անհատական ու հաւաքական կատարելութեան գերբնական յայտնութիւնն ու փրկութիւնը կ'անդրանցէին եւ մարդը հին աստուածաբանութեան սահմանած անյոյս ու անկարող վիճակէն դուրս կը բերէին:

Վոլֆի այս տեսակէտները Հալլէի բարեպաշտ գործակիցները իր դէմ կը հանէին: Անոնք Ֆրետերիք Ուիլհելմ Ա. թագաւորին (1713–1740) կը դիմէին, որ Վոլֆը պաշտօնանկ ընէր եւ ի զարմանս իրենց, թագաւորական հրահանգը կ'ըսէր, թէ ան կամ 48 ժամէն պէտք էր հեռանար համալսարանէն եւ կամ կախաղան պիտի բարձրացուէր: Վոլֆ Մարպուրկ կ'ապաստանէր եւ 1740-ին Մեծն Ֆրետերիք թագաւորին կողմէ Հալլէ վերադառնալու արտօնութիւն կը ստանար: Յաջորդ 14 տարիներուն ան

նորութիւն չէր բերեր իր տեսակետներուն, որոնք արդէն Գերմանիոյ մէջ մեծ տարածում գտած էին:

Նուազ ծայրայեղական բայց ազդեցիկ էր Հելմսթրտի եւ ապա Կոթինկընի դասախօս Յովհան Լորենզ Մոշէյիմցի (1694?–1755): Ան իր օրերու ամենէն նշանաւոր քարոզիչը, լատինագէտն ու գերմանագէտն էր եւ կը համարուէր արմատական պատճառականութեան հետեւող: Ան ուղղափառութեան դէմ էր: Մէկ կողմէն չէր հանդուրժեր բարեպաշտութիւնը եւ միւս կողմէն դէմ էր Վոլֆի տեսակետներուն: Ան կրօնական բազմաթիւ հարցերու մասին իր տեսակետները կը պարզէր եւ մեծ նպաստ կը բերէր Լուսաւորութեան տարածումին: Անոր մեծագոյն նպաստը պատմութեան կը վերաբերէր: Նախ 1726-ին լոյս տեսած եւ ապա 1755-ին ամբողջացած անոր հեղինակած *Եկեղեցիի պատմութիւն* երկը կը ներկայացնէր ամբողջ Եկեղեցիի պատմութիւնը: 1753-ին հրատարակուած անոր *Քրիստոնէութիւնը մինչեւ Կոստանդիանոս* երկը քրիստոնէութեան առաջին դարերու պատմութիւնն էր: Մոշէյիմցի արդարօրէն արդի Եկեղեցիի պատմութեան հայրը կը կոչուի: Ան իր Եկեղեցիի պատմութեան երկերուն մէջ այնքան անկողմնակալ է, որ անոնք իր մահէն ետք անգամ երկար ժամանակ կը փնտռուէին:

Գերմանիոյ մէջ կը յայտնուէին աւելի ծայրայեղ պատճառականներ: Հերման Սամուէլ Ռէյմարոս (1694–1768)՝ Համպուրկի արեւելեան լեզուներու համբաւեալ դասախօսը, Անգլիա կ'այցելէր, աստուածայնական տեսակետներ կ'որդեգրէր եւ անոնց մասին կը գրէր: Սակայն անոր գրութիւնները, ծանօթ որպէս «Վոլֆենպուրլի պատառիկներ», միայն յետ մահու՝ 1774–1778-ին կը հրատարակուէին եւ մեծ վիճարկումներու առարկայ կը դառնային: Ան կը ջատագովէր աստուածայնութեան այն տեսակետը, թէ կրօնքը կ'ուսուցանէր իմաստուն Արարիչի մը գոյութիւնը, նախնական բարոյականութիւնն ու անմահութիւնը, որոնք պատճառականութեամբ կը հաստատուէին: Աշխարհը միակ հրաշքն ու յայտնութիւնն էր: Աստուածաշունչի հեղինակները պարկեշտ մարդիկ չէին, այլ կեղծիքով եւ անձնասիրութեամբ գրած էին Աստուածաշունչը: Հետա-

քրքրական է նշել, որ թեև Ռեյմարոսի գրութիւնները խստօրէն կը քննադատուէին Գերմանիոյ մէջ, միաժամանակ անոնք կրօնքը նիւթապաշտութեան ու անաստուածութեան դէմ պաշտպանելու համար կ'օգտագործուէին:

Կոթհոլտ Եփրեմ Լեսինկ (1729–1781), որ Ռեյմարոսի կրօնական գրութիւններուն խմբագիրն էր, նշանաւոր գրականագէտ եւ արուեստաբան էր եւ գերման դասական գրագէտներ Յովհան Վոլֆկանկ Կեօթէի ու Յովհան Քրիստոֆ Ֆրետերիք Շիլերի համագոր կը դասուէր: Ան իր 1780-ին հեղինակած *Մարդկային ցեղի դաստիարակութիւնը* երկին մէջ առաւել համոզիչ տեսակէտ մը կը պարզէր: Այնպէս ինչպէս անհատ մը մանկութեան, երիտասարդութեան ու հասուն մարդու փուլերէն կ'անցնէր, նոյնը կը պատահէր նաեւ ցեղի մը: Աստուածաշունչը Աստուծմէ տրուած էր այս հոլովոյթը բացատրելու համար: Մանկութեան ընթացքին վարձատրութիւններ եւ պատիժներ կը ստանայինք. Հին կտակարանը վարժութեան աստուածային գիրք մըն էր, որ մեր հնագանդութեան փոխարէն երկար կեանք եւ ժամանակաւոր օրհնութիւններ կը խոստանար: Երիտասարդութիւնը ներկայ խաղաղութիւնն ու բարիքները կը զոհէր ապագայի յաջողութեան եւ ուրախութեան փոխարէն. այս հանգրուանին Նոր կտակարանը իր յաւիտենական խոստումներով տիպար առաջնորդ մըն էր: Մարդկութիւնը պարտականութեան ձայնը կը լսէր եւ վարձատրութեան կամ պատիժին չէր անսար: Անոր առաջնորդը պատճառականութիւնն էր, թէև Աստուած կրնար նաեւ որպէս յաւելեալ օժանդակութիւն այլ յայտնութիւն մըն ալ շնորհել: Լեսինկի այս երկը Գերմանիոյ մէջ կը տարածէր այն տեսակէտը, թէ պատմական քրիստոնէութիւնը անցեալին կը պատկանէր եւ մարդկութեան ներկայ զարգացումի փուլին չէր համապատասխանէր:

Լուսաւորութիւնը Աստուածաշունչի եւ բնական կրօնքի բերած ճշմարտութիւններուն միազանգումն էր, հրաշալիին ու գերբնականին չէզոքացումով: Յիսուս բարոյագէտ էր եւ ոչ քրիստոնէական հաւատքի կեդրոնական դէմքը: Ահա այս էր

պատճառականությունը, որ Գերմանիոյ ամենէն տիրական աստուածաբանական մտածողութիւնն էր 1800-ականներուն եւ նոյն ազդեցութիւնը պիտի պահէր նաեւ ԺԹ. դարուն: Պատճառականութեան զուգահեռ եւ նուազ գրաւչութեամբ դասական ուղղափառութիւնն ու բարեպաշտութիւնը եւս կը շարունակէին իրենց գոյութիւնը: Ժամանակաշրջանը նախապաշարումներէ զերծ ըլլալով՝ կը յատկանշուէր կամաւոր ու ժողովրդանուէր բարեգործութեամբ եւ ժողովրդային լայն զանգուածներու դաստիարակութեամբ:

ԺԸ. դարը, մանաւանդ Գերմանիոյ մէջ, կը մասնաւորուէր նաեւ Աստուածաշունչի բնագրային եւ պատմաբանասիրական ուսումնասիրութեան բերած զարկով եւ կը սկզբնաւորէր քննադատութեան արդի ժամանակաշրջանը: Անգլիացի մտաւորական Յովհաննէս Միլ (1645–1707) 1707-ին ձեռագրերու խնամեալ համեմատութեամբ կը հրատարակէր յունարէն Նոր կտակարան մը: Նախապէս Ժնէ եւ ապա Ամսթերտամ ապրող Յովհաննէս Գլէրգ (1657–1736) Աստուածաշունչի բնագրային ուսումնասիրութեամբ մեծ համբաւի կը տիրանար: Երկար տարիներ Ուորթըմպըրկի դպրեվանքին տեսուչ՝ Յովհան Ալպրէխթ Պենկել Նոր կտակարանի ձեռագրերը կը խմբաւորէր եւ քննական կանոնի կը վերածէր: 1742-ին անոր հեղինակած Նոր կտակարանի ցուցակը ցարդ լոյս տեսած ամենէն յատկանշական մեկնողական երկը կը դառնար: Յովհաննէս Ուէզլի այս երկը կ'օգտագործէր 1755-ին իր *Նոր կտակարանի նոթերը*-ը գրելու համար: Պագէլ եւ Ամսթերտամ հաստատուած Յովհան Յակոբ Ուէթսթայն (1693–1754) ամբողջ կեանքը կը տրամադրէր 1751–1752-ին լոյս տեսած իր *Յունարէն Նոր կտակարանի տարբերակները* երկին համար:

Փարիզի արքայական համալսարանի բժշկութեան դասախօս՝ Յովհաննէս Ասթրուզ (1684–1766), 1753-ին կը բացայայտէր Ծննդոց գիրքին բաղադրեալ ըլլալը: 1781-ին Յովհան Կոթֆրայտ Էյզհորն (1752–1827), յաճախ Հին կտակարանի քննադատութեան հիմնադիրը համարուած Կոթինկընի մէջ պատճառականութեան դասախօս, այս տեսակէտը պաշտպա-

նող առաջին անձը կը դառնար. սակայն ժԹ. դարու աւարտին էր, որ Ասթրուգի տեսակէտը աւելի մեծ ընդունելութիւն պիտի գտնէր:

1742-էն սկսեալ Լայփցիկի մէջ դասախօս Յովհան Օգոստոս Էրնեսթի (1707–1781) դասական գրականութեան քննադատութիւնն ու մեկնութիւնը կը կիրարկէր Նոր կտակարանին եւ այսպէսով Գերմանիոյ մտաւորական կեանքին մէջ մեծ նորութիւն կը ներմուծէր: Ան կ'ըսէր, թէ գրականութեան եւ Նոր կտակարանի պարագային ճիշդ իմաստը գտնելու համար նոյն քերականական եւ պատմական քննադատութեան մեթոտը պէտք էր օգտագործուէր: 1778-ին Լեսինկի կողմէ լոյս տեսած Ռեյմարոսի 7-րդ պատասօնը առաջին անգամ ըլլալով պատմական քննարկումի կ'ենթարկէր Քրիստոսի կեանքը, ինչպէս էր պարագան աշխարհիկ պատմութեան: Ան կտրականօրէն կը մերժէր գերբնական ու առասպելական երեւոյթները եւ կը բանար նոր աշխատակարգի մը ճամբան: 1752-էն սկսեալ Հալլէի դասախօս եւ Բարեպաշտական կազմաւորում ունեցող Յովհան Սալոմօ Սեմլըր (1725–1791) պահպանողական պատճառական մը կը դառնար: Ան Աստուածաշունչի մնայուն ճշմարտութիւններն ու անոր գիրքերուն գրութեան ժամանակ ի յայտ եկած տարրերը կը զատորոշէր եւ Աստուածաշունչի բոլոր մասերուն համահաւասար արժէք չէր տար: Ան կ'ըսէր, թէ յայտնութիւնը Աստուածաշունչին մէջ կը գտնուէր, սակայն ամբողջ Աստուածաշունչը յայտնութիւն չէր: Եկեղեցիի Հաւատքի հանգանակները ժամանակի ընթացքին զարգացում արձանագրած էին: Եկեղեցիի պատմութիւնը քարացած չէր, այլ հոլովոյթի մը կը հետեւէր: Ան յստակ բաժանում մը կը դնէր մասնաւորաբար նախնական Եկեղեցիին մէջ գտնուող Պետրոսի ու յուդայականներուն եւ Պօղոսի ու հակայուդայականներուն միջեւ. այս մէկը մեծ ազդեցութիւն պիտի ունենար հետագայ քննարկումներուն վրայ:

ԺԲ. ԳԼՈՒԽ

ԺԹ. ԴԱՐՈՒ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

ԺԸ. դարու առաջին կեսի ամենէն յատկանշական երեւոյթը պատճառականութեան տիրական ներկայութիւնն էր: Այս ժամանակաշրջանը յուզականութենէ մտաւորականութիւն անցքն էր: Ան մարտահրաւէր կը կարդար աւանդութեան, նախապաշարումներուն ու հեղինակութեան: Սակայն ան պաղ եւ միակողմանի էր իր մօտեցումներուն մէջ: ԺԸ. դարու ամբողջ տեւողութեան ան բուռն ընդդիմութեան կը հանդիպէր: «Վերադարձ դէպի բնութիւն» կոչը երեւակայական բնութեան մը կ'ակնարկէր, սակայն Միջին դարերու դասականութեան եւ կրօնական գերբնականութեան զգացականութեան վերադարձէն աւելի իմացականութեան մասին կը խօսէր:

Այս շարժումին ռահվիրան Յովհաննէս Յակոբ Ռուստն (1712–1778) էր. սակայն ան միայն Ֆրանսայի մէջ չէր յայտնուեր, այլ ամբողջ Եւրոպան կը ներառէր եւ մասնաւորաբար Գերմանիոյ մէջ կը դրսեւորուէր: Լեսինկ գործակից էր անոր: Գերմանիոյ մէջ պատճառականութեան ամենէն կարկառուն ներկայացուցիչները Յովհան Վոլֆկանկ Կէօթէն (1749–1832) եւ Յովհան Քրիստոֆ Ֆրետերիք Շիլերն (1759–1805) էին: Հին պատճառականութիւնը տակաւին առկայ էր, սակայն կեանքի եւ մտածողութեան հիմնական տարբերութիւններ երեւան եկած էին, եւ այս նոր շարժումը կը բնորոշուէր որպէս վիպապաշտութիւն:

ԺԸ. դարուն իմաստասիրութիւնը մեծ յառաջընթաց չէր ունենար: Կոթֆրայտ Ուիլիըմ Լայպնից կ'ուսուցէր, թէ գիտութիւնը նոյնիսկ ամենէն փոքր մասնիկին մէջ կը գտնուէր: Վոլֆ բիրտեղ պատճառականութիւնը միակ վստահելի գիտութիւնը կը համարէր: Միւս կողմէ Լոգ ուսուցած էր, թէ ամեն գիտութիւն փորձառութեան վրայ հիմնուած էր: Թէեւ Հիում պատճառականութեան վրայ հիմնուած գիտութեան կասկածով կը նայէր,

ան եւս, Լոզի նման, ամեն գիտութիւն փորձառութեան վրայ հիմնուած կը դաւանէր: Բրիտանական եւ գերման մօտեցումները այս հարցերուն հանդէպ դրական չէին: Էմմանուէլ Քանթ վերէւ յիշեալ երկու հակադիր տեսակէտները պիտի համադրէր եւ նոր իմաստասիրութիւնը պիտի սկզբնաւորէր: Մէկ կողմէն ան պիտի դառնար պատճառական ու լուսաւորեալ կրօնքի գազաթնակէտը եւ միւս կողմէն Լուսաւորութեան բացթողումները պիտի քննադատէր ու հարցերուն մօտենալու նոր եղանակներ պիտի առաջարկէր:

Քանթ (1724–1804) ամբողջ կեանքը Քոնիկսպըրկի մէջ կ'անցնէր: Ան կը հաւատար, թէ իր նախնիները սկովտիացի էին: Ան սկզբնապէս բարեպաշտութեան ազդեցութեան տակ կը գտնուէր: 1755-ին ան Քոնիկսպըրկի համալսարանի դասախօս կը դառնար: Ան նախ Լայպնիցի եւ Վոլֆի ուսուցումներով կը խանդավառուէր, սակայն Հիումը կարդալէն ետք որոշ չափով անոր կը հակէր: Ռուստոն մարդուն բնութեան յայտնութեամբ մեծապէս կը տպաւորէր Քանթը: 1781-ին Քանթ կը հրատարակէր իր նշանաւոր *Քննադատութիւն բիւրեղ պատճառի* երկը, որով մասնաւորաբար Վոլֆի տեսակէտները կը խորտակէր: Այլ յօդուածներ կը յաջորդէին այս երկին եւ Քանթ մեծ համբաւ կ'ունենար Գերմանիոյ մէջ: 1797-ին անոր իմացական ու ֆիզիքական առողջութիւնը կը քանդուէր: Ան ֆիզիքապէս փոքրամարմին էր, երբեք չէր ամուսնանար, իստաբարոյ կեանք կը վարէր եւ եզակի համեստութեամբ ու հաւատարմութեամբ ինքզինք իր գիտական զբաղումներուն կը նուիրէր:

Քանթի իմաստասիրական դրութիւնը գիտութեան նուիրուած էր: Հիումի եւ Լոզի նման ան կը պնդէր, որ մեր գիտութեամբ մղում մը կը մտնէր մեր միտքին մէջ: Լայպնիցի եւ Վոլֆի նման ան կը հաստատէր, որ գիտութիւնը կ'անդրանցէր փորձառութեամբ մեր ձեռք բերածը: Այս բոլորը ժամանակի եւ միջոցի մէջ տեղի կ'ունենային: Միտքը իր ստացած գիտութիւնը դասակարգումներով կը կարգաւորէր: Արդ, գիտութիւնը կ'ընդունէր իրեն տրուածը եւ զայն միտքին ներգործութեամբ կը վերածէր օրէնքներու: Այսպէսով մենք փորձառութեան կը

տիրանայինք. այսինքն՝ կ'ըմբռնեինք ոչ այնպես, ինչպես մեզի տրուածները կային, այլ այնպես, ինչպես մեր միտքը կը պարզաբանէր զանոնք: Աստուծոյ, բնական կրօնքի ու տիեզերքի բիրեղ պատճառականութեան ըմբռնումը այս պարագային իմացապէս անկարելի կը դառնար: Մենք չէինք կրնար այս գոյութիւնները իրենց եղածին պէս բացայայտել. օրինակ՝ կարելի էր բնութիւնը յստակ օրէնքներով ուսումնասիրել, սակայն այս օրէնքները մեր միտքով ըմբռնածներն էին միայն:

Մինչ փորձառութիւնը անդրանցող բացարձակ գիտութիւնը միտքով ամբողջապէս հասանելի չէր, բարոյական պարտաւորութիւն մը կը մղէր մեզ ճիշդը գործելու: Քանթ այս հարցը կ'ուսումնասիրէր իր 1788-ին լոյս ընծայած *Քննադատութիւն գործնական պատճառի* երկին մէջ: Երբ հարցի մը մասին մեր կեցուածքը կը ճշդէինք, պայմանականութենէ զերծ հրամայական մը կը դիմագրաւէինք եւ այս՝ համայնական օրէնքով սահմանուած մեր պարտաւորութիւնը կը դառնար: Այս բարոյական օրէնքը մարդուն ազնուագոյն առաքիներութիւնն էր եւ զայն մեքենայէ անհատականութեան կը բարձրացնէր: Հոս երեք երեւոյթներ զիրար կ'ամբողջացնէին. առաջին՝ մարդիկ ազատ կամքով իրենց պարտականութիւնը կը կատարէին, եւ ազատութիւնը բարոյական առաւելութեան կը վերածուէր. երկրորդ՝ իրենց պարտականութիւնը կատարելով՝ մարդիկ գերագոյն բարիին կը ձգտէին եւ այս առաքիներութիւնը երջանկութիւն կը բերէր, թէեւ փորձառութիւնը միշտ զայն չէր ցոյցանէր. երրորդ՝ կար այս երկու երեւոյթները իրարու կապող ուժ մը, որ Աստուած էր եւ որուն գոյութիւնը ենթադրաբար բիրեղ պատճառականութիւնն էր, որ համոզիչ կը դառնար գործնական արտայայտութիւն գտնելով:

Երբ Քանթ գործնական երեւոյթներու վրայ հիմնաւորուած իր կրօնական գաղափարները կը բանաձեւէր, ան Լուսաւորութեան պատճառական հաւատքը կը ներկայացնէր: 1793-ին իր հեղինակած *Կրօնքը պատճառի սահմաններուն մէջ միայն* երկը բարոյականութիւնը որպէս գործնական պատճառի զլիսաւոր երեւոյթը կ'ընդգծէր եւ կը վերածէր զայն կրօնական

աստուածային բարոյականութեան: Մարդիկ բարոյական բարիով կը կառավարուէին եւ աստուածահաճոյ զաւակներ կը դառնային: Այս յարաբերութեան գագաթնակէտը Քրիստոս էր: Չերեւոյող Եկեղեցին բարոյական օրէնքը պահածներուն միութիւնն էր: Երեւոյող Եկեղեցին այս բարոյական օրէնքին հնազանդութեամբ ապրողներուն ամբողջութիւնն էր: Բարոյական օրէնքին կատարելութիւնը Աստուծոյ թագաւորութեան մէջ էր: Քանթի քրիստոնէական աստուածաբանութեան բերած մեծագոյն նպաստը վարդապետութիւնները պատճառական մեկնութեան ենթարկելը չէր, այլ՝ մարդկային զգացումները բարոյական չափանիշի վերածելը: Վիպապաշտութեան հետեւողները այս մօտեցումը տարբեր ուղղութեան պիտի առաջնորդէին:

Յովհան Կոթֆրայտ Հերտեր (1744–1803)՝ նախապէս Կեթօթի մտերիմը, ապա Քանթի ազդեցութեան ենթարկուածը եւ վիպապաշտ շարժումի մեծ քաջալերիչը, կը նուիրուէր Աստուածաշունչի պատմական մեկնութեան: 1776-էն մինչեւ իր մահը ան Ուէյմարի մէջ քարոզիչ էր: 1782–1783-ին ան լոյս կ'ընծայէր իր *Եբրայական բանաստեղծութեան հոգին* եւ 1784–1791-ին իր *Մարդկութեան պատմութեան իմաստասիրութիւնը* երկերը: Ան կ'ըսէր, թէ կրօնքը, մանաւանդ քրիստոնէութիւնը, մարդկային խորագոյն զգացումներուն ցոլացումն էր: Աստուածաշունչը պէտք էր ըմբռնել անոր գիրքերուն գրուած ժամանակներու տեսակէտներուն ու զգացումներուն լոյսին տակ, որովհետեւ ան կրօնական գրականութիւն էր: Այն ինչ որ ճշմարիտ եւ մնայուն էր անոնց մէջ, ժամանակաւորէն եւ տեղականէն պէտք էր զանազանուէր:

ԺԹ. դարու սկիզբի վիպապաշտ շարժումի ամենէն ազդեցիկը գերման աստուածաբան Ֆրետերիք Դանիէլ Էրնըսթ Շլերմախըրն էր (1768–1834), որուն ազդեցութիւնը իր բնիկ երկիրէն դուրս լայն շրջանառութեան մէջ կը մտնէր: Ան փրուսիացի բանակի հովիւի մը զաւակն էր: Ան իր դաստիարակութիւնը կը ստանար մորաւիհանականներուն քով, կը կրէր Վոլֆի ու Սեմլըրի տեսակէտներուն ազդեցութիւնը եւ մեծապէս

կը տպաւորուէր Պղատոնով, Սփինոզայով, Քանթով ու վիպապաշտութեամբ: 1796-ին ան այդ օրերու Լուսաւորութեան կեդրոններէն Պերլինի մէջ հիւանդանոցի հովիւ կը դառնար եւ 1799-ին կը հրատարակէր իր *Կրօնքի ճատեր* երկը, որ կրօնքը անարգողներուն հասցեագրուած էր: Այս երկին մէջ իր տեսակետները մեծապէս վիպապաշտութեան ազդեցութեան տակն էին: 1804–1807-ին ան Հալլէի մէջ կը դասախօսէր, ապա դարձեալ Պերլին կ'անցնէր եւ քիչ յետոյ Երրորդութիւն եկեղեցիին հովիւը կ'ըլլար: 1810-ին, երբ Պերլինի համալսարանը կը հիմնուէր, ան աստուածաբանութեան դասախօս կը նշանակուէր եւ մինչեւ իր մահը հոն կը մնար: 1821–1822-ին իր հասուն տեսակետները կը պարզէր *Քրիստոնէական հաւատքը Աւետարանական եկեղեցիի սկզբունքներուն համաձայն* երկով, որ 1830-ին կ'արժանանանար երկրորդ հրատարակութեան:

Շլերմախըրի գլխաւոր մասնայատկութիւնը կը կայանար անոր մէջ, որ ան զինք կանխող տեսակետները իր դրութեան մէջ նկատի կ'ունենար եւ աստուածաբանութեան նոր հիմնաւորում ու Քրիստոսի անձին նոր իմաստ կու տար: Թէ՛ ուղղափառութիւնը եւ թէ՛ պատճառականութիւնը ներածած էին կրօնքը իմացական դրութեան մէջ եւ վերածած կեանքի հեղինակաւոր օրէնքի: Ուղղափառներուն համար կրօնքը յայտնութեան ճշմարտութիւններուն եւ Աստուծոյ կամքին հնազանդութեան վրայ հիմնուած էր: Պատճառականներուն համար կրօնքը պատճառականութեամբ հիմնաւորուած բնական աստուածաբանութեան եւ տիեզերական բարոյականութեան ընդունումն էր: Երկու խմբակներն ալ ԺԸ. դարուն կրօնքն ու բարոյականը երջանիկ անմահութիւն բերող միջոցներ կը նկատէին. Քանթի համար եւս կրօնքը բարոյական արարք մըն էր: Տրեւտերիքի համաձայն կրօնքը ոչ որպէս զգացողութիւն, այլ՝ զգայնութիւն, համ եւ բնագոյ կը պատկանէր անսահմանափակելի զգացումներու աշխարհին: Ինքն իրմով կրօնքը յայտնութեան կամ պատճառականացած վարդապետութիւններու գումար մը կամ ապրելաձեւ մը չէր, թէեւ թէ՛ հաւատքը եւ թէ՛ ապրելաձեւը անոր կը պատկանէին:

Շլերմախըր մեծապէս կ'օգտուէր Սփինոզայէն, Լայպնի-
ցէն եւ Քանթէն: Ան կ'ըսէր, թէ մեր փորձառութեամբ բազմաթիւ
հակաթէզեր կ'ընդունէինք եւ անոնց ազդեցութեան տակ փոփո-
խութիւններ կը կրէինք: Այս հակաթէզերը մեզ գերազանց եւ
յաւիտենական Աստուծոյ կը տանէին, առանց որուն աշխարհը
քառսի պիտի վերածուէր եւ մեր կեանքը դատարկ պիտի ըլլար:
Աստուած ամեն տեղ եւ ամեն բանի մէջ էր. ուրեմն, ան նաեւ
աշխարհի մէջ էր: Մարդը այս տիեզերքին մանրանկարն էր:
Յարաբերաբար տիեզերական, բացարձակ ու յաւիտենական
Աստուծոյ, մարդը ինքզինք, սահմանափակ, սանմանեալ եւ
ժամանակաւոր կը զգար, այսինքն՝ Աստուծմէ կախեալ: Այս
կախեալ զգալու իրավիճակը կրօնքին հիմն է: Շլերմախըր
կ'ուսուցէր, թէ կրօնական զգացումը բնորոշող բարեպաշ-
տութիւնը գիտութիւն եւ արարք չէր, այլ ինքնազգացողութեան
գիտակցութիւն: Կրօնները կը ձգտէին տիեզերականն ու սահ-
մանափակեալը իրարու մօտեցնել եւ մարդկութիւնը Աստուծոյ
հետ ներդաշնակել: Իւրաքանչիւր կրօնքի արժէքը այս իրա-
գործելուն մէջ կը կայանար: Արդ, կրօնները ճշմարիտ եւ սխալ
դասակարգումներու պէտք չէ ենթարկուէին, այլ գնահատուէին
իրենց իրագործումներուն համաձայն: Պատմութեան ընթաց-
քին կրօններու արձանագրած յաջողութիւնը յայտնութիւններ
էին, երբ մարդուն գիտակցութիւնը Աստուծոյ կը յղէին: Բոլոր
կրօններուն մէջ քրիստոնէութիւնը լաւագոյնն էր, որովհետեւ
ան բոլոր կրօններու իրագործելու ձգտածը իրագործած էր: Ան
լուծումներ բերած էր մեղքի ու թողութեան եւ բաժանումի ու
վերահաշտութեան կրօնական հիմնահարցերուն: Քրիստո-
նէութեան մէջ կեդրոնական դէմքը Քրիստոսի անձն էր: Ան
ժամանակաւորն ու յաւիտենականը կը կամրջէր եւ Աստուած
ու մարդ կը միաւորէր: Ան վերահաշտութեան միջնորդն էր: Այս
հիմամբ՝ Շլերմախըր խիստ քրիստոսակեդրոն էր: Մարդկութի-
ւնն ու Աստուած միաւորող կեանքը անմահ էր: Մեր երկրաւոր
կեանքին մէջ այս անմահութիւնը մեծ յոյս մըն էր. սակայն
ճշմարիտ անմահութիւնը կեանքի որակ մըն էր եւ ոչ տեւո-
ղութիւն մը:

Շլերմախրրի համաձայն՝ կրօնական վարդապետութիւնները կրօնական փորձառութիւններու բանաձեւումներ ու մեկնութիւններ էին, որոնք յարաբերական ու երկրորդական արժէք ունէին: Անոնք միշտ փոփոխական էին եւ անոնցմով ճշմարտութիւնը ժամանակ առ ժամանակ ինքզինք կը հաստատէր:

Շլերմախրրի համաձայն՝ բարոյականութեամբ մարդը նստանիքի, համայնքի, պետութեան եւ աշխարհի իր պատկանելիութիւնը կը յայտնէր: Այս յարաբերութիւններուն ճամբով մարդ անձնակեդրոնութենէն դուրս կու գար: Բարոյականութիւնը կրօնք չէր եւ ոչ ալ կրօնքը՝ բարոյականութիւն. սակայն կրօնքը անբաժանելի բարեկամն էր բարոյականութեան: Կրօնքը շարունակականօրէն կը հարցադրէր. «Ի՞նչ պէտք է ընել քրիստոնէական գիտակցութեան լոյսին տակ»:

Շլերմախրր իր օրերու ուղղափառներուն կողմէ որպէս շատ արմատական կը դատապարտուէր եւ պատճառականներուն կողմէ տեսլապաշտ կը նկատուէր. սակայն ԺԹ. դարու բողոքականներուն մէջ կրօնական մտածողութեան վրայ ան ամենէն մեծ ազդեցութիւնը կ'ունենար:

Քանթի դրոյթը երկու դժուարութիւններ կը յարուցէր. առաջին՝ ան գիտութեան առարկաներուն ըստ ինքեան ինչպէս ըլլալը իմացապէս չէր սահմանէր. երկրորդ՝ չէր բացատրէր, թէ մտային գործընթացները ինչպէս նոյնն էին բոլորին մէջ: Վիպապաշտութեան եւ իտէալականութեան ազդեցութեան տակ՝ Յովհան Կոթլիպ Ֆիխթի (1762–1814), Ֆրետերիք Ուիլհրմ Յովսէփ Շելլինկի (1775–1854) եւ մանաւանդ Գեորգ Ուիլհրմ Ֆրետերիք Հէկելի (1770–1831) իմաստասիրական մտածողութեամբ այս երկու կէտերը աւելի կը յստականային:

Հէկել ծնած էր Շթութկարթ: Ուսանած էր Թիւպինկըն եւ Ճինայի մէջ խմբակի մը ուսուցած 1801–1807-ին: 1808–1816-ին ան Նիւրնպըրկի մէջ դպրոցի մը տնօրէնութիւնը կը ստանձնէր: 1818-ին ան Պերլինի մէջ կը դասախօսէր: Շուտով որպէս իր օրերու առաջին իմաստասէրի՝ անոր համբաւը կը տարածուէր:

Ան քուլերայէ կը մահանար, երբ իր վայելած համբաւին եւ գործունէութեան գագաթնակէտին կը գտնուէր:

Հեկէլի համաձայն՝ տիեզերքը Բացարձակին՝ Աստուծոյ պայքարի եւ ճիգի շարունակական թաւալումն էր: Բացարձակը հոգի էր եւ անոր թաւալումը միտքին տրամաբանօրէն հաստատած օրէնքներուն համաձայն տեղի կ'ունենար: Իր իմաստասիրութիւնը բանաձեւելու համար Հեկէլ դրութիւն-հակադրութիւն-համադրութիւն (թէզ-հակաթէզ-համաթէզ) դրոյթը կ'օգտագործէր, որ աւելի կը համապատասխանէր Ֆիլսոֆի մտածողութեան: Շարժում մը՝ դրութիւնը, մէկ ուղղութեամբ կ'ընթանար մինչեւ այլ շարժումի մը՝ հակադրութեան, բախիլը: Այս բախումը ոչ թէ պարագայական էր, այլ անհրաժեշտ: Դրութեան եւ հակադրութեան միջեւ երեւան եկած ճնշումը համադրութեամբ կը յաղթահարուէր: Օրինակ՝ դրութիւնը գաղափարն էր, հակադրութիւնը՝ բնութիւնը, իսկ երկուքը կը միանային մարդկութիւն համադրութեան մէջ, որ միտքին եւ նիւթին միութիւնն էր: Որովհետեւ ամբողջ գոյութիւնը Բացարձակին թաւալումն էր, որ միտքին օրէնքներով կ'ընթանար, միտքին օրէնքները գոյերուն օրէնքներն էին. առաւել, որովհետեւ մեր մտածողութիւնը Բացարձակին մասնիկն էր, որ մեր միտքէն դուրս գտնուող գոյերուն գիտութիւնը մեզի կը փոխանցէր եւ բոլոր միտքերուն մէջ ալ նոյնն էր, ան Բացարձակին մասնիկը կը դառնար: Մեր Բացարձակին մասնիկներ ըլլալը յստակ էր մեր գիտակցութեան մէջ եւ անով մեր Բացարձակին հետ ունեցած յարաբերութիւնը կը ճշդէինք. այս յարաբերութիւնը կրօնքն էր: Կրօնքը, այնպէս ինչպէս Շլերմախըրը կը հաստատէր, զգացում էր. սակայն ան իրաւ կը դառնար, երբ ճշմարիտ գիտութեան կը վերածուէր: Իրաքանչիւր կրօնք Աստուած ճանչնալու ճիգ մըն էր եւ քրիստոնէութիւնը այդ ճիգը կատարելապէս իրագործած էր: Աստուած միշտ կը փորձէր ինքզինք յայտնել երեք մակարդակներով. առաջին՝ Հայրը աստուածային միութիւնն էր՝ դրութիւնը. երկրորդ՝ ան կ'առարկայանար Որդիով՝ հակադրութիւնը. երրորդ՝ միացնող սէրը Սուրբ Հոգին էր՝ համադրութիւնը: Ամբողջ գործընթացը մեզ Սուրբ

Երրորդութեան կը յանգեցնէր: Նոյնը մարդեղութեան կը համապատասխանէր: Աստուած դրութիւնն էր. ան սահմանափակ մարդեղութենէն կը զատորոշուէր, եւ այս հակադրութիւնն էր. երկուքը աւելի վեհ համադրութեամբ կը միանային, որ Աստուածամարդն էր: Այսպէսով Հեկել կը կամրջէր ԺԹ. դարու բողոքական աստուածաբանութեան մէջ գտնուող աստուածայինին եւ մարդկայինին մեծ բացը:

Հեկելի համադրութեան դրոյթը մեծ ժողովրդականութեան կ'արժանանար եւ իր օրերու իմաստասիրական շրջանակներուն մէջ ընդհանրապէս շատ տիրական կը դառնար: Ան թէեւ կրօնքի իմաստասէր մըն էր եւ ոչ աստուածաբան մը, սակայն իր դրոյթը մեծապէս կ'ազդէր աստուածաբանութեան վրայ: Թէեւ իր տեսակէտները ամբողջապէս չէին ընդունուէր կարգ մը անձերու կողմէ, սակայն յատկապէս Մեծն Բրիտանիոյ եւ Ամերիկայի մէջ անոնք շատերու կողմէ զանազան մեկնութիւններու կ'ենթարկուէին ԺԹ. դարու երկրորդ կէսին եւս:

1826-էն մինչեւ իր մահը՝ Թիւպինկընի դասախօս եւ Թիւպինկընի աստուածաբանութեան դպրոցի հիմնադիր Ֆերտինանտ Քրիստիան Պատուր (1792–1860) Նոր կտակարանի քննադատութեան համար կ'օգտագործէր Հեկելի թաւալումի տեսակէտը: Ան մեծ նպաստ կը բերէր Եկեղեցիի պատմութեան, պատմագրութեան ու պատմաքննադատական աստուածաբանութեան: Ան կը մերժէր պատճառականութեան ու գերբնականութեան միջեւ ընտրութիւն կատարել եւ կը պաշտպանէր անոնց մէջ գտնուող հակադրութիւնը: 1831-ին ան լոյս կ'ընծայէր Կորնթոսի եկեղեցիին մէջ գտնուող խմբակներուն առնչուած աստուածաշնչական մեկնութիւնները, որոնց կը յաջորդէին այլ մեկնութիւններ: Իր շուրջ բազմաթիւ աշակերտներ կը խըմբուէին: 1835-ին ան Հեկելի դրոյթը կ'որդեգրէր եւ Նոր կտակարանի պատմական զարգացումը դրութիւն-հակադրութիւն-համադրութիւն դրոյթով կը մեկնէր: Ան նաեւ Մեմլըրի Պետրոսի ու յուդայականներուն եւ Պօղոսի ու հակայոդայականներուն տեսակէտը կ'ենթարկէր դրութիւն-հակադրութիւն-համադրութիւն դրոյթին: Պատուր կ'ուսուցէր, թէ քրիստոնէութիւնը

հիմնականօրէն որպէս մեսիական յուդայականութիւն կը սկզբնաւորուէր: Այս մէկը բոլոր առաքեալներուն պաշտպանած դրութիւնն էր: Պօղոսի բերած քրիստոնէութիւնը ասոր հակադրութիւնը կը դառնար եւ Պետրոսեան ու Պօղոսեան տեսակետները մինչեւ Բ. դար իրարու կը բախէին: Համադրութիւնը Պետրոսի եւ Պօղոսի հանդէպ հին Հռոմէական եկեղեցիի համահաւասար յարգանքը կը դառնար:

Պաուլոսի ամենէն խնդրայարոյց կետը Եկեղեցիի պատմութեան վերատեսութեան մէջ Նոր կտակարանի գիրքերու գրութեան թուականներուն փոփոխութիւնը կ'ըլլար: Ան իր գիտական մօտեցումը կը հիմնաւորէր անոնց մէջ գտնուող համանման դէպքերու զարգացումի վարկածով: Ան կ'ըսէր, թէ միայն Նամակ հռոմայեցիներունը, Նամակ գաղատացիներունը եւ Առաջին եւ Երկրորդ նամակ կորնթացիներունը հարագատօրէն Պօղոսի կը պատկանէին, որովհետեւ Եկեղեցիին կեանքը յուզող նոյն հարցերը կը շօշափէին: Միւս նամակները աւելի ուշ գրուած էին: Յովհաննէսի յայտնութիւնը աւելի կանուխ գրուած էր եւ յուդայական էր: 1847-ին ան նոյն մեթօտը օգտագործելով աւետարաններու քննութեան կը նախաձեռնէր: Ըստ իրեն՝ Աւետարան ըստ Մատթէոսինը յուդայական ըլլալով ամենէն հին աւետարանն էր: Աւետարան ըստ Ղուկասինը հաւանաբար Մարկիոնի աւետարանին վերախմբագրումն էր: Աւետարան ըստ Մարկոսինը աւելի ուշ գրուած էր: Աւետարան ըստ Յովհաննէսինը Բ. դարու վերջին կէսի աւարտին կը պատկանէր: Ան կ'եզրակացնէր, թէ Նոր կտակարանին մեծ մասը Բ. դարուն կը պատկանէր:

Պաուլոսի այս մօտեցումը մեծաթիւ համակիրներ եւ ընդդիմադիրներ կ'ունենար: Նոր կտակարանի արժեւորումի այս մօտեցումը օգտակար կը նկատուէր: Կատարուող վիճարկումները նախնական Եկեղեցիի գիտութիւնն ու գրականութիւնը կ'ընդարձակէին: Ձեռք ձգուած արդիւնքները Պաուլոսի տրուած լաւագոյն պատասխանները կ'ըլլային: Կը հաստատուէր, թէ ան նախնական Եկեղեցիին մէջ Քրիստոսի ունեցած կարեւորութեան ուշադրութիւն չէր դարձուցած: Ճիշդ էր, որ

յուդայական եւ պօղոսեան քրիստոնէութեան մէջ կարեւոր տարբերութիւններ կային, սակայն քրիստոնէութիւնը միայն այս դիտանկիւնէն արժեւորելը գիտականօրէն ընդունելի չէր կրնար ըլլալ: Ի վերջոյ Բ. դարուն վերագրուած Նոր կտակարանի գիրքերը չէին կրնար Բ. դարուն պատկանիլ, որովհետեւ, օգտագործելով նոյնինքն Պատուրի քննական մեթոտը, Բ. դարուն ոգիին եւ մտածելակերպին չէին համապատասխաներ:

Պատուրի քննարկումներուն եւ յաջորդ սերունդին ժամանակ գերման աստուածաբանները կը բաղկանային գլխաւոր երեք խումբերէ: Մէկ կողմը կային պատճառականները, որոնք ԺԸ. դարու աւարտի ներկայացուցիչներուն շարունակութիւնն էին: Ասոնց մէջ ամենէն նշանաւորն էր Հենրիխ Էպերհարտ Կոթլոպ Փաուլս (1761–1851), որ 1789-էն սկսեալ Ճինսայի մէջ կը դասախօսէր եւ 1811–1844-ին Հայտըլպըրկ կ'անցնէր: Ան բոլոր գերբնականներուն կը հակադրուէր եւ 1828-ին այս ժամանակաշրջանը բնորոշող ամենէն պատճառական երկը՝ *Յիսուսի կեանքը* կը հեղինակէր: Ան կ'ըսէր, թէ Քրիստոս ջուրին վրայէն չէր քալած, այլ իր աշակերտները մշուշին պատճառով սխալ տեսած էին, երբ ան ծովեզերքը կը քալէր: Քրիստոս հինգ հազարը սակաւ կերակուրով կերակրելով ամբոխին մէջ գտնուող շատ ունեցողներուն կ'ուզէր սորվեցնել, թէ իրենց շատ ունեցածը իրեն համար արժէք մը չունէր: Քրիստոս իրապէս չէր մեռներ. ան գերեզմանին մէջ երկրաշարժի մը հետեւանքով կը վերակենդանանար եւ կը վերադառնար իր աշակերտներուն:

Միւս կողմը ուղղափառները կային, որոնց ամենէն ակնառու ներկայացուցիչն էր Էրնըսթ Ուիլհըմ Հենկսթենպըրկ (1802–1869), որ 1826-էն մինչեւ իր մահը Պերլինի մէջ կը դասախօսէր: Ան նախապէս պատճառականութեան ազդեցութեան տակ կը գտնուէր, ապա բարեպաշտներու ղեկավարը կը դառնար: 1840-ին ան լուտերական ուղղափառութեան ջերմ պաշտպանը կ'ըլլար՝ ընդգծելով աստուածաշնչական ներշնչումն ու հեղինակութիւնը: Ուղղափառները պատճառական եւ իտեալական տեսակէտները կը մերժէին եւ կը փորձէին վերահաստատել Լուտերական եկեղեցիի յատուկ հաւատքն ու կարգը:

Այս շարժումը յաճախ քաղաքական պահպանողականության հետ կը գործակցեր: Պերլինի մէջ իրաւագիտութեան դասախօս Ֆրետերիք Յուլիոս Սթահլ (1802–1861) համամիտ էր անոր: Մեզլենպըրկի մէջ Թեոտոր Քլիֆոթ (1810–1895) եւ Ֆրետերիք Ատոլֆ Ֆիլիպի (1809–1892) կ'ընդգծէին, թէ վարդապետութեան բիրեղութիւնը ճշմարիտ Եկեղեցիին յայտարար նշանն էր. եւ որովհետեւ Լուտերական եկեղեցին իր հաւատքի խոստովանութեամբ ամբողջական ճշմարտութիւնը կը դաւանէր, ան էր Եկեղեցին:

Այս երկու ծայրայեղութիւններուն միջեւ կը գտնուէր միջնորդող դպրոցը, որ Շլերմախըրի ազդեցութեան տակ կը գտնուէր, անոր քրիստոնէական զգացողութեան եւ Քրիստոսի հանդէպ սնուցած բարեպաշտութեան կը հետեւէր եւ միաժամանակ Աստուածաշունչի ներշնչումին եւ պատմական դրրւագներու քննադատութեան բաց միտքով կը մօտենար: Միջնորդող դպրոցի ամենէն նշանաւոր աստուածաբաններէն էր Յովհան Օգոստոս Ուիլիըմ Նէանտեր (1789–1850): Ան հրէական ծագում ունէր եւ Դաւիթ Մենտել կը կոչուէր: 1806-ին կը մկրտուէր եւ իր նոր ծնունդը խորհրդանշելու համար նոր անուն կը ստանար: Հալլէի մէջ ան Շլերմախըրի կ'աշակերտէր, անոր միջնորդութեամբ 1813-ին Պերլինի մէջ դասախօսելու կը հրաւիրուէր եւ մինչեւ իր մահը նոյն պաշտօնը կը վարէր: Նէանտեր Եկեղեցիի պատմութեան վրայ կը կեդրոնանար եւ նկատառելի աշխատութիւններ լոյս կ'ընծայէր: 1826-ին ան կը հրատարակէր իր *Քրիստոնէական կրօնքի եւ եկեղեցիի պատմութիւն* շարքին առաջին հատորը եւ մինչեւ իր մահը զայն յաջորդական հատորներով կը ճոխացնէր: Ան սկզբնաղբիւրներու խոր գործածութեամբ ցոյց կու տար, թէ Եկեղեցիի պատմութիւնը աստուածային կեանքին ներթափանցումն էր մարդկային կեանքին մէջ: Այս կեանքը անհատներով կը ցոլար, հետեւաբար իր գործը կենսագրական բնոյթ կը կրէր: Իր գործին խոցելի երեսը անհատներու գերազդեցութեան շեշտադրումն էր, յարաբերաբար Եկեղեցիի հաւաքական կեանքին: Սակայն ան կը յաջողէր Եկեղեցիի պատմութեան նոր իմաստ տալ: Ան իր

աշակերտներուն հետաքրքրութիւնը կը սրեր շնորհիւ իր գրեթէ մանկունակ քրիստոնէական վստահութեան: Ան յաճախ կը կրկնէր, որ աստուածաբանը սիրտով կը գործէր: Ան իր շրջապատէն մեծապէս կը սիրուէր:

Նման ազդեցութիւն կը ներգործէր նաեւ Ֆրետերիք Օգոստոս Կոթրու Թոլագ (1799–1877), որ 1823-ին Պերլինի մէջ կը դասախօսէր եւ ապա 1826-էն մինչեւ իր մահը Հալլէ կը մնար: Ան թէեւ բարեպաշտութեան կը համակրէր, սակայն քննադատական ոգիով կը մօտենար հարցերուն եւ Վոլֆի օրերէն պատճառականութեամբ տիրապետուած Հալլէն ԺԹ. դարը բնորոշած աւետարանչականութեան կը դարձնէր: Ան նշանաւոր քարոզիչ էր: Անգլիացի ու ամերիկացի ուսանողներուն հանդէպ ան շատ բարեացակամ էր: Աստուածաբանականօրէն ան կը մերժէր մեղքի, վերածնունդի, անկումի ու սկզբնական մեղքի իտէալական բանաձեւերը:

Միջնորդող դպրոցի երրորդ կարեւոր ներկայացուցիչը եւ աստուածաբանականօրէն ամենէն յատկանշականը Իսահակ Օգոստոս Տորնըրն (1809–1884) էր: Ան 1827–1832-ին Թիւպինկընի մէջ ուսանող էր եւ 1834-ին՝ դասախօս: Այլ գերման համալսարաններու մէջ դասախօսելէ ետք ան 1862-էն մինչեւ իր մահը Պերլինի մէջ դասախօս կ'ըլլար: Անոր առաջին ամենէն նշանաւոր երկերէն մին էր 1839-ին լոյս տեսած *Քրիստոսի անձին վարդապետութիւնը*: Իր աստուածաբանութեան վերջնական սահմանումը կը գտնենք 1879–1881-ին լոյս ընծայած *Հաւատքի վարդապետութիւններու դրոյթը* երկին մէջ: Տորնըրի համաձայն՝ աստուածաբանութիւնն ու իմաստասիրութիւնը սերտօրէն իրարու առնչուած էին, սակայն իւրաքանչիւրը իւրաքանչիւր պատմական հոլովոյթի կը հետեւէր: Քրիստոնէական հաւատքը քրիստոնէական գիտակցութեան մէջ էր, որ Աստուածաշունչին մէջ արձանագրուած քրիստոնէական պատմութեամբ բիրեղացած հոգեւոր փորձառութեամբ կ'արտայայտուէր: Քրիստոնէական վարդապետութեան սիրտը մարդեղացումն էր, որուն շնորհիւ Քրիստոս ցոյց կու տար, թէ ի՛նչ էր

Աստուած եւ մարդկութիւնը ինչ պիտի ըլլար: Տորնըր Մեծն Բրիտանիոյ եւ Ամերիկայի մէջ եւս մեծ ազդեցութիւն կ'ունենար:

Միջնորդող դպրոցի յատկանշական արտայայտութիւններէն կ'ըլլար Էրլանկէնի աստուածաբանութիւնը: Թոլագի Հալլէի ուսանողներէն խոր հոգեդարձ ապրած Ատոլֆ Հարլէս (1806–1879) 1833-ին Էրլանկէնի մէջ դասախօս կ'ըլլար: Իր ուսուցումները կ'ընդգծէին փորձառութիւնը, Աստուածաշունչը եւ եկեղեցական պատկանելիութիւնը: 1845-ին իրեն յաջորդած Յովհան Քրիստիան Գոնրատ Հոֆման (1810–1877) Հարլէսի վարդապետութեան ամբողջապէս նեցուկ կը կանգնէր եւ Վերածնունդի աստուածաբանութիւնն ու Շլէրմախըրի փորձառականութիւնը աստուածաշնչականութեան եւ եկեղեցական պատկանելիութեան կը զուգորդէր: Ան աստուածաշնչական մեկնութիւններու սխալները սրբագրելու համար աստուածաբանական եւ պատմական մօտեցումները փրկութեան պատմութեան տարագով կը ներկայացնէր: Ան կ'ըսէր, թէ Քրիստոսի բերած քաւութիւնը Աստուծոյ եւ մարդուն միջեւ յարաբերութիւնները ամբողջապէս կը վերահաստատէր:

Շնորհիւ իրենց քրիստոնէական ջերմ հաւատքին եւ քննադատական զգուշաւորութեան՝ միջնորդող դպրոցի աստուածաբանները կ'ունենային մեծաթիւ հետեւորդներ: Սակայն միջնորդութեան մօտեցումը ԺԹ. դարու մտաւորական յեղափոխութիւններուն չէր դիմանար, եւ Գերմանիոյ մէջ տիրական կը դառնային նոր ուղղութիւններ:

Դաւիթ Ֆրետերիք Սթրաուս (1808–1874) Թիւպինկընի 27 տարեկան դասախօսը, այս ժամանակաշրջանի գերման աստուածաբանութեան կոթողական երկը՝ *Յիսուսի կեանքին քննական հետազոտութիւնը* կը հեղինակէր: Ան հեկելեան իմաստասիրութեան հետեւորդ էր: Ան Պատուրի եւ Հռոմի նախնական պատմութեան առասպելական մեկնութիւն տուած Պարթեոլո Գեորգ Նիպըրի (1776–1831) տեսակէտներուն եւս ծանօթ էր եւ զանոնք Քրիստոսի կեանքին կը համապատասխանեցնէր: Ան կ'ըսէր, թէ այլ պատմական դէպքերուն նման՝ Քրիստոսի կեանքը եւս մարդկային շրջագիծի մէջ պէտք էր դիտուէր: Աւետա-

րաններին Աւետարան ըստ Յովհաննէսինը ամենէն ուշ գործածն ու նուազ պատմական արժէք ունեցողը կը նկատուի՝ տարբերելով իր օրերու Նոր կտակարանի քննադատներէն, որոնք Յովհաննէսի աւետարանին նախապատուութիւն կու տային: Ան առաջին տեղը Աւետարան ըստ Մատթէոսին կը վերապահէր, թէւ կ'ըսէր, թէ բոլոր աւետարանիչներն ալ Քրիստոսը չէին տեսած: Հրաշքները անկարելի էին, թէւ աւետարանները լեցուն էին անոնցմով: Պատճառական ինչպէս նաեւ գերպատճառական մեկնութիւնները կը մերժէր: Իր տուած միակ բացատրութիւնը այն էր, թէ Քրիստոսի կեանքը առասպելախառն էր: Առասպել ըսելով ան կը հասկնար, թէ գաղափար մը որպէս պատմական դէպք կը յայտնուէր: Նոր կտակարանի հեղինակները Յիսուսի կեանքը Հին կտակարանի մարգարէութեան հետեւողութեամբ մեկնած էին: Այդ օրերու մարդիկը հրաշագործ Մեսիա մը կը սպասէին, Հին կտակարանի մարգարէութեան կատարումը կը փափագէին տեսնել եւ մահուան յաղթանակը Աստուծոյ հետ միութեան մէջ կը գտնէին: Այս բոլորը Քրիստոսի մէջ անձնաւորուած էին: Յիսուս ապրեցաւ, սակայն Նոր կտակարանի Քրիստոսը առասպել մըն էր:

Մթրաուսի գիրքը սուր հակամարտութիւն կը յառաջացնէր: Ան Գերմանիոյ ուղղափառ, պատճառական եւ միջնորդական բոլոր աստուածաբաններուն վրայ կը յարձակէր: Ան աստուածաբանական բոլոր պաշտօններէ կը զրկուէր եւ դառն կեանք կ'ապրէր: Սակայն անոր գործը Քրիստոսի կեանքը նոր հասկացողութեան մակարդակի կը բարձրացնէր եւ կրօնական մասնագիտութեան յարգանքին կ'արժանանար: Իր մօտեցումը հիմնականօրէն կը քննադատուէր, որովհետեւ կամ Եկեղեցին յաւելեալ արժէք տուած էր Քրիստոսի եւ կամ Քրիստոս Եկեղեցիին գլուխն էր: Ըստ Մթրաուսի՝ առաջին կէտը ճիշդ էր, սակայն աստուածաբանականօրէն երկրորդը աւելի տոկուն կը դառնար: Ալպերթ Շուայցըր (1875–1965) իր 1910-ին գրած *Պատմական Յիսուսի որոնումը* նշանաւոր երկով պիտի հաստատուէր, թէ երկրորդ տեսակէտը ճիշդ էր:

ԺԹ. դարու վերջին շրջանին աստուածաբանութեան եւ նախնական Եկեղեցիի պատմութեան մեկնութեան մէջ Գերմանիա ամենէն շատ ազդեցութիւն ներգործողը Ալպրէխթ Ռիթսգրլը (1822–1889) կ'ըլլար: Ան ազատամիտ եւ կրօնական ու բարոյական դատողութեան տէր աստուածաբան էր եւ կը հանդիսանար Լուտերի արդի ուսումնասիրութեան ռահվիրան: Երբ հեկեղեան մօտեցումները սկսած էին այլեւս մերժելի դառնալ, Ռիթսգրլ կը յաջողէր ջատագովական նոր համադրութիւն բերել քրիստոնէական հաւատքին եւ նոր գիտութեան՝ գիտական ու պատմական ուսումնասիրութիւններու շնորհիւ: Ան նախապէս Պաուլըրի հետեւորդ էր. սակայն անկէ կը հեռանար, երբ 1857-ին իր *Հին կաթոլիկ եկեղեցիին ծագումը* երկին երկրորդ հրատարակութիւնը լոյս կ'ընծայէր: Ան կ'ըսէր, թէ Պաուլըրի հեկեղեան պետրոսեան դրութիւնը եւ պօղօսեան հակադրութիւնը բաւարար չէին նախնական Եկեղեցիին աճումը բացատրելու համար: Տարբերութիւններ կային, սակայն Յիսուսի շնորհիւ բոլոր կողմերն ալ հիմնական միութեան մէջ կը գտնուէին: Նախնական քրիստոնէութիւնը երկու հակադիր խումբերու բաժնելը ճիշդ չէր. զանազան խմբակներ կային Եկեղեցիին մէջ: Քրիստոնէութիւնը կը ծնէր կրօնական, իմաստասիրական ու հաստատութենական գաղափարներով լեցուն շրջանակի մը մէջ: Հին կաթոլիկ եկեղեցիի աստուածաբանութիւնը, մանաւանդ հեթանոսները, կը թրծէր քրիստոնէական ճշմարտութիւններով: Քրիստոնէական նախնական համայնքն ու պատմական Յիսուսը հասկնալու համար՝ Ռիթսգրլ կը քաջալերէր պատմական քննադատութեան բոլոր կարելիութիւններուն օգտագործումը: Ընդգծելով Քրիստոսի կեդրոնական դերն ու առաջին դարու Եկեղեցիի դիմագիծը՝ ան կը շահէր Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ բողոքական մտաւորականներու ժողովրդականութիւնը:

1846-ին Ռիթսգրլ կը սկսէր Պոննի մէջ դասախօսել: 1864-ին ան Կոթինկըն կ'անցնէր եւ մինչեւ իր մահը հոն կը մնար: Հոս էր, որ 1870–1874-ին ան լոյս կ'ընծայէր իր աստուածաբանական եռահատոր գլխաւոր երկը՝ *Արդարացումի եւ հաշտութեան*

քրիստոնեական վարդապետութիւնը: Ան փոքրաթիւ ուսանողներ կ'ունենար, սակայն իր գրութիւնները մեծ արձագանգ կը գտնէին:

Ռիթսգըլ մեծապէս կ'ազդուէր Քանթի բարոյականութեան ուսուցումէն եւ իմացական գիտութեան բացարձակութեան մերժումէն եւ Շլէրմախըրի կրօնական զգացողութեան վարդապետութենէն: Թէեւ վերջինին մասին վերապահութիւն կը յայտնէր՝ ըսելով, թէ ան շատ անհատական էր: Իրաւ զգացողութիւնը չէր կրնար անհատական ըլլալ, այլ կը պատկանէր քրիստոնեական համայնքին՝ Եկեղեցիին: Առաւել՝ այս զգացողութիւնը վերացական գիտութիւն մը չէր կրնար ըլլալ, այլ գործնականօրէն պէտք էր առնչուէր Աստուծոյ ու կրօնական համայնքին եւ մեղքին ու փրկութեան: Արդ, բնական կամ վերացական իմաստասիրական աստուածաբանութիւնը արժէք չունէր: Իմաստասիրութիւնը, ինչպէս Արիստոտէլ կ'ըսէր, մեզ առաջին պատճառին կը տանէր. սակայն առաջին պատճառը սիրող Հայրը չէր կրնար ըլլալ: Միայն Քրիստոս կրնար այս յայտնութիւնը բերել մեզի: Քրիստոսի առաջին աշակերտները այս յայտնութիւնը կ'ապրէին: Հին կտակարանը, որ ասոնց կրօնական ենթահողը ցոյց կու տար եւ մանաւանդ Նոր կտակարանը, որ ասոնց Քրիստոսի եւ անոր Աւետարանին զգացողութիւնը կ'արձանագրէր, մեծ արժէք կը ներկայացնէին: Հին եւ Նոր կտակարաններուն մէջ արձանագրուած կրօնական զգացողութիւնը հաստատելու համար ներշնչումը նախապայման չէր. պատմական հետազօտութիւնը բաւարար էր:

Թէեւ Ռիթսգըլ իմաստասիրութեան օժանդակութիւնը կը մերժէր քրիստոնեական ճշմարտութեան հասնելու իր ճիգին մէջ, սակայն իմաստասէր Ռուտովֆ Հերման Լոթցի (1817–1881) գիտութեան դրոյթը կ'օգտագործէր: Լոթց, Քանթին նման, կ'ըսէր, թէ իրերը չէինք կրնար ճանչնալ այնպէս, ինչպէս անոնք ըստինքեան կան. սակայն ան կը յաւելէր, թէ անոնք իրենց յատկանիշերով կամ գործունէութիւններով կը ճանչցուէին: Քարերով պատուած մայթ մը յստակօրէն մայթ մըն էր. իսկ մրջիւններուն համար քարերուն միջեւ գտնուող հողը կրնար

որպես տուն ծառայել: Ինչ որ վերացականօրեն կար իմ գիտութեանս օգտակար չէր: Եթէ իմ գիտութիւնս իմ տեսածիս յատկանիշերով ազդէր ընթացքիս, այն ատեն ան ուղղիչ արժէք կ'ունենար: Արդ, Ռիթսգըլ կ'եզրակացնէր, թէ անոնք որոնք քրիստոնէական առաջին համայնքին մէջ Քրիստոսի հետ կը շփուէին, անոնց համար ան Աստուծոյ սիրոյն իրաւ յայտնութիւնն էր. ան իր չարչարալից կեանքով մեղաւոր մարդկութիւնը Աստուծոյ հետ կը հաշտեցնէր եւ աշխարհի հոգեւոր տէրն ու Աստուծոյ թագաւորութեան հիմնադիրը կը դառնար: Որպէս այսպիսին՝ Քրիստոս ճշմարտապէս կը ճանչցուէր. սակայն, երբ հարցադրենք, թէ ան նախագոյ էր, երկու բնութիւն ունէր կամ Սուրբ Երրորդութեան անձերէն մի՞ն էր, նախնական Եկեղեցիի փորձառութիւնը չէր կրնար պատասխանել, իսկ իմաստասիրութիւնը միայն կրնար հաստատել կամ մերժել: Քրիստոսի ինչ ըլլալուն եւ ինչ արժէք ունենալուն գիտակցութիւնը մարդերու մէջ հաւատք կ'արթնցնէր. այս հաւատքը Քրիստոսով Աստուծոյ հանդէպ մարդերու ունեցած վստահութիւնն ու սէրն էր: Այս մէկը ներողութեամբ եւ մեղքերու քաւութեամբ կ'իրագործուէր, որ արդարացումով մարդկութեան եւ Աստուծոյ միջեւ եղած պատուարը կը խորտակէր, նոր յարաբերութեան հաստատումով՝ Աստուծոյ հանդէպ վստահութիւն կը ներշնչէր եւ կեանքի փորձութիւնները համբերութեամբ, խոնարհութեամբ ու աղօթքով կը յաղթահարէր: Առաւել, Աստուծոյ հետ հաստատուած այս նոր յարաբերութիւնը կ'արտայայտուէր Աստուծոյ կամքը կատարելով եւ Աստուծոյ թագաւորութեան կեանքը ապրելով: Քրիստոնէական կեանքը ընկերային կեանք էր. արդ, Փրկիչը, փրկուածը եւ փրկուած համայնքը իրարմէ անբաժան էին: Աւետարանը երկու շեշտադրումներ կը կատարէր. առաջին՝ արդարացում եւ հաշտութիւն, երկրորդ՝ Աստուծոյ թագաւորութիւն: Ռիթսգըլի համաձայն՝ փրկութեան այս գաղափարները հետագայ Եկեղեցիի կեանքին մէջ միայն Լուստեր ամենայն յստակութեամբ բանաձեւած էր:

Ռիթսգրլի գլխավոր հետետրոդներին կ'ըլլային Ուիլիըմ Հերման (1846–1922) եւ Ատոլֆ Հարնագցի (1851–1930): Ազատական աստուածաբանութեան ջատագով Հերման Մարպուրկի մէջ աստուածաբանութիւն կը դասախօսէր: Հարնագցի ազատականութեան վրայ մեծ ազդեցութիւն կը գործէր եւ Պերլինի մէջ կը դասախօսէր. ան Եկեղեցիի պատմութեան մասնագէտներուն իշխանն էր: Իր կոթողական երկը *Վարդապետութեան պատմութիւն*-ն էր, որուն անգլերէն հրատարակութիւնը եօթը հատորով լոյս կը տեսնէր 1894–1899-ին: 1901-ին լոյս ընծայած իր *Ինչ է քրիստոնէութիւնը* երկով ան ազատական աստուածաբանութեան դասական սահմանումը կը կատարէր: ԺԹ. դարու աւարտին եւ Ի. դարու սկիզբը Ռիթսգրլի գիտական ոգին, բարեպաշտութիւնն ու ճշմարտութեան որոնումը մեծ ժողովրդականութիւն կը վայելէին Գերմանիոյ, Անգլիոյ ու Ամերիկայի մէջ:

1890-ականներուն Կրօններու պատմութեան դպրոցը Ռիթսգրլի դպրոցին մարտահրաւէր կը կարդար: Ան քրիստոնէութիւնը կ'ուսումնասիրէր յարաբերաբար Մերձավոր Արեւելքի այլ կրօններուն: Այն, ինչ որ Ռիթսգրլ կատարած էր քրիստոնէական վարդապետութեան զարգացումը քննարկելու համար, Կրօններու պատմութեան դպրոցը նոյնը կը կատարէր քրիստոնէութեան ծագումը ուսումնասիրելու համար եւ կ'ըսէր, թէ Ռիթսգրլ այս երեսը բաց թողած էր: Էրնըսթ Թրոյէլսզ (1865–1923) Կրօններու պատմութեան դպրոցի ամենէն նշանավոր դէմքն էր, որուն ամենէն յատկանշական երկն էր 1912-ին լոյս տեսած *Քրիստոնէայ եկեղեցիներու ընկերային ուսուցումները*:

ԺԳ. ԳԼՈՒԽ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԺԹ. ԴԱՐՈՒՆ

ԺԹ. դարու սկիզբը անգլիական կրօնական կեանքը կը յատկանշուէր Աւետարանական արթնութեան շարժումի՝ Անգլիկան եկեղեցիէն անջատուելու ձգտումով: Անգլիկան եկեղեցիին մէջ ի յայտ եկած արթնութեան ներկայացուցիչներն էին աւետարանականները, որոնք ԺԹ. դարուն Խոնարհ եկեղեցիի կողմնակիցները կը դառնային, իսկ արթնութեան ընդդիմադիրները կը շարունակէին մնալ Բարձր եկեղեցիի աւանդապաշտները: Աւետարանականները, մեթոտականներուն պէս, միսիոնարութեան կը նուիրուէին: Անգլիկան աւետարանականներ հետզհետէ եկեղեցական կարեւոր պաշտօններ կը ստանձնէին: 1815-ին անոնք իրենց առաջին եպիսկոպոսութեան կը տիրանային եւ ԺԹ. դարու կեսին Եկեղեցիին ղեկավարութիւնը ձեռք կը ձգէին՝ մեծ վարկ վայելելով աշխարհականներու մէջ: Սակայն ԺԹ. դարը պիտի յատկանշուէր ազատական եւ ընդարձակուած եկեղեցիի շարժումով ու Բարձր եկեղեցիի աւանդութեան վերազարթօնքով:

Ընդարձակուած եկեղեցիի շարժումը կը հակազդէր նորայայտ աստուածաբանական տեսութիւններուն: ԺԹ. դարու սկիզբը, մտաւորական մարզի մէջ, Անգլիոյ եկեղեցիի բոլոր միաւորները կը կանգնէին ԺԸ. դարու քննարկումներու ենթահողին վրայ: Այս դիտանկիւնէն՝ աստուածաբանութիւնը պատճառականութեամբ կ'ըմբռնուէր եւ իմացական քննարկումներով կամ հեղինակաւոր յայտնութեամբ կամ ալ կը սահմանուէր երկուքին համադրութեամբ: Յամենայն դէպս, իմացական նոր հոսանքներու ներկայութիւնը կը սկսէր զգալի դառնալ: ԺԹ. դարու առաջին տարիներուն անգլիական բանաստեղծութիւնը կը ծաղկէր: Վիպապաշտութիւնը, ինչպէս Գերմանիոյ մէջ, Անգլիոյ մէջ եւս մտաւորական նոր մթնոլորտ կը բերէր: Ուղղորդ Սգորթի վէպերը այս նոր մթնոլորտին

պտուղներն էին: Մարդկայնականութեան նոր ալիք մը եւս երեւան կու գար, յատկապէս մեթոտականներու արթնութեան օժանդակութեամբ եւ բոլոր բարեկարգչական շարժումները կը խանդավառէր: Այս բոլոր երեւոյթները բնականաբար աստուածաբանական մտածողութեան եւ կրօնական իտեալներուն վրայ եւս պիտի ազդէին:

ԺԹ. դարու առաջին քառորդին կրօնական մտածողութեան ամենէն տիրական դէմքը կը հանդիսանար նշանաւոր բանաստեղծ, գրականութեան քննադատ եւ իմաստասէր Սամուէլ Թէլլըր Գոլերիճ (1772–1834): 1798–1799-ին ան Գերմանիոյ մէջ կ'ուսանէր եւ գերման գրական դէմքերու կողքին նաեւ հաղորդ կը դառնար տակաւին Անգլիա չթափանցած Քանթի, Ֆիխթի եւ Շելլինկի իմաստասիրութեան: Գոլերիճի կոթողական երկն էր 1825-ին լոյս տեսած *Մտածութեան օժանդակները*: Ան պատճառն ու հասկացողութիւնը կը զատորոշէր: Ըստ իրեն՝ պատճառը ներքին կարողութիւն մըն էր, որուն շնորհիւ կրօնական ճշմարտութիւնները ուղղակի կ'ընկալւէին: Բարոյական պատճառը խիղճին առնչուած էր եւ բարոյական օրէնքով, աստուածային օրինադրով ու յաւիտենական կեանքով կ'արտայայտուէր: Կրօնական զգացումը արտաքին փաստերու վրայ չէր հիմնուած, այլ կրօնական զգայնութեան վրայ: Ան կ'ընդգծէր Եկեղեցիին դերակատարութիւնը, սակայն զայն նկատելով աստուածային հաստատութիւն մը, աւելի վեհ այլ օրինական հաստատութիւններէն, եւ Անգլիոյ Բարձր եկեղեցիին դիրքը կ'ամրացնէր:

Թովմաս Արնըլտ (1795–1842) կը շարունակէր Գոլերիճի կրօնական բնագաւառը ընդգրկող աշխատանքը: Ան 1828-ին իր գործունէութիւնը Ռակայիի մէջ կը սկսէր: Ան խորունկ ու համեստ քրիստոնէայ հաւատացեալ մըն էր եւ իր աշակերտներուն մեծապէս կ'օգնէր: Ան կ'ըսէր, թէ Աստուածաշունչը գրականութիւն էր եւ իր գրուած օրերու շրջագիծին մէջ կը հասկցուէր, սակայն անոր աստուածային ճշմարտութիւնը բոլոր ժամանակները կ'անդրանցէր:

Հենրի Հարթ Միլմըն (1791–1868) աստուածաշնչական քննադատութեան կ'օժանդակէր 1829-ին հրատարակած իր *Հրեաներու պատմութիւնը* երկով, որուն մէջ քննադատականօրէն Հին կտակարանը կը վերլուծէր: Ան 1849-էն մինչեւ իր մահը Լոնտոնի Սուրբ Պօղոս եկեղեցիի հովուութիւնը կը վարէր: 1855-ին լոյս տեսած *Հատին քրիստոնէութեան պատմութիւնը* իր կոթողական գործն էր:

Յովհաննէս Ֆրետերիք Տենիսըն Մորիս (1805–1872) կը նպաստէր Եկեղեցիի առաքելութեան տարածումին: Ան միութենական պատուելիի մը զաւակն էր եւ անդամակցելով Անգլիկան եկեղեցիին՝ հովիւ կը նշանակուէր Լոնտոնի Կայ հիւանդանոցին: 1840-ին ան Թագաւոր գոլէճի մէջ կը սկսէր դասաւանդել, սակայն իր տեսակէտներուն խորթութեան պատճառով 1853-ին կը զրկուէր այս պաշտօնէն: 1854-ին Գործաւոր տղամարդերու գոլէճը կը հիմնէր եւ Քրիստոնէական ընկերվար շարժումին հիմնադրումին մէջ գործուն դերակատարութիւն կ'ունենար: 1866-ին Գէմպրիճի համալսարանին մէջ դասախօսելու կը հրաւիրուէր: Մորիսի համաձայն՝ Քրիստոս ամբողջ մարդկութեան գլուխն էր: Ոչ ոք Աստուծոյ անէծքին ենթակայ էր: Բոլոր մարդիկը Աստուծոյ զաւակներն էին եւ Աստուծոյ հայրութեան պիտի պատասխանէին որդիական սիրով ու ծառայութեամբ: Ենթադրաբար բոլոր մարդիկը Աստուծոյ տունը պիտի վերադառնային եւ ոչ ոք կորուստի պիտի մատնուէր:

Համբաւաւոր քարոզիչ էր Ֆրետերիք Ուիլերմ Թոպերթսըն (1816–1853), որ աւետարանական ուսում ստացած էր եւ ապա Ընդարձակ-եկեղեցիին յարած: Ան 1847-էն մինչեւ իր մահը Պրայթընի մէջ հովիւ էր: ԺԹ. դարուն Ատլանտեան ովկիանոսի երկու ասփերուն վրայ իրմէ աւելի ազդեցիկ անգլերէն քարոզող չկար: Ան կ'ըսէր, թէ հոգեւոր ճշմարտութիւնը հոգեւորապէս կ'ըմբռնուէր եւ իմացապէս չէր փաստուէր: Քրիստոսի մարդեղութեան ազնւութիւնը մեզ իր աստուածութեան հաւատալու կ'առաջնորդէր:

Ընդարձակ-եկեղեցիի ազդեցութեան զօրացումին մեծապէս կը նպաստէին Էվըրսլիի հովիւ եւ վիպասան՝ Չարլզ

Քինկզլի (1819–1875) եւ Ալֆրէտ Լորտ Թենըսըն (1809–1892), որուն 1850-ին գրած «Յիշատակին համար» բանաստեղծութիւնը մեծ ժողովրդականութիւն կը վայելէր: Պէտք է յիշել նաեւ Ուէսթմինըսթըրի տեսուչ Արթըր Փենրին Սթենլին (1815–1881) եւ Գենթըրպըրիի տեսուչ Ֆրետերիք Ուիլերմ Ֆարարը (1831–1903): Մեծ դժգոհութիւն կը բարձրանար, երբ 1860-ին *Գրափորձեր եւ գրադատումներ* երկով Օքսֆորտի համալսարանէն խումբ մը մտաւորականներ կը փորձէին քրիստոնէութիւնը ներկայացնել ժամանակակից գիտութեան ու պատմական քննադատութեան լոյսին տակ, եւ Նաթալի Յովհաննէս Ուիլերմ Գոլէնսո եպիսկոպոսը (1814–1883) 1862-ին Հնգամատեանի իր քննադատութիւնը կը հրատարակէր: Գեմպրիճէն երեք գիտնականներ՝ Պրուք Ֆոս Ուէսթգոթ (1825–1901), Յովսէփ Պարպըր Լայթֆուր (1828–1889) եւ Ֆենթոն Յովհաննէս Անտոն (1828–1892) կը նպաստէին աստուածաշնչական ուսումին: Վերջին երկուքին շուրջ 30 տարիներու արգասիքը հանդիսացող եւ 1881-ին լոյս ընծայած յունարէն Նոր կտակարանի քննական հրատարակութիւնը դասական երկ մը կը դառնար: Թէեւ Ընդարձակ-եկեղեցի շարժումին հետեւորդները մեծ թիւ չէին կազմեր եւ առանձին խմբակ մը չէին դառնար, սակայն անոնք մեծ ազդեցութիւն կը ներգործէին Անգլիոյ կրօնական մտածողութեան վրայ:

Այս ժամանակաշրջանին ծայր կ'առնէր մեծապէս ազդեցիկ եւ խորապէս բարեպաշտ շարժում մը՝ «Օքսֆորտի շարժում» անունով ծանօթ, որմէ կը ծնէր անգլո-կաթոլիկ խմբակը: Այս շարժումը Բարձր-եկեղեցիի աւանդութեան նոր կեանք եւ ուղղութիւն կու տար: ԺԹ. դարու երկրորդ քառորդի առաջին տարիներուն կարելոր խմբակներ կ'անջատուէին Անգլիոյ եկեղեցիէն: 1828-ին կը վերանային նախապէս օրէնքով հաստատուած կրօնական արգելքներ: 1829-ին կաթոլիկներուն կառավարական պաշտօններ վերստանձնելու իրաւունք կը տրուէր: 1830-ի Ֆրանսայի Յուլիսեան յեղափոխութեան ազդեցութեամբ խորհրդարանական ներկայացուցչութեան փոփոխութիւններ տեղի կ'ունենային Անգլիոյ մէջ եւ 1832-ին իշխա-

նութիւնը ազնուականութենէն կը փոխանցուէր միջին դասակարգին: Բազմաթիւ պահպանողական հոգեւորականներուն այնպէս կը թուէր, թէ Եկեղեցիին եւ պետութեան հիմերը կը սասանէին: Անոնք Եկեղեցիին սահմանումը վերատեսութեան կ'ենթարկէին եւ կը հարցադրէին, թէ Եկեղեցին անփոփոխելի աստուածային հաստատութիւն մըն էր կամ Բարեկարգութենէն սկսեալ կառավարական միջամտութեամբ փոփոխելի հաստատութիւն մը: Անոնց պատասխանը պիտի նպաստէր Եկեղեցիի նախնական ու միջնադարեան դիմագիծը վերակերտելու:

Այս քննարկումներուն ընթացքին մասնաւորաբար Օքսֆորտի Օրիէլ գոլէճէն բազմաթիւ երիտասարդ հոգեւորականներ Օքսֆորտի շարժումին կը նախաձեռնէին: Այս շարժումին ամենէն ազդեցիկ անձը Ռիչըրտ Հուրըլ Ֆրուտն (1803–1836) էր: Անոր համաձայն՝ Եկեղեցին ճշմարտութեան տէրն էր: Ան ծոմապահութիւնը, հոգեւորականներու կուսակրօնութիւնը, սուրբերու տօները եւ կաթոլիկ սովորութիւնները հրամայական կը նկատէր: Յովհաննէս Հենրի Նիումըն (1801–1890) աւետարանական դաստիարակութիւն ստացած էր, սակայն Ֆրուտի մօտիկ բարեկամը եւ նշանաւոր քարոզիչ ու մտաւորական կը դառնար: Այս շարժումին երրորդ յատկանշական անձը Յովհաննէս Քեպլէն (1792–1866) էր, ԺԹ. դարու ամենէն ժողովրդական բանաստեղծական հաստորին հեղինակը, որ 1827-ին իր *Քրիստոնէական տարին* երկը լոյս կ'ընծայէր: Գէմպրիճէն Օքսֆորտի շարժումին սրտագինս կը համակրէր Հիւկ Յակոբոս Ռոզ (1795–1838), որ 1832-ին աստուածային հեղինակութիւնն ու Եկեղեցիի անփոփոխելիութիւնը ջատագովող «Բրիտանիա» պարբերաթերթը կը հիմնէր: Վերել յիշուած անձերուն համար զարգացող քաղաքական դէպքերը մտահոգութիւն կը պատճառէին: Օքսֆորտի շարժումը պաշտօնապէս կը ծնէր, երբ Քեպլէ 14 յուլիս 1833-ին Օքսֆորտի մէջ իր «Ազգայնականութեան մերժումը» քարոզը կը խօսէր: Սեպտեմբեր 1833-ին ան կը խմբագրէր Օքսֆորտի շարժումին սկզբունքները, ուր կը հաստատուէր, թէ փրկութեան ճամբան կը

բացուէր, երբ սուրբ պատարագի ընթացքին Քրիստոսի մարմինն ու արիւնը կը ստանայինք. այս սուրբ պատարագը վաւերական էր, երբ առաքելական յաջորդականութիւն ունեցող հոգեւորականներուն կողմէ կը մատուցուէր: Այս սուրբ պատարագը Եկեղեցիին գանձն էր. այն Եկեղեցիին, որ իր առաջին դարերու անբաժանելի անբծութեան տէր պէտք էր կանգնէր:

Սեպտեմբեր 1833-ին Նիումըն *Շամանակակից թերթիկներ*-ու հրատարակութեան կը սկսէր եւ Օքսֆորտի շարժումը նաեւ «Թերթիկներու շարժում» կը կոչուէր: 1835-ին Եդուարդ Պուվերի Փուսէ (1800–1882) այս շարժումին կը միանար եւ Նիումընէն ետք կը ստանձնէր անոր ղեկավարութիւնը: Փուսէ խոր բարեպաշտ անձ մըն էր եւ անգլո-կաթոլիկ շարժումին ղեկավարը կը դառնար եւ շատ յաճախ այս շարժումը իր անունով «փուսէականութիւն» կը կոչուէր:

90 թերթիկ կը գրուէր. 28-ը՝ Նիումընի եւ մնացածը Քեպլէի, Փուսէի, Ֆրուտի եւ ուրիշներու կողմէ: Նիումընի համար Անգլիոյ եկեղեցին ոսկեայ միջինն էր բողոքականութեան եւ կաթոլիկութեան միջեւ. սակայն, երբ թերթիկներու հրատարակութիւնը կը շարունակուէր, հեղինակները առաւելաբար շեշտը հին հռոմէական վարդապետութեան վրայ կը դնէին: Փուսէ մկրտութեան վերածննդական եւ սուրբ պատարագի գոհողական հանգամանքները կ'ուսուցանէր: Խոստովանութիւնը կը յանձնարարուէր: Աստուածաշունչի գործածութիւնն ու կրօնական ճշմարտութեան յայտարարութիւնը վերապահութեամբ կ'ընդունուէին: Նիումընի պատրաստած 90-րդ թերթիկը ամենէն խնդրայարոյցը կը դառնար: Ան կ'ըսէր, թէ «39 յօդուածներ»ը կաթոլիկ հաւատքէն դուրս այլ ուսուցում չէին փոխանցեր եւ կաթոլիկութեան չէին հակադրուէր: Աստուածաբաններ եւ հոգեւորականներ չէին ընդունէր այս թիւր տեսակէտը եւ Օքսֆորտի եպիսկոպոսը թերթիկներու գրութիւնը կ'արգիլէր:

Երբ 90-րդ թերթիկը լոյս կը տեսնէր, Նիումըն կը գտնուէր իր փառքի բարձունքին: Հարիւրաւոր հոգեւորականներ անգլո-կաթոլիկ շարժումին կ'անդամակցէին: Սակայն Նիումըն կաս-

կաճի տակ կ'առնէր Անգլիոյ եկեղեցիին ընդհանրականութիւնը եւ 9 հոկտեմբեր 1845-ին կաթողիկոսութիւնը կ'ընդունէր: Ասոնցմէ ամենէն հոգեւորական եւ աշխարհական հարիւրատրներ կը հետեւէին անոր օրինակին եւ ակնառուն կ'ըլլար Հենրի Եղուարդ Մանինկ (1808–1892), որ 1851-ին Հռոմի կը միանար եւ 1875-ին կարտինալ կը դառնար: 1850-ին Բարեկարգութենէն ի վեր դադրած Անգլիոյ կաթողիկ թեմի եպիսկոպոսութեան վերահաստատումը՝ Պիոս Թ.-ի կողմէ, մեծ խանդավառութիւն կը պատճառէր: Մանինկ պապականութեան ուժեղ պաշտպանը կը դառնար, մինչ Նիումըն միշտ չափաւորական կը մնար եւ միայն 1879-ին կարտինալութեան կ'արժանանար:

Դէպի Հռոմ դարձերը Օքսֆորտի շարժումը իր աւարտին կը հասցնէին, սակայն Փուսէի կարող ղեկավարութեամբ՝ անգլո-կաթողիկոսութիւնը կարելոր նպաստ կը բերէր Անգլիոյ եկեղեցիին: Ան վարդապետական բարեփոխութիւններ կը կատարէր եւ Եկեղեցիին ծիսական կեանքը կը հարստացնէր: Այս փոփոխութիւնները սկիզբը ժողովրդային եւ իրաւական ընդդիմութեան կը բախէին. սակայն յետոյ ծիսագէտներուն ջանքերով ընդունելի կը դառնային: Անգլո-կաթողիկոսութիւնը նաեւ յատուկ ուշադրութիւն կը դարձնէր աղքատներուն, անիրաւուածներուն եւ Եկեղեցիէն հեռացածներուն, այսպէսով հասնելով համեստ խաւի մարդոց: 1860-ին Անգլիոյ եկեղեցիին միութիւնը կը հիմնուէր եւ կրօնական արթնութեան շարժումի մը կը վերածուէր:

Մինչ այդ Իրլանտայի Բողոքական ազգային եկեղեցին, որ պետութեան նեցուկը վայելող ժողովուրդին փոքրամասնութեան Եկեղեցին էր, 1869-ին կազմալուծուելով հանդերձ, իր ազդեցութիւնը կը պահէր:

ԺԹ. Դարը կը յատկանշուէր աւետարանական ուժեղ ազդեցութեամբ եւ տարածումով: ԺԹ. դարուն սկիզբը գործուն աւետարանականներուն թիւը կը գերազանցէր գործուն անգլիկաններունը. օրինակ՝ 1800–1860-ին մեթոտականները չորս անգամ աւելի կ'աճէին: Ծխականներն ու մկրտչականները եւս

կ'աճէին, մինչ քուէզըրներն ու միութենականները կը շարունակէին փոքրամասնութիւն մնալ, իսկ երիցականներ կը վերածաղկէին Սկովտիայէն ժամանած գաղթականներով: Այս Աւետարանական եկեղեցիները միջին դասակարգին մէջ տարածւած էին: Ասոնք նշանաւոր քարոզիչներ, աստուածաբաններ եւ ընկերային ծառայողներ կ'ունենային, սակայն գիտականօրէն եւ եկեղեցիէն հեռացածներուն հասնելուն մէջ Անգլիոյ եկեղեցին համեմատաբար աւելի յաջողութիւն կ'արձանագրէր:

Այս Աւետարանական եկեղեցիները հետզհետէ աւելի իրաւունքներ ձեռք կը ձգէին: 1813-ին միութենականները Սուրբ Երրորդութիւնը ուրացողները պատիժէն կը ձերբազատէին: 1863-ին աւետարանականներ իրենց եկեղեցիներուն մէջ պսակ օրհնելու իրաւասութիւն կ'ունենային: 1868-ին անոնք տուրքերէ զերծ կը կացուցուէին: 1871-ին, բացի աստուածաբանութեան վկայականէն, Օքսֆորտի, Գեմպրիճի եւ Տըրհամի համալսարաններուն մէջ կրօնական քննութիւններ անցընելը կը ջնջուէր: 1880-ին աւետարանականներ իրենց եկեղեցիներու բակերուն մէջ թաղում կատարելու արտօնութեան կը տիրանային:

ԺԹ. դարու երկրորդ կէսին աւետարանականներ երկրորդ աւետարանական Մեծ արթնութիւնը կ'ապրէին շնորհիւ ամերիկացի աւետարանիչ Տուայթ Լիմըն Մուտիի (1837–1899): Անգլիգան աւետարանականներ եւս կ'օգտուէին այս արթնութենէն եւ այս շարժումին կը նպաստէին յատկապէս անոնց Մայլտմէյ ու Գեսուիզ շրջանները:

ԺԹ. դարուն աւետարանականներ նաեւ նոր մարմիններ կը յառաջացնէին: Մանաւանդ երեք շարժումներ յատկանշական էին: Առաջին՝ Եղուարդ Ըրվինկ (1792–1834) Լոնտոն հաստատուած սկովտիացի երիցական պատուելի մըն էր: 1828-ին ան կը յայտնէր, թէ առաքելական ժամանակներու շնորհները կրնային վերայայտնուիլ, եթէ բաւարար հաւատք ըլլար: 1830-ին ան կը հաւատար, թէ այս շնորհները կարգ մը անձերու մէջ յայտնուած էին: 1832-ին ան իր երիցական քահանայութենէն կարգալոյծ կը հռչակուէր: Անմիջապէս յետոյ անոր հետեւորդները վեց առաքեալներ կը նշանակէին եւ 1835-ին այս թիւը

տասներկուփի կը բարձրացնէին: Այս շարժումը Կաթոլիկ առաքելական Եկեղեցի անունը կը կրէր: 1842-ին ան կը մշակէր ծիսական համակարգ մը, որուն անդամակցողները «առաքեալ» կը կոչուէին եւ Սուրբ Հոգիին անդամները կը նկատուէին: Այս Եկեղեցիին հաւատացեալները Քրիստոսի անմիջական գալուստը կ'ակնկալէին, սակայն վերջին առաքեալը 1901-ին կը մահանար: Եկեղեցին Գերմանիա եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներ կը ներթափանցէր:

Երկրորդ շարժումը, աւետարանականութեան հոգեւոր անտարբերութեան որպէս հակադէցուծութիւն, կը սկսէր ԺԹ. դարու առաջին տարիներուն: Խումբ մը այսպէս կոչուած «եղբայրներ», որոնք քրիստոնէական հաւատքն ու սէրը զիրենք իրար զօդող ազդակ կը յայտարարէին, կը հաւաքուէին Իրլանտայի եւ արեւմտեան Անգլիոյ մէջ: Անոնց առաջնորդն էր Իրլանտայի Անգլիգան եկեղեցիի նախկին հոգեւորական Յովհաննէս Նելսըն Տարպի (1800–1882): 1830-ին ան Փլիմութի շրջանին մէջ կը ծառայէր եւ անոր հետեւորդները ընդհանրապէս «Փլիմութի եղբայրներ» կը կոչուէին: Անոնք բոլոր հաւատացեալներուն քահանայութիւնը կ'ընդունէին եւ ձեռնադրուէալ քահանայութիւնը կը մերժէին: Անոնք կը մերժէին Հաւատքի հանգանակները եւս: Անոնք կ'ըսէին, թէ Սուրբ Հոգին բոլոր հաւատացեալները առաքեալներուն օրինակով կ'առաջնորդէր եւ հաւատքի ու պաշտամունքի մէջ կը միացնէր: Անոնք, հիմնըւելով աստուածաշնչական մեկնութեան վրայ, ժամանակը կը բաժնէին եօթը ներողամտական մասերու: Վերջին ներողամտական շրջանը Հազարամեակն էր, երբ Քրիստոս շուտով պիտի գար եւ Դաւիթի թագաւորութիւնը պիտի հաստատէր Իսրայէլի մէջ: Անոնք կտրականօրէն դէմ էին յարանուանութեան. սակայն շուտով իրենք վեց խումբերու կը բաժնուէին: Տարպիի ջանքերով եղբայրներ Զուիցերիա, Ֆրանսա, Գերմանիա, Քանադա եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներ կը ներթափանցէին: Երկու նշանաւոր դէմքեր կը միանային եղբայրներուն. առաջինն էր Գեորգ Մուլլըր (1805–1898), որու, – ըստ իրեն, – աղօթքին շնորհիւ կը գոյատեւէին Պրիսթըլի որբանոցները:

երկրորդն էր Մամուել Բրիտո Թրեկելէս (1813–1875), որ Նոր կտակարանի յունարէն բնագիրի մասնագետ էր:

Նոր շարժումներուն երրորդն ու ամենէն կարեւորը Փրկութեան բանակն էր: Շարժումին հիմնադիրն էր մեթոտական պատուելի Ուիլեմ Պութ (1829–1912), որ նախապէս Գարտիֆի մէջ ծառայելէ ետք 1864-ին Լոնտոն կու գար, 1878-ին զինուորական հնագանդութեան հետեւող կազմակերպութիւն մը կը հիմնէր եւ 1880-ին զայն Փրկութեան բանակ կը կոչէր: Փրկութեան բանակը շեշտը գործնական բարեգործութեան եւ փողոցներու մէջ կատարուող աւետարանչութեան վրայ կը դնէր: Մանաւանդ բարեգործութիւնը 1890-ին նոր թափ կը ստանար, երբ Պութ իր *Ամենամութ Անգլիոյ մէջ եւ անկէ դուրս գալու ճամբան* երկը լոյս կ'ընծայէր: Փրկութեան բանակը, զինուորական կարգապահութեամբ գործող շարժում մը ըլլալով հանդերձ, Եկեղեցի մըն էր եւ ան զրկեալներուն ու անտեսւածներուն կը հասներ եւ անգլիախօս երկիրներէն անդին կը ներթափանցէր Ֆրանսա, Գերմանիա, Իտալիա, Սկանտինաւեան երկիրներ եւ Արեւելք:

ԺԹ. դարու երկրորդ կէսին զանազան յարանուանութիւններու պատկանող անգլիացի քրիստոնէաներ ընկերային հարցերուն մեծ ուշադրութիւն կը դարձնէին: Աւետարանականներ արդէն երկարատեւ ի վեր բարեսիրական գործունէութիւն ու բարեկարգութիւն կը ծաւալէին եւ քրիստոնէական ընկերավարութեան մասնակից կը դառնային: Մակայն հիմա ընկերային արդարութեան հրամայականը աւելի տիրական կ'ըլլար: 1889-ին անգլիական շրջանակներու մէջ կը հիմնուէր Ուէթզոթ Եպիսկոպոսի, Հենրի Սգոթ Հոլլընտի (1847–1918) եւ Չարլզ Կորի (1853–1932) կողմէ Քրիստոնէական ընկերային միութիւնը: Այս միութիւնը անգլո-կաթոլիկ ուժեղ հակում ունէր եւ կը փորձէր քրիստոնէութեան բարոյական սկզբունքները ընկերային ու տնտեսական իրավիճակին համապատասխանեցնել: Աւետարանական շրջանակներու մէջ ընկերային հարցերը առաւելաբար ազատական քաղաքական գործունէութեան կը վերածուէին եւ Անգլիոյ հաւաքական

կեանքին մէջ տեղ կը գտնէին: Ասոնց ամենէն նշանաւոր ներկայացուցիչներն էին Պըրմինկըմէն ժողովական Ռոպերթ Ուիլերմ Տէլ (1829–1895) եւ արեւմտեան Լոնտոնէն մեթոտական Հիւկ Բրայս Հիւկս (1847–1902):

Ինչպէս Անգլիոյ, այնպէս ալ Սկոտլոնդ մէջ ԺԹ. դարու քրիստոնէութիւնը կը յատկանշուէր հոգեւոր արթնութեամբ: Ֆրանսական յեղափոխութեան հանդէպ հակադարձութիւնը, վիպապաշտութեան աճը եւ ԺԸ. դարու պատճառականութեան դէմ ըմբոստութիւնը պատճառ կը դառնային Աւետարանական վերագարթօնքի: Անոր առաջին ղեկավարներն էին երկու եղբայրներ՝ Ռոպերթ Հալտէյն (1764–1842) եւ Յակոբոս Ադէքսանդր Հալտէյն (1768–1851), որոնք աշխարհական էին եւ խմբակներ կազմելով աւետարանչութիւնը կը տարածէին: 1815-էն սկսեալ, երբ Կլասկոյի հովիւ կը դառնար, Թովմաս Չալմըրզ (1780–1847) աւետարանական խմբակին ամենէն նշանաւոր ներկայացուցիչը կ'ըլլար: Որպէս քարոզիչ, ընկերային բարեկարգիչ, ուսողագէտ, աստուածաբանութեան դասախօս եւ հոգեւորական՝ ան մեծ համբաւ կը վայելէր: Անոր ղեկավարութեամբ աւետարանական խմբակը զգալիօրէն կը զօրանար եւ կը փորձէր Սկոտլոնդ ժողովուրդին կարիքները գոհացնել, որուն հետեւանքով 1841-ին ժողովրդային նուիրատութեամբ 220 նոր եկեղեցիներ կը կառուցուէին: Առաւել, վարչական փոփոխութիւններ կը կատարուէին: 1834-ին աւետարանական խմբակը ընդհանուր համաժողովէն իրաւունք կը ստանար վեթոյով խափանելու ծուխերու առաջարկած անարժան թեկնածուի մը քահանայական ձեռնադրութիւնը, երբ մեծամասնութիւնը դէմ ըլլար անոր: Այս օրէնքը բաւական խնդրայարոյց կը դառնար: Դատարանը կը վճռէր, որ ընդհանուր համաժողովը այսպիսի որոշում առնելու իրաւասու չէր: Խորհրդարան կը դիմուէր հարցը լուծելու համար, սակայն խորհրդարանը կը մերժէր միջամտել: 1843-ին, Չալմըրզի առաջնորդութեամբ, 474 պատուելիներ Սկոտլոնդ եկեղեցիէն պաշտօնապէս կը հրաժարուէին եւ կը հիմնէին Սկոտլոնդ Անկախ եկեղեցին: Խորքին մէջ այս քայլը աւետարանականներուն անջատումն էր նուազ հոգե-

ւոր ապրում ունեցող չափաւորականներէն: Ի վերջոյ Սկովտիոյ եկեղեցին կը վերանայէր ընդհանուր համաժողովին որոշումը եւ 1874-ին կը բեկանէր գայն:

Բրիտանական աւետարանչութեան եռանդը թէ՛ ազգային եկեղեցիներու եւ թէ՛ աւետարանականներու պարագային ԺԹ. դարու միսիոնարութեան շրջագիծին մէջ պէտք է գնահատել: ԺԸ. դարու աւարտին անգլիախօս աւետարանականներ բողոքական միսիոնարութեան մէջ գործուն դերակատարութիւն կը ստանձնէին եւ ԺԹ. դարուն աշխարհի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ կը տարածուէին: Միսիոնարութեան մոլիչ ուժը նախ Մեծն Բրիտանիա եւ ապա Ամերիկայի Միացեալ Նահանգներ կը գտնուէր: ԺԹ. դարուն, միսիոնարութեան տարածումին զուգահեռ, երեւան կու գային բազմաթիւ միսիոնարական կազմակերպութիւններ:

Նշանաւոր միսիոնարներ կը հետեւէին արդի միսիոնարութեան ռահվիրայ Ուիլլեմ Գերիի: Մեծն Բրիտանիոյ միսիոնարները ընդհանրապէս բրիտանական կայսրութեան գաղութները կը գործուղուէին: Հնդկաստանի մէջ նշանաւոր կը դառնար անգլիգան աւետարանական Հենրի Մարթին (1781–1812): Սկովտիոյ եկեղեցիէն Ադէքսանդր Տաֆ (1806–1878) Հնդկաստանի մէջ ինքզինք կրթական աշխատանքի կը նուիրէր: Անգլիգան աւետարանական Սամուէլ Մարստըն (1764–1838) աւելի քան 40 տարի Աւստրալիոյ, Նիու Զելանտիոյ եւ Խաղաղական կղզիներուն մէջ քրիստոնէութիւնը կը տարածէր: Լոնտոնի Միսիոնարական ընկերակցութեան անդամ՝ սկովտիացի Ռոպըրթ Մոֆաթ (1795–1883) եւ Դաւիթ Լիվինկսթըն (1813–1873) քրիստոնէութիւնը Հարաւային Աֆրիկէ կը հասցնէին: 1807-ին Չինաստանի առաջին բողոքական միսիոնարը կ'ըլլար Լոնտոնի Միսիոնարական ընկերակցութեան անդամ Ռոպերթ Մորիսըն (1782–1834): Այս առաջին միսիոնարները հերոսական ճիգերով դպրոցներ կը հաստատէին, Աստուածաշունչը կը թարգմանէին եւ կը քարոզէին. սակայն մեծ յաջողութիւն չէին կրնար արձանագրել: Ասոնց կը յաջորդէին հարիւրաւոր ուրիշ միսիոնարներ: ԺԹ. դարուն միսիոնարներ կ'երթային նաեւ Ճաբոն,

Քորիա եւ Ֆիլիփին: Ուր որ հասնէին՝ անոնք ոչ միայն աւետարանչութիւն կը կատարէին, այլեւ իրենց հետ արեւմտեան գրականութիւնն ու կրթական համակարգը կը տանէին, դարմանատուններ ու հիւանդանոցներ կը հիմնէին եւ երկրագործութիւնն ու անտառապահութիւնը կը զարգացնէին: Յարանանական միսիոնարական կազմակերպութիւնները եւս այս նոր տարածքներուն վրայ կ'աճէին: Միաժամանակ կը յայտնուէին ոչ-յարանուանական միսիոնարութիւններ, ինչպէս 1865-ին Յակոբոս Հատսըն Թէլլըրի (1832–1905) հիմնած Չինաստանի միսիոնարութիւնը: ԺԹ. դարու աւարտին բողոքական միսիոնարներ բազմաթիւ նոր երկիրներ կը ներթափանցէին: Մանաւանդ Հնդկաստանի եւ Չինաստանի մէջ միսիոնարական համայնքները մշակութային արագ փոփոխութիւններու, կրօնական պատկանելիութեան եւ անգլիախօս աւետարանչութեան պատճառ կը դառնային: Միսիոնարութեան շնորհիւ այսպէս կոչուած երիտասարդ եւ տեղական եկեղեցիներ կը հիմնուէին, որոնցմէ ոմանք ի վերջոյ կը միանային զիրենք հիմնած մայր եկեղեցիներուն: Ասոնցմէ առաջինն էր Հարաւային Հրնդկաստանի Միացեալ եկեղեցին, որ կը բաղկանար 1908-ին Սկովտիոյ Միացեալ ազատ եկեղեցիի, Լոնտոնի Միսիոնարական ընկերակցութեան, Ամերիկայի Բարեկարգեալ եկեղեցիի եւ Ամերիկայի Միսիոնարական ընկերակցութեան հետ կապ ունեցող հաւատացեալներէ:

ԺԴ. ԳԼՈՒԽ
ԺԹ. ԴԱՐՈՒ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՁ

Եւրոպայի բողոքականութեան ժԹ. դարու ամենէն յատկանշական երեւոյթը Գերմանիոյ մէջ քրիստոնէութեան մտածողութեան տեղաշարժն էր: Սակայն եկեղեցիներու կեանքը յարանուանական եւ ազգային պատկանելիութիւնը անդրանցող այլ երեւոյթներ եւս կը պարզէր: ԺԹ. դարու առաջին շրջանը կը յատկանշուէր նախկին անտարանական եւ բարեպաշտական արթնութեան յիշատակները բերող զարթօնքով: Ասոր կը բարդուէին վիպապաշտ, արարողական ու խոտովանողական երեւոյթները ընդգծող շարժումները: ԺԹ. դարու զանազան շարժումները կարելի է որպէս Համեստ-եկեղեցիի, Ընդարձակ-եկեղեցիի ու Բարձր-եկեղեցիի երեւոյթներ եւ խոստովանողական վիճակներ բնորոշել:

Գերմանիոյ մէջ արթնութիւնը կեդրոնական Փրուսիոյ նահանգին մէջ կը սկսէր, Նափոլէոնի գրաւումին ժամանակ: Պերլինի Երրորդութիւն եկեղեցիի քարոզիչ աստուածաբան Շլէրմախըրը հաւատացեալները քրիստոնէական անհոգութեան ծանօթացումին կը հրաւիրէր: 1820-ականներուն եւ 1830-ականներուն Հենկսթենպըրկ կը քաջալերէր անլի բարեպաշտական շարժում մը, որ կ'ընդգծէր Աստուածաշունչի անսխալականութիւնը եւ նեցուկ կը կանգնէր Գերմանիոյ պահպանողական աւատատէր կուսակցութեան: Այս շարժումը հակադարձութիւն էր 1817-ի փրուսիական միաւորումին, երբ Ֆրետերիք Ուիլէլմ Գ. թագաւորի (1797–1840) ստիպումով Լուտերական եւ Բարեկարգական եկեղեցիներ իրարու կը միանային: Նման միաւորումներ գերման այլ նահանգներու մէջ եւս տեղի կ'ունենային. սակայն մոլեռանդ լուտերականներ, կալվինականներուն հանդէպ իրենց ունեցած թշնամութեան պատճառով, կը մերժէին մտնել այսպիսի միաւորումներուն մէջ: Այս հին լուտերականները հալածանքի կ'ենթարկուէին եւ 1840-ական-

ներէն յետոյ կը սկսէին Ամերիկայի Միացեալ Նահանգներ գաղթել եւ հոն կազմել Պաֆլըլոյի ու Միզուրիի պահպանողական սինտոները: Հին լուտերականներէն գատ նաեւ չափաւորական լուտերականներ անջատողական կեցուածք կ'որդեգրէին: 1840-ին Հենկսթենպըրկ կը բաժնուէր բարեպաշտական շարժումէն եւ կը դառնար լուտերականութեան ջերմ ջատագով մը: Ուրիշներ եւս կը հետեւէին իր օրինակին: Բարձրեկեղեցիէն անձեր կը զօրակցէին այս յարանուանական շեշտադրումին, որուն կեդրոնական դէմքերէն էին Պաւարիայէն Ուիլիըմ Լոէի (1808–1872) եւ Մեզլենպըրկէն Թէոտոր Քլիֆոթ (1810–1895): Այս նոր լուտերականները կ'ըսէին, թէ աստուածային փրկարար շնորհը հաւատացեալներու եւ եկեղեցիներու շնորհիւ հասանելի էր: Անոնք կը վերակենդանացնէին նաեւ հին ծիսական ասանդութիւնները:

Այս արթնութեան շարժումները ներքին միսիոնարութեան կը վերածուէին, երբ բարեպաշտութեան հին օրերը յիշեցընող բազմաթիւ աւետարանական եւ բարեսիրական կազմակերպութիւններ կը կազմուէին Հալլէի մէջ: Բարեպաշտութեան շունչով կազմաւորուած Յովհան Հինրիխ Ուիլսըրն (1808–1881) 1833-ին տնանկ տողոց տուն մը կը հիմնէր: Ապա, ան նաւաստիներու, գործազուրկներու, բանտարկեալներու ու լքեալ մանուկներու հարիւրաւոր կազմակերպութիւն կը հիմնէր: Առաւել, ան Կիրակնօրեայ վարժարաններու, քաղաքային միսիոնարութիւններու եւ օթեւաններու ճամբով եւ համապատասխան գրականութեան տարածումով կը հասներ ժողովուրդի լայն զանգուածին: Բազմաթիւ աշխարհականներ այս շարժումին կը միանային, եւ սարկաւազուհիներու կարգեր կը հաստատուէին: Թէեւ բազմաթիւ բողոքականներ մաս կը կազմէին այս ներքին միսիոնարութեան արթնութեան, սակայն ան իր բարեպաշտական նկարագիրը կը պահէր: Այս շարժումը կը հասներ նաեւ հարաւային Գերմանիա, ուր տիրական էր բարեկարգչական ասանդութիւնը:

Սկանտինաւեան բողոքականութիւնը եւս մաս կը կազմէր այս արթնութեան շարժումին: Դանիոյ եկեղեցին ներքին

միսիոնարութիւնը կ'առնէր Լուստերական եկեղեցիի գործունէութեան մէջ: Ընդարձակ-եկեղեցիի ջատագովը կը հանդիսանար Դանիոյ եկեղեցիի առաջնորդ, աստուածաբան ու քարոզիչ Յակոբ Պետրոս Մայնսթըրը (1775–1854): Բարձր-եկեղեցիի կողմը կը հակէր Նիկողայոս Ֆրետերիք Սեւերին Կրունտթվիգ (1783–1872), որ իր վարդապետութիւնը Առաքելական հանգանակին վրայ կը հիմնէր եւ շեշտը կը դնէր կենդանի աւանդութեան եւ Եկեղեցիի խորհուրդներուն վրայ: Այս շարժումին ծնունդն էր նաեւ Սորըն Գիրքըկարտ (1813–1855), որ քրիստոնէական հաւատքին անբացատրելի եւ գոյութենական երեսը կ'ընդգծէր: Ան իր օրերուն մեծ ազդեցութիւն չէր ունենար, սակայն կը վերագնահատուէր Ի. դարուն:

Արթնութեան շարժումին բարեպաշտական երեսը շատ զգալի կը դառնար մանաւանդ Նորվեկիոյ մէջ: Թափառական աշխարհական աւետարանիչ Հանս Նիլսըն Հոկ (1771–1824) Եկեղեցիին անտարբերութիւնը կը ձաղկէր եւ ամբողջ տասնամեակ մը բանտ կը մնար: Աւելի ուշ իր ներշնչած շարժումը Քրիստիանայի աստուածաբանութեան դասախօս Կիլ Ճանսընի (1822–1894) ջանքերով Լուստերական եկեղեցին արթնութեան կը մղէր: Շուէտի մէջ եւս արթնութիւնը զանազան արտայայտութիւններ կ'ունենար: Հոս Լունտի հովիւ՝ Հենրի Շարթաու (1757–1825), ամենէն տիրական դէմքը կը հանդիսանար: Ան մորալիանականներուն ազդեցութեան տակ կը գտնուէր եւ Բարձր-եկեղեցիի խորհուրդներուն կարեւորութիւնը կը շեշտէր՝ մասնաւորաբար ընդգծելով Եկեղեցիի Աւանդութիւնն ու սուրբ պատարագի մէջ Քրիստոսի ճշմարիտ ներկայութիւնը:

Եւրոպայի Բարեկարգեալ եկեղեցիները անմասն չէին մնար ԺԹ. դարու բողոքական արթնութենէն: ԺԸ. դարու աւարտին պատճառականութիւնը մեծ ազդեցութիւն կը գործէր Զուիցերիոյ, Ֆրանսայի եւ Հոլանտայի կալվինական եկեղեցիներուն վրայ: Արթնութեան սկզբնաւորութեան մէջ մեծ դերակատարութիւն կ'ունենար սկոպտիացի Ռոպերթ Հալտէյն (1764–1842), որ 1816-ին Ֆրանսայի եւ ֆրանսական Զուիցերիոյ մէջ զայն կը հրահրէր: Թափառական աւետարանիչ եւ բազմաթիւ

հոգևոր երգերու հեղինակ Հենրի Աբրահամ Սեզար Մալան (1787–1864) կը միանար այս շարժումին: Հոլանտայի մէջ արթնութեան կարեւոր դէմքերէն մին կ'ըլլար քրիստոնէայ դարձած հրեայ Իսահակ Գոսթաջի (1798–1860): Ինչպէս Բրիտանիոյ մէջ, հոս եւս արթնութիւնը կը ստեղծէր աւետարանական, միսիոնարական եւ բարեսիրական ծառայութիւն կատարող կամաւոր ընկերակցութիւններու ցանց մը: Այս բոլոր երկիրներուն մէջ արթնութեան կողմնակիցները պատճառականութեան հակում ունեցող հոգևորականներէն կը հալածուէին եւ չէին կրնար տիրանալ բանալի պաշտօններու: Հոլանտայի մէջ երիտասարդ կալվինական հովի Հենտրիք Գոզցիի (1801–1842) պատճառով արթնութեան եւ պատճառականութեան միջեւ եղող լարուածութիւնը կը յանգէր հերձուածի: 1834-ին, երբ Գոզցի պաշտօնանկ կ'ըլլար, անոր համակիր հաւատացեալներ Հոլանտայի Բարեկարգեալ եկեղեցիէն կը հեռանային եւ կը հիմնէին Քրիստոնէական բարեկարգեալ եկեղեցին: Իսկ ջերմ կալվինական խմբակցութեան հովի Աբրահամ Գիւփեր (1837–1920) 1886-ին կը հաստատէր Ազատ բարեկարգեալ եկեղեցին: Գիւփեր ոչ միայն նշանաւոր քարոզիչ եւ բազմաթիւ գիրքերու հեղինակ էր, այլեւ դիւանագետ ու 1901–1905-ին վարչապետ: Ան իր կեանքին վերջին 40 տարիներուն Ամսթերտամի Ազատ համալսարանի աստուածաբանութեան դասախօսութիւնը կը վարէր: Զուիցերիոյ մէջ Ադեքսանդր Վինէ (1797–1847) բաժանում մը կը ղեկավարէր՝ շեշտը Եկեղեցիին եւ պետութեան իրարմէ անջատումին վրայ դնելով: 1846-ին ան իր շուրջ կը խմբէր Պետական եկեղեցիէն դժգոհ անձերը, որոնք կը կազմէին պատուելիներու եւ Լոզանի համալսարանի աստուածաբանական բաժանմունքի դասախօսներուն մեծամասնութիւնը եւ կը հիմնէր Վոյի Ազատ եկեղեցին:

Արթնութեան շարժումէն մղուած՝ Եւրոպայի եկեղեցիները ԺԹ. դարու բողոքական միսիոնարութեան մեծ նպաստ կը բերէին շնորհիւ իրենց հիմնած բազմաթիւ ընկերակցութիւններուն: 1815-ին Պազէլի Աւետարանական միսիոնարական ընկերակցութիւնը կը հիմնուէր, 1821-ին՝ Դանիական միսիո-

նարական ընկերակցութիւնը, 1824-ին՝ Պերլինի եւ Փարիզի Միսիոնարական ընկերակցութիւնները, 1828-ին՝ Ռենական Միսիոնարական ընկերակցութիւնը, 1836-ին՝ Լայփցիկի Աւետարանական լուտերական միսիոնարական ընկերակցութիւնը եւ հիւսիսային Գերմանիոյ Միսիոնարական ընկերակցութիւնը: Այս միսիոնարական ընկերակցութիւնները հարիւրաւոր միսիոնար արտասահման կը դրկէին: Բողոքական միսիոնարներ կը ծառայէին մասնաւորաբար Հոլանտական արեւելեան հնդկական շրջաններուն մէջ, որոնք Ծայրագոյն Արեւելքի ամենէն խիտ բողոքական ներկայութիւնը ունէին: 1914-ին հոս կային աւելի քան կէս միլիոն մկրտեալ բողոքականներ, որոնք տեղական եկեղեցիներ կը հիմնէին: Օրինակ՝ Սումաթրայի մէջ Ռենական Միսիոնարական ընկերակցութենէն Լուտվիկ Ինկվեր Նոմընսըն (1834–1918) պաթագներուն քարոզչութիւն կը կատարէր եւ Առաջին համաշխարհային պատերազմէն անմիջապէս առաջ Պաթագ եկեղեցին 160.000 հաւատացեալ կ'ունենար: Սահարայի անապատին հարաւային շրջանը եւս պարարտ հող կը դառնար միսիոնարներուն համար, ուր 1914-ին մէկ ու կէս միլիոն քրիստոնէաներ կային: Բնիկներ մաս կը կազմէին միսիոնարական շարժումին եւ մեծ թիով տեղական եկեղեցիներ կը հաստատէին Ի. դարուն:

ԺԹ. դարու աւարտին քրիստոնէութեան ընկերային գործունէութիւնը եւս կը զարգանար: Փրուսիոյ Աւետարանական միութեան եկեղեցին, այս օրերուն աշխարհի մէջ ամենէն շատ հաւատացեալ ունեցող Բողոքական եկեղեցին, պահպանողականներէ կը ղեկավարուէր եւ նահանգային շահերուն կը ծառայէր, մինչ ներքին միսիոնարութիւնը պարզապէս կազմակերպ բարեգործութեան վերածուած էր: 1874-ին Ատոլֆ Մթոքըր (1835–1909) որպէս պետական քարոզիչ Պերլին կը ժամանէր: Ան կ'ընդդիմանար ազատական խորհրդարանականութեան եւ ընկերվարութեան ու աշխարհիկութեան պատճառով աշխատաւորներուն մեկուսացումէն մեծապէս կը մտահոգուէր: Ան ընկերային արդարութեան ջատագովը

կը դառնար. սակայն դժբախտաբար նաեւ հակասեմական տարրեր կը խառնէր իր վարդապետութեան: Պահպանողական լուտերականներ չէին կրնար ըմբռնել, թէ Սթոքքըր հոգեւորն ու քաղաքականը կը ջանար իրարմէ բաժնել, եւ ան պաշտօնանկ կ'ըլլար: Առաւել ազատական եւ միջին դասակարգի ընկերային բարիքին ծառայող վարդապետութիւն մը կը պաշտպանէր Ֆրետերիք Նուման (1860–1919). սակայն ան եւս կ'անդադառնար, թէ իր տեսակէտը լուտերականներ պիտի մերժէին եւ իր պաշտօնէն կը հրաժարէր: Մինչ այդ կը քարոզուէր աւելի ակադեմական բնոյթ կրող ընկերային աւետարան մը՝ ազատական աստուածաբաններ Ատոլֆ Հարնագցիի (1851–1930) եւ Ուիլիլմ Զերմանի (1846–1922) կողմէ:

Քրիստոնէութեան ընկերային երեսին բարեփոխութիւնը աւելի տեղ կը գտնէր Բարեկարգեալ եկեղեցիներուն մէջ, որոնց ամենէն յատկանշական երկու դեմքերը կ'ըլլային Լէոնարտ Ռակագ (1868–1945), որ խաղաղարարութեան, աշխատատրական խմբակցութիւններու եւ ժողովրդային դպրոցներու ու համակեցութեան կեդրոններու ջատագովը կը դառնար եւ Զերման Գուրըր (1863–1931), որ 1905-ին *Անոնք պէ՛տք է* երկը հեղինակելով ընկերվարութեան աստուածաբանական մեկնութիւն կու տար եւ Անգլիոյ ու Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ քրիստոնէութեան տարածումին կը նպաստէր: Թէեւ ընկերային հարցերով մտահոգ քրիստոնէայ առաջնորդներուն ակնկալութիւնները ժողովրդային խաւին կողմէ չէին որդեգրուէր, սակայն ընկերային հարցերու դիմագրաւումին մէջ բողոքականներ այլեւս զուտ անհատական կեցուածք չէին որդեգրէր:

ԺԵ. ԳԼՈՒԽ

ԺԹ. ԴԱՐՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այնպես, ինչպես ժԹ. դարու բողոքականության Աւետարանական արթնութիւնը կը սկսէր Մեծն Բրիտանիոյ եւ Եւրոպայի մէջ, նոյնը կը պատահէր նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ: Ամերիկայի մէջ Բարեպաշտական ու Աւետարանական եկեղեցիներու եւ Համեստ-եկեղեցիի հոսանքը ընդհանրապէս տիրական կը դառնար եկեղեցական կեանքին մէջ: Ամերիկեան բողոքականութիւնը բրիտանական եւ եւրոպական արթնութեան հետ հասարակաց եզրեր ունէր. սակայն շեշտը առաւելաբար հոգիներու փրկութեան վրայ կը դնէր: Բարեպաշտական եւ աւետարանական աւանդութիւններով բնորոշուած առաջնորդներու շնորհիւ, զգացական հոգեդարձերը քրիստոնէական կեանք մտնելու բնական ընթացք կը նկատուէին: Ներքին ճակատի վրայ, ժԹ. դարու սկիզբը բարացուցող տիրական երեւոյթներէն մին բնակչութեան տասը առ հարիւրին Եկեղեցիի անդամակցութիւնն էր: Այս իրավիճակը դարմանելու համար արթնութիւնը խիստ կենսական էր: Իսկ արտաքին ճակատի վրայ, երբ կէս դարու ընթացքին երկիրը երեք անգամ աւելի կ'ընդարձակուէր եւ բնակչութիւնը հինգ անգամ աւելի կ'աճէր, նորադարձ քրիստոնէաներ շահելու կարիքը մեծ ուշադրութեան կ'արժանանար:

ԺԸ. դարու աւարտին արդէն իսկ կը սկսէր աճիլ կրօնական արթնութեան հետաքրքրութիւնը: Նիու Անգլիոյ մէջ այսպէս կոչուած Երկրորդ մեծ զարթօնքը 1792-ին իր նախանը շանները ցոյց կու տար: 1800-ին վերազարթօնքը արդէն ազդու կը դառնար: Ժողովական դրութեան հետեւող առաջնորդներ կը համոզուէին, թէ Առաջին մեծ արթնութեան ընթացքին գործուած սխալներէն պետք էր խուսափելին եւ արթնութիւնը շաղախելին Եկեղեցիին բնական կեանքին հետ: Նոր վերազարթօնքի աստուածաբանութիւնը սահմանողները կը դառնային Ելլ համալսարանի նախագահ՝ Տիմոթէոս

Տուայթ (1752–1817), Ժողովական եկեղեցիներու քարոզիչ՝
Լիմրն Պիչըր (1775–1863) եւ Տուայթի գործակից աստուա-
ծաբան՝ Նաթանայէլ Ուիլերմ Թէլլըր (1786–1858): Ժողովական-
ներ, մկրտչականներ եւ մեթոտականներ արթնութեան մէջ գոր-
ծուն մասնակցութիւն կը բերէին:

Արթնութիւնը կը հասներ նաեւ միջին, հարաւային եւ
ներքին նահանգներ: 1801-ին Ժողովական եկեղեցիներու Գենե-
թիգըթի համաժողովն ու Երիցական եկեղեցիներու համաժո-
ղովը կը միանային եւ ներքին նահանգներուն մէջ կը համա-
գործակցէին: Նիու Անգլիոյ այլ կազմակերպութիւններ եւս այս
օրինակին կը հետեւէին եւ մանաւանդ Նիու Եորքի ու Օհայոյի
մէջ կը հիմնուէին բազմաթիւ Ծիսական-Երիցական եկեղեցի-
ներ: Յարաբերաբար արեւելքի նահանգներուն՝ արեւմտեան
նահանգները արթնութիւնը աւելի դանդաղօրէն կ'ընկալէին:
Թենըսի եւ Քենթաքի նահանգներուն մէջ արթնութիւնը կը
դառնար ամենազգայացունցը, ուր հոգեւոր հաւաքները կը
սկսէին 1800-ին եւ կը դրսեւորուէին բազմաթիւ զգացական երե-
ւոյթներ: Արթնութիւնը կը բարձրացնէր ժողովուրդին բարո-
յական ըմբռնումները եւ շարունակական աճ կը պատճառէր
Մկրտչական, Մեթոտական ու Երիցական եկեղեցիներուն:

Արթնութեան ամենահարազատ եւ երկարամեայ ներկա-
յացուցիչը կը դառնար Նիու Եորք նահանգէն երիտասարդ
իրաւաբան Չարլզ Կրանտիսըն Ֆինի (1792–1875): Ան 1821-ին
դարձի կու գար, կը ձեռնարկէր աւետարանչական շրջա-
պըտոյտներու, աստուածաբանական կազմաւորում չունենա-
լով հանդերձ՝ երիցական պատուելի կը ձեռնադրուէր եւ քարո-
զութեան նուիրուելով՝ մեծապէս կ'օժանդակէր արթնութեան:
Ան արթնութեան նոր կերպեր կը ներմուծէր. այսպէս՝ անսահ-
մանափակ երկարատեւ աղօթաժողովներ, հռետորական լեզու
ու բուռն շեշտադրում, աղօթքի ու քարոզի մէջ մասնայատուկ
անձերու յիշատակութիւն եւ ըստ պահանջի՝ հոգեւոր հանդի-
պումներ: Ասոնք թէեւ նորամուծութիւններ չէին, սակայն ասոնց
կազմակերպ օգտագործումը մեծ արդիւնքի կը յանգէր մանա-
ւանդ 1830–1831-ի Ռոչեսթըրի եւ Նիու Եորքի արթնութեան հա-

ւաքներուն: Հակառակ ոմանց վերապահութեան, թէ արթնութիւնը շատ զգացական դարձած էր, Ֆինի մեծ յաջողութիւն կ'արձանագրէր արեւելեան նահանգներու քաղաքներուն մէջ եւ անոր բերած նորութիւնները ուրիշներ եւս կը սկսէին գործադրել: Արթնութիւնը որոշ թուլութիւն կ'արձանագրէր 1840-ականներուն, սակայն 1857–1858-ին կը վերաշխուժանար եւ կը յատկանշուէր աշխարահականներու առաջնորդութեամբ կատարուած ամենօրեայ աղօթածողովներով:

Մինչ այդ արթնութիւնը դարասկիզբէն իսկ ծնունդ կու տար աւետարանչութիւնը տարածող կամաւոր ընկերակցութիւններու ընդարձակ ցանցի մը: Անոնք նախ տեղական ընկերակցութիւններ կ'ըլլային, ապա նահանգային կը դառնային եւ ի վերջոյ կը յանգէին ազգայինի: Այս ընկերակցութիւնները տեղական կամ արտաքին միսիոնարութեան կը ձեռնարկէին՝ անսալով յարանուանական նախապատուութեան: Ուիլերմզ գոլեճի ուսանողներ, Սամուէլ Յովհաննէս Միլզի (1783–1818) գլխաւորութեամբ, որպէս միսիոնարներ Հնդկաստան կը մեկնէին: Ասոր գուգահեռ 1810-ին Արտաքին միսիոնարութիւններու միութիւնը կը կազմուէր, որ թէեւ ժողովական եկեղեցիներու միութիւն մըն էր, սակայն երիցականներու եւ բարեկարգեալներու օժանդակութիւնը եւս կը վայելէր: Ան իր առաջին միսիոնարները կը գործուղէր 1812-ին: Հնդկաստան մեկնող երկու միսիոնար՝ Ատոնիբամ Ճատսըն (1788–1850) եւ Լուտեր Ռայս, (1783–1836) համոզուած էին, թէ հաւատացեալներու ընկղմումով մկրտութիւնը աստուածաշնչական հիմք ունէր: Այս օրերուն նաեւ կը հիմնուէին Ամերիկայի Միացեալ Նահանգներու մկրտչականներու Արտաքին միսիոնարութիւններու ընկերակցութիւնը, 1817-ին՝ երիցականներունը, 1818-ին՝ մեթոտականներունը եւ 1820-ին՝ եպիսկոպոսականներունը: 1826-ին հիմնուած Ամերիկեան միսիոնարական ընկերակցութիւնը կը փորձէր կարգաւորել այս բոլորին գործունէութիւնը:

Կամաւոր ընկերակցութիւններ կը կազմուէին նաեւ Աստուածաշունչ ու հոգեւոր թերթիկներ բաժնելու, կրթական ու Կիրակնօրեայ վարժարաններու աշխատանք ծաւալելու եւ

բարեսիրական ու բարեկարգական գործունեություն ունենալու համար: Այս ընկերակցությունները ընդհանրապես յարանուանական պատկանելիություն չունեին եւ անտարանական զանազան հոսանքներու կը պատկանէին: Ասոնցմէ կը թուենք 1815-ին հիմնուած Ամերիկեան կրթական ընկերակցությունը, 1816-ին՝ Ամերիկեան Աստուածաշունչի ընկերակցությունը, 1817–1824-ին՝ Ամերիկեան Կիրակնօրեայ վարժարաններու միությունը եւ 1825-ի՝ Ամերիկեան հոգեւոր թերթիկներու ընկերակցությունը: Ասոնք բրիտանական դրութեան հիմամբ կը կազմակերպուէին: 1830-ականներուն այս ընկերակցությունները թիւով մեծապէս կ'աճէին եւ ազդեցիկ գործունեություն կ'ունենային: Ասոնց տարեկան ժողովները մայիսին Նիու Եորք քաղաքին մէջ կը գումարուէին եւ անդամներն ու ղեկավարները, յաճախ զանազան ընկերակցություններու անդամ ըլլալուն պատճառով, կամաւորապէս կը գործակցէին իրարու հետ: Այս ընկերակցություններուն ղեկավարությունը մեծ մասամբ կը գտնուէր ձեռքը խումբ մը հարուստ երիցական կամ ժողովական աշխարհականներու, որոնց մէջ կեդրոնական դեր ունէին Թաբան եղբայրներ՝ Արթըր (1786–1865) եւ Լեուիս (1788–1873): Թաբան եղբայրներ կը գործակցէին Ֆինիի հետ: 1834-ին եւ 1835-ին Ֆինի իր *Կրօնքի վերաբնութեան դասախօսութիւններ* երկը լոյս կ'ընծայէր եւ կը բանաձեւէր իր վերազարթօնքի յաջողութեան եղանակը: 1835-ին ան Օհայոյի Օպերլին գոլէճի աստուածաբանութեան դասախօսը ու ապա նախագահը կը դառնար եւ արդարօրէն ամերիկեան վերազարթօնքի ճարտարապետի համբաւ ձեռք կը ձգէր: 1846–1847-ին իր *Կարգաւորեալ աստուածաբանութեան դասախօսութիւններ* երկը կը հրատարակէր եւ վերազարթօնքի աստուածաբանությունը կը ներկայացնէր՝ փրկությունը սահմանելով որպէս փորձաքար: Ֆինի կը դառնար բազմաթիւ հետեւորդներ ունեցող վաւերական առաջնորդ մը:

Այս ընկերակցությունները միսիոնարական եռանդով կը լծուէին ընկերութեան բարոյական եւ մարդասիրական կերպարանափոխութեան: Անոնք կը յուսային, որ մեղքը, անբարո-

յութիւնը, պատանեկան անպատասխանատւութիւնն ու կիրակիի անտեսումը պիտի յաղթահարէին, եւ պիտի յաջողցնէին ժուժկալութիւնը, խաղաղութիւնն ու գերութեան բարձումը: Օրինակ՝ 1811-ին Գենեթիզըթի եւ Մեսեչուսեցի Երիցական ու Ժողովական եկեղեցիներու համաժողովներուն գլխաւոր մտահոգութիւնը ժուժկալութեան հաստատումն էր: 1813-ին եւ 1827-ին Լիմըն Պիչըրի քարոզները կը ձաղկէին ալքոլամոլութիւնը: 1826-ին կը հիմնուէր Ժուժկալութեան ամերիկեան ընկերակցութիւնը: Այս բոլորը դրականապէս կ'ազդէին քրիստոնէաներու ալքոլամոլութեան մէջ չափաւորութեան վրայ: 1840-ին Ուաշինկթընեան շարժումը կը զբաղէր ալքոլամոլութեան բարեկարգութեամբ: 1846-ին Մէյնի մէջ ալքոլամոլութիւնը սահմանափակող պետական օրէնքներ կը ճշդուէին: Քրիստոնէաներու բանեցուցած ճնշումին հետեւանքով 1919–1933-ին ազգային մակարդակի վրայ այսպիսի պետական օրէնքներ կը սահմանուէին: Ապա շեշտը կը դրուէր Եկեղեցիէն հեռացածները Եկեղեցի բերելուն վրայ:

1828-ին կը հիմնուէր Ամերիկեան խաղաղութեան ընկերակցութիւնը, որուն գլխաւոր առաքելութիւնը պիտի ըլլար գերութեան դադարեցումը: ԺԸ. դարուն այս ուղղութեամբ մանաւանդ քուէզըրներու կողմէ աշխատանք տարուած էր: Այս մարզին մէջ Յովհաննէս Վուլմընի (1720–1772) նպաստը մեծ եղած էր: ԺԹ. դարու սկիզբը գերութեան հանդէպ հակակրօնութիւնը ամբողջ երկիրին մէջ կ'աճէր: 1830-ին այս մասին մեծ փոփոխութիւն տեղի կ'ունենար հարաւային նահանգներուն մէջ, երբ վարուցանքի մէջ բարելաւումներ կը մտցուէին, գերիներու ապստամբութեան վտանգը կը յայտնուէր եւ հիւսիսային նահանգներու մէջ կը զօրանար հակագերութեան արշաւը՝ Ուիլերմ Լոյտ Կարիսընի (1805–1879) նման անձերու գլխաւորութեամբ: 1833-ին Ամերիկեան հակագերութեան ընկերակցութիւնը կը հիմնուէր եւ աւետարանականներուն մէջ անոր ամենէն նշանաւոր գործիչը կը դառնար Ֆինիի հետեւորդներէն Թէոտոր Տուայթ Ուելտ (1803–1895): Երբ հիւսիսային նահանգներու մէջ բնակող բողոքականներ հետզհետէ աւելի կը շեշտէին

գերութեան բարձումը, հիւսիսային եւ հարաւային նահանգներու միջեւ բացը աւելի կ'ընդարձակուէր:

Ահա այսպէսով արթնութեամբ, միսիոնարական կազմակերպութիւններով եւ կամաւոր ընկերակցութիւններով ԺԹ. դարուն քրիստոնէական հաւատքին աւետարանական ու բարեպաշտական շեշտադրում կը տրուէր Ամերիկայի մէջ: Այս շարժումները իրագործող յարանուանութիւններ մեծ տարածում կը գտնէին ամեն տեղ: Մեթոտականներ, որ իրենց հիմնադրութեան ատեն՝ 1784-ին, 15.000 էին, 1850-ին մէկ միլիոնէ աւելի կը հաշուէին: Մկրտչականներ, որ դարասկիզբին 100.000 էին, ԺԹ. դարու կէսին 800.000 կ'ըլլային: Ծխականներ եւ երիցականներ եւս կ'աճէին, սակայն ներքին պառակտումներու պատճառով ակնկալուած համեմատութեան չէին հասնէր: Երկրորդ արթնութիւնը Մեսէչուսէցի Ուղղափառ ժողովական եկեղեցիի հետեւորդներուն թիւը կ'աճեցնէր, սակայն ազատական ծխականներ կ'ընդդիմանային անոր: 1805-ին ազատականներ Հենրի Ուէյրը (1764–1845) Հարվըրտի աստուածաբանական համալսարանի Հոլիս ամպիոնի դասախօս կը նշանակէին: Մինչ այդ Ուիլերմ Էլրրի Չանինկ (1780–1842)՝ որպէս Պոսթընի հովիւ, մեծ ազդեցութիւն կը ներգործէր եւ արիոսական քրիստոսաբանութիւն կը քարոզէր: 1815-ին ուղղափառ ծխականներ ազատական ծխականներուն վրայ կը յարձակէին, մանաւանդ երբ անոնք իրենց անուանումին միութենական տիտղոսը կը կցէին: Հարցը աւելի կը բարդանար, երբ Սուրբ Երրորդութեան վարդապետութեան, ադամական մեղքի ու փրկութեան շուրջ իրարու միջեւ անհամաձայնութիւն կը տիրէր: 1819-ին, երբ Չանինկ, Պալթիմորի մէջ, Ճարլտ Մբարգսի՝ (1789–1866) որպէս միութենական պատուելի ձեռնադրութեան ատեն քարոզ մը կը խօսէր, զինք այլեւս ամերիկեան միութենականութեան անպաշտօն ղեկավարը կը համարէին: 1825-ին Ամերիկեան միութենական ընկերակցութիւնը կը հիմնուէր: Հին Ժողովական եկեղեցիներ, ինչպէս նաեւ արեւելեան Մեսէչուսէցին նշանաւոր մարդիկ կը միանային այս նոր յարանուանութեան: Ուղղափառ ծխականներ,– Պիչըրի գլխաւորութեամբ,

որ 1826-ին Պոսթընի Հանովըր փողոցի եկեղեցին հովի կը նշանակուէր,– կը կասեցնէին միութենականներուն յառաջխաղացքը եւ կը սահմանափակէին զանոնք արեւելեան Նիու Անգլիոյ մէջ:

Թէեւ Գենեթիզըթի մէջ այսպիսի խզում չկար, սակայն պահպանողական կալվինականներ արթնութեան մէջ կալվինականութեան հասնող վտանգ եւ միութենական համարութիւն կը տեսնէին: Որպէս հակադեցութիւն՝ 1833-ին կը հիմնուէր քահանայական ուղղափառ կազմակերպութիւն մը եւ 1834-ին Հարթֆըրտի մէջ կը բացուէր նոր դպրեվանք մը: 1847-ին լոյս ընծայած իր *Քրիստոնէական սնուցում* երկով հովի Հորըս Պուշնըլ (1802–1876) կը քննադատէր արթնութիւնը: Ան ոչ բարեպաշտական ու մեթոտական յարձակողական եղանակին փոխարէն՝ մանուկին քրիստոնէական դաստիարակութիւնն ու աճումը Աստուծոյ թագաւորութիւն մուտքի բնական ընթացք կը համարէր: Ան աստուածաբանական բացատրութիւններով շեշտը կը դնէր մտաւորական դասակարգին կողմէ ըմբռնելի դաւանանքէն պարզ հաւատացեալին միտքին ու սիրտին հասանելի կրօնական զգայնութեան վրայ: Ան այս գաղափարները աւելի կը զարգացնէր իր *Աստուած Քրիստոսի մէջ* (1849) ու *Բնութիւնը եւ գերբնականը* (1857) գիրքերուն մէջ:

Երիցականներ եւս ներքին հակամարտութիւններու պատճառով կը բաժնուէին: Անոնք որոնք սկովտիական եւ իրլանտական կրթութիւն ստացած ու աւանդական եկեղեցիի ըմբռնումին կապուած էին եւ ուսեալ քահանայութիւնը կը ջատագովէին, բաւարար չէին նկատեր վերազարթօնք քարոզողներուն վարդապետական կեցուածքներն ու ձեռնադրութեան մակարդակը: Այս երկու մօտեցումները համադրելու ճիգերը կը յանգէին խզումի: 1803-ին խումբ մը աւետարանչական բողոքականներ, Պարթըն Վորըն Սթոնի (1772–1844) առաջնորդութեամբ, Քենթաքիի սինոտէն դուրս կու գային, կը կրէին «Նոր լոյսեր» անունը եւ ապա զանազան խումբերու կը բաժնուէին պարզապէս քրիստոնէայ կոչուելով: Քանի մը տարի ետք Քենթաքիի երիցական վերազարթօնքի հետեւողները եւս

կը բաժնուէին եւ կը հիմնէին Գամպրըլէնտի Երիցական եկեղեցին: Ասոնք եւս աւելի ուշ կը կոտորակուէին: Թովմաս Գեմպըլ (1763–1854)՝ Հիւսիսային Իրլանտայէն երիցական հովիւ մը, 1807–ին Ամերիկա կու գար, արեւմտեան Փենսիլվանիոյ մէջ քարոզութեան կը սկսէր եւ երբ զանազան Երիցական եկեղեցիներու պատկանողներուն սուրբ հաղորդութիւն կը բաշխէր, շատեր կը դժգոհէին: Ան կը հակադարձէր ըսելով, որ Աստուածաշունչը իր ըրածը չէր արգիլէր: Ան պաշտօնական Երիցական եկեղեցիէն կը բաժնուէր եւ կը շարունակէր իր առաքելութիւնը՝ յայտարարելով, թէ «Ուր որ Աստուածաշունչը կը խօսի՝ մենք կը խօսինք. ուր որ Աստուածունչը կը լռէ՝ մենք կը լռենք»: Ան չէր ուզէր նոր յարանուանութիւն մը հաստատել, այլ ի մի խմբել Աստուածաշունչի հիմամբ բոլոր քրիստոնէաները, առանց յաւելեալ հաւատքի դաւանութեան եւ ծիսական կառոյցի: Օգոստոս 1809–ին Գեմպըլ Ուաշինկթընի Քրիստոնէաներու կազմակերպութիւնը կը հիմնէր եւ կը խմբագրէր անոր յայտարարութիւնը, որ այդ թուականէն սկսեալ կը դառնար, այսպէս կոչուած, Աշակերտներու շարժումին հիմնական բնագիրը: Նոյն տարին, Գեմպըլի զաւակը՝ Ադէքսանդր (1788–1866), Ամերիկա կը հասնէր եւ իր հօրը տեսակէտները ջատագովելուն մէջ զայն կը գերազանցէր:

Հակառակ ստեղծուած զանազան բաժանումներուն՝ գեմպըլականներ մայիս 1811–ին, Փենսիլվանիոյ Պրաշ Ռան քաղաքին մէջ, կը հիմնէին եկեղեցի մը, ուր ամեն կիրակի սուրբ հաղորդութիւն կը մատակարարէին: Սակայն անոնք կը դիմագրրաւէին մանուկներու մկրտութեան աստուածաշնչական վաւերականութեան հարցը: 1812–ին գեմպըլականներ եւ իրենց գործակիցները ընկղմումով կը մկրտուէին: 1813–ին Պրաշ Ռանի եկեղեցին Ռետսթոնի Մկրտչական եկեղեցիներու կազմակերպութեան անդամ կը դառնար: Սակայն մկրտչականներուն հետ շուտով անհամաձայնութեան կէտեր կը դրսեւորուէին: Գեմպըլականներ մկրտչականներու թունդ կալվինականութիւնը չէին բաժնէր եւ Հին կտակարանը Նոր կտակարանէն նուազ հեղինակաւոր կը համարէին: Մկրտչականներ

րուն համար մկրտութիւնը արդէն ներումի արժանացած մեղքերուն յաջորդող առանձնաշնորհ մըն էր, իսկ գեմպըլականներուն համար ան մեղքերու թողութեան նախապայման մըն էր: Առաւել, գեմպըլականները կ'ընդունէին Սուրբ Երրորդութեան ակնարկող միայն աստուածաշնչական Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի բանաձեւի գործածութիւնը: 1832-ին գեմպըլականներ վերջնականօրէն կը բաժնուէին մկրտչականներէն եւ շուրջ 25.000 հաւատացեալներով կը հիմնէին «Քրիստոսի աշակերտներ» եկեղեցին: Դարուն աւարտին անոնց թիւը մէկ միլիոնը կ'անցնէր:

Օայրայեղ վերազարթօնք քարոզողներուն կորուստով՝ վերազարթօնքը կը տկարանար երիցականութեան մէջ: Թէեւ ժողովական դրութեան հետեւող երիցականներ իրարու աւելի կը մերձենային, սակայն 1837-ին հին դպրոցի հետեւորդներ զանոնք կը չէզոքացնէին, եւ այսպէսով երիցականներ երկուքի կը բաժնուէին: Բաժանումի գլխաւոր պատճառը աւետարանչութիւն ընող կամաւոր կազմակերպութիւններու աստուածաբանական ու վարչական անկախ գործունէութիւնն էր:

Բարեկամներու ընկերակցութիւնը եւս կը բաժնուէր: Աւետարանչական քարոզութեան եւ վերազարթօնքի հետեւողներ անգլիացի քուէյզըր Յովսէփ Յովհաննէս Կըրնիի (1788–1846) կը յարէին, իսկ աւելի ազատականներ՝ Եղիա Հիզս Լոնկ Այլընտցիի (1748–1830): 1828–1829-ին այս երկու խումբերը վերջնականօրէն իրարմէ կը զատուէին:

Վերազարթօնքը նաեւ հակառակութիւն կը սերմանէր լուտերականներուն մէջ: ԺԹ. դարու առաջին կէսին տիրական ներկայութիւն էր Սամուէլ Սիմոն Շմուզըր (1799–1873), որ չափաւոր վերազարթօնքի համամիտ էր: Սակայն երբ Գերմանիայէն եւ Սկանտինաւեան երկիրներէն լուտերականներ Ամերիկա կը ժամանէին, կը քննադատէին, որ տեղական եկեղեցիները հեռացած էին աւանդական լուտերականութենէն: Երբ այսպիսի ուժեղ լուտերականութիւն կը ձեւաւորուէր Ամերիկայի մէջ, Շմուզըրի ազդեցութիւնը կը տկարանար: 1867-ին ընդհանուր սինոտին զուգահեռ կը կազմուէր ընդհանուր

ժողովը, եւ Շմուգըրի 1826-ին բացած Կեթիսպըրկի դպրե-
վանքին զուգահեռ 1864-ին կը բացուէր Փենսիլվանիոյ Մաունթ
Այրի քաղաքի դպրեվանքը: Այս զարգացումներուն մէջ *Պահ-
պանողական բարեկարգութիւնն ու անոր աստուածաբանութ-
իւնը* երկի հեղինակ Չարլզ Բորթըրֆիլտ Գրաուօթի (1823–1883)
դերակատարութիւնը մեծ կ'ըլլար:

Այլ յարանուանութիւններ թէեւ խզում չէին ունենար,
սակայն կը դիմագրաւէին ներքին սուր լարուածութիւններ:
Գերման բարեկարգեալ եկեղեցիներու պարագային, Փենսիլ-
վանիոյ Մերսըրսպըրկ քաղաքի դպրեվանքէն աստուածաբան
Յովհաննէս Ուիլերմսըն Նելին (1803–1886) եւ եկեղեցիի պատ-
մաբան Փիլիպպոս Շաֆ (1819–1893) վերագարթօնքէն աւելի
շեշտը կը դնէին քրիստոնէական դաստիարակութեան վրայ:
Բողոքական եպիսկոպոսական եկեղեցիին մէջ մեծ վերաթ-
նութիւն մը չկար թէեւ, սակայն Ադէքսանդր Վիեթս Կրիսվոլտ
եպիսկոպոս (1766–1843) կը նախաձեռնէր Խոնարի եկեղեցիի
համակրող աւետարանչական շարժումի մը: Միւս կողմէ,
Բարձր եկեղեցին վերածնունդ կ'ապրէր եւ անզու-կաթովի-
կութեան աճումին կ'օժանդակէր՝ Յովհաննէս Հենրի Հոպըրթ
(1775–1830) եպիսկոպոսի ղեկավարութեամբ: Այս տարիներուն
Եպիսկոպոսական եկեղեցին փոքրաթիւ էր, սակայն ԺԹ. դա-
րուն աստիճանաբար կը մեծնար զանազան քաղաքներու մէջ:

Գերութեան շուրջ պայքարը ամենէն աւելի կը բաժնէր
զանազան յարանուանութիւններու պատկանող եկեղեցիները:
1843-ին Ամերիկայի Ուեզլիական մեթոտական եկեղեցին կը
վճռէր, թէ իր հաւատացեալներէն ոչ ոք կրնար գերի ունենալ:
1844-ին Մեթոտական եպիսկոպոսական եկեղեցիի համաժո-
ղովը կը վիճարկէր գերիներ պահող եպիսկոպոսի մը պարա-
զան: Վէճը կը յանգէր հարաւի Մեթոտական եպիսկոպոսական
եկեղեցիի հիւսիսի Մեթոտական եպիսկոպոսական եկեղեցիէն
բաժանումին: 1845-ին նոյն վէճով հիւսիսի եւ հարաւի Մկրտչա-
կան եկեղեցիները եւս կը բաժնուէին իրարմէ:

Քաղաքացիական պատերազմէն առաջ (1861–1865) այլ
եկեղեցիներ եւս կը բաժնուէին իրարմէ: Երիցական նոր դպրոցի

պատկանողներու եկեղեցին Երիցական եկեղեցիէն կը բաժնու-
ւէր 1857-ին, իսկ հին դպրոցի պատկանողներու եկեղեցին՝
1861-ին: 1864-ին հարաւը գտնուող եկեղեցիները կը միանային
որպէս Միացեալ Նահանգներու Երիցական եկեղեցի, իսկ 1869-
1870-ին՝ հիւսիսը եղողները որպէս Ամերիկայի Միացեալ Նա-
հանգներու Երիցական եկեղեցի: Բողոքական եպիսկոպոսա-
կան եկեղեցին Քաղաքացիական պատերազմի ատեն կ'երկ-
փեղկուէր, սակայն պատերազմի աւարտին կը վերամիանար:
Պատերազմէն ետք սեւամորթ քրիստոնէաներուն մեծամաս-
նութիւնը իր անկախ եկեղեցական խմբաւորումները կ'ունե-
նար յատկապէս Ազգային մկրտչական միութիւնը, Ափրիկեան
մեթոտական եպիսկոպոսական եկեղեցիները եւ Ափրիկեան
մեթոտական եպիսկոպոսական Սիոնի եկեղեցիները: Կարելոր
թիւով սեւամորթ քրիստոնէաներ կը շարունակէին սպիտա-
կամորթ յարանուանութիւններու մէջ մնալ եւ մեծ թիւ դառնալ՝
մանաւանդ մեծ քաղաքներու մէջ:

Նոր գոլէճներ եւ դպրեվանքեր կը հիմնուէին կրօնական
վերազարթօնքին ու հակառակութիւններուն եւ նոր յարանուա-
նութիւններու երեսն գալուն հետեւանքով: Այս կրթական հաս-
տատութիւնները կը նպատակադրէին հոգեւոր ծառայութեան
լծուած պաշտօնէաներ պատրաստել: 1784-ին Հոլանտական
բարեկարգեալ եկեղեցին Նիու Ճըրզիի Նիու Պրանսուիք քաղա-
քին մէջ աստուածաբանական դպրեվանք մը կը բանար: 1794-
ին Միացեալ երիցականները դպրեվանքի կրթական ծրագիրի
մը կը նախաձեռնէին եւ ի վերջոյ դպրեվանք մը կը հիմնէին
նախ Օհայոյի եւ ապա Փիթսպըրկի մէջ: 1797-ին լուտերական-
ներ Նիու Եորքի Հարթուիզ քաղաքին մէջ դպրեվանք մը կը
հիմնէին: 1807-ին մորախանականներ Փենսիլվանիոյ Նազա-
րէթ քաղաքին մէջ աստուածաբանական դպրոց մը կը բանային:
1808-ին ժողովականներ Մեսչուսէցի Անտովըր քաղաքին մէջ
ժամանակաշրջանի ամենէն նշանաւոր դպրեվանքը կը հիմ-
նէին: 1812-ին երիցականներ Նիու Ճըրզիի Փրինսթըն քաղաքին
մէջ դպրեվանք մը կը բանային: Ժողովականներ 1814-ին Մէյնի
մէջ Պանկոր դպրեվանքը եւ 1815-ին Հարվըրտի աստուածա-

բանական դպրոցը կը հիմնէին: 1820-ին մկրտչականներ Նիու Եորքի Համիլթըն քաղաքին մէջ, իսկ երիցականներ Նիու Եորքի Օպըրն քաղաքին մէջ մէկական դպրեվանք կը բանային: 1822-ին ժողովականներ կը հիմնէին Ելյի աստուածաբանական դպրոցը: Այսպէս, աստուածաբանական դպրոցները հետզհետէ թիւով կ'աճէին եւ 1860-ին արդէն կը հասնէին 50-ի:

ԺԹ. դարու առաջին կէսին վերագարթօնքի ոգետրիչ մթնոլորտին մէջ կը ծնէին աւետարանական բողոքականութենէն շեղող բազմաթիւ շարժումներ: Մարգարէական մեկնութեան շարժումին հիմնադիրը կը դառնար Նիու Եորքի Լօ Համփթընի շրջանէն երկրագործ Ուիլերմ Միլըր (1782–1849): 1831-էն սկսեալ ան քարոզութեան կը նախաձեռներ՝ ըսելով, որ ըստ Դանիէլի մարգարէութեան մէջ գտնուող հաշուարկներուն՝ Քրիստոսի երկրորդ գալուստն ու Հազարամեայ իշխանութեան հաստատումը տեղի պիտի ունենային 1843–1844-ին, եւ կը շահէր մեծաթիւ հետեւորդներ: Հակառակ այն իրողութեան, որ Միլըրի մարգարէութիւնը չէր իրականանար, 1845-ին անոր աշակերտները իրենք զիրենք գալստականներ կը կոչէին, համագումար մը կը կազմակերպէին եւ կը շարունակէին համախմբուիլ: Այս շարժումէն կը ծնէին Եօթներորդ օրը՝ Շաբաթը պահող գալստականները, որոնք 1863-ին պաշտօնապէս կը հիմնադրուէին: ԺԹ. դարու աւարտին եւ Ի. դարու սկիզբը այս շաբաթապահները Ամերիկայի մէջ կը հիմնէին բազմաթիւ աղանդներ: Այն շարժումը, որ հետագային պիտի կոչուէր «Եհովայի վկաներ», կը սերէր ասոնցմէ եւ 1870-ականներու աւարտին կը հիմնուէր Չարլզ Թագէ Ռասըլի (1852–1916) կողմէ:

Մորմոնականութիւնը եւս Նիու Եորքի մէջ սկիզբ կ'առնէր եւ կ'աճէր որպէս առանձին ճիւղ: Անոր հիմնադիրն էր Յովսէփ Սմիթ (1805–1844), որ կ'ըսէր, թէ գտած է Նիու Եորքի Մանչեսթըր քաղաքին մէջ Աստուածաշունչը ամբողջացնող ոսկեպատ գիրք մը՝ Մորմոններու գիրքը: Այս գիրքը խորհրդաւոր գիրերով գրուած էր եւ միայն Սմիթ կրնար զայն կարդալ կախարդական ակնոց մը գործածելով: Այս գիրքին բնագիրը

հրեշտակներ անհետացուցած էին: Այս գիրքը կ'ըսեր, թե Սմիթ մարգարե մըն է: 1830-ին մորմոն առաջին եկեղեցին կը կազմուէր Նիու Եորքի Ֆայէթ քաղաքին մէջ: Աւելի ուշ ան կը տարածուէր Օհայոյի մէջ, երբ Պրիկհըմ Եանկ (1801–1877) կ'անդամակցէր անոր: 1838-ին մորմոնականութիւնը Միզուրի եւ Իլինոյ նահանգները կը հասներ: Թէեւ Մորմոններու գիրքը միակնութիւն կ'ուսուցանէր, Սմիթ կ'ըսեր, թե 1843-ին բազմակնութիւնը արտօնող յայտնութիւն մը ստացած էր: 1844-ին Սմիթ կը սպանուէր ամբոխի մը կողմէ: Մորմոններու եկեղեցիին ղեկավար կը դառնար մեծ կազմակերպիչ Եանկ: Ան մորմոններու եկեղեցին Եուրթա նահանգի Սոլթ Լէյք քաղաքը կը փոխադրէր. հոս կեանքի կը կոչուէր տնտեսապէս մեծահարուստ համայնք մը: 1890-ին, պետական ճնշումի տակ, բազմակնութիւնը կը խափանուէր: Մորմոններ անխոնջ միսիոնարներ էին եւ Եւրոպայէն բազմաթիւ միսիոնարներ կը ներգրուէին եւ իրենց եկեղեցին ամեն տեղ կը տարածէին: Անոնք կը հաստատէին տնտեսական ու ընկերային իւրայատուկ համակարգ մը: Անոնց աստուածաբանութիւնը կը ճանչնար յայտնութեան երեք աղբիւրներ՝ Աստուածաշունչը, Մորմոններու գիրքը եւ Սմիթի Աստուծմէ ստացած յայտնութիւններուն գիրքերը, մանաւանդ «Վարդապետութիւններ եւ ուխտեր»-ը: Մորմոնները այսօր ծանօթ են «Յիսուս Քրիստոսի վերջին օրերու սուրբերու եկեղեցի» անունով: Անոնց կեդրոնատեղին Սոլթ Լէյք կը գտնուի եւ փոքր կեդրոն մըն ալ ունին Միզուրի նահանգի Ինտիփենստընս քաղաքին մէջ:

Քաղաքացիական պատերազմի ու Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակամիջոցին ամերիկեան բողոքականութեան վերազարթօնքը մեծ թափով կը շարունակուէր: Անոր ամենէն աշխուժ ներկայացուցիչն էր աշխարհական քարոզիչ Տուայթ Լիմըն Մուտի (1837–1899): Ան միաժամանակ մեծ կազմակերպիչ ու քարոզիչ էր: Անոր միսիոնարական եռանդը մեծապէս կը նպաստէր միսիոնարական շարժումի աճումին: Սակայն ԺԹ. դարու աւարտին մտաւորական մթնոլորտը արագօրէն կը փոխուէր եւ կ'ազդէր պահ-

պանողական բողոքականութեան մտածողութեան վրայ: Գիտական յեղափոխութիւններ փոփոխութեան կ'ենթարկէին բնութեան, աշխարհի եւ պատմութեան յղացքները: Անոնք, որ կառչած էին ստեղծագործութեան աստուածաշնչական ասանդական տեսակետին, մեծապէս կը խրտչէին երկրախոյզներու եւ Աստուածաշունչի քննադատներու յայտնած նոր տեսակետներէն: Բազմաթիւ բողոքականներ առաւել եւս կը պնդէին աստուածաշնչական տեսակետներու անսխալականութեան վրայ: Անոնք Նիակարայի, Ուինոնայի եւ Ռոքի Մաունթընի մէջ կը կազմակերպէին Աստուածաշունչի նուիրուած համագումարներ ու կը պաշտպանէին իրենց տեսակետները: Ասոնց տեսակետները կը խտանային հետեւեալ հինգ կէտերուն մէջ՝ Աստուածաշունչի բառացի անսխալականութիւնը, Յիսուսի աստուածութիւնը, Յիսուսի կուսական ծնունդը Մարիամէն, Յիսուսի քաւարար գոհողութիւնը եւ Յիսուսի յարութիւնն ու մարմինով երկրորդ գալուստը: Պահպանողական ճակատը ինքզինք աւելի կը զօրացնէր համագումարներով, Աստուածաշունչի ուսուցումի դպրոցներու հիմնադրումով եւ շրջուն քարոզիչներով:

ԺԹ. դարու աւարտին եւ Ի. դարու սկիզբը կը սկսէին աստուածաբանականօրէն պահպանողական բազմաթիւ շարժումներ եւ միսիոնարութեան ճամբով ծնունդ կու տային նոր յարանուանութիւններու Ամերիկայի Միացեալ Նահանգներու ու այլ երկիրներու մէջ: Մեթոտական արանդութեան շեշտադրած քրիստոնէական կատարեալ կեանքէն դժգոհներ սրբութեան հաւաքներ կը կազմակերպէին եւ բարոյական խստապահանջութեամբ ազատական հակումներու կը հակադրուէին: 1880-ականներուն սրբութեան հակող կարգ մը մեթոտականներ, այլ յարանուանութիւններու գործակցութեամբ, սրբութեան յարանուանութիւններ կը հիմնէին եւ ասոնցմէ ամենէն շատ հաւատացեալներ ներգրաւողը կը դառնար Նազարիի եկեղեցին: Փրկութեան բանակը, որ 1880-ին Անգլիայէն Ամերիկայի Միացեալ Նահանգներ կը հասնէր, այլ աչքառու սրբութեան մարմին մըն էր եւ կը զբաղէր մանա-

ւանդ անկեալներու ու զրկեալներու խնամքով: Ի դարու սկիզբը սրբութեան եկեղեցիներէն ծնունդ կ'առնէին նոր շարժումի մը՝ հոգեգալստականութեան ղեկավարները: Սրբութեան եւ հոգեգալստականութեան շարժումներուն հասարակաց էին Աստուածաշունչի պահպանողական մեկնութիւնը, Հազարամեան, իստապահանջ բարոյականութիւնը եւ հաւատքով բուժումը. սակայն հոգեգալստականներ Սուրբ Հոգիի պարգեւած լեզուներ խօսելու շնորհով կը բնորոշուէին եւ շուտով սրբութեան եկեղեցիներու հաւատացեալներէն աւելի գերազանց թիով հաւատացեալներ կը ներգրաւէին: Հոգեգալստականութեան արագ աճումին եւ ամեն տեղ սփռուելուն մէջ մեծ դերակատարութիւն կ'ունենային սեւամորթ քարոզիչ Ուիլերմ Յովսէփ Սիմուրի (մահացած՝ 1923-ին) արթնութեան հաւաքները, որոնք 1906-ին Լոս Անճելըսի Ազուսա փողոցին վրայ կը սկսէին եւ որոնց ընթացքին շատեր Սուրբ Հոգիի մկրտութիւնը կը ստանային, որ արդարացումէն ու սրբագործումէն ետք երրորդ օրհնութիւն կը համարուէր: Այս արթնութեան հաւաքները երեք տարի կը տեւէին եւ ամբողջ երկիրի տարածքէն հազարաւորներ անոնց կը մասնակցէին: Հոգեգալստական բազմաթիւ սպիտակամորթ եւ սեւամորթ ղեկավարներ այս հաւաքներու ընթացքին երրորդ օրհնութիւնը կը ստանային: Այս շարժումը եւս շուտով հակասական կը դառնար, երբ ոմանք կը հաւատային, թէ ան Սուրբ Հոգիին գործն էր, մինչ ուրիշներ զայն զգացական անիմաստ պոռթկում կը նկատէին: Արտասահմանէն անձեր ալ Ազուսա փողոցով կը հետաքրքրուէին եւ հոգեգալստականութիւնը, հասնելով Եւրոպա, Ասիա, Ափրիկէ ու Հարաւային Ամերիկա, համաշխարհային երեւոյթ կը դառնար: Ան սկզբնական շրջանին Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ առանձին Եկեղեցի չէր ըլլար. որովհետեւ, անոր հետեւորդները նախ իրենց եկեղեցիներուն մէջ կը մնային: Սակայն շուտով հոգեգալստական եկեղեցիներ կը հիմնուէին եւ երկու աստուածաբանական ու մէկ ցեղային հակասութիւններով կարգ մը յարանուանութիւններ կը գոյանային: 1910-ին բազմաթիւ հոգեգալստականներ երրորդ օրհ-

նութիւնը կը մերժէին եւ սրբացումը արդարացումէն անբաժանելի նկատելով կ'ըսէին, թէ անոնք Աստուծոյ դառնալուն մաս կը կազմէին Քրիստոսի Գողգոթայի խաչի մահուան շնորհիւ. հետեւաբար, Սուրբ Հոգիով մկրտուիլը երկրորդ եւ վերջին օրհնութիւնն էր: Այս նոր տեսակետները շուտով կը տարածուէին, եւ 1914-ին Աստուծոյ հաւաքները ծնունդ կու տային Հոգեգալստական եկեղեցիին, որ շուտով կը դառնար Ամերիկայի ամենէն աւելի հաւատացեալ ունեցող հոգեգալստական յարանուանութիւնը: Այս նոր յարանուանութիւնը կը դիմագրաւէր աստուածաբանական երկրորդ հարց մը, երբ ոմանք կ'ըսէին, թէ առաքեալներ միայն Յիսուսի անունով մկրտած էին եւ աստուածութեան մէջ միայն մէկ անձ կար՝ Յիսուս Քրիստոսը, եւ Հայր ու Սուրբ Հոգի պարզապէս տիտղոսներ էին: Այս նոր շարժումը Միայն Յիսուս կամ Յիսուսի անունը կը կոչուէր եւ Աստուծոյ հաւաքները, բաժնուելով յարանուանութենէն կը վերածուէր «Խօսքին հոգեգալստական հաւաքները» անունը կրող բազմաթիւ յարանուանութիւններու: Երրորդ հարցը ցեղային էր, որովհետեւ զանազան ցեղեր համախմբող շարժումը ցեղային գունաւորում կը ստանար, երբ Սուրբ Երրորդութիւնը դաւանող հոգեգալստականներ, ինչպէս օրինակ, Աստուծոյ հաւաքները, ընդհանրապէս սպիտակամորթներ էին, իսկ Չարլզ Հարիսըն Մէյսընի (1866–1961) գլխաւորած Քրիստոսով Աստուծոյ եկեղեցին մեծ մասամբ սեւամորթերէ կը բաղկանար: Խօսքին հոգեգալստական հաւաքներու եկեղեցին սկզբնապէս ամեն գոյնէ հաւատացեալներ ունէր, սակայն 1924-ին սպիտակամորթներ, բաժնուելով անկէ, կը միանային այլ եկեղեցիներու:

Մինչ բազմաթիւ բողոքականներ կը հետեւէին կրօնական պահպանողականութեան, ոմանք, պահելով հանդերձ աւետարանական արեւելումը, կը փորձէին քայլ պահել այդ օրերու գիտական ու պատմական շարժումներուն հետ, եղափոխութիւնը ջատագովել եւ Աստուածաշունչը քննականօրէն ուսումնասիրել: Բազմաթիւ դպրեվանքեր ազատականութեան

ինը կը քաջալերէին. օրինակ՝ Անտովրրի յառաջդիմական ուղղափառութիւնը ազատականութեան կը յանգէր:

Ազատական աստուածաբանութիւնը ծնունդ կու տար շարք մը հերետիկոսութիւններու: 1893-ին Նիու Եորքի Եուններն աստուածաբանական դպրեվանքէն փրոֆ. Չարլզ Օգոստոս Պրիկզ (1841–1913) երիցական համաժողովին կողմէ պաշտօնանկ կ'ըլլար: Այս պայքարի ընթացքին Եուններն աստուածաբանական դպրեվանքը կը հանդիսանար ազատականութեան ախոյեաններէն: Ի. դարու սկիզբը ազատականներ բաւական հող կը շահէին զանազան յարանուանութիւններու մէջ: Պահպանողականներ խստիւ կը հակադարձէին ասոնց, եւ պահպանողական ու ազատական հակամարտութիւնը աւելի կը խորանար: 1930-ականներուն պահպանողականներ մեծ մասամբ պայքարը կորսնցուցած էին եւ կը կազմէին անկախ եկեղեցիներ ու յարանուանութիւններ: Երիցական փրոֆ. Յովհաննէս Կրեշըմ Մախըն (1881–1937) կը դառնար պահպանողականներուն ղեկավարը, իսկ մկրտչական պատուելի Հերի Էմըրսըն Ֆոստիք (1878–1969) կ'առաջնորդէր ազատականները:

1865–1914-ին կիներ կը սկսէին աւելի գործուն դերակատարութիւն ունենալ Բողոքական եկեղեցիներուն մէջ: 1868-ին Ժողովական եկեղեցիներ կը հիմնէին Արտասահմանի միսիոնարութիւններու օժանդակող կիներու միութիւնը: Ասոնց օրինակին կը հետեւէին մեթոտականները՝ 1869-ին, երիցականները՝ 1870-ին եւ Բողոքական եպիսկոպոսական եկեղեցին՝ 1871-ին: Ամերիկայի գրեթէ ամբողջ տարածքին ասոր նման միութիւններ կը հիմնուէին բոլոր բողոքականներուն կողմէ: Կիներ շատոնց ընտրելու եւ ընտրուելու իրաւունք ձեռք ձգած էին Մկրտչական ու Ժողովական եկեղեցիներուն մէջ: 1900-ին մեթոտականներուն մէջ անոնք նոյն իրաւունքին կը տիրանային: Մկրտչականներ, ծիսականներ, հոգեգալստականներ եւ այլ նորաբողոք եկեղեցիներ կիները նաեւ քահանայ կը ձեռնադրէին:

Նոյն ժամանակաշրջանին եկեղեցիներ նաեւ երիտասարդութեան յատուկ ուշադրութիւն կը դարձնէին: Այս նպա-

տակով 1881-ին Ֆրանսիա Եդուարդ Գլարք (1852–1927) զանազան յարանուանություններ խմբող «Քրիստոնեական ճիգ» շարժումը կը հիմներ: Այլ յարանուանություններ եւս նոյն զաղափարը կ'որդեգրէին եւ մեթոտականներ՝ 1889-ին, մկրտչականներ՝ 1891-ին ու լուտերականներ՝ 1895-ին իրենց երիտասարդական միությունները կը հիմնէին:

Քաղաքացիական պատերազմէն ետք բարձր ուսումի տիրացած հոգեւորականութեան պահանջը եւս կը շեշտուէր: Դպրեվանքեր իրենց դասախօսական կազմն ու դասացուցակը վերատեսութեան կ'ենթարկէին. նաեւ նոր դպրեվանքեր կը կառուցուէին: 1900-ին Ամերիկայի մէջ գոյութիւն ունէր աւելի քան 100 բողոքական աստուածաբանական դպրոց:

Ի. դարու աւարտին, նոր մտածողութիւն շարժումին ազդեցութեան տակ, կը կազմուէին կրօնական նոր մարմիններ, որոնցմէ ամենէն նշանաւորը կը դառնար Քրիստոսի եկեղեցին կամ Քրիստոնեական գիտութիւնը: Ասոր հիմնադիրը՝ Մարի Պէլքըր Էտի (1821–1910), որ երկար ատեն հիւանդ էր, կը յայտնէր, թէ 1866-ին սառոյցին վրայ իյնալէ ետք կ'առողջանար եւ ուրիշներուն բժշկութեան պատճառ կը դառնար: 1875-ին ան իր՝ *Գիտութիւնն ու բժշկութիւնը՝ Աստուածաշունչին յղումով* գիրքին առաջին հրատարակութիւնը լոյս կ'ընծայէր: Նոյն տարին Քրիստոնեական գիտութիւն ընկերակցութիւնը կը հիմնուէր եւ 1879-ին որպէս Եկեղեցի կ'արձանագրուէր Պոսթընի մէջ: Հիմնադիրին մահուան օրերուն այս Եկեղեցին Ամերիկայի զանազան քաղաքներուն եւ արտասահմանի մէջ շուրջ 100.000 հետեւորդ կ'ունենար: Քրիստոնեական գիտութենէն այլ շարժումներ եւս ծագում կ'առնէին: 1889-ին Չարլզ եւ Մըրթըլ Ֆիլմոր Միգուրի նահանգի Գանսաս Միթի քաղաքին մէջ կը հիմնէին Քրիստոնեութեան միութեան դպրոցը, որ զանազան եկեղեցիներու մէջ աղօթքի ու բժշկութեան պահանջը կ'ընդգծէր եւ աւելի ուշ առանձին յարանուանութեան կը վերածուէր:

ԺԹ. դարու աւարտին ընկերային զօրակցութեան շարժումը եւս կը զօրանար: Ուաշինկթըն Կլատըն (1836–1918) եւ Ուոլթըր Ռաուշընպուշ (1861–1918) ազատախոհ պատուելիներ-

րու ղեկավարութեամբ կը տարածուէր ընկերային աւետարանը: ԺԹ. դարու սկիզբը բողոքականներ ողորմութիւնն ու բարոյական բարեկարգութիւնը անհատական շրջագիծի մէջ կ'արտայայտէին. սակայն ընկերային աւետարանը այս նախանձախնդրութիւնը կը փոխադրէր ընկերային տարածք եւ կը շեշտադրէր ընկերային արդարութիւնը: Աշխատանքի կանոնաւորութիւնը հիմնական մտահոգութիւն կը դառնար եւ աշխատանքի օրերը կը կրճատուէին: Աստուծոյ արքայութիւնը երկիրի վրայ հաստատելու յանձնառութեամբ՝ երիցականներ, մկրտչականներ, մեթոտականներ, ծխականներ ու եպիսկոպոսականներ կը դառնային ընկերային աւետարանին ջատագովները: Դպրեվանքեր ընկերային բարոյականի դասանիւթեր կը հաստատուէին, իսկ յարանուանութիւններ ընկերային ծառայութեան բաժանմունքներով կ'օժտուէին: Եկեղեցիներ ընկերային դժուարութիւններ դիմագրաւող շրջաններու մէջ կը մշակէին ընկերային ծառայութեան ծրագրեր: Ընկերային գորակցութեան ծրագրեր նաեւ միսիոնարական շրջաններ կը հասնէին եւ կ'ընդգրկէին երկրագործական, բժշկական ու կրթական բնագաւառները:

ԺՉ. ԳԼՈՒԽ
ՀՌՈՄԷԱԿԱՆ ԿԱԹՈՒԿՈՒԹԻՒՆԸ
ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՁ

Սպանիոյ առաջնորդութեամբ եւ յիսուսեաններու եռանդագին աշխատանքով՝ ԺԷ. դարու կեսին կը զօրանար Հակաբարեկարգութիւնը: Սպանիա Երեսուն տարիներու պատերազմէն յաղթական դուրս կու գար: Յիսուսեաններ հոգեւորականէ աւելի աշխարհիկ ուժի կը վերածուէին: ԺԷ. եւ ԺԸ. դարերու պապերը հեղինակաւոր անձեր չէին: Իննովկենտիոս ԺԱ. (1676–1689), Իննովկենտիոս ԺԲ. (1691–1700) եւ Պենետիկտոս ԺԴ. (1740–1758) լաւ նկարագիրի եւ միտումներու տէր անձեր էին, սակայն հեղինակութենէ զուրկ էին: Կաթոլիկ քաղաքական իշխանութիւններու հզօրացումին դիմաց Հռոմէական եկեղեցին հետզհետէ առաւել կը տկարանար: Այս կացութեան մէջ գրեթէ ամեն տեղ բողոքականութեան հակադարձելը անկարելի կը դառնար: Միւս կողմէ՝ ԺԷ. դարուն կ'աճէր կաթոլիկ բարեպաշտութիւնը: 1611-ին Պետրոս Պերուլացի (1575–1629) Ֆրանսայի մէջ կը հիմնէր հոգեւոր շարժում մը, որմէ կը ներշնչուէին ս. Ֆրանսիս Սալէցի (1567–1622) եւ ս. Վենսէն Փոլեցի (1576? – 1660):

Լուի ԺԴ.-ի իշխանութեան օրերուն (1643–1715) Ֆրանսայի թագաւորը մենատէր կը դառնար: Հակառակ պապական ընդդիմութեան՝ ան կը սեփականացնէր թափուր եպիսկոպոսութիւններու եկամուտը եւ 1682-ի վճռագիրով ինքզինքին կը շնորհէր հետեւեալ իրաւունքները. առաջին՝ քաղաքական իշխանութիւնները ամբողջական հեղինակութիւն ունէին աշխարհիկ հարցերուն մէջ. երկրորդ՝ ընդհանուր ժողովները պապէն գերիվեր էին. երրորդ՝ պապը իրաւունք չունէր Ֆրանսայի Եկեղեցիին հարցերուն միջամտելու. չորրորդ՝ պապը անսխալական չէր: 1693-ին թագաւորին եւ պապին միջեւ փոխհամաձայնութիւն մը կը կնքուէր, երբ թագաւորը եկամուտը կը վերապահէր եւ միւս չորս կէտերը կը զիջէր:

Լուի ԺԴ-ի քաղաքականության մեջ մեծ ազդեցություն կ'ունենային ազգային միասնականության առաջնահերթությունն ու յիսուսեաններուն ազդեցությունը, մանաւանդ երբ 1684-ին ան տիկին Ֆրանսուազ Մենթենոնցիի հետ ամուսնութիւն կը կնքէր: 1685-ին ան Նանթի հրովարտակը չեղեալ կը համարէր եւ բողոքականութիւնը անօրինական կը հռչակէր՝ իսկ ստպատիժներու սահմանումով: Ֆրանսա քառսային իրավիճակ մը կը պարզէր: Հազարաւոր աշխատունակ քաղաքացիներ Անգլիա, Հոլանտա, Գերմանիա եւ Ամերիկա կը գաղթէին: Բողոքական ուժերու հետ նախօրոք կնքուած բազմաթիւ դաշինքներ չեղեալ կը համարուէին եւ Ֆրանսան կը մատնէին զինուորական տկարութեան:

Յիսուսեաններու ազդեցութեան տակ թագաւորն ու պապը կը հակադրուէին ժանսէնականութեան, եւ այս եւս աղէտալի հետեւանքներ կ'ունենար: Գորնելիոս Ժանսէն (1585–1638), Իբրի եպիսկոպոս, օգոստինեան կաթոլիկ էր եւ կը պայքարէր մեղքի ու շնորհի յիսուսեան մեկնութեան դէմ: Իր գլուխ գործոց երկը՝ *Օգոստինոս*, լոյս կը տեսնէր յետ մահու՝ 1640-ին: 1642-ին այս երկը Ուրպան Ը. պապին (1623–1644) կողմէ կը դատապարտուէր, սակայն Ժանսէնի տեսակետները Ֆրանսայի խորապէս կաթոլիկ կրօնաւորական կարգերուն կողմէ մեծ համակրանք կը վայելէին, յատկապէս Փարիզի մօտ գտնուող Փոր Ռուայալ կուսանոցին մէջ: Յիսուսեաններու ամենէն ուժեղ ընդդիմացողը կ'ըլլար Պլէզ Փասքալը (1623–1662), մանաւանդ իր *Շրջանային նամակներ* երկով (1656–1657): Լուի ԺԴ. յիսուսեանները կը պաշտպանէր ժանսէնականութեան դէմ եւ կը հալածէր անոնց ընդդիմադիրները: 1710-ին Փոր Ռուայալ կուսանոցին շէնքերը փուլ կու գային: Փասգիէ Քուեսնէլ (1634–1719) ժանսէնականութեան նոր պաշտպանը կը դառնար եւ Հոլանտա կ'ապաստանէր: Անոր *Նոր կտակարանի բարոյական քննարկումներ* բարեպաշտական մեկնողական երկը (1687–1692) յիսուսեաններուն կողմէ խստիւ կը մերժուէր եւ անոնց ազդեցութեան տակ 1713-ին յատուկ կոնդակով Կղեմէս ԺԱ. պապը կը դատապարտէր (1700–1721) Քուեսնէլի 101 բանաձե-

ումները՝ հակառակ այն իրողութեան, որ անոնցմէ շատեր Օգոստինոսէ բառացի մեջբերումներ էին: Փարիզի կարտինալ Լուի Անտոն Նոէլցի (1651–1729) կը բողոքէր եւ ընդհանուր ժողով կը պահանջէր: Սակայն ընդդիմութիւնը շուտով կը շիջէր եւ կը յաղթանակէին ֆրանսական թագաւորութեան նեցուկը վայելող յիսուսեանները:

Մէկ կողմէ ժանսէնականութեան հակամարտութիւնը եւ միւս կողմէ յիսուսեաններու կաթոլիկ աւագ հոգեւորականութեան հետ ունեցած պայքարը Հոլանտայի Ութրէխտ քաղաքին մէջ բաժանում մը յառաջ կը բերէին եւ 1723-ին փոքրիկ անկախ ժանսէնեան եկեղեցի մը կը հիմնադրէին, որ մինչեւ այսօր գոյութիւն ունի: Այս եկեղեցիին արքեպիսկոպոսը Ութրէխտ կը նստի՝ իր երկու եպիսկոպոսներով՝ Հարլէմի ու Տեւենթրրի մէջ:

Յիսուսեաններու յաղթանակը եւ բողոքականներու արտաքսումը մեծ դժբախտութիւն կը դառնային Ֆրանսայի համար: Մինչ Անգլիոյ, Գերմանիոյ եւ Հոլանտայի մէջ կը տիրէր քրիստոնէական զանազանութիւն մը, Ֆրանսա կը սահմանափակուէր յիսուսեան նեղ հոռմէականութեամբ եւ արագօրէն աճող Վոլթերի ու անոր գործակիցներուն պատճառականութեամբ: Հազարաւորներ կը յարէին վերջինին եւ այս պատճառով Ֆրանսական յեղափոխութեան Եկեղեցիին հասցուցած աւերը շատ մեծ պիտի ըլլար:

ԺԸ. դարուն Եւրոպայի կաթոլիկ այլ շրջաններուն մէջ եւս Ֆրանսայի մէջ տիրող հակաչիսուսեան ոգին կ'ունենար համակիրներ: Գերմանիոյ մէջ ան կը կրէր «ֆեպրոնականութիւն» անունը, Թրիերի օգնական եպիսկոպոս Նիկողայոս Հոնթեմի (1701–1790) գլխաւորութեամբ: Աւստրիոյ մէջ ան կը կոչուէր «յովսէփականութիւն»՝ հետեւողութեամբ Յովսէփ Բ. կայսրին (1765–1790) եկեղեցական քաղաքականութեան:

ԺԸ. դարու վերջին կէսը յիսուսեաններուն մեծ աղէտ կը պատճառէր: Հակառակ իրենց կանոնագրութեան, անոնք գաղութներու մէջ վաճառականութեամբ կը զբաղէին, անոնց հանդէպ քաղաքական ժխտական կեցուածքը կը զարգանար եւ արմատական պատճառականութիւնը կը հակադրուէր անոնց:

Մանաւանդ վերջին կետը բազմաթիւ թշնամիներով կը յատկանշուէր: Փորթուկալի Յովսէփ թագաւորին (1750–1777) Փոմպալի մարզպետը՝ Սեպասթիան Յովսէփ Գարվալիօ-Մելոցի (1699–1782) պատճառականութեան ուժեղ համակիր մըն էր: Փարակուէյի մէջ յիսուսեաններ անոր քաղաքականութեան կը հակադրուէին եւ ան կը խափանէր յիսուսեաններու վաճառականական ծրագրերը: 1759-ին ան բոլոր յիսուսեանները կ'արտաքսէր փորթուկալական տարածքներէն: Տրանսայի մէջ եւս կ'աճէր հակաիսուսեան զգացումը: Տրանսական իշխանութեան տիրական դէմքը Լուսաւորութեան համակիր Շուաստլի դուքս Էթիէն Տրանսուան (1719–1785) էր, որուն ետին կը գտնուէր Լուի ԺԵ.-ի (1715–1774) սիրուհին՝ տիկին Փոմպատոր՝ Ժանն Անթուանէթ Փուասոնը (1721–1764): Տրանսայի հոգեւորականութեան մեծ մասը եւս դէմ էր յիսուսեաններուն: 1764-ին յիսուսեաններ հալածանքի ենթակայ էին Տրանսայի մէջ: 1767-ին անոնք Սպանիայէն եւ Նափոլիէն դուրս կը դրուէին: 1773-ին այս տարածքներու իշխանաւորները կը պարտադրէին, որ Կղեմէս ԺԴ. պապը (1769–1774) ջնջէր յիսուսեան միաբանութիւնը: Այս բոլոր դէպքերը ցոյց կու տային պապականութեան սկարութիւնը: Յիսուսեաններ ոչ-հռոմէական Ռուսիոյ եւ բողոքական Փրուսիոյ մէջ կը շարունակէին իրենց գոյութիւնը:

Տրանսական յեղափոխութեան մրրիկը կը ջնջէր Եկեղեցիին, ազնուականութեան ու թագաւորութեան բազմաթիւ իրաւասութիւնները: Յեղափոխական ղեկավարներ պատճառականութեամբ տոգորուած էին: Անոնք եկեղեցիները կրօնական ակումբներ կը համարէին: 1789-ին եկեղեցապատկան կալւածները ազգային սեփականութիւն կը դառնային: 1790-ին վանքերը կը փակուէին եւ հոգեւորականութեան քաղաքացիական կանոնադրութեամբ փուլ կու գար եկեղեցական նախկին կառոյցը: Իւրաքանչիւր եպիսկոպոսութիւն կը վերածուէր առանձին բաժանմունքի, եւ քահանաներուն ընտրութիւնը կը հռչակուէր համայնքներու անդամներուն իրաւասութիւնը: 1791-ի կանոնադրութիւնը կրօնական ազատութիւն կը շնորհէր:

1793-ին թագաւորին ու կաթոլիկութեան համակիրները կ'ապրստամբէին, եւ յեղափոխականներ վայրագօրէն կը հակադարձէին: Հարիւրաւոր հոգեւորականներ կը գլխատուէին: 1795-ին կրօնական ազատութիւնը դարձեալ կը հռչակուէր՝ հակառակ այն իրողութեան, որ պետութիւնը կրօնական պատկանելիութիւն պիտի չունենար: Խորքին մէջ այս բոլորը հակաքրիստոնէական զարգացումներ էին: Շնորհիւ ֆրանսական յաղթանակներուն՝ նոյն տիպի երեւոյթներ կը պարզուէին Հոլանտայի, հիւսիսային Իտալիոյ եւ Չուիցերիոյ մէջ: 1798-ին Ֆրանսան Հռոմը կը վերածէր ֆրանսական հանրապետութեան մը, եւ Պիոս Զ. պապը (1775–1799) որպէս կալանաւոր Ֆրանսա կը տարուէր եւ հոն կը վախճանէր:

1800-ի զինուորական դէպքերուն հետեւանքով Պիոս Է. (1800–1823) պապ կ'ընտրուէր: Հռոմէական եկեղեցիի կալուածները կը վերադարձուէին: Նափուէոն, թէեւ կրօնական հակում չունէր, սակայն նկատի կ'առնէր, թէ ֆրանսացի ժողովուրդին մեծամասնութիւնը հռոմէական կաթոլիկ էր, եւ ինք կրնար Եկեղեցին իր շահերուն ծառայեցնել: Այս պատճառով ալ 1801-ին պապականութեան հետ համաձայնագիր մը կը կնքէր եւ 1802-ին կը խմբագրուէին համապատասխան յօդուածներ՝ ըստ որոնց Եկեղեցին կը վերատիրանար իր կալուածներուն, պապը եպիսկոպոսներ նշանակելու իրաւունք կ'ունենար, անոնց պետութեան կողմէ անուանուելէն ետք, ծխական հոգեւորականներ եպիսկոպոսներուն կողմէ կը նշանակուէին, սակայն պետութիւնը վեթոյի իրաւունք կ'ունենար անոնց վրայ, եւ հոգեւորականներուն նիւթական վարձատրութիւնը կ'ըլլար պետական գանձանակէն: Առաւել, առանց պետութեան արտօնութեան Ֆրանսայի մէջ պապական հրահանգներ չէին գործադրուէր եւ սինոտներ չէին գումարուէր: Բողոքականներ եւս իրենց կրօնական իրաւունքներուն կը վերատիրանային, ասոնց պատուելիները եւս պետութեան արկղէն կը վճարուէին եւ ասոնց եկեղեցական կեանքն ալ պետութեան կողմէ կը տնօրինուէր: 1804-ին Նափուէոն ինքզինք կայսր կը թագադրէր, Պիոս Է.-ի հետ հարցեր կ'ունենար, 1809-ին Եկեղեցիին կալ-

ւածները կը վերագրուէր եւ մինչեւ 1814 կալանաւոր կը պահէր պապը: Նափովէնի պապականութեան հետ կնքած համաձայնագիրը աւելի քան մէկ դար ուժի մէջ կը մնար: Ան Ֆրանսայի Հռոմէական եկեղեցին պետութեան ձեռքը կը պահէր եւ միաժամանակ ֆրանսացի հոգեւորականութեան՝ պետութեան դէմ միակ պաշտպանը կը դարձնէր պապը: Հնաւանդ իրաւունքներու վերացումը նուազագոյն ազատութիւնն անգամ կը զլանար Ֆրանսայի Հռոմէական եկեղեցիին, եւ այս իրավիճակը տիրական կը մնար նաեւ ԺԹ. դարուն եւս:

Հանրապետական եւ նափովէնական ժամանակաշրջաններու պատերազմները փոփոխութիւններ կը բերէին Գերմանիոյ մէջ: 1803-ին նախկին եկեղեցական տարածքները կը բաժնուէին աշխարհիկ նահանգներու միջեւ: 1806-ին Ֆրանսիա Բ. (1792–1835) կը դադրեցնէր «սուրբ հռոմէական կայսր» տիտղոսի գործածութիւնը եւ ինքզինք միայն Աւստրիոյ կայսր կը համարէր: Սուրբ Հռոմէական կայսրութիւնը, որ խորքին մէջ երկար ատեն միայն անուանական հանգամանք մըն էր, այսպէտով կ'աւարտէր Եկեղեցիի եւ պետութեան՝ Միջին դարերու յարաբերութիւններու կապը:

1815-ին Նափովէն գահընկէց կ'ըլլար, եւ այս մէկը բազմաթիւ հետեւանքներ կ'ունենար: Հին արժէքներ տակաւին կը յամենային: Յեղափոխական նոր ժամանակաշրջանի ժամանումին կը նպաստէր վիպապաշտութիւնը, որ Միջին դարերը կը գնահատէր, սակայն ԺԸ. դարու յեղափոխական ոգին կը մերժէր: Ֆրանսուա Ռընէ Շաթոպրիանցի (1768–1848) իր *Քրիստոնէութեան ծննդոցը* (1802) երկին մէջ ցոյց կու տար, թէ կաթոլիկութիւնը ինչպէս կրնար վիպապաշտութենէն օգտուիլ եւ այս ձեւով ան կը նպաստէր կաթոլիկ արթնութեան: Պապականութիւնը եւս կ'օգտուէր այս բոլորէն եւ հարիւր տարիներու մէջ չցուցաբերած ուժականութիւնը կ'ապրէր: Այս շրջագիծին մէջ պէտք է դնել նաեւ Պիոս Է.-ի կողմէ օգոստոս 1814-ին Յիսուսեան միաբանութեան վերահաստատումը, երբ այս միաբանութիւնը անմիջապէս պապական խորհրդատուի դիրքը կը վերագրուէր եւ իր աշխուժ գործունէութեան կը նախաձեռնէր՝

առանց նախկին քաղաքական հեղինակութեան: Առաւել, ան կը նպաստէր պապական հեղինակութեան վերատիրացումին: Հռոմէական եկեղեցիի հեղինակութեան վերհաստատումին մեծապէս կ'օժանդակէր յատկապէս բարեպաշտութեան արթնութիւնը, որ մինչեւ Ի. դար եւս պիտի երկարաձգուէր:

ԺԹ. դարը կը յատկանշուէր պապական գերագահութեամբ, որ ասանդապաշտ մտաւորականներ՝ Յովսէփ Մարի Մէսթրեցիի (1754–1821), Լուի Գաբրիէլ Ամպրուազ Պոնալտցիի (1754–1840) եւ մանաւանդ Հիւկ Ֆելիսիթ Ռոպերթ Լամբնէցիի (1782–1854) կողմէ առաւել կ'ընդգծուէր: Յիսուսեաններ պապականութիւնը բոլոր ազգերէն եւ տեղական եկեղեցական իշխանութիւններէն վեր դասող իրենց տեսակետով մեծապէս կը նպաստէին այս հասկացողութեան: Պիոս Է.-ի յաջորդը՝ Լեոն ԺԲ. (1823–1829), իր նախորդին նման կը դատապարտէր աստուածաշնչական ընկերակցութիւններու աշխատանքը: Գրիգոր ԺՁ. պապ (1831–1846) թէեւ ուսումի հովանաւոր էր, սակայն կը հակադարձէր արդի ընկերային ու քաղաքական տեսակետներուն: Այս միջնադարեան մօտեցումն ու արդի մտածողութեան մերժումը ԺԹ. դարու առաջին կէսին կաթոլիկ երկիրներու մէջ կղերական եւ հակակղերական շարժումներու ծնունդ կու տային: Լամբնէցի կը փորձէր կաթոլիկութիւնն ու ազատականութիւնը ներդաշնակել մանաւանդ այն երկիրներուն մէջ, ուր կաթոլիկութիւնը փոքրամասնութիւն էր, սակայն կը դատապարտուէր Գրիգոր ԺՁ.-ի կողմէ:

Գերագահական այս մտայնութիւնը մասնայատուկ արտայայտութիւն կը գտնէր Պիոս Թ.-ի (1846–1878) պապականութեան շրջանին: Իր գահակալութեան սկիզբը ան կը նկատէր, թէ քանի որ հոգեւորականներ ստանձնած էին եկեղեցիի քաղաքական պաշտօնները, անոնց դէմ ժողովրդային յեղափոխութիւն մը կը խմորուէր, հետեւաբար ինք պարտաւոր էր քաղաքական բարեկարգութեան ձեռնարկելու. սակայն երբ այս մարզին մէջ կը ձախողէր, կը դիմէր օտար բանակներու օժանդակութեան եւ աւելի կը գրգռէր ժողովուրդին ընդդիմութիւնը: Կրօնականօրէն ան համոզուած էր, որ պապա-

կանութիւնը աստուածադիր հաստատութիւն մըն էր եւ արդի աշխարհը անոր պէտք է դիմէր իր կրօնական հարցերու բարուք լուծումին համար: Ան այս իրականութիւնը ցուցնող գործնական քայլեր կ'առնէր: Դեկտեմբեր 1854-ին, Հռոմէական եկեղեցիի եպիսկոպոսներուն հետ խորհրդակցելէ ետք ան սուրբ կոյս Մարիամի անարատ յղութեան վարդապետութիւնը կը հրապարակէր՝ հաստատելով, թէ սուրբ Կոյսը առանց ադամական մեղքի ծնած էր: Այս հարցը միջին դարերէն սկսեալ քննարկուած էր եւ ահաւասիկ ԺԹ. դարուն արդէն իսկ պապին հաստատած վարդապետութեամբ պաշտօնական հանգամանք կը ստանար:

1864-ին Պիոս Թ. սխալներու ցուցակ մը կը հրապարակէր եւ կը դատապարտէր շատ մը երեւոյթներ, որոնց դէմ էին կաթոլիկները. բայց միաժամանակ կը մերժէր ժամանակակից կեանքին հիմերը դարձած շատ մը երեւոյթներ, այսպէս՝ Եկեղեցիի եւ պետութեան բաժանումը, ոչ-կրօնական համայնքային դպրոցներու ցանցն ու կրօնական հանդուրժողութիւնը եւ կտրականօրէն կը դատապարտէր այն տեսակէտը, թէ «Հռոմի քահանայապետը պէտք է որդեգրէր եւ քաջալերէր վերջերս երեսն եկած քաղաքակրթութեան յառաջդիմութիւնն ու ազատականութիւնը»:

Պիոս Թ.-ի գահակալութեան պսակումը կը հանդիսանար Վատիկանի առաջին ժողովի գումարումը: Ժողովը կը սկսէր 8 դեկտեմբեր 1869-ին հռոմէական աշխարհի ամբողջ տարածքէն եկած մեծաթիւ ներկայացուցիչներով եւ իր ամենէն յատկանշական որոշումը կու տար 18 յուլիս 1870-ին, երբ 533 թեր եւ 2 դէմ քուէով կը հաստատէր պապական անսխալականութեան վարդապետութիւնը: Անշուշտ այս նոր վարդապետութիւնը չէր ըսեր, թէ պապին արտասանած իւրաքանչիւր խօսքը անսխալական էր. այլ ան անսխալական էր, երբ միայն պաշտօնապէս առաքելական հաւատքին յայտնութիւնը կը կատարէր: «Հռոմի քահանայապետը երբ յաթոռոյ կը խօսի, այսինքն երբ որպէս բոլոր քրիստոնէաներուն հովին ու վարդապետը, իրեն շնորհուած առաքելական գերագոյն հեղինա-

կութեամբ, տիեզերական Եկեղեցիին կողմէ որդեգրուելիք հաւատքի կամ բարոյականի վերաբերեալ վարդապետութիւն մը կը սահմանէ, Պետրոս առաքեալի յաջորդը ըլլալու հանգամանքով, ան անսխալական է այն իշխանութեամբ, որ Փրկիչը շնորհած է իրեն Եկեղեցիին շինութեան համար»: Այսպէսով պապական մենիշխանութիւնը կը հաստատուէր եւ պապը ընդհանուր ժողովէն գերիվեր կը դառնար:

Դարերու ընթացքին պապական անսխալականութեան վարդապետութիւնը մեծ ընդդիմութեան կը բախէր, յատկապէս Գերմանիոյ մէջ: Անոր ամենէն թունդ ընդդիմադիրը մինիսցի նշանաւոր պատմաբան Յովհան Յովսէփ Իգնատիոս Տոլինկըրը (1799–1890) կը դառնար, որ Եկեղեցիէն դուրս կը դրուէր, սակայն կը մերժէր հերձուած յառաջացնել: Ուրիշներ իրենց ընդդիմութիւնը հերձուածի կը վերածէին եւ Ութերեսի մէջ կը հիմնէին Հին կաթոլիկ եկեղեցին: Հին կաթոլիկներ, մանաւանդ Գերմանիոյ, Զուիցերիոյ ու Աւստրիոյ մէջ կը տարածուէին եւ անգլիախօս երկիրներու մէջ եւս ներկայութիւն կ'ըլլային:

Մինչ այդ զօրանալ կը սկսէր իտալական ազգային միասնականութիւնը: Աւստրիոյ դէմ մղուող այն պատերազմը, որուն միացած էին Սարտինիոյ թագաւորութիւնը՝ Վիկտոր Էմմանուէլ Բ.-ի (1849–1878) եւ Ֆրանսան՝ Նափոլէոն Գ.-ի (1852–1870) գլխաւորութեամբ, Յովսէփ Կարիպալտիի (1807–1882) առաջնորդութեամբ, ասոնց կը միացնէր Իտալիան եւս եւ 1861-ին պատճառ կը դառնար Վիկտոր Բ.-ի իշխանութեամբ Իտալիոյ թագաւորութեան հաստատումին, որուն նաեւ Հռոմէական եկեղեցիի նահանգներուն մեծ մասը կ'ենթարկուէր: Սկզբունքով, ֆրանսական ճնշումին հետեւանքով, Հռոմ եւ արուարձանները պիտի մնային պապին սեփականութիւնը: Սակայն 1870-ին Ֆրանսայի եւ Գերմանիոյ միջեւ ծագած պատերազմին սկիզբը, ֆրանսական բանակը կը նահանջէր: 20 սեպտեմբեր 1870-ին Վիկտոր Բ. Հռոմը կը գրաւէր, եւ քաղաքացիներուն մեծամասնութիւնը Իտալիոյ միանալու ի նպաստ կը քուէարկէր: Իտալական կառավարութեան որոշումով՝ Վատիկանը, Լաթերանն ու Գասթել Կանտոլֆոն կը դառնային

պապին սեփականութիւնը: Այսպէսով Եւրոպայի ամենահին աշխարհիկ իշխանութիւնը՝ Հռոմէական եկեղեցիի նահանգները, այլևս պատմութեան կը պատկանէին: Պիոս Թ. կը բողոքէր, ինքզինք Վատիկանի բանտարկեալը կը յայտարարէր եւ Վիկտոր Բ.-ը Եկեղեցիէն դուրս կը դնէր: Մինչեւ կէս դար՝ 1929-ին Պենիթօ Մուսոլինիի հետ կնքուած համաձայնագիրը, պապականութիւնը կը մերժէր իր աշխարհիկ ստացուածքներուն կորուստը: Սակայն այս մէկը իր առաւելութիւնները եւս կ'ունենար: Պապին հանդէպ համակրանքը կ'աճէր եւ իր կորսնցուցածներէն համեմատաբար շատ աւելի նիւթական եկամուտ կ'ապահովէր Հռոմէական եկեղեցիին: Առաւել, պապականութիւնը այլևս զերծ կը մնար աշխարհիկ իշխանութեան մը հոգերէն, որոնք արդէն միշտ ձախող վարելու դատապարտութեան ենթակայ էր: Վերջապէս, կը նպաստէր պապականութեան հոգեւոր եւ բարոյական հեղինակութեան աճումին:

Սակայն վերեւ նշեալ առաւելութիւնները շուտով ի յայտ չէին գար: Բազմաթիւ տարիներ այնպէս կը թուէր, թէ Հռոմէական եկեղեցին արդի աշխարհի ուժերուն դիմաց ինքզինք իր փակ շրջանակին մէջ կը սահմանափակէր: Օրինակ՝ Իտալիոյ մէջ Պիոս Թ. կաթոլիկներուն Իտալիոյ թագաւորութեան քաղաքական կեանքին մասնակցութիւնը կ'արգիլէր: Այս արգելքին պատճառով կը զօրանար արմատականներու եւ ընկերավարականներու դիրքը: 1870-ականներուն Հռոմէական եկեղեցին կը հակադրուէր Օթթօ Պիզմարքի եւ ինքն իր մէջ քաշուած՝ միայն իր իւրայատուկ շահերը կը հետապնդէր:

Պիոս Թ.-ի կը յաջորդէր քաղաքագետ Լեւոն ԺԳ. (1878–1903): Ան պապականութեան եւ Գերմանիոյ միջեւ ծագած հարցերը կը լուծէր, թէեւ Հռոմէական եկեղեցին կը շարունակէր փակ համայնք մը մնալ: Ան ֆրանսացի կաթոլիկներուն կոչ կ'ուղղէր նեցուկ կանգնելու Ֆրանսայի հանրապետութեան, սակայն Հռոմէական եկեղեցիին եւ պետութեան միջեւ եղող լարուածութիւնը անոր յաջորդին օրով կը հասնէր իր բարձրակէտին: Իտալիոյ մէջ ան կը փորձէր Հռոմէական եկեղեցիի

նահանգները վերստանալ, սակայն պետութեան հետ յարաբերութիւնները աւելի կը բարդանային: Միաժամանակ ապագային համար ան կարելոր քայլեր կ'առնէր: Ան աշխատաւոր դասակարգի իրաւունքներուն յատուկ ուշադրութիւն կը դարձընէր: 1891-ին հրապարակած իր «Նոր բաներու մասին» կոնդակը ընկերային արդարութեան կը նուիրէր: Ան կոչ կ'ուղղէր, որ հոգեւորականներու գլխաւորութիւնը վայելող կաթոլիկ ընկերային, բարեսիրական, տնտեսական եւ քաղաքական կազմակերպութիւններ հիմնուէին: Կաթոլիկ շարժումի այս կազմակերպութիւնները Ի. դարուն շատ ազդեցիկ կը դառնային: Լեւոն նաեւ ուսումնասէր էր, կը քաջալերէր Աստուածաշունչի ուսումնասիրութիւնը եւ Ագուինացին կաթոլիկ ուսուցումի չափանիշ կը յայտարարէր: Ան մասնագէտներուն Վատիկանի գանձերու ուսումնասիրութիւնը կ'արտօնէր, Հռոմէական եւ Ուղղափառ եկեղեցիներու միութեան համար եւս աշխատանք կը տանէր, թէեւ 1896-ին անգլիկանները անվաւեր կը հռչակէր: Ան Հռոմէական եկեղեցիի պատմութեան դժուարին օրերուն ապրած խոհական եւ եռանդուն պապ մը կ'ըլլար:

ԺԹ. դարը, ինչպէս բողոքականներուն, կաթոլիկներուն համար եւս միսիոնարական յաջողութիւններու դարը կը դառնար: Կաթոլիկ միսիոնարութեան մարդուժ պատրաստող գլխաւոր կայքը կ'ըլլար Ֆրանսան, ուրկէ մեծ մասամբ հոգեւորականներ իրենց առաքելավայրերը կը դրկուէին: Բազմաթիւ միաբանութիւններ միսիոնարութեան կը մասնակցէին: Գլխաւոր դերակատարները յիսուսեանները կը դառնային եւ ասոնց կը միանային տոմինիկեան, ֆրանչիսկեան եւ այլ միաբանութիւններ: Աշխարհականները եւս միսիոնարութեան մասնակից դարձնելու համար՝ Լիոնի մէջ 1822-ին կը հիմնուէր Հաւատքի տարածումի ընկերակցութիւնը: Աշխարհականներ ամեն օր միսիոնարութիւններուն համար կ'աղօթէին եւ շաբաթական նուագագոյնը մէկ բենի կը նուիրէին: Մինչեւ 1914 աշխարհականներու օժանդակութիւնը վայելող շուրջ 200 կազմակերպութիւններ երեւան կու գային: Միսիոնարութիւններու մարզին մէջ ԺԹ. դարու յատկանշական երեւոյթ մըն էր նաեւ

կիներու եւ մանաւանդ մայրապետներու դերակատարութեան աճը: 1870-ականներուն շուրջ 60.000 կաթոլիկ միսիոնարներուն կէտը կը բաղկանար մայրապետներու շուրջ 60 միաբանութիւններէ, իսկ դարու աւարտին 70.000 միսիոնարներուն շուրջ 53.000-ը իգական սեռին կը պատկանէր: Միսիոնարական այս շարժումը 1870-ին մէկ միլիոնէն քիչ մը աւելի հաշուող եւ 21 եպիսկոպոս ու 900 քահանայ ունեցող Հնդկաստանի կաթոլիկ փոքրամասնութիւնը կը վերաշխուժացնէր: Հնդկաչփնի մէջ, հակառակ շղթայազերծուած հալածանքներուն, 1800-ին շուրջ 300.000 հաշուող կաթոլիկները Առաջին համաշխարհային պատերազմի օրերուն շուրջ մէկ միլիոն կ'ըլլային եւ բնակչութեան շուրջ հինգ առ հարիւրը կը կազմէին: Սահարայէն հարաւ գտնուող ափրիկեան երկիրներուն մէջ բնիկ ցեղերը աւելի դիւրաւ քրիստոնէայ կը դառնային, քան պուտտայականները, իսլամներն ու հինտուները, եւ այսպէսով 1914-ին կեդրոնական Ափրիկէի մէջ մէկ միլիոնէ աւելի կաթոլիկներ կը յայտնուէին եւ շուրջ 500.000 ալ Մատակասագարի եւ Սորիթիոսի մէջ:

Պիոս Ժ. պապ (1903–1914) բազմաթիւ առումներով Լեւոն ԺԳ. պապի հակապատկերը կ'ըլլար: Լեւոն ազնուական էր, իսկ Պիոս համեստ խաւէ կը սերէր: Լեւոն մեծ քաղաքագետ եւ հեռատես էր, իսկ Պիոս հաւատացեալ հովիւ մըն էր, որուն ծովսը ամբողջ աշխարհն էր: Պիոս երկու մեծ մարտահրաւէր կը դիմագրաւէր:

Առաջինը Ֆրանսայի մէջ Հռոմեական եկեղեցիին եւ պետութեան յարաբերութիւնն էր: Հակառակ Լեւոն ԺԳ.-ի ի գործ դրած ճիգերուն՝ ֆրանսացի կաթոլիկներ գաղջ կը վերաբերէին հանրապետութեան հանդէպ եւ եկեղեցի-պետութիւն յարաբերութիւնները միշտ լարուած էին: 1901-ին պետութիւնը իր հովանին չվայելող կրօնական միաբանութիւններուն կ'արգիլէր ուսուցանել: Այն վանքերը, որոնք այս որոշումը չէին գործադրէր, 1903-ին կը զրկուէին իրենց ստացուածքներէն: 1904-ին Ֆրանսայի Էմիլ Լուպէ նախագահը Իտալիոյ թագաւորին պետական այցելութիւն կու տար: Պիոս Ժ., անվաւեր համարելով Իտալիոյ թագաւորին Հռոմի վրայ ունեցած իշխա-

նութիւնը, կը բողոքէր այս այցելութեան դէմ, որուն հակա-
դրրուելով՝ Ֆրանսա պապականութեան մէջ եղող իր դեսպանը
տուն կը կանչէր եւ կը խզէր դիւանագիտական կապերը:
Դեկտեմբեր 1905-ին ֆրանսական կառավարութիւնը Եկեղեցիի
եւ պետութեան անջատումը կ'օրինականացնէր, եւ կը դադրէին
կաթոլիկներուն եւ բողոքականներուն տրուած բոլոր պետա-
կան օժանդակութիւնները: Բոլոր եկեղեցիներն ու եկեղեցա-
պատկան կալուածները պետութիւնը կը գրաւէր եւ վարձու կու
տար պաշտամունքի այն կազմակերպութիւններուն, որոնք
պետութեան հովանիին տակ կը գտնուէին: Կալուածները
վերստանալու համար բազմաթիւ ֆրանսացի եպիսկոպոսներ
պետութեան հովանին վայելող կազմակերպութիւններ կ'ու-
զէին հիմնել, սակայն Պիոս կ'արգիլէր: Այս անել կացութեան
դիմաց եկեղեցիներ կամաւոր նուէրներու կը դիմէին, մինչեւ որ
1920-ականներուն անոնք իրաւական ճանաչում կը ստանային
Ֆրանսայի մէջ:

Երկրորդ մարտահրաւերը արդիականութեան ջատա-
գովներուն երեւումն էր: Արդի պատմական քննադատութիւնը,
աստուածաշնչական քննարկումը եւ գիտական գիտերու երե-
ւան գալը մեծ տեղ կը գրաւէին կաթոլիկ շրջանակներուն մէջ:
Բազմաթիւ կաթոլիկ մտաւորականներ կաթոլիկութեան վերա-
մեկնութիւնը կը ջատագովէին: Ասոնցմէ էին Գերմանիոյ մէջ
Հերման Շել (1850–1906), Ֆրանսայի մէջ Ալֆրետ Լուազի (1857–
1940), Անգլիոյ մէջ Գեորգ Թիրըլ (1861–1909) եւ Իտալիոյ մէջ մեծ
խմբակ մը: Արդիականութիւնը զանազան երկիրներու մէջ կը
յայտնուէր: Պիոս արդիականութեան կը հակադարձէր 1907-ին
հրապարակած «Ողբալի» հրամանագիրով եւ «Արդիական-
ներու վարդապետութեան մասին» կոնդակով: Ան արդիակա-
նութիւնը կը դատապարտէր եւ զայն ճզմելու քայլեր կ'առնէր եւ
Լուազին ու Թիրըլը կը հաղորդագրէր: Կաթոլիկութիւնը արդի
աշխարհէն իր պատեանին մէջ կը քաշուէր:

Առաջին համաշխարհային պատերազմի օրերուն, երբ
Պենետիկտոս ԺԵ. (1914–1922) պապ կ'ըլլար, կաթոլիկութիւնը
որոշ յառաջխաղացք կ'արձանագրէր: Այս մարզին մէջ կաթոլիկ

բարեսիրական կազմակերպություններ մեծ դերակատարություն կ'ունենային եւ պապականութեան բարոյական ու հոգեւոր հեղինակութիւնը կը վերահաստատէին: ԺԹ. դարուն Հռոմ մշակութային յեղափոխութեան հակառակած էր, սակայն երբ հիմա պատերազմական տագնապը ծայր առած էր, այլեւս այդ հակառակութիւնը ժամանակավրէպ կը դառնար, եւ կաթոլիկ բարեսիրական կազմակերպություններ բազմամշակութային ընկերություններու մէջ կաթոլիկութեան գործուն ներկայութիւնը տիրական կը դարձնէին:

Պիոս ԺԱ.-ի (1922–1939) կարող գահակալութիւնը աստուածաբանութեան, ծէսի եւ միսիոնարութեան բնագաւառներուն մէջ կաթոլիկութիւնը վերարթնութեան կ'առաջնորդէր: 1929-ին, Լաթերանի դաշինքով, պապը կը հրաժարէր Հռոմէական եկեղեցիի նախկին կալուածներու սեփականատիրութենէն եւ անոր փոխարէն մեծ գումար մը ու Վատիկան քաղաքի սեփականատիրութիւնը կը ստանար: Եւրոպայի մէջ արձանագրած իր նոր շահերը ամրագրելու համար՝ Հռոմէական եկեղեցին շարք մը համաձայնագրեր կը ստորագրէր պետություններու հետ, ներառեալ ֆաշիստ Իտալիոյ (1929) եւ նացի Գերմանիոյ (1933) հետ կնքուածները: Երբ այս պետութիւնները կնքուած համաձայնագրերը չէին յարգեր, Պիոս «Պետք չունինք» (1931) եւ «Աճող մտահոգութեամբ» 1937-ի կոնդակներով իր բողոքը կը բարձրաձայնէր: Աւելի ուշ Աշխարհիկ գործունէութիւն կոչուած կաթոլիկ բարեսիրական կազմակերպություններու ուժեղ պաշտպանը կը դառնար ան:

Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ Հռոմէական կաթոլիկութիւնը ԺԹ. դարուն եւ Ի. դարու սկիզբը շարունակական աճ կ'արձանագրէր շնորհիւ Ամերիկա ժամանող միլիոնաւոր ներգաղթողներու: ԺԹ. դարու սկիզբը ներքին հարցեր կը ծագէին, երբ կաթոլիկ ծովներու աշխարհական հոգաբարձուներ կ'ուզէին իրենց հովիւները նշանակել իրաւունք, որ եպիսկոպոսութեան վերապահուած էր: Այս դրութիւնը, ժամանակաւորապէս որոշ յաջողութիւն ունենալէ ետք, եպիսկոպոսներ իրենց իրաւունքին կը վերատիրանային: Այս

Ժամանակաշրջանի գլխավոր արտաքին հարցը 1840-ականներուն խնդրայարոյց իրլանտացի կաթոլիկներու ժամանումին պատճառով հակակաթոլիկ զգացումին վերաթնութիւնն էր: Մինչ այդ կաթոլիկ ծխական դպրոցները, բարեսիրական կազմակերպութիւններն ու մամուլը ամեն ջանք ի գործ կը դնէին նոր ժամանածները ներգրաւելու համար:

ԺԹ. դարու երկրորդ կեսին նոր ժամանածները արդէն իսկ տեղական Հռոմէական եկեղեցիի ամերիկանացած անդամները կը դառնային: 1852-ին Պալթիմորի մէջ գումարուած առաջին ընդհանուր ժողովը կ'ապահովէր Հռոմէական եկեղեցին շահերը եւ կը ճշդէր Ամերիկայի մէջ անոր դերակատարութիւնը: Այս օրերուն կաթոլիկները գրեթէ երկու միլիոն կը հաշուէին եւ կը հանդիսանային Ամերիկայի մեծագոյն եկեղեցական համայնքը: Այս ժամանակաշրջանի տիրական դէմքը կը դառնար Յակոբոս Կիպլնսը (1834–1921), որ 1868-ին եպիսկոպոս կը ձեռնադրուէր, 1877-ին արքեպիսկոպոս կ'ըլլար եւ 1886-ին կարտինալի աստիճանին կը բարձրանար: Ան մեծ աշխատանք կը տանէր հակակաթոլիկեան ատելութիւնը չեզոքացնելու եւ Հռոմէական եկեղեցին ամերիկանացնելու մարզերուն մէջ: Ան կը հաւատար, թէ Եկեղեցին ու պետութեան իրարմէ անջատու՛մը Ամերիկայի շահուն կը համապատասխանէր, եւ այս քաղաքականութիւնը ոզի ի բռին կը պաշտպանէր: Ան աշխատաւորներուն իրաւունքներուն պաշտպան կը կանգնէր, մանաւանդ երբ այս օրերուն մեծ թիւով գաղթականներ քաղաքներուն մէջ կը հաստատուէին: Զգալի թիւով մարդիկ կը վախնային, որ Հռոմէական եկեղեցին շատ կ'ամերիկանանար. 1899-ին այս մտավախութիւնը հաստատող «Կոչ հաճութեան» պապական ազդարագիրը կը յղուէր Ամերիկա:

Ի. դարու սկիզբը կաթոլիկութիւնը այլեւս ամերիկանացած կը նկատուէր: 1908-ին Հռոմի Հաւատքի տարածումի բաժանմունքը անոր միսիոնարական հանգամանքը չեղեալ կը համարէր: Կաթոլիկներու Առաջին համաշխարհային պատերազմի մասնակցութիւնը անոր ամերիկանացած ըլլալուն ուրիշ մէկ փաստը կը դառնար եւ տեղական զանազան ցեղերու միջեւ

եղող լարուածութիւնը կը մեղմէր: 1917-ին կազմուած Ամերիկայի Ազգային կաթոլիկ պատերազմական խորհուրդը այս մարզին մէջ մեծ ազդեցութիւն կ'ունենար: Երբ կաթոլիկներու ներկայութիւնը կը զօրանար, անոր զուգահեռ կ'աճէր բողոքականներու եւ այլ ամերիկացիներու ընդդիմութիւնը այդ ներկայութեան դէմ:

ԺԷ. ԳԼՈՒԽ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ
ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ

Արդի ժամանակներուն Արեւելքի քրիստոնեաները եւս կ'ապրէին քաղաքական շատ դժուարին պայմաններու մէջ: 1439-ի Ֆլորանսի ժողովին՝ կաթողիկոսներուն հետ առնուած որոշումները յետս կը կոչուէին Արեւելեան եկեղեցիներէն: Քիեւի Իզիտոր մետրոպոլիտը այս որոշումներուն յետս կոչումը կը յայտարարէր Մոսկուայի մէջ, եւ 1448-էն սկսեալ Ռուս եկեղեցին ինքնավար կը դառնար: Կոստանդնուպոլսոյ մէջ Կաթողիկ-Ուղղափառ միութիւնը մինչեւ Կոստանդնուպոլսոյ 1453-ի անկումը անուանապէս կը տեսէր եւ 1472-ի սինոտով կը ջնջուէր: Թուրք կայսրութիւնը կը շարունակէր ընդարձակուիլ, եւ ԺՁ. դարու կէսին, իր փառքի օրերուն, Պալքանները, Փոքր Ասիան, Հայաստանը, Վրաստանը, Եփրատի հովիտը, Սուրիան, Պաղեստինը, Եգիպտոսը եւ Ափրիկէի գրեթէ բոլոր հիւսիսային երկիրները իր իշխանութեան տակ կ'առնէր: Չանազան պատճառներով, ներառեալ քաղաքական ու զինուորական ճնշումները, բազմաթիւ քրիստոնեաներ իսլամ կը դառնային: Որպէս սուլթանին հպատակները՝ ուղղափառ հաւատացեալներ կ'իսախնքնավար համայնք կը դառնային՝ «Յոյն միլլէթ անուանումով»: Պատրիարքներ առաւել հեղինակութիւն կ'ունենային իրենց հօտին վրայ, քան քրիստոնեայ կայսրերու օրերուն եւ յաճախ իրենց հեղինակութիւնը կը շահագործէին: Անոնք սուլթաններու կողմէ ծանր տուրքերու կ'ենթարկուէին, յաճախ պաշտօնանկ կ'ըլլային եւ շարունակաբար եկեղեցիներ կորսնցնելէ ետք՝ 1603-ին, Կոստանդնուպոլսոյ Ֆանար շրջանի Սուրբ Գեորգ եկեղեցիի կողքին իրենց պատրիարքութիւնը կը հաստատուէին: Ուղղափառ եկեղեցիի այլ պետեր Կոստանդնուպոլսոյ տիեզերական պատրիարքէն կախեալ կը դառնային, թէւ Սերպիոյ եւ Պուկարիոյ եկեղեցիները որոշ ինքնավարութիւն կը վայելէին մինչեւ իրենց պատրիարքութիւններուն

վրայ բանեցուած ճնշումը 1766–1767-ին: 1461-էն սկսեալ հայերու պատրիարքը եւս յոյն ուղղափառներու պատրիարքին նման հանգամանք կ'ունենար եւ բոլոր «միաբնակները» կը ներկայացնէր յաչս պետութեան:

1453-ի Կոստանդնուպոլսոյ անկումէն ետք Մոսկուան՝ որպէս ուղղափառ մեծագոյն կայսրութիւն, կը փոխարինէր Բիւզանդական կայսրութիւնը: Կարգ մը եկեղեցականներ կ'ըսէին. «Քանի որ հին Հռոմը հերետիկոս դարձաւ եւ նոր Հռոմը թուրքերու կողմէ գրաւուեցաւ, Մոսկուան, իր ուղղափառ իշխաններով եւ հոգեւոր առաջնորդներով, երրորդ Հռոմն էր, որ բնաւ պիտի չկործանէր»: Վանքերը, ինչպէս Մոսկուայի մօտ գտնուող ԺԴ. դարուն ա. Սերգիոսի կողմէ կառուցուած Սուրբ Երրորդութիւն վանքը, բարեպաշտութեան, ուսումի ու կրօնաւորական կեանքի գլխաւոր կեդրոններ կը դառնային: Միաժամանակ կը դրսեւորուէր վանական երկու ուղղութիւն. առաջին՝ ԺԵ. դարու աւարտին մշակուած ստացուածքէ զուրկ մնալու ուղղութիւնը, որուն գլուխը կը գտնուէր Նիլ Սորսգի եւ կ'ըսէր, թէ վանականներ ոչ մէկ ստացուածք պէտք է ունենային եւ իրենք զիրենք մի միայն աղօթքի ու կատարեալ աղքատութեան նուիրէին. երկրորդ՝ ստացուածք ունենալու ուղղութիւնը, որ կը գլխաւորուէր Յովսէփ Վոլոգոլամսքցիէ եւ կը ջատագովէր այն տեսակէտը, թէ վանականներ հարստութիւն եւ կալուածներ պէտք էր ունենային, որպէսզի կարողանային իրենց ընկերային ու քաղաքական պարտականութիւնները կատարել: 1589-էն սկսեալ մետրոպոլիտներ միայն պատրիարք կ'ընտրուէին, այնպէս ինչպէս միայն մեծ դուքսեր կայսր կը դառնային:

ԺԶ. եւ ԺԷ. դարերուն Արեւելեան եկեղեցիներ կը դիմագրրաւէին կաթոլիկ եւ բողոքական ազդեցիկ միջամտութիւններ: Լուսեր եւ այլ բարեկարգիչներ ոչ-հռոմէական կաթոլիկութեան արեւելեան տարբերակը որպէս այլընտրանք կը մշակէին: Սակայն, երբ Թիւպինկընի աստուածաբանները այս ուղղութեամբ Երեմիա Բ. պատրիարքէն (1574–1584) լուսաբանութիւն կ'ուզէին, ան կ'ընդգծէր, թէ շատ մեծ տարբերութիւններ կային հեղինակութեան, հաւատքի, շնորհի եւ խոր-

հուրդներու Յոյն եկեղեցիի եւ լուսերական ուսուցումներուն միջեւ: Կիրեղ Լուգար, որ 1620–1638-ին հինգ անգամ պատրր-
 իարք կ'ըլլար, կասկածելի պայմաններու տակ բարեկարգեալ
 բնոյթ ունեղող Հաւատքի խոստովանութիւն մը կը հրապա-
 րակէր, մինչ այդ Քիւեւի մետրոպոլիտը եւ այսօրուան Լեհաս-
 տանի տարածքին հաստատուած այլ հոգեւոր առաջնորդներ
 կ'ընդունէին Ֆլորանսի ժողովին տրամադրութիւնները, որոնց
 համաձայն՝ անոնք տեղական ինքնավարութիւն եւ ծիսական
 անկախութիւն կը վայելէին, իսկ վարդապետական ու կարգա-
 պահական մարգերու մէջ կ'ենթարկուէին Հռոմի: Ռուսերէն
 «ունիա» (միութիւն) եզրին համաձայն՝ Ուքրանիոյ եկեղեցին
 ժողովրդականօրէն Հռոմի միացեալ կը կոչուէր եւ «միացեալ»
 անուանումը Հռոմի միացող այլ եկեղեցիներու համար ալ կը
 սկսէր գործածուիլ: 1632-ին Պետրոս Մոկիլա մետրոպոլիտ
 կ'ընտրուէր, եւ Քիւեւ ուղղափառութեան կը վերադառնար: Անոր
 հեղինակած *Խոստովանութիւն*-ն ու *Քրիստոնէական*-ը այս
 հակամարտութիւններուն մէջ կարեւոր տեղ կը գրաւէին եւ
 Երուսաղէմի Տոսիթէոս պատրիարքին նախագահութեամբ գու-
 մարուած 1672-ի Բեթղեհէմի սինոտի որոշումներուն մէջ մեծ
 դեր կ'ունենային: Այս երկու երկերը թէեւ իրենց խորքով ուղղա-
 փառ էին, սակայն իրենց մատուցումի եղանակով արեւմտեան
 ազդեցութիւն կը կրէին: Մոկիլայի Քիւեւի աստուածաբանական
 ակադեմիային մէջ եւս արեւմտեան ուսուցումի եղանակներ
 կ'օգտագործուէին, ուր դասաւանդութեան լեզուն փոխան յու-
 նարէնի կամ սլաւերէնի լատիներէնն էր: Ամբողջ ԺԸ. դարուն
 այն ռուս աստուածաբանական դպրոցները, որոնք Քիւեւի այս
 ուսուցումի եղանակներուն կը հետեւէին, կ'առաջնորդուէին
 նոյն սկզբունքով:

Կաթոլիկ Փորթուկալի, Ֆրանսայի, Աւստրիոյ եւ Լեհաս-
 տանի ազդեցութեամբ՝ ուրիշ միացեալ եկեղեցիներ եւս երեւան
 կու գային: 1624–1632-ին Եթովպիա Հռոմի հետ պաշտօնական
 միութեան մէջ էր: Թէեւ Հնդկաստանի մէջ Մալապարի ասորի
 քրիստոնէաները, Մենեզէս արքեպիսկոպոսի իշխանութեան
 տակ, յիսուսեան միսիոնարներու ջանքերով եւ 1599-ի Տիամ-

բերի սինտոին որոշումներով լատինականութեան կը յարէին, սակայն 1653-ին ասոնց մեծ մասը հռոմէականութիւնը կը մերժէր եւ ասորի յակոբիկեաններէ եպիսկոպոսական յաջորդականութիւն կը ստանար, որովհետեւ նախապէս նեստորականներուն կապուած էին եւ այլեւս անոնց հետ կապ հաստատելու դժուարութիւն ունէին: ԺԶ. դարուն նեստորականներէն մաս մը, որպէս քաղղեացիներ, կը միանար Հռոմի, եւ ԺԸ. դարուն ալ ասորի ուղղափառներէն մաս մը կ'ընէր նոյնը: Այլ փոքր միացեալ եկեղեցիներ եւս կը կազմուէին Եգիպտոսի, Սուրիոյ եւ Հայաստանի մէջ:

Ռուսիոյ մէջ Եկեղեցին, փորձութիւններու շրջանի պատերազմներու օրերուն, կը հանդիսանար ազգային միասնականութեան օղակը, որ կը յաջորդէր Ռուսիկ թագաւորութեան անկումին: 1612-ին Սուրբ Երրորդութիւն վանքի պաշտպանութիւնը լեհերու դէմ այս ժամանակաշրջանի դարձակէտերէն մին կ'ըլլար: 1613-ին, երբ Միքայէլ Ռոմանով նոր թագաւորութիւնը կը հաստատէր, անոր հայրը, որ պատերազմներու օրերուն պարտադրաբար վանական դարձած էր, որպէս Ֆիլարէթ պատրիարք կ'իշխէր զաւակին կողքին: Նիգոն պատրիարք (1652–1666) բարեկարգութեան կը նախաձեռնէր եւ յունարէնի հիմամբ ծիսական մատեաններու սրբագրութիւնը կը կատարէր: Նիգոն պաշտօնանկ կ'ըլլար, սակայն իր կատարած բարեկարգութիւնները ի զօրու կը մնային: Հակառակորդները հերձուած կը յառաջացնէին եւ հին հաւատացեալներ կամ բաժանարարներ կը կոչուէին: Ասոնք եկեղեցական արարողութիւնները ռուս ուղղափառ հաւատքի եւ կեանքի նախապայման կ'ընդունէին: Մեծն Պետրոսի արեւմտականացումի բարեկարգութիւնները կացութիւնը աւելի կը վատթարացնէին, եւ ռուսերը երեք խմբաւորումներու կը բաժնուէին. առաջին՝ Հին հաւատացեալները, որոնցմէ ոմանք Ռուս ուղղափառ եկեղեցիէն իրենց միացած քահանաները կ'ընդունէին եւ ասոնք ալ իրենց հերթին 1849-ին յոյն եպիսկոպոսէ մը եպիսկոպոսական յաջորդականութիւն կը ստանային, մինչ ասոնց միւս մասը քահանայութիւնը կը մերժէր եւ աշխարհականներուն կողմէ գործադ-

րելի ծեսերով կը բաւականանար. երկրորդ՝ զանազան ծայրայեղ եւ տարօրինակ խումբեր, որոնք հեթանոսական կամ հին հերետիկոսական տարրեր ունէին, ասոնցմէ ամենէն նշանատրներն էին Քանատա գաղթած տուքոպորները. երրորդ՝ ԺԹ. դարէն սկսեալ Ռուսիոյ մէջ յայտնուած զանազան բողոքական խումբերը:

Եկեղեցին պետական կառոյցին պատշաճեցնելու համար 1700-ին Մեծն Պետրոս պատրիարքութիւնը թափուր կը ձգէր եւ 1721-ին զայն կը փոխարինէր Սուրբ գերագոյն սինոտով: Սուրբ գերագոյն սինոտը կը բաղկանար ցարին կողմէ նշանակուած քանի մը եպիսկոպոսներէ, հոգեւորականներէ եւ աշխարհական քարտուղարէ մը: Պատրիարքը, որ ընդհանրապէս ցարին մրցակից կը համարուէր, այսպէսով կը դառնար ցարին ենթակայ վարչական միաւոր մը: Թէեւ Ռուս եկեղեցիին մէջ բարեպաշտութիւն, ուսում, բարեգործութիւն եւ միսիոնարութիւն կային, սակայն խոր բարեպաշտութիւնը առաւելաբար ոչ-պաշտօնական միջոցներով կը ծաւալէր: ԺՇ. դարուն հին վանական աւանդութեան վերազարթօնք մը կ'ապրէին Աթոս լեռի վանականները, որոնցմէ նշանաւոր կը դառնար Փայիզի Վելիչքովսքի (1722–1794), որ հետագային Մոլտովիա կը հաստատուէր եւ վանականութեան աւանդութիւնը Ռուս եկեղեցիին մէջ կը ծաղկեցնէր: Ռուս եկեղեցիին կողմէ սրբադասուած Թիխոն Զատոնզքի եպիսկոպոս (1724–1783) եւ Սերաֆիմ Սարովցի ճգնաւոր (մահացած՝ 1835-ին) եւս իրենց խոր բարեպաշտութեամբ կը յատկանշուէին: Հոգեւոր կեանքի առաջնորդի մը տիպարը տուած է Ֆիոտոր Տոսթոլսքի, երբ Օփթինա վանքի սրբահայր Զոզիման ներկայացուցած է իր *Քարամագով եղբայրներ*-ին մէջ:

Ազգայնականութեան, արդի իմացականութեան եւ հոգեւոր շարժումներու աճումով՝ Արեւելեան եկեղեցիներու իրենց ժողովուրդներուն հետ ունեցած ջերմ կապը կը սկսէր թուլնալ: Երբ Յունական յեղափոխութիւնը ծայր կ'առնէր Աթոս լեռի Մեկազփելաոն վանքին մէջ, ան պատճառ կը դառնար, որ 1821-ին Կոստանդնուպոլսոյ Գրիգոր Ե. պատրիարքը որպէս յոյն

ղեկավար պատրիարքարանին դիմաց կախաղան բարձրացուէր՝ հակառակ այն իրողութեան, որ ան յեղափոխութիւնը դատապարտած էր: Քաղաքական անկախութեամբ՝ Յունաստանի եկեղեցին իր իմացական կեանքը կը վերանորոգէր եւ կը ստանար եկեղեցական ինքնավարութիւն, որ 1851-ին Կոստանդնուպոլսոյ պատրիարքին կողմէ կը հաստատուէր: Նման քայլերու կը դիմէին Սերպիան, Ռումանիան եւ Պուլկարիան: 1870-ին պուլկարացի հոգեւորական փոխանորդը իր հեղինակութիւնը կը տարածէր բոլոր պուլկարներուն վրայ, ներառեալ Իսթանպուլի պուլկարները: Այս քայլը գերազգայնականութեան ժամանակակից հերետիկոսութիւն կը նկատուէր եւ 1872–1945-ին յոյներուն ու պուլկարներուն միջեւ հերձուած կը յառաջացնէր: Պալքաններուն մէջ Եկեղեցին կը շարունակէր ազգայնական հարցերուն միջամուխ ըլլալ:

Սուրիոյ մէջ, յոյն հոգեւորականներու իշխանութեան տակ գտնուող արաբ քրիստոնէաներ անհնազանդ քայլերու կը դիմէին: 1898-էն սկսեալ Անտիոքի ասորի պատրիարքները Դամասկոս հաստատուած էին, սակայն Երուսաղէմի պատրիարքութիւնը մեծ մասամբ յոյներէ բաղկացած Սուրբ Յարութիւն տաճարի միաբանութեան ձեռքին տակ կը գտնուէր: Միսիոնարութիւնը կը նպաստէր Մերձաւոր Արեւելքի արդի կրթութեան, սակայն կը պատճառէր յաւելեալ եկեղեցական բաժանումներ: Արեւելեան կաթողիկոսներու ծառայութիւնը կը կատարուէր լատին միսիոնարներով, եւ բողոքականներ կը թափանցէին յոյներու, հայերու, ասորիներու ու ղպտիներու մէջ: Հնդկաստանի մէջ Անգլիկան միսիոնարներ ասորիներու մէջ կը թափանցէին եւ պատճառ կը դառնային Սուրբ Թովմաս եկեղեցի անունով ծանօթ աւետարանական թելի մը ստեղծումին:

Արեւմտականացումի հակազդեցութիւնը, կրօնական ու հակակրօնական ձեւերու տակ, պատճառ կը դառնար, որ աւանդական ուղղափառութիւնը առաւել ազդու եւ այժմեական արտայայտութիւն գտնէր: Արեւմտականացած եւ խիստ ուղղափառ հոսանքներ Պալքաններու եւ Ռուսիոյ մէջ իրարու կը բախէին: ԺԹ. դարու աւարտին Յոյն եկեղեցիին մէջ տիրական

կը դառնար Ափոսթոլոս Մաքրաքիս (1831–1905) աշխարհական աստուածաբանը: Միաժամանակ քարոզութեան, կրօնական դաստիարակութեան եւ ընկերային ծառայութեան կամաւոր կազմակերպութիւններ եւս կը կազմուէին. ասոնցմէ ամենանըշանաւորը կ'ըլլար աստուածաբանութեան կուսակրօն հոգեւորական եւ աշխարհական շրջանաւարտներու Զոյ միաբանութիւնը: Ռուսիոյ մէջ սլաւախօսները կը նպաստէին ուղղափառութեան հոգեւոր ականդութեան ծաղկումին՝ հակադարձելով պաշտօնական Եկեղեցիի անտարբերութեան եւ բարեկարգիչներու ու յեղափոխականներու աշխարհիկ ազդեցութեան, յատկապէս Նիկողայոս Ա.-ի օրերուն՝ 1825–1855-ին: Աշխարհական Աղեքսանդր Խոմեաքով (1804–1860) այս շարժումին առաջին ղեկավարը կ'ըլլար: Իրեն կը միանային նաեւ կրօնական հետաքրքրութիւններ ունեցող վիպասան Ֆիոտոր Տոսթոեւսքի (1821–1881) եւ իմաստասէր Վլատիմիր Սոլովիէեւ (1853–1900): Վերջինս, հոգեւոր միութենէ մղուած, Ուղղափառ եկեղեցիի մէջ մնալով հանդերձ կը յարէր կաթոլիկութեան: Ան կը հաւատար, որ ռուս ուղղափառութիւնը կը ցոլացնէր միութիւնն ու համայնքը, որ Աստուծոյ սէրէն մղուած միութեամբ եւ ազատութեամբ կը յատկանշուէր: Ան՝ որպէս միսթիք, իմաստասէր, աստուածաբան, մարգարէ եւ բարոյախօս, քրիստոնէական հաւատքը այնպէս կը մեկնէր, որ անկէ հեռացածներ կը յուսային, որ մարդկութիւնը կրնար վերածնիլ անով: Ռուս եկեղեցիին կիսապաշտօնական միսիոնարական աշխատանքը կը զօրացնէր կայսրութիւնը եւ կը տարածէր անոր ազդեցութիւնը, ինչպէս, օրինակ, Կայսերական պաղեստինեան ընկերակցութեան եւ Աթոս լեռի ռուսական վանականութեան ճամբով: Միաժամանակ ռուս միսիոնարութիւնը Ալասքա կը հասնէր եւ մինչեւ 1867 կը ծաղկէր Թոքիոյի Նիկողայոս եպիսկոպոսին (1860–1912) առաջնորդութեամբ, որ նաեւ ուղղափառութեան հիմնադիրը կ'ըլլար Ճաբոնի մէջ:

Ի. դարու պատերազմներն ու յեղափոխութիւնները յաւելեալ փոփոխութիւններ եւս կը պատճառէին: Պալքանեան պատերազմներէն ետք «Նոր Յունաստանի» թեմերուն մեծա-

մասնությունը Կոստանդնուպոլսոյ իրաւասութենէն կը փոխան-
ցուէր Աթէնքի իրաւասութեան: Աւելի ուշ Ալպանիոյ եկեղեցին
ինքնավար կը դառնար: Առաջին համաշխարհային պատերազ-
մէն ետք սերպերն ու ռումանացիները, որոնք Աւստրիա-
Հունգարիոյ մէջ տարբեր իրաւասութիւններու տակ կը
գտնուէին, իրենց երկիրներու բնիկ եկեղեցիները կը դառնային.
սերպ պատրիարքութիւնը 1920-ին կը հաստատուէր, եւ Ռու-
մանիոյ եկեղեցին 1925-ին պատրիարքութեան կը բարձրանար:
Տիեզերական պատրիարքին ուղղակի իրաւասութիւնը Իսթան-
պուլի անմիջական հարեւանութեամբ կը սահմանափակուէր,
երբ 1923-ին Յունաստան եւ Թուրքիա բնակչութեան փոխանա-
կում կը կատարէին: Սակայն Եւրոպայի ու Ամերիկայի յոյն
ծուխերը անոր իրաւասութեան տակ կը մնային եւ անոր
Ուղղափառ այլ գահակալներուն յարաբերաբար ունեցած
դժուար սահմանելի նախամեծարութիւնը երբեմն կ'ընդգծուէր:
1920-ականներուն յոյներու, ռումանացիներու ու այլոց կողմէ
Գրիգորեան տոմարի որդեգրումով ստեղծուած զգայնութիւն-
ները աստիճանաբար կը փարատէին եւ միութիւնը պահպա-
նելու համար բոլոր ուղղափառներ կը շարունակէին Յուլեան
տոմարով տօնել Սուրբ գատիկը:

Ուղղափառ եկեղեցին իսլամական հարուածին համա-
զօր հարուած մը կը ստանար, երբ Ռուսիոյ ուղղափառ կայս-
րութիւնը կը կործանէր եւ մարքսեան պետութիւնը կը հիմնուէր:
1917-ին Մոսկուայի մէջ գումարուած եկեղեցական ժողով մը
ռուս պատրիարքութիւնը կը վերահաստատէր եւ կը վերասա-
հմանէր Եկեղեցիին առաքելութիւնը: Սակայն համայնավար
իշխանութիւնը շուտով կը սկսէր հալածել Եկեղեցին: Ան կրօ-
նական կեանքը հանդուրժելու եւ հակակրօնական քարոզ-
չութիւն կատարելու սկզբունքով կը գործէր: Բազմաթիւ եպիս-
կոպոսներ եւ քահանաներ կը բանտարկուէին կամ կ'աք-
սորուէին, վանքեր եւ եկեղեցիներ կը փակուէին, Եկեղեցիին
գործունէութիւնը կը խափանուէր եւ Կենդանի եկեղեցի
կոչուած ծայրայեղ բարեկարգութիւն ջատագովող խմբակներ
կը քաջալերուէին եւ Եկեղեցին առաւել եւս կը տկարացնէին:

Մակայն Եկեղեցին հաւատացեալներու սիրտերուն մէջ կ'ապրէր եւ եկեղեցական առաջնորդներ կը յաջողէին որոշ կազմակերպեալ աշխատանք կատարել: 1923-ին Թիխոն պատրիարք իր քաղաքական հաւատարմութիւնը կը յայտնէր իշխանութեան եւ մինչեւ իր վախճանումը՝ 1925, որոշ ազատութիւն կը վայելէր: Անոր կը յաջորդէր տեղապահ Սերգիոս մետրոպոլիտը: Հակակրօնական ճնշումներն ու համեմատաբար հանդուրժողական ոգին փոխն ի փոխ տիրական կը դառնային, մինչեւ որ Ռուս ուղղափառ եկեղեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին անվերապահ հաւատարմութիւն կը յայտնէր իշխանութեան եւ աւելի հեզասահ յարաբերութիւն կը մշակէր անոր հետ: 1943-ին պատրիարքական ընտրութիւնը կ'արտօնուէր եւ Աղեքսանդր (1944–1970) ու Պիմէն (1971–1990) պատրիարքներու գահակալութեան օրերուն Ռուս եկեղեցին բնական գործունէութիւն կ'ունենար: Կրօնական մարզի մէջ պաշտամունքի եւ տուներու մէջ ուսուցումի արտօնութիւն կը տրուէր եւ Սուրբ Երրորդութիւն վանքը եւ Լենինկրատի ու Քիելի մէջ մի քանի վանքեր, կուսանոցներ, դպրեվանքեր ու աստուածաբանական ակադեմիաներ կը բացուէին: Եկեղեցին ու եկեղեցական առաջնորդներ քաղաքական հաւատարմութիւն դրսեւորելու կը պարտաւորուէին եւ մարքսեան դեկավարներ թէեւ տակաւին կը յուսային, որ կարճ ժամանակէն կրօնքը պիտի շիջէր, սակայն կը նուազեցնէին իրենց յարձակողապաշտ մօտեցումը: 1801-ին, երբ Վրաստանը Ռուսիոյ կը կցուէր, Վրաց եկեղեցին Ռուս եկեղեցիին մաս կը կազմէր,– ահա այսպիսի մթնոլորտի մէջ գտնուող եկեղեցական դպրոցի մը մէջ կ'ուսանէր Յովսէփ Ստալին,– սակայն 1917-ին ան դարձեալ ինքնավար կը դառնար եւ իր կաթողիկոս-պատրիարքով կ'օժտուէր եւ 1944-ին որպէս ինքնավար եկեղեցի կը ճանչցուէր Ռուս եկեղեցիին կողմէ: Սովետական Միութեան միւս եկեղեցիները եւս՝ հին հաւատացեալները, հայերը, ռուս մկրտչականներն ու Պալթեան երկիրներու լուտերականները կը պարզէին Ռուս եկեղեցիին իրաւական վիճակը: 1920-ականներուն նախկին ռուսական եւ ապա անկախացած

տարածքներուն մէջ գտնուող եկեղեցիները ինքնավար կը դառնային Տիեզերական պատրիարքութեան օրհնութեամբ: Այս իրավիճակը չէր շարունակուեր Էսթոնիոյ ու Լատվիոյ մէջ, սակայն կը վերապրէր Լեհաստանի ու Ֆինլանտիոյ մէջ: Ռուսական յեղափոխութեան ընթացքին կարճ անկախութիւն մը վայելած Ուքրանիոյ մէջ կը հիմնուէր ինքնագլուխ Եկեղեցի մը, որուն իշխանութիւնը նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Քանատայի ուքրանացիներուն վրայ կը տարածուէր:

Ռուսիայէն դուրս ապրող ռուս ուղղափառները կը բաժնուէին երեք գլխաւոր խումբերու.

ա. Անոնք, որ եկեղեցական հարցերու մէջ ռուս պատրիարքաբարանին հաւատարիմ կը մնային:

բ. Անոնք, որ Քիւեի Անտոն մետրոպոլիտին գլխաւորած քստրեալ եպիսկոպոսներու առաջնորդութեան կը հետեւէին՝ պատճառաբանելով, թէ Թիխոն պատրիարք եւ անոր յաջորդները Սովետ իշխանութեան ստրուկներն էին, եւ Ռուսիայէն դուրս գտնուող Ռուս ուղղափառ եկեղեցին էր աւանդական հարազատ Եկեղեցին: Ռուսիայէն դուրս գտնուող Ռուս ուղղափառ եկեղեցիի սինտոնին կեդրոնատեղին երկար ատեն Եուկուալաիոյ Քարլովցի քաղաքը կը գտնուէր, ապա Միւնիխ կը փոխադրուէր եւ ի վերջոյ Ամերիկայի Միացեալ Նահանգներ կը հաստատուէր:

գ. Անոնք, որ քաղաքականութենէ խորշելով եւ եկեղեցական կեանքի ինքնավարութեան հետեւելով հանդերձ հաւատարիմ կը մնային ռուս ուղղափառութեան:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու ռուս ուղղափառներուն մեծամասնութիւնը այս երրորդ խումբին կը պատկանէր, սկզբնապէս «Չիւսիսային Ամերիկայի Ռուս ուղղափառ յոյն կաթոլիկ եկեղեցի» կը կոչուէր եւ 1965-էն սկսեալ՝ «Ամերիկայի ուղղափառ եկեղեցի»: Արեւմտեան Եւրոպայի ռուս ուղղափառներուն զգալի մէկ տոկոսը եւս այս Եկեղեցիին կը պատկանէր եւ իր աստուածաբանական ու եկեղեցական կեանքը 1925-ին Փարիզի մէջ հիմնուած Սուրբ Սերգիոս ակադեմիային շուրջ կը կազմակերպէր, որուն երկար տարիներու տնօրէնը

կ'ըլլար նշանաւոր աստուածաբան Սերգիոս Պուլկաբով (1871–1944):

Միւս եկեղեցիները կը պարզէին հետեւեալ պատկերը.

Նեստորական կամ Ասորական եկեղեցին, որ ԺԹ. դարուն առաւելաբար Պարսկաստանի հիւսիս-արեւմտեան լեռնային շրջանին մէջ կը գտնուէր, երկու Համաշխարհային պատերազմներու ընթացքին մեծապէս կը տառապէր եւ ընդհանրապէս Սուրիա կ'ապաստանէր. ժառանգական հանգամանք կրող պատրիարքական ընտանիքը կ'աքսորուէր, եւ Շիմուն ԻԳ. կաթողիկոս իր աթոռը Գալիֆորնիա կը փոխադրէր: Մալապարի ասորիները 1910-ին նոր բաժանում մը կը դիմագրրաւէին, երբ պատրիարքական խմբակը ասորիներու իշխանութիւնը կ'ընդունէր իսկ կաթողիկոսական խմբակը ամբողջական ինքնավարութեան կը ձգտէր:

Եթովպիոյ ուղղափառ եկեղեցին, Հայլէ Սելասի կայսրին գահակալութեան օրերուն, Ղպտի ուղղափառ եկեղեցին անկախութիւն ձեռք կը ձգէր եւ Ազգային եկեղեցի դառնալով իր ժողովուրդին կրթական ու այլ կարիքներուն կը հասնէր:

Հայ ուղղափառ եկեղեցին 1915–1916-ի ջարդերէն ու աքսորներէն յարութիւն կ'առնէր եւ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, Սահակ Բ. կաթողիկոսի առաջնորդութեամբ, պարտադրաբար Կիլիկիայէն Լիբանան կը փոխադրուէր:

Հետեւեալ պատրիարքութիւնները կը ներկայանային «Ուղղափառ եկեղեցիներ» բնորոշումին տակ. Կոստանդնուպոլիս, Աղեքսանդրիա (որուն հաւատացեալներուն թիւը կ'աճէր Յունաստանէն եւ Սուրիայէն Եգիպտոս ապաստանողներով), Անտիոք, Երուսաղէմ, Ռուսիա, Սերպիա, Ռումանիա, Պուլկարիա, Վրաստան, Կիպրոս (որուն եպիսկոպոսները գործուն մասնակցութիւն կը բերէին Յունաստանի հետ միացումի ազգային շարժումին), Յունաստան, Ֆինլանտիա, Ալպանիա, Չեխոսլովաքիա եւ Սինա լեռի վանքը: 1917-էն առաջ Ռուս ուղղափառ եպիսկոպոսութիւնը, որ 1872-ին Ալաքսայէն Սան Ֆրանսիսքօ եւ 1905-ին Նիու Եորք կը փոխադրուէր, Ամերիկայի միակ կազմակերպուած նուիրապետութիւնն էր եւ բացի յունա-

կանեն՝ կ'իշխեր միւս բոլոր ազգային ծուխերուն վրայ, մինչ յոյներ 1922-ին Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան հովանին վայելող արքեպիսկոպոսութիւն կը հաստատէին: 1920-էն սկսեալ ասորի, սերպ, ռումանացի, պուկար եւ ալպանացի ուղղափառներ իրենց ամերիկեան թեմերը կը հիմնէին: Հոգեւորական եւ աշխարհական ամերիկածին նոր սերունդը ուղղափառութեան հետեւորդ կը դառնար Ամերիկայի մէջ, յոյներու եւ ռուսերու պարագային՝ նաեւ դպրեվանքերու մէջ դաստիարակւելով: Անգլերէնը կը սկսէր թէ՛ ուսուցումին եւ թէ՛ ծիսական կեանքին մէջ աստիճանաբար առաւել գործածելի դառնալ, եւ զանազան Ազգային ուղղափառ եկեղեցիներ գործակցութեան եզրեր կը գտնէին: Հայ ուղղափառ եւ նեստորական ու ասորի ուղղափառ թեմեր եւս կը հաստատուէին Ամերիկայի մէջ:

Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Եկեղեցիներու խորհուրդին մէջ ուղղափառութեան նշանաւոր ներկայացուցիչը կը դառնար աստուածաբան, պատմաբան, գրագէտ եւ բանախօս Գեորգ Ֆլորովսքի (1893–1979): Ան Ռուսիոյ մէջ ծնած էր եւ աւելի քան 20 տարի դասաւանդած էր Փարիզի Ուղղափառ աստուածաբանական կաճառին մէջ: 1948-ին ան Ամերիկայի Միացեալ Նահանգները կը հաստատուէր եւ կը դասախօսէր Սուրբ Վլատիմիր ուղղափառ դպրեվանքին, Եուններն աստուածաբանական դպրեվանքին, Գոլումպիա ու Հարվըրտ համալսարաններուն եւ Փրինսթըն աստուածաբանական դպրեվանքին մէջ:

Արեւելեան կաթոլիկներու մեծագոյն խմբակը Կալիսիոյ շրջանի (նախապէս Աւստրիոյ պատկանած եւ 1918-էն ետք Լեհաստանի վերադարձուած) եւ անոր առնչուած կարպաթոռուս (նախապէս Հունգարիոյ պատկանած եւ 1918-էն ետք Չեխոսլովակիոյ վերադարձուած) կաթոլիկներն էին: Ասոնց ռուսական Լեհաստանի մէջ գտնուող կաթոլիկ թեմերը 1840-ին եւ 1875-ին կը վերամիանային Ռուս ուղղափառ եկեղեցիին: Կալիսիոյ ուրբանացիներուն ամենէն նշանաւոր դէմքը կը հանդիսանար Անդրէաս Շեփթիցքի, որ 1900–1944-ին Լվովի մետրոպոլիտը կ'ըլլար եւ պապին ենթակայ արեւելեան կաթո-

լիկներուն մէջ կենդանի կը պահէր արեւելեան քրիստոնէական բարեպաշտութիւնը: 1946-ին, երբ սովետներ այս տարածքները կը գրաւէին, ուքրանական եւ կարպաթո-ռուսական կաթոլիկները կը վերամիանային Մոսկուայի ուղղափառ պատրիարքութեան, եւ Ուքրանական կաթոլիկ եկեղեցին կը դառնար Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ Քանատա հաստատուած կալիսիացի ու կարպաթո-ռուս գաղթականներուն նուիրապետութիւնը:

Արեւելեան եկեղեցիներ, ապաւինելով հանդերձ իրենց աւանդութեան պատմականութեան եւ հարազատութեան, այլ եկեղեցիներու հետ բարեկամական յարաբերութիւններ կը մշակէին մինչեւ այն ատեն, ուր անոնք հակամարտութիւն ու դաւանափոխութիւն չէին դրսեւորեր: ԺԷ. դարէն սկսեալ անոնք զանազան տեսակի գործակցութիւն կ'ունենային մանաւանդ անգլիկաններուն եւ 1870-էն ետք Հին կաթոլիկներուն հետ: Անոնք միջեկեղեցական շարժումին կը մասնակցէին Սթոք-հոլմի (1925) եւ Լոզանի (1927) համագումարներէն սկսեալ՝ դրականօրէն արձագանգելով Կոստանդնուպոլսոյ ուղղափառ պատրիարքութեան 1920-ին հրապարակած կոնդակին, որ եկեղեցիներուն գործնական հարցերու մէջ մերձեցումի կոչ կ'ուղղէր: 1920-ականներուն եւ 1930-ականներուն Ռուս ուղղափառ եկեղեցին քաղաքական արգելքներու պատճառով չէր կրնար միջեկեղեցական շարժումին մասնակցիլ: 1948-ին, երբ Ռուս ուղղափառ եկեղեցիին ինքնագլխութեան 500-ամեակը կը տօնւէր Մոսկուայի մէջ եւ բազմաթիւ միջեկեղեցական հիւրեր ներկայ կը գտնուէին, կացութիւնը դրական փոփոխութիւն կ'արձանագրէր, սակայն ներքին հակազդեցութիւնը խիստ կ'ըլլար, եւ Վատիկանի, Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի ու անգլիկաններու հետ գործակցութիւնը կասկածելի կը դառնար: 1961-ին Ռուս ուղղափառ եկեղեցին Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին կ'անդամակցէր եւ այսպէսով գրեթէ բոլոր Ուղղափառ եկեղեցիները գործուն մասնակցութիւն կ'ունենային միջեկեղեցական շարժումին մէջ:

ԺԸ. ԳԼՈՒԽ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ԱՃՈՒՄԸ

Եկեղեցիի պատմությունը միշտ ենթակայ եղած է տարածումի եւ համակեցութեան մղիչ ուժերուն: ԺԹ. դարուն, մանաւանդ բողոքականներուն մէջ, տարածումը տիրական եր, սակայն Ի. դարուն համակեցութիւնը զայն կը փոխարինէր եւ զանազան ձեւերով արտայայտութիւն կը գտնէր: «Միջեկեղեցական շարժում» եզրով կը հասկնանք այն բոլոր ճիգերը, որոնք քրիստոնէական վերամիութեան կ'առաջնորդէն: Բողոքականներուն կողմէ նախաձեռնուած միջեկեղեցական շարժումին Ուղղափառ եկեղեցիներ եւս կը սկսէին մասնակցիլ: Հռոմէական եկեղեցին երկար ատեն չէր մասնակցեր միջեկեղեցական շարժումին: 1928-ին հրապարակուած «Մահկանացուներուն միտքը» պապական կոնդակին համաձայն՝ քրիստոնէական միութիւնը կ'իրագործուէր միայն այն ատեն, երբ բաժանեալներ վերադառնային Քրիստոսի միակ ճշմարիտ Եկեղեցին՝ ընդունելով Հռոմի քահանայապետին անսխալականութիւնը: Այս կեցուածքը փոփոխութեան կ'ենթարկուէր, երբ Յովհաննէս ԻԳ. պապ Վատիկանի երկրորդ ժողովը կը հրաւիրէր:

Միջեկեղեցական շարժումը թէեւ Ի. դարուն աւելի զգալի կը դառնար, սակայն անոր արմատները մինչեւ ԺԶ. դար կ'երթային: ԺԹ. դարուն ան վերագարթօնք կ'ապրէր, երբ բողոքական զանազան եկեղեցիներ ներյարանուանական կազմակերպութիւններ կը գոյացնէին եւ Ի. դարուն կարգ մը եկեղեցիներու միութեան գործնական քայլերու կը դիմէին:

Այս մարզին ամենէն կարեւոր նախաձեռնութիւնը կ'ըլլար միսիոնարական շարժումը: Միսիոնարութեան մէջ յարանանական մրցակցութենէն խուսափումն ու աշխատանքի համադրութիւնը հրամայական կը դառնային: ԺԹ. դարու միսիոնարութիւնը կը բնորոշուէր ներյարանուանական գործակցութեամբ, երբ զանազան միսիոնարական կազմակերպութեան

իւններ կը վայելէին բոլոր հաւատացեալներուն զօրակցութիւնը: Ծառայութեան դաշտին մէջ տարբեր տիպի հաւաքներ եւ քննարկումներ արդէն երկար ժամանակէ ի վեր գոյութիւն ունէին: Այսպիսի առաջին հանդիպումը տեղի կ'ունենար 1854-ին Նիու Եորքի եւ Լոնտոնի մէջ: Ութերորդ հանդիպումը Էտինպըրկի 1910-ի Միսիոնարութեան համաշխարհային համագումարն էր, որ նախորդներէն կը տարբերէր որովհետեւ ներկաները միսիոնարութեամբ հետաքրքրուած անհատներ չէին, այլ զանազան միսիոնարական կազմակերպութիւններու պաշտօնական ներկայացուցիչներն էին: Համագումարին յաջողութիւնը կը կայանար նաեւ անոր մէջ, որ նախապէս կատարուած ուսումնասիրութիւններ հրատարակուելով կը բաժնուէին համագումարի մասնակիցներուն: Առաւել, նոր եկեղեցիներու միսիոնարներ գործուն մասնակցութիւն կ'ունենային եւ Ի. դարու միսիոնարութիւնը առաջնորդելու կոչուած անձեր միջեկեղեցական շարժումին նոր ուղղութիւն կու տային:

Էտինպըրկի համագումարը միջեկեղեցական շարժումին պատմական դարձակետը կ'ըլլար: Համագումարէն բխած յանձնախումբը 1921-ին կը վերածուէր Միսիոնարութեան համաշխարհային խորհուրդի, որուն առաջին ատենապետը կ'ըլլար Էտինպըրկի համագումարի նախագահ՝ ամերիկեան մեթոտական աշխարհական Յովհաննէս Ռալֆի Մոթ (1865–1955): Խորհուրդին կ'անդամակցէին տեղական եւ շրջանային ներյարանուանական միսիոնարական կազմակերպութիւններ, ինչպէս՝ 1885-ին հիմնուած Գերման աւետարանական միսիոնարութիւններու յանձնախումբը, 1893-ին հիմնուած Հիւսիսային Ամերիկայի արտաքին միսիոնարութիւններու յանձնաժողովը եւ 1912-ին հիմնուած Մեծն Բրիտանիոյ եւ Իրլանտայի միսիոնարական ընկերակցութիւններու յանձնաժողովը: Միսիոնարութեան համաշխարհային խորհուրդը կը քաջալերէր տեղական քրիստոնէական խորհուրդներու կազմութիւնը, յատկապէս Երիտասարդ եկեղեցիներ ունեցող երկիրներու մէջ, ինչպէս՝ Հնդկաստան, Չինաստան, Ճաբոն, Գոնկօ եւ Մերձաւոր Արեւելք: Միսիոնարական աճող գործակցութեան այս ժամա-

նակաշրջանը միաժամանակ միսիոնարական ծառայութեան ապակեդրոնացումով կը յատկանշուէր, երբ Ի. դարու կէսին բողոքական միսիոնարութիւններու անձնակազմին ինիսուն տոկոսը տուեալ երկիրին հաւատացեալներէն կը բաղկանար: 1928-ի Երուսաղէմի եւ 1938-ի Մատրասի Միսիոնարութեան համաշխարհային խորհուրդի համաժողովներուն Երիտասարդ եկեղեցիներու ներկայացուցիչները տիրական եւ գործուն մասնակցութիւն կ'ունենային:

Աճող միջեկեղեցական գործունէութեան երկրորդ բնագաւառը կ'ընդգրկէր երիտասարդութեան ծառայութիւնն ու քրիստոնէական դաստիարակութիւնը: Գեորգ Ուիլերմզի (1821–1905) 1844-ին Լոնտոնի մէջ հիմնած Երիտասարդ տղամարդերու քրիստոնէական ընկերակցութիւնը ոչ-յարանուանական միջեկեղեցական գործակցութեան ռահվիրան կը դառնար: Այս ընկերակցութեան միջազգային մարմինը կը հիմնուէր 1855-ին: Նոյն տարին կը հիմնուէր Երիտասարդ կիներու քրիստոնէական ընկերակցութիւնը, որուն միջազգային մարմինը կը կազմուէր 1894-ին: Երիտասարդական կարեւոր շարժում մը կ'ըլլար նաեւ Արտաքին միսիոնարութիւններու ուսանողներու կամաւոր շարժումը, որուն հիմերը կը դրուէին 1886-ին Մաունթ Զերմոնի մէջ (Մեսէչուսէց, ԱՄՆ), Տուայթ Լիմըն Մուտիի առաջնորդած ամառնային համագումարներէն մէկուն ընթացքին: Մոթ այս շարժումին կազմակերպիչն ու երկար տարիներու ատենապետը կ'ըլլար, որուն առաջնորդութեամբ 1895-ին Շուէտի մէջ կը հիմնուէր Ուսանողներու համաշխարհային քրիստոնէական ընկերակցութիւնը: Զանազան երկիրներու մէջ հիմնուած երիտասարդական քրիստոնէական շարժումները հետագային մեծ նպաստ կը բերէին միջեկեղեցական կեանքին մէջ բանալի դերակատարութիւն ունեցած ղեկավարներու կազմաւորումին: Այս շարժումները ընդհանրապէս աշխարհականներու շարժումներ էին: 1889-էն սկսեալ Համաշխարհային կիրակնօրեայ դպրոցներու համաժողովներ կը գումարուէին: 1907-ին կը հիմնուէր Համաշխարհային կիրակնօրեայ դպրոցներու կազմակերպութիւնը, որ 1924-ին տեղական եւ ներյա-

րանուանական քրիստոնեական դաստիարակութեան կազմակերպութիւններու համախմբումի կը վերածուէր եւ 1947-ին Քրիստոնեական դաստիարակութեան համաշխարհային խորհուրդ ու 1950-ին Կիրակնօրեայ դպրոցներու ընկերակցութիւն կը վերանուանուէր:

Միջեկեղեցական գործունէութեան երրորդ մարզը կը վերաբերէր ընկերային ծառայութեան եւ կը բնորոշուէր որպէս Կեանք եւ գործ: Այս մարզին ռահվիրաներէն մին կ'ըլլար Սամուէլ Սիմոն Շըմաքըր, որ 1838-ին իր «Եղբայրական կոչ ամերիկեան եկեղեցիներուն – առաքելական սկզբունքներուն վրայ հիմնուած ընդհանրական միութեան ծրագիր»-ը կը հրատարակէր: Ըստ այս ծրագրին՝ իւրաքանչիւր յարանուանութիւն իր ինքնութիւնը պահելով հանդերձ պիտի դառնար առաքելական բողոքական Եկեղեցիի ճիւղերէն մէկը: Թէեւ ժամանակը այս տեսակետին ի նպաստ չէր, սակայն այս մտածումը միութեան ճամբուն վրայ նոր երակ մը կը բանար: Միութեան կազմակերպչական արտայայտութիւններէն մին կը դառնար 1846-ին Լոնտոնի մէջ կազմուած Աւետարանական միութիւնը, որ համաշխարհային համագումարներ կը կազմակերպէր եւ աւետարանական տեսակետները կը տարածէր: Ան մանաւանդ գործուն մասնակցութիւն կ'ունենար կրօնական ազատութեան ջատագովութեան մէջ: 1867-ին կը հիմնուէր Աւետարանական միութեան ամերիկեան մասնաճիւղը, որուն ամենէն նշանաւոր քարտուղարը կ'ըլլար Ճոզիա Սթրոնկ (1847–1916), որ 1898-ին իր պաշտօնէն կը հրաժարէր եւ Ամերիկայի Քրիստոսի եկեղեցիներու խորհուրդի կազմութեան կը նախաձեռնէր: Այս խորհուրդը 1908-ին կը հիմնուէր եւ շուրջ երեսուն ամերիկեան յարանուանութիւններ կ'անդամակցէին անոր՝ ներառեալ գրեթէ բոլոր գլխաւոր եկեղեցիները: Խորհուրդը կը նպատակադրէր՝ առաջին՝ Քրիստոնեական եկեղեցիի անդամակցութիւնն ու ընդհանրական միութիւնը ցոլացնել, երկրորդ՝ Ամերիկայի քրիստոնեական մարմինները Քրիստոսի ծառայութեան շուրջ խմբել, երրորդ՝ հոգեւոր կեանքի ու կրօնական գործունէութեան մէջ եկեղեցիներուն գործակցութիւնը քաջալե-

րել, չորրորդ՝ բարոյական ու ընկերային կեանքի մէջ եկեղեցիներուն միացեալ կեցուածքը արտայայտել՝ հիմնուելով Քրիստոսի ուսուցումներուն վրայ, հինգերորդ՝ խորհուրդին տեղական մասնաճիւղերը հիմնել, որպէսզի բոլոր համայնքներու մէջ խորհուրդը ներկայութիւն դառնար:

1950-ին խորհուրդը, միանալով միսիոնարական, կրօնական դաստիարակութեան, բարձրագոյն ուսումի, ընկերային ծառայութեան ու կիներու գործունէութեան ներյարանուանական այլ կազմակերպութիւններու հետ, կը կազմէր Ամերիկայի Միացեալ Նահանգներու Քրիստոսի եկեղեցիներու ազգային խորհուրդը: Այլ երկիրներու մէջ եւս նման խորհուրդներ կը կազմուէին. այսպէս՝ 1905-ին Ֆրանսայի մէջ, 1920-ին Զուիցերիոյ մէջ, 1942-ին Մեծն Բրիտանիոյ մէջ եւ 1944-ին Քանատայի մէջ:

Համաշխարհային մակարդակի վրայ միջեկեղեցական գործակցութեան ախոյեան կը դառնար շուետացի լուտերական հովիւ Նաթան Սոտերպլոմ (1866–1931), որ հետագային Ուփսալայի եպիսկոպոսը կ'ըլլար: Ան երկար տարիներ կը ծառայէր Քրիստոնէայ ուսանողներու շարժումին մէջ եւ կը համոզուէր, որ եկեղեցիներ, հակառակ վարդապետական տարբերութիւններու, կրնային իրարու հետ ընկերային ծառայութիւն ծաւալել: Այս համոզումէն մեկնած՝ 1925-ին Սթոքհոլմի մէջ ան կը կազմակերպէր Կեանք եւ գործի քրիստոնէական միջազգային առաջին համագումարը, որ կը թուէր աշխարհի ընկերային կարիքները, կը դիմէր քրիստոնէաներու խիղճին եւ գործակցութեան ուղիներ կ'որոնէր: 1930-ին Կեանք եւ գործի միջազգային քրիստոնէական խորհուրդը կը կազմուէր եւ 1937-ին Օքսֆորտի մէջ «Եկեղեցի, համայնք ու պետութիւն» թեման ընդգրկող միջազգային երկրորդ համագումարը կը կազմակերպէր եւ կ'ընդգծէր աշխարհի մէջ Եկեղեցիին եզակի տեղն ու դերը:

Միջեկեղեցական գործունէութեան չորրորդ բնագաւառը կը վերաբերէր վարդապետական տարբերութիւնները յաղթահարելուն: ԺԶ. դարուն բողոքականներ հաւատք եւ կարգի

հարցերով բաժան-բաժան եղած էին եւ հիմա նոյն հարցերուն վերաքննութիւնը որոշ վերապահութիւն կը պատճառէր: Մակայն կարելի չէր անտեսել քրիստոնէական միութեան հիմնահարցը. օրինակ՝ ամերիկացի եպիսկոպոսական Ուիլերմ Ռիտ շանթիսկըն (1838–1918) վերամիութեան համար անզլիզանութեան չորս նախապայմանները հետեւեալ կերպով կը բանաձեւէր. առաջին՝ Աստուածաշունչը Աստուծոյ խօսքն է. երկրորդ՝ նախնական շաւտքի հանգանակները հաւատքի կանոնն են. երրորդ՝ երկու խորհուրդներ կատարուած եւ պատւիրուած են Քրիստոսի կողմէ. չորրորդ՝ պատմական եպիսկոպոսութիւնը Եկեղեցիի նուիրապետութեան հիմնաքարն է: Ամերիկայի Եպիսկոպոսական եկեղեցիի եպիսկոպոսներու մարմինը եւ անզլիզան եպիսկոպոսներու Լամպէթի համաժողովը կարգ մը ամբողջացումներ կատարելով կ'որդեգրէր այս կէտերը եւ ցոյց կու տար, թէ հաւատք եւ կարգի հարցեր կենսական էին Եկեղեցիի միութեան քննարկումներուն համար: Ամերիկացի եպիսկոպոսական միսիոնար Չարլզ Հենրի Պրենթ եպիսկոպոս (1862–1929), մեկնելով 1910-ի Էտինպըրկի համաժողովին փորձառութենէն, վերամիացեալ Եկեղեցիի կարելիութիւնը վարդապետական հարցերու քննարկումի գործընթացին մէջ կը տեսներ եւ կը հրաւիրէր եպիսկոպոսականները հաւատք եւ կարգի հարցերու քննարկումի ռահվիրան դառնալու: Շաւտք եւ կարգի առաջին համաշխարհային համագումարը տեղի կ'ունենար 1927-ին Լոզանի մէջ, որուն կը մասնակցէր աւելի քան հարիւր կրօնական մարմին ներկայացնող աւելի քան չորս հարիւր պատգամաւոր: Յարանուանութիւնները իրարմէ բաժնող լուրջ հարցեր կը քննարկուէին, համաձայնութեան բազմաթիւ եզրեր կը գտնուէին եւ բարեկամութեան նոր շունչ մը կը փչէր: Շաւտք եւ կարգի առաջին համաշխարհային համագումարը տեղի կ'ունենար 1937-ին Էտինպըրկի մէջ, որ «Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը» խորագիրը եւ «Եկեղեցիներ իրարմէ բաժնուած չեն կրնար մնալ» ենթախորագիրը կրող պատմական յայտարարութիւնը կը կատարէր: Միաժամանակ յստակ կը դառնար, որ քահա-

նայութեան եւ խորհուրդներուն մէջ կային մեծ տարբերութիւններ, որոնք լրջօրէն պէտք էր քննարկուէին: Այլապէս այլ կէտերու մէջ եկեղեցիներ մեծ մասամբ իրարու հետ համամիտ էին:

Բազմաթիւ առաջարկներ կը կատարուէին Կեանք եւ գործի ու Հաւատք եւ կարգի գործունէութիւնը համաշխարհային խորհուրդի մը մէջ իրարու միացնելու համար: 1937-ին երկու կազմակերպութիւններուն համաժողովները միաժամանակ կը գումարուէին եւ համակեցութեան ի նպաստ կը քուէարկուէր: 1938-ին Ութըեխտի մէջ կը պատրաստուէր համաշխարհային խորհուրդի մը նախնական կառոյցը, որուն ենթահող կը ծառայէր հետեւեալ բանաձեւը. «Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը եկեղեցիներու ընկերակցութիւն մըն է, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը որպէս Աստուած եւ Փրկիչ կ'ընդունի»: Այս բոլորին մէջ բանալի դերակատարութիւն կ'ունենար իմաստասէր եւ աստուածաբան, Եորքի արքեպիսկոպոս ու ապագայի Գենթըրպըրիի արքեպիսկոպոս (1942) Ուիլերմ Թեմփըլ (1881–1944), որ արդէն իսկ գործուն մասնակցութիւն բերած էր ուսանողներու քրիստոնէական շարժումներուն, Միջազգային միսիոնարական խորհուրդին, Կեանք եւ գործին ու Հաւատք եւ կարգին մէջ: Ան այժմ կազմութեան ընթացքի մէջ գտնուող Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կազմակերպիչ յանձնախումբին ատենապետը կ'ըլլար: Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերուն (1939–1945), կազմակերպիչ յանձնախումբը Ժնեւի կեդրոնատեղիէն հոգ կը տանէր որբերուն, բանտարկեալներուն ու գաղթականներուն: Մանաւանդ Ատուֆ Հիթլերի բռնատիրութեան օրերուն ան կապը կը հանդիսանար Գերմանիոյ եկեղեցիներուն եւ այլ երկիրներու եկեղեցիներուն միջեւ:

1933-ին, երբ նացիներ Գերմանիոյ իշխանութեան կը տիրանային, կը պարտադրէին, որ եկեղեցիներ իրենց զինուորական ու հակասեմական քաղաքականութիւնը որդեգրէին: Բազմաթիւ քրիստոնէաներ նացիներուն նեցուկ կը կանգնէին: Եկեղեցիի հականացի ընդդիմութիւնը դանդաղօրէն կ'աճէր եւ

ումանք բացայայտօրէն դէմ կը կենային նացիներուն, մինչ ուրիշներ կրաւորական դիմադրութիւն կը ցուցաբերէին: Երկու կեցուածքները որդեգրողներն ալ Գերմանիոյ Բողոքական եկեղեցիներու տասը առ հարիւրին նախաձեռնած Խոստովանող եկեղեցիի շարժումին կը մասնակցէին եւ 1934-ի Պարմէնի յայտարարութեամբ իրենց աստուածաբանական ընդդիմութիւնը կը յայտարարէին նացիականութեան դէմ: Նացիներ հալածանք կը շղթայազերծէին Եկեղեցիին դէմ: 1937-ին տեղի կ'ունենար Եկեղեցիին աշխարհական եւ հոգեւորական մեծաթիւ առաջնորդներու ձերբակալութիւնը, ներառեալ նշանաւոր լուտերական հովիւ եւ Առաջին համաշխարհային պատերազմի ծովային հրամանատար Մարթին Նիեմոլերը (1892–1984): 1939-ին, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմը կը սկսէր, հալածանքները կը սաստկանային եւ Խոստովանող եկեղեցիի շարժումին զօրակցող հովիւներուն մեծամասնութիւնը բանակ կը տարուէր, որովհետեւ Հիթլեր կ'որոշէր ամեն տեսակի ընդդիմութիւն ջախջախել: Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կազմակերպիչ յանձնախումբը մեծ մտահոգութեամբ կը հետեւէր այս զարգացումներուն եւ տառապող եկեղեցիներուն անհրաժեշտ նեցուկը կու տար: Ան շարունակական կապի մէջ կը մնար Գերմանիոյ եկեղեցիի պայքարին մասնակիցներուն եւ այլ երկիրներու մէջ անոնց զօրակցողներուն հետ: Բողոքականներու եւ կաթոլիկներու միջեկեղեցական գործակցութիւնը աւելի կ'աճէր, երբ նացիներու ընդյատակեայ ընդդիմադիրներ իրարու կը վստահէին եւ իրարու հետ կը գործէին՝ պատմական բաժանումները անտեսելով հասարակաց թշնամիին դէմ:

Երկրորդ համաշխարհային պատերազմը պատճառ կը դառնար, որ ուշացումով եւ միայն 1948-ին Ամսթերտամի մէջ հիմնադրուէր 44 երկիրներէ ժամանած 145 եկեղեցիներով Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը: Կը ճշդուէր, որ խորհուրդը սահմանադրական հեղինակութիւն պիտի չունենար անդամ եկեղեցիներուն վրայ: Եւրոպայի, Բրիտանական Կղզիներու, Ամերիկայի, Աւստրալիոյ եւ Ասիոյ Բողոքական գլխաւոր եկեղեցիները ու կարգ մը Ուղղափառ եկեղեցիներ եւ Ասիոյ ու

Ափրիկէի նոր եկեղեցիներէն շատեր կ'անդամակցէին խորհուրդին: Խորհուրդը կը շարունակէր սերտօրէն գործակցիլ Երիտասարդ տղամարդերու քրիստոնէական համաշխարհային ընկերակցութեան, Երիտասարդ կիներու քրիստոնէական համաշխարհային ընկերակցութեան եւ Քրիստոնէայ ուսանողներու համաշխարհային կազմակերպութեան հետ: Խորհուրդն ու յիշեալ կազմակերպութիւնները միասնաբար քրիստոնէական երիտասարդութեան համագումարներ կը կազմակերպէին 1939-ին Ամսթերտամի մէջ, 1947-ին Օսլոյի մէջ եւ 1952-ին Թրավանգորի մէջ:

Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի երկրորդ համաժողովը տեղի կ'ունենար 1954-ին Էվընսթընի մէջ (Իլինոյ, ԱՄՆ), եւ 161 Եկեղեցի ներկայացնող պատուիրակներ կ'որոշէին իրարու հետ աճիլ՝ հակառակ իրենց ունեցած աստուածաբանական տարբերութիւններուն: Խորհուրդի երրորդ համաժողովը կը գումարուէր 1961-ին, Նիու Տելիիի մէջ (Հընդկաստան), որուն նոր անդամակցած եկեղեցիներ կը մասնակցէին եւ անդամ եկեղեցիներու ընդհանուր թիւը կը բարձրանար 198-ի: Ասոնց մէջ էին Ռուս ուղղափառ ու այլ Սլաւ ուղղափառ եկեղեցիներ եւ երրորդ աշխարհի կարգ մը եկեղեցիներ, ներառեալ երկու Հոգեգալստական եկեղեցի: Այս համաժողովի ընթացքին Միջազգային միախոնարական խորհուրդը կը միանար Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին:

Միջեկեղեցական գործունէութեան հինգերորդ մարզը կը վերաբերէր եկեղեցիներու գործնական միութեան, երբ տեղի կ'ունենային կարգ մը եկեղեցիներու ներյարանուանական եւ ներընտանեկան միութիւնները: Ասոնցմէ ամենէն ակնառուն Սկովտիոյ Երիցական եկեղեցիներուն վերամիացումն էր: Ասոնք 1847-ին եւ 1900-ին աստիճանաբար կը վերամիանային եւ կը դառնային Սկովտիոյ Միացեալ ազատ եկեղեցին: 1921-ին Սկովտիոյ խորհրդարանը կ'օրինադրէր, որ վարդապետական ու հովուական հարցերու մէջ Եկեղեցին ազատ կը գործէր՝ առանց պետական միջամտութեան, եւ սկովտիացիներ պարտաւոր էին Աստուծոյ անունը փառաբանելու ու անոր թագա-

տրութիւնը տարածելու: 1929-ին միութիւնը կը պսակուէր եւ Սկովտիոյ բնակչութեան երկու երրորդը Սկովտիոյ եկեղեցիին անդամ կը դառնար:

Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ եւս ներյարանուանական վերամիացումներ տեղի կ'ունենային: 1918-ին Լուտերական ընդհանուր սինոտն ու Լուտերական ընդհանուր խորհուրդը, վերամիանալով հարաւի Միացեալ սինոտին, կը հաստատէին Լուտերական միացեալ եկեղեցին: 1930-ին Պաֆլըլոյի, Այովայի եւ Օհայոյի սինոտները՝ որպէս Ամերիկեան լուտերական եկեղեցի, կը միանային իրարու: 1960-ականներուն գրեթէ բոլոր Լուտերական եկեղեցիները երեք հիմնական մարմիններով կը միանային իրարու. առաջին՝ Ամերիկայի լուտերական եկեղեցի, երկրորդ՝ Լուտերական եկեղեցի, երրորդ՝ Ամերիկեան լուտերական եկեղեցի:

Հիւսիսի Երիցական եկեղեցին 1958-ին Միացեալ երիցական եկեղեցիին հետ վերամիանալով կը դառնար Ամերիկայի Միացեալ Նահանգներու Միացեալ երիցական եկեղեցին: 1983-ին այս եկեղեցին հարաւի Երիցական եկեղեցիին հետ վերամիանալով կը դառնար Երիցական եկեղեցի Ամերիկայի Միացեալ Նահանգներու:

1939-ին Մեթոտական եկեղեցին կը հիմնուէր Մեթոտական եպիսկոպոսական եկեղեցիին, Հարաւի մեթոտական եպիսկոպոսական եկեղեցիին եւ Մեթոտական բողոքական եկեղեցիին վերամիացումով: Եօթը տարի ետք գերման մեթոտական երկու խմբակներ կը վերամիանային եւ կը դառնային Աւետարանական միացեալ եղբայրական եկեղեցին: Այս եկեղեցին ալ 1968-ին մեթոտականներուն հետ վերամիանալով Միացեալ մեթոտական եկեղեցին կը դառնար: Միութենական եւ Տիեզերական եկեղեցիներ 1961-ին կը վերամիանային եւ Միութենական տիեզերական ընկերակցութիւնը կը դառնային:

Տարբեր-տարբեր յարանուանութիւններ եւս իրարու կը միանային: Քանատայի մէջ զանազան Բողոքական եկեղեցիներ գոյութիւն ունէին: ԺԹ. դարը յարանուանական կեդրոնաձգութեամբ կը յատկանշուէր: 1875-ին երիցականներ ունէին ինը

միութիւն, որոնք միանալով Քանատայի Երիցական եկեղեցին կը դառնային: 1884-ին մեթոտականներ ունէին ութ միութիւն, որոնք միանալով Քանատայի Մեթոտական եկեղեցին կը դառնային: 1906-ին եւ 1907-ին այլ փոքր յարանուանութիւններ եւս կը վերամիանային Քանատայի մէջ: Սակայն Քանատայի նման ընդարձակ երկիրի մը տարածուն բնակչութեան համար բողոքական ամբողջական միութիւնը հրամայական կը դառնար, եւ այս ուղղութեամբ աշխուժ աշխատանք կը տարուէր Ի. դարու սկիզբը: Միութեան ենթահողը կը մշակուէր յատկապէս Երիցական եւ Մեթոտական եկեղեցիներու կանոններուն համաձայն, որոնց այլ եկեղեցական յարանուանութիւններու՝ յատկապէս անգլիգան եւ մկրտչական աւանդութիւնները եւս կ'աւելցուէին կառավարութեան կողմէ: Այս ճիգերուն պսակումը տեղի կ'ունենար 1925-ին, երբ կը կազմուէր Քանատայի Միացեալ եկեղեցին, որմէ միայն երիցական փոքրամասնութիւն մը դուրս կը մնար:

Նոր եկեղեցիներ եւս կը միանային ծխական, երիցական եւ եպիսկոպոսական յարանուանութիւններու ծիրին մէջ: 1908-ին Հարաւային Հնդկաստանի Միացեալ եկեղեցին կը քաջալերէր երիցական եւ ժողովական միսիոնարութիւններու միջեւ գործակցութիւնը: Քիչ մը ուշ մեթոտականներ եւ անգլիգաններ եւս ասոնց կը միանային: Բոլորն ալ կը համաձայնէին, որ երբ ցանկալի միութեան հասնէին, բոլոր քահանաները հաւասար իրաւունքներ եւ նուիրապետական աստիճանի ճանաչում պիտի ունենային, իսկ միութիւնը մերժող համայնքները իրենց քահանաներուն հետ առանձին յարաբերութիւններ պիտի մշակէին: Ապա, երեսուն տարի, բոլոր ձեռնադրութիւնները եպիսկոպոսի մը ձեռքով եւ քահանաներուն մասնակցութեամբ կը կատարուէին: Այս բոլոր քայլերէն տեք՝ 1947-ին, կը հիմնուէր Հարաւային Հնդկաստանի Միացեալ եկեղեցին, որ հինգ անգլիգան եպիսկոպոս կը վերընտրէր եւ ինը նոր եպիսկոպոս կ'ընտրէր ու կը ձեռնադրէր: Այսպէսով մէկ միլիոն հնդիկ քրիստոնէաներ իրարու կը միանային եւ մէկ անկախ ու բնիկ Եկեղեցի կը դառնային:

Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ 1957-ին կը հիմնուէր Քրիստոսի Միացեալ եկեղեցին՝ չորս տարբեր յարանուանութիւններու միացումով: 1931-ին ԺԹ. դարու վերարթնութեան շարժումէն ծնած Ժողովական եւ Քրիստոնէական եկեղեցիները կը միանային: Երեք տարի ետք գերման Բարեկարգեալ եկեղեցին եւ 1840-ականներուն իրարու հետ գործող գերմանախօս լուտերական եւ բարեկարգեալ բարեպաշտ ներգաղթողներէ կազմուած Աւետարանական ընկերակցութիւնը կը միանային որպէս Աւետարանական եւ Բարեկարգեալ եկեղեցի: 1961-ին այս միացումը կը վերահաստատուէր հաւատացեալներու մակարդակին վրայ եւ 1962-ին Եկեղեցիին միութեան աշխատանքներուն կը մասնակցէին ինը յարանուանութիւններ, որոնց մէջ կը գտնուէին Ժողովական ու Եպիսկոպոսական եւ երեք Մեթոտական սեւամորթ համայնքի եկեղեցիներ:

Միջեկեղեցական գործունէութեան վեցերորդ մարզը կը վերաբերէր համաշխարհային յարանուանական ընկերակցութիւններու կազմութեան, երբ յարանուանութիւններ սերտ գործակցութեան համար չէին բաւարարուէր միմիայն Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի անդամակցութեամբ: Համաշխարհային համախմբումներու մակարդակի վրայ 1867-ին անգլիգան եպիսկոպոսներու Լամպէթի համաժողովը տեղի կ'ունենար եւ 1889-ին կը գումարուէր Հին կաթոլիկ եպիսկոպոսներու համաժողովը: 1875-ին Բարեկարգեալ եկեղեցիներու համաշխարհային ընկերակցութիւնը, 1881-ին Մեթոտականներու համաշխարհային խորհուրդը, 1891-ին Ծխականներու միջազգային խորհուրդը, 1905-ին Սկրտչականներու համաշխարհային ընկերակցութիւնը, 1923-ին Լուտերականներու համաշխարհային ընկերակցութիւնը, 1930-ին Քրիստոսի եկեղեցիներու համաշխարհային ընկերակցութիւնը, 1930-ին Ազատական քրիստոնէութեան ու կրօնական ազատութեան միջազգային ընկերակցութիւնը եւ 1937-ին Բարեկամներու խորհրդակցական համաշխարհային վարչութիւնը կը հիմնուէին:

Ի. դարուն բողոքականներ միջեկեղեցական շարժումին կողքին կը խանդավառուէին նաեւ աստուածաբանական քննարկումներով: Ի. դարու սկիզբը աստուածաբանական հարցեր գրեթէ չէին քննարկուէր: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմէն ետք Եւրոպայի մէջ աստուածաշնչական ու կարգաւորեալ աստուածաբանութեան հարցերը մեծ ուշադրութիւն կը գրաւէին: Ասոնց ամենէն ազդեցիկ ներկայացուցիչները կը դառնային Հենրիխ Էմիլ Պրունըր (1889–1966) եւ մանաւանդ բարեկարգեալ հովիւ ու աստուածաբան եւ *Եկեղեցիի վարդապետական աստուածաբանութիւնը* (13 հատոր, 1932–1967) տիրական երկի հեղինակ Գարլ Պարթ (1886–1968): Պարթ իր գրականութեան մէջ կը շեշտէր Աստուծոյ այլութիւնը, յայտնութեան կեդրոնական տեղը եւ մարդուն մեղաւորութիւնը: Աստուածաբանական վերածնունդը նաեւ մեծապէս կ'աճէր նացիականութեան դէմ քրիստոնէական կեցւածքով, երբ մանաւանդ 1934-ի Պարմէնի յայտարարութիւնը կը հաստատէր, թէ մարդիկ միմիայն Աստուծոյ խօսքը եղող Յիսուս Քրիստոսի պէտք է մտիկ ընէին, վստահէին եւ հնազանդէին:

Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ աստուածաբանական մտածողութիւնը 1930-ականներուն նոր հանգրուան կը թելակոխէր, երբ որպէս քրիստոնէական իրապաշտութիւն ամերիկեան աստուածաբանութեան վերացականութիւնը կը քննադատէր եւ նոր մօտեցումներ կ'առաջադրէր: Այս մարզին մէջ կարեւոր դերակատարութիւն կ'ունենային Նիպըր եղբայրներն ու Պօղոս Թիլիխ (1886–1965): Ռեյնհըլտ Նիպըր (1892–1971) ընկերային բարոյականութեան վրայ կը դնէր շեշտը եւ այլ երկերու կարգին կը հեղինակէր *Մարդուն բնութիւնն ու վախճանը* (1941–1943): Ռիչըրտ Նիպըր (1894–1962) աստուածաբանական, ընկերաբանական ու բարոյական քննարկումներու կը նուիրէր իր ամբողջ կեանքը ու իր ամենէն նշանաւոր երկը կ'ըլլար *Քրիստոս եւ մշակոյթը* (1951): Թիլիխ Հիթլերի տիրապետութեան տակ եղող Գերմանիայէն Ամերիկա կը գաղթէր եւ աստուածաբանական ու մտաւորական կեանքի մէջ մեծ հեղի-

նակութիւն կը դառնար. ան կը գրէր իր եռահատոր *Կարգաւորեալ աստուածաբանութիւն*-ը (1951–1963):

Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին ճամբով յիշեալ եւ իրենց նման բազմաթիւ հոշակաւոր աստուածաբաններու տեսակէտները տարածում կը գտնէին: Բողոքականութիւնը նաեւ ծիսական վերածնունդ կ'ապրէր ամեն տեղ: Բազմաթիւ եկեղեցական ընտանիքներ իրենց ծէսը կը բարեփոխէին եւ Ազատ եկեղեցիներ ծիսական տարրեր կը ներառէին իրենց պաշտամունքին մէջ: 1960-ականներուն աստուածաշնչական գիտութիւններու եւ ծիսական բարեկարգութեան կաթոլիկ ու բողոքական մասնագէտներ միջեկեղեցական կարեւոր աշխատանք կը կատարէին:

ԺԹ. ԳԼՈՒԽ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

Համաշխարհային երկրորդ պատերազմին ետք եկեղեցիներ քիչ մը ամեն տեղ եւ մանաւանդ Արեւմուտքի մէջ նուիրապետականօրէն հաստատ պատկեր կը պարզէին: 1945-ին հիմնուած Միացեալ ազգերու կազմակերպութիւնը կը ջանար երկիրներու միջեւ եղող հարցերուն եւ աշխարհի խաղաղութեան լուծում բերել: Թէեւ համայնավարութեան եւ արեւմրտեան երկիրներու միջեւ սկսած պաղ պատերազմը խաղաղութիւնը կը վտանգէր, սակայն եկեղեցիներ շարունակական յառաջխաղացքի յոյսը չէին կորսնցնէր:

Հռոմէական եկեղեցին, Պիոս ԺԲ. պապի (1939–1958) գահակալութեամբ, կը շարունակէր պահել իր կեդրոնաձիգ ու պահպանողական դիրքը: Պիոս կը հետեւէր Պիոս Թ. պապի ԺԹ. դարու աւարտին որդեգրած քայլերուն, երբ կ'ըսէր, թէ Հռոմէական եկեղեցին իր պատեանին մէջ պէտք է մնար՝ տազնապող աշխարհին իր ճշմարտութիւնները յայտնելով եւ բաժանարար ուժերու դիմաց քայքայումէ խուսափելով: Ան պատերազմի օրերուն խաղաղութեան հաստատումին հետամուտ կը դառնար եւ չէր համարձակէր միլիոնաւոր եւրոպացի հրեաներ հնձող Ողջակիզումը բացայայտօրէն դատապարտել՝ վախնալով որ թէ՛ հրեաներուն եւ թէ՛ կաթոլիկներուն իրավիճակը կրնար աւելի վատթարացնել: Ան Մարքսեան անաստւածութեան կ'ընդդիմանար եւ համայնավար երկիրներուն հետ կապ չէր հաստատէր եւ կաթոլիկներուն կ'արգիլէր համայնավարութեան հետ գործակցիլ: Ան միջեկեղեցական շարժումին հանդէպ հետաքրքրութիւն չունէր եւ չէր արտօներ, որ կաթոլիկներ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին անդամակցէին: Յենելով Հռոմէական եկեղեցիի բարոյական հեղինակութեան՝ ան զանազան բարոյական հարցերու մասին կը խօսէր եւ կը գրէր: Ան արդի հաղորդակցութեան միջոցները լայնօրէն կ'օգտագործէր եւ միջազգային դէմք կը դառնար: 1950-

ին սուրբ կոյս Մարիամի վերափոխումի վարդապետութեան եւ «Մարդկային ցեղը» կոնդակին հրապարակումը կը հաստատէր, թէ Հռոմէական եկեղեցին կը շարունակէր ԺԹ. դարու ոգիին եւ իմաստասիրական ու աստուածաբանական մտածողութեան կառչած մնալ:

Հիւսիսային Ամերիկայի մէջ կրօնքը վերագարթօնք կ'ապրէր յետպատերազմեան օրերուն, մինչ Գերմանիոյ մէջ աշխարհականներ առաջնորդող դերակատարութիւն կ'ունենային Եկեղեցիին մէջ, երբ աւետարանական ակադեմիաներու շնորհիւ իրենց ամենօրեայ քրիստոնէական կեանքի վկայութիւնը կ'ապրէին եւ տարեկան եկեղեցական հաւաքներով ամբողջ շաբաթ մը մեծաթիւ հաւատացեալներ Աստուածաշունչի եւ Եկեղեցիի կեանքին սերտողութեան ու վերանորոգումին կը նուիրուէին:

Թէեւ Չինաստանի մէջ միսիոնարական գործունէութեան խափանումը եւ տեղական եկեղեցիներուն իրարմէ ու աշխարհէն մեկուսացումը մեծ հարուած կու տար քրիստոնէութեան, սակայն այլ երկիրներու մէջ զանազան եկեղեցիներ ինքնավար կը դառնային եւ բնիկ քրիստոնէաներ կը սկսէին պատասխանատու պաշտօններ վարել: Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը, իր առաջին ընդհանուր քարտուղարին՝ Ուիլլերմ Վիսլրթ Նուֆթի (1900–1985) առաջնորդութեամբ, նոր անդամներով կ'օժտուէր: Թէեւ աստուածաբանական զանազան մտածողութիւններ կային միջեկեղեցական շարժումին մէջ, սակայն 1950-ականներէն սկսեալ յայտնութենական եւ քրիստոսակեդրոն աստուածաշնչական աստուածաբանութիւնը տիրական կը դառնար:

Յաջորդ տասնամեակներուն եկեղեցիներուն գլխաւոր մտահոգութիւնը,– մանաւանդ Արեւմուտքի մէջ,– աշխարհայնականացումը կ'ըլլար: Ազգայնականութեան աճը կրօնական կեանքը անհատական ապրելաձեւի կը վերածէր քրիստոնէայ յորջորջուած երկիրներուն եւ մանաւանդ համայնավարութեան տակ գտնուող ժողովուրդներուն մէջ: Յետքրիստոնէական ընկերութեան ակնարկութիւնները կը բազմանային եւ քրիս-

տոննութեան մշակութային ազդեցութիւնը կը սկսէր նուազիլ: Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ յետպատերազմեան արթնութիւնը 1960-ականներուն ու 1970-ականներուն կը նահանջէր եւ կարգ մը Բողոքական պատմական ու մեծ եկեղեցիներ հաւատացեալներ կը կորսնցնէին, մինչ աւելի աւանդապահ եկեղեցիներ քանակական աճ կ'արձանագրէին: Միջազգային մակարդակի վրայ կրօնական բազմազանութեան եւ աշխարհայնականացումի հետեւեանքով, եկեղեցիներու հասարակական ազդեցութիւնը օրէ-օր կը նուազէր:

Եկեղեցիներ անհանգիստ վիճակի մէջ կը գտնուէին ամբողջ աշխարհի մէջ: Ասիոյ եւ Ափրիկէի մէջ բազմաթիւ ազգեր անկախ կը դառնային եւ գաղութատիրութենէն ազատագրուելով հարց կու տային, թէ պէ՞տք էր շարունակէին Աստուած պաշտելու, եկեղեցիները կազմակերպելու եւ ասուածաբանութիւն մշակելու արեւմտեան եղանակները: Երբորդ աշխարհի մէջ նոր մտածողութիւն մը կը զարգանար, թէ Եւրոպայի ու Հիւսիսային Ամերիկայի հարուստ երկիրները, – մանաւանդ Ամերիկայի Միացեալ Նահանգներն ու Մովետական Միութիւնը, – աւելի կը հարստանային, մինչ աղքատ երկիրներ աւելի կ'աղքատանային: Արեւմտեան եկեղեցիներ կը քննադատուէին իրենց անձնակեդրոնութեան համար եւ պարտաւորուած կ'ըլլային զօրակցելու աշխարհի աղքատ ու տկար ժողովուրդներուն, որոնք ընդհանրապէս սեւամորթ եւ դեղնամորթ էին:

Աշխարհի անարդարութիւններուն ու անհաւասարակըշտութիւններուն դիմաց եւ զինուորական ուժի գործարութեան ի տես՝ Կաթոլիկ, Ուղղափառ եւ Բողոքական եկեղեցիներ կը քննադատուէին, որ մարդկային ընդհանրական բարիքին ծառայելու փոխարէն յարանուանական նախասիրութիւններ կը դրսեւորէին: 1930-ականներուն կաթոլիկներու եւ բողոքականներու բռնատիրութիւններու դէմ ծառանալը գործակցութեան նոր գետին կը պատրաստէր: Յետպատերազմեան կրօնական արթնութիւնը անդրանցող բարեկարգութեան պահանջը յաճախ կը զգացուէր եւ աւանդական

բարեպաշտութեան ու Եկեղեցիի կեանքին կառավարումի փոփոխութիւնը հրամայական կը դառնար: Մանաւանդ աշխարհականներ եւ երիտասարդներ խստօրէն կը քննադատէին եկեղեցիները:

Սակայն Հռոմէական եկեղեցիի վերանորոգութեան մղումը անակնկալօրէն գլուխէն կու գար: 1958-ին, երբ Անճելօ Յովսէփի Ռոնգալի պապ կ'ընտրուէր եւ Յովհաննէս ԻԳ. (1958–1963) անունը կ'առնէր, շատեր կը խորհէին, թէ ան դասական պապականութիւն պիտի վարէր: Սակայն ան, դիւանագետ եկեղեցական ըլլալով, մօտէն ծանօթ էր զանազան ընկերային եւ քաղաքական շարժումներու: Պուլկարիոյ, Թուրքիոյ, Ֆրանսայի ու Գերմանիոյ մէջ պաշտօններ վարած ըլլալով՝ ան ուղղափառներու ու ոչ-կաթոլիկներու եւ բազմաթիւ քաղաքական խմբակներու հետ կապեր կը հաստատէր: Որպէս պապ՝ ան կ'ուզէր, որ Հռոմէական եկեղեցին աշխարհի ժամանակակից կարիքներուն համաձայն վերատեսութեան ենթարկէր իր հաւատքի առաքելութիւնը եւ միջեկեղեցական շինիչ յարաբերութիւններ մշակէր միւս եկեղեցիներուն հետ: 1959-ին ան կը յայտարարէր, թէ պիտի հրաւիրէր 21-րդ Տիեզերական ժողովը՝ Վատիկանի երկրորդ ժողովը, որուն Հռոմէական եկեղեցիի բոլոր եպիսկոպոսները պիտի մասնակցէին աշխարհի բոլոր կողմերէն: 1960-ին ան կը հիմնէր Քրիստոնէական միութեան քարտուղարութիւնը եւ Օգոստինոս Պէա կարտինալը (1881–1968) կը նշանակէր անոր նախագահը, որպէսզի միւս եկեղեցիներուն հետ մշակելի երկխօսութիւնը աւելի կազմակերպուած ընթանար: Ան Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի երրորդ համաժողովին հինգ կաթոլիկ պաշտօնական դէտեր կը դրկէր եւ բողոքական ու ուղղափառ դէտեր կը հրաւիրէր Վատիկանի երկրորդ ժողովին. շատեր կ'ընդառաջէին իր հրաւերին:

Յովհաննէս ԻԳ. պապ մարդկային կարիքներու եւ համաշխարհային հարցերու իր մտահոգութիւնները կ'արտայայտէր երկու կոնդակներով. առաջին՝ «Մայր եւ ուսուցիչ» (1961), որ կաթոլիկ ընկերային ուսուցումներուն կը վերաբերէր,

երկրորդ՝ «Խաղաղութիւն երկիրի վրայ» (1963), որ միջազգային խաղաղութեան նախապայման կը սահմանէր ճշմարտութիւնը, արդարութիւնը, սերն ու ազատութիւնը: Ան կ'ըսէր, թէ ամեն մարդ իր մարդկային արժանապատուութեամբ հաւասար էր, զինեալ պայքարը պետք էր աւարտէր տնտեսական փոխադարձ կախուածութեամբ եւ կաթոլիկներ պարտաւոր էին հասարակաց բարիքին համար այլ կրօններու պատկանող մարդոց հետ գործակցելու:

Աւելի քան երեք տարի նախապատրաստուելէ ետք կը բացուէր Վատիկանի երկրորդ ժողովը՝ 11 հոկտեմբեր 1962-ին, Հռոմի Սուրբ Պետրոս մայր տաճարին մէջ: Ժողովի առաջին նիստերէն ի յայտ կու գար, թէ Հռոմէական եկեղեցիի ցանկալի բարեկարգութիւնը կատարելը դժուար պիտի ըլլար, որովհետեւ, աւելի քան 2000 ժողովական եպիսկոպոսներ պահպանողական եւ յառաջդիմական խմբակներու բաժնուած էին: Միջեկեղեցական յարաբերութիւններու քննարկումը կը կատարուէր առաջին նիստին, սակայն առանց շօշափելի արդիւնքի հասնելու ժողովը դադար կ'առնէր մինչեւ 8 դեկտեմբեր:

Յովհաննէս ԻԳ. կը վախճանէր յունիս 1963-ին: Անոր յաջորդը՝ Յովհաննէս Պաթիսթա Մոնթինի, որ Պօղոս Զ. (1963–1978) անունը կ'առնէր, կ'որոշէր ժողովը ի կատար ածել, որ իւրաքանչիւր վերամուտի եւ երեք նիստերով կը գումարուէր: Պօղոս իր նախորդին հմայքը չունէր, սակայն, մեկնելով հաշտութեան հրամայականէն, 1964-ին Երուսաղէմի մէջ Կոստանդնուպոլսոյ Աթենակորաս Տիեզերական պատրիարքին հետ կ'ողջագորուէր: Այս հանդիպումը կը պտղաւորուէր 7 դեկտեմբեր 1965-ին Հռոմէն եւ Կոստանդնուպոլսէն հրապարակուած համատեղ հաղորդագրութիւններով, որոնք 1054-ի խզումէն ի վեր տեղի ունեցած ժխտական երեւոյթներուն համար զոջում կը յայտնէին եւ կը վերացնէին նզովքները:

Վատիկանի երկրորդ ժողովին աւարտած առաջին աշխատանքը կը վերաբերէր ծեսին, եւ սուրբ պատարագին վերատեսութիւնն ու աւելի համայնական մատուցումը կը

յանձնարարեր: Առաւել, 16 այլ բնագաւառներու վերաբերող եւ իրարմէ տարբեր ծաւալ ունեցող բնագրեր կ'որդեգրուէին ժողովական հայրերու կողմէ՝ սկսելով «Եկեղեցիի յարաբերութիւնը ոչ-քրիստոնէայ կրօններուն հետ»-էն մինչեւ «Եկեղեցին արդի աշխարհին մէջ – հովուական մտահոգութիւններ»: Առաջինը կը վերաբերէր հրեայ-քրիստոնէայ յարաբերութիւններուն եւ հակասեմականութիւնը դատապարտելով՝ հասարակաց բարիքին համար կը քաջալերէր ոչ-քրիստոնէայ կրօններու հետ գործակցութիւնը: Երկրորդը ոչ միայն կաթոլիկ հաւատացեալներուն, այլ ամբողջ մարդկութեան կ'ուղղուէր եւ կ'ընդգծէր, որ Եկեղեցին համայն մարդկութեան ծառայելու կոչուած էր: Ան կը յանձնարարէր, որ եկեղեցականներ եւ աշխարհականներ հովուական ծառայութեան մէջ իրարու հետ գործակցէին եւ մարդկային կենսական կարիքներուն գոհացում տային: Այս բնագիրին մէջ Յովհաննէս ԻԳ. պապի ընկերային ուսուցումներու նուիրուած կոնդակներուն ոգին կը ցոլար:

Վատիկանի առաջին ժողովին անակնկալ աւարտը կիսատ թողած էր Եկեղեցիի սահմանումին վերաբերող աշխատանքը: Մինչ այդ Եկեղեցիի մասին կարելոր յայտարարութիւններ կը կատարուէին, ինչպէս՝ Պիոս ԺԲ.-ի «Քրիստոսի խորհրդական մարմինը» (1943) կոնդակը: Վատիկանի երկրորդ ժողովը Եկեղեցիի վարդապետութեան բնագիրին շատ ժամանակ կը տրամադրէր եւ զայն յաճախակի վերատեսութեան կ'ենթարկէր: Ժողովին գլխաւոր բնագիրը ըլլալով՝ այս մէկը նուիրապետական ու իրաւական բնոյթէն կը մերկանար եւ աստուածաշնչական, պատմական ու ուժական հանգամանք կ'առնէր: Շեշտը կը դրուէր Եկեղեցին հաւաքաբար հովուական ու ժողովական կեանքով ղեկավարելուն վրայ, ուր եպիսկոպոսներ, պապին հետ, Եկեղեցին առաջնորդելու պատասխանատուութեան կոչուած ժողովական մարմին կը կազմէին: Սուրբ կոյս Մարիամի նուիրուած բաժինը առանձին չէր մնար, այլ որպէս մարեմաբանութիւն եւ բնագիրին վերջին գլուխը կը կցուէր Եկեղեցիի աստուածաբանական եւ եկեղեցաբանական

հատուածին: Մարեմաբանութեան բաժինը կը թուէր Եկեղեցիին կողմէ սուրբ կոյս Մարիամի տրուած տիտղոսները եւ կ'աւելցնէր, թէ ասոնք չէին ժխտէր Քրիստոսի Աստուծոյ եւ մարդերու միջեւ միակ միջնորդ ըլլալը:

Եկեղեցիի վարդապետութեան բնագիրին հովուական եւ միջեկեղեցական բնոյթը ուղղափառներու, անգլիգաններու եւ բողոքականներու հետ երկխօսութեան արդիւնաւից ուղին կը բանար: Անոր կարգ մը յանձնարարութիւնները անմիջապէս կը գործադրուէին, երբ ժողովի վերջին նիստին Պօղոս Զ. կը յառաջացնէր եպիսկոպոսներու սինոտ մը, որ աշխարհի բոլոր կողմերէն եպիսկոպոսներ կը ներառէր եւ Հռոմի մէջ կանոնաւորաբար ժողովներ կը գումարէր:

Վատիկանի երկրորդ ժողովի այլ կարեւոր բնագրերէն մին կ'ըլլար «Աստուածային յայտնութեան վարդապետական սահմանումը»: Հոս եւս Աստուածաշունչին եւ Աւանդութեան յայտնութեան աղբիւրներ ըլլալու դասական սահմանումը միջեկեղեցական դիտանկիւնէն կ'ընկալուէր: Աստուածաշունչի մեկնութեան արդի մօտեցումները լրջօրէն նկատի կ'առնուէին, Պիոս ԺԲ.-ի «Հոգիին աստուածային փշումը» (1943) կոնդակին լոյսով: Այս բնագիրը կ'ըսէր, թէ յայտնութեամբ Աստուած ինզիմք, իր կամքն ու նպատակը կը յայտնէր մարդերու: Աստուածաշունչը յայտնութեան գրաւոր վկայութիւնն էր, որուն ազդեցութիւնը կը ցոլար մարդոց՝ անոր հանդէպ ցուցաբերած հակադարձութիւններուն մէջ: Աստուածաշունչը կը կարդացւէր եւ կը մեկնուէր Եկեղեցիի կենդանի համայնքին կողմէ, իր աւանդութեան, հասկացողութեան եւ մեկնութեան ճամբով, Սուրբ Հոգիէն մղուած Եկեղեցիի նուիրապետութեան առաջնորդութեամբ: Բնագիրը կը յանձնարարէր Աստուածաշունչի հանրամատչելի եւ ճշգրիտ թարգմանութիւններ պատրաստել, որպէսզի բոլոր հաւատացեալները կարենային Աստուածաշունչը կարդալ ու հասկնալ: Առաւել, բնագիրը կը քաջալերէր, որ ըստ յարմարութեան այս թարգմանութիւնները Հռոմէական եկեղեցիէն բաժնուած եղբայրներու գործակցութեամբ ըլլային, որպէսզի բոլոր քրիստոնէաներուն կողմէ գործածուէին: Այս

բոլորին հետեւանքով արտօնութիւն կը տրուէր կաթոլիկներուն գործածել Աստուածաշունչի բողոքական մասնագէտներուն կողմէ պատրաստուած Աստուածաշունչի Վերատեսեալ տարբերակը:

Ոչ-կաթոլիկներուն համար մասնաւոր նշանակութիւն կ'ունենար միջեկեղեցական յարաբերութիւններուն վերաբերող բնագիրը: Մինչեւ Յովհաննէս ԻԳ. պապի գահակալութիւնը, Հռոմէական կաթողիկէ եկեղեցիին համար միջեկեղեցական յարաբերութիւնները կը հետապնդէին մէկ նպատակ՝ բոլոր քրիստոնէաներուն վերադարձը Հռոմէական եկեղեցի. այս պատճառով ալ Հռոմէական եկեղեցին ընդհանրապէս միջեկեղեցական շարժումին չէր մասնակցեր: Միջեկեղեցական յարաբերութիւններուն վերաբերող բնագիրը այս կեցուածքը կը շրջէր եւ կաթոլիկ հաւատացեալները միջեկեղեցական շարժումին մէջ գործուն մասնակցութիւն բերելու կը հրաւիրէր: Ընդունելով, թէ երկու կողմերու պարագային ալ քրիստոնէաներուն բաժանումը մեղքի արդիւնք էր, բնագիրը Հռոմէական եկեղեցիէն դուրս գտնուողները որպէս «բաժանեալ եկեղեցիներ եւ համայնքներ» կը բնորոշէր, որոնք, վարդապետական, կարգապահական եւ նուիրապետական խաթարումներ ունենալով հանդերձ, փրկութեան խորհուրդի ստացումէն չէին զրկուած: Բնագիրը կը քաջալերէր, որ մանաւանդ այն շրջաններուն մէջ, ուր ընկերային ու ճարտարագիտական փոփոխութիւններ տեղի կ'ունենային, երկխօսութիւն տեղի ունենար եւ մասնաւոր պարագաներուն հաւաքական աղօթք կատարուէր: Բողոքականներ բնագիրը ընդհանրապէս դրական կը նկատէին, թէեւ զայն ամբողջապէս միջեկեղեցական չէին տեսներ եւ մանաւանդ կը քննադատէին, թէ յստակ չէր Հռոմէական եկեղեցիի հնքզինք միակ ճշմարիտ եկեղեցին նկատելու բնորոշումը:

Միջեկեղեցական յարաբերութիւններուն վերաբերող բնագիրին մաս կը կազմէր կրօնական ազատութեան վերաբերող բնագիրը, որ խոր քննարկումի առարկայ կը դառնար: Բնագիրը կ'ըսէր, թէ ոչ մէկ անհատ կամ հաւաքականութիւն բռնի միջոցներով իրաւունք ունէր մէկուն իր համոզումը

բռնադատող կրօնք մը պարտադրելու. կրօնական ազատութիւնը պատճառականութեամբ եւ յայտնութեամբ երեւան ելլող մարդկային արժանապատուութեան վրայ կը հիմնուէր: Այս բնագիրով կաթոլիկներ նոր մօտեցումներ կ'որդեգրէին միւս եկեղեցիներուն, կրօններուն եւ աշխարհիկ կազմակերպութիւններուն հանդէպ: Բնագիրը նաեւ քրիստոնէական ազատութեան մասին աստուածաբանական նոր քննարկումներու դուռ կը բանար:

Ժողովին միւս բնագրերը մեծ մասամբ կը վերաբերէին Հռոմէական կաթողիկէ եկեղեցիի կեանքին, եպիսկոպոսութեան, քահանայական կազմաւորումին ու ծառայութեան, կրօնաւորական կեանքի վերանորոգութեան, առաքելութիւններու եւ դաստիարակութեան: 8 դեկտեմբեր 1965-ին Վատիկանի երկրորդ ժողովը պաշտօնապէս կը փակուէր: Ժողովին մարգարէաշունչ վերջին պատգամը յարափոփոխ աշխարհի մէջ ապրող երիտասարդութեան կ'ուղղուէր, որուն կը պատգամէր բացուիլ աշխարհի դրական երեւոյթներուն, իր նմաններուն ծառայութեան լծուիլ եւ ձգտիլ իր աւագներէն աւելի լաւ աշխարհ մը կառուցելու:

Որպէս աշխարհի եւ Եկեղեցիի պատմութեան մեծ իրադարձութիւն՝ Վատիկանի երկրորդ ժողովը լրատուական միջոցներուն մէջ մեծ տեղ կը գրաւէր: Անոր ազդեցութիւնը շուտով կը զգացուէր Հռոմէական կաթողիկէ եկեղեցիին եւ միջեկեղեցական շարժումին մէջ: Ծիսական բարեկարգութեան ծիրին մէջ նախկին պարտադրեալ լատիներէնի փոխարէն՝ կը տարածուէր զանազան լեզուներու գործածութիւնը: Չանազան երկիրներու մէջ Հռոմէական եկեղեցիներու նուիրապետական բարեփոխութիւններ տեղի կ'ունենային. օրինակ՝ 1966-ին Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ կը կազմուէր Կաթոլիկ եպիսկոպոսներու ազգային համախմբումը:

Ամենէն աչքառուն կաթոլիկներու եւ միւս քրիստոնէաներու միջեւ միջեկեղեցական յարաբերութիւններու արագ զարգացումն էր: 1965-ին Հռոմէական եկեղեցիի Քրիստոնէական միութեան քարտուղարութիւնն ու Եկեղեցիներու համաշխար-

հային խորհուրդը կը գոյացնէին աշխատանքային խմբակ մը, կը նշանակուէր Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի Հաւատք եւ կարգ յանձնաժողովին մէջ կաթոլիկ պաշտօնական ներկայացուցչութիւն եւ կը սկսէր Հռոմէական եկեղեցիի Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի անդամակցութեան քննարկումը:

Զանազան երկիրներու մէջ, տեղական պայմաններու լոյսին տակ, կ'առնուէին միջեկեղեցական նման քայլեր: Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ աշխատանքային խմբակ մը կը գոյանար Ազգային եկեղեցիներու խորհուրդին եւ Կաթոլիկ եպիսկոպոսներու միջեկեղեցական ու միջկրօնական յարաբերութիւններու վարչութեան միջեւ: Վերջինս կաթոլիկներու եւ մկրտչականներու, եպիսկոպոսականներու, լուտերականներու, մեթոսականներու, բարեկարգեալներու, երիցականներու, ուղղափառներու ու այլ քրիստոնէայ յարանուանութիւններու հետ աստուածաբանական երկխօսութիւններու կը նախաձեռնէր: Զանազան կաթոլիկ ծուխեր ու թեմեր տեղական եւ շրջանային եկեղեցիներու խորհուրդներուն կ'անդամակցէին կամ անոնց հետ գործակցութիւն կը մշակէին: Տեղական շրջագիծի մէջ նաեւ կաթոլիկ եւ այլ քրիստոնէայ աշխարհականներու միջեւ երկխօսութիւնները շուտով կը ծաղկէին:

Այս շրջադարձային փոփոխութիւնները լուրջ հարցեր կը յարուցէին կաթոլիկութեան մէջ: Բազմաթիւ հաւատացեալներ կը դժգոհէին կատարուող փոփոխութիւններէն, մինչ ուրիշներ բարեփոխութիւններու ընթացքը շատ դանդաղ կը նկատէին: Այս երկու ծայրայեղութիւնները պատճառ կը դառնային, որ ոմանք ազատ կամ ընդատակէայ Հռոմէական եկեղեցիին միանային եւ ուրիշներ բոլորովին հեռանային Հռոմէական եկեղեցիէն:

Պօղոս Զ. յղութեան ծրագրումի հարցին մէջ կը վերահաստատէր Հռոմէական եկեղեցիի աւանդական կեցուածքը իր «Մարդկային կեանք» կոնդակով (1968) եւ արուեստական յղութեան ծրագրումի ամեն միջոց խստիւ կ'արգիլէր, մինչ այս հարցը քննարկող յանձնախումբին մեծամասնութիւնը յանձնա-

րարած էր այս ուղղութեամբ աւելի հասկացողութիւն ու ճկունութիւն ցուցաբերել: Բազմաթիւ կաթոլիկ աստուածաբաններ ու աշխարհականներ կը պնդէին, որ այս կոնդակը չէր համապատասխաներ «Եկեղեցին արդի աշխարհի մէջ» հովուական յանձնախումբի ակնկալութիւններուն: Նոր տիպի ազատութիւն կը դրսեւորուէր Հռոմէական եկեղեցիին մէջ, երբ նոյնիսկ գերագոյն հեղինակութիւններուն հրապարակած տեսակէտները կը քննադատուէին: Նոյնը կը վերաբերէր կուսակրօն քահանայութեան. շատեր կը յուսային, թէ այս դարաւոր կանոնը փոփոխութեան պիտի ենթարկուէր, սակայն հազարաւոր քահանաներ յուսախաբ ըլլալով իրենց կարգէն կը հրաժարէին:

Հակառակ Հռոմէական եկեղեցիի նախաձեռնած բարեփոխութիւններով արտայայտուող տեսակէտներու զանազանութեան, շատ յստակ էր, որ Վատիկանի երկրորդ ժողովի որոշումները անդառնալի էին: Ժամանակակից աշխարհի բարդ հարցերուն լուծում բերելու այս ճիգը բնականաբար նոր դժուարութիւններ պիտի յարուցէր: Դժուար էր միջին լուծում գտնել աւանդապահ եւ նորարար հոսանքներուն միջեւ, երբ Վատիկանի երկրորդ ժողովէն տասնամեակ մը ետք Հռոմէական եկեղեցին ինքզինք բազմաթիւ բարեփոխութիւններու դէմ-յանդիման կը գտնէր:

1960-ականներուն Բողոքական եւ Ուղղափառ եկեղեցիներու փոթորկոտ վիճակը նկարագրելը աւելի դժուար է, որովհետեւ երկուքն ալ Հռոմէական եկեղեցիին նման կեդրոնէ մը չէին ղեկավարուէր, այլ ունէին տեղական ու շրջանային ինքնավար նուիրապետութիւններ: Երկուքին պարագային ալ տիրական երեւոյթը աշխարհի հարցերուն մասին խոր մտահոգութիւնն ու կարիքաւորներուն օժանդակութիւնն էր: Աշխարհայնացած ընկերութեան հետ յարաբերիլը հակասական կեցուածքներ կը յառաջացնէր: Միջեկեղեցական հանդիպումներու ընթացքին աշխարհի հարցերը օրակարգի վրայ առաջնահերթ կը դառնային՝ յարաբերաբար աստուածաբանութեան եւ եկեղեցաբանութեան:

Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը ամեն ջանք կը գործադրէր Կեանք եւ գործը ու Հաւատք եւ կարգը հաւասարակշռելու: Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի գոյութեան առաջին մէկ քանի տասնամեակներուն, անդամ եկեղեցիներ բազմաթիւ պատմական թիւր հասկացողութիւններ կը փարատէին եւ կը քննարկէին աստուածաբանական ու եկեղեցաբանական հարցեր. առաւել, 1960-ականներուն քահանայութեան եւ ընկերային ծառայութեան մարզերուն մասնաւոր ուշադրութիւն կ'ընծայէին: Խորհուրդի Նիու Տելիիի երրորդ համաժողովի ընթացքին, թէեւ աստուածաբանական ու եկեղեցաբանական դասական հարցեր երկարօրէն կը քննարկուէին, սակայն մեծ կարեւորութիւն կը տրուէր վկայութեան եւ համաժողովի տեղեկագիրին մէջ յատուկ բաժին մը «Վկայող համայնքին վերասահմանումը» ենթախորագիրը կը կրէր: Նոյն տեղեկագիրին մէջ «Միութիւն» բաժինին մէջ կ'ըսուէր հետեւեալը, որ ծանօթ է որպէս Նիու Տելիիի բանաձեւ. «Կը հաւատանք, որ միութիւնը, որ Աստուծոյ կամքն ու միաժամանակ պարզէն է՝ տրուած իր Եկեղեցիին, երեւելի կը դառնայ ամեն տեղ, ուր Յիսուս Քրիստոսով մկրտուածները, որոնք նաեւ զինք որպէս Տէր եւ Փրկիչ կը խոստովանին, Սուրբ Հոգիով մէկ յանձնառու ընկերակցութեան կը վերածուին, պահելով մէկ առաքելական հաւատքը, քարոզելով մէկ աւետարանը, կիսելով մէկ նշխարը, հասարակաց աղօթքի՝ կանգնելով եւ մէկ համայնական կեանքով վկայելով ու ծառայելով բոլորին: Առաւել, անոնք կը միանան բոլոր վայրերու եւ ժամանակներու քրիստոնէական ընկերակցութեան, որպէսզի բոլոր եկեղեցիներու քահանայութիւնն ու անդամակցութիւնը բոլորին կողմէ ընդունելի ըլլան եւ բոլորը միասին աշխատին ու խօսին, երբ Աստուած այդ կատարելու հրաւիրէ զիրենք»:

Այս բանաձեւին մէջ կը խտանային աստուածաբանական բազմաթիւ մտահոգութիւններ, որոնց մասին նաեւ կը խմբագրուէր եկեղեցաբանական անցեալի քննարկումները համադրող մեկնութիւն մը:

Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի երրորդ համաժողովին Հնդկաստանի մէջ գումարումը իտալական կը դառնար անօթութեան եւ աղքատութեան քննարկումը կատարելու տեսակետէն: Համաժողովի տեղեկագիրին մէջ գտնուող «Ծառայութիւն» բաժինին մէջ կ'ըսուէր, թէ քրիստոնէական բարեգործութեան դասական ձեւերը այլեւս ժամանակավրէպ դարձած էին եւ Եկեղեցիին ծառայական կոչումը նոր եղանակներով պէտք էր արտայայտուէր արդի ընկերութեան մէջ:

Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդն ու անոր անդամ եկեղեցիները իրենց աշխարհիկ քրիստոնէութեան ներշնչումը մեծ մասամբ կը ստանային Երկրորդ համաշխարհային պատերազմին բանտի մէջ նահատակուած գերման երիտասարդ աստուածաբան Տիթրիխ Պոննհոֆըրէն (1906–1945): Աշխարհիկ միջեկեղեցական յարաբերութիւններու կարգ մը ջատագովներ, յատկապէս Նոր եկեղեցիներու առաջնորդներէն, Հաւատք եւ կարգի հնաբոյր քննարկումներէն դժգոհ էին: 1963-ին Հաւատք եւ կարգի չորրորդ համաժողովը կը գումարուէր Մոնթրէալի մէջ (Քանատա), որուն կը մասնակցէին ուղղափառ, կաթոլիկ եւ պահպանողական աւետարանական աստուածաբաններ:

1960-ականներուն միջեկեղեցական շարժումը նաեւ մեծ ուշադրութիւն կը դարձնէր ընկերային ծառայութեան: 1966-ին Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի Եկեղեցի եւ ընկերութիւն բաժանմունքը Ժնեւի մէջ համագումար մը կը կազմակերպէր «Քրիստոնէաներ մեր օրերու ճարտարագիտական եւ ընկերային յեղափոխութիւններուն մէջ» թեմային շուրջ: Առաջին անգամ ըլլալով Ափրիկէէն, Ասիայէն եւ Լատին Ամերիկայէն մեծ թիւով մասնակիցներ ներկայ կը գտնուէին այսպիսի համագումարի մը: Այս առաջին միջեկեղեցական համագումարն էր նաեւ, որուն մեծամասնութիւնը աշխարհականներէ կը բաղկանար: Կաթոլիկ պաշտօնական դէտեր եւ գլխաւոր բանախօսներ եւս նորութիւն էին: Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին չանդամակցող այլ եկեղեցական ընտանիքներ եւս ներկայ էին: Երրորդ աշխարհի այն

տեսակետը, թե Սովետական Միության եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու տիրական մրցակցութիւնը ուժի անհաւասարակշռութիւն կը յառաջացնէր միջազգային մակարդակի վրայ, մեծ շեշտադրում կը ստանար: Հարուստ ու աղքատ երկիրներու եւ զարգացած ու չզարգացած ընկերութիւններու միջեւ եղող մեծ տարբերութիւնը կը պարտադրէր եկեղեցիները ընդգծելու ճարտարագիտական արդի կարելիութիւնները բոլորին հասանելի դարձնելու հրամայականը:

Յատուկ լուսարձակի տակ կը դրուէր այն իրողութիւնը, թե Աւետարանի եղափոխիչ նկարագիրն ու ժամանակակից աշխարհի ընկերային յեղափոխութիւնը հասարակաց յայտարարներ ունէին: Ոմանք կը պնդէին, թե քրիստոնէաներ մասնակից պէտք էր դառնային ընկերային յեղափոխութեան, նոյնիսկ ի պահանջել հարկին վայրագութիւն գործադրելով: Համագումարի տեղեկագիրին մէջ նաեւ կ'ըսուէր, թե երբ փոքրամասնութիւն մը կ'անտեսէր մեծամասնութեան բարօրութիւնը, քրիստոնէաներ անմիջապէս քաղաքական կեցուածք պէտք էր որդեգրէին եւ պայքարէին ընկերային արդար համակարգի յառաջացումին համար: Ըստ նոյն տեղեկագիրին՝ այս պարագաներուն իշխող ուժին վայրագութիւնը վայրագութեամբ միայն կարելի էր չէզոքացնել:

Թէեւ համագումարը կը հաստատէր, որ Եկեղեցին ընկերային յեղափոխութեան նեցուկ կը կանգնէր անարդարութեան դէմ, սակայն վայրագութեան դիմելու հարցին մէջ միաձայն չէր: Համագումարը նաեւ կ'ընդգծէր, որ քրիստոնէաներ ու եկեղեցիներ աշխարհիկ կարգերը կը մարդկայնացնէին եւ այսպէսով մարդկային ընկերութիւնը կը բարեկարգէին: Անոնք միշտ քրիստոնէական մօտեցում կը ցուցաբերէին եւ կ'ապաւինէին աստուածային դատաստանին: Աստուածաբանութեան եւ ընկերային բարոյականի խմբակը կը բացատրէր, թե քաղաքական եւ տնտեսական բարդութիւններուն մէջ քրիստոնէաներ արդարն ու անարդարը եւ մարդկայինն ու անմարդկայինը կը սահմանէին աստուածաշնչական աղբիւրներով, Եկեղեցիին պատմական ու ներկայ

իմացականութեամբ եւ ընկերային գիտութիւններու տուեալներով: Սակայն ասոնք վերացական իրականութիւններ չէին մնար, այլ կը վերածուէին մարդկային ընկերութիւնը բարեկարգող շարժումի: Ասոնց բոլորին նպատակը ո՛չ թէ աշխարհը ըմբռնելն էր, այլ Աստուծոյ օգնականութեամբ զայն վերաըստեղծելը:

Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին հովանաւորած համագումարը չէր նմաներ Վատիկանի երկրորդ ժողովին: Ան աւելի կարճ էր ու կը տւէր երկու շաբաթ եւ միայն քանի մը բարձրաստիճան հոգեւորականներ կը մասնակցէին անոր: Հետեւաբար, համագումարը իրաւասութիւն չունէր Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին կամ անոր անդամ եկեղեցիներուն անունով խօսելու: Սակայն իր խօսքը անոնց ուղղելով՝ ցոյց կու տար, թէ եկեղեցիներուն համար ընկերային, տնտեսական ու քաղաքական հարցերը հրատապ եւ այժմէական էին:

Տեղային հարցերու մարզին մէջ, Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի խտրականութիւնը դատապարտող նախորդ բանաձեւերը կը վերահաստատուէին եւ եկեղեցիներ կը խոստանային ընդդիմանալ ցեղային գերագահութեան բոլոր ձեւերուն, որոնք կրնային ընկերային կառոյցներով կամ անհատական նախասիրութեամբ երեւան ելլել եւ ստանալ օրինական հանգամանք:

Համագումարը իր բարձրակէտին կը հասներ, երբ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն ոչ-վայրագ քաղաքացիական իրաւունքներու շարժումի նշանաւոր դեկավար Մարթին Լուտեր Քինկ Կրտսեր (1929–1968) քարոզ մը կու տար: Ան հիմնադիրն էր Հարաւի քրիստոնէական առաջնորդութեան ընկերակցութեան եւ կարելոր դերակատարութիւն կ'ունենար Ամերիկայի Միացեալ Նահանգներու սեւամորթներու ընկերային արդարութեան տիրացումի պայքարին մէջ եկեղեցիներու եւ միջեկեղեցական շարժումին զօրակցութեան երաշխաւորումին: Ան անձամբ ժնեւ չէր կրնար ժամանել, որովհետեւ Շիքակոյի մէջ ըմբոստութիւն ծայր առած էր, սակայն իր

քարոզը նախապես կ'արձանագրուէր եւ եկեղեցական արարողութեան պահուն կը սփռուէր: Ան իր քարոզին մէջ կ'ըսէր, թէ աննպատակ վայրագութիւնը մերժելի էր եւ անհեթեթ էր, որ ազատութեան վրայ հիմնուած ամերիկացի ազգը տակաւին մարդկային իրաւունքներու ձեռքբերումին համար պայքար կը մղէր: Երկու տարի ետք ան պիտի ահաբեկուէր որպէս արդի քրիստոնէական նահատակ:

Կաթոլիկ, բողոքական եւ ուղղափառ ներկայացուցիչներով Եկեղեցիին դերը աշխարհի մէջ պարզող համագումար մը կը կազմակերպուէր Պէյրութի մէջ 1968-ին, «Միջագային գործակցութիւն ընկերային բարելաւումի համար» թեմային շուրջ: Հռոմէական եկեղեցիի եւ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի համատեղ ջանքերով կազմակերպուած այս համագումարին կը մասնակցէին աշխարհի տնտեսական ու քաղաքական հարցերու մասնագէտներ եւ աստուածաբանական ենթահողի վրայ կը փորձէին բարելաւումի ռազմավարութիւն մշակել: Քննարկումներուն մղիչ ուժը կը դառնային 1966-ի Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կազմակերպած Ժնեւի համագումարի տեղեկագիրը եւ Պօղոս Զ. պապի երրորդ աշխարհի բարելաւումին ու օժանդակութեան համար հրապարակած «Մարդոց զարգացումը» (1967) կոնդակը, ուր ան կ'ըսէր, թէ խաղաղութեան համագոր նոր եզրը ընկերութեան բարելաւումն էր: Համագումարը կոչ կ'ուղղէր քրիստոնէաներուն միջեկեղեցական գործակցութեամբ քաղաքական գործուն մասնակցութիւն ունենալ տեղական պայմաններուն մէջ եւ զանազան միջոցներով ընկերութեան բարելաւումի ջատագովները դառնալ՝ այս ուղղութեամբ կառավարութիւնները գործնական քայլեր առնելու մղելով: Ան նաեւ կը յանձնարարէր երաշխատրել տարի մը առաջ Հռոմէական եկեղեցիի եւ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կազմած Ընկերութիւն, բարելաւում եւ խաղաղութիւն յանձնախումբին գործունէութեան շարունակութիւնը:

Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի Ուփսալայի (Շուէտ) 1968-ի չորրորդ համաժողովը նոյն մտահոգութեան

իններով որոշումներ կ'առնէր: Մինչ այդ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին անդամ կը դառնային բազմաթիւ Բողոքական ու Ուղղափառ եկեղեցիներ եւ Հռոմէական եկեղեցիին հետ գործակցութիւնը կ'աճէր: Ուփսալայի համաժողովը դրականօրէն կը գնահատէր 1966-ի Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կազմակերպած Ժնեւի համագումարին եւ 1968-ի Պէյրութի համագումարին որոշումները: Ան, աստուածաբանութեան ու միջազգային հարցերու արծարծումին միջեւ հաւասարակշռութիւն պահելուն ուշադիր դառնալով հանդերձ, շեշտը աւելի վերջինին վրայ կը դնէր: Քննարկումի առարկայ կը դառնային եւ համաժողովի տեղեկագիրին մէջ կը ներառուէին հետեւեալ հարցերը՝ պատերազմ եւ խաղաղութիւն, մարդկային իրաւունքներ, կիներու ամբողջական մասնակցութիւնը ընկերային կեանքին, պատերազմի գիտակից ընդդիմութիւն, ցեղապաշտութիւն, գաղթականութիւն, տնտեսական արդարութիւն, ազգայնականութիւն, միջազգային տուրքեր, անօթութիւն եւ աշխարհի բարելաւում:

Համաժողովի բանաձեւերէն մին կ'ընդգծէր, որ աշխարհի կարիքներուն դիմաց անտարբեր գտնուիլը գործնական հերետիկոսութիւն էր: Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի անդամ եկեղեցիներուն կոչ կ'ուղղուէր գործակցիլ ոչ-անդամ եկեղեցիներուն, այլ կրօններու ներկայացուցիչներուն եւ մարդկութեան բարիքը կամեցողներու հետ եւ նպաստել աշխարհի բարելաւումին: Ամերիկայի Վիթթնամ կատարած ներխուժումը սուր քննադատութեան կ'ենթարկուէր: Երիտասարդ պատգամաւորներ իրենց դժգոհութիւնը կը յայտնէին՝ ըսելով, թէ չէր բաւեր միայն խնամեալ տեղեկագրեր խմբագրել, այլ գործնական քայլերու պէտք էր դիմել աշխարհի բնակչութիւնը տիրող անարդար ու անմարդկային վիճակէն դուրս բերելու համար:

Համաժողովը կը բնորոշուէր որպէս խանդավառ, բազմամարդ եւ փոթորկոտ, ուր, յարաբերաբար նախկին համաժողովներուն, աւելի սրտքաց քննարկումներ կը կատարուէին եւ աշխարհի կարիքներուն հասնելու ճիգը Եկեղեցին կ'առնէր աշխարհին:

Այսպիսի հաւաքներ եկեղեցիները դեմ-յանդիման կը դնէին աշխարհի մարտահրաւերներուն հետ: Անշուշտ, շատ մը երկիրներու մէջ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի համաժողովներու ընթացքին առնուած որոշումները մեծ ազդեցութիւն չէին ունենար, որովհետեւ եկեղեցիներ իրենց տեղական պայմաններուն համաձայն պարտաւոր էին գործել: Եւրոպայի եւ Ամերիկայի շատ մը եկեղեցիներ նուազ զգայնութիւն կը ցուցաբերէին միջազգային հարցերուն եւ առաւել ուշադրութիւն կ'ընծայէին ներքին կազմակերպչական հարցերուն: Համայնավար երկիրներու մէջ թէեւ եկեղեցական պաշտօնական կեանքը նեղութիւններ կը դիմագրաւէր, սակայն ընդատակեայ Եկեղեցին կը վերապրէր:

Մասնայատուկ մտահոգութիւններէ մեկնող շրջանային միջեկեղեցական խորհուրդներ կը կազմուէին: Այսպէս, 1959-ին Արեւելեան Ասիոյ քրիստոնէական խորհուրդն ու Խաղաղական ովկիանոսի եկեղեցիներու խորհուրդը կը հիմնուէին, իսկ 1963-ին՝ Ափրիկէի եկեղեցիներու խորհուրդը եւ 1964-ին՝ Եւրոպայի եկեղեցիներու խորհուրդը: Ափրիկէի մէջ անկախ եկեղեցիներու աճը կը շարունակուէր. ասոնցմէ ոմանք աւանդական եկեղեցիներու կը պատկանէին, իսկ ուրիշներ նոր եկեղեցիներ կը դառնային: 1960-ականներուն Սահարայի անապատէն հարաւ 2000-էն աւելի անկախ եկեղեցիներ կային, որոնք աւելի քան մէկ միլիոն հաւատացեալներ ունէին: Այս եկեղեցիները միաժամանակ միջեկեղեցական շարժումին մէջ կը սկսէին գործուն ներկայութիւն դառնալ եւ իրենց բնիկ տարրերը ներդաշնակել պաշտամունքային ու կազմակերպչական կեանքին հետ: Նոյն ժամանակաշրջանին աստուածաբանութեան մէջ կը զարգանային նոր գաղափարաբանութիւններ, որոնցմէ ամենէն նշանաւորը ժամանակաւորապէս կը դառնար Աստուծոյ մահը մտածողութիւնը: Յոյսի եւ ազատագրութեան աստուածաբանութիւնը եւս կը մշակուէր: Այս աստուածաբանական բոլոր նորարարութիւնները կու գային անգամ մը եւս հաստատելու, որ ինչպէս անցեալին, այսօր եւս Եկեղեցին իրեն ժամանակակից աշխարհին հանդէպ անտարբեր չէր կրնար մնալ:

1970-ականներուն Աստուածաշունչը, միսիոնարութիւնը եւ աւետարանչութիւնը շեշտադրող աւանդական աւետարանական բողոքականութիւնը վերագարթօնք կ'ապրէր: Այս շարժումին ակնառու առաջնորդը կը հանդիսանար ամերիկացի աստուածաբան Գարլ Ֆերտինանտ Հաուրըտ Հենրի (1912–2003), որ 1956-ին «Քրիստոնէութիւնը այսօր» ամսագիրը կը հիմնէր եւ 1966-ին Պերլինի մէջ կը նախագահէր աւելի քան 100 երկիրներէ ժամանած 1200 անձերու մասնակցութեամբ գումարուած Աւետարանչութեան համաշխարհային համագումարին: 16–25 յուլիս 1974-ին Լոզանի մէջ 150 երկիրներէ եւ 135 բողոքական յարանուանութիւններէ ժամանած 2500 պատգամաւորներով Աւետարանչութեան համաշխարհային համագումարը կը գումարուէր: Ամերիկացի նշանաւոր աւետարանիչ՝ Պիլի Ֆրանքլին Կրահըմ (1918–2018), կ'ըլլար գլխաւոր բանախօսը, որ «Աշխարհ Աստուծոյ ձայնը թող լսէ» թեմային շուրջ կը խօսէր եւ համաժողովի աւարտին կը յայտարարէր, որ հոս մշակուած Լոզանի ուխտը գոհացուցիչ կը համարէր, որովհետեւ ան աստուածային ներշնչումը, ճշմարտութիւնն ու Հին եւ Նոր կտակարաններուն Աստուծոյ կողմէ գրուած, անսխալական ու հաւատքի միակ ուղեցոյց ըլլալու հեղինակութիւնը կը հաստատէր: Առաւել, ներողամտութիւն խնդրելէ ետք միսիոնարութեան անցեալի սխալներուն համար, Լոզանի ուխտը կ'ըսէր, թէ աւետարանչութիւնն ու ընկերաքաղաքական յանձնառութիւնը քրիստոնէական պարտաւորութիւն էին: Ան միսիոնարական նոր ժամանակշրջանի սկիզբը կը յայտարարէր եւ միաժամանակ կ'ընդգծէր, որ փրկութիւնը միմիայն Յիսուս Քրիստոսի վրայ մեր ունեցած հաւատքով կարելի էր:

Պահպանողական քրիստոնէութիւնը աւելի կը շեշտուէր մանաւանդ Ամերիկաներու եւ Ափրիկէի մէջ յայտնուող հոգեգալստական յարանուանութիւններով: Հիւսիսային Ամերիկայի մէջ հոգեգալստական ամենէն մեծ յարանուանութիւնը Աստուծոյ հաւաքները եկեղեցին կը դառնար, որ 1970-ականներուն շուրջ մէկ միլիոն երեք հարիւր հազար հաւատացեալ ունէր, մինչ հոգեգալստական յարանուանութիւններու թիւը

130-ի կը բարձրանար: Նոյն ժամանակաշրջանին ոչ-հոգեգալստական «շնորհաձիր» կոչուած շարժումը եւս կը զարգանար Ամերիկայի Միացեալ Նահանգներու պատմական եկեղեցիներուն եւ մանաւանդ Եպիսկոպոսական, Լուտերական, Մեթոտական, Երիցական եւ Հռոմէական եկեղեցիներուն մէջ:

Պահպանողական աւետարանչութիւնը կը մղէր միջեկեղեցական շրջանակները քննարկելու, թէ միսիոնարութիւնն ու աւետարանչութիւնը ինչպէս պէտք էր կատարուէին: Պերլինի եւ Լոզանի համաժողովներուն մասնակցող կարգ մը եկեղեցիներ նաեւ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի անդամներ էին, ուր միսիոնարութեան եւ աւետարանչութեան աստուածաբանական տեսակէտները աւելի խայտաբղէտ պատկեր ունէին: 1975-ին, երբ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի հինգերորդ համաժողովը կը գումարուէր, պահպանողական աւետարանականներ եւ այլ կրօններու հետ երկխօսութեան ու ազատագրութեան աստուածաբանութեան համակիրներ իրարու հետ կը շփուէին:

Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի հինգերորդ համաժողովը տեղի կ'ունենար 23 նոյեմբեր–10 դեկտեմբեր 1975-ին Նայրոպիի մէջ (Քենիա), որուն կը մասնակցէին 271 անդամ եկեղեցիներու 676 պատգամաւորներ,– գրեթէ կէսը երրորդ աշխարհէն,– առաւել մեծաթիւ խորհրդատուներ, պաշտօնեաներ, տեղեկատուական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ ու դէտեր: Ազատագրութեան աստուածաբանութեան քննարկումին մեծ կարեւորութիւն կը տրուէր, առաւել եկեղեցիներուն եւ աշխարհին մէջ եղող աղքատներուն, բռնութեան ենթարկուածներուն եւ համեմատականօրէն անբաւարար կերպով համաժողովին ներկայ գտնուողներուն, ներառեալ կիները, մասնաւոր ուշադրութիւն կ'ընծայուէր: Սուր վէճ կը ծագէր Ուփսալայի համաժողովին Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին որդեգրած Յեղային խտրականութեան յաղթահարումի ծրագիրին համար: Նիւթական օժանդակութիւն եղած էր ցեղային խտրականութեան դէմ պայքարող զանազան կազմակերպութիւններու, որոնք առաւելաբար

իրենց յարձակողապաշտ քաղաքականությունը սնուցած էին եւ շատ քիչ գումար յատկացուցած մարդասիրական նպատակներու: Թէեւ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի պիւտճէն շատ քիչ մաս մը այս ծրագիրին տրամադրուած էր, որ խորհուրդի 275 պաշտօնեաներէն միայն չորսը ունէր, սակայն խորհրդանշականօրէն մեծ կարեւորութիւն կը ստանար: Համաժողովի պատգամաւորներէն ոմանք կ'առաջարկէին այս նպատակին համար կատարուող նպաստները սահմանափակել, սակայն գործնական որոշում չէր առնուեր: Թէեւ կարգ մը եկեղեցիներ իրենց անդամակցութիւնը կը դադրեցընէին, որովհետեւ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը կը քննադատէին ազատագրութեան աստուածաբանութեան տուած քաղաքական բնոյթին համար, սակայն համաժողովէն ետք նոր եկեղեցիներ կ'անդամագրուէին, եւ 1983-ին Վանգուվըրի մէջ (Քանատա) գումարուած Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի վեցերորդ համաժողովին կը մասնակցեր աւելի քան 300 եկեղեցի:

Նայրոպիի մէջ այլ հարցեր եւս կը քննարկուէին. օրինակ՝ քրիստոնէաներու միութեան մէջ միջեկեղեցական յարաբերութիւններուն ունեցած դրական դերն ու մէկ Եկեղեցին որպէս միացեալ տեղական եկեղեցիներու ժողովական ընկերակցութիւն: Պահպանողական աւետարանչութիւնը ակներեւ էր համաժողովի այն զեկոյցին մէջ, որ կը կրէր «Քրիստոսը խոստովանիլ այսօր» խորագիրը: Համաժողովը նաեւ կենսական կը նկատէր այլ կրօններու հետ երկխօսութեան շարունակութիւնը. այս շրջագիծին մէջ, հրեայ-քրիստոնէայ պատմական յարաբերութիւններու պարագային, լուսարձակի տակ կը բերուէին խաչակրութիւնները, հաւատաքննութիւնն ու Ողջակիզումը:

Թէեւ Վատիկանի եւ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի գործակցութիւնը սերտօրէն կը շարունակուէր 1970-ականներուն, սակայն Հռոմէական եկեղեցիի Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի անդամակցութեան յոյսերը ի դերեւ կ'ելլէին: Հռոմէական եկեղեցիին մէջ ծայր կ'առնէր

հակամիջեկեղեցական եւ հակաքարեփոխական հոսանքը, որ հին աւանդապաշտութեան վերադարձ չէր, այլ պապական հեղինակութեան կեդրոնացում: Պօղոս Ջ. պապ 1978-ին կը վախճանէր, եւ անոր կը յաջորդէր Վենետիկի պատրիարք Ալպիոս Լուչիանի, որ Յովհաննէս Պօղոս անունը կ'առնէր եւ ընտրութենէն քանի մը շաբաթ ետք կը վախճանէր: Անոր կը յաջորդէր, չորս դար ետք առաջին անգամ ըլլալով, Գրագոյի առաջնորդ լեհ Քարոլ Վոթեուս կարտինալը, որ հոկտեմբեր 1978-ին պապ կ'ընտրուէր եւ Յովհաննէս Պօղոս Բ. անունով կը գահակալէր:

Նոր պապը ուժեղ անահատականութեամբ օժտուած առաջնորդ մըն էր եւ Հռոմէական եկեղեցիին նոր կեանք եւ ուղղութիւն կու տար: Ան իմաստասէր, բազմալեզու եւ մարդասօտ անձ մըն էր, որ համայնավար երկիրի մը մէջ յաջողապէս պաշտօնավարած էր եւ հիմա Հռոմէական եկեղեցիին նոր շունչ կը բերէր եւ բոլորին հանդէպ մեծ հոգածութիւն կը ցուցաբերէր: Ան աշխարհի զանազան երկիրները կը ճամբորդէր եւ մեծ խանդավառութեամբ կը դիմաւորուէր: Անոր ջերմ բնատրութիւնն ու շնորհալի ներկայութիւնը կ'արժանանային բոլորի հիացումին: Ան միաժամանակ կ'ուզէր կարգ-կանոն հաստատել Հռոմէական եկեղեցիի աշխարհով մէկ տարածուած հօտին մէջ՝ որդեգրելով վարդապետական ու կարգապահական յստակ կեցուածքներ, քահանայական կուսակրօնութիւնը ընդգծելով եւ ընդդիմանալով կիներու քահանայութեան: Սուրբ Մարիամի նուիրուած ուխտատէղիները այցելելով՝ ան մարեմական բարեպաշտութեան նոր զարկ կու տար: Միջեկեղեցական յարաբերութիւններուն մէջ ան անկեղծ եւ միաժամանակ զգուշ էր. կաթոլիկ վարդապետութեան կառչած մնալով հանդերձ՝ ան Եկեղեցիի միութեան վերահաստատումը կը ջատագովէր եւ մանաւանդ ուղղափառներուն հետ ջերմ կապեր կը պահէր:

* * *

Մեր գիրքի աւարտին կը հաստատենք, որ Եկեղեցիի դարաւոր պատմութիւնը յաջողութիւններու եւ ձախողութիւններու երկար շղթայ մըն է: Ան ցոյց կու տայ Աստուծոյ ներկայութիւնը մարդերու կեանքին մէջ եւ միաժամանակ կը մատնէ մարդկային տկարութիւնները: Թէեւ բոլոր ժամանակներուն ալ Եկեղեցին բազմաթիւ դժուարութիւններու դէմ-յանդիման գտնուած է, սակայն այսօր ան կը դիմագրաւէ նիւթապաշտ կեանքի եւ աթոմական ռումբի վտանգի մարտահրաւերները: Սակայն քրիստոնէաներ իրենց կեանքն ու առաքելութիւնը չեն կրնար շարունակել առանց Եկեղեցիի ապագային հանդէպ խոր վստահութիւն ունենալու: Վստահաբար, ան նոր փոփոխութիւններու պիտի ենթարկուի եւ պիտի մտնէ նոր պայքարներու մէջ: Աստուծոյ աջը միշտ հովանի պիտի ըլլայ անոր եւ պիտի առաջնորդէ զայն Երկինքի արքայութեան տեսլականով:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

- Աբրահամ [Abraham] 357
Ագուինացի [Aquinas] 18, 142, 157, 389
Ագսել [Axel] 191
Ադամ [Adam] 95, 223
Ազպրբի [Asbury] 299, 312
Աթենակորաս [Athenagoras] 426
Ալին [Alline] 302
Ալչատի [Alciati] 92
Ալեսանտրո [Alessandro] 174, 178, 180
Ալեանտրը [Aleander] 23, 24
Ալըն [Allen] 177, 262
Ալպացի [of Alba] 173
Ալպերթ [Albert] 37, 39, 336
Ալպերթցի [d'Albert] 171
Ալպինո [Albino] 443
Ալպրեխթ [Albrecht] 15, 17, 79, 187, 272, 320, 337
Ալվարեզ [Álvarez] 170, 171
Ալֆոնսո [Alfonso] 150, 154
Ալֆրէտ [Alfred] 344, 391
Աղէքսանդր [Alexander, Alexis, Alexius] 351, 352, 357, 367, 369, 401, 403
Ամի [Ami] 102
Ամիլիանի [Aemiliani] 144
Ամոն [Amon] 62
Ամպրոսիոս [Ambrose, Ambrosio] 187
Ամպրուազ [Anbroise] 385
Ամս [Ames] 215
Ամստորֆ [Amsdorf] 14, 28, 78, 183
Այնսվըրթ [Ainsworth] 213
Անդրէաս [Andrea, Andreas, Andrew] 10, 14, 19, 20, 28, 29, 33, 35, 52, 81, 92, 140, 184, 218, 275, 406
Անէսլի [Annesley] 283

Անէթ [Annet] 261, 262
 Անթուանէթ [Antoinette] 382
 Անժէլա [Angela] 145
 Անժէ [Hangest] 91
 Անկուլեմցի [d'Angoulême] 93
 Անճէլօ [Angelo] 425
 Աննա [Anne] 5, 10, 47, 111, 112, 113, 115, 118, 119, 230, 251
 Անտըրսոն [Andersson] 84
 Անտոն [Anthony, Antoine, Antonino, Antonio] 89, 94, 144, 147, 165, 166, 167, 168, 171, 241, 254, 344, 381, 404
 Անտրէա [Andreä] 185
 Անտրուզ [Andrewes] 215
 Աշլի-Գուփըր [Ashley-Cooper] 241
 Ապըթ [Abbot] 215, 217
 Առնոլտ [Arnold] 273
 Ասթրուզ [Astruc] 320, 321
 Ատոնիրամ [Adoniram] 362
 Ատոլֆ [Adolf, Adolph] 333, 335, 340, 358, 359, 414
 Ատոլֆոս [Adolphus] 189, 190, 191
 Ատրիան [Adrian] 30, 37, 146, 212
 Արեսըն [Aresen] 83
 Արթըր [Arthur] 110, 344, 363
 Արիստոտէլ [Aristotle] 11, 12, 17, 235, 338
 Արմանս [Armand] 190
 Արմինիուս [Arminius] 199, 200, 201, 202, 214
 Արնըլտ [Arnold] 342
 Արնտ [Arndt] 267
 Արուէթ [Arouet] 261
 Արքրայթ [Arkwright] 280
 Աիլացի [of Ávila] 159
 Աւստրիացի [of Austria] 174
 Ափոսթոլոս [Apostolos] 401

 Բարթոլոմէոս [Bartolommeo, Bartholomew] 172, 173, 263, 272

Բերրսոն [Petersson] 84, 85
Բերրսըն [Petersen] 82
Բենիամին [Benjamin] 262
Բերին [Perrin] 102
Բլանզիոս [Plancius] 200
Բորթրֆիլդ [Porterfield] 369
Բրայս [Price] 351
Բրիսո [Prideaux] 350

Գաբրիել [Gabriel] 17, 28, 385
Գաթըն [Cotton] 221
Գաթլըր [Cutler] 248
Գամերոն [Cameron] 229
Գամպեջիո [Campeggio] 37, 67
Գամփիոն [Campion] 177
Գանո [Cano] 156, 157
Գասթելիո [Castellio] 104
Գանսթեյն [Castein] 271
Գասպար [Caspar, Gasparo, Kaspar] 60, 71, 72, 143, 146, 184, 200
Գարաչիոլի [Caraccioli] 148
Գարաֆա [Caraffa] 71, 143, 146, 147, 148
Գարթվրայթ [Cartwright] 209, 210, 211, 280
Գարլ [Carl, Karl] 19, 192, 271, 420, 440
Գարլսթատթցի [of Karlstadt] 14, 19, 28, 29, 33, 35, 52, 62, 81
Գարլո [Carlo] 144
Գարնոգի [of Carnock] 294
Գարոլ [Caroll] 313
Գարոլի [Caroli] 99
Գարփզով [Carpzov] 270, 271
Գարվալիո-Մելոնցի [Carvalho e Melo] 262, 382
Գափիթո [Capito] 48, 58
Գեթ [Ket] 122
Գեմպրլ [Campbell] 367
Գերի [Carey] 304, 352

Գեորգ [Georg, George, Georgios, Giorgio] 37, 38, 41, 53, 56, 66, 69, 73, 133, 184, 195, 215, 231, 249, 256, 270, 282, 284, 328, 335, 349, 391, 406, 410
Գիոճացի [da Chioggia] 146
Գիթթըկարս [Kierkegaard] 356
Գիւտպըրթ [Cuthbert] 109
Գիւփէր [Kuyper] 357
Գլարք [Clark, Clarke] 263, 377
Գլուսս [Claus] 62
Գլերգ [le Clerc] 320
Գլոս [Claude] 151
Գոբ [Cop] 91, 93
Գոգէիոս [Cocceius] 224
Գոգցի [de Cock] 357
Գոլենսո [Colenso] 344
Գոլերիճ [Coleridge] 342
Գոլէթ [Colet] 108
Գոլինգ [Collins] 254
Գոլինցի [de Coligny] 165, 167, 171, 172
Գոնթարինի [Contarini] 71, 72, 143, 146, 147, 148, 151
Գոնստէցի [of Condé] 166, 167
Գոնրաս [Conrad] 42, 52, 53, 54, 55, 335
Գոսթացի [de Costa] 357
Գովէն [Cauvin] 91
Գովըրտէյլ [Coverdale] 109, 117, 130
Գոսուր [Codure] 151
Գորթէս [Cortese] 143, 147
Գորնէլիոս [Cornelius] 48, 380
Գորսիէ [Cordier] 91
Գութըր [Kutter] 359
Գուլհաէս [Coolhaes] 200
Գուրնհերթ [Coornhert] 200
Գուք [Cook] 306
Գոք [Coke] 312

Գաուփրր [Cowper] 293
Գրաութ [Krauth] 369
Գրենմրր [Cranmer] 109, 111, 112, 113, 114, 116, 117, 118, 119, 120,
121, 123, 124, 125, 126, 127, 128, 130
Գրեյթրն [Creighton] 312
Գրիգոր [Gregorio, Gregory] 10, 143, 147, 158, 162, 385, 399
Գրոթոս [Crotus] 8
Գրոմուէլ [Cromwell] 114, 115, 116, 117, 118, 119, 128, 224, 225

Դանիէլ [Daniel] 275, 282, 325, 371
Դաւիթ [David] 133, 139, 258, 276, 277, 285, 307, 333, 335, 349, 352

Եանկ [Young] 372
Եապլոնսքի [Jablonsky] 275, 277
Եդուարդ [Edward] 107, 116, 119, 120, 121, 122, 124, 125, 128, 129,
130, 134, 206, 225, 254, 259, 263, 282, 346, 347, 348, 377
Եղիա [Elias, Elihu, Elijah] 262, 368
Եղիսաբէթ [Elizabeth] 107, 113, 124, 125, 128, 129, 130, 133, 131,
135, 138, 140, 164, 176, 177, 206, 207, 214, 263
Ենովք [Enoch] 70
Եոտոգրս [Jodocus] 267
Եոնաս [Jonas] 28
Եունուս [Junius] 201
Եուսթոս [Justus] 28
Եպենեզրր [Ebenezer] 262, 282, 294
Երազմոս [Erasmus] 6, 11, 26, 32, 43, 48, 93, 108, 109
Երեմիա [Jeremias] 396
Եփրեմ [Ephraim] 319

Զատոնզքի [Zadonsky] 399
Զաքարիա [Zaccaria, Zacharias, Zachary] 144, 184, 304
Ջելլ [Zell] 47, 58
Ջէվէրր [Xavier] 150, 151, 161
Ջէսպրկրր [Zeisberger] 277

Զիկրնապալկ [Ziegenbalg] 272
Զիկլըր [Ziegler] 58
Զինզենսոռֆ [Zinzendorf] 274, 275, 276, 277, 278, 279, 287, 289
Զոզիմա [Zosima] 399
Զուլինկլի [Zwingli] 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 54, 56, 64, 65, 67, 68, 97, 120, 131

Էյզհորն [Eichhorn] 320
Էթափլեցի [d'Étaples] 11, 86, 92
Էթթորե [Ettore] 143
Էթիեն [Étienne] 382
Էթհրն [Ethan] 262
Էլլրի [Ellery] 365
Էլիոթ [Eliot] 246, 306
Էլհանան [Elhanan] 315
Էկմոնթ [Egmont] 170
Էմրրսոն [Emerson] 376
Էմիլ [Emil, Émile] 390, 420
Էմլին [Emlyn] 263
Էմմանուել [Emmanuel, Immanuel] 105, 323, 387
Էմոնս [Emmons] 301
Էմպրի [Embury] 299
Էյնարսոն [Einarsen] 83
Էնկելպրեգթսոն [Engelbrektssön] 83
Էպերհարս [Eberhard] 332
Էսթիեն [Estienne] 94
Էսթուալցի [de l'Estoile] 92
Էտի [Eddy] 377
Էտմունտ [Edmund] 177, 210, 280
Էտուրբոզ [Edwards] 298, 300, 301
Էրնեսթի [Ernesti] 321
Էրնրսթ [Ernst] 41, 66, 188, 275, 325, 332, 340
Էրսքին [Erskine] 282, 294
Էրտմութ [Erdmuth] 274

Էք [Eck] 52

Էքցի [of Eck] 17, 19, 23, 67, 72

Ըրվինկ [Irving] 348

Թաբան [Tappan] 363

Թազէ [Taze] 371

Թանսթոլ [Tunstall] 109

Թաուսըն [Tausen] 82

Թափլէյտի [Toplady] 292

Թէթզել [Tetzel] 15, 19

Թեմփրլ [Temple] 414

Թէյլըր [Taylor] 342, 353, 361

Թեննէթ [Tennent] 297

Թեննսոն [Tennyson] 344

Թերէզա [Teresa] 159

Թեոնոր [Theodor, Theodore] 106, 164, 199, 200, 272, 297, 333, 355, 364

Թիչո [Tycho] 237

Թիենացի [da Thiene] 143, 158

Թիլէթցի [du Tillet] 93

Թիլոթսոն [Tillotson] 2564

Թիլիխ [Tillich] 420

Թիլինկ [Teelinck] 267

Թիխոն [Tikhon] 399, 403, 404

Թինսալ [Tindal] 254, 256

Թինստէյլ [Tyndale] 109

Թիրրլ [Tyrrell] 391

Թիրոլցի [Tyrolean] 62

Թոլանս [Toland] 254

Թոլազ [Tholuck] 334, 335

Թոմասիոս [Thomasius] 270

Թոմաս [Thomas, Tomás, Tommaso] 18, 29, 34, 42, 62, 108, 109, 110, 114, 117, 119, 149, 208, 209, 212, 216, 221, 240, 245, 254, 261, 262, 263, 282, 290, 293, 294, 299, 307, 309, 312, 342, 351, 367

Թուսրըր [Tudor] 124, 134

Թրավրըր [Travers] 210, 212

Թրեկելէ [Tregelles] 350

Թրիեցի [de Trie] 104

Թրոլ [Trolle] 83

Թրոյէլսզ [Troeltsch] 340

Թրոքմորթըն [Throckmorton] 212

ժանն [Jean, Jeanne] 160, 171, 382

ժանսէն [Jansen] 380

ժէյն [Jane] 160

Իգնատիոս [Ignatius, Ignaz] 149, 387

Իզապելլա [Isabella] 24, 110, 142

Իզիտոր [Isidore] 395

Իլիրիզոս [Illyricus] 78, 158, 183

Ինկուեր [Ingwer] 358

Իննովկենտիոս [Innocent] 379

Իսահակ [Isaac, Issac] 237, 281, 293, 304, 357

Իսրայէլ [Israel] 349

Իտէլէթ [Idelette] 100

Լաթիմըր [Latimer] 109, 126

Լայթֆուֆ [Lightfoot] 344

Լամընէցի [de Lamennais] 385

Լայնէզ [Lainez] 150, 154

Լայպնից [Leibniz] 239, 322, 323

Լանսէլոթ [Lancelot] 215

Լաուս [Laud] 219, 220, 221, 222, 223

Լասքի [Laski] 123

Լարս [Lars] 84, 85

Լարսոնըր [Lardner] 264
 Լաւալ [Laval] 244
 Լելիօ [Lelio] 195
 Լեկըթ [Legate] 263
 Լեսինկ [Lessing] 319, 321, 322
 Լեոն [Leo] 15, , 17, 18, 19, 23, 30, 45, 83, 110, 146, 385, 388, 389, 390
 Լեոնարտ [Leonhard] 276, 359
 Լեուիս [Lewis] 267, 363
 Լըֆեւր [Lefèvre] 11, 86, 92, 150
 Լիմըն [Lyman] 348, 361, 364, 372, 410
 Լինսուի [Lindsey] 264
 Լիվինկսթըն [Livingstone] 352
 Լոկ [Locke] 240, 241, 253, 254, 300, 322, 323
 Լոէ [Loehe] 355
 Լոթց [Lotze] 338
 Լոմպարդի [Lombard] 11, 157
 Լոյոլա [Loyola] 149, 150, 151, 152, 153, 161
 Լոյտ [Lloyd] 364
 Լոնկ Այլընդի [Long Islander] 368
 Լոսընսթէյնցի [van Lodensteyn] 267
 Լորենզ [Lorenz] 318
 Լորենզօ [Lorenzo] 37
 Լորէյնցի [of Lorraine] 133, 134, 135
 Լորտ [Lord] 341
 Լուազի [Loisy] 391
 Լուգար [Lucar] 397
 Լուի [Louis] 39, 92, 93, 165, 166, 167, 169, 170, 173, 181, 190, 226, 244, 379, 380, 381, 382, 385
 Լուչիանի [Luciani] 443
 Լուպէ [Loubet] 390
 Լուտեր [Luther] 5, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 43, 44, 45, 48, 49, 50, 52, 60, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 72, 73, 74, 75, 80,

82, 93, 94, 96, 97, 108, 109, 110, 120, 131, 142, 147, 182, 183, 185,
235, 266, 267, 287, 337, 339, 362, 396, 436

Լուտովֆ [Ludolf, Ludolph] 538

Լուտովիքո [Ludovico] 146

Լուտվիկ [Ludwig] 53, 192, 194, 274, 287, 358

Լորրնս [Laurence] 208

Լուփուլուս [Lupulus] 42

Լօ [Law] 256, 285, 280

Խոմեաքով [Khomyakov] 401

Կալ [Galle] 84

Կալէազօ [Galeazzo] 148

Կալիլէի [Galilei] 237

Կալիլէօ [Galileo] 237

Կալվին [Calvin] 47, 51, 63, 72, 86, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98,
99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 120, 134, 136, 137, 144, 150,
164, 165, 194, 199, 201, 208

Կայէթան [Cajetan] 143

Կայէթանօ [Gaetano] 143, 158

Կապոր [Gabor] 188

Կասիոսորոս [Cassiodorus] 191, 261, 262, 267

Կատարինէ [Catherine] 38, 58, 107, 110, 111, 113, 115, 119, 120,
143, 166, 171, 172, 179, 274

Կարիպալտի [Garibaldi] 387

Կարիսըն [Garrison] 364

Կարտինըր [Gardiner] 119, 124, 126

Կեսքրըս [Gaspard] 165, 167, 171

Կերստորֆ [Gersdorf] 274

Կէյ [Gay] 262

Կէթօ [Goethe] 319, 322, 325

Կըրնի [Gurney] 368

Կի [Guy] 89

Կիզ [Guise] 132, 165, 166, 172

Կիզեցի [of Guise] 167, 173, 179
Կիլեսպիայ [Gillespie] 294
Կիլտֆորտ [Guildford] 124
Կիլլ [Gisle] 356
Կիլյոն [Guillaume] 86, 91, 92, 93, 104
Կիպերթի [Giberti] 144, 147
Կիպրնս [Gibbons] 393
Կիպոն [Gibbon] 259, 260
Կիսպր [Gisbert] 267
Կիսեր [Gisser] 83
Կիրեղ [Cyril] 397
Կլատրն [Gladden] 377
Կղեմեւ [Clement] 37, 40, 58, 64, 71, 111, 113, 146, 380, 382
Կոթլիպ [Gottlieb] 276, 285, 328
Կոթլոպ [Gottlob] 332
Կոթհոլտ [Gotthold] 319
Կոթրու [Gottreu] 334
Կոթֆրայտ [Gottfried] 239, 273, 320, 322, 325
Կոմարոս [Gomarus] 201
Կոպեռնիկոս [Copernicus] 237
Կոր [Gore] 350
Կորլից [Görlitz] 193
Կույար [Guyard] 145
Կուսթաւոս [Gustavus] 83, 188
Կուսթաֆ [Gustaf] 83
Կրահրմ [Graham] 440
Կրանվել [Granvelle] 168, 169
Կրանտիսըն [Grandison] 361
Կրեշըմ [Gresham] 376
Կրեպրլ [Grebel] 52, 53, 54, 55
Կրեյ [Grey] 124
Կրիմշո [Grimshaw] 292
Կրինտալ [Grindal] 210, 212
Կրինվուոս [Greenwood] 213

Կրիպպալտի [Gribaldi] 194
Կրիսվոլտ [Griswold] 369
Կրոթոնու [Grotius] 203, 204, 240
Կրունտթվիգ [Grundtvig] 356

Հազլիթ [Hazlitt] 265
Հաթսըր [Hätzer] 53, 194
Հալլեթ [Hallett] 264
Հալտեյն [Haldane] 351, 356
Համիլթոն [Hamilton] 133
Համֆրի [Humphrey] 208
Համֆրիգ [Humphreys] 290
Հայլե [Haile] 405
Հաննա [Hannah] 293
Հանթինկթոն [Huntington] 413
Հանթինկտոն [Huntingdon] 291, 293
Հանս [Hans] 57, 61, 62, 82, 194, 356
Հաուրլ [Howel] 282, 288
Հաուրթոն [Howard] 440
Հաուիս [Haweis] 307
Հաստրն [Hudson] 353
Հարթ [Hart] 311
Հարիսոն [Harrison] 211, 375
Հարլես [Harles] 335
Հարկրիվգ [Hargreaves] 280
Հարմենզոոն [Harmenszoon] 199
Հարնագգի [von Harnack] 340, 359
Հարվի [Harvey] 103
Հափսպուրկ [Hapsburg] 24, 69, 163
Հելվիս [Helwys] 216
Հեկել [Hegel] 328, 329, 330
Հենկսթենպրկ [Hengstenberg] 332, 354, 355
Հենսրիք [Hendrik] 357

Հենրի [Henry] 37, 75, 76, 78, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 118, 119, 120, 124, 125, 126, 127, 128, 130, 133, 135, 138, 139, 143, 163, 164, 165, 171, 172, 173, 176, 179, 180, 186, 204, 206, 213, 216, 300, 302, 304, 343, 345, 347, 350, 352, 356, 357, 365, 369, 413, 440
Հենրիեթա [Henrietta] 274
Հենրիխ [Heinrich] 42, 51, 56, 272, 274, 289, 332, 420
Հերի [Harry] 376
Հերիս [Harris] 282, 288
Հերման [Hermann] 121, 269, 274, 318, 338, 340, 359, 391
Հերտեր [Herder] 325
Հեփպըրն [Hepburn] 139
Հըրպըրթ [Herbert] 254
Հիգս [Hicks] 368
Հիթլեր [Hitler] 414, 415, 420
Հիլտըպրանտ [Hildebrand] 271
Հիմենեզ [Jiménez] 142
Հինրիխ [Hinrich] 355
Հիում [Hume] 258, 259, 322, 323
Հիւկ [Hugh] 88, 109, 126, 345, 351, 385
Հիւկս [Hughes] 351
Հիւկօ [Hugo] 203, 240
Հոեն [Hoen] 48, 49
Հոլլանտ [Holland] 350
Հոխստրատըն [Hochstraten] 8
Հոկ [Hauge] 356
Հոճկին [Hodgkin] 132
Հոնթեյմ [Honthheim] 381
Հոպըրթ [Hobart] 369
Հոպս [Hobbes] 240, 241
Հովըրտ [Howard] 119, 303
Հորըս [Horace] 366
Հորն [Horn] 169, 170
Հուգըր [Hooker] 221

Հութ [Hut] 57, 61
Հութըր [Hutter] 62
Հութընցի [Hutten] 8, 20
Հուլտրիխ [Huldreich] 42
Հուպմայր [Hubmaier] 52, 53, 55, 57, 61
Հուս [Hus] 20
Հուրըլ [Hurrell] 345
Հուփըր [Hooper] 126
Հուքըր [Hooker] 213
Հուֆթ [Hoof] 423
Հոփիթալցի [de L'Hôpital] 166
Հոփքի [Hopkey] 286
Հոփքինս [Hopkins] 301
Հոֆման [Hofmann] 60, 61, 69, 70, 335

Ճագոպ [Jacob] 216
Ճայեցի [Le Jay] 151
Ճանսըն [Johnson] 213, 215, 248, 356
Ճասթուս [Justus] 63
Ճատսըն [Judson] 362
Ճարըտ [Jared] 365
Ճենթիլ [Gentile] 194
Ճենովացի [of Genoa] 143
Ճերար [Gerard, Gérard] 91, 92, 93
Ճեֆրսըն [Jefferson] 262, 309
Ճէյն [Jane] 116, 120, 124
Ճիլպեր [Gilbert] 297, 298
Ճիրոլամո [Girolamo] 23, 24, 144, 147, 148
Ճոզիա [Josiah] 280, 411

Մագաուլեյ [Macaulay] 304
Մաթեր [Mather] 221
Մաթիաս [Matthias] 77, 78, 158, 187
Մաթիս [Mathys] 70

Մաթուրին [Mathurin] 91
Մալան [Malan] 357
Մախըն [Machen] 376
Մակնի [Magni] 84
Մայրը [Maier] 17, 19, 23, 67, 72
Մայլս [Miles] 111, 132
Մայնսթեր [Mynster] 356
Մանզ [Manz] 52, 53, 55
Մանթուացի [of Mantua] 148
Մանինկ [Manning] 347
Մատթեո [Matteo, Matthew] 47, 58, 117, 130, 144, 145, 147, 161, 194, 208, 254
Մարգարիտ [Marguerite] 73, 74, 93, 168, 170, 171, 174, 232
Մարգուր [Marcourt] 94
Մարթին [Martin, Martyn] 5, 9, 17, 28, 48, 58, 62, 81, 123, 185, 352, 415, 436
Մարթիր [Martyr] 123
Մարթիրէ [Martire] 148
Մարի, Մարիամ [Mary] 5, 107, 110, 111, 121, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 133, 134, 135, 137, 138, 139, 140, 145, 164, 176, 177, 178, 206, 208, 214, 227, 228, 230, 261, 291, 373, 377, 385, 386, 423, 427, 428
Մարիա [Maria] 144
Մարկիոն [Marcion] 331
Մարկոս [Marcus, Mark] 29
Մարսիլիոս [Marsilius] 114
Մարստըն [Marsden] 352
Մարփեք [Marpeck] 59, 60
Մարքէթ [Marquette] 244
Մաքեմի [Makemie] 250
Մաքիավելի [Machiavelli] 114
Մաքսիմիլիան [Maximilian] 8, 19, 23, 186, 187, 188, 189, 190, 192
Մաքրաքիս [Makrakis] 401

Մելանգթոն [Melanchton] 19, 27, 28, 39, 63, 64, 65, 66, 67, 68, 72, 73, 74, 77, 80, 100, 104, 182, 183, 184, 195
Մելխիոր [Melchior] 60, 62, 69, 70, 92, 156, 300, 314
Մելվիլ [Melville] 140, 218
Մենեզես [Menezes] 397
Մենթենոն [de Maintenon] 380
Մենիուս [Menius] 63
Մեննո [Menno] 71
Մենտել [Mendel] 333
Մետիչեցի [de' Medici] 166, 171, 172, 179
Մաքսֆիլդ [Maxfield] 290
Մերիչի [Merici] 145
Մեյհիու [Mayhew] 262
Մեյճոր [Major] 91, 184
Մեյսոն [Mason] 375
Մենուարինկ [Manwaring] 220
Մեսթրեցի [de Maistre] 385
Մըրեյ [Murray] 314, 315
Մըրթլ [Myrtle] 377
Միլ [Mill] 320
Միլզ [Mills] 362
Միլլըր [Miller] 371
Միլթոն [Milton] 263
Միլթիթզ [Miltitz] 19
Միլման [Milman] 343
Միլնըր [Milner] 293, 304
Միշել [Michel] 166
Միքայել [Michael] 58, 103, 194, 398
Միքայելուս [Michaelius] 249
Մոթ [Mott] 409, 410
Մոլթեր [Molther] 289
Մոկիլա [Mogila] 397
Մոնթինի [Montini] 426
Մոշեյիմ [von Mosheim] 318

Մոր [More] 108, 109, 111, 112, 113, 293

Մորթըն [Morton] 218

Մորիս [Maurice] 180, 203, 204, 343

Մորիսըն [Morrison] 352

Մորից [Moritz] 76, 77, 78, 79

Մորկըն [Morgan] 283, 284

Մուլլըր [Müller] 349

Մուհլընսպըրկ [Muhlenberg] 300, 314

Մունցըր [Müntzer] 34, 35, 36, 57, 62, 70

Մուսոլինի [Mussolini] 388

Մուսի [Moody] 348, 372, 410

Մուրթըն [Murton] 216

Մոֆատ [Moffat] 352

Յակոբ [Jacob, Jacopo, Jacques, Jakob, Jakop] 8, 11, 61, 62, 71, 86, 92, 133, 138, 139, 140, 144, 146, 185, 193, 199, 244, 267, 297, 320, 322, 356

Յակոբոս [James] 214, 215, 217, 218, 219, 221, 226, 227, 228, 229, 245, 263, 264, 265, 280, 298, 306, 312, 314, 345, 351, 353, 393

Յերոնիմոս [Jerome] 15, 102

Յոբ [Job] 212, 283

Յովակիմ [Joachim] 184, 272

Յովհան/Յովհաննէս [Gian, Giovanni, Jan, Jean, John, Johann, Johannes, Jonas, Juan] 8, 10, 11, 12, 15, 17, 19, 20, 23, 28, 38, 39, 41, 47, 49, 50, 51, 52, 64, 66, 67, 70, 71, 72, 76, 82, 83, 85, 86, 90, 91, 108, 109, 117, 118, 122, 123, 126, 127, 129, 130, 133, 134, 143, 146, 147, 151, 159, 161, 174, 183, 187, 194, 195, 202, 203, 205, 209, 212, 213, 215, 216, 220, 221, 224, 237, 240, 246, 249, 254, 263, 267, 270, 272, 275, 280, 281, 282, 283, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 299, 300, 303, 304, 305, 306, 307, 311, 312, 313, 314, 318, 319, 320, 321, 322, 325, 328, 333, 335, 343, 344, 345, 355, 362, 364, 368, 369, 387, 408, 409, 425, 426, 427, 429, 443

Յովնաթան [Jonathan] 262, 298, 300, 301

Յոսէֆի [José, Joseph] 257, 262, 264, 280, 290, 293, 301, 328, 344, 368, 371, 374, 381, 382, 385, 387, 396, 403, 425

Յուդա [Judah, Judas] 60

Յուլիոս [Julius] 78, 110, 333

Նաթան [Nathan] 412

Նաթանայէլ [Nathaniel] 264, 301, 361

Նասսացի [of Nassau] 169, 170, 171, 173, 180, 203, 204

Նաւարրցի [of Navarre] 166, 167, 171, 172, 173, 179, 180

Նափոլէոն [Napoleon] 354, 383, 384, 387

Նաքս [Knox] 123, 129, 131, 133, 134, 135, 136, 137, 138, 140

Նելսոն [Nelson] 349

Ներեցի [de' Neri] 158, 159

Նեւին [Nevin] 369

Նէանտեր [Neander] 272, 333

Նիգոն [Nikon] 398

Նիէմոլլեր [Niemöller] 415

Նիլ [Nil] 356

Նիլսոն [Nielsen] 356

Նիկոդայոս [Niccolò, Nicholas, Nicolas, Nicolaus, Nikolaus] 14, 28, 29, 78, 93, 109, 126, 150, 183, 185, 217, 237, 274, 287, 356, 381, 401

Նիւթըն [Newton] 237, 292, 293, 300

Նիւմըն [Newman] 345, 346, 347

Նիցմըն [Nitschmann] 276, 277, 285

Նիպըր [Niebuhr] 335, 420

Նոէլցի [de Noailles] 381

Նոմմենսըն [Nommensen] 358

Նոպիլիցի [de' Nobili] 161

Նուման [Naumann] 359

Շաթիլոն [Châtillon] 165

Շաթոպրիանցի [de Chateaubriand] 384

Շանթալ [Chantal] 160

Շարլըմայն [Charlemagne] 24

Շարթաու [Schartau] 356
 Շարփ [Sharp] 229
 Շաֆ [Schaff] 369
 Շել [Schell] 391
 Շելլինկ [Schelling] 328, 342
 Շեմնից [Chemnitz] 185
 Շեփթիցքի [Szepticky] 406
 Շիլլեր [Schiller] 319, 322
 Շիմուն [Shimun] 405
 Շլեյրմախր [Schleiermacher] 325, 326, 327, 328, 329, 333, 335, 338, 354
 Շմուքր [Schmucker] 368, 369
 Շուայցր [Schweitzer] 336
 Շուարց [Schwartz] 272
 Շուենգֆելդ [Schwenckfeld] 60
 Շրմաքր [Schmucker] 411

Ովսէ [Hosea] 315
 Ուալփոթ [Walpot] 62
 Ուաթ [Watt] 280
 Ուաթգոթ [Whatcoat] 312
 Ուաթս [Watts] 281
 Ուայթ [White] 310, 311
 Ուայթմըն [Wightman] 263
 Ուայթֆիլդ [Whitefield] 282, 284, 285, 288, 291, 292, 298, 303, 314
 Ուայտման [Wiedmann] 61
 Ուաշինկթըն [Washington] 377
 Ուելդ [Weld] 364
 Ուէզլի [Wesley] 205, 280, 281, 282, 283, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 299, 303, 304, 305, 311, 312, 320
 Ուէթսթայն [Wettstein] 320
 Ուէճվուտ [Wedgewood] 280
 Ուէր [Ware] 365
 Ուէյ [Webb] 299

Ուէսթգոթ [Westcott] 344, 350
 Ուէսթֆալ [Westphal] 184
 Ուիթթընպախ [Wytttenbach] 42, 43
 Ուիթթընպոկաէրթ [Uitenbogaert] 202
 Ուիթթըրսպոն [Witherspoon] 295
 Ուիթթկիֆթ [Whitgift] 209, 212, 215
 Ուիլգոքս [Wilcox] 209
 Ուիլլեմ [William, Willem] 74, 75, 103, 109, 118, 128, 130, 169, 173, 174, 175, 177, 180, 192, 200, 203, 215, 216, 219, 227, 228, 230, 233, 256, 260, 265, 280, 283, 291, 292, 293, 297, 304, 307, 310, 317, 343, 344, 350, 351, 352, 354, 361, 364, 365, 371, 374, 413, 414, 423
 Ուիլլեմս [Williams] 248, 410
 Ուիլլեմսոն [Williamson] 369
 Ուիլհելմ [Wilhelm] 53, 239, 322, 328, 332, 333, 340, 355, 359
 Ուիլչըրն [Wichern] 355
 Ուինթրոփ [Winthrop] 220
 Ուինչըսթըր [Winchester] 121, 127, 315
 Ուիշարթ [Wishart] 133, 134
 Ուիլբըրֆորս [Wilberforce] 304
 Ուլրիխ [Ulrich] 8, 20, 42, 69
 Ունթերեյք [Untereyck] 272
 Ուոլթըր [Walter] 210, 212, 341, 377
 Ուոլֆլին [Wölflin] 42
 Ուրպան [Urban] 380
 Ուրսինուս [Ursinus] 184
 Ուրսուլա [Ursula] 145

Չալմըրք [Chalmers] 351
 Չաննինկ [Channing] 365
 Չարլզ [Charles] 19, 23, 24, 25, 30, 40, 55, 64, 68, 69, 71, 72, 75, 76, 77, 78, 79, 80, 88, 94, 99, 111, 115, 118, 125, 147, 153, 163, 165, 166, 167, 168, 171, 172, 179, 218, 219, 220, 221, 222, 224, 225, 226, 227, 229, 233, 280, 282, 283, 285, 286, 287, 288, 291, 293, 298, 343, 350, 361, 369, 371, 375, 376, 377, 413

Չերպլրիցի [of Cherbury] 254
 Չոնսի [Chauncy] 298
 Չուս [Jud] 45, 46

Պաթիսթա [Battista] 426
 Պաթլըր [Butler] 257, 280
 Պալթիմոր [Baltimore] 245
 Պալու [Ballou] 315
 Պաղտասար [Balthasar] 52, 53, 55, 57, 61
 Պանգրոֆթ [Bancroft] 212, 214, 215
 Պաուլըր [Baur] 330, 331, 332, 335, 337
 Պաունտ [Bownde] 217
 Պապինկթոն [Babington] 177
 Պասչիոցի [de Bascio] 146
 Պարթ [Barth] 420
 Պարթըն [Barton] 366
 Պարթոլդ [Barthold] 335
 Պարլո [Barlow] 130
 Պարնէս [Barnes] 109
 Պարոնիոս [Baronius] 158
 Պարպըր [Barber] 344
 Պարուխ [Baruch] 238
 Պարո [Baro, Barrow] 213, 214
 Պաքսթըր [Baxter] 225
 Պեզա [Beza] 106, 164, 199, 200, 201
 Պեզանսոն [Besançon] 88
 Պեթիլեն [Bethlen] 188
 Պելամի [Bellamy] 301
 Պելարմին [Bellarmine] 157
 Պելարմինո [Bellarmino] 158
 Պենետթո [Benedetto] 148
 Պենետիկտոս [Benedict] 270, 379, 391
 Պենիթո [Benito] 388
 Պենկել [Bengel] 272, 320

Պետրոս [Pedro, Peter, Pierre, Pietro, Petrus] 62, 71, 84, 87, 88, 89, 92, 99, 123, 143, 146, 148, 150, 159, 160, 200, 214, 249, 277, 286, 321, 330, 331, 356, 379, 387, 397, 398, 399
Պերգինացի [de Berquin] 92
Պերթելիե [Berthelier] 88
Պերնթ [Bernt] 70
Պերնհարտ [Bernhard] 43, 191
Պերնարտինո [Bernardino] 123, 148
Պերուլացի [de Bérulle] 159, 160, 379
Պեա [Bea] 425
Պեյգըն [Bacon] 237
Պեյլի [Bayly] 267
Պեյքըր [Baker] 377
Պըքքի [Berkeley] 256, 257
Պեքսթըր [Baxter] 267
Պըրկլի [Burghley] 128
Պիանտրաթա [Biandrata] 195, 196
Պիզմարք [Bismarck] 388
Պիթըն [Beaton] 133
Պիլի [Billy] 440
Պիլնի [Bilney] 109, 111
Պիլսոն [Bilson] 212
Պիմեն [Pimen] 403
Պիոս [Pius] 156, 176, 313, 347, 383, 384, 385, 386, 388, 390, 391, 392, 422, 427, 428
Պիչըր [Beecher] 361, 364, 365
Պիսկոփ [Biscop] 202
Պիտրլ [Biddle] 263
Պլեյզ [Blaise] 380
Պլեյր [Blair] 245
Պլուրոք [Blaurock] 53, 56
Պլատոն [Plato] 326
Պոքըլսոն [Bockelson] 70
Պոլեյն [Boleyn] 111, 112, 113, 115, 116

Պոլսեկ [Bolsec] 102, 103
Պոկ [Bogue] 307
Պոհլըր [Böhler] 277, 286
Պոհմ [Böhme] 193
Պոմցի [de la Baume] 88
Պոնալոնցի [de Bonald] 385
Պոնհոֆեր [Bonhoeffer] 434
Պոպաստիլա [Bobadilla] 150
Պոսթըն [Boston] 282
Պոստենսթայն [Bodenstein] 14, 19, 28, 29, 33, 35, 52, 62, 81
Պորա [Bora] 38
Պորոմեո [Borromeo] 144
Պութ [Booth] 350
Պուլինկեր [Bullinger] 51, 56, 120
Պուլկաքով [Bulgakov] 405
Պուկընհակըն [Bugenhagen] 28, 49, 82
Պուշնել [Bushnell] 366
Պուսեր [Bucer] 17, 48, 58, 59, 61, 62, 64, 65, 67, 68, 72, 73, 74, 86, 95, 97, 99, 120, 123
Պուվերի [Bouverie] 346
Պուսե [Budé] 92
Պուրեցի [de Bure] 100
Պուրպոն [Bourbon] 165, 166, 179
Պրահե [Brahe] 237
Պրանստընպրկցի [of Brandenburg] 15, 17, 79
Պրաուն [Browne] 211, 213
Պրատշո [Bradshaw] 216
Պրատֆորտ [Bradford] 215, 217
Պրենզ [Brenz] 17, 183
Պրենթ [Brent] 413
Պրեյ [Bray] 245
Պրեյտըլ [Braidl] 62
Պրիկզ [Briggs] 376
Պրիկհըմ [Brugham] 372

Պրիսոննե [Briçonnet] 86, 92
Պրոե [Broet] 151
Պրուզիոլի [Bruccioli] 147
Պրունըր [Brunner] 420
Պրուսթըր [Brewster] 215, 217
Պրուք [Brooke] 344
Պոդո [Paolo, Paul] 13, 48, 71, 75, 77, 78, 108, 141, 143, 144, 146, 147, 148, 151, 153, 156, 159, 193, 267, 321, 330, 331, 420, 426, 428, 431, 437, 443

Ռալֆիս [Raleigh] 409
Ռալֆ [Ralph] 282
Ռակագ [Ragaz] 359
Ռաճըր [Roger] 248
Ռայս [Rice] 362
Ռայտըման [Riedemann] 62
Ռաուլընտոկ [Rowlands] 282
Ռաուշենբուշ [Rauschenbusch] 377
Ռոբինսոն [Robinson] 215, 216
Ռասըլ [Russell] 371
Ռաֆայել [Raffaele, Raphael] 146
Ռեգուեսենս [de Requeséns] 173
Ռելի [Relly] 314
Ռեճինալտ [Reginald] 71, 143, 146
Ռենատոս [Renatus] 278
Ռենարտ [Renard] 125
Ռեյմարոս [Reimarus] 318, 319, 321
Ռեյնոլդս [Reynolds] 225
Ռեյնհարտ [Reinhard] 47, 81
Ռեյնհոլտ [Reinhold] 420
Ռեուս [Reuss] 274
Ռեյքս [Raikes] 305
Ռընե [René, Renée] 98, 238, 384
Ռիզիո [Riccio] 139

Ռիթսզըլ [Ritschl] 337, 338, 339, 340
 Ռիմինացի [of Rimini] 10
 Ռինգ [Rink] 62
 Ռիշըլիո [Richelieu] 181, 190
 Ռիչըրս [Richard] 211, 212, 213, 221, 225, 229, 267, 280, 293, 312, 345, 420
 Ռիչի [Ricci] 161
 Ռիս [Reed] 413
 Ռիսլեյ [Ridley] 109, 126
 Ռիսոլֆ [Ridolf] 176
 Ռոզ [Rose] 345
 Ռոթ [Rothe] 275
 Ռոթման [Rothmann] 70
 Ռոճըր [Roger] 220
 Ռոճըրզ [Rogers] 117, 126
 Ռոմանով [Romanov] 398
 Ռոնգալի [Roncalli] 425
 Ռոշեյի [de la Roche] 165
 Ռոշլին [Reuchlin] 8, 11, 19
 Ռոպերթ [Robert] 92, 109, 122, 157, 177, 211, 283, 299, 305, 343, 351, 352, 356, 385
 Ռոպերթսոն [Robertson] 343
 Ռոպերթո [Roberto] 157, 161
 Ռոսրիկեզ [Rodriguez] 150
 Ռուպլի [Röubli] 53
 Ռուպիանուս [Rubianus] 8
 Ռուսել [Roussel] 92, 93
 Ռուսսո [Rousseau] 322, 323
 Ռուսոլֆ [Rudolf] 186, 187, 338

Սալեյի [de Sales] 160, 379
 Սալոմո [Salomo] 321
 Սալմերոն [Salmerón] 150, 154
 Սահակ [Sahag] 405

Մամուէլ [Samuel] 240, 248, 263, 281, 282, 285, 299, 301, 310, 311, 318, 342, 350, 352, 362, 368, 411
Մամփսոն [Sampson] 208
Մայմըն [Simeon] 293
Մանգրոֆթ [Sancroft] 228
Մանսոն [Sanson] 43
Մատուէթօ [Sadoletto] 71, 144, 146
Մարաւիա [Saravia] 212
Մարովցի [of Sarov] 399
Մաւոնարոլա [Savonarola] 148
Մաւուդ [Saul] 29
Մաքսեւէյմարցի [of Saxeweimar] 191
Մաքսոնացի [of Saxony] 19, 149
Մբարգու [Sparks] 365
Սգոթ [Scott] 293, 307, 341, 350
Սեզար [Caesar, César, Cesare] 158, 357
Սաթլըր [Sattler] 58, 59
Սելասսի [Selassie] 405
Սելթիս [Celtis] 42
Սելինա [Selina] 291
Սելնեգըր [Selnecker] 185
Սեմլըր [Semler] 321, 325, 330
Սեպասթիան [Sebastião, Sebastian] 104, 262, 382
Սեսիլ [Cecil] 128, 293
Սերաֆիմ [Seraphim] 399
Սերգիոս [Sergius] 396, 403, 405
Սերիփանտո [Seripando] 147
Սերվէթուս [Servetus] 103, 104, 194, 195
Սեւերին [Severin] 356
Սթահլ [Stahl] 333
Սթենլի [Stanley] 344
Սթիւարթ [Stuart] 121, 122, 135, 137, 138, 139, 140
Սթայվեսենթ [Stuyvesant] 249
Սթիրիացի [of Styria] 187

Մթիրլինկցի [of Stirling] 294
 Մթոն [Stone] 366
 Մթոսըրս [Stoddard] 300
 Մթորչ [Storch] 29
 Մթուայփիթոզ [Staupitz] 10, 11, 12
 Մթուպնր [Stübner] 29
 Մթոքրր [Stöcker] 358, 359
 Մթրազպուրկցի [of Strassburg] 123
 Մթրաուս [Strauss] 335, 336
 Մթրոնկ [Strong] 411
 Մթրոպրիճ [Strawbridge] 299
 Միլվեսթրր [Sylvester] 18
 Միկիզմունս [Sigismund] 195
 Միմոն [Simon] 125, 150, 202, 368, 411
 Միմոնս [Simons] 71
 Միմուր [Seymour] 116, 120, 121, 122, 374
 Միպրրի [Seabury] 310, 311
 Միքսթուս [Sixtus] 179
 Մմայթ [Smyth] 215, 216
 Մմիթ [Smith] 371, 372
 Մոզինի [Sozzini] 195
 Մոլովիեւ [Soloviev] 401
 Մոդոմոն [Solomon] 300
 Մոնիէ [Saunier] 89
 Մոտերպլոմ [Söderblom] 412
 Մորըն [Søren] 356
 Մորսկի [Sorssky] 396
 Մուսաննա [Susanna] 283
 Մոֆի [Sophie] 286
 Մպէնկընպրկ [Spangenberg] 276, 277, 279, 285
 Մտալին [Stalin] 403
 Մտեփանս [Stephen] 119, 124, 126
 Մփենրր [Spener] 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274
 Մփինոզա [Spinoza] 238, 239, 326, 327

Սփինոլա [Spinola] 187

Սքորի [Scory] 130

Վադապլ [Vatable] 92

Վազել [Vazeille] 291

Վալենթինո [Valentino] 194

Վալուա [Valois] 163, 166

Վալուացի [of Valois] 171

Վալտեզի [de Valdés] 147, 148

Վասա [Vasa] 83, 84, 85

Վատիանոս [Vadianus] 47

Վելիչկովսկի [Velichkovsky] 399

Վեն [Venn] 304, 307

Վենսեն [Vincent] 379

Վենսոմցի [of Vendôme] 165

Վերմիկլի [Vermigli] 148

Վերնացա [Vernazza] 143

Վէյսի [Vasey] 312

Վիետ [Viets] 369

Վիէտ [Wied] 121

Վիթորիացի [de Vitoria] 157

Վիլենուվ [Villeneuve] 103

Վիկտոր [Victor] 387, 388

Վինետ [Vinet] 357

Վիոնգի-Գայեթանցի [de Vio Cajetan] 18

Վիսսերթ [Visser't] 423

Վիրե [Viret] 87, 89, 90, 98

Վլաստիսլի [Vladimir] 401

Վոէթ [Voet] 267

Վոյտլա [Wojtyla] 443

Վոլլենշտայն [Wallenstein] 187, 188, 189, 190, 191

Վոլթացի [della Volta] 17

Վոլթեր [Voltaire] 261, 262, 381

Վոլմար [Wolmar] 92

Վոլոկոլամսկի [of Volokolamsk] 396
Վոլսի [Wolsey] 110, 111, 112, 114
Վալտես [Valdès] 374, 375, 376, 377
Վոլֆ [Wolff] 316, 317, 318, 322, 323, 325, 334
Վոլֆկանկ [Wolfgang] 41, 66, 319, 322
Վորրն [Warren] 366
Վուլման [Woolman] 364
Վուլսթոն [Woolston] 254

Տակլըս [Douglas] 132
Տավընփորթ [Davenport] 298
Տարպի [Darby] 349
Տաւընփորթ [Davenport] 221
Տաւիտ [Dávid] 195, 196
Տաֆ [Duff] 352
Տեզիստերիոս [Desiderius] 11, 32, 33
Տենիսոն [Denison] 343
Տենք [Denck] 57, 58, 194
Տերտուլիանոս [Tertullian] 235
Տեքարթ [Descartes] 238, 239
Տէլ [Dale] 351
Տէյվիս [Davies] 299
Տէյվիս [David] 275, 276
Տիեկո [Diego] 150, 154
Տիթրիխ [Dietrich] 434
Տիմոթէոս [Timothy] 248, 360
Տիրք [Dirck] 200
Տոլինկըր [Döllinger] 387
Տոպըր [Dober] 276
Տոսթոևսկի [Dostoyesky] 399, 401
Տոսիթէոս [Dositheus] 397
Տորնըր [Dorner] 334, 335
Տորոթէա [Dorothea] 274
Տուայթ [Dwight] 348, 361, 364, 372, 410

Տուսլի [Dudley] 122, 123, 124

Տրեշսըլ [Drechsel] 29

Տրէյք [Drake] 177, 178

Յերգալէս [Tserkales] 187, 188, 190

Փաթրիք [Patrick] 133, 232

Փալեսթրինա [Palestrina] 159

Փալէ [Paley] 260, 261

Փալմըր [Palmer] 262

Փայիզի [Paisi] 399

Փաուլոս [Paulus] 332

Փասզիէ [Pasquier] 380

Փասկաս [Paschase] 151

Փասքալ [Pascal] 380

Փատովացի [of Padua] 114

Փարմացի [of Parma] 170, 174

Փարսոնս [Parsons] 177

Փարր [Parr] 119, 120

Փարքըր [Parker] 109, 130, 208, 210

Փաք [Pack] 41

Փեն [Penn] 233

Փենրի [Penry] 212

Փենրին [Penrhyn] 344

Փերենո [Perrenot] 168

Փէյն [Paine] 261

Փիզացի [of Pisa] 237

Փիլիպոս [Philip, Philipp] 19, 37, 38, 41, 62, 64, 66, 69, 73, 74, 76, 78, 125, 127, 128, 138, 158, 163, 164, 166, 167, 168, 169, 170, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 266, 289, 299, 369

Փիլկրամ [Pilgram] 59

Փիրս [Peirce] 264

Փլէսիս [Plessis] 190

Փլուֆշոյ [Plütschau] 272

Փոլ [Pole] 71, 126, 128, 143, 147
Փոլեցի [de Paul] 379
Փոմպատուր [Pompadour] 382
Փորթուկալցի [of Portuguese] 262
Փուսսոն [Poisson] 382
Փուսէ [Pusey] 346, 347
Փուֆընտորֆ [Pufendorf] 240
Փրիերիաս [Prierias] 18
Փրիսթլի [Priestley] 264, 265
Փրոլէս [Proles] 10
Փրովուսթ [Provoost] 311
Փֆեֆերքորն [Pfefferkorn] 8

Քանթ [Kant] 323, 324, 325, 326, 327, 328, 338, 342
Քարոլ [Karol] 443
Քենփացի [à Kempis] 149
Քեյլէ [Keble] 345, 346
Քեփլըր [Kepler] 237
Քինկ [King] 436
Քինկզլի [Kingsley] 344
Քիրքհրամ [Kirkham] 283
Քլիֆոթ [Kliefoth] 333, 355
Քուեսնէլ [Quesnel] 380
Քսերքէս [Xerxes] 113
Քրիստիան [Christian] 81, 82, 83, 188, 270, 272, 275, 276, 278, 316, 330, 335
Քրիստոֆ [Christoph] 319, 322
Քրոմերիչցի [of Kroměříž] 484
Քրում [Krum] 316

Օգոլամփատիոս [Oecolampadius] 47, 49, 50, 64
Օգոստինոս [Augustine] 10, 12, 48, 145, 235, 238, 381, 425
Օգոստոս [August, Augustus] 184, 185, 269, 274, 276, 285, 292, 333, 334, 376

Օգսենսճերնա [Oxenstjerna] 191
Օթթօ [Otto] 41, 388
Օլաֆ [Olaf] 83, 84
Օլեւիանու [Olevianus] 184
Օլիւեթան [Olivétan] 87, 89
Օլիվըր [Oliver] 224
Օլտրնպարսնեւելտրթցի [van Oldenbarneveldt] 203, 204
Օկլըթորփ [Oglethorpe] 285
Օչինօ [Ochino] 123, 148
Օսիանտրր [Osiander] 184
Օրանժցի [of Orange] 170, 171, 173, 174, 175, 176, 180, 200, 203, 227

Ֆաստութօ [Fausto] 195, 196, 197
Ֆարար [Farrar] 344
Ֆարել [Farel] 86, 87, 89, 90, 93, 98, 99
Ֆարնէս [Farnese] 174, 175, 176, 178, 180
Ֆելիսիթէ [Félicité] 385
Ֆելիքս [Felix] 52, 53, 55
Ֆենթոն [Fenton] 344
Ֆերնանտէզ [Fernandez] 121
Ֆերտինանտ [Ferdinand] 40, 55, 69, 79, 110, 149, 170, 173, 187, 188, 189, 192, 330, 440
Ֆէլ [Fell] 232
Ֆիթզ [Fitz] 211
Ֆիլարէթ [Philaret] 398
Ֆիլիպերթ [Philibert] 88, 105
Ֆիլիփի [Philippi] 333
Ֆիլմոր [Fillmore] 377
Ֆիլտ [Field] 209
Ֆիխթ [Fichte] 328, 329, 342
Ֆիննի [Finney] 361, 362, 363, 364
Ֆիշըր [Fisher] 108, 109, 113, 282
Ֆիոտոր [Fyodor] 399, 401
Ֆիրմին [Firmin] 263

Ֆլազիոս [Flacius] 77, 158, 183
 Ֆլեչլըր [Fletcher] 291
 Ֆլորովսկի [Florovsky] 406
 Ֆոսոմպրոնցի [da Fossombrone] 146
 Ֆոնթիվերոսի [of Fontiveros] 159, 160
 Ֆոսս [Foss] 344
 Ֆոսսիք [Fosdick] 376
 Ֆորճեյի [de la Forge] 94
 Ֆուրպիթի [Furbity] 89
 Ֆոքս [Fox, Foxe] 127, 231, 232, 233, 249
 Ֆրանզ [Franz] 66
 Ֆրանչիսքոս [Franciscus] 201
 Ֆրանչիսքո [Francisco] 151, 157, 161
 Ֆրանչիսո [Franciso] 142
 Ֆրանսիս [Francis] 19, 36, 38, 71, 92, 93, 94, 118, 122, 128, 133, 135, 137, 146, 150, 151, 160, 163, 164, 165, 166, 167, 172, 177, 178, 195, 213, 215, 237, 250, 299, 312, 377, 379, 405
 Ֆրանսուա [François] 92, 160, 244, 261, 382, 384
 Ֆրանսուազ [Françoise] 160, 380
 Ֆրանք [Francke] 269, 270, 271, 272, 274
 Ֆրանքլին [Franklin] 262, 440
 Ֆրելինգհուսեն [Frelinghuysen] 297
 Ֆրեդերիք [Frederick, Friedrich] 11, 18, 19, 24, 25, 26, 29, 30, 38, 66, 76, 81, 82, 118, 184, 186, 187, 192, 204, 262, 272, 275, 317, 319, 322, 325, 328, 333, 334, 335, 343, 344, 356, 359
 Ֆրիթ [Frith] 109, 111
 Ֆրիման [Freeman] 265
 Ֆրոմեն [Froment] 89
 Ֆրուդե [Froude] 345, 346

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

- Ազուսա [Azusa] 374
Աթէնք [Athens] 402
Աթոս [Athos] 399, 401
Ալապամա [Alabama] 251
Ալասքա [Alaska] 401, 405
Ալգալա [Alcalá] 150, 160
Ալգմար [Alkmaar] 173
Ալգաս [Alsace] 47, 192, 267
Ալպա [Alba] 170
Ալպանիա [Albania] 402, 405
Ալպեան [Alps] 43, 56, 87
Ալպերթա [Alberta] 62
Ալսթետ [Allstedt] 34
Ալտըրսկէյթ [Aldersgate] 287
Ալտվինքըլ [Aldwinkle] 307
Ալեքսանդրիա [Alexandria] 405
Ամերիկա [America] 59, 101, 181, 216, 217, 220, 221, 233, 240, 243, 248, 249, 250, 251, 263, 272, 277, 284, 285, 286, 293, 294, 296, 298, 299, 300, 304, 308, 309, 311, 312, 313, 314, 330, 335, 337, 353, 360, 365, 367, 368, 369, 371, 375, 376, 377, 380, 392, 393, 402, 404, 405, 411, 413, 415, 417, 420, 434, 438, 439, 440
ԱՄՆ, Ամերիկայի Միացեալ Նահանգներ [USA, United States of America] 305, 308, 309, 311, 313, 349, 352, 355, 359, 360, 362, 370, 373, 374, 392, 404, 406, 407, 410, 416, 417, 419, 420, 424, 435, 436, 441
Ամսթերտամ [Amsterdam] 200, 213, 215, 320, 357, 415, 416
Այովա [Iowa] 417
Անգլիա [England] 59, 74, 75, 102, 105, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 120, 121, 122, 123, 124, 126, 127, 128, 129, 130, 132, 133, 134, 135, 136, 138, 139, 140, 163, 164, 176, 177, 178, 179, 180, 181, 188, 198, 204, 206, 207, 210, 211, 212, 213, 216, 217, 218, 219, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231,

232, 233, 240, 245, 246, 247, 248, 250, 251, 252, 254, 257, 259, 260,
 262, 263, 264, 266, 278, 279, 280, 281, 282, 286, 289, 290, 291, 292,
 293, 294, 295, 299, 307, 308, 309, 310, 311, 313, 314, 316, 342, 344,
 346, 347, 348, 349, 350, 351, 359, 373, 380, 381, 391
 Անդրէաս [Andrew, Andrews] 133, 134, 140, 229
 Անէնսի [Annency] 160
 Անթըրվոլտըն [Unterwalden] 50
 Անթվերփի [Antwerp] 23, 173, 176
 Անկուլէմ [Angoulême] 93, 94
 Անհալթ [Anhalt] 41, 66, 68, 69
 Անճու [Anjou] 179
 Անսպախ [Ansbach] 41, 65, 66
 Անտիոք [Antioch] 400, 405
 Անտովըր [Andover] 370, 376
 Ապըրտին [Aberdeen] 132, 311
 Ասիա [Asia] 374, 415, 424, 434
 Ատլանտեան ովկիանոս [Atlantic Ocean] 24, 217, 221, 281, 343
 Արակոն [Aragon] 107, 110, 115
 Արեւելեան Ասիա [Eastern Asia] 439
 Արեւելեան Ճըրզի [East Jersey] 249
 Արեւելք [East, Orient] 350, 395
 Արեւմուտք [West] 424, 425
 Արեւմտեան հնդկական կղզիներ [West Indies] 232, 276, 277
 Արեւմտեան Ճըրզի [West Jersey] 249
 Արեւմտեան Վրճինիա [West Virginia] 251
 Արթուա [Artois] 168
 Արժանթին [Argentina] 243
 Արկու [Aargau] 56
 Աւստրալիա [Australia] 352, 415
 Աւստրիա [Austria] 24, 51, 55, 56, 57, 61, 186, 187, 190, 193, 232,
 262, 381, 384, 387, 397, 406
 Աւստրիա-Հունգարիա [Austria-Hungary] 402
 Ափէնզլ [Appenzwll] 56
 Ափրիկէ [Africa] 374, 390, 395, 416, 424, 434, 439, 440

Բարնաբաս [Barnabas] 144
Բասաուի [Passau] 79
Բեթղեհեմ [Bethlehem] 277, 397
Բիզարսի [Picardy] 91
Բրիտանական Կղզիներ [British Isles] 415
Բրիտանիա [Britain] 296, 303, 345, 357

Գաթո-Գամպրեզի [Cateau-Cambrésis] 163
Գալէ [Calais] 128, 178
Գալիֆորնիա [California] 244, 405
Գալմար [Kalmar] 81
Գամպրլէնս [Cumberland] 367
Գամպրա [Cambrai] 40
Գանսաս Սիթի [Kansas City] 377
Գանսթէյն [Canstein] 305
Գասթէլ Կանտոլֆո [Castel Gandolfo] 387
Գասթիլ [Castile] 24
Գարբենթրաս [Carpentras] 144
Գարիպեան [Caribbean] 177
Գարսիֆ [Cardiff] 350
Գափել [Kappel] 51, 68
Գենփթըն [Kempten] 41, 66
Գենեթիզլթ [Connecticut] 221, 246, 247, 248, 300, 302, 309, 310, 311, 364, 366
Գենթըրպըրի [Canterbury] 109, 112, 113, 126, 130, 148, 207, 210, 212, 215, 219, 225, 254, 311, 344, 414
Գեսուիզ [Keswick] 348
Գերմանիա [Germany] 5, 6, 8, 9, 10, 16, 20, 21, 23, 24, 26, 30, 31, 32, 33, 35, 36, 37, 38, 40, 47, 50, 55, 57, 60, 64, 65, 67, 68, 69, 70, 71, 77, 78, 79, 80, 83, 105, 108, 109, 125, 142, 153, 163, 169, 170, 171, 183, 184, 185, 186, 188, 190, 191, 192, 193, 206, 217, 232, 250, 261, 266, 271, 272, 273, 277, 287, 295, 296, 316, 318, 319, 320, 321, 322, 323, 335, 336, 340, 341, 349, 350, 354, 355, 358, 380, 381, 384, 387, 388, 391, 392, 414, 415, 420, 423, 425

Գեմարիճ [Cambridge] 108, 109, 111, 208, 209, 210, 211, 214, 293, 343, 344, 348
Գեորգ [George] 395
Գեորգ Մաճորե [Giorgio Maggiore] 143
Գիեթի [Chieti] 143
Գլաուչա [Glauchau] 271
Գլաֆհամ [Clapham] 304, 307
Գլեւէս [Cleves] 74, 118, 119
Գլոյն [Cloyne] 256
Գոբենհակըն [Copenhagen] 82, 276
Գոդէան [Cottian] 87
Գոլոմպիա [Colombia, Columbia] 244, 248, 406
Գոդգորթա [Calvary] 375
Գոնէակ [Cognac] 38, 167
Գոնիկսպըրկ [Königsberg] 183
Գոնկո [Congo] 409
Գոնստէ [Condé] 165
Գոպըրկ [Coburg] 66
Գործաւոր տղամարդեր [Working Men's] 343
Գորնվոլ [Cornwall] 123
Գուիոնոնէս [Quiñones] 121
Գրազո [Cracow] 443

Դամասկոս [Damascus] 400
Դանիա [Denmark] 60, 74, 81, 82, 83, 188, 272, 276, 355, 356

Եգիպտոս [Egypt] 278, 395, 398, 405
Ելլ [Yale] 250, 304, 365, 375
Եթովպիա [Ethiopia] 397, 405
Եորք [York] 110, 112, 224, 225, 414
Եութա [Utah] 372
Եուկոսլաւիա [Yugoslavia] 404
Եունիըն [Union] 376, 406
Երուսաղէմ [Jerusalem] 60, 70, 150, 151, 232, 397, 400, 405, 410, 426

Երրորդութիւն [Trinity, Troitsky] 326, 354, 396, 398, 403
Եւրոպա [Europe] 5, 42, 75, 81, 132, 139, 163, 164, 195, 196, 251,
277, 278, 284, 293, 308, 313, 322, 337, 354, 356, 357, 360, 372, 374,
381, 388, 392, 402, 404, 415, 420, 424, 439
Եփրատ [Euphrates] 395

Զիլանս [Zeeland] 170, 171, 174, 175
Զոլիգոն [Zollikon] 53
Զուրֆեն [Zutphen] 173
Զուիցերիա [Switzerland] 35, 41, 42, 47, 50, 51, 52, 55, 56, 62, 86, 88,
125, 192, 204, 250, 349, 356, 357, 383, 387, 412
Զուիքաու [Zwickau] 29, 34
Զուկ [Zug] 50
Զոֆինկըն [Zofingen] 56

Էգուատոր [Ecuador] 244
Էթրիք [Ettrick] 282
Էյզընախ [Eisenach] 9, 26
Էյսլեպըն [Eisleben] 9, 75
Էկլ [Aigle] 86
Էմսըն [Emden] 60, 125, 175
Էյնսիւտելն [Einsiedeln] 43
Էսթոնիա [Estonia] 404
Էսլինկըն [Esslingen] 38
Էվընսթըն [Evanston] 416
Էվըրսլի [Eversley] 343
Էտինսպըրկ [Edinburgh] 138, 139, 221, 258, 409, 413
Էրլանկէն [Erlangen] 335
Էրֆուրթ [Erfurt] 9, 10, 11, 270, 271
Էփուրթ [Epworth] 281, 282
Էքսըթըր [Exeter] 264

Թագաւոր [King's] 265, 343
Թահիթի [Tahiti] 307

Թեննիսի [Tennessee] 251, 361
Թեատրի [Theate] 143
Թեքսաս [Texas] 244
Թիլլի [Tilly] 187
Թիրոլ [Tyrol] 56, 59, 61
Թիւպինգեն [Tübingen] 185, 194, 328, 330, 334, 335, 396
Թիւրինգիա [Thuringia] 34, 62
Թոսկանիա [Tuscany] 157
Թոմաս [Thomas] 400
Թորկաու [Torgau] 38, 66
Թուլ [Toul] 78
Թուլուզ [Toulouse] 180
Թուրքիա [Turkey] 402, 425
Թոքիո [Tokyo] 401
Թրանսիլվանիա [Thrace] 188, 195, 196
Թրավանկոր [Travancore] 416
Թրենթ [Trent] 75, 77, 78, 144, 147, 153, 154, 155, 156, 157, 159, 169
Թրիեր [Trier] 381
Թրոնսհեյմ [Trondheim] 83

ժնևե [Geneva] 48, 86, 87, 88, 89, 90, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 125, 134, 137, 140, 148, 160, 164, 194, 195, 199, 200, 207, 267, 320, 414, 434, 436, 437, 438

Իբր [Ypres] 380
Իլինոյ [Illinois] 372, 416
Ինկոլսթատ [Ingolstadt] 17, 52
Ինսպրբրկ [Innsbruck] 62, 78
Ինտիփենտրնս [Independence] 372
Իսթանպուլ [Istanbul] 400, 402
Իսլանտիա [Iceland] 83
Իսնի [Isny] 41, 68
Իվրի [Ivry] 180

Իտալիա [Italy] 5, 19, 24, 30, 38, 40, 57, 65, 69, 98, 102, 105, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 153, 163, 194, 196, 200, 236, 350, 383, 387, 388, 390, 391, 392

Իրլանդա [Ireland] 179, 222, 225, 256, 281, 304, 305, 347, 349, 409

Լա Շարիթե [La Charité] 167

Լա Ռոշել [La Rochelle] 167, 181

Լաթերան [Lateran] 387, 392

Լաթվիա [Latvia] 404

Լամպեթ [Lambeth] 214, 413, 419

Լայփցիկ [Leipzig] 20, 23, 183, 185, 269, 270, 321, 358

Լանկըսոկ [Languedoc] 180

Լապրատոր [Labrador] 278

Լատին Ամերիկա [Latin America] 434

Լեհաստան [Poland] 39, 62, 105, 194, 195, 196, 198, 237, 275, 397, 404, 406

Լենինգրատ [Leningrad] 403

Լեյտրն [Leyden] 72, 173, 175, 200, 201, 202, 215, 216, 223

Լեյչեսթեր [Leicester] 176, 177

Լիբանան [Lebanon] 405

Լիզպոն [Lisbon] 178

Լիեժ [Liège] 23

Լիմա [Lima] 244

Լիմատ [Limmat] 55

Լինտաու [Lindau] 41, 67, 68

Լինքոլն [Lincoln] 283

Լիոն [Lyons] 180, 195, 196, 389

Լոզան [Lausanne] 86, 87, 98, 99, 357, 407, 413, 440, 441

Լոնկ Այլլնս [Long Island] 251

Լոնտոն [London] 108, 109, 111, 117, 124, 126, 210, 212, 213, 214, 219, 225, 232, 245, 264, 277, 281, 283, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 305, 307, 311, 313, 343, 348, 350, 351, 352, 353, 409, 410, 411

Լոխլիւրն [Lochleven] 140

Լոս Անճելլոս [Los Angeles] 374
Լորէյն [Lorraine] 78, 165
Լութեր [Lutter] 188
Լութզեն [Lützen] 191
Լուիզիանա [Louisiana] 244
Լունսբըրկ [Lüneburg] 41, 66, 269
Լունս [Lund] 356
Լուպէք [Lübeck] 68
Լուսերն [Lucerne] 50
Լուվէն [Louvain] 23
Լվով [Lvov] 406
Լո Համփթըն [Low Hampton] 371

Խաղաղական կղզիներ [Pacific Islands] 352
Խաղաղական ովկիանոս [Pacific Ocean] 306, 439
Խաչ Պօղոսի [Paul's Cross] 212

Ծայրագոյն Արեւելք [Far East] 358

Կաբ [Gap] 86
Կալիսիա [Galicia] 406
Կայ [Guy] 343
Կենդրոնական Ամերիկա [Central America] 161, 243
Կեթիսպըրկ [Gettysburg] 369
Կելտերս [Gelders] 74, 75
Կելտըրլանտ [Gelderland] 175
Կէյնգաբորո [Gainsborough] 215
Կիզ [Guise] 165, 167
Կիսէն [Giessen] 273
Կիլես [Giles] 423
Կիլիկիա [Cilicia] 405
Կիպրոս [Cyprus] 405
Կլասկո [Glasgow] 132, 139, 140, 351
Կլարոս [Glarus] 43, 47

Կլուչեսթըր [Gloucester] 126, 284
Կոթինկըն [Göttingen] 318, 320, 337
Կոյա [Goa] 161
Կոնստանս [Constance] 20, 41, 44, 47, 50, 67, 68, 154
Կոստանդնուպոլիս [Constantinople] 395, 396, 399, 400, 402, 406, 407, 426
Կոսփրթ [Gosport] 307
Կույանա [Guiana] 278
Կորնթոս [Corinth] 330
Կրանտսըն [Grandson] 87
Կրաուպունտըն [Graubünden] 56
Կրաւելին [Gravelines] 163, 179
Կրենոպլ [Grenoble] 194
Կրինլէնտ [Greenland] 276
Կրոնինկըն [Groningen] 175

Հաթթին [Hattin] 350
Հալիֆաքս [Halifax] 252
Հալլէ [Halle] 271, 272, 274, 300, 305, 306, 316, 317, 326, 333, 334, 335, 355
Հալպերսթատ [Halberstadt] 15, 192
Հակենաու [Hagenau] 72
Համիլթըն [Hamilton] 371
Հայաստան [Armenia] 395, 398
Հայնո [Hainault] 168, 171
Հայտըլպըրկ [Heidelberg] 184, 204, 332
Հանովըր [Hanover] 69, 188, 239, 366
Հաուըրթ [Haworth] 292
Հատինկթըն [Haddington] 134
Հատըրսֆիլտ [Huddersfield] 304
Հատսըն Պեյ [Hudson's Bay] 251
Հարաւային Ամերիկա [South America] 161, 243, 374
Հարաւային Ափրիկէ [South Africa] 278, 352
Հարաւային Գարոլայնա [South Carolina] 246, 251

Հարաւային Տարրթա [South Dakota] 62
 Հարթուիզ [Hartwick] 370
 Հարթֆրրտ [Hartford] 221, 366
 Հարլէմ [Haarlem] 70, 173, 381
 Հարվըրտ [Harvard] 246, 247, 365, 370, 406
 Հելմսթէտ [Helmstedt] 318
 Հէսս [Hesse] 37, 38, 41, 56, 62, 64, 66, 68, 69, 73, 76, 78
 Հերթֆորտ [Hertford] 119
 Հերնհաթ [Herrnhut] 275, 276, 278, 279, 287
 Հերնհակ [Herrnhaag] 279
 Հէլլպրոն [Heilbronn] 41, 66
 Հէյտըլպըրկ [Heidelberg] 17
 Հիւլ [Hull] 293
 Հիւսիսային Ամերիկա [North America] 62, 161, 243, 252, 262, 404, 409, 423, 424, 440
 Հիւսիսային Գարոլայնա [North Carolina] 246, 251, 313
 Հիւսիսային Իրլանտա [Northern Ireland] 250, 367
 Հնդկաչին [Indochina] 390
 Հնդկաստան [India] 161, 201, 272, 307, 352, 353, 362, 390, 397, 400, 409, 415, 418, 434
 Հնդկաց [Indies] 151
 Հոլանտ [Holland] 171, 175
 Հոլանտա [Holland] 23, 24, 55, 62, 70, 71, 80, 102, 105, 127, 142, 159, 163, 164, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 180, 181, 186, 187, 188, 198, 199, 200, 202, 203, 204, 205, 211, 213, 215, 216, 227, 238, 249, 274, 297, 308, 312, 356, 357, 380, 381, 383
 Հոլանտական արեւելեան հնդկական շրջաններ [Dutch East Indies] 358
 Հոլիռուտ [Holyrood] 139
 Հոլիս [Hollis] 365
 Հոլում [Holum] 83
 Հոլսթայն [Holstein] 60, 81, 188
 Հոքս [Horse] 109
 Հունգարիա [Hungary] 39, 40, 62, 105, 188, 195, 402, 406

Հռոմ [Rome] 6, 8, 11, 15, 17, 18, 20, 37, 40, 46, 81, 112, 113, 116, 117, 126, 128, 142, 143, 147, 149, 151, 156, 157, 158, 162, 165, 172, 177, 206, 207, 219, 224, 227, 312, 313, 335, 347, 383, 386, 387, 390, 392, 393, 396, 397, 398, 408, 426, 428

Հրեշտակ [Angelo] 40

Ղենդ [Ghent] 173

Ճափոն [Japan] 161, 352, 401, 409

Ճաւա [Java] 306

Ճենովա [Genoa] 142

Ճինա [Jena] 183, 328, 332

Ճորճիա [Georgia] 246, 277, 284, 285, 286

Մագդաղինէ [Magdalen] 208

Մալայա [Malaya] 161

Մալապար [Malabar] 397, 405

Մակտրպրկ [Magdeburg] 9, 15, 37, 68, 76, 77, 78, 190

Մայէն [Mayenne] 179

Մայլտմէյ [Mildmay] 348

Մայնց [Mainz] 8, 15, 190

Մանթուա [Mantua] 71

Մանիթոպա [Manitoba] 62

Մանչեսթըր [Manchester] 371

Մանսֆելտ [Mansfeld] 9, 37, 68, 188

Մանրէսա [Manresa] 149

Մաունթ Այրի [Mount Airy] 369

Մաունթ Հերմոն [Mt. Hermon] 410

Մատակասագար [Madagascar] 390

Մատըլէն [Madeleine] 90

Մէյտլի [Madeley] 291

Մատուրա [Madura] 161

Մատրաս [Madras] 410

Մատրիտ [Madrid] 38, 172

Մարգարիտ [Margaret] 209
 Մարի, Մարիամ [Maria, Mary] 149, 292, 443
 Մարիենպորն [Marienborn] 279, 287
 Մարկոս [Marco] 158
 Մարշ [Marche] 91
 Մարպուրկ [Marburg] 62, 64, 65, 133, 200, 317, 340
 Մեզլենպըրկ [Mecklenburg] 333, 355
 Մեխլին [Mechlin] 173
 Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն [Catholicosate of the Great House of Cilicia] 405
 Մեծն Բրիտանիա [Great Britain] 101, 230, 246, 280, 281, 306, 330, 335, 352, 360, 409, 412
 Մեկազփելանն [Megaspelaion] 399
 Մեմինկըն [Memmingen] 41, 67, 68
 Մենհեթըն կղզի [Manhattan Island] 249
 Մեսսչուսեթ [Massachusetts] 220, 232, 246, 247, 248, 285, 289, 298, 300, 306, 309, 364, 365, 370, 410
 Մերձաւոր Արեւելք [Near East] 340, 400, 409
 Մերսըրսպըրկ [Mercersburg] 369
 Մեց [Metz] 78
 Մեքլենպըրկ [Mecklenburg] 37, 188
 Մեքսիքո [Mexico] 178, 243, 244
 Մէյն [Maine] 364, 370
 Մէյֆլաուըր [Mayflower] 184
 Մերիլընս [Maryland] 245, 246, 299, 310, 313
 Միացեալ Գաւառներ [United Provinces] 180, 199, 203, 204
 Միլան [Milan] 144, 145
 Մինտեն [Minden] 192
 Միսսիսիփի [Mississippi] 244
 Միզուրի [Missouri] 355, 372, 377
 Միտլպըրկ [Middleburg] 211
 Միւնիխ [Munich] 190, 404
 Մոլուգաս [Moluccas] 161
 Մոլտովիա [Moldavia] 399

Մոհազ [Mohács] 39
Մոնթանա [Montana] 62
Մոնթեյկո [Montaigu] 91, 150
Մոնթոպան [Montauban] 167, 181
Մոնթսերաթ [Montserrat] 149
Մոնթրեալ [Montreal] 252, 434
Մոնմարթ [Monmartre] 150, 151
Մոնս [Mons] 173
Մոսկուա [Moscow] 395, 396, 402, 407
Մորա [Morat] 86
Մորավիա [Moravia] 55, 56, 57, 61, 62, 148, 187, 274
Մորե [Moray] 138, 139
Մորիթիոս [Mauritius] 390
Մուգ [Mook] 173
Մուլհաուզեն [Mülhausen] 47, 50
Մուհլպերկ [Mühlberg] 76
Մունսթեր [Münster] 69, 70, 71
Մո [Meaux] 86, 92

Յակոբոս [James] 263
Յերոնիմոս [Jerome] 200
Յունաստան [Greece] 400, 401, 402, 405

Նաթալ [Natal] 344
Նայրոպի [Nairobi] 441, 442
Նանթ [Nantes] 180, 181, 380
Նասեպի [Naseby] 224
Նարտըն [Naarden] 173
Նավար [Navarre] 93, 165
Նափոլի [Naples] 147, 148, 382
Ների [Neri] 158
Նուշաթել [Neuchâtel] 86, 99
Նիակարա [Niagara] 373
Նիկոլսպերկ [Nikolsburg] 61

Նիմ [Nîmes] 181
 Նիու Ամսթերսամ [New Amsterdam] 249
 Նիու Անգլիա [New England] 217, 221, 246, 247, 248, 265, 284, 298, 299, 300, 301, 302, 306, 309, 314, 315, 360, 361, 366
 Նիու Գէսըլ [New Castle] 251
 Նիու Եորք [New York] 249, 250, 277, 297, 298, 299, 300, 310, 311, 313, 314, 361, 363, 370, 371, 372, 376, 405, 409
 Նիու Զելանդիա [New Zealand] 352
 Նիու Համշիր [New Hampshire] 247, 309
 Նիու Հէյվըն [New Haven] 221, 246, 247
 Նիու Հոլանտա [New Netherland] 249
 Նիու Ճըրզի [New Jersey] 233, 250, 296, 370
 Նիու Մէքսիքո [New Mexico] 244
 Նիու Պրանսուիք [New Brunswick] 297, 370
 Նիու Տէլիի [New Delhi] 416, 433
 Նիուֆրնլանտ [Newfoundland] 251
 Նիու Ֆրանսա [New France] 244
 Նիւպորթիպորթ [Newburyport] 285
 Նիւրնպըրկ [Nürnberg] 328
 Նոյոն [Noyon] 91, 94
 Նովա Սգոշիա [Nova Scotia] 251, 302
 Նորթհամփթըն [Northampton] 298, 300
 Նորուիճ [Norwich] 211, 225, 232
 Նորվեկիա [Norway] 82, 83, 272, 356
 Նորտլինկըն [Nördlingen] 41, 191
 Նուրենպերկ [Nürnberg] 30, 37, 38, 41, 57, 66, 69, 190
 Նորֆոլք [Norfolk] 119, 122, 177

Շաֆթըսպըրի [Shaftesbury] 241
 Շթուրթարթ [Stuttgart] 328
 Շիքաօ [Chicago] 436
 Շլաէյթհիմ [Scheitheim] 58, 59
 Շլէսուիկ [Schleswig] 81, 188
 Շմալկալտ [Schmalkald] 185

Շմալգալտըն [Schmalkalden] 68, 69, 71, 73, 74, 76
Շուապախ [Schwabach] 65
Շուասուլ [Choiseul] 382
Շուաֆհաուզըն [Schaffhausen] 47, 50
Շուէտ [Sweden] 60, 74, 81, 83, 84, 85, 188, 189, 191, 192, 250, 272, 356, 410, 437
Շգուայզ [Schwyz] 50

Ուայթ [White] 109
Ուայլտհուսս [Wildhaus] 42
Ուաշինկթըն [Washington] 367
Ուէզընպըրկ [Weissenburg] 41, 66
Ուէլլզ [Wales] 115, 250
Ուէյմար [Weimar] 325
Ուէսթմինսթըր [Westminster] 222, 223, 230, 247, 283, 298
Ուէսթֆալիա [Westphalia] 70, 192
Ուրթթըմպըրկ [Württemberg] 69
Ուրթթպըրկ [Wartburg] 26, 28
Ութրէխտ [Utrecht] 171, 174, 175, 200, 381, 387, 414
Ուիթթընպըրկ [Wittenberg] 11, 14, 15, 17, 18, 19, 23, 25, 27, 28, 29, 33, 65, 69, 73, 81, 82, 84, 111, 116, 183, 184, 195, 270, 274
Ուիթթիգոն [Wytikon] 53
Ուիլեյմ և Մարի [William and Mary] 245
Ուիլեյմզ [Williams] 362
Ուինոնա [Winona] 373
Ուինչէսթըր [Winchester] 212, 315
Ուինսհայմ [Windsheim] 41, 66
Ուիքսմութ [Wearmouth] 274
Ուլմ [Ulm] 38, 41, 57, 59, 68
Ուոլլուն [Walloon] 174
Ուրթթըմպըրկ [Württemberg] 56, 272, 320
Ուստէվոթըր [Oudewater] 200
Ուրի [Uri] 50
Ուփսալա [Uppsala] 83, 84, 85, 157, 437, 438, 441

Ուքրանիա [Ukraine] 62, 397, 404

Չարթըրհաուս [Charterhouse] 283

Չեխոսլովաքիա [Czechoslovakia] 405, 406

Չիլի [Chile] 244

Չինաստան [China] 161, 352, 353, 409, 423

Չիչեսթըր [Chichester] 215

Չուր [Chur] 56

Պազինկըմ [Buckingham] 219

Պազլ [Basel] 42, 47, 50, 52, 56, 57, 86, 94, 104, 125, 195, 196, 200, 267, 320, 357

Պալթեան ծով [Baltic Sea] 60, 188, 189, 192, 277, 403

Պալթիմոր [Baltimore] 312, 313, 365, 393

Պալքաններ [Balkans] 395, 400

Պաղեստին [Palestine] 395

Պանկոր [Bangor] 370

Պատրն [Baden] 50

Պարմեն [Barmen] 415, 420

Պարսելոնա [Barcelona] 40, 150

Պարսկաստան [Persia] 75, 405

Պարտսթաուն [Bardstown] 313

Պալարիա [Bavaria] 37, 56, 57, 186, 187, 188, 189, 190, 192, 355

Պաֆրլո [Buffalo] 355, 417

Պելճիքա [Belgium] 168, 175

Պետրոս [Pierre, Peter] 15, 58, 90, 148, 426

Պետֆորտ [Bedford] 304

Պերթըլզոտրֆ [Berthelsdorf] 274, 275

Պերլին [Berlin] 270, 275, 277, 326, 328, 332, 333, 334, 340, 354, 358, 440, 441

Պերմուտա [Bermuda] 256

Պերն [Bern] 42, 47, 50, 56, 86, 88, 89, 90, 98, 99, 100, 104, 105, 195

Պեքս [Bex] 86

Պեյրուֆ [Beirut] 437, 438

Պըրսմինկըմ [Birmingham] 351
 Պիել [Biel] 50
 Պիպերախ [Biberach] 68
 Պոթուել [Bothwell] 139, 229
 Պոլիվիա [Bolivia] 244
 Պոլոնիա [Bologna] 77, 153
 Պոհեմիա [Bohemia] 34, 186, 187, 188, 191, 193, 275
 Պոնն [Bonn] 337
 Պոսթըն [Boston] 247, 298, 313, 315, 365, 366
 Պուլկարիա [Bulgaria] 395, 400, 405, 425
 Պուրժ [Bourges] 92
 Պրազիլ [Brazil] 243, 244
 Պրաթըլ [Brattle] 247
 Պրայթըն [Brighton] 291, 343
 Պրանսուիք [Brunswick] 66, 68, 185, 188
 Պրանսընպըրկ [Brandenburg] 37, 39, 41, 65, 66, 69, 190, 192
 Պրաշ Ռան [Brush Run] 367
 Պրապանթ [Brabant] 168, 171, 174, 175
 Պրեմըն [Bremen] 68
 Պրեշա [Brescia] 145
 Պրեյթենֆելտ [Breitenfeld] 190, 191
 Պրիթանի [Brittany] 180
 Պրիլ [Brill] 170
 Պրիսթըլ [Bristol] 232, 257, 288, 289, 290, 291, 312, 349
 Պրիսսել [Brussels] 109, 170, 176
 Պոդնու [Paul] 108, 332

Ռազով [Raków] 196
 Ռակպի [Rugby] 342
 Ռայմզ [Reims] 165, 168, 180
 Ռափոլսթուելըր [Rappoltsweiler] 267
 Ռեկենսպուրկ [Regensburg] 37, 38, 72, 186, 191
 Ռեստոն [Redstone] 367
 Ռեթլինգըն [Reutlingen] 41, 66, 68

Ռոնընպըրկ [Ronnenburg] 277, 278
 Ռոչեսթըր [Rochester] 134, 361
 Ռոս Այլընս [Rhode Island] 248, 256, 302, 309
 Ռուէն [Rouen] 180
 Ռումանիա [Romania] 400, 402, 405
 Ռուսիա [Russia] 62, 304, 382, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406
 Ռոքի Մաունթըն [Rocky Mountain] 373

Սալամանկա [Salamanca] 150, 157
 Սալէմ [Salem] 220
 Սահարա [Sahara] 358, 390, 439
 Սան Եուսթէ [San Yuste] 80
 Սան Ֆրանսիսկո [San Francisco] 405
 Սաութվըրք [Southwark] 216
 Սարտինիա [Sardinia] 387
 Սաւանա [Savannah] 285
 Սաւոյ [Savoy] 47, 86, 87, 88, 89, 90, 105, 225
 Սաքսոնիա [Saxony] 15, 30, 38, 39, 40, 41, 62, 63, 65, 66, 68, 69, 73, 74, 76, 77, 78, 118, 153, 183, 184, 190, 191, 270, 275, 277, 278
 Սբէյըր [Speyer] 37, 38, 41, 55, 64, 75
 Սգալհոլթ [Skálholt] 83
 Սեպալտ [Sebald] 57
 Սետան [Sedan] 181
 Սերգիոս [Sergius] 404
 Սերպիա [Serbia] 395, 400, 405
 Սէյլոն [Ceylon] 306
 Սէն-Գուէնթեն [St.-Quentin] 105, 163
 Սէնթ Էնտրուզ [St. Andrews] 132, 133
 Սէն-Ճերման [St.-Germain] 171
 Սէն-Ճերման Բրէ [St.-Germain des Prés] 92
 Սէն-Ճերման Լայ [St.-Germain-en-Laye] 167
 Սէնթ Կալէն [St. Gallen] 41, 47, 50
 Սէնթ Ճայլէս [St. Giles] 138

Մթոզպարիճ [Stockbridge] 300
 Մթոքհոլմ [Stockholm] 83, 84, 412
 Մթրազպուրկ [Strassburg] 17, 38, 41, 47, 50, 56, 58, 59, 60, 61, 64, 67, 68, 70, 73, 86, 98, 99, 100, 101, 125, 148, 267
 Մթրաթֆորտ [Stratford] 248
 Մթրալսունտ [Stralsund] 188
 Մթրենկնասս [Strengnäs] 84
 Միենա [Siena] 195
 Միլեսիա [Silesia] 188
 Մինա [Sinai] 405
 Միսնեթո [Cisneros] 142
 Մկանտիմաւեան [Scandinavian] 81, 355, 368
 Մկովտիա [Scotland] 102, 105, 121, 128, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 164, 176, 177, 178, 179, 204, 206, 211, 214, 218, 221, 222, 223, 225, 228, 229, 230, 282, 294, 295, 304, 307, 348, 351, 352, 353, 416, 417
 Մկրոպի [Scrooby] 215
 Մոլթ Լէյք [Salt Lake] 372
 Մոլվէյ Մոսս [Solway Moss] 132
 Մոմասկա [Somasca] 144
 Մոմըրսըթ [Somerset] 120
 Մոմուր [Saumur] 181
 Մովետական Միութիւն [Soviet Union] 403, 424, 435
 Մուարթմոր Հոլ [Swarthmore Hall] 232
 Մումաթրա [Sumatra] 358
 Մուրբ Յարութիւն [Holy Sepulcher] 400
 Մուրիա [Syria] 398, 400, 405
 Մուրինամ [Surinam] 278
 Մպանիա [Spain] 19, 24, 39, 69, 78, 80, 105, 110, 118, 125, 138, 142, 146, 148, 149, 153, 159, 160, 163, 166, 167, 168, 169, 171, 172, 173, 192, 203, 243, 379, 382
 Մվապիա [Swabia] 60

 Վանգուվըր [Vancouver] 524

Վասթերաս [Västerås] 84
 Վասսի [Vassy] 167
 Վատիկան [Vatican] 18, 144, 147, 156, 158, 386, 387, 388, 389, 392,
 407, 408, 425, 426, 427, 428, 430, 432, 436, 442
 Վենետիկ [Venice] 38, 59, 145, 149, 153, 445
 Վենեզուելա [Venezuela] 243, 244
 Վերոնա [Varona] 144
 Վերվեն [Vervins] 180
 Վերտեն [Verdun] 78
 Վիետնամ [Vietnam] 438
 Վիեննա [Vienna] 42, 52, 61, 69
 Վիեն [Vienne] 103, 104
 Վիլվորդ [Vilvorde] 109
 Վլաստիմիր [Vladimir] 406
 Վոլտշաթ [Waldshut] 52, 55
 Վոլֆենպուրթ [Wolfenbüttel] 318
 Վոնսուվորթ [Wandsworth] 210
 Վո [Vaud] 86, 98, 357
 Վորմզ [Worms] 24, 25, 30, 32, 37, 39, 57, 58, 72, 109
 Վորուիք [Warwick] 122
 Վորչեսթեր [Worcester] 126, 225
 Վուլնոթ [Woolnoth] 292
 Վուրթեմպերկ [Württemberg] 17
 Վրաստան [Georgia] 395, 403, 405
 Վիրժինիա [Virginia] 245, 251, 299, 309

Տանուպ [Danube] 61, 191
 Տարնլի [Darnley] 138
 Տելլուեր գետ [Delaware River] 250
 Տեսաու [Dessau] 38, 69, 188
 Տենենթեր [Deventer] 381
 Տեւոն [Devon] 123
 Տըրհամ [Durham] 257, 348
 Տիամբեր [Diamper] 397

Տիժոն [Dijon] 180
 Տոնաւորթ [Donauwörth] 190
 Տորթ [Dort] 204
 Տոֆինէ [Dauphiné] 86
 Տրէզուրն [Dresden] 269, 270, 274

Յիւրիխ [Zurich] 43, 44, 45, 46, 47, 50, 52, 53, 55, 56, 58, 86, 117, 125, 148, 195, 207

Փալատինատ [Palatinate] 62, 186, 187, 192
 Փամփլոնա [Pamplona] 149
 Փատովա [Padua] 194
 Փարակուէյ [Paraguay] 244, 382
 Փարիզ [Paris] 75, 86, 91, 92, 93, 102, 103, 145, 150, 159, 164, 171, 172, 179, 180, 252, 320, 358, 380, 381, 404, 406
 Փարմա [Parma] 168, 170, 174, 176, 178
 Փաւիա [Pavia] 36
 Փենսիլվանիա [Pennsylvania] 250, 264, 277, 300, 309, 367, 369, 370
 Փերու [Peru] 243, 244
 Փըրթ [Perth] 135
 Փիթսպըրկ [Pittsburgh] 370
 Փիլիպպոս [Philip] 158
 Փինքի [Pinkie] 122, 132, 134
 Փլիմութ [Plymouth] 178, 217, 246, 247, 349
 Փոմերանիա [Pomerania] 69, 188, 190, 192
 Փոմպալ [Pombal] 262, 382
 Փորթուկալ [Portugal] 153, 161, 243, 382, 397
 Փոր Ռուայալ [Port Royal] 380
 Փուասի [Poissy] 166, 167
 Փոքր Ասիա [Asia Minor] 395
 Փրակ [Prague] 187, 190, 191
 Փրաւիտընս [Providence] 248
 Փրէսթըն [Preston] 224
 Փրէսթըն Փաթրիք [Preston Patrick] 232

Փրինսթըն [Princeton] 295, 297, 301, 370, 406
Փրուսիա [Prussia] 37, 39, 62, 181, 262, 270, 278, 354, 358, 382

Քանադա [Canada] 145, 244, 251, 302, 349, 399, 404, 407, 417, 418, 434, 442

Քարլովցի [Karlovtsi] 404

Քենթաքի [Kentucky] 251, 361, 366

Քենիա [Kenya] 441

Քէօլն [Cologne] 8, 23, 75, 109, 121, 168

Քիև [Kiev] 395, 397, 403, 404

Քինկսվուօտ [Kingswood] 288

Քոնիկսպըրկ [Königsberg] 323

Քորիա [Korea] 353

Քուէպէք [Quebec] 145, 244, 252

Քուէտլինպըրկ [Quedlinburg]] 273

Քրիստիանա [Christiana] 356

Քրիստոս [Christ] 207, 283, 310

Օլէրոն [Oléron] 92

Օլնի [Olney] 292, 293

Օկսպուրկ [Augsburg] 15, 18, 38, 55, 57, 58, 60, 65, 66, 67, 68, 69, 77, 79, 85, 163, 183, 184, 185, 186, 188, 278

Օհայօ [Ohio] 361, 363, 370, 372, 417

Օսթերլից [Austerlitz] 61, 62

Օլլոն [Ollon] 86

Օպերլին [Oberlin] 363

Օպըրն [Auburn] 371

Օսլօ [Oslo] 416

Օրանժ [Orange] 169

Օրէպրօ [Örebro] 85

Օրիէլ [Oriël] 347

Օրլամունտ [Orlamünde] 34

Օրլէան [Orléans] 91, 92

Օրպ [Orbe] 87

Օւերիսսել [Overijssel] 175
Օփթինա [Optina] 399
Օքսֆորդ [Oxford] 108, 127, 148, 208, 263, 283, 284, 285, 344, 345, 346, 347, 348, 412

Ֆայէթ [Fayette] 372
Ֆանար [Phanar] 395
Ֆեննի Տրայթըն [Fenny Drayton] 231
Ֆերրարա [Ferrara] 98
Ֆիլատելֆիա [Philadelphia] 233, 250, 251, 297, 298, 299, 305, 310, 311, 313, 314, 315
Ֆիլիպին [Philippines] 161, 353
Ֆինլանտիա [Finland] 85, 404, 405
Ֆլանտեր [Flanders] 168, 174, 175, 177
Ֆլաշինկ [Flushing] 170
Ֆլոտեն [Flodden] 132
Ֆլորանս [Florence] 38, 158, 395, 397
Ֆորմոզա [Formosa] 306
Ֆուկլըր [Fugger] 15
Ֆրանեկեր [Franeker] 223
Ֆրանսսա [France] 19, 24, 25, 30, 38, 40, 42, 64, 68, 74, 75, 78, 86, 92, 93, 94, 98, 102, 103, 105, 118, 121, 122, 128, 132, 133, 134, 135, 136, 137, 145, 153, 159, 160, 163, 164, 165, 166, 167, 171, 172, 175, 176, 178, 179, 180, 186, 190, 191, 192, 206, 226, 228, 251, 252, 258, 262, 274, 308, 316, 322, 344, 349, 350, 356, 380, 381, 382, 383, 384, 387, 388, 389, 390, 391, 397, 412, 425
Ֆրանքենհաուզըն [Frankenhausen] 36
Ֆրանքֆուրթ [Frankfurt] 69, 125, 134, 207, 267, 269
Ֆրիզլանտ [Friesland] 62, 71, 171, 175
Ֆրիպուրկ [Freiburg] 58, 86, 88, 89

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ղեկավար
(ՂԼ 20.21) 110

Մարզարկություն Եսայիի
(Ես 54.2) 307

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ալետարան ըստ Յովհաննէսի
(Յհ 20.31) 269

Նամակ հռոմայեցիներուն
(Հռ 1.17) 13
(Հռ 4.5) 13

ԵՐԿԵՐ

- Գրոթոս Ռուպիանոս եւ Ուրիխ Հուբընցի. *Շփոթահար մարդերու նամակները*. Crotus Rubianus and Ulrich von Hutten, *Letters of Obscure Men* 8
- Պետրոս Լոմպարցի, *Նախադասութիւններու չորս գիրքերը*. Peter Lombard, *Sententiarum libri quatuor* 11, 157
- Մարթին Լուտեր, *Վերապահութիւն դպրոցական սաստիածարանութեան*. Martin Luther, *Disputation against Scholastic Theology* 13
- J. Pelikan and H. T. Lehmann, eds., *Luther's Works*, 55 volumes, St. Louis and Philadelphia, 1955–1976 16, 21, 22, 23, 25, 27, 65
- Յովհան Մայրր Էքցի, *Կոթողներ*. Johann Maier of Eck, *Obelisci* 17
- Մարթին Լուտեր, *Աստղեր*. Martin Luther, *Asterici* 17
- Մարթին Լուտեր, *Բացատրողականներ*. Martin Luther, *Explanations* 17
- B. J. Kidd, ed., *Documents Illustrative of the Continental Reformation* (Oxford), 1911 18, 39
- Մարթին Լուտեր, *Բարի գործերու մասին*. Martin Luther, *On Good Works* 20
- Մարթին Լուտեր, *Գերման ազգի քրիստոնէական ազնուականութեան*. Martin Luther, *To the Christian Nobility of the German Nation* 21
- Մարթին Լուտեր, *Եկեղեցիի բաբելոնեան գերութիւնը*. Martin Luther, *Babylonian Captivity of the Church* 22
- Մարթին Լուտեր, *Քրիստոնէային ազատութիւնը*. Martin Luther, *The Freedom of a Christian* 22
- Փիլիպպոս Մելանգթոն, *Աստուածարանութեան գլխաւոր կէտերը*. Philip Melanchthon, *Loci communes* 27, 182
- Մարթին Լուտեր, *Կարգ հասարակաց պաշտամունքին*. Martin Luther, *Order of Public Worship* 31

- Մարթին Լուտեր, *Պատարագի բանաձև*. Martin Luther, *Formula of the Mass* 31
- Մարթին Լուտեր, *Մկրտութեան կարգ*. Martin Luther, *Order of Baptism* 31
- Մարթին Լուտեր, *Գերման պատարագը*. Martin Luther, *German Mass* 32
- Տեղիտերիոս Երազմոս, *Ազատ կամքի մասին պարսալ*. Desiderius Erasmus, *Diatrobe de libero arbitrio* 33
- Մարթին Լուտեր, *Կամքին կապանքը*. Martin Luther, *De servo arbitrio* 33
- Մարթին Լուտեր, *Կողոպտող եւ սպանող գիւղացի ամբոխին դէմ*. Martin Luther, *Against the Robbing and Murdering Hordes of Peasants* 36
- Մարթին Լուտեր, *Գերման պատարագը եւ աստուածային պաշտամունքի կարգը*. Martin Luther, *German Mass and Order of Divine Service* 39
- Մարթին Լուտեր, *Փոքր քրիստոնէական*. Martin Luther, *Small Catechism* 40
- Ուլրիխ Զուինկլի, *Ճշմարիտ եւ կեղծ կրօնքին բացատրողականը*. Ulrich Zwingli, *The Commentary on True and False Religion* 47
- Մարթին Լուտեր, *Խոստովանութիւն Քրիստոսի ընթրիքին*. Martin Luther, *Confession concerning Christ's Supper* 49
- Փիլկրամ Մարփեք, *Պատասխաններ*. Pilgram Marpeck, *Verantwortung* 60
- Պետրոս Ռայտըմըն, *Հաւատքի պատումը*. Peter Riedemann, *Rechenschaft* 62
- Մարթին Լուտեր, *Գաղատացիներու նամակին մեկնաբանութիւնը*. Martin Luther, *Commentary on the Epistle to the Galatians* 63
- Յովհաննէս Կալվին, *Քրիստոնէական կրօնքի հաստատութիւններ*. John Calvin, *Institutes of the Christian Religion*, 2 vols. 63, 94, 96, 98, 100

- Մեննո Սիմոնս, *Քրիստոնեական վարդապետութեան հիմքը*. Menno Simons, *Foundation of Christian Doctrine* 71
- Յովհաննէս Կալվին, *Մեկնութիւն Սենեկայի գթութեան ճառին*. John Calvin, *Commentary on Seneca's Treatise on Clemency* 92
- Յովհաննէս Կալվին, *Մեկնութիւն Հռոմայեցիներու նամակին*. John Calvin, *Commentary on Romans* 100
- Յովհաննէս Կալվին, *Պատասխան Սատոլեթոյին*. John Calvin, *Reply to Sadoleto* 100, 144
- Միքայէլ Սերվէթուս, *Սուրբ Երրորդութեան սխալները*. Michael Servetus, *De Trinitatis Erroribus* 103
- Միքայէլ Սերվէթուս, *Քրիստոնէութեան վերահաստատումը*. Michael Servetus, *Christianismi Restitutio* 103
- H. Bettenson, ed., *Documents of the Christian Church*, 2nd ed. (London, 1963) 113
- Մարսիլիոս Փատովացի, *Պաշտպան խաղաղութեան*. Marsiglio of Padua, *Defensor pacis* 114
- Մարթին Պուսեր, *Գրաքննութիւն*. Martin Bucer, *Censura* 123
- Յովհաննէս Ֆոքս, *Արարքներ եւ յուշարձաններ*. John Foxe, *Acts and Monuments* 127
- *Կարգապահութեան առաջին գիրք*. *First Book of Discipline* 136, 137
- *Գիրք հասարակաց կարգի*. *Book of Common Order* 137
- Գասպար Գոնթարինի, *Եպիսկոպոսին պաշտօնը*. Gasparo Contarini, *De officio episcopi* 143
- Պենետերօ Մանթուացի, *Քրիստոսի մահուան բարիքները*. Benedetto of Mantua, *The Benefits of Christ's Death* 148
- Լուտոլֆ Սաքսոնացի, *Քրիստոսի կեանքը*. Ludolph of Saxony, *Life of Christ* 149
- Թովմաս Բենվիացի, *Նմանութիւն Քրիստոսի*. Thomas à Kempis, *The Imitation of Christ* 149

- Իգնատիոս Լոյոլա, *Հոգեւոր վարժութիւններ*. Ignatius Loyola, *Spiritual Exercises* 149, 152
- Մելխիոր Գանօ, *Տասներկու տեղիքներու աստուածաբանական գիրք*. Melchior Cano, *De locis theologicis libri XII* 156
- Ռոպերթօ Պելարմինօ, *Հակաճառութիւններ մեզի ժամանակակից հերետիկոսներուն*. Roberto Bellarmino, *Disputations against the Heretics of our Time* 157
- Սեզար Պարոնիոս, *Եկեղեցական տարեգրութիւն*. Caesar Baronius, *Annales Ecclesiastici* 158
- Մաթիաս Ֆլագիոս Իլիրիգոս, *Քրիստոսի եկեղեցիի պատմութիւնը*. Matthias Flacius Illyricus, *Historia Ecclesiae Christi* 158
- Պետրոս Պերուլացի, *Յիսուսի մեծութիւնները*. Pierre de Bérulle, *Les Grandeurs de Jésus* 159
- Թերեզա Աւիլացի, *Կատարելութեան ճանապարհը*. Teresa de Jésus of Ávila, *The Way of Perfection* 159
- Թերեզա Աւիլացի, *Ներքին դղեակը*. Teresa de Jésus of Ávila, *The Interior Castle* 159
- Յովհաննէս Ֆոնթիւերոցի, *Կարմէղոս լէո բարձրանալը*. Juan de la Cruz of Fontiveros, *The Ascent of Mount Carmel* 160
- Յովհաննէս Ֆոնթիւերոցի, *Հոգիին խաւար գիշերը*. Juan de la Cruz of Fontiveros, *The Dark Night of the Soul* 160
- Յովհաննէս Ֆոնթիւերոցի, *Հոգիին երգը*. Juan de la Cruz of Fontiveros, *The Song of the Spirit* 160
- Յովհաննէս Ֆոնթիւերոցի, *Սիրոյ կենդանի բոցը*. Juan de la Cruz of Fontiveros, *The Living Flame of Love* 160
- Ֆրանսուա (Ֆրանսիս) Սալեցի, *Ներածութիւն բարեպաշտ կեանքի*. François de Sales, *Introduction to the Devout Life* 160
- Ֆաուսթօ Սոզինի, *Բացատրողական* [Յովհաննէսի աւետարանի նախաբանին]. Fausto Sozzini, *Explicatio* [of the Prologue to John's Gospel] 196

- Ֆաուսթօ Սոզինի, *Յիսուս Քրիստոս սպասաւորը*. Fausto Sozzini, *De Jesu Christo servatore* 196
- *Ռազովեան քրիստոնէական*. *Racovian Catechism* 196
- H. Gee and W. J. Hardy, eds., *Documents Illustrative of English Church History* (London, 1896) 208
- Յովհաննէս Ֆիլտ եւ Թովմաս Ուիլզոքս, *Սաստ խորհրդարանին*. John Field and Thomas Wilcox, *An Admonition to the Parliament* 209
- Ուոլթըր Թրաւըրս, *Եկեղեցական կանոնակարգի ամբողջական եւ պարզ բացայայտում*. Walter Travers, *A Full and Plain Declaration of Ecclesiastical Discipline* 210
- Թովմաս Պիլսըն, *Քրիստոսի եկեղեցիի շարունակական ղեկավարութիւնը*. Thomas Bilson, *Perpetual Government of Christ's Church* 212
- Ռիչըրտ Հուքըր, *Եկեղեցական վարչաձեւի գործադրութիւնը*. Richard Hooker, *Laws of Ecclesiastical Polity* 213
- Նիկոլայոս Պաունտէ, *Շաբաթ օրուան վարդապետութիւնը*. Nicholas Bownde, *Doctrine of the Sabbath* 217
- J. H. Leith, ed., *Creeds of the Churches: A Reader in Christian Doctrine from the Bible to the Present* (Garden City, N.Y., 1963) 223
- Կալիլէօ Կալիլէի, *Երկխօսութիւն*. Galileo Galilei, *Dialogue* 237
- Ռընէ Տէքարթ, *Աշխատակարգաբանութիւն*. René Descartes, *Discourse on Method* 238
- Ռընէ Տէքարթ, *Առաջին իմաստասիրութիւն*. René Descartes, *First Philosophy* 238
- Ռընէ Տէքարթ, *Սկզբունքներ*. René Descartes, *Principia* 238
- Յովհաննէս Լոք, *Մարդկային հասկացողութեան ուսումնասիրութիւնը*. John Locke, *Essay Concerning Human Understanding* 240
- Յովհաննէս Լոք, *Քրիստոնէութեան իրաւացիութիւնը*. John Locke, *Reasonableness of Christianity* 240

- Յովհաննէս Լոք, *Կառավարութեան մասին ուսումնասիրութիւններ*. John Locke, *Treatises on Government* 240
- Անտոն Աշլի-Գուփըր, *Մարդոց յատկանիշերը*. Anthony Ashley-Cooper, *Characteristics of Men* 241
- Յովհաննէս Թոլանտ, *Քրիստոնէութիւնը խորհրդաւոր չէ*. John Toland, *Christianity Not Mysterious* 254
- Անտոն Գոլինգ, *Ազատ մտածողութեան մասին*. Anthony Collins, *Discourse of Freethinking* 254
- Մատթէոս Թինտալ, *Քրիստոնէութիւնը ստեղծագործութեան չափ հին է*. Matthew Tindal, *Christianity as Old as the Creation* 254
- Ուիլերմ Լօ, *Պատճառին պարագան*. William Law, *The Case of Reason* 256
- Յովսէփ Պաթլըր, *Կրօնքին փոխաբերութիւնը*. Joseph Butler, *Analogy of Religion* 257
- Դաւիթ Հիւմ, *Անգլիոյ պատմութիւնը*. David Hume, *History of England* 258
- Դաւիթ Հիւմ, *Մարդկային բնութիւնը*. David Hume, *Treatise of Human Nature* 258
- Դաւիթ Հիւմ, *Իմաստասիրական գրափորձեր*. David Hume, *Philosophical Essays* 258
- Դաւիթ Հիւմ, *Կրօնքի բնական պատմութիւն*. David Hume, *Natural history of Religion* 258
- Եդուարդ Գիպոն, *Պատմութիւն Հռոմէական կայսրութեան անկումի*. Edward Gibbon, *History of the Decline and Fall of the Roman Empire* 259
- Ուիլերմ Փալէ, *Քրիստոնէութեան փաստերը*. William Paley, *View of the Evidences of Christianity* 260
- Ուիլերմ Փալէ, *Բնական աստուածաբանութիւն*. William Paley, *Natural Theology* 260
- Թովմաս Փէյն, *Բնական զգացողութիւն*. Thomas Paine, *Common Sense* 261
- Թովմաս Փէյն, *Մարդուն իրաւունքները*. Thomas Paine, *Rights of Man* 261

- Թովմաս Փեյն, *Պատճառի ժամանակը*. Thomas Paine, *Age of Reason* 261
- Էթերն Ալըն, *Պատճառը մարդուն միակ վճիռը*. Ethan Allen, *Reason the Only Oracle of Man* 262
- Թովմաս Էմլին, *Յիսուս Քրիստոսի աստուածաշնչական պատմութեան փնտրոտուքը*. Thomas Emlyn, *Inquiry into the Scripture Account of Jesus Christ* 263
- Սամուէլ Գլարք, *Սուրբ Երրորդութեան աստուածաշնչական վարդապետութիւնը*. Samuel Clarke, *Scripture Doctrine of the Trinity* 263
- Յովհան Արնտ, *Ճշմարիտ քրիստոնէութիւնը*. Johann Arndt, *True Christianity* 267
- Լէուիս Պէյլի, *Բարեպաշտութեան գործունէութիւնը*. Lewis Bayly, *The Practice of Pietie* 267
- Փիլիպպոս Յակոբ Սփենըր, *Բարեպաշտ փափագներ*. Philipp Jacob Spener, *Pia desideria* 268
- Կոթֆրայտ Աոնոլտ, *Անաշառ եկեղեցին եւ հերետիկոսական պատմութիւնը*. Gottfried Arnold, *Unparteiische Kirchen und Ketzer-Historie* 273
- Ուիլերմ Լօ, *Բարեպաշտ եւ սուրբ կեանքի լուրջ հրաւեր*. William Law, *Serious Call to a Devout and Holy Life* 281
- Եդուարդ Ֆիշըր, *Արդի աստուածութեան էութիւնը*. Edward Fisher, *The Marrow of Modern Divinity* 282
- Սամուէլ Ուէզլի, *Քրիստոսի կեանքը*. Samuel Wesley, *Life of Christ in Verse* 283
- Մարթին Լուտեր, *Մեկնութիւն Հռոմայեցիներու նամակին*. Martin Luther, *Commentary on Romans* 287
- Թովմաս Սգոթ, *Ընտանիքին Աստուածաշունչը*. Thomas Scott, *Family Bible with Notes* 293
- Յովսէփ Միլնըր, *Քրիստոսի եկեղեցիին պատմութիւնը*. Joseph Milner, *History of the Church of Christ* 293
- Յովհաննէս Ուիթըրսփուն, *Եկեղեցական տիպարներ*. John Witherspoon, *Ecclesiastical Characteristics* 295


- Յովնաթան Էտուրբուգ, *Աստուծոյ զարմանալի գործին՝ բազմահարիւր անձերու դարձին պատմութիւնը*. Jonathan Edwards, *A Faithful Narrative of the Surprising Work of God in the Conversion of Many Hundred Souls* 298
- Սողոմոն Սթոտըրտ, *Կրօնական խանդաղատանքներ*. Solomon Stoddard, *A Treatise Concerning Religious Affections* 300
- Սողոմոն Սթոտըրտ, *Ամբողջական հաղորդութեան յատկանիշերը*. Solomon Stoddard, *Qualifications Requisite for Full Communion* 300
- Յովնաթան Էտուրբուգ, *Ճան կամքի մասին*. Jonathan Edwards, *Treatise on the Will* 301
- Յովնաթան Էտուրբուգ, *Ճշմարիտ ամաքինութեան իսկութիւնը*. Jonathan Edwards, *The Nature of True Virtue* 301
- Ուիլերմ Ուիլպրֆորս, *Գործնական տեսակէտ այս երկիրին մէջ աւելի բարձր եւ միջին դասակարգերու քրիստոնէաներու կրօնական դրութեան մէջ գտնուող հակասութիւններու*. William Wilberforce, *Practical View of the Prevailing Religious System of Professed Christians in the Higher and Middle Classes in this Country Contrasted with Real Christianity* 304
- Ուիլերմ Գերի, *Քրիստոնէաներուն հեթանոսները դարձի բերելու պարտաւորութիւնը*. William Carey, *Enquiry into the Obligations of Christians to use Means for the Conversion of the Heathens* 307
- Յովհան Լորենց Մոշէյիմցի, *Եկեղեցիի պատմութիւն*. Johann Lorenz von Mosheim, *Institutiones Historiae Ecclesiasticae* 318
- Յովհան Լորենց Մոշէյիմցի, *Քրիստոնէութիւնը մինչեւ Կոստանդիանու*. Johann Lorenz von Mosheim, *Commentarii de rebus Christianorum ante Constantinum* 318
- Կորթոլտ Եփրեմ Լէսինկ, *Մարդկային ցեղի դաստիարակութիւնը*. Gotthold Ephraim Lessing, *Education of the Human Race* 319

- Յովհաննէս Ուեզլի, *Նոր կտակարանի նոթեր*. John Wesley, *Notes upon the New Testament* 320
- Յովհան Յակոբ Ուէթսթայն, *Յունարէն Նոր կտակարանի տարբերակները*. Johann Jakob Wettstein, *Greek New Testament with Various Reading* 320
- Էմմանուէլ Քանթ, *Քննադատութիւն բիւրեղ պատճառի*. Immanuel Kant, *Critique of Pure Reason* 323
- Էմմանուէլ Քանթ, *Քննադատութիւն գործնական պատճառի*. Immanuel Kant, *Critique of Practical Reason* 324
- Էմմանուէլ Քանթ, *Կրօնքը պատճառի սահմաններուն մէջ միայն*. Immanuel Kant, *Religion within the Bounds of Reason* 324
- Յովհան Կոթֆրայտ Հերտեր, *Եբրայական բանաստեղծութեան հոգին*. Johann Gottfried Herder, *Spirit of Hebrew Poetry* 325
- Յովհան Կոթֆրայտ Հերտեր, *Մարդկութեան պատմութեան իմաստասիրութիւնը*. Johann Gottfried Herder, *Philosophy of the History of Mankind* 325
- Ֆրեւտերիք Դանիէլ Էրնրսթ Շլերմախըր, *Կրօնքի ճառեր*. Friedrich Daniel Ernst Schleiermacher, *Addresses on Religion* 326
- Ֆրեւտերիք Դանիէլ Էրնրսթ Շլերմախըր, *Քրիստոնէական հաւատքը Աւետարանական եկեղեցիի սկզբունքներուն համաձայն*. Friedrich Daniel Ernst Schleiermacher, *Christian Faith according to the Principles of the Evangelical Church* 326
- Հենրիխ Էպերհարտ Կոթլոպ Փաուլոս, *Յիսուսի կեանքը*. Heinrich Eberhard Gottlob Paulus, *Life of Jesus* 332
- Յովհան Օգոստոս Ուիլիըմ Նէանտեր, *Քրիստոնէական կրօնքի եւ եկեղեցիի պատմութիւն*. Johann August Wilhelm Neander, *History of the Christian Religion and Church* 333

- Իսահակ Օգոստոս Տորնըր, *Քրիստոսի անձին վարդապետությունը*. Isaac August Dorner, *Doctrine of the Person of Christ* 334
- Իսահակ Օգոստոս Տորնըր, *Հաւատքի վարդապետություններու դրոյթը*. Isaac August Dorner, *System of the Doctrines of Faith* 334
- Դաւիթ Ֆրեյտերիք Սթրաուս, *Յիսուսի կեանքին քննական հետազոտությունը*. David Friedrich Strauss, *The Life of Jesus Critically Examined* 335
- Ալպերթ Շոււայցըր, *Պատմական Յիսուսի որոնումը*. Albert Schweitzer, *The Quest of the Historical Jesus* 336
- Ալպրեխթ Ռիթսզըլ, *Հին կաթոլիկ եկեղեցիին ծագումը*. Albrecht Ritschl, *Origin of the Old Catholic Church* 337
- Ալպրեխթ Ռիթսզըլ, *Արդարացումի եւ հաշտութեան քրիստոնէական վարդապետությունը*. Albrecht Ritschl, *The Christian Doctrine of Justification and Reconciliation* 337
- Ատոլֆ Հարնագցի, *Վարդապետութեան պատմություն*. Adolf von Harnack, *History of Dogma* 340
- Ատոլֆ Հարնագցի, *Ի՞նչ է քրիստոնէությունը*. Adolf von Harnack, *What is Christianity?* 340
- Էրնրսթ Թրոյէլսզ, *Քրիստոնէայ եկեղեցիներու ընկերային ուսուցումները*. Ernst Troeltsch, *Social Teachings of the Christian Churches* 340
- Սամուէլ Թէլլըր Գոլերիճ, *Մտածութեան օժանդակները*. Samuel Taylor Coleridge, *Aids to Reflection* 342
- Հենրի Հարթ Միլմըն, *Հրեաներու պատմությունը*. Henry Hart Milman, *History of the Jews* 343
- Հենրի Հարթ Միլմըն, *Լատին քրիստոնէութեան պատմությունը*. Henry Hart Milman, *History of Latin Christianity* 343
- *Գրափորձեր եւ գրադատումներ*. *Essays and Reviews* 343
- Յովհաննէս Քեպլէ, *Քրիստոնէական տարին*. John Keble, *The Christian Year* 345

- Ուիլերմ Պութ, *Ամենամութ Անգլիոյ մէջ եւ անկէ դուրս գալու ճամբան*. William Booth, *In Darkest England and the Way Out* 350
- Հերման Գութըր, *Անոնք պէ՛տք է*. Hermann Kutter, *They Must!* 359
- Չարլզ Կրանտիսըն Ֆինի, *Կրօնքի վերարթնութեան դասախօսութիւններ*. Charles Grandison Finney, *Lectures on Revivals of Religion* 363
- Չարլզ Կրանտիսըն Ֆինի, *Կարգաւորեալ աստուածաբանութեան դասախօսութիւններ*. Charles Grandison Finney, *Lectures on Systematic Theology* 363
- Հորըս Պուշնըլ, *Քրիստոնէական սնուցում*. Horace Bushnell, *Christian Nurture* 366
- Հորըս Պուշնըլ, *Աստուած Քրիստոսի մէջ*. Horace Bushnell, *God in Christ* 366
- Հորըս Պուշնըլ, *Բնութիւնը եւ գերբնականը*. Horace Bushnell, *Nature and the Supernatural* 366
- Չարլզ Բորթըրֆիլտ Գրաութ, *Պահպանողական բարեկարգութիւնն ու անոր աստուածաբանութիւնը*. Charles Porterfield Krauth, *The Conservative Reformation and its Theology* 369
- Մարի Պէյքըր Էտի, *Գիտութիւնն ու բժշկութիւնը՝ Աստուածաշունչին յղումով*. Mary Baker Eddy, *Science and Health with Key to the Scriptures* 377
- Գորնելիոս Ժանսէն, *Օգոստինոս*. Cornelius Jansen, *Augustinus* 380
- Պլէզ Փասքալ, *Շրջանային նամակներ*. Blaise Pascal, *Lettres Provinciales* 380
- Փասգիէ Քուէսնէլ, *Նոր կտակարանի բարոյական քննարկումներ*. Pasquier Quesnel, *Moral Reflections on the New Testament* 380
- Ֆրանսուա Ռենէ Շաթոպրիանցի, *Քրիստոնէութեան ծննդոցը*. François René Chateaubriand, *Géné du Christianisme* 384

- Պետրոս Սոկիլա, *Խոստովանութիւն*. Peter Mogila, *Confession* 397
- Պետրոս Սոկիլա, *Քրիստոնէական*. Peter Mogila, *Catechism* 397
- Ֆիոտոր Տոսթոևսքի, *Քարամազով եղբայրներ*. Fyodor Dostoyesky, *Brothers Karamazov* 399
- Գարլ Պարթ, *Եկեղեցիի վարդապետական աստուածաբանութիւնը*. Karl Barth, *Church Dogmatics* 420
- Ռեյնհրլտ Նիպըր, *Մարդուն բնութիւնն ու վախճանը*. Reinhold Niebuhr, *The Nature and Destiny of Man* 420
- Ռիչըրտ Նիպըր, *Քրիստոս եւ մշակոյթ*. Richard Niebuhr, *Christ and Culture* 420
- Պօղոս Թիլիխ, *Կարգաւորեալ աստուածաբանութիւն*. Paul Tillich, *Systematic Theology* 421



ԹԱՐԳՄԱՆԻՉԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵԷՄԷՁԵԱՆ ծնած է 1962-ին, Պէյրութ: Աւարտած է Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքը եւ 1981-ին կուսակրօն քահանայ ձեռնադրուելէ ետք՝ դպրեվանքի եւ կաթողիկոսարանի մէջ վարած է վանական պաշտօններ: 1986–1991 աստուածաբանական բարձրագոյն ուսումը շարունակած է Վանգուվըրի (Գանատա) մէջ եւ որպէս հովիւ ծառայած տեղոյն նորակազմ համայնքին: 1991–1997 իր հովուական ծառայութիւնը շարունակած է Նիւ Ճըրզիի (ԱՄՆ) մէջ: 1997–2014 վարած է Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Միջեկեղեցական եւ միջկրօնական յարաբերութիւններու վարիչ-քարտուղարի պաշտօնը: Եպիսկոպոս օծուած է 2002-ին: 2011-ին տոբթորայի վկայական ստացած է Պրիթիշ Գոլումպիայի (Գանատա) համալսարանէն: 2014–2015 եղած է Կիպրոսի հայոց կաթողիկոսական փոխանորդ: 2018–2019 եղած է Լիբանանի հայոց առաջնորդ: Ներկայիս Կաթողիկոսութեան Միջեկեղեցական եւ միջկրօնական յարաբերութիւններու խորհրդատուն է: Հեղինակ է Հայ եկեղեցւոյ ծէսին ու վարդապետութեան նուիրուած հատորներու եւ յօդուածներու:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	էջ 3
<u>Զ. ՄԱՍ – ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ (4–233)</u>	
Ա. ԳԼՈՒԽ - ՄԱՐԹԻՆ ԼՈՒՏԵՐ ԵՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԵՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ	էջ 5
Բ. ԳԼՈՒԽ - ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԽԶՈՒՄՆԵՐ	էջ 28
Գ. ԳԼՈՒԽ - ՈՒԼՐԻՒՅ ԶՈՒԻՆԿԼԻ ԵՒ ԶՈՒԻՑԵՐԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ	էջ 42
Դ. ԳԼՈՒԽ - ԿՐԿՆԱՄԿՐՏԱԿԱՆՆԵՐԸ	էջ 52
Ե. ԳԼՈՒԽ - ԳԵՐՄԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ	էջ 64
Զ. ԳԼՈՒԽ - ՍԿԱՆՏԻՆԱԻԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ	էջ 81
Է. ԳԼՈՒԽ - ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԵՒ ԺՆԵԻԻ ՄԷԶ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԼԻՒՆԷՆ ԱՌԱԶ	էջ 86
Ը. ԳԼՈՒԽ - ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԼՎԻՆ	էջ 91
Թ. ԳԼՈՒԽ - ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ	էջ 107
Ժ. ԳԼՈՒԽ - ՍԿՈՎՏԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ	էջ 132
ԺԱ. ԳԼՈՒԽ - ԿԱԹՈԼԻԿ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱԿԱԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ	էջ 141
ԺԲ. ԳԼՈՒԽ - ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ, ՀՈԼԱՆՏԱՅԻ ԵՒ ԱՆԳԼԻՈՅ ՄԷԶ	էջ 163
ԺԳ. ԳԼՈՒԽ - ԳԵՐՄԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ.	էջ 182
ԺԴ. ԳԼՈՒԽ - ՍՈԶԻՆԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ	էջ 194
ԺԵ. ԳԼՈՒԽ - ԱՐՄԻՆԻԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ	էջ 199
ԺԶ. ԳԼՈՒԽ - ԱՆԳԼԻԳԱՆՈՒԹԻՒՆԸ,	

ՄԱՔՐԱԿՐՕՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱԶԱՏ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐԻՑՈՒԹԻՒՆԸ ՍԿՈՎՏԻՈՅ ՄԷՋ	էջ 206
ԺԷ. ԳԼՈՒԽ - ՔՈՒԷՅԳԸՐՆԵՐԸ (ԵՐԵՐԱՑՈՂՆԵՐԸ)	էջ 231
<u>Է. ՄԱՍ - ԱՐԴԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ (234–444)</u>	
Ա. ԳԼՈՒԽ - ԱՐԴԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ	էջ 235
Բ. ԳԼՈՒԽ - ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՆԵՐ ՄՈՒՏՔԸ	էջ 243
Գ. ԳԼՈՒԽ - ԱՍՏՈՒԱԾՍՅՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՆՈՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ ԵՒ ՍԿԵՊՏԻԿՈՒԹԻՒՆԸ	էջ 253
Դ. ԳԼՈՒԽ - ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ	էջ 263
Ե. ԳԼՈՒԽ - ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ	էջ 266
Զ. ԳԼՈՒԽ - ՆԻԿՈՂԱՅՈՍ ԼՈՒՏՎԻԿ ԶԻՆԶԵՆՏՈՐՖ ԵՒ ՄՈՐԱՎԻԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՈՐԱՎԻԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ	էջ 274
Է. ԳԼՈՒԽ - ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶԱՐԹՕՆՔԸ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՒ ՉԱՐԼՋ ՈՒԷԶԼԻ ԵՒ ՄԵԹՈՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ	էջ 280
Ը. ԳԼՈՒԽ - ՄԵԾ ԶԱՐԹՕՆՔԸ	էջ 296
Թ. ԳԼՈՒԽ - ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶԱՐԹՕՆՔԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԴԻ ՄԻՍԻՆԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	էջ 303
Ժ. ԳԼՈՒԽ - ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ	էջ 308
ԺԱ. ԳԼՈՒԽ - ԳԵՐՄԱՆ ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ	էջ 316
ԺԲ. ԳԼՈՒԽ - ԺԹ. ԴԱՐՈՒ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ	

ՄԱՍՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ	
ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ	էջ 322
ԺԳ. ԳԼՈՒԽ - ԲՐԻՏԱՆԱԿԱՆ	
ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ	
ԺԹ. ԴԱՐՈՒՆ	էջ 341
ԺԴ. ԳԼՈՒԽ - ԺԹ. ԴԱՐՈՒ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ	
ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ	էջ 354
ԺԵ. ԳԼՈՒԽ - ԺԹ. ԴԱՐՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ	
ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ	էջ 360
ԺԶ. ԳԼՈՒԽ - ՀՌՈՄԷԱԿԱՆ ԿԱԹՈՒԼԻԿՈՒԹԻՒՆԸ	
ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ	էջ 379
ԳԼՈՒԽ ԺԷ. - ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ	
ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ	էջ 395
ԳԼՈՒԽ ԺԸ. - ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ	
ԱՃՈՒՄԸ	էջ 408
ԳԼՈՒԽ ԺԹ. - ԵԿԵՂԵՑԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ	էջ 422
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ	էջ 445
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ	էջ 478
ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ	էջ 501
ԵՐԿԵՐ	էջ 502
ԹԱՐԳՄԱՆԻՉԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ	էջ 514
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	էջ 515



ՆԱՐԵԿ ԱՐԲ. ԱԼԵՄԵԶԻԱՆ
ARCHBISHOP NAREG ALEMEZIAN

Armenian Church – Holy See of Cilicia
Antelias – Lebanon

Mobile: +961-3-242481
E-mail: nalemezian1@gmail.com